



**Ջ. Գ. ՍԵԼԻՆՉԵՐ**

ԿԻՊԱԿՆԵՐ

**ՑԱՐԵԿԱՆԻ ԱՐՏՈՒՄ՝  
ԱՆԴՈՒՆԳԻ ԵԶՐԻՆ**

**ԾՊԵՂՆԵՐԸ ԲԱՐՁՐ,  
ԱՏԱՂՁԱԳՈՐԾՆԵՐ**

ՊԱՏՍԿԱՍԾՔՆԵՐ

**ԼԱՎ Է ԲՈՆՎՈՒՄ  
ՁԿՆԻԿ-ԲԱՆԱՆԻԿԸ**

**ՄԱՐԴԸ, ՈՐ  
ԾԻՇԱՂՈՒՄ ԷՐ**

**ԳԸ ԴՈՄՅԵ-ՍՄԻԹԻ  
ԵՐԿՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԸ**

**ՈՏԻԿ-ԹԱԹԻԿ**

**ՈՌԻՍԵՐՆԵՆԻՑ ԹԱՂՈՍԱՆԵՑ  
ԱՄԱՅԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ**

# MARCHELBA

Սովորաբար ընդունված է արևմտյան ժամանակակից գրողին համարել որևէ խմբի, կառեզորիայի, օրեէ հոսանքի կամ գպրոցի հետևորդ:

Ակազեմիական տեսանկյունից գուցե դա հիշտ էր Բայց մենք ընթերցողին ոչ մի սահմանում չենք պարտադրի:

Պարզապէս ուզում ենք օգնել նրան կարգաւու ընթացքում, այսպէս ասած, հարմար անգամորել, շրջապատից հավաքել ամեն բան, նրան մենակ թողնել հեղինակի հետ:

Այդ գեպքում ամեն ինչ նա ինքը կտեսնի և կլսի:

Սեյինչերը բոլորից լավ է կարողանում մեր ընթերցողին տանել մեզ-  
նից այնքան հեռու գունվազ. հաճախ միայն շտեմով ծանոթ այն աշխարհը,  
որտեղ տիրում է բամբրիկյան ապրելակերպը:

Այդ աշխարհում՝ Ասիինչերի հայրենիքում, նրան հաճախ են կշտամբել այդ ապրելակերպը խիստ որոշակի ու անկեղծորեն մերկացնելու, իբրև թե ազաւազնու համար, շրջապատին «հարմարվի» լիարողացող պատաս-  
եաւ կամ գեոահասի աշքերով նայելու համար:

Բայց չէ որ Սեյինչերը գրում է հենց այն մասին, որ իր պատանի հերոսները առողջ ու բնականոն մանկութիւն չեն ունեցել, որ նրանց գրեթե անծանոթ են մարդկային առողջ փոխհարմրիութիւնները:

Նա գրում է մի աշխարհի մասին, որտեղ կարևորը փողն է, որտեղ վաճառվում է ամեն ինչ, նույնիսկ անհարիկ-նիհարիկ օտեքով ազդիկը: Նա գրում է մի աշխարհի մասին, որտեղ շուրջը տիրում է կեզծիք ա խարհութիւն, այն, ինչը որ «Տարեկանի արտում՝ անգունգի եզրին» վի-  
պակի հերոսը համարում է սշինծուս և ձեական:

Նա պատմում է այն մասին, որ մարդուն շոքս կողմից կաշկանգում է ոնկլամը, որ ճարպիկ գործամուլները հեոակար կարգով նախաձեռնում են սովորեցնել ում ասես և ինչ ասես՝ իսպաններեն լեզու, սցենար գրել, բամենտիրական ընկերութիւն վարել, կիթաո նվագել, գեղանկարներ անել, գուր ցալ աղջիկներին, բանաստեղծութիւններ հորինել ու հրաշագեղ կա-  
հայք շինել:

Նա գրում է մի աշխարհի մասին, որտեղ փողով առաջարկում են կարգավորել ոչ միայն արտաքին, այլև ներքին կյանքը:

Եթե քո հոգեկան աշխարհը նարմալ վիճակում չէ, եթե շեղվում ես քեզ, շեղվում ես հարմարվում՝ ձանձրալի, գուցե անազնիվ, աշխատանքին, եթե ինչ-որ բանով բավարարված չես, ինչ-որ բանում կասկածում ես, մի՛ անհանգստանա: Գոյություն ունի մարդկանց մի ամբողջ բանակ, սթանդ նույնիսկ բժշկական կրթությամբ, որոնք շնչին վարձատրությամբ կմաքրեն ու կազատեն քո հոգին, ինչպես մաքրում են այգին կամ գառաժը: Նրանք քեզ կսովորեցնեն համբերությամբ վերաբերվել այն բանին, ինչ ատելի է քեզ, կօգնեն «հարմարվել» կյանքին, մի խոսքով, քեզնից կպատրաստեն հասարակության: Էիարժեք անդամ, որը կարող է հաշտվել և գրասենյակային կաշառակերության, և աստիտական սանձարձակության նույնիսկ շիրքով կնոջ հետ:

Այս գրքում դուք կտեսնեք, թե Սելիշերը ինչպես է առում արժեքներ ու գիտության ամեն տեսակ գոհակացումը, որ այնքան տարածված բան է Ամերիկայում:

Ու եթե արժեքներ խեղաթյուրումը նա հեղուկ է միայն «Գր Գոմյե-Միթի երկնագույն ժամանակաշրջանը» պատմվածքում, ապա «հոգիները բուժողներին» մասին ուղղակիորեն ասում է, որ այդ հոգեվերլուծողները հերոսներից մեկին հասցրին ինքնասպանության, և ծաղրանքով պատմում է մի ազնվական տիկնոջ մասին, որը վազում է «իր» հոգեվերլուծողի մոտ, ինչպես վարսավիրի կամ մանիկյուր անողի մոտ:

Գուցե Սելիշերին կմեղադրեն, որ նա չի տեսնում համաշխարհային բարդ իրադարձությունները, հեռանում է դեպի պարզունակ, մանկական բնկավան աշխարհը, այն. ինչը սիրում են անվանել «Անասպել մանկության մասին», երբ իբրև թե ամեն ինչ ընկալվում է երեխայի գեղես շաղավաղված հայացքով. առանց շրջապատի հանդեպ «մեծերի» կողմից պարտադրված կյանքի շերտավորման:

Սակայն, հավանաբար պատահու ձայնը, դեռահասի ձայնը, լինի նա բանաստեղծ թե երիտասարդ նկարիչ, որոնց դուք կհանդիպեք այս գրքում, ընթերցողների համար հնչում է որպես հենց այն ճշմարտության ձայնը, որ «թոթովում է մանկան շուրթերով»: Հավանաբար, Սելիշերը հարազատ է դարձել տարբեր երկրների պատանի ընթերցողների սրտերին հենց այն պատճառով, որ պատմության ընթացքը պատանի հոգիներին մեզ միատեսակ տեսլություն է ձևում պատերազմի հանդեպ, մարդու կողմից մարդու շահագործման հանդեպ, միատեսակ ցանկություն է առաջացնում աշխարհում խաղաղ ապրելու նույնիսկ այլ հասարակարգ օւնեցող մարդկանց հետ, վեճերը լուծելու ոչ թե սուժերի ու նապալմի միջոցով, այլ ազնիվ համաձայնագրերով:

Թող կեղծ բարեպաշտները և երկերեսանիները ամերիկյան գաղտնե-րից հեռացնեն ուսուցիչներին այն բանի համար, որ նրանք բարձր դասարանցիներին խորհուրդ են տալիս Սելիշեր կարդալ: Միևնույն է, Սե-լիշերը կգտնի իր ընթերցողին, կգտնի, որովհետև նա դիտի՝ օձ համար և ինչու է գրում:

Սեփիւնցիները միշտ էլ մտածում է իր ընթերցողի մասին, գրուցում է նրա հետ, ինչպես բարեկամի հետ, գրքեր է նվիրարբերում նրան: «Եթե աշխարհում դեռևս կա սովորական, շարքային ընդերցող, ապա ես անպատմելի սիրով ու երախտագիտութեամբ խնդրում եմ նրան բաժանել այս գրքի նվիրարբերումը իմ կնոջ ու երեխաների հետ, իրեն վերցնել մեկ քառորդը», — գրել է նա իր գրքերից մեկի վրա: Հերոսներից մեկը, «Տեղի-նակի կրկնորդը», ինչպես անվանում է նրան Սեփիւնցիները, պատմում է, թե ինչպիսին է պատկերացնում իր ընթերցողին: Նրա համար այդ անծանոթ մարդը «Տին մտերիմ է ու բարեկամ»: Նրա հետ քննարկում է իր աշխատանքը, գրողի իր պլանները: Պատմում է նրան, թե ինչպես է ինչու է հորինել իր այս կամ այն վիպակը: Նա շատ է ցանկանում իր այդ բարեկամ ընթերցողին առանձնացնել մյուսներից, սրունց հետ կամա թե ակամա գործ է ունենալու:

Ովքե՞ր են գրանք, մյուս բարեկամները, իսկ գուցեև Սեփիւնցիների թըշնամիները:

Նա ինքն է պատմում դրանց մասին: Դրանց մեջ կան «էսթետներ և տալունային աստված որոնողներ, կան քիտնիկներ ու թափթփվածներ», կան բազմաթիվ «ամբողջաբար, ամբարտաձան ու անգրագետ պատանիներ, վատ կիթառահարներ ու մեծ լեզուններն արհամարհողներ», կան «էսթետիկական թեղի-բոյբոյի ամբողջ խմբեր», որոնք «բիրենց բացարձակ տգիտութեան բարձունքից արհամարհանքով են նայում մեր հրաշալի մուլորակին...»

Այդ մարդիկ երբեք չեն կարող հասկանալ, թե ինչ է ասում Սեփիւնցիները, որովհետև իրենցից դուրս ոչինչ չեն տեսնում: Իրենց ամբարտաձանութեամբ, իրենց անգրագիտութեամբ, անկարողութեամբ ու ցոփութեամբ նրանք միայն փշացնում են կյանքը:

Սեփիւնցիներ հենց այդ մասին է գրում:

Եվ թող նա պատմի շնչին, աննշան թվացող մարդկանց մասին: Թող համաշխարհային բարդ պրոբլեմներ լվճոի. ընթերցողը նրա գրքերից շատ ու շատ ավելին կիմանա, քան ասված է բառերով:

Որովհետև այդ բառերի ետևում վիթխարի սեր ես զգում մեր հրաշալի մուլորակի՝ Մարդկանց մուլորակի հանդեպ:

Սեփիւնցիին պետք է շատ ուշագիւր կարգալու:

Նա ոչինչ չի ծամում ու բերանդ գնում:

Քո հանգեպ ունեցած սիրուց, ընթերցող, քո հանգեպ ունեցած հարգանքից, նա չի ուզում քեզ զրկել հաճույքից, թողնում է, որ խեղճ մտածեա, լրացնես այն, ինչ կարգացել էս:

Հանգիստ կարգա, հեղինակը չի՝ քաշելու քո թեկի՝ թե տես, նախիր աս արքան վատ է, սա որքան լավ:

Բայց դու կտեսնես, որ նա խորապես պշառու է, որ նա՛ կարողանում է այնպես ընտրել շնչին թվացող փաստերը, կարողանում է այնպես շքրջել իր հերոսների դեմքերը գեպի լույսը, որ ուշագիւր ընթերցողը երբեք չի սխալվի, երբեք չի շփոթի, երբեք սեղ սպիտակի տեղ չի ընդունի:

Սեփիւնցիներ երբեք չի թանկարացնում գույները: Գուցեև պետք է որոշա-

կիրորն առանձնացնել «դրական» ու «բացասական» հերոսներին, երբ խոսքը վերաբերում է հանցագործներին, նրանց, ովքեր իշխել են անասունի աստիճանի, նրանց, ում մոտ լիովին բթացել է այն, ինչ Սելինջերն անվանում է «իմ և քո խիղճը»: Բայց Սելինջերի պատմվածքներում պատկերված են ամենասովորական մարդիկ, նրանց ամենատարածական գործերը:

Ով հազիվ թե գտնվի մեկ ուրիշը, որ կարողանա այդպես ի հայտ բերել նախնայաշարումների, անհեթեթ պայմանականությունների, կեղծ արժեքների ամբողջ այդ աղբը, որ կեղտոտում է կյանքը:

Հազիվ թե մեկ ուրիշը այդպես ուղշախոհությամբ ու անբնագրասիկությամբ, առանց ամեն տիպի սենտիմենտալության, համարով կամ թախիժով կարողանա ցույց տալ այն ամենը, ինչը օգտում է ապրելուն:

Ինչպե՞ս է հասնում դրան:

Հաճախ Սելինջերը մի աննշան «ապիթ» է ստեղծում՝ մի շնչին փաստ, թուրքիկ ակնարկ:

Բայց զրա մասին մտածելով՝ շատ բան կարելի է հասկանալ:

«Սպեկյները բաճար, ատաղձագործներ» վիպակում դուք կկարդաք լուցկու սովորաբղթն տուփի մասին, յոթ վրա սահն տառերով տպված է. «Գողացված է այսինչների տնից»: Նման մի շարք մանրուքներից մենք պատկերադրում ենք կազմում այն մարդկանց մասին, ովքեր հորինել են այդ մակագրությունը: Նրանց մասին ոչ մի տեղ որևէ վատ բան չի ասվում, նույնիսկ ոմանք գովում են, բայց մենք արգիս հասկանում ենք, թե նրանք ինչպիսի անճաշակ, գոհհամախո մարդիկ են, ինչպես նրանց մոտ ամեն ինչ ցուցադրական է. ինչպես իրենց հյուրի հանգիստ նուրիսկ կասկածամտորեն են վերաբերվում, ինչպես են նրանից պահպանում իրենց ունեցվածքը, իրենց՝ թանկագին սեփականությունը՝ «դուք չեք կարող մեր լուցկիները գողանալ»:

Ու այդպիսի ընտանիք պիտի մուտք գործի աղչկա փեսացուն: Մենք այդ փեսացուի մասին սկզբում իմանում ենք մանր-մունր բաներով: Անգամ նրա արտաքինը ոչ մի տեղ նկարագրված չէ: Բայց կարգալով նրա սրագրի էջերը, լսելով նրա եղբոր սովորական պատմությունը՝ սկսում ենք ճշգրիտ պատկերացնել այդ զարմանալի բարի, ազնիվ ու խիստ անհավասարակշռված պատանի-բանաստեղծին և հասկանում ենք, թե ինչպիսի ողբերգության կարող է վերածվել նրա սերը անուշիկ, գեղեցիկ, բայց նրա համար միանգամայն խորթ աղչկա հանգիստ, այն ընտանիքում, որտեղ լուցկու վրա գրում են. «գողացված է այսինչների տնից...»

Ու սարսափում ես այդ երիտասարդի համար, որը կյանքում առաջին անգամ զզրաց մեկ այլ մարդու համար պատասխանատու լինելու հրճվանքը:

Նա սրագրի մեջ արտագրում է մի հին գրքի տողերը. «Ամուսնացողները պետք է ծառայեն մեկմեկու: Բարձրացնեն, աջակցեն, սովորեցնեն, ամրապնդեն մեկը մյուսին... Երեխաներին դաստիարակեն ազնվորեն, սիրով ու խնամքով... Երեխան հյուր է տանը, նրան պետք է սիրել ու հարգել, բայց լիշխել նրա վրա...»

կարդում ենք այս տողերն ու անմիջապես հասկանում, թե ինչ է նպատակը խեղճին:

Ոչ միայն այդ տղան, Սեյինչերի շատ հերոսներ են կյանք մանում լավագույն մտազրույթյուններով:

Ինչպե՞ս է գիմավորում նրանց կյանքը:

Գոյություն ունի այսպիսի մի բան՝ «էսթալայիզմ» — անգլերեն «էսթալայ» բառից՝ փրկվել, գնալ, անգամ՝ փախչել:

Սեյինչերի հերոսներից շատերն են կյանքից փախչում մտացածին աշխարհը:

Տգեղ, ազօտ ուսանող Ջոնը, որը փոք վատասկինու համար գլուխ է գնում մի խումբ կրտսեր դպրոցականների հետ, նրանց տանում զբոսայգի ու նրանց հետ քնյորոջ խաղում («Մարդը, որ ծիծաղում էր»), երեխաներին պատմում է մի սազնիվ՝ ավազակի, նրա ֆանտաստիկական կյանքի մասին: Քեհ այդ պատմությունը էժանագին դեպիկտիվի պարոդիա է ընդամենը, բայց զրա ետևում երևում է կիսամտաբացիկ ուսանողի իսկապես ազնիվ և դժբախտ հոգին:

Տասնիննամյա նկարիչը, միայնակ ու անմարդամտ, ոչ միայն ինքն իր մասին է՝ առասպելի հորինում, այլև փորձում է ապաշխրհների ու այլանդակների աշխարհում որսալ այլոց տաղանդի կայծերը ու ստեղծել հիանալի նկարչուհի-միանձնուհու կերպարը («Դը Դոմյի-Սմիթի երկնագույն ժամանակաշրջանը»):

Փոքրիկ աղբիկն իր համար անտեսանելի ընկերներ է հորինում («Ուտիկ-Քաթիկ»), իսկ շահել մայրը, վրդովվելով նրա երևակայությունից, չի հասկանում, թե ինչպես ցավագնորին է վիրավորում նրբազգաց երեխային, թեև ինքը ամբողջ ժամանակ էգոիստորին փորձում է հեռանալ գեղի անցյալը, ապրել իրականությունից դուրս, հիշողությունների ու վիճակի մշուշում:

Ջանձրալի դպրոցից, զազրելի հանրակացարանից, այդ ամբողջ «հեղձիկից» ջանում է դուրս պրծնել նաև Հուլիան Քուիլիզը («Տարիկանի արտում՝ անգունգի եզրին»):

Բայց նրա փախուստը նման չէ Սեյինչերի մյուս հերոսների փախուստին, ինչպես նրանց նման չէ ինքը՝ Հուլիանը:

Նա կոնկրետ բաներ է երազում. նա ուզում է ապրել «առավելի ափին», թմեն ինչ սեփական ձեռքերով անել, երեխաներին մեծացնել իր իմացած ձևով, անձամբ նրանց սովորեցնել որոշ կարևոր բաներ:

Նա սիրում է, որ մարդն իր աշխատանքը լավ կատարի, նույնիկ ճավադարի թմրկահարը հիացնում է նրան իր շեշտակի, ուրախ ու շահագրի հարվածներով:

Նա շատ բարի է ու մեղմ, բայց բուռնցքներով հարձակվում է շատ ավելի ուժեղ մի ազայի վրա, երբ սա գոհճիկ խոսքերով մրտում է լավ աղբկա անունը:

Նա ինքը այնքան էլ չի սիրում սովորել, բայց փոքրիկ քուլիկին թույլ չի տալիս բացակայել գասերից, ջանում է համոզել նրան, հանգստացնել, ղվարճացնել:

Ու ինչպե՞ս է ուրախանում, երբ դա հաջողվում է իրեն:

Ընթերցողն ինքը կտեսնի, թե Սեփինչերն ինչպիսի առաստվոր վարս պետություններ է կարողացել ցույց տալ այդ հակասությունները Հայրենիք քննադատության մեջ: Նրա անձնական անկազմակերպվածությունը, կյանքին հարմարվել չկարողանալը և ուրիշներին, հատկապես փոքրիկներին օգնելու նրա նվիրական պատրաստակամությունը, որպեսզի նրանք չզլորվեն անպատկեր:

Ճիշտ է, նա դեռ չի հասկանում, որ կյանքից հեռու շեռ փախչի, որ չի կարող իրականանալ առավելի ասի իգիլլան, նախնադարյան երջանկությունը՝ հյուղակում:

Գուցեն կհասկանա, որ կյանքը սիտք է վերափոխել հենց թեկուզ ամբ փոքրիկ դաշտում, որտեղ մարդուն վիճակված է աշխատել:

Այդ մասին, կյանքի իրական արժեքի մասին Սեփինչերը խոսում է իր քույր ստեղծագործություններին ամեն մի տողում:

Նա շատ որոշակի գիտե, թե ինչն է էական և ինչը էական չի մարգու, նրա մտքերի, նրա գործերի մեջ:

Անձամբ Սեփինչերի մասին մենք շատ քիչ բան գիտենք: Ծնվել է 1919 թ. Նյու-Յորքում, սովորել է մի քանի դպրոցներում: Հետո՝ զինվորական ակադեմիայում և երեք— այդ երեք քոլեջում: Գիպլոմներ ու գիտական աստիճաններ չունի: Հավանաբար քոլեջներից ոչ մեկը չի ավարտել:

Տասնութ-տասնինը տարեկանում, այսինքն՝ պատերազմին նախորդող տարիներին, որպես տուրիստ շրջել է Եվրոպայում: 1942—1946 թվականներին ծառայել է բանակում, որից երկուսուկես տարին՝ գաղթյալ Եվրոպայում, որպես 4-րդ հետևակային դիվիզիայի սերժանտ:

Աֆհանումից մինչև պատերազմի վերջը մասնակցել է հինգ ճակատամարտի:

Գրել է տասնհինգ տարեկանից: Սկսել է տպագրվել 40-ական թվականներին: Առաջին մեծ գործը՝ «Տարեկանի արտում՝ անցումն էր ինչ», լույս է տեսել 1951 թվականին:

Կարծում ենք, որ Սեփինչերն ինքն է իր մասին այնպես շոր ու համառոտ գրել գրքերից մեկի շապիկի վրա և միայն, ինչպես ի՞նքն է ասում, «կեող խնդրանքով» ավելացրել է. «Ըստ այսում եմ Ուեսթպորտում և ունեմ մի շուն»: Բայց նրա գրքերը շատ ավելին են պատմում իր մասին, իր աշխարհի մասին, քան քույր կենսագրականները:

Քեզ համար, ընթերցող, կարևորն առջևում է:

Եթե զգաս, թե որքան ուշագիթ է հեղինակը քա հանդեպ, որքան պարզ ու հասարակ է զրուցում քեզ հետ, անպայման կհասկանաս նրան և՛ մշտքով, և՛ արտով:

Ռ. Ռայթ — Կովայուվա



Մարտի 6

ՏԱՐԵԱՆԻ ԱՐՏՈՒՄ  
ԱՆՂՈՒՆԻ ԵԶՐԻՆ

Եթե դուք իսկապես ուզում եք իմանալ այս պատմութիւնը, ապա, հավանաբար, նախևառաջ կցանկանաք իմանալ որտեղ եմ ծնվել ես, ինչպես եմ անցկացրել իմ անժիտ մանկութիւնը, ինչով էին զբաղվում ծնողներս մինչև իմ ծնվելը, մի խոսքով՝ Դավիթ Կոպպերֆիլդյան այդ ամբողջ շիլան: Բայց, ճիշտն ասած, ես տրամադիր չեմ դրանք փոփոխել: Նախ ձանձրալի է, երկրորդն էլ՝ իմ նախնիները հավանաբար երկու ինֆարկտ կստանային եղբորս երեսից, եթե ես պատմեի նրա անձնական դործերի մասին: Նրանք տանել չեն կարող նման բաները, հատկապես՝ հայրս: Ընդհանրապես նրանք լավ մարդիկ են, բան չունեմ ասելու, բայց շափից դուրս նեղացկոտ են: Ծս մտադիր էլ չեմ պատմել կենսագրութիւնս կամ նման դատարկ-մատարկ բաներ, կպատմեմ միայն այն խելահեղ պատմութիւնը, որ տեղի ունեցավ անցյալ Մենդլյան տոներին: Իսկ հետո քիչ էր մնում շունչս փչեի, ու ինձ տեղափոխեցին այստեղ հանգստանալու և բուժվելու: Ծս նրան էլ՝ Դ. Բ-ին, միայն այդքանը պատմեցի, չէ որ ինչքան լլինի հարազատ եղբայրս է: Նա ապրում է Հոլիվուդում: Դա այստեղից, այս երիցս անիծյալ սանատորիայից, այնքան էլ հեռու չէ: Նա հաճախ է ինձ այցելութիւն գալիս, գրեթե ամեն շաբաթ: Տուն էլ նա ինքը կտանի, գուցե եկող ամսին: Վերջերս «յագուար» է գնել իր համար: Անգլիական է, ժամում երկու հարյուր մղոն կարող է կտրել: Մոտ շորս հազար է տվել: Հիմա նա փող շատ ունի, առաջվա

Յման չէ: Առաջ, երբ տանն էր ապրում, իսկական գրող էր: Կարող է լսած լինեք, նա է գրել պատմվածքների այն հիանալի գիրքը՝ «Թաքցրած ձկնիկը»: Ամենալավ պատմվածքը հենց այդպես էլ կոչվում էր՝ «Թաքցրած ձկնիկը»: Այնտեղ պատմում է մի տղայի մասին, որը ոչ մեկին թույլ չէր տալիս նայել իր ոսկի ձկնիկին, որովհետև իր սեփական փողով էր գնել: Ի՞նչ պատմվածք է, գծվելու բան է ուղղակի: Իսկ հիմա եղբայրս գլխովին ծախվել է Հոլիվուդին, ի՞նչն աշխարհում մի բան կա, որ ատում եմ՝ դա կինոն է: Տանել չեմ կարող:

Ավելի լավ է սկսեմ պատմել այն օրվանից, երբ Փենսիլից հեռացա: Փենսիլն միջնակարգ փակ դպրոց է էգերսթաունում, Փենսիլվանիայի նահանգում: Երևի լսած կլինեք: Համենայն դեպս ոեկլամենրում տեսած կլինեք: Հազարավոր ամսագրերում տպագրում են: Ծարպիկ մեկը ձին հեծած ոստնում է արգելքների վրայով: Կարծես Փենսիլում հենց միայն պոլոն են խաղում: Իսկ ես այնտեղ ոչ մի անգամ ձիու երես չեմ տեսել: Ու այդ հեծյալի տակ գրված է՝ «Սկսած 1888 թվականից մեր դպրոցում կոփում են խիզախ ու ազնիվ պատանիներին»: Ա՛յ թե կեղծիք է: Ոչ մեկին էլ չեն կոփում այնտեղ, ոչ էլ ուրիշ դպրոցներում: Եվ այնտեղ ես ոչ մի «խիզախ ու ազնիվ» չեմ տեսել, գուցե մեկ-երկուսը լինեն ու վերջ: Դե նրանք մինչև դպրոց գալն էլ այդպիսին են եղել:

Մի խոսքով, այդ բանն սկսվեց շաբաթ օրը, երբ Ֆուլթոնի մրցութային էր գնում Սեքսոն-Հոլլի հետ: Մենք գտնում էինք, որ Փենսիլի համար այդ խաղը աշխարհում ամեն ինչից թանկ է: Մրցութայինը եզրափակիչ էր, ու եթե մեր դպրոցը տանուլ տար, բոլորս վշտից ուղղակի կկախվեինք: Հիշում եմ, այդ օրը ես մոտ երեք ժամ կանգնած էի աստված գիտե՞ թե որտեղ, ուղղակի Թոմսոն սարի գլխին, այն հիմար թընդանոթի մոտ, որ տնկված է այնտեղ, կարծեմ, ազատագրական պատերազմից ի վեր: Այդտեղից երևում էր ամբողջ դաշտը և այն, թե ինչպես էին երկու թիմերը դաշտի մի ծայրից մյուսը քշում իրար: Տրիբունաները ես կարգին չէի կարողանում տեսնել, միայն լսում էի, ինչպես են գոգոռում այնտեղից: Մերոնք բոլորը գոռում էին կոկորդով մեկ, մեր ամբողջ դպրոցն այնտեղ էր, բացի ինձնից, իսկ հա-

կառավորողները ինչ-որ բան էին ճշգրտում. սովորաբար եկվոր  
թիմի ժողովուրդը քիչ էր լինում:

Յուտբոլային մրցումներին աղջիկներ միշտ քիչ են  
լինում: Միայն բարձր դասարանցիներին է թույլատրվում  
աղջիկ բերել: Գարշելի դպրոց է, խոսք չկա՛ր Իսկ ես սիրում  
եմ լինել այնտեղ, որտեղ աղջիկներ կան, եթե նույնիսկ  
ոչինչ չեն անում, հենց այնպես նստած են, մազերն են  
սանրում, քիթները սրբում կամ քրքրում: Մեր դիրեկտորի՝  
ժերոակ Թերմերփ դուստրը, հաճախ էր գալիս մրցումներին,  
բայց դե նա այնպիսի աղջիկ չէր, որի համար հնարավոր  
լիներ գժվել: Թեև ընդհանրապես վատը չէր: Մի անգամ  
ավտորուսում իրար կողքի էինք նստած, էգերսթաունից էինք  
գնում ու զրուցում էինք: Նա ինձ գուր եկավ: Ճիշտ է, քիթը  
երկար է, խակ եղունգաները արյունոտելու շափ կրճմրճած,  
կրճբակալի մեջ էլ ինչ-որ բան է դնում, սր ցցված մնա,  
բայց, չգիտեմ ինչու, խղճացի նբան: Ինձ դուր եկավ, որ նա  
զուլխ չէր գովում, թե ինչպիսի հրաշալի հայրիկ ունի: Երևի  
ինքն էլ գիտեր, որ նա անմիտ դատարկախոսի մեկն է:

Ես դաշտ չգնացի, բարձրացա սարք, որովհետև Նյու-  
Յորքից նոր էի վերադարձել սուսերամարտիկների թիմի  
հետ: Ես այդ գարշելի թիմի պետն էի: Մե՛ծ բան: Գնացել  
էինք Նյու-Յորք՝ Մակ-Քերնի դպրոցի հետ մրցելու: Միայն  
թե մրցումը չունե տեղի շունեցավ: Ես սուպերները, կոստյում-  
ները և առհասարակ բոլոր այդ պարագաները մոռացել էի  
մետրոյի վագոնում: Բայց ես այնքան էլ մեղավոր չէի:  
Անընդհատ ստիպված էի լինում վեր կենալ ու նայել պա-  
նին, թե որտեղ պետք է իջնենք: Մի խոսքով, Փենսի վերա-  
դարձանք ոչ թե ճաշին, այլ արդեն երկուսն անց կեսին:  
Տղաներն ամբողջ ճանապարհին բոլիտ արեցին ինձ: Նույ-  
նիսկ ծիծաղելի էր:

Բացի այդ, Ֆուտբոլի դաշտ չգնացի, որովհետև մտազիր  
էի այցելել ծերունի Սպենսերին՝ իմ պատմության ուսուց-  
չին, որպեսզի հրաժեշտ տամ մեկնելուց առաջ: Նա հիվանդ  
էր գրիպով, ու ես մտածում էի, որ մինչև ծննդյան արձա-  
կուրդը նրան չեմ տեսնի: Իսկ նա երկտող էր ուղարկել, որ  
ուզում է ինձ տեսնել մինչև տուն գնալու: Գիտեր, որ չեմ  
վերադառնալու:

Հա, մոռացա ասել, որ ինձ վտարել էին դպրոցից: Մերնդ-  
ցան տոներից հետո ես չպետք է վերադառնայի, արովհետև  
չորս առարկայից կտրվել էի և ընդհանրապես չէի պարա-  
պում ու նման բաներ: Հարյուր անգամ նախազգուշացրել  
էին ինձ՝ աշխատի՛ր, սովորի՛ր: Իսկ ծնողներիս քառորդի  
վեսին կանչել էին ժերուկ Թերմերի մոտ, բայց, միևնույն  
է, չէի պարապում: Դրա համար էլ վտարեցին: Նրանք շա-  
տերին էին վճռել Փենսիլից: Նրանց ակադեմիական առա-  
ջադիմությունը շատ բարձր էր, իսկապես, շատ բարձր էր:

Մի խոսքով, դեկտեմբերն էր, ու սուկալի ցուրտ՝ հատ-  
կապես այդ երիցս անիծյալ սարի վրա: Միայն բաճկոնով  
էի, ոչ ձեռնոցներ ունեի, ոչ էլ մեկ այլ բան: Անցյալ շաբաթ  
ինչ-որ մեկը թոցրել էր ուղտի բրդից կարված իմ վերար-  
կուն, տաք ձեռնոցներս էլ գրպաններում: Այդ դպրոցում  
ըիքն են գողերը: Տղաներից շատերի ծնողները հարուստ են,  
բայց, միևնույն է, էլի գող ու ավազակներ են: Որքան դրպ-  
րոցը թանկ է, այնքան գողությունը շատ: Մի խոսքով, կանգ-  
նել էի այդ հիմար թնդանոթի մոտ, ու հետև սառույց էր  
դարձել: Բայց խաղին գրեթե չէի էլ նայում: Կանգնել էի  
միայն, որպեսզի զգամ, որ հրաժեշտ եմ տալիս այդ դրպ-  
րոցին: Ընդհանրապես ես հաճախ եմ տեղից տեղ մեկնում,  
բայց երբեք մտքովս չի անցնում հրաժեշտի մասին մտածել:  
Ես դա ատում եմ: Չեմ մտածում՝ տխուր է թե հաճելի այդ  
մեկնումը: Բայց երբ բաժանվում եմ որևէ տեղից, պետք է  
զգամ, որ իսկապես բաժանվում եմ: Թե չէ ավելի դժվար է  
վերնում:

Իմ բախտը բերեց: Հանկարծ մի բան հիշեցի ու անմիջա-  
պես զգացի, որ մեկնում եմ ընդմիշտ: Հիշեցի, թե ինչպես  
մի անգամ հոկտեմբերին երեքով՝ ես, Ռոբերտ Տիչները և  
Պոլ Քեմբլը, գնդակ էինք խաղում ուսումնական առանձնա-  
շենքի առաջ: Դրանք շատ լավ տղաներ էին, հստկապես  
Տիչները: Մոտենում էր ճաշի ժամը, բոլորովին մթնել էր,  
բայց մենք դեռ շարունակում էինք խաղալ: Արդեն լրիվ մութ  
էր, գրեթե չէինք տեսնում գնդակը, բայց խաղը չէինք ուզում  
թողնել: Այնուամենայնիվ, ստիպված եղանք թողնել: Բնա-  
գիտու՛յան ուսուցիչ միտար Ջեմբիզին գլուխը դուրս հանեց  
ուսումնական առանձնաշենքի պատուհանից ու կարգադրեց՝

անցնել հանրակացարան, հագնվել ճաշի գնալու համար: Հենց որ այդպիսի բան ևս հիշում, անմիջապես զգում ես, որ քեզ համար ոչ մի արժեք չունի այստեղից ընդմիշտ մեկնելը: Ես, համենայն դեպս, միշտ այդպես եմ: Ու հենց զգացի, որ ընդմիշտ եմ մեկնում, շուռ եկա ու ցած վազեցի ուղիղ դեպի ծերունի Սպենսերի տուն: Նա դպրոցից հեռու էր ապրում, էնտոնի Ուեյն փողոցում:

Ես վազեցի ճանապարհով մինչև գլխավոր ելքը, իսկ հետո սպասեցի, մինչև որ շունչս տեղն եկավ: Ճիշտն ասած, շունչս շուռ է կտրվում: Նախ՝ ես ծխում եմ շոգեքարշի նման, այսինքն՝ առաջ էի ծխում: Այստեղ, սանատորիայում ստիպեցին թողնել: Եվ երկրորդ՝ անցյալ տարվա ընթացքում աճել էի վեցուկես դյույմ: Հավանաբար, այդ պատճառով էլ հիվանդացա տուբերկուլյոզով ու ընկա այստեղ ստուգման և այս հիմար բուժման համար: Իսկ ընդհանրապես ևս բավական առողջ եմ:

Մի խոսքով, հենց որ շունչ առա, վազ տվի դեպի Ուեյն փողոցը: Ամբողջ ճանապարհը սոսկալի սառցակալած էք, ու քիչ էր մնում դրմփալի: Զգիտեմ, ինչու էի վազում, հավանաբար, հենց այնպես: Երբ անցա փողոցը, հանկարծ ինձ թվաց, թե կորա: Մի տեսակ խելագար օր էր. սոսկալի ցուրտ, արևի շող էլ չէր երևում ու թվում էր, բավական է անցնես ճանապարհի մյուս կողմը, անմիջապես կլքվես ընդմիշտ:

Ո՛հ, համա թե հնչեցրի զանգը, երբ հասա ծերուկ Սպենսերի տանը: Մինչև ոսկորներս սառել էի: Ականջներս ցավում էին, մատներս շարժել չէի կարող: «Դե շո՛ւտ, շո՛ւտ,— ասում եմ գրեթե լսելի,— բա՛ց արեք»: Վերջապես պառավ Սպենսերը բացեց դուռը: Նրանք սպասավոր չունեն, ընդհանրապես ոչ ոք չունեն, միշտ իրենք են բացում դուռը: Նրանք հարուստ չեն:

— Հոլդե՛ն, — ասաց միսիս Սպենսերը: — Որքա՛ն ուրախ եմ քեզ տեսնելուս համար: Ներս արի, սիրելիս: Երևի փայտացել ես ցրտից, հա՛:

Ինձ թվում էր, նա իսկապես ուրախ էր ինձ տեսնելու համար: Նա իսկապես սիրում էր ինձ: Համենայն դեպս, ինձ այդպես էր թվում:

Ծս գնդակի պես ներս ընկաւ:

— Ինչպե՞ս եք, միսիս Սպենսեր, — ասում եմ: — Ինչպե՞տ է միստր Սպենսերի առողջութիւնը:

— Տուր բաճկոնդ, սիրելիս, — ասաց նա: Չլսեց էլ, որ հարցրի միստր Սպենսերի առողջութեան մասին: Նա մի քիչ խուլ էր:

Նա բաճկոնս կախեց նախասենյակի պահարանում, և ետ ձեռքով հարդարեցի մազերս: Ընդհանրապես իմ մազերը կարճ «ոզնի» է կտրված և սանդղակու հարկ չի լինում:

— Ինչպե՞ս եք, միսիս Սպենսեր, — հարցրի ես, բայց այս անգամ բարձր, որ նա լսի:

— Հրաշալի՞, Հոլդեն, — նա ծածկեց պահարանի դուռը: — Իսկ դո՞ւ ինչպես ես:

Ու ես նրա ձայնից հասկացա, որ ծերունի Սպենսերը պատմել է նրան ինձ վտարելու մասին:

— Շատ լավ, — ասում եմ: — Միստր Սպենսերն ինչպե՞տ է: Նրա գրիպը անցա՞վ:

— Անցավ, Հոլդեն, նա իրեն այնպես է պահում, ինչպես, ինչպես շգիտեմ թե ով... Իդ սենյակում է, գնա նրա մտ:

## 2

Նրանք առանձին սենյակներ ունեին: Երկուսն էլ յոթանասունին մոտ էին, գուցե և ավելի: Ու այնուամենայնիվ, կյանքից հաճույք էին ստանում, թեև նրանց մի ոտքը գերեզմանում էր: Ծիշտ է, խոզութիւն է այդպես ասելը, բայց ես դա չեմ ուզում ասել: Պարզապես ուզում եմ ասել, որ շատ եմ մտածել ծերունի Սպենսերի մասին, իսկ երբ նրա մասին շատ ես մտածում, սկսում ես զարմանալ, թե ինչպե՞տ է, որ կարողանում է դեռ ապրել: Հասկանո՞ւմ եք, նա ամբողջովին կոացել է ու հազիվ է քայլում, և եթե հանկարծ կավիճը ձեռքից գցում է, ապա առջևի շարքից որևէ մեկը պետք է վերցնի ու մատուցի նրան: Իմ կարծիքով, դա սարսափելի է: Բայց եթե շատ խոր շեւ մտածում, այլ հենց այնպես, ի միջի այլոց, ապա ստացվում է, որ նա այնքան էլ վատ չի ապրում: Օրինակ՝ մի անգամ, կիրակի օրը, երբ նա ինձ ու մի քանի տղաների տաք շոկոլադ էր հլուրասի-

րում, մի հնամաշ վերմակ ցույց տվեց, որ ինքն ու միտիս Սայենսերը գնել էին մի հնդկացուց, Ինչո՞ւ ուսթոնի գրոսայգում: Երևում էր, որ ծերունի Սայենսերը հիացած էր այդ գնումով: Հասկանո՞ւմ եք, ինչ եմ ուզում ասել: Մի այդպիսի ծերուկ, որ արդեն հայհայր գնացել, վայվաքն է մնացել, դեռևս հիանում է ինչ-որ վերմակով:

Նրա դուռը բաց էր, բայց ես այնուամենայնիվ ծեծեցի, ուղղակի քաղաքավարութունից: Ես տեսա նրան, նստած էր կաշվե հին բազկաթոռին, փաթաթված այն նույն վերմակով, որի մասին ասացի: Նա շրջվեց, երբ ծեծեցի դուռը:

— Ո՞վ է,— գոչեց նա,— դո՞ւ ես, Քուֆիլդ, արի, տղաս, եկես արի:

Նա միշտ գոռոգոռալով էր խոսում տանը, էլ ո՞ւր մնաց թե գաւարանում: Նյարդերիս վրա ազդում էր, իսկապես:

Հենց որ ներս մտա, արդեն փոշմանեցի, թե ինչու եկա: Ես «Ատլանտիկ մանսլի» էր կարդում ու շուրջն ամենուրեք սրվակներ ու հաբեր էին դրված, հարբուխի դեմ գործածվող կաթիլների հոտ էր տարածվել: Տրամադրութունն ընկավ: Ընդհանրապես այնքան էլ չեմ սիրում հիվանդներին: Ասվելի քան թախծալի էր դառնում, երբ նայում էի ծերունի Սայենսերի հագի մաշված, խիստ ողորմելի հին խալաթին, երևի ծնված օրից դա էր հագնում, ազնիվ խոսք: Չեմ սիրում սիծամաներով ու խալաթներով ծերունիներին: Միշտ կուրծքները ըացվում է, պառավ կողիքը երևում: Ոտքերն էլ սոսկաչի են: Ծերուկները, տեսած կլիներ լողափերում, ինչպիսի անմազ, ձեռմակ ոտքեր են ունենում:

— Բարև ձեզ, սը՛ր,— ասում եմ:— Ես ստացա ձեր երկտողը: Շատ շնորհակալ եմ:— Նա հրկտող էր գրել, որ արձակուրդից առաջ գնամ իրեն հրաժեշտ տալու: Գիտեք, որ աչլես չեմ վերադառնալու:— Իզուր եք նկուրթյուն կրել, միևնույն է, ես անպարման կգաչի հրաժեշտ տալու:

— Նստիր, ա՛յ, այնտեղ, տղաս,— նա ցույց տվեց մահճակալի եզրը:

Ես նստեցի:

— Ինչպե՞ս է ձեր գրիպը, սըր:

— Գիտես, տղաս, եթե լավ զգայի, հարկ կլինեք բժիշկ կանչել, — ծերուկն ինքն իրեն ծիծաղեցնում էր: Նա սկսեց

քրքշալ խելագարի պես: Վերջապես շունչ առա՛վ ու հարց-  
րեց. — Իսկ ինչո՞ւ դու չես գնացել մրցության, չէ՞ որ այսօր  
եզրափակիչ հանդիպումն է:

— Այո, բայց ես հենց նոր եմ վերադարձել Նյու-Յորքի  
սուսերամարտի մրցումներից:

Տեր աստված, այ թե անկողին է, հա՛, ասես քաչր լի-  
նի: Նա հանկարծ խստադեմ արտահայտություն ընդունեց.  
գիտեի, որ այդպես է լինելու:

— Նշանակում է, գնո՞ւմ ես մեզնից, — հարցնում է:

— Այո, սրբ, ինչպես երևում է, գնում եմ:

Այստեղ նա սկսեց տարուբերել գլուխը: Կյանքումս չեմ  
տեսել, որ մարդ այդքան երկար կարողանա տարուբերել  
գլուխը: Չես հասկանում՝ մտահոգվելո՞ւց է այդպես օրորում  
գլուխը, թե՞ արդեն այնքան ծեր է, որ ոչ մի բան չի հաս-  
կանում:

— Իսկ դու կտոր թերմերն ի՞նչ ասաց քեզ, տղաս: Ես  
խմացել եմ, որ դուք երկար եք խոսել:

— Այո, երկար ենք խոսել: Երկու ժամ մնացի նրա  
առանձնասենյակում, եթե ոչ ավելի:

— Ի՞նչ ասաց նա քեզ:

— Դե... շատ բան: Որ կյանքը զուտ խաղ է: Ի՛վ որ պետք  
է խաղալ օրենքներով: Նա լավ էր խոսում: Առանձնապես  
սրե՛է բան չի ասել: Անընդհատ նույն բանի մասին՝ որ կյան-  
քը խաղ է և այլն: Դե դուք ինքներդ էլ գիտեք:

— Բայց կյանքն իսկապես խաղ է, տղաս, և պետք է  
խաղալ օրենքներով:

— Այո, սրբ, գիտեմ, ես այդ ամենը գիտեմ:

Բա՛ն փտան համեմատելու: Լա՛վ խաղ է: Եթե այնպիսի  
մարդկանց մեջ ընկնես, որտեղ բոլորը հմուտ խաղացողներ  
են, այդ դեպքում լա՛վ, ինչ էլ լինի, այդտեղ իսկապես խաղ  
կլինի: Իսկ եթե մեկ ուրիշ խմբի մեջ ընկնես, որտեղ բոլորը  
ապաշնորհներ են, այն ժամանակ ի՞նչ: Էլ ի՞նչ խաղ: Ոչինչ  
գուրս չի գա:

— Իսկ դու կտոր թերմերը արդեն գրե՞լ է քո ծնողներին, —  
հարցրեց ծերունի Սպենսերը:

— Ոչ, նա մտադիր է գրել երկուշաբթի օրը:

— Իսկ ինքդ ոչինչ չե՞ս հայտնել նրանց:



— Ոչ, սրբ, ես ոչինչ չեմ հայտնել, նրանց կտեսնեմ շորեքշաբթի օրը, երբ տուն գնամ:

— Քո կարծիքով նրանք ինչպե՞ս կվերաբերվեն այդ լուս-  
գին:

— Ինչ ասեմ... կբարկանան, հավանաբար, — ասացի, — Պետք է որ բարկանան: Ձէ՞ որ արդեն շորերդ դպրոցում եմ սովորում:

Ու թափ տվի գլուխս: Ես այդպիսի սովորութիւն ունեմ:


— Է՛հ, — ասում եմ: Դա էլ է սովորութիւն, ասել՝ «էհ» կամ «այ քեզ բա՛ն», մասամբ այն պատճառով, որ հարմար բան չեմ գտնում, մասամբ էլ այն պատճառով, որ ես տարիքիս համապատասխան չեմ պահում ինձ: Այն ժամանակ տասնվեց տարեկան էի, իսկ հիմա արդեն տասնյոթ եմ, բայց երբեմն ինձ այնպես եմ պահում, ասես ընդամենը տասներեք տարեկան եմ, ոչ ավելի: Սոսկալի անհեթեթ բան է դուրս գալիս, հատկապես այն պատճառով, որ նս վեց ֆուտ և երկուսուկես դյուլմ հասակ ունեմ, մազերս էլ ճերմակախառն են: Դա ճիշտ է: Աչ կողմում միշտն հատ ճերմակ մազ ունեմ: Դեռ մանկուց: Եվ այնուամենայնիվ, երբեմն ինձ տասներկու տարեկանի պես եմ պահում: Բշտըն էլ աչք են ասում, հատկապես՝ հայրս: Դա մասամբ ճիշտ է, բայց ոչ լիովին: Մինչդեռ մարդիկ կարծում են, որ թափանցում են քո ներսը: Ես, իհարկե, թքած ունեմ, բայց երբեմն ձանձրանում ես, որ սկսում են քարոզ կարդալ, թե քեզ մեծի պես պահիր, Երբեմն ես ինձ այնպես եմ պահում, իբրև թե անհամեմատ մեծ եմ իմ տարիքից, բայց դա արդեն մարդիկ չեն նկատում: Ընդհանրապես ոչ մի բան էլ նրանք չեն նկատում:

Սերուկ Սպենսերն էլի սկսեց օրորել գլուխը ու այդ ընթացքում քչփորեց քիթը: Նա շանում էր ձևացնել, թե տրորում է քիթը, բայց իրականում ամբողջ մատը ներս էր մտցրել: Հավանաբար մտածում էր, որ դա կարելի է, որովհետև ինձնից բացի ուրիշ մարդ չկար այդտեղ: Ինձ համար միևնույն է, թեև զզվելի է տեսնել ինչպես՝ են քչփորում քիթը:

Հետո նա խոսեց:

— Ես պատիվ եմ ունեցել ծանոթանալու քո մայրիկի

125892



հետ, հորդ հետ, երբ մի քանի շաբաթ առաջ եկել էին դոկտոր Թերմերի հետ խորհրդակցելու: Նրանք հիանալի մարդիկ են:

— Այո, իհարկե, լավ մարդիկ են:

«Հիանալի» Զզվում եմ այդ բառից: Սոսկալի գարշանք է, ուղղակի սիրտդ խառնում է, երբ այդպիսի բառեր ես լսում:

Սվ հանկարծ ծերունի Սպենսերը այնպիսի դեմք ընդունեց, որ կարծես հիմա մի շատ կարևոր բան էր ասելու, խելացի բան: Նա ուշշվեց տեղում, ավելի հարմար տեղավորվեց: Պարզվեց, որ կեղծ տագնապ էր: Պարզապես ամսագիրը վերցրեց իր ծնկներից և ցանկացավ գցել մահճակալի վրա, որտեղ ես էի նստած: Բայց չհասցրեց: Մահճակալն ընդամենը երկու դյուլմ էր հեռու նրանից, բայց միկնույն է, չհասցրեց: Սա ստիպված տեղիցս ելա, ամսագիրը վերցրի և դրեցի մահճակալին: Հանկարծ ես այդ սենյակից դուրս փախչելու ցանկություն ունեցա: Զգացի, որ հիմա անտանելի քարոզ է սկսելու: Ընդհանրապես դեմ չեմ, թող խոսեն, բայց երբ քեզ նախատում են, իսկ շնորհդ սոսկալի գեզահոտ է տարածված, ու ծերունի Սպենսերն էլ նստած է թո առաջ պիժամայով ու խալաթով, դրան արդեն դիմանալ չի լինի: Զէի ուզում լսել:

Բայց սկսեց:

— Այդ ի՞նչ ես բերում դու թո գլխին, տղա,— ասաց ծերունի Սպենսերը: Նա շատ խիստ խոսեց, այդպես երբեք չէք խոսել:— Քանի՞ առարկա պիտի հանձնե՞իր այս քառորդին:

— Հինգ, սը՛ր:

— Հինգ, իսկ քանիսից ես կտրվե՞լ:

— Չորսից:— Սա ինձ ուտում էի նստած տեղս, կյանքումս երբեք այդքան կոշտ մահճակալի նստած չկամ: Անգլերենը լավ հանձնեցի, որովհետև Բեռվոյֆր, «Լորդ Ռենգալ, որդիս» և այդ ամբողջ պատմությունը սովորել էի դեռևս Հուտտոնի դպրոցում: Անգլերենով զբաղվում էի միայն այն ժամանակ, երբ շարադրություն էին հանձնարարում:

Նա ինձ նույնիսկ չէր լսում: Նա երբեք չի լսել, թե ինչ են ասում իրեն:

— Ես պատմութիւննից քեզ կարեցի, որովհետեւ ոչինչ չէիր սովորել:

— Հասկանում եմ, սըր, շատ լավ եմ հասկանում: Հասկանալի է պիտի անեիր:

— Ոչինչ չէիր սովորել, — կրկնեց նա: Դե՞ռ կատարեց՞նում է, երբ մարդիկ կրկնում են այն, ինչի հետ դու անմիջապես համաձայնել եմք: Իսկ նա երրորդ անգամ էլ կրկնեց. — Ոչինչ չես սովորել: Կասկածում եմ, թե ամբողջ բառարդի ընթացքում գոնե մեկ անգամ բացել ես դասագիրքը: Բացե՛լ ես, միայն ճիշտն ասա, տղաս:

— Ոչ, ես, իհարկեւ, երկու անգամ աչքի եմ անցկացրել, — ասում եմ: Չէի ուզում նրան վշտացնել, նա գովում էր իր պատմութիւնն համար:

— Ախ, աչքի ես անցկացրե՛լ, — ասաց նա շատ թուփուփու: — Փո, թույլ տվեք ասել, քննական աշխատանքը ահա այնտեղ է, գրադարակում: Մի այստեղ տուր, խնդրեմ:

Դա գարշելի խոզութիւնն էր նրա կողմից, բայց ես վերցրի տետրս ու տվեցի նրան, ուրիշ ճար չկար: Հետո նորից նստեցի այդ ցեմենտե մահճակալին: Չեք կարող պատկերացնել, թե ինչպէս էի ափսոսում, որ եկել եմ նրան հրաժեշտ տալու:

Նա տեսաւ բռնել էր ձեռքին, ինչպէս աթարի կտորը կամ մի ավելի վատ բան:

— Նոյեմբերի շորսից մինչեւ դեկտեմբերի երկուսը մենք անցել ենք Եգիպտոսը: Դու ինքդ ես քննութիւնն համար այդ թեման ընտրել: Չէի՞ր կամենա լսել, թե ինչ ես գրել:

— Չէ, սըր, կարիք չկա:

Իսկ նա, միկնույն է, սկսեց կարդալ: Եթե սուսցիլը սրջել է մի բան անել, գու ալլեա շեա կարող նրան ես պահել: Միկնույն է, իր ասածն է անելու:

«Եգիպտացիք հին ցեղեր են, ծագումով կովկասցի, և բնակվում են Աֆրիկայի հյուսիսային շրջաններից մեկում: Աֆրիկան, ինչպէս հայտնի է, արեւելյան կիսագնդի ումեկամեծ մայր ցամաքն է»:

Եվ ես պետք է նստեի ու ունկնդրեի այդ ամբողջ անհեթեթութիւնը: Խոզութիւնն է, ազնիվ խոսք:

«Մեր օրերում մենք հետաւրեւում ենք եգիպտացիներով

բազմաթիվ պատճառներով: Ժամանակակից գիտությունը գեոևս ջանում է պատասխանել այն հարցին, թե ինչ գաղտնի նյութերի խառնուրդ էին գործածում եգիպտացիք՝ գմուսելով իրենց հանգուցյալներին, որպեսզի նրանց դեմքերը չփտեին բազում դարերի ընթացքում: Այդ խորհրդավոր առեղծվածը գեոևս մատահրավեր է նետում ֆանտերորդ դարի ժամանակակից գիտությանը»:

Նա լոնց և ցած դրեց տետրս: Ես գրեթե ատում էի նրան այդ պահին:

— Քո, այսպես ասած, էքսկուրսը գիտության մեջ, սրանով ավարտվում է, — շարունակեց նա միևնույն թունոտ ձայնով: Երբեք չէի կարծի, թե այդքան գառամյալ ծերուկի մեջ այդքան թույն կարող է լինել: — Բայց գու ստորև հատուկ ավելացում ես կատարել՝ ուղղված անձամբ ինձ:

— Այո, այո, հիշում եմ, — ասացի: Ես շտապեցի, որպեսզի գոնե այդ մասը չկարդա: Բայց ինչ, մի՞թե նրան հնարավոր է կանգնեցնել: Նրանից ուղղակի կայծեր դուրս ցայտեցին:

«Քանկագին միստր Սպենսեր, — նա շարժեց դուրս բարձր էր կարգում: — Ահա այն ամենը, ինչ ես գիտեմ եգիպտացիների մասին: Չգիտեմ ինչու, նրանք ինձ առանձնապես շատ շին հետաբերում, թեև Դուր նրանց մասին շատ լավ եմ դատախոսում: Ոչինչ, եթե դուր ինձ կտրեմ, ես արդեն մյուս առարկաներից կտրվել եմ, բացի անգլերենից: Ձեզ հաբգող՝ Հոլդեն Քոլֆիլդ»:

Այստեղ նա ցած դրեց իմ երկուս անփծյալ տետրը ու այնպես նայեց ինձ, ասես պինդ-պոնգում շոր-շոր տարել էր: Երբեք չեմ ների, որ այդ անհեթեթու թյուները նա բարձրաձայն կարդաց: Եթե նա ինքը այդպիսի բան գրած լիներ, ես ոչ մի գեպքում չէի կարդա, ազնիվ խոսք եմ ասում: Իսկ որ կարևորն է, ես այդ հավելումը կատարել էի, որպեսզի նա վատ չզգա ինձ կտրելով:

— Դու բարկանո՞ւմ ես, որ ես քեզ կտրել եմ, տղաս, — հարցրեց նա:

— Ի՞նչ եք ասում, սրբ, բոլորովին: — Գոնե այլևս ինձ «տղաս» չասեր, գրողը տանի:

Նա տետրս նետեց մահճակալին: Եվ, իհարկե, դարձյալ

չկարողացաւ տեղ հասցնել: Ստիպված տեղիցս ճլա, վերցրի: Գրեցի «Ատլանտիկ մանսլիի» վրա: Սա էլ մի կրակ-է, բոպեն մեկ կռացիր:

— Իսկ դու ինչպե՞ս կվարվեիր իմ փոխարեն, — հարցրեց նա: — Միայն ճիշտն ասա, տղաս:

Այո, երևում է, նա շատ վատ էր զգում, որ ինձ կտրել էր: Ես, իհարկե, սկսեցի գլուխը յուղել: Ասացի, որ ես մտավոր հետամնաց երեխա եմ, ընդհանրապես ապուշի մեկը, որ նրա փոխարեն ինքս էլ այդպես կվարվեի, որ շատերը չեն հասկանում, թե ինչ դժվար բան է ուսուցչի աշխատանքը: Ու այդպես շարունակ, մի խոսքով գլուխը յուղեցի, ինչպես հարկն է:

Բայց ամենածիծաղելին այն էր, որ ես շարունակ ուրիշ բանի մասին էի մտածում: Համ գլուխը յուղում էի, համ էլ ուրիշ բանի մասին մտածում: Ես Նյու-Յորքում եմ ապրում ու մտածում էի Կենտրոնական զբոսայգու այն լճակի մասին, որ գտնվում է Հարավային ելքի մոտ. հետաքրքիր է՝ սառչո՞ւմ է այն, թե չէ, իսկ եթե սառչում է, հապա բաղերն ո՞ւր են գնում: Զէի կարողանում պատկերացնել, թե բաղերն ուր են գնում, երբ լիճը ամբողջությամբ ծածկվում է սառույցով: Գուցե բեռնատար է գալիս ու նրանց տեղափոխում որևէ կինդանաբանական այգի՞: Իսկ գուցե շվո՞ւմ են պարզապես:

Այնուամենայնիվ, դա շատ լավ է հաշողվում ինձ: Ուզում եմ ասել, որ կարող եմ ուզածիս պես յուղել ծերունի Սպենսերի գլուխը ու այդ ընթացքում մտածել բաղերի մասին: Հետաքրքիր է: Բայց երբ խոսում ես ուսուցչիդ հետ, առհասարակ ոչինչ չպետք է մտածես: Ծվ հանկարծ նա ընդհատեց ինձ: Նա միշտ էլ ընդհատում է:

— Ասա տեսնեմ, իսկ ի՞նչ ես մտածում այդ կապակցությամբ: Հետաքրքիր է իմանալ: Շատ հետաքրքիր է:

— Այն մասին, որ ինձ վտարե՞լ են Փենսիլից, — հարցնում եմ: Գոնե իր անտեր խալաթը կոճկեր: Զգվե՞լի է նայելը:

— Եթե չեմ սխալվում, դու այդպիսի դժվարությունների ես հանդիպել նաև Հուտտոնի դպրոցում և էլքտոն-հիլում:

Նա այդ բանը ոչ միայն թունտտ, այլև գարշելի ձևով ասաց:

— Էլքտոն-հիլլում ես ոչ մի դժվարութիւն էլ չեմ ունեցել: Ոչ կտրվել եմ, ոչ էլ մեկ ուրիշ բան, պարզապես դուրս եմ եկել և վերջ:

— Քույլ տուր հարցնել՝ ինչո՞ւ:

— Ինչո՞ւ: Դա երկար պատմութիւն է, սըր: Այդ ամենք բավական բարդ պատմութիւն է:

Իսկի շեմ ուզում պատմել նրան, թե ինչպես և ինչու: Միևնույն է, ոչինչ չի հասկանալու: Դա նրա խելքի բանը չէ: Իսկ էլքտոն-հիլլից հեռացա գլխավորապես այն պատճառով, որ այնտեղ ծայրից ծայր կեղծիք է: Ամեն ինչ ցուցադրական է, անհնար է ազատ շնչել: Օրինակ՝ հենց նրանց դիրեկտոր միտոր Հասսը: Այդպիսի ստոր, երկբռեասանի մարդու կյանքումս չեմ հանդիպել: Մերունի Քերմերից տասն անգամ ավելի վատ է: Կիրակի օրերին, օրինակ, այդ գրողի տարած Հասսը գալիս էր ու այցելության եկած բոլոր ծնողների ձեռքը սեղմում: Ոչ այնպես սիրալիր, այնպես քաղաքավարի, անց որ պատկեր: Բայց բոլորովին միանման չէր ողջունում: Երեխաներից մի քանիսի ծնողները ավելի հաշարակ մարդիկ էին, աղքատ: Դուք մի տեսնեիք, թե նա ինչպես էր բարևում սենյակի իմ հարևանի ծնողներին: Հասկանո՞ւմ եք, եթե որևէ մեկի մայրը գեր է, կամ ծիծաղելի է հագնված, իսկ հայրը խիստ բարձր ուսերով կոստյում է հագնում ու հնաձև կոշիկներ, սև ու սպիտակ, այստեղ այդ Հասս կոշվածը ընդամենը երկու մատների ծայրն էր մեկնում ու կեղծ ժպտում էր, իսկ հետո երբ սկսում էր խոսել ուրիշ ծնողների հետ՝ կես ժամից ավելի շաղակրատում էր: Տանել չեմ կարող այդպիսի բաները: Կատաղելս գալիս է: Այնպես եմ կատաղում, որ գժվել կարելի է: Ատում եմ այդ անիծյալ էլքտոն-հիլլը:

Մերունի Սպենսերը ինչ-որ բան հարցրեց ինձ, բայց ես լավ չլսեցի, անվերջ այդ սրիկա Հասսի մատին էի մտածում:

— Ի՞նչ ասացիք, սըր. — ասում եմ:

— Բայց գոնե վշտացած ես, որ ստիպված ես հեռանալ Փենսիից:

— Այո, իհարկե, մի քիչ վշտացած եմ: Իհարկե... Բայց համենայն դեպս, ոչ շատ: Երևի դեռ չի ազդել վրաս: Դրա համար ժամանակ է հարկավոր: Հիմա ավելի շատ մտածում

Եմ, թե ինչպես եմ գնալու տուն շորեքշարքի օրը: Երևում է.  
Ես, այնուամենայնիվ, ապուշ եմ:

— Մի՞թե դու բողոքովին չես մտածում քո ապագայի  
մասին, տղաս:

— Ինչպես չէ, մտածում եմ, իհարկե:— Ես կանգ առա:—  
Միայն թե ոչ շատ հաճախ: Ո՛չ հաճախ:

— Կմտածես, խելքի կգաս,— ասաց ծերունի Սպենսե-  
րը:— Խելքի կգաս, բայց ուշ կըինի:

Ինձ դուք չեկա՛վ: Ինչո՞ւ է այդպես ասում կարծես ար-  
գեն մեռել եմ: Ստակալի տհաճ է:

— Անպայման կմտածեմ,— ասում եմ,— ես կմտածեմ:

— Ինչպես բացատրեմ քեզ, տղաս, ինչպես գլուխդ մրա-  
ցրենեմ այն, ինչ հարկավոր է: Ախր ես ուզում եմ քեզ օգ-  
նած լինել, հասկանո՞ւմ ես:

Երևում է, նա խկապես ուզում էր օգնել: Իսկականից  
Քայց մենք ասրբեր կողմերի վրա էինք քաշում, ահա թե  
ինչ:

— Գիտեմ, սըր,— ասում եմ:— Եվ շատ շնորհակալու-  
թյուն: Ազնիվ խոսք, ես դա գնահատում եմ, խկապես:

Այստեղ ես ոտքի ելա: Աստված վկա, էլ չէի կարող  
նույնիսկ տասը րոպե նստել, թեկուզե մահվան սպառնալի-  
քի տակ:

— Դժբախտաբար, իմ գնալու ժամանակն է: Պետք է  
փրերս վերցնեմ մարմնամարդական դահլիճից, ես այնտեղ  
շատ բան ունեմ, որոնք ինձ պետք կգան: Աստված վկա,  
գնալուս ժամանակն է:

Նա միայն նայեց վրաս ու դարձյալ սկսեց օրորել գլուխը:  
Եվ դեմքը այնպես լուրջ ու տխուր դարձավ: Ես հանկարծ  
շատ խղճացի նրան: Բայց հո չէի կարող մի ամբողջ դար-  
մնալ նրա մոտ ցցված, համ էլ, չէ որ մենք ասրբեր կող-  
մերի վրա էինք քաշում: Ու նա անվերջ ինչ-որ բան էր նե-  
տում դեպի մահճակալը և վրիպում էր, և նրա այդ խղճուկ  
խալաթը, որի տակից ամբողջ կուրծքը երևում էր, այդքանը  
բավական չէ, դեռ շուրջն էլ գրիպային դեղերի հոտ էր  
փչում:

— Գիտեք ինչ, սըր, դուք իմ պատճառով մի՞ վրագովվեք:  
Չարժե,— ասում եմ,— ազնիվ խոսք: Ամեն ինչ կկարգավոր-

վի: Ես անցման տարիքում եմ, ինքներդ էլ գիտեք: Բուլորիք էլ պատահում է:

— Զգիտեմ, տղաս, շգիտեմ...

Զգվում եմ, որ այդպես մրմնջում եմ:

— Պատահում է,— ասում եմ,— բուլորի հետ էլ պատահում է: Իսկապես, սրբ, հարկ չկա, որ իմ պատճառով տրխբեք:— Ես նույնիսկ ձեռքս դրեցի նրա ուսին:— Զարժե,— ասում եմ:

— Մի բաժակ տաք շոկոլադ շե՞ս խմի գնալուց առաջ: Միսիս Սպենսերը հաճույքով...

— Կխմեի, սրբ, ազնիվ խոսք, բայց ուշանում եմ: Հարկավոր է շուտ հասնել մարմնամարզական դահլիճ: Շատ շնորհակալ եմ ձեզնից, սրբ, շատ շնորհակալ եմ:

Ու միմյանց ձեռք սեղմեցինք: Այս ամենը դատարկ բան է, իհարկե, բայց շգիտեմ ինչու, տխրեցի:

— Ես ձեզ կգրեմ, սրբ: Ձեզ լավ պահեք գրիպից հետո, լա՞վ:

— Գնաս բարով, տղաս:

Իսկ երբ ծածկեցի դուռն ու դուրս եկա ճաշասենյակ, նա ինչ-որ բան գոռաց ետևիցս, բայց ես լավ չլսեցի: Կարծեմ, «բարի ճանապարհ» էր գոռում: Իսկ գուցեև ոչ: Հուսով եմ, որ չէ: Ես երբեք որևէ մեկի ետևից չէի գոռա «բարի ճանապարհ»: Որ մտածում ես՝ գարշելի սովորություն է:

### 3

(Ես սոսկալի ստախոս եմ, նմանը կյանքում տեսած չեք լինի) Գնում եմ խանութ մի որևէ ամսագիր գնելու, բայց ոք ճանապարհին հարցնեն, թե ուր եմ գնում, կարող եմ ասել՝ օպերա: Սարսափելի բան է: Ու որ ծերունի Սպենսերին ասացի, թե գնում եմ մարմնամարզական դահլիճ, դա էլ էր փշոց: Ես այդ երիցս անիծյալ դահլիճում ոչինչ էլ չեմ պահում:

Քանի դեռ սովորում էի Փենսիում, ապրում էի նոր հանրակացարանում, Օսենբերգերի անվան առանձնաշենքում: Այդտեղ միայն ավագներն ու կրտսերներն էին ապրում: Ես կրտսերներից էի, հարևանս՝ ավագներից: Առանձնաշենքը Օսենբերգերի անունով էր կոչվում, կար այդպիսի մեկը, ոք,



առաջ Փենսիլուս էր ստվորել: Իսկ երբ ավարտել էր, բավական փող էր կուտակել և թաղման բյուրո հիմնադրել: Նա այդպիսի թաղման բյուրոներ էր ստեղծել գրեթե ամբողջ նահանգում, գիտեք, այնպիսի բյուրոներ, որոնց միջոցով հայազատներին կարող ես թաղել շնչին գումարով՝ հինգ դոլլարով: Գուք մի տեսնե՞ք այդ Օսենբերգեր կոչվածին: Գրազ կգամ, որ նա հանգուցյալներին ուղղակի սյարկի մեջ է մտցնում ու գետը նետում: Ահա այդ տիպը բավական փող է հատկացրել Փենսիլին, ու մեր առանձնաշենքը կոչել են նրա անունով: Առաջին մրցությանը նա եկել էր իր շքեղ «կադիլլակով», իսկ մենք պետք է բարձրանայինք տրիբունաներն ու աշխարհով մեկ փողհարեինք, այսինքն՝ «ուռա» գոռայինք: Իսկ հաջորդ առավոտյան մատուռում մի տասը ճամ ճառ կարդաց: Նա մի հիսուն անկողոտ պատմեց, ուղղակի նավթալիներից հանած, ուզում էր ցույց տալ, թե ինչպիսի կտրիճն է: Ուժ ունի: Իսկ հետո սկսեց պատմել, որ դժվարությունների հանդիպելիս, առհասարակ նեղն ընկած ժամանակ երբեք չի ամաչում՝ չոքում է ու աղոթում աստրծուն: Ու մեզ էլ էր խորհուրդ տալիս միշտ աղոթել աստրծուն, ուզած ժամանակ գրուցել երկնավորի հետ: «Գուք, — ա՛ում է, — դիմեցեք Քրիստոսին, ինչպես ձեր բարեկամին, ես ինքս միշտ էլ սիրտս քացում եմ Քրիստոսի առաջ: Նույնիսկ մեքենան վարելիս»: Քիչ էր մնում շունչս փչելի: Պասկերացնում էի, թե այդ շան որդին ինչպես է մեքենան առաջին արագության վրա փոխադրում ու միաժամանակ Քրիստոսին խնդրում ավելի շատ հանգուցյալներ ուղարկել: Բայց այդ ժամանակ նրա ճառի ընթացքում մի շատ լավ բան պատահեց: Նա արդեն հասել էր կեսին, հենց իր մասին էր պատմում, թե ինչ հրաշալի մարդ է ինքը, որքան ճարպիկ, ու մեկ էլ էդդի Մարսալան, որ ուղիղ իմ առջևում էր նստած, մի հատ ուժգին բաց թողեց: Իհարկե, դա սարսափելի է, խիստ անքաղաքավարություն, եկեղեցում, բոլորի ներկայությամբ, բայց շատ ծիծաղելի ստացվեց: Կեցցե՛ս, Մարսալա՛: Քիչ էր մնում տանիքը փլվելու: Ոչ քա բարձրաձայն շփոթողեց, իսկ այդ Օսենբերգերը ձեռքերեց, թե բան չի լսել, բայց «ճերունի Թերմերը՝ մեր դիրեկտորը, նրա կողքին էր նստած՝ ամբիտնում, ու անմիջապես երևաց, որ շատ լավ էլ լսել է:

Մէ՛հ, այ թե բարկացա՛մ նա: Ուրի՛նչ շատաց, բայց պահանջեց երեկոյան ներկայանալ լրացուցիչ պարապմունքի ու ճառ ասաց: Ասաց, թե այն աշակերտը, որ խախտեց կարգը տրայտողութեան ժամանակ, արժանի չէ մեր դպրոցում մնալու: Մենք փորձեցինք ստիպել մեր Մարտալային մի կրակահերթ էլ բաց թողնել ձերունի Քերմերի ելույթի ժամանակ, բայց նա տրամադիր չէր: Եվ այսպես, ուրեմն, ես ապրտամ էի այդ Օսենբերգերի անվան նոր հանրակացարանում:

Սերունի Սպենսերի մտտից հաճելի էր ընկնել հանրակացարան, մանավանդ որ բոլորը ֆուտբոլ էին գնացել, իսկ ջեռուցումը բացառութեան կարգով լավ էր տաքացնում: Նույնիսկ մի տեսակ հարմարավետ էր դարձել: Հանեցի բաճկոնս, փողկապս, արձակեցի բլուզիս օձիքը, իսկ հետո գրի կարմիր գլխարկս, որ առավոտյան էի գնել Նյու-Յորքում: Գա որսորդական գլխարկ էր՝ շափից դուրս երկար հովաքով: Ես սպորտային խանութի ցուցափեղկում տեսա, երբ գուրս եկանք մետրոից, որտեղ մոռացել էի այդ անիծյալ սուսերնեքը: Ընդամենը մեկ դոլլար էի վճարել: Գլխարկը թարս էի գրել գլխիս, հիմարութեան է, իհարկե, բայց հնձ ջատ էր գուր գալիս: Հետո վերցրի գիրքը, որ կիսատ էի թողել, ու նստեցի բազկաթոռին: Ամեն սենյակում երկու բազկաթոռ կար: Մեկն իմն էր, մյուսը՝ հարևանինս՝ Ուորդ Սրտբեդլեյթերինը: Բազկակալները կոտրտված էին, որովհետև ժիշտ որևէ մեկը նստում էր դրանց վրա, բայց բազկաթոռն ինքը շատ հարմարավետ էր:

Կարդում էի այն գիրքը, որը գրադարանում սխալմամբ էին ինձ տվել: Ես միայն տանը նկատեցի, որ իմ ուզած գիրքը չեն տվել: Նրանք ինձ տվել էին Իսահակ Գայնսենի «Աֆրիկայի թավուտներումը»: Կարծում էի անպետք բան է, բայց հետաքրքիր դուրս եկավ: Ընդհանրապես ես շատ անկիրթ եմ, բայց շատ եմ կարդում: Իմ սիրած գրողը Գ. Բ. Ս է՝ իմ եղբայրը, իսկ երկրորդ հերթին արդեն՝ Ռինգ Լարդները: Մենդանս օրը եղբայրս ինձ նվիրեց Ռինգ Լարդների գիրքը: Գա Փենսի ընդունվելուցս առաջ էր: Գրքում շատ ծիծաղելի պիեսներ էին տպագրված ու մեկ էլ մի պատմվածք՝ կարգավորող-նստիկանի մասին, սա սիրահարվում է մի շատ սիրունիկ աղջկա, որը անընդհատ խախտում է երթևեկութեան

կանոնները: Բայց ուտիկանը ամուսնացած է և, իհարկե, չի կարող ամուսնանալ աղջկա հետ: Վերջում աղջիկը կործանվում է, որովհետև մշտապես խախտում է երթևեկութան կանոնները: Ցնցող պատմվածք է: Ընդհանրապես ես ամենից շատ այնպիսի գրքեր եմ սիրում, որոնց մեջ գրեն մի որևէ ծիծաղելի բան կա՝ իհարկե, ամեն տեսակ դասականներ էլ եմ կարդում, ինչպես տառնք՝ «Վերադարձ հայրենիքը», և կույի մասին հազար ու մի գրքեր, և դեղեկտիվ, բայց զրանք մի տեսակ այնքան էլ չեն հրապարտում ինձ: Այ, ինձ դուր են գալիս այնպիսի գրքեր, որոնք կարդալուց հետո անմիջապես մտածում ես՝ ի՞նչ լավ կլինի այդ գրողը քո բարեկամը լինի, որին ցանկացած ժամանակ կարողանայի գանգահարել ու զրուցել հետը: Բայց այդպես հազվադեպ է լինում: Ես հաճույքով կզանգահարեի այդ Դայնսենին, գե: իհարկե, նաև Ռինգ Լարդերին, միայն թե Դ. Բ.-ն ասաց, որ նա արդեն մեռել է: Իսկ այ, այնպիսի գիրք, ինչպիսին, օրինակ, Սոմերսեթ Մոեմի «Մարդկային կրքերի բռն» է, այն չէ, ես անցած ամուսնը կարդացի: Գիրքն ընդհանրապես ոչինչ, բայց ես ոչ մի ցանկություն չունեմ զանգահարելու այդ Սոմերսեթ Մոեմին: Ինքս էլ չգիտեմ ինչու: Պարզապես նա այն մարդը չէ, ում հետ որ կցանկանայի զրուցել: Ես ավելի շուտ կզանգահարեի հանգուցյալ Թոմաս Հարդին: Ինձ դուր է գալիս նրա Յուստասիա Վեյլը:

Ուրեմն դրի նոր գլխարկս, նատեցի բազկաթոռին ու սկսեցի կարդալ «Աֆրիկայի թավուտներումը»: Մի անգամ արդեն կարդացել էի, բայց ուզում էի որոշ տեղեր նորից կարդալ: Ընդամենը մի երեք էջ էի կարդացել, երբ ինչ-որ մեկը գուրս եկավ ցնցուղարանից: Առանց նայելու էլ հասկացա, որ Ռոբերտ էկլին է. սա ապրում էր հարևան ոսնյակում: Մեր թևում երկու սննյակը մի ընդհանուր ցնցուղարան ունեին, ու այդ էկլին օրը տաան անգամ իրեն ինձ մոտ էր գցում: Բացի այդ, ամբողջ հանրակացարանից մենակ նա էր, որ ֆուտբոլ չէր փնացել: Նա ընդհանրապես ոչ մի տեղ չէր գնում: Տարօրինակ տիպ էր: Նա բարձր դասարանցի էր և արդեն շորս տարի է, սովորած էր Փենսիլում, բայց

թոլորը նրան ազգանունով էին դիմում՝ էկլի: Նույնիսկ նրա սենյակի հարևանը՝ Հերբ Հեյլը, երբեք նրան «Բոր» կամ գոնե «էկ» չէր ասում: Երևի կինն էլ նրան «էկլի» կանվանի, եթե, իհարկե, երբևէ ամուսնանա: Նա շափից դուրս բարձրահասակ էր՝ վեց ֆուտ, շորս դյուլք, սոսկալի կուզիկ: ատամներն էլ փտած: Ես ոչ մի անգամ չեմ տեսել, որ նա մաքրեր ատամները: Կեղտոտ, մի տեսակ բորբոսնած էին նրա ատամները, իսկ երբ ճաշարանում բերանը կարտոֆիլ կամ սիսեռ էր լցնում, քիչ էր մնում սիրտս ետ տամ: Հապա պզուկները: Ոչ միայն ճակատին ու ծնոտին, ինչպես բոլոր տղաներին է պատահում, նրա ամբողջ դեմքն էր պզուկոտ: Ընդհանրապես նա զզվելի էր: Ու մի տեսակ ստոր: Ծիշտն ասած, ես այնքան էլ չէի սիրում նրան:

Զգացի, որ կանգնած է ցնցուղարանի շեմին, բազկաթոռիս ետևը, ու նայում է տեսնի՝ տա՞նն է Ստրեդլեյթերը: Նա Ստրեդլեյթերին ատում էր ու երբեք ներս չէր մտնում, երբ սա տանն էր լինում: Ընդհանրապես նա բոլորին էլ ատում էր:

— Ողջույն,— ասում է: Նա միշտ այնպիսի տոնով է խոսում, ասես մահու շափ հոգնած է կամ ձանձրացած: Զէր ուզում, որ ես մտածեմ, թե ինքը, իբր, հյուր է Լկել ինձ: Զևացրեց, թե իբր պատահամար է ներս մտել, գրողը տանի:

— Ողջույն,— ասում եմ, բայց գիրքը ցած չեմ դնում: Այնպիսի տիպի պատճառով, ինչպիսին էկլին է, եթե ցած գնես գիրքդ, կորած ես, գլուխդ կտանի: Միևնույն է, գլուխդ տանելու է, բայց ոչ անմիջապես, եթե շարունակես կարդալ:

Նա սկսեց անցուղարձ անել սենյակում ինչպես միշտ՝ գանդաղ և ձեռք տալ սեղանին ու թոռակին դրված իմ բոլոր իրերին: Միշտ այդպես է, վերցնելու է, դնի, նորից նայի: Ինչպե՞ս էր ազդում նյարդերիս վրա:

— Հը, ինչպե՞ս անցավ սուսերամարտը,— ասում է: Նա ուզում էր անպայման խանգարել ինձ, փշացնել ամբողջ ճաճույթս: Նա թքած ունեի սուսերամարտի վրա:— Ո՞վ հաղթեց, մե՞նք, թե ոչ մենք,— հարցնում է:

— Ոչ ոք էլ չհաղթեց,— ասում եմ, բայց գլուխս չեմ բարձրացնում:

— Ի՞նչ,— հարցնում է: Նա միշտ կրկնում էր հարցը:

— Ոչ ոք էլ չհաղթեց:— Աշփես պոչով նայեցի տեսնեմ նա ինչ է անում իմ պահարանիկի վրա: Զննում էր աղջկա լուսանկարը, որի հետ ես ընկերութիւն էի անում Նյու-Յորքում: Սալլի Հեյսի լուսանկարը: Նա այդ անիծյալ լուսանկարը, հավանաբար, արդեն հազարերորդ անգամ էր նայում ու երբեք իր տեղը չէր դնում: Դիտմամբ. անմիջապէս երևում էր դա:

— Ոչ ոք չհաղթեց,— ասում է:— Այդ ինչպե՞ս:

— Դե այդ անտեր սարքավորումները մոռացել էի մետրոյում:— Այդպես էլ գուլիս շքարձրացրի:

— Մետրոյում: Գրողը տանի, կորցրե՞լ ես, ինչ է:

— Ճիշտ ուղղութեամբ չէինք գնում: Ստիպված շտաշուտ վեր էինք կենում նայելու:

Նա մոտեցավ կտրեց լույսս:

— Լսիր,— ասում եմ,— ջո պատճառով արդեն քսաներորդ անգամ եմ կարդում միլենույն նախադասութիւնը:

Ով էլ լինի նրա տեղը, ակնարկը կհասկանար: Բայց եկին՝ չէ:

— Իսկ քեզ չե՞ն ստիպի վճարել արժեքը,— հարցնում է:

— Զգիտեմ և շեմ էլ ուզում իմանալ: Գուցե կնստես, էկլի, բալիկս, թե չէ լույսս ամբողջովին փակում ես:

Նա ասում էր, որ ես իրեն «էկլի, բալիկս» էի ասում: Իսկ ինքը անվերջ կրկնում էր, որ ես դեռևս փոքրիկ եմ, որովհետև տասնվեց տարեկան եմ, իսկ ինքը՝ արդեն տասնութ է: Նա կատաղում էր, որ իրեն «բալիկ» էի ասում:

Ու այդպես էլ մնաց կանգնած: Այդպիսին է այդ էկլին— ոչ մի դեպքում չի հեռանա, եթե նրան խնդրես: Հետո, իհարկե, կհեռանա, բայց եթե խնդրես՝ դիտմամբ չի հեռանա:

— Ի՞նչ ես կարդում,— հարցնում է:

— Զես տեսնում՝ գիրք եմ կարդում:

Նա շրջեց էջը, նայեց վերնագիրը:

— Լա՞վն է,— հարցնում է:

— Այո, հատկապես այս նախադասութիւնը, որ անընդհատ կարդում եմ:— Սա էլ կարող եմ երբեմն բավական թունտոտ լինել, եթե տրամադրված լինեմ: Բայց տեղ չհասավ: էլի սկսեց շրջել սենյակում, էլի ձեռք տալ, շոշափել իրերս, նույնիսկ Ատրեղեկութեան իրերը: Վերջապես գիրքը

նետեցի սեղանին: Միևնուրն է, էկլիի ներկայութեամբ ընթերցելն իմաստ չունի: Ուղղակի ան՛նար է:

Ես փոփոցի բազկաթոռին ու սկսեցի նայել, թե էկլին ինչպես է տնօրինում սենյակում: Նյու-Յորք մեկնելուց կարգին հոգնել էի, սկսեցի հորանջել: Հետո էլ սկսեցի հիմարութուններ անել: Միում եմ երբեմն ձանձրույթից հիմարութուններ անել: Գլխարկիս հովարն առաջ բերի ու իջեցրի մինչև աչքերս: Այդպես ոչինչ չէի կարողանում տեսնել:

— Ավա՛ղ, ավա՛ղ, կարծես թե կուրանում եմ, — ասում եմ ես նվնվալով: — Օ՛, թանկագին մայրիկ, ի՛նչ մութ է շուրջս:

— Խելքդ թոցրել ես, աստված վկա, — ասում է էկլին:

— Մայրիկ, հարազա՛տս, ձեռքդ տար դժբախտ զավակիդ: Ինչո՞ւ օգնութեան ձեռք չես մեկնում:

— Գե վերջ տուր, տխմար:

Ես սկսեցի կույրի պես ափսփել շուրջս, առանց տեղիցս վեր կենալու: Ու անվերջ նվնվալ:

— Մայրիկ, մայրիկ: Ինչո՞ւ չես ձեռքդ տալիս:

Իհարկե, ես ուղղակի խաղում էի: Գրանից երբեմն ուրախանում եմ: Բացի այդ, գիտեի, որ էկլին սոսկալի կատաղում է: Նրա մոտ ես ուղղակի սադիստ էի դառնում: Կատաղեցնում էի ինչպես կարող էի, դիտմամբ էի կատաղեցնում: Բայց հետո ձանձրացա: Նորից հովարս ետ տարա ու փոփոցի բազկաթոռին:

— Սա ո՞ւմն է, — հարցրեց էկլին: Նա ձեռքն առավ հարեանիս ծնկակապը: Այդ անիծյալ էկլին ամեն ինչի ձեռք էր տալիս: Ինչ ասես կվերցնի, նույնիսկ կոշիկներիդ կապիչները: Ես նրան ասացի, որ ծնկակապը Ստրեդլեյթերինն է: Նա անմիջապես նետեց Ստրեդլեյթերի մահճակալին. վերցրել էր պահարանիկի վրա՞ից, բայց դիտմամբ զցեց մահճակալին:

Հետո մոտեցավ, նստեց երկրորդ բազկաթոռի բազկակալին: Երբեք մարդավարի չի նստի, անպայման բազկակալի վրա պիտի նստի:

— Որտե՞ղ ես գնել այդ հիմար գլխարկը, — հարցնում է:

— Նյու-Յորքում:

/ — Որքա՞ն ես տվել:

— Մեկ դուլար:

— Խաբել են քեզ:— Նա սկսեց լուցկու հատիկով մաքրել իր գարշելի եղունգները: Տարօրինակ սովորութիւն է: Ատամները բորբոսնած են, ականջները լիքը կեղտ, բայց եղունգները միշտ մաքրում է: Հավանաբար, կարծում է, թե մաքրասեր է: Մաքրում է ու նայում գլխարկիս:— Մեր կողմերում որտեղ գնալիս են այդպիսի գլխարկ գնում, հասկանալի՞ է: Դա գլխներին՝ որս են խփում:

— Գրողի ծոցը,— ասում եմ: Հետո հանում եմ գլխարկը, նայում: Մի աչքս կիոցում եմ, ասես նշան եմ բռնում:— Սա դրած՝ մարդ են խփում,— ասում եմ:— Ես սա դրած՝ մարդ եմ խփում:

— Իսկ հարազատներիդ գիտե՞ն, որ քեզ վատարել են:

— Ոչ:

— Որտե՞ղ է Ստրեղիկները:

— Յուտրոլի մրցութիւնում: Նա աջտեղ տեսակցութիւն ունի:— Նորից հորանջեցի: Քունս տարավ: Սեռյակում սոսկալի շոգ էր, թուլացել էի, ուզում էի քնել: Այս դպրոցում կամ մրսում էինք շան պես, կամ շոգից տանջվում:

— Նշանավոր Ստրեղիկներ— ասաց էկլիին:— Լսիր, մի բոպեով մկրատդ տուր ինձ: Մոտդ չէ՞:

— Չէ, պահել եմ, պահարանում է, ամենավերեր:

— Մի բոպեով տուր, հա՞, եղունգս պոկվել է, հարկավոր է կտրել:

Նրա համար միևնույն էր՝ հավաքել ես իրերդ, թե ոչ, ամենավերեն է դրված թե մեկ ուրիշ տեղ: Համենայն դեպս, մկրատը տվի նրան: Քիչ էր մնում ինձ սպանելի: Հենց որ բացեցի պահարանը, Ստրեղիկների ձեռնաթիակը (այն էլ շրջանակի մեջ) ընկավ գլխիս: Այնպես դրսկաց, որ գլուխս սոսկալի ցավեց: էկլին քիչ մնաց մեռներ, աջպես էր հրոհրում: Նրա ձայնը բարակ է, ժլծված: Ես նրա համար դուրս եմ բերում ճամպրուկս, հանում մկրատը, իսկ նա քրքրում է: Այդ էկլիի նմաններին հենց միայն բազական է տեսնել, թե քարն ինչպես կպավ մարդու գլխին, ուրիշ էլ բան հարկավոր չէ, կքրքրան:

— Պարզվում է, դու հումորի զգացում ունես, էկլի, բալիկս,— ասում եմ ես:— Զգիտե՞իր:— Ու մկրատը մեկնում

եմ նրան:— Ուզո՞ւմ ես թո մենեջերը դառնամ, տեղավորեմ  
քեզ ռադիոյում:

Ես նստեցի բազկաթոռին, իսկ նա սկսեց իր գարշելի  
եղունգները կտրտել:

— Գուցե սեղանի վրա՞ կկտրես եղունգներդ,— ասում  
եմ:— Սեղանի վրա կտրիր, ես չեմ ուզում բորիկ: Նոտքերով  
քայլել թո գարշելի եղունգների վրա:— Բայց նա, միևնույն  
է, շարունակում է թափել ուղղակի հատակին: Գարշելի սո-  
վորութիւնն է: Ազնիվ խոսք, զգվում ես:

— Իսկ Ստրեղլեյթերն ո՞ւմ հետ է ժամադրվել,— հարց-  
նում է: Նա միշտ հետաքրքրվում էր, թե Ստրեղլեյթերը ում  
հետ է ման գալիս, թեև ատում էր նրան:

— Զգիտեմ, իսկ քեզ ի՞նչ:

— Հենց այնպես: Տանել չեմ կարող այդ շան որդուն:  
Բոլորովին տանել չեմ կարող:

— Իսկ նա քեզ պաշտում է: Ասում է՝ իսկական արթա-  
յազն է:— Ընդհանրապես ես հաճախ եմ սկսում հիմարու-  
թիւններ անել, երբ ձանձրանում եմ:

— Նա միշտ ցցում է թիթը,— ասում է էկլին:— Զեմ  
գիմանում այդ շան որդուն: Կարելի է կարծել, թե նա...

— Լսիր, գուցե դու, այնուամենայնիվ, եղունգներդ սե-  
ղանի վրա՞ կտրես,— ասում եմ:— Ես հիսուն անգամ քեզ  
խնդրած կլինեմ...

— Միշտ ցցում է թիթը,— կրկնում է էկլին:— Իմ կար-  
ծիքով, նա ուղղակի էշի մեկն է: Բայց կարծում է, թե խե-  
լոք է, կարծում է, թե ամենախելոքն է...

— Էկլի, գրողի տարած, վերջապես սեղանի վրա՞ պի-  
տի կտրես եղունգներդ, թե ոչ: Հիսուն անգամ խնդրեցի,  
լսո՞ւմ ես:

Հիմա նա սկսեց, իհարկե, սեղանի վրա կտրել: Միայն  
գոռալով կարող ես նրան ստիպել որևէ բան մեկ:

Ես նայեցի նրան, ապա ասացի.

— Դու Ստրեղլեյթերի վրա կատաղած ես, որովհետև նա  
ասաց, որ ատամներդ գոնե երբեմն լվանաս: Նա բոլորովին  
էլ չէր ուզում քեզ նեղացնել և ոչ էլ դիտավորյալ ասաց,  
այնպես որ նրա ասածի մեջ ոչ մի վիրավորական բան  
չկար: Միայն ցանկանում էր ասել: որ դու քեզ ավելի լավ



կզգայիր, ավելի լազ տեսք կունենայիր, եթե երբեմն մաքրեիր ատամներդ:

— Իսկ ես չե՞մ մաքրում, ինչ է: Գու էլ ես նրա ասածը կրկնում:

— Ոչ, շես մաքրում: Քանի անգամ եմ հետևել, շես մաքրում և վերջ:

Ես նրա հետ հանգիստ էի խոսում: Նույնիսկ խղճում էի նրան: Հասկանում եմ, այնքան էլ հաճելի բան չէ, որ քեզ դիտողութուն անեն, թե ատամներդ շես մաքրում:

— Ստրեղլեյթերը շան որդի չէ: Նա այնքան էլ վատը չէ: Գու պարզապես շես ճանաչում նրան, դա է պատճառը:

— Իսկ ես ասում եմ՝ շան որդի է: Եվ երևակայող:

— Գուցե երևակայու՞ է, բայց ուրիշ հարցերում նա լայնսիրտ մարդ է, — ասում եմ: — Իսկապես, Հասկացիր: Օրինակ՝ պատկերացրու, որ Ստրեղլեյթերը մի փողկապ ունի կամ մեկ այլ բան, որ քեզ շատ է դուր գալիս:

Ասենք թե փողկապ, ու այդ փողկապը քեզ շատ է դուր գալիս: Ես օրինակի համար եմ ասում: Գիտե՞ս նա ինչ կաներ: Նա, հավանաբար, կհաներ այդ փողկապն ու կտար քեզ: Այո, կտար: Կամ գիտե՞ս ինչ կաներ: Նա այդ փողկապը կթողներ քո սեղանի կամ մահճակալի վրա, հասկանալի՞ է: Իսկ ուրիշները՝ երբեք:

— Գրողի ծոցը, — ասաց էկլին: — Եթե ես էլ այդքան փող ունենայի, ես էլ փողկապներ կնվիրեի մարդկանց:

— Զէ, չե՞իր նվիրի, — ես նույնիսկ գլուխս տարուբերեցի: — Մտքովդ անգամ չէր անցնի, բալիկս: Եթե դու այնքան փող ունենայիր, որքան նա, դու կլինեիր իսկական...

— Զհամարձակվես ինձ «բալիկ» անվանել: Գրողը տանի: Ես քեզ հայր կսազեմ, հիմարի գլուխ:

— Ոչ, շես սազի: — Թե ինչպես կատաղեցրեց ինձ՝ շեմ կարող ասել: Առիթը բաց չի թողնի աչքդ խոթելու, որ ինքք տասնութ տարեկան է, իսկ դու՝ ընդամենը տասնվեց... — Նախ ես թույլ չէի տա, որ ոտքդ իմ շեմին դնեիր...

— Մի խոսքով, շհամարձակվես ինձ...

Հանկարծ դուռը բացվեց, ու ներս ընկավ Ստրեղլեյթերին ինքը: Նա միշտ վազքի մեջ էր: Երբեք ժամանակ չուներ, միշտ շտապ գործեր ուներ: Վազեց ինձ մոտ, թփթփացրեց

այտերիս, — նույնպէս բազմական տհաճ սովորութիւն, — ու հարցնում է.

— Երեկոյան որեւէ տե՞ղ ես գնալու:

— Զգիտեմ: Հնարավոր է: Իսկ ինչպիսի՞ եղանակ է, ձյո՞ւն է գալիս, ինչ է:

Նա ամբողջապէս ձյունաթաթախ էր:

— Այո, ձյուն է գալիս: Լսիր, եթե տեղ շունես գնալու, քո զամշե բաճկոնը այս երեկո տուր ինձ:

— Իսկ ո՞վ տարավ:

— Դեռ չի վերջացել: Մենք գնում ենք: Զէ, իսկապէս, կտա՞ս, եթե քեզ հարկավոր չէ: Ես իմ գորշագույնի վրա ինչ-որ բան եմ թափել:

— Այո, բայց դու կլայնացնես, քո ուսերը սատանան գիտի թե որքան են լայն, — ասում եմ: Ես ու նա նույն հասակն ունեինք, բայց նա ինձնից երկու անգամ ծանր էր կշռում և ուսերն էլ շատ լայն էին:

— Զեմ լայնացնի: — Նա վազեց դեպի պահարանը: — Գործերդ ո՞նց են, էկլի, — ասում է: Շատ բարեհամբույր տղա է այդ Ստրեղիթերը: Իհարկե, ձեացնում է, բայց և այնպէս նա միշտ բարեւում է էկլիին:

Իսկ սա միայն ինչ-որ բան մոթմոթաց, երբ Ստրեղիթերը հարցրեց. «գործերդ ո՞նց են», էկլին չէր ուզում պատասխանել, բայց, արնուամենայնիվ, ինչ-որ բան մոթմոթաց, սիրտ շարեց լուսթյան մասնել: Իսկ ինձ ասում է.

— Դե լավ, ես գնացի: Դեռ կհանդիպենք:

— Լավ, — ասում եմ: Ոչ ոք մտազիւր չէր լաց լինել, որ նա վերջապէս գնում էր իր սենյակը:

Ստրեղիթերը արդեն հանում էր բաճկոնն ու փողկապք:

— Հարկավոր է սափրվել, — ասաց նա: Նրա մորուքը առատորեն աճում էր: Իսկական մորուք:

— Իսկ ո՞ւր է քո աղջիկը:

— Սպասում է մյուս թեւում, — ասում է: Նա վերցրեց սրբիչը, սափրվելու սպասքը 70 դուրս եկավ սենյակից: Հենց այդպէս, առանց վերնաշապկի էլ գնաց: Նա միշտ մինչև գոտկատեղը մերկ էր շրջում, կարծում էր, որ շատ լավ կազմվածք ունի: Ու դա ճիշտ էր, ոչինչ չեա կարող ասել:

Անելիք շունեի, դրա համար էլ նրա ետեկց գնացի լվացարանի մոտ մի քիչ լեզու ծեծելու, մինչև նա կսափովեր: Մեզնից բացի այնտեղ ուրիշ մարդ չկար, տղաները բոլորը ֆուտբոլ էին գնացել: Դժոխսային շոգ էր, բոլոր պատուհաններ քրտնել էին: Պատի երկարութեամբ տասը հատ լվացարան էր ամրացված: Ստրեղելիքները զբաղեցրեց մեքտեղինը, իսկ ես նստեցի կողքինի վրա ու սկսեցի խաղալ ծորակի հետ, մերթ բացելով ու մերթ փակելով այն: Դա իմ նյարդայնութունից էր: Ստրեղելիքները սափովում էր ու միաժամանակ «Հնդկական երգ» սուլում: Ստակալի տհաճ էր սուլում նա ու միշտ նոտաները կեղծում էր, և այնպիսի երգեր էր ընտրում, որ լավ սուլողն էլ դժվարութեամբ գլուխ կհաներ, օրինակ՝ «Հնդկական երգը» կամ «Սպանութուն հինգերորդ ավենյունում»: Նա ուզածդ երգն էլ կադավաղեր:

Ես արդեն ասել եմ, որ էկլին մաքրասեր չէր, Ստրեղելիքները նույնպես մաքրասեր չէր, բայց մի տեսակ ուրիշ ձևով: Արտաքուստ դա անկատարի էր: Միշտ էլ հրաշալի տեսք ուներ: Բայց մի տեսնելիք, թե ինչպիսի ածելով է սափորվում. ժանգոտ, մազերն աւ շորացած փրփուրը վրան կպած: Երբեք դա չէր լվանում: Ու թեև հրաշալի տեսք ուներ, հատկապես իրեն կարգի բերելուց հետո, բայց, մինևույն է, փեթի էր, ես հո նրան գիտեի: Իսկ զուգվել սիրում էր, որովհետև խելահեղորեն սիրահարված էր իրեն: Նա գտնում էր, որ իրենից գեղեցիկը չկա: Իսկապես շատ գեղեցիկ էր: Բայց նրա գեղեցկութունն այնպիսին էր, որ բոլոր ծնողները նրա լուսանկարը տեսնելով դպրոցական ալբոմում, անպայման հարցնում էին. «Ո՞վ է այս տղան»: Հասկանում եք, նրա գեղեցկութունը մի տեսակ ալբոմային էր: Մեզ մոտ՝ Փենսիլում, որքան ասես տղաներ կային, որոնք հազար անգամ նրանից գեղեցիկ էին, բայց լուսանկարում այդպես սիրուն չէին երևում: Մեկի քիթն էր շափից դուրս երկար թվում, մեկի ականջներն էին ցցված: Ես դա լավ գիտեմ:

Նստել էի Ստրեղելիքների կողքի լվացարանին և բացում աւ փակում էի ծորակը: Իմ կարմիր որսորդական գլխարկը

դեռ գլխիս էր, հովարը դեռի ետ դրած: Զափից դուրս շատ էր դուր գալիս ինձ այդ գլխարկը:

— Կտիր, — ասաց Ստրեղեյթերը, — կարո՞ղ ես ինձ մեծ ծառայություն մատուցել:

— Ինչպիսի՞, — հարցրի ես: Առանձին մի հաճույք չըզգացի: Միշտ նա խնդրում է մեծ ծառայություն մատուցել իրեն: Այդ գեղեցիկ տղաները իրենց աշխարհի պորտն են կարծում ու մշտապես խնդրում են մեծ ծառայություն մատուցել: Նրանք այնպես են սիրահարված իրենց, որ կարծում են դու էլ ես սիրահարված և ուղղակի երազում ես ծառայություն մատուցել իրենց: Խենթ են, ճիշտ եմ ասում:

— Երեկոյան որևէ տե՞ղ ես գնալու, — հարցնում է:

— Կարող է գնամ, կարող է՝ ոչ, ի՞նչ է որ:

— Երկուշաբթի օրվա համար մոտ մի հարյուր էջ բան պիտի կարդամ պատմությունից, — ասում է նա, — իմ փոխարեն չե՞ս գրի անգլերենի շարագրությունս: Եթե երկուշաբթի չհանձնեմ, կորած եմ, դրա համար էլ խնդրում եմ: Կգրե՞ս:

Դե ասեք, սա ծաղր չէ՞: Ազնիվ խոսք, ուղղակի ծաղր է:

— Ինձ դպրոցից վռնվում են գրողի ծոցը, իսկ դու խընդրում ես, որ ես քո փոխարեն ինչ-որ շարագրություն գրեմ, — ասում եմ:

— Գիտեմ, գիտեմ, բայց դժբախտությունն էլ հենց այն է, որ իմ բանը վատ կլինի, եթե շարագրությունը չհանձնեմ: Եղբոր պես, հա՞, Հուդին, կգրե՞ս:

Ես անմիջապես չպատասխանեցի, այդպիսի տիպերին օգտակար է անորոշ վիճակի մեջ պահել:

— Ինչի՞ մասին պիտի գրեմ. — հարցնում եմ:

— Ինչի մասին ուզում ես: Ամեն ինչ էլ կարող ես գրել: Եկարագրիր սենյակ, կամ տուն, կամ մի վայր, որտեղ դու ապրիլ ես: Ինչ ուզում ես. հասկանո՞ւմ ես: Միայն թե գեղարվեստական ստացվի, գրողը տանի: — Այստեղ նա հորանջեց՝ բեյանը չալի բացելով: Այ, այդպիսի վերաբերմունքից իմ աղիքները ոլորվում են: Հասկանո՞ւմ եք, քեզ խնդրում է ծառայություն մատուցել, իսկ ինքը հորանջում է: — Շատ ջանք լծափես, — ասում է նա: — Այդ գրողի տաքած Հաբուսելը դառնում է, որ դու անգլերենում շատ ես

շնացել, և նա գիտի, որ ես ու դու միասին ենք ապրում։ Այնպես որ շատ ջանք չթափես տտորակետները, կետադրության մյուս նշանները տեղը տեղին դնել։

Այսպիսի խոսակցութիւնից փոքր կտրտվում է Մարդը կարող է չավ շարագրութիւն գրել, խակ նրան ստորակետներ գնելու մասին են զգուշացնում։ Ստրեղէյթիւրը հենց այդպես էր հասկանում այդ գործը։ Ջանում է ապացուցել, որ չի կարողանում գրել միմիայն այն պատճառով, որ ստորակետները ճիշտ տեղում չի դնում։ Ճիշտ էկլիթի նման։ Նա էլ է այդպես։ Մի անգամ բասկետբոլի մրցումներին նստել էի էկլիթի մոտ։ Թիմում մի շտենսված խաղացող կար՝ Հովի Քոլլը, նա Նույնիսկ դաշտի կենտրոնից կարող էր փնդակը ցանցի մեջ գցել, անգամ առանց տախտակին կաշխելու։ Իսկ էկլիթն ամբողջ խաղի ընթացքում գլուխս տանում էր, թե Քոլլը ի՞նչ հասակ ունի բասկետբոլի համար, ու վերջ, հասկանում եք։ Ատում եմ այդպիսի զրախոսութիւնը։

Վերջապես ձանձրացա լվացարանի վրա նստելուց, ցած թռա ու սկսեցի շեշտակա պարել, հենց այնպես, ծիծաղելու համար։ Ուզում էի մի քիչ թարմանալ, իսկ շեշտակա պարի բոլորովին շեմ կարողանում։ Բայց լվացարանում հատակը քարից է, ու շատ հավեսին է ստացվում շեշտական։ Ես սկսեցի ընդօրինակել մի կինոարտիստի։ Մի երաժշտական կատակերգության մեջ էի տեսել։ Սոսկալի ատում եմ կինոն, բայց շատ եմ սիրում կապել զերտաաններին։

Ստրեղէյթիւրը սափրվելիս անընդհատ նայում էր ինձ հայելու մեջ։ Իսկ ինձ էլ հանդիսատես էր պետք։ Ընդհանրապես սիրում եմ ցուցադրվել։

— Ես հենց իր՝ նահանգապետի որդին եմ, — ասում եմ։ Ու սկսեցի կաշվից դուրս գալ։ Պարում եմ ամբողջ սենյակով մեկ։ — Հայրս թույլ չի տալիս պարող դառնալ։ Նա ինձ Օքսֆորդ է ուղարկում, բայց շեշտական իմ երակներին մեջ է, արյան մեջ, գրողը տանի։

Ստրեղէյթիւրը քրքշում էր, համենայն դեպս, նա համորի զգացում ունեւր։

— Այսօր Զիգֆրիդի պրեմիերան է։ — Արդեն սկսեցի շնչահեղձ լինել, շնչառութիւնս մի բանի պետք չէ։ — Հերոսը չի կարող ելույթ ունենալ։ Հարբած է կառապսեմի պես։

էլ ո՞ւմ են վերցնելու նրա փոխարին: Ի՞նչ, այ թե ում, խեղճ ու աղքատ նահանգապետի որդու:

— Որտեղի՞ց ես հաջողացրել այդ գլխարկը,— հարցրեց Ստրեղիկները. նա նոր միայն նկատեց իմ որսորդական գլխարկը:

Շուռչու կտրվում էր, վերջ տվի հիմարություններին: Հանեցի գլխարկս ու արդեն հարյուրերորդ անգամ նայեցի վրան:

— Նյու-Յորքում եմ գնել, մի դուլլար եմ տվել: Քեզ զո՞ւր է գալիս:

Ստրեղիկները պիտավ արեց:

— Հրաշալի է,— ասաց նա: Քծնում էր: Ու անմիջապես էլ հարցրեց.— Լսիր, կգրե՞ս շարագրությունս, թե չէ: Ես պետք է իմանամ:

— Ժամանակ ունենամ՝ կգրեմ, չեմ ունենա՞ չեմ գրի:

Ես նորից նստեցի նրա կողքի լվացարանին:

— Իսկ ո՞ւմ հետ ես ժամադրված: Ֆիցջերալդի՞:

— Գրողի ծոցը: Ես այդ խոզից վաղուց եմ ձեռ քաշել:

— Ի՞նչ ես ասում: Որ աշխատես է, գիշիր ինձ, բարեկամս: Կշորեմ: Նա իմ ճաշակովն է:

— Խնդրեմ: Միայն թե նա քեզ համար մի քիչ պառավ է:

Ու հանկարծ, հենց այնպես, առանց պատճառի, ուզեցի ցած թռչել լվացարանից ու կրկնակի նեխոն անել այդ հիմար Ստրեղիկներին: Հիմա կբացատրեմ, դա լմբշամարտի այսպիսի ձև է. բռնում ես հակառակորդիդ վզից ու մի լավ ջարդում, եթե պետք է: Ու ես ցատկեցի: Հովազի նման աստնեցի նրա վրա:

— Խո՞ղ, Հոլդեն, պպո՞ւշ,— ասաց Ստրեղիկները: Նա չէր սիրում, երբ հիմարություններ էին անում: Մանավանդ քր սափրվում էր:— Ուզում ես կոկորոս կտրե՞մ:

Բայց ես նրան բաց չէի թողնում: Ես նրան լավ հուպ էի տալիս կրկնակի նեխոնով:

— Դե փորձիր, դուրս պրծնել իմ երկաթե ճանկերից:

— Օ՛, գրողը տանի,— նա ածելին ցած դրեց, հանկարծ ձեռքերը բարձրացրեց ու դուրս պրծավ գրկիցս: Նա շատ ասեղ էր, իսկ ես՝ շատ թուլ:— Թող կատակներդ,— ասաց

նա: Սկսեց երկրորդ անգամ սափրվել: Նա միշտ կրկնակի է սափրվում, գեղեցկանում է: Իսկ նրա ածելին կեղտոտ է:

— Հապա ո՞ւմ հետ ես հանդիպելու, եթե ոչ Ֆիցչերալդի, — հարցնում եմ: Ես նորից նստեցի նրա կողքի վացարանին: — Փոքրիկ Ֆիլիս Սմիթի, հա՛:

— Ոչ, նրա հետ չետք է հանդիպելի, բայց ամեն ինչ խառնվեց: Ինձ սպասելու է Բեդ Քոոպի ընկերուհին: Սպասիր, քիչ էր մնում մոռանալիս նա ճանաչում է քեզ: —

— Ո՞վ է ճանաչում ինձ:

— Իմ աղջիկը:

— Չէ մի՛, — ստացի: — Իսկ ի՞նչ է անունը: — Նույնիսկ հետաքրքրեց ինձ:

— Հիմա կհիշեմ... Հա՛, Ջին Գալլահերի:

Տեր աստված, քիչ էր մնում ուշաթափվելի, երբ լսեցի:

— Ջին՝ Գալլահերը, — ասում եմ: Ես նույնիսկ վացարանից ցած թռա, երբ իմացա: Ազնիվ խոսք, քիչ մնաց ուշաթափվելի: — Դե, իհարկե, մենք իրար ծանոթ ենք: Նախանցյալ ամռանը շատ մոտիկ էր ապրում մեզ: Նա մի վիթխարի դոբերման-պինչեր էլ ունեիր: Հենց դրա առիթով էլ ծանոթացել էինք: Այդ շո՞՞նք միշտ մեր այգի՞ն էր վազում:

— Լույսս փակում ես, Չուրեն, — ասում է Ստրեդլիթերը: — Ետ քաշվիր գրողի ծոցը, ուրիշ տեղ չկա՞, ի՞նչ է: Օ՛հ, ինչպես էի հուզվում, ազնիվ խոսք:

— Որտե՞ղ է նա, — հարցնում եմ: — Պետք է գնալ նրան բարեկ: Որտե՞ղ է, մյուս թևում, հա՞:

— Ըհը՛:

— Այդ ինչպե՞ս է ինձ հիշել: Հիմա նա որտե՞ղ է սովորում, Բրին-Մորեո՞ւմ: Ասում էր, որ գուցե այնտեղ ընդունվի: Կամ Շիպլիում, ասում էր, որ կարող է և Շիպլի գնա: Կարծում էի, թե Շիպլիում է սովորում: Այդ ինչպե՞ս հիշեց ինձ: — Իսկապես հուզվում էի, գիտե՞ք:

— Դե ինչ իմանամ, գրողը տանի: Վեր կանց, լսո՞ւմ ես: Դու իմ սրբիչի վրա ես նստել:

— Ջին Գալլահերը, — ես ոչ մի կերպ ուշքի չէի գալիս: — Ա՛յ քեզ պատմություն:

Ստրեդլիթերը օժեց մազերը: Իմ բրձուխնով:

— Ես պարում է,— ասացի ես:— Բալետ է պարապում: Օրական երկու ժամ պարապում է, նույնիսկ ամենաշոգ օրերին: Վախենում էր, թե ոտքերը կփշանան, կհաստանան և նման բաներ: Ես նրա հետ միշտ շաշկի էի խաղում:

— Իի՞նչ:

— Շաշկի:

— Թո՞ւհ, սատանա, շաշկի է խաղացե՛լ:

— Այո, Ջեյնը միշտ մոռանում էր դամաները: Ես շաշկին հասցնում էր դամայի ու մոռանում տեղից շարժել, այդպես էլ թողնում էր վերջին շարքում: Բոլոր դամաները զարում էր վերջին շարքում ու ոչ մի քայլ չէր անում: Նրան պարզապես գուր էր գալիս, որ իր դամաները վերջին շարքում շարված լինեն:

Ստրեղիկյթերը լուռ էր: Այդպիսի բաներն ընդհանրապես ոչ ոքի չեն հետաքրքրում:

— Նրա մայրը այն նույն ակումբում էր, որտեղ որ մենք էինք,— ասացի:— Ես տանում էի նրա գոլֆի ձողիկները: Նա իմներորդ փոսիկի մոտ հարյուր յոթանասուն անգամ եղած կլինի:

Ստրեղիկյթերը գրեթե չէր լսում: Նա սանրում էր իր ջքեղ մազափունջը:

— Հավանաբար պետք է գնալ նրան տեսնել, շէ՞,— ասացի ես:

— Հապա ինչո՞ւ չես փեում:

— Եվ կգնամ, մի րոպե հետո:

Նա նորից բացեց իր մազաբաժանը: Առհասարակ մի ամբողջ ժամ սանրվում էր:

— Նրա մայրը բաժանվել էր հորից: Հետո ամուսնացել էր մի ինչ-որ հարբեցողի հետ,— ասացի ես:— Նիհար, ո՞նց որ սատանա, մազոտ ոտքերով: Ես նրան լավ եմ հիշում: Միշտ վարտիքով էր շրջում: Ջեյնը պատմում էր, որ նա ինչ-որ գրող է, սցենարիստ է, թե սատանան գիտի ինչ է, բայց իմ ներկայությամբ միայն խմում էր ձիու պես և ունկնդրում էր ուղիորդով հաղորդվող ամեն տեսակի ապուշ գեղեկությունները: Ու մերկ էր ման գալիս տանը, Ջեյնի ներկայությամբ, բոլորի ներկայությամբ:

— Ե՛վ,— ասաց Ստրեղիկյթերը: Այստեղ ես հանկարծ



աշխուժացավ, երբ ասացի, թե հարթեցողը մեռել վազվզում էր Զեյնի ներկայութեամբ: Սոսկալի անառակ սրիկա է այդ Ստրեղիկեյթերը:

— Սոսկալի մահկութիւնն է ոմնեցել աղջիկը: Լուրջ եմ ասում:

Բայց դա նրան չէր հետաքրքրում: Նա Վիայն ամեն տիպի լիտիութիւններով էր հետաքրքրվում:

— Օ՛, սաստանա: Զեյն Գալլահե՛րը:— Ես ոչ մի կերպ ուշքի չէի գալիս: Ոչ մի կերպ:— Հարկավոր է գոնե զնաչ բարեկէ նրան:

— Հապա ինչո՞ւ չես գնում: Կանգնել, դուրս ես տալիս: Սոսեցա պատուհանին: Բայց ոչինչ չէր երևում, ապակիները ամբողջապես քրտնել էին:

— Հիմա տրամադրութիւն չունեմ,— ասում եմ: Եվ խսկապես, տրամադրութիւն չունեի: Իսկ անտրամագիր ոչինչ չպետք է անես:— Կարծում էի, թե նա Շիպլի է ընդունվել: Պատրաստ էի երդվել, որ եա Շիպլիում է սովորում:— Ես շրջում էի լվացարանների սենյակում:— Նրան դո՛ւր էր գալիս ֆուտբոլը,— հարցնում եմ:

— Այո, կարծես թե: Չգիտեմ:

— Նա քեզ չի՞ պատմել, թե մենք ինչպես էինք շաշկի խաղում, ընդհանրապես ոչինչ չի՞ պատմել:

— Չեմ հիշում: Մենք հենց նոր ենք ծանոթացել, մի՞ կպչիք,— Ստրեղիկեյթերն արդեն սանրել էր իր փարթա՞մ դանգուրները և հավաքում էր կեղտոտ ածելին:

— Լսիր, բարեկիր նրան իմ կողմից, լա՞վ:

— Լավ,— ասաց Ստրեղիկեյթերը, բայց ես գիտեի, որ նա ոչինչ էլ չի ասի: Ստրեղիկեյթերի նման տիպերը երբեք չեն հաղորդում բարեք:

Նա գնաց մեր սենյակը, իսկ ես դեռ տնկված էի լվացարանի մոտ: Հիշում էի Զեյնին: Հետո ես էլ գնացի սենյակ:

Ստրեղիկեյթերը հայելու առաջ կանգնած փողկապն էր կապում: Նա կյանքի կեսը հայելու առաջ էր անցկացնում: Ես նստեցի իմ բազկաթոռին ու սկսեցի հետևել նրան:

— Է՛յ,— ասացի,— դու նրան շասես, որ ինձ վտարել են դպրոցից:

— Զեմ' ասի:

Ստրեղլեյթերը մի լավ գիծ ունեիր: Հաղկ շկար ամեն մի մանրուք բացատրել նրան, ինչպես, օրհնակ, էկլիին: Երևի այն պատճառով, որ Ստրեղլեյթերը թքած ունեիր ամեն ինչի վրա: Իսկ էկլին ուրիշ բան էր: Իր երկար քիթը ամեն տեղ խոթում էր:

Ստրեղլեյթերը հագավ իմ բաճկոնը:

— Չլայնացնես, լսո՞ւմ ես,— ասացի:— Ես ընդամենը երկու անգամ եմ հագել դա:

— Զեմ' լայնացնի: Ո՞ւր կորան է սիգարետները:

— Է՛ն է, սեղանի վրա են:— Նա երբեք չգիտեր ինչը որտեղ է:— ՇարՖիդ տակ:— Սիգարետները խոթեց իմ բաճկոնի գրպանը:

Հանկարծ ես գլխարկա շուռ տվի հովարը դեպի առաջ: Եի տեսակ նյարդայնանում էի: Իմ նյարդերն առհասարակ վատ վիճակում էին:

— Լսիր, իսկ դու ո՞ւր ես փնայու նրա հետ,— հարցրի ես:— Արդեն որոշե՞լ ես:

— Ինքս էլ չգիտեմ: Եթե ժամանակ եղավ, Նյու-Յորք կգնանք: Նա հիմարաբար արձակուրդ է վերցրել միայն ինձ անց կեսից:

Ինձ դուր չեկավ ձերա արտահայտվելու ձևը:

— Նա արձակուրդ է վերցրել միայն ինձ անց կեսից, որովհետև չի տեսել, թե որքան գեղեցիկ ես հմայիչ ես դու, շան որդի: Եթե տեսած լինեիր, կվերցնեիր առավտայան ինձ անց կեսից:

— Եվ ճիշտ է,— ասաց Ստրեղլեյթերը: Նրան աչ մի բա-  
Շով շես կարող վիրավորել: Չափից դուրս շատ է երևակա-  
յում:— Հերիք է ցանես: Գրեի՞ր ես շարադրությունը թե  
աչ:— Նա արդեն հագել էր վերարկուն և ուզում էր դուրս  
գալ:— Շատ ջանք չթափես: Միայն թե գեղարվեստական  
ստացվի, հասկացա՞ր: Կգրե՞ս:

Ես նրան չպատասխանեցի: Տրամադրություն շունեի  
Միայն ասացի:

— Նրան կհարցնես, թե էլի դամաները շաքո՞ւմ է վեր-  
ջին շարքում:

— Լավ,— ասաց Ստրեղլեյթերը: Բայց ես գիտեի, ոչ

չի հարցնելու:— Առայժմ:— Նա շրփեկոցով փակեց դուռն ու գնաց:

Իսկ ես դեռ մի կես ժամ էլ նստեցի: Ուղղակի նստել էի բազկաթոռին, ոչինչ չէի անում: Միայն Ջեյնի մասին էի մտածում, մեկ էլ, որ նա ժամագրվել էր Ստրեդլեյթերի հետ: Այնպես էի նյարդայնանում, որ քիչ էր մնում խելքս թոցնեկի: Ես արդեն ձեզ ասել եմ, թե նա ինչ լկտին է, սրբկայի մեկը:

Ու հանկարծ էկլին նորից ցնցուղարանից խուժեց մեք սենյակը: Այստեղ գտնվելու ամբողջ ընթացքում ես առաջին անգամ ուրախացա նրա գալու համար: Յրեց մտքերս:

Նստել էր ինձ մոտ մինչև ճաշ ու խոսում էր տղաների մասին, որոնց ատում էր, և փորփրում էր ծնոտին բանած խոշոր պզուկը: Մատներով, առանց թաշկինակի: Զգիտեմ այդ անասունը առհասարակ թաշկինակ ունե՞ր թե չէ: Երբեք չեմ տեսել:

## 5

Շարաթ օրերին մեր ճաշը միշտ նույնն էր լինում: Գաշքեղ ճաշ էր համարվում, որովհետև բիֆշտեքս էին տալիս: Գրագ կզամ հազար դոլլարի վրա՝ որ բիֆշտեքս էին տալիս, որովհետև կիրակի օրերին ծնողները այցելության էին գալիս երեխաներին, և ծերունի Թերմերը, հավանաբար, մտածում էր, թե որևէ մեկի մայրը տիրապետն զավակին կարող է հարցնել՝ ինչ են տվել նրան, երեկ, ու որդին կպատասխանի՝ բիֆշտեքս: Այդ ամենը խարդախություն էր: Մի այդ բիֆշտեքսները տեսնեի՞ք: Կոշտ էին, ինչպես կոշիկի ներբանը, դանակով չէիր կարող կտրել: Գրա հետ միշտ կարտոֆիլի պյուրե էին մատուցում զնդիկներով, իսկ որպես քաղցրեղեն՝ «շեկ Բետտի», մրգահյութով պուդինգ, միա՞ն թե դա ոչ մեկը չէր ուտում, բացի առաջին դասարանցիներից և էկլիփ Լեմաններից, որոնք ամեն ինչին վրա էին պըրծնում:

Ճաշից հետո մենք դուրս եկանք փողոց, հիանալի եղանակ էր: Մի երեք դյուլամ արդեն ձյուն էր նստել ու մի փողմից էլ դեռ գալիս էր: Զտեսնված գեղեցիկ էր: Սկսեցինք

ձնագնդի շինել ու մեկմեկու լավ ծեծել: Երեխայություն  
էր, իհարկե, բայց թուորս էլ ուրախացանք:

Ես անելիք շունեի և իմ բարեկամ Մել Բրոսսարի հետ, որ  
ըմբշամարտիկների թիմից էր, որոշեցի ավտոբուսով գնալ  
էգերաթաուն՝ կոտլետ ուտել, գուցեև որևէ ախմախ ֆիլմ  
նայել: Չէի ուզում ամբողջ երեկոն մնալ տանը վեր ըն-  
կած: Մելին հարցրի՝ ոչի՞նչ, որ էլիին էլ մեզ հետ գա-  
նորոշեցի էկլիին կանչել, որովհետև նա կուլֆոսկ շաքաթ  
օրերը որևէ տեղ չէր գնում, նստում էր տանն ու պզուկները  
հուպ տալիս: Մեկն ասաց, դե, իհարկե, ոչինչ, թեև հիացած  
չէր, նա այնքան էլ չէր սիրում այդ էկլիին: Մի խոսքով,  
մենք գնացինք հադնովերու, ու մինչ կհագնեի կրկնակոշիկ-  
ներս ու մյուս բաները, ձայն տվի էկլիին, թե չի՞ ուզում  
կինո գալ: Նա իմ ձայնը լսեց ցնցուղաբանի կողմից, բայց  
միանգամից չպատասխանեց: Նրա նմանները միանգամից  
չեն պատասխանում: Վերջապես հայտնվեց նա, ետ քաշեց  
ցնցուղաբանի վարագույրը և, կանգնելով շեմքին, հարցրեց,  
թե է՞լ ով է գալիս: Ազնիվ խոսք եմ ասում, եթե նա երբևէ  
նավարեկության ենթարկվեր և մի որևէ նավակ մոտենար  
փրկելու, անպայման հարցուփորձ կաներ, թե այդ նավակն  
ո՞վ է թիավառում, այլապես չէր նստի նավակ: Ասացի՞  
Մել Բրոսսարը: Իսկ նա թե.

— Ա՛խ, այդ տակա՛նքը... Դե լավ: Մի րոպե սպասի՛ր  
ինձ:

Կարծես մեծադույն ծառայություն է մատուցում քեզ:

Նա հինգ ժամ պիտի հագնվեր: Ես էլ մոտեցալ պատու-  
հանին, լայն բաց արի փեղկը ու սկսեցի ձնագնդի շինել:  
Չյուտը շատ լավ էր կաշում: Բայց ես շնետեցի ձնագունդը,  
թեև մտադիր էի նետել: Սկզբում ուզեցի խփել մեքենային,  
որ կանգնած էր ճամփի մյուս եզրին: Բայց փոշմանեցի՝  
մեքենան շատ էր մաքուր ու ճերմակ: Հետո ցանկացա նե-  
տել ջրհանի վրա, բայց դա էլ էր ճերմակ ու մաքուր: Եվ  
այդպես էլ ոչ մեկի վրա շնետեցի: Պատուհանը փակեցի ու  
սկսեցի ձնագունդը տրորել, որպեսզի ավելի ամրանա: Երբ  
Բրոսսարի ու էկլիի հետ ավտոբուս բարձրացա, դեռ ձեռքիս  
էր: Ուզեկցողը բացեց դռնակն ու կարգադրեց դուրս նետել:

շնագունդը: Ես ասացի, որ մտադիր չեմ որևէ մեկին խփել,  
բայց չհավատաց: Մարդիկ երբեք քեզ չեն հավատում:

Բրոսարն ու էկլին երկուսն էլ տեսել էին ցուցադրվող  
Ֆիլմը, այնպես որ մենք մեկական կոտլետ Կերանք, ավ-  
տոմատ-ռուլետկա խաղացիներ և վերագարձանք դպրոց: Ես  
չէի ափառում, որ կինո շոնացիներ: Մի ինչ-որ կատակեր-  
դուծյուն էր Գեֆի Գրանտի մասնակցությամբ՝ հավանա-  
բար, ախմախ բան: Բացի այդ էլ, ես մի անգամ կինո էի  
գնացել այդ Բրոսարի ու էկլիի հետ, նրանք երկուսն էլ  
հռհռում էին նույնիսկ ոչ ծիծաղելի տեղերում: Ինձ համար  
նրանց կողքին նստելը նույնիսկ հաճելի չէր:

Անդամենը իննից քառորդ էր պակաս, երբ վերագար-  
ձանք հանրակացարան: Բրոսարը գծվում էր բրիջ խաղալու  
համար և գնաց խաղընկեր գտնելու: էկլին, իհարկե, խցկվեց  
ինձ մոտ: Միայն այս անգամ ոչ թե նստեց Ստրեդլեյթերի  
աթոռի բազակային, այլ փռվեց իմ մահճակալին, երեսն  
ուղղակի բարձիս վրա: Փռվեց ու ակսեց մզմզալ իր միա-  
լար ձայնով և միաժամանակ քչփորել երեսի պզուկները:  
Մի հարյուր անգամ ակնարկեցի, քայց ոչ մի կերպ չկարո-  
ղացա գրուխս ազատել: Ես իր միալար ձայնով երկար-քա-  
րակ պատմում էր ինչ-որ աղքեկ մասին, որի հետ քարշ  
էր եկել անցյալ ամառ: Արդեն մի Պարյուր անգամ ինձ  
սրատմել էր այդ պատմությունը, ու ամեն անգամ նոր ձևով:  
Մեկ նրա հետ իր գարմիկի «բյուրեղում» էր գրկախառնվել,  
մեկ՝ ինչ-որ շենքի մոտաքում: Կարևորն այն է, որ բոլորը  
փշոց էր: գրազ կգամ, որ նա կյանքում կին չի տեսել, անմի-  
ջապես երևում է: Երևի ոչ մի անգամ մատ էլ չի կպցրել  
որևէ մեկին, ազնիվ խոսք: Մի խոսքով, ստիպված եղա  
բացեիրաց նրան ասել, որ պետք է շարագրություն գրեմ  
Ստրեդլեյթերի համար, որ նա քաշվի գնա, թե չէ չեմ կա-  
րողանում կենտրոնանալ: Վերջ ի վերջո գնաց, բայց դե  
ոչ անմիջապես, շատ տաղտկալին է: Իսկ ես հագա պի-  
ժամաս, խալաթս, դրեցի իմ որսորդական կարմիր գլխարկը  
և նստեցի շարագրություն գրելու:

Ցավն այն էր, որ շգիտեի, թե որ սենյակի կամ շենքի  
մասին պիտի գեղարվեստորեն գրեմ, ինչպես հանձնադրել  
էին Ստրեդլեյթերին: Անդհանրապես շատ էլ չեմ սիրում

ալեյականներ ու տներ նկարագրել: Ես էլ վերցրի ու սկսեցի  
Վկարագրել իմ պատիկ եղբոր՝ Ալլիի, բելաբուլային ձեռ-  
նոցը: Դա շատ գեղեցիկ ձեռնոց էր, ազնիվ խոսք: Եղբայրս,  
Ալլին, ձախ ձեռքի բելաբուլային ձեռնոց ուներ: Նա ձախիկ  
էր: Ու գեղեցիկ էր այդ ձեռնոցը, որովհետև եղբայրս նրա  
վրա բանաստեղծություններ էր գրել և՛ թաթին, և՛ գրպանի  
վրա, ամեն տեղ: Կանաչ թանաքով: Նա գրել էր, որպեսզի  
ազատ ժամանակ, երբ հնդակը իր կողմը չի գալիս, և դաշ-  
տում անելիք չունի, կարողանա կարդալ: Ալլին մեռավ:  
Հիվանդացավ սպիտակարյունությունով և մեռավ 1946 թվա-  
կանի հուլիսի 18-ին, երբ մենք ապրում էինք Միչնում: Նա  
ձեզ դուր կգար: Ինձնից երկու տարով փոքր էր, բայց հի-  
ստեմ սեզամ ավելի խելացի էր: Չափից դուրս խելոք էր:  
Նրա ոստցիկները միշտ գրում էին մայրիկիս, թե որքան  
հաճելի է, որ իրենց դասարանում այդպիսի տղա է սովո-  
րում, ինչպիսին Ալլին է: Ու չէին ատում, իսկապես այդպես  
էին մտածում: Բայց նա մեր ընտանիքի ոչ միայն ամենա-  
խելոքն էր, այլև ամենալավ մարդը բազմաթիվ ատումնե-  
րով: Երբեք չէր բարկանում, չէր բորբոքվում: Ասում են  
շեկերը պատրաստ են կատաղելու համար, իսկ նա՝ բոլորո-  
վելու, թեև շատ շիկահեր էր: Հիմա կպատմեմ, թե որ աստի-  
ճան շիկահեր էր: Ես սկսել եմ գովի խաղալ տասը տարե-  
կանից: Հիշում եմ, մի անգամ գարնանը, երբ արդեն տաս-  
ներկու տարեկան էի, գրորում էի գնդակը ու անընդհատ  
աջնափսի զգացում ունեի, թե բավական է շուռ գամ, կտես-  
նեմ Ալլիին: Ու ես շրջվեցի և տեսնեմ, այդպիսի էլ կա-  
ցանկաւատի ետևում, այն ցանկապատի, որ շրջափակում  
էր ամբողջ դաշտը, նա ինձնից մի հարյուր հիսուն յարդի  
վրա, իր հեծանվին նստած, հետևում էր, թե ինչպես եմ  
խփում գնդակին: Այ թե որքան շիկահեր էր նա: Ու շա՛տ  
լավն էր, ասոված վկա: Երբեմն սեղանի մոտ նստած մի  
տրեկ բան էր հնարում ու այնպես էր հռհռում, որ քիչ էր  
մնում աթոռից գլորվելու: Այդ ժամանակ ևս տասներեք տա-  
րեկան էի, և ծնողներս ուզում էին ինձ տանել հոգեբույժի  
մոտ, ուղտվհետև ջարդել էի գարածի բոլոր պատուհանները:  
Ես նրանց հասկանում եմ, ազնիվ խոսք: Այն գիշեր, երբ  
Ալլին մահացավ, ես գիշերեցի գարածում և ջարդեցի բոլոր

պատուհանները, ուղղակի բռնաճեղքով, չգիտեմ ինչու: Նույնիսկ մեքենայի ասֆալտին հրն էի ուզում ջարդել (այդ ամուսնու մենք «պիկապ» ունեինք), բայց ձեռքս արդեն վնասվել էր, էլ չկարողացա: Հասկանում եմ, որ դա հիմարություն էր, բայց ինքս էլ չէի գիտակցում ինչ եմ անում, հետո, բացի այդ էլ, դուք չգիտեք, թե Ալլին ինչպիսին էր: Մինչև հիմա էլ ձեռքս ցավում է, հասկապես աճծրևային եղանակներին, բռունցքս շեմ կարողանում լավ սեղմել, բայց դա դատարկ բան է: Միևնույն է, ես մտադիր շեմ վերաբույժ կամ ջութակահար դառնալ, ոչ էլ նման որևէ բան:

Ահա այդ մասին էլ ես գրեցի Ստրեղեյթերի շարադրության մեջ: Մեր Ալլիի բեյբուլային ձեռնոցի մասին: Այն պատահամբ իմ ճամպրուկում էր, վերցրի ու արտագրեցի նրա վրայի բոլոր բանաստեղծությունները: Միայն Ալլիի ազգանունը փոխեցի, որպեսզի ոչ ոք չհասկանա, որ նա իմ էղբայրն է, ոչ թե Ստրեղեյթերի: Այնքան էլ չէի ուզում փոխեմ ազգանունը, բայց ուրիշ բան չկարողացա հորինել: Համ էլ ինձ համար հաճելի էր այդ մասին գրել: Մի ամբողջ ժամ նստեցի, որովհետև գրում էի Ստրեղեյթերի անպետք դրամեքենայով, որն անպերջ տառեր էր կռվ տալիս: Իսկ իմը ես տվել էի միջանոցի մյուս ծայրին ասրող մի տիպի:

Վերջացրի տասն: Ինչ կեսի մոտերքը: Բայց առանձնապես շատ չէի հոգնել ու ակսեցի պատուհանից դուրս նայել: Ձեռներ դադարել էր, հեռվից մոտերի ձայն էր լսվում, որք է: Եթե կերպ գործի չէր ընկնում: Լսվում էր նաև էկլիթ խումփոցը: Նույնիսկ ցնցուղարանի ետևից էր լսվում նրա գարշելի խումփոցը: Նա հայմոքիտ ունեք և շէր կարողանում քնած ժամանակ կանուխափոր շնչել: Ամեն ինչ ունեք՝ և՛ հայմոքիտ, և՛ սլզուկներ, և՛ հոտած ատամներ, բերանից հոտ էր գալիս, եղունգները կոտրտվում էին: Նույնիսկ խղճում եմ այդ հիմարին:

Պատահում է, որ ոչ մի կերպ չես կարողանում հիշել, թե ինչն ինչպես եղավ: Անդրադատ մտածում եմ, թե Ստրեղեյթերը ե՞րբ վերադարձավ Ջեյնի հետ ունեցած տեսակ-

քուժյունից: Հասկանո՞ւմ եք, ոչ մի կերպ չեմ կարողանում հիշել, թե ես ինչ էի անում, երբ լսեցի միջանցքից եկող նրա քայլերը՝ բարձր, լկալի: Հավանաբար, դեռ դուրս էի նայում պատուհանից, քայց ոչ մի կերպ ճիշտ չեմ կարողանում հիշել, թե երբ լսեցի: Ես ասեցի, որ ես հուզվում եմ, որա համար էլ չեմ կարողանում հիշել, թե ինչպես եղավ: Իսկ եթե ես հուզվում եմ, դա ձևական չէ: Նույնիսկ զուգարան եմ ուզում չմտալ, երբ հուզվում եմ: Բայց չեմ գնում: Հուզվում եմ, դրա համար էլ չեմ գնում: Ոչ մի կերպ չեմ կարողանում զսպել հուզմունքս ու ոչ մի տեղ էլ չեմ գնում: Եթե Ստրեզևսկիներին ճանաչեիք, դուք էլ կհուզվեիք: Ես այդ սրիկայի հետ երկու անգամ տեսակցության եմ գնացել: Ես գիտեմ, թե ինչ եմ ասում: Նա բոլորովին խիզճ չունի, աստված վկա, չէ՛:

Իսկ մեր միջանցքում ամբողջապես լինուկում է քաշած, այնպես որ դեռ հեռվից յսվում էր, թե նա, այդ սրիկան, Վենչպես էր մտաւնում մեր անխակին: Նույնիսկ չեմ հիշում, թե որտեղ էի նստած, երբ նա ներս մտավ: Իմ բազկաթոռի՞ն, պատուհանի մո՞տ, թե նրա՞ բազկաթոռի՞ն: Ազնիվ խոսք, չեմ կարողանում հիշել:

Նա ներս մտավ ու սկսեց բողբոջել ցրտից: Հետո հարցնում է.

— Այս ո՞ր գրողի ծոցն են կորել բոլորը: Եունչ կենդանի չկա, ասես դիականոց չկա:

Ես տրամադիր չէի նրան պատասխանելու: Եթե ապուշի մեկն է, չի հասկանում, որ շաբաթ Երեկոյան են բողբոջ գնացել, կամ քնած է՞ն, կամ գնացել են հարազատների մոտ, հանուն ինչի՞ ալիտի կաշվիցս դուրս գամ, նրան բացատրվեմ: Նա սկսեց հանվել: Իսկ Ջեյնի մասին՝ ոչ մի խոսք: Ոչ մի բա՛ռ: Ես էլ չեմ խոսում: Միայն նայում եմ նրան: Ըիշտ է, նա շնորհակալություն հայտնեց բաճկոնիս համար, հանեց ու կախեց պահարանում:

Իսկ երբ փողկապն էր արձակում, հարցրեց՝ գրե՞լ եմ իր այդ հիմար շաբադրությունը: Ասացի այն է, իր սեփական մասճակալի վրա գցած է: Նա մտտեցավ ու սկսեց կարգալ՝ արձակելով բլուզի կոճակները: Կանգնել կարողում է ու շոյում իր մերկ կուրծքը, դեմքին ապուշային



մի արտահայտութիւնն: Նա միշտ շոյում է իր կուրծքը կամ էլ փորը: Ուղղակի պաշտում է իրեն:

Հանկարծ ասում է.

— Այս ի՞նչ ապուշութիւնն է, Հոյնն: Ինչ-որ ախմախ՝  
ձեռնոցի մասին ես գրել:

— Իսկ ի՞նչ կա որ, — հարցնում եմ ես սառցե ձայնով:

— Վերպես թե՛ ինչ կա որ: Չասացի՞, պետք է որեւէ սեն-  
յակ կամ տուն նկարագրել:

— Դու ասացիր մի որեւէ նկարագրութիւն: Միենույն չէ՞  
ինչ ես նկարագրում՝ ձեռնոց, թե մեկ ուրիշ բան:

— Է՛հ, գրողը քեզ տանի, — նա լրջորեն զայրացավ, ուղ-  
ղակի կատաղեց: — Ամեն ինչ թարս ես անում, շուտ  
տված: — Այստեղ նա նայեց լիւծ: — Չարմանալի չէ, որ քեզ  
վճնդել են, — ասում է: — Երբեք ոչ մի բան մարդաշարի շե-  
կարող: Երբե՛ք: Հասկացա՞ր:

— Լա՛վ, լա՛վ, տուր թերթը, — ասում եմ: Արտեցա, ձեռ-  
քից խլեցի այդ երկցս անիծյալ թերթը ու պատրեցի:

— Գրողը տանի՞, — ասում է, — ինչո՞ւ պատուէիր:

Ես նույնիսկ շպատասխանեցի նրան: Կտորները զամ-  
բյուղը նետեցի, ու վերջ: Հետո պառկեցի մէջճալարին, ու  
երկուսս էլ երկար ժամանակ լուռ էինք: Նա հանվեց, մնաց  
միայն տրոսիկով, իսկ ես, մահճակալին պառկած, կայքի  
սրգարեստ: Ննջասենյակներում շիթույլատրվում ծխել, բայց  
ուշ գիշերին, երբ ոմանք քնած են, իսկ ոմանք գնացել են,  
ոչ ոք չի նկատի, որ ծխի հոտ է գալիս: Եվ հետո ես ցան-  
կանում էի զայրացնել Ստրեղեյթերին: Նա համբիրութիւն-  
եց դուրս էր գալիս, երբ խախտում էին կարգը: Նա ինքք  
երբեք չէր ծխում ննջասենյակում: Իսկ ես ծխում էի:

Եվ այդպես էլ նա ոչ մի խոսք չասաց Ջեյնի մասին,  
ոչինչ: Այդ ժամանակ ինքս ասացի.

— Ծատ ուշ եկար, գրողը տանի, եթե նրան ինն անց  
կես էին բաց թողել: Իսկ նա ինչպէս, շուշացա՞վ քո պատ-  
ճառով: Ժամանակի՞ն վերադարձավ:

Նա նստել էր իր մահճակալի եզրին ու ոտքերի եզրու-  
կերն էր կտրատում, երբ ես խոսում էի:

— Մի քիչ ուշացավ, — ասում է: — Ինքն է վեղավոր,  
ինչո՞ւ էր ինն անց կետին խնդրում, այն էլ շարաթ ծոր:

Յ, տեք աստված, ինչպե՛ս էի ատում նրան այդ պահին:

— Նյու-Յորք գնացի՞ք, — հարցնում եմ:

— Եեկը թոցրե՛լ ես: Ոնց կարող էինք Նյու-Յորք գնալ, եթե ինն անց կեսին էր թույլտվութուն խնդրել:

— Ափսո՛ւ, ափսո՛ւ, — ասացի ես:

Նա նայեց ինձ:

— Լսիր, եթե ծխել ես ուզում, գնա զուգարան: Դու գլուխդ առնելու կորչելու ես այստեղից, իսկ ես պիտի մնամ դպրոցում մինչև ավարտելս:

Ես նույնիսկ ուշադրութուն չդարձրի նրա վրա, կարծես նա իսկի գոյութուն էլ չուներ: Գծի պես ծխում էի ու վերջ, Միայն կողքի շուռ եկա ու նայում եմ, թե ինչպես է կտրում իր գարշելի եղունգները: Այ թե դպրոց է, հա՛, մեկը իր երեսի պզուկներն է քո ներկայությամբ քշփոքում, մյուսը ոտքի եղունգներն է կտրատում:

— Դու բարև հաղորդեցի՞ր նրան:

— Ըհը՛:

Շա՛տ էլ հաղորդած կլինի այդ տակա՛նքը:

— Իսկ նա ի՞նչ ասաց: Հարցրի՞ր, առաջվա պես բոլոր գամանները վերջին շարքո՞ւմ է հավաքում:

— Չէ, ինչ է, քո կարծիքով, ես նրա հետ ամբողջ երեկոյան շաշկի՞ էի խաղում:

Ոչինչ չպատասխանեցի: Տեք աստված, ինչպես էի ատում նրան:

— Բա որ Նյու-Յորք չգնացիք, որտե՞ղ էիք ման գալիս, — հարցրի քիչ հետո: Ուղղակի ջանք էի թափում, որ ձայնս չդողար: Շա՛տ էի ջղայնանում: Հավանաբար, սիրտս վատ բան էր նախազգում:

Վերջապես նա ավարտեց եղունգները կտրատելը: Վեր կացավ տեղից հենց այնպես, միայն տրուսփկով ու հանկարծ սկսեց հիմարութուններ անել: Մտտեցավ ինձ, կուսցավ ո՛չ հրեց ուսս. խաղ էր անում սողունը:

— Թո՞ղ, — ասում եմ, — բա ո՞ւր էիք կորել, որ Նյու-Յորք չէիք գնացել:

— Ոչ մի տեղ: Նստել էինք մեքենայի մեջ ու վերջ: — Նա էլի սկսեց հրմշտել ուսս, այդ ապուշը:

— Թո՞ղ, — ասում եմ: — Ո՞ւմ մեքենայում:

— Էդ Բենկին —

Էդ Բենկին մեր բաստկետրուի մարդիչն էր: Ստրեղիյ-թերը նրա պիրելիներից էր, մեր դպրոցական թիմի կենտրոնական հարձակվող էր խաղում, և էդ Բենկին մեքենան միշտ տրամադրում էր նրան: Ընդհանրապես աշակերտներին չի թույլատրվում ուսուցիչներից մեքենա վերցնել, բայց այդ անասուն սպորտամենները միշտ խոսքները մեկ են անում: Բոլոր դպրոցներում էլ, որտեղ որ սովորել եմ, սպորտամենները միշտ էլ խոսքները մեկ են անում:

Ու Ստրեղիյթերը անվերջ ձևացնում է, թե բռնցքահարում է սովորի՞ն, անընդհատ խփում է, հրում է ուսու Ատամի խոզանակը ձեռքին էր, նա խոթեց բերանը:

— Ի՞նչ էիք անում իրար հետ: Լկսովո՞ւմ էիք էդ Բենկի մեքենայի մեջ, — շեք պատկերացնի, թե ձայնս ինչպես էր դողում:

— Ա՛յ-ա՛յ-ա՛յ, ինչպիսի՞ գարշելի խոսքեր: Այ, հիմա գրա համար գոծնչդ մի լավ կտրորեմ օճառով:

— Ի՞նչ էիք անում:

— Գա պրոֆեսիոնալ գաղտնիք է, եղբայրս:

Այնուհետև ինչ-որ լավ շեմ հիշում: Գիտեմ միտքն, որ վեր թռա անկողնուց, խորե թե ինչ-որ տեղ եմ ուզում գնալ, ու հանկարծ ձեռքս վրա բերեցի ուղղակի ատամի խոզանակին, որ պատռեր նրա ստոր կոկորդը: Միայն թե չկպա: Էրիպեցի: Ուղղակի գլխին հասցրի: Հավանաբար, ցավ սլատճառեցի, բայց ոչ այնպիս, ինչպես կցանկանայի: Ես ավելի ուժգին կարող էի հասցնել, բայց աչ ձեռքով խփեցի, իսկ աչս լավ չի սեղմվում: Հիշո՞ւմ եք, պատմեցի, թե ինչպես էի շարդել այդ ձեռքս:

Բայց մեկ էլ հայտնվեցի հատակին, իսկ նա խեցգետնի փման կարմրատակած՝ նստել էր վրաս: Հասկանո՞ւմ եք, չոքել էր կրծքիս, իսկ նա մի տոննա քաշ ուներ: Սեղմել էր ձեռքերս, որպեսզի չխփեմ: Կուզեի օպանել ես այդ ստորին:

— Ինչ է, խենթացե՞լ ես, հը՞, խենթացե՞լ ես, — կրկնում էր նա, իսկ այդ ապուշի մոութը գնալով ավելի ու ավելի էր կարմրում:

— Բա՛ց թող, տխմա՛ր, — ասում եմ: Թիչ էր մնում

զուայի, ազնիվ խոսք:— Կորի՛ զնա, շուն շան որդի, լը-  
սո՞ւմ ես:

Իսկ նա բաց չի թողնում: Պինդ բռնել է ձեռքերս: Ես  
նրան է՛լ շան լակոտ եմ անվանում, է՛լ ինչ խոսքեր ասես,  
որ չեմ ասում, տասը ժամ շարունակ: Չեմ հիշում նույնիսկ,  
թե ինչ եմ ասել: Ասացի, որ նա երեակայում է, թե ում  
հետ ուզենա՝ կլինի: Ասացի, որ նրա համար ոչ մի նշա-  
նակութուն չունի, թե աղջիկը շաշկին ինչպես է դասավո-  
րում, և ընդհանրապես նրա համար ոչ մի բան ոչ մի նշա-  
նակութուն չունի, որովհետև նա տխմար ու ապուշ է, կրե-  
տին: Ես չէր դիմանում, որ իրեն կրետին էին անվանում:  
Բոլոր կրետիներն էլ չեն դիմանում, որ իրենց կրետին են  
ասում:

— Հապա մի ձայնդ կտրիր, Հուլդեն, — ասում է նա, ու  
գեմքը հիմար արտահայտություն է ստանում, կարմրում է:—  
Լսո՞ւմ ես, ինչ եմ ասում, ձայնդ կտրի՛ր:

— Դու նույնիսկ չգիտես, թե ինչ է արա անու՛րը՝ Զին թե  
Զին, դժբախտ կրետին:

— Քեզ ասում են ձայնդ կտրիր, Հուլդեն, գրողը տանի:—  
Այնուամենայնիվ, ես նրան համբերությունից հանեցի:—  
Ձայնդ կտրիր, թե չէ այնպես կհասցնեմ որ...

— Հոտած ծնկներիդ դենը քաշիր, դմբո՛, ապու՛շ:

— Բաց կթողնեմ, միայն ասա, ձայնդ կկտրե՞ս:

Ես չպատասխանեցի:

— Նա նորից ասաց.

— Որ բաց թողնեմ՝ ձայնդ կկտրե՞ս:

— Հա՛:

— Նա իջավ վրայիցս, ես էլ ելա: Նրա գարշելի ծնկներից  
ամբողջ կուրծքս ցավում էր:

— Միևնույն է, դու կրետին ես, տհաս ապուշ, շան որ-  
դի, — ասում եմ:

Այստեղ նա արդեն կատաղեց: Բուռնցքը բռնել է քթիս  
տակ այդ կրետինն ու սպառնում է:

— Հուլդեն, վերջին անգամ եմ զգուշացնում, եթե բերանդ  
չփակես, էնպե՛ս կհասցնեմ...

— Իսկ ինչո՞ւ լռեմ որ, — հարցնում եմ ու արդեն ինքս  
եմ գոռում նրա վրա:— Ցավն էլ դա է հենց, որ դուք, կրե-

տիկններդ, մարդավարի խոսել էլ չեք կարող: Հարյուր մղո-  
նի վրա էլ կրետիներ երևում է. նույնիսկ խոսել չի կարող:

Այստեղ նա թափով շուռ եկավ, ու ես կրկին հայտնվեցի  
հատակին: Չեմ հիշում, գիտակցությունս կորցրի թե չէ,  
կարծում եմ, որ չէ: Մարդուն շատ դժվար է նոկաուտ անել-  
դա միայն կինոյում են հեշտությամբ անում: Բայց քթիցս  
սոսկալի արյուն էր հոսում: Երբ աչքերս բացեցի, այդ հի-  
մար Ստրեդլեյթերը կանգնած էր ուղիղ գլխավերևումս: Նրա  
ձեռքին լվացարանային սպասք կար:

— Ես քեզ զգուշացրի, չէ՞,— ասում է: Երևում է, շատ  
էր վախեցել, կարծել էր, թե գուցես ջարդվել է հատակին  
շրմփալիս: Ափսոս, որ չէր ջարդվել:

— Ի՛նքդ ես մեղավոր, գրողը տանի,— ասում է: Ո՛հ,  
այ թե վախեցել էր, հա՛:

Իսկ ես տեղիցս չեմ շարժվում: Հատակին փռված հայ-  
հոյում եմ նրան՝ շա՛ն որդի, տխմա՛ր: Այնպես կատաղած  
էի նրա վրա, որ քիչ էր մնում լաց լինեի:

— Լսիր, վեր կաց, փնա լվացվիր,— ասում է նա:—  
Լսո՞ւմ ես:— Իսկ ես ասում եմ, թե թող ինքը գնա լվանա իր  
գարշելի մոութը, իհարկե, դա երեխայություն էր, հի-  
մարություն էր այդպես ասել, բայց դե շատ էի կատաղած  
նրա վրա, թող, ասում եմ, ինքը գնա ու ճանապարհին էլ  
գրկի միսիս Շմիտին: Իսկ միսիս Շմիտը մեր դռնապանի  
կի՛նն էր, յոթանասուն տարեկան մի պառավ:

Ու այդպես էլ մնացի հատակին նստած այնքան ժամա-  
նակ, մինչև որ ապուշ Ստրեդլեյթերը գնաց: Լսեցի, թե ինչ-  
պես էր միջանցքով գնում դեպի լվացարանը: Այդ ժամա-  
նակ վեր կացա: Ու ոչ մի կերպ չէի կարողանում գտնել  
երիցս անիծյալ՝ գլխարկս: Հետո, այնուամենայնիվ, գտա:  
Ընկել էր մահճակալի տակ: Դրի գլխիս, հովարը դեպի ես  
(ինձ այդպես ավելի էր դուր գալիս) ու հայելու մեջ նայեցի  
հիմար կերպարանքիս: Կյանքումս երբեք այդքան արյուն  
չեմ տեսել: Ամբողջ բերանս, ծնոտս կորել էր արյան մեջ,  
նույնիսկ պիժամասս և խալաթս: Ե՛վ սարսափելի էր, և՛  
հետաքրքիր: Մի տեսակ խանձվածի տեսք ունեի այդ արյան  
պատճառով: Ամբողջ կյանքիս մեջ ընդամենը երկու անգամ  
էի կռվել, երկու անգամն էլ պարտվել էի: Ես վառ կռվող

եմ: Եվ ընդհանրապես պացիֆիստ եմ, եթե ճիշտն ասենք: Ինձ թվաց, որ էկզիմ քնած չէ ե բոլորը լսում է: Յնցուզարանով գնացի նրա սենյակը, տեսնեմ ինչ է անում այնտեղ: Ընդհանրապես ես հազվագեպ էի այցելում նրան: Նրա սենյակից միշտ՝ ինչ-որ գարշելի հոտ էր փչում, շատ փրնթի էր նա:

7

Վարսգույրի միջով լույսը թեթևակի թափանցում էր մեր սենյակը, ու ես տեսա, որ նա պառկած է անկողնում: Բայց հաստատ գիտեի, որ քնած չէ:

— Էկլի, — ասում եմ, — քնած չե՞ս:

— Ոչ:

Մութ էր, ոտքիս տակ ինչ-որ կոշիկ ընկած ու քիչ մնաց փովեի: Էկլին քիչ բարձրացավ տեղից, հենվեց արմունկներին: Նրա ամբողջ դեմքին ինչ-որ սպիտակ քուրք կար պզուկների դեմ: Մթության մեջ ուրվականի տեսք էր ստացել:

— Այդ ի՞նչ ես անում, — հարցնում եմ:

— Այսինքն, ինչպե՞ս թի ինչ եմ անում: Ուզում էի քնել, քանզի դուք այնպիսի ազմուկ եք բարձրացրել որ, գրողը տանի: Այդ ինչի՞ համար էիք կռվում:

— Որտե՞ղ է լույսը: — Ես ոչ մի կերպ չէի կարողանում գտնել անշատիչը: Ձեռքերով շոշափում էի դատարկ պատը:

— Իսկ ինչի՞դ է պետք լույսը... Ձեռքդ հենց անշատիչի վրա է:

Ես գտա անշատիչը և միացրի լույսը: Էկլին ափով ժածկեց աչքերը, որպեսզի լույսից պաշտպանվի:

— Օ՛, սատանա, — ասաց նա: — Այդ ի՞նչ է պատահեցի, — նա տեսավ դեմքիս արյունը:

— Մի քիչ զզվուտվել եմք, — ասացի: Հետո նստեցի հատակին: Նրանց սենյակում երբեք աթոռ չէր լինում: Չգիտեմ ինչ էին անում նրանք աթոռները:

— Լսիր, ուզո՞ւմ ես մի օյիկ կանաստա խաղանք:

— Գժվե՞լ ես՝ կանաստա՞: Գիտե՞ս ժամը քանիսն է:

— Դեռ ուշ չէ: Տասնամեկն է, տասնամեկն անց կհաս:

— Եվ դա քո կարծիքով ուշ չէ՞,— ասում է էկլիբն:—  
Լսիր, վաղը շոտ պետք է վեր կենամ, եկեղեցի եմ փնալու,  
գրողը տանի: Իսկ դուք սատանայի պես, գիշերվա կեսին  
կոխվ-դալմադալ եք գցել: Գոնե ասա, թե ինչի համար էիք  
կուլում:

— Երկար պատմութուն է: Կձանձրանաւս լսես, էկլիբ:  
Տեսնո՞ւմ ես, ինչպես եմ մտածում քո մասին:— Նրա հետ  
ես երբեք անձնական գործերիս մասին չէի խոսում: Նախ  
ձա Ստրեդլեյթերից էլ հիմար էր: Ստրեդլեյթերը նրա հա-  
մեմատությամբ հանձար էր:— Գիտես ինչ,— ասում եմ,—  
կարելի՞ է, այս գիշեր ես էլի մահճակալին քնեմ: Նա մինչև  
վաղը երեկոյան չի վերադառնալու:

Գիտեի, որ էլը չի վերադառնալու Նա ամեն շաբաթ օր  
տուն էր գնում:

— Աստված գիտի, թե երբ կվերադառնա,— ասում է  
էկլիբն:

Թո՛ւհ, զգվացրեց, ուղղակի:

— Ինչպե՞ս թե,— ասում եմ:— Գու գիտես չէ՞, որ նա  
մինչև կիրակի երեկո չի վերադառնում:

— Գիտեմ, բայց ինչպես կարող եմ ասել՝ քնիր, խղճե-  
րեմ, նրա մահճակալին: Մի՞թե կարելի է այդպիսի բան  
անել:

Սպանեց թողեց: Ես մեկնեցի ձեռքս, դեռևս հատակին  
նստած, ու թփթփացրի այդ հիմարի ուսին:

— Գու արքայազն ես, էկլիբ, բալիկս,— ասում եմ:— Գու  
գիտե՞ս այդ բանը, թե ոչ:

— Չէ, իսկապես, ինչպե՞ս կարող եմ ասել՝ քնիր ուրիշի  
մահճակալին:

— Գու իսկակա՞ն արքայազն ես: Գու ջենտլմեն ես ու  
գիտնական, բալիկս,— ասացի ես: Իսկ գուցեև նա իսկա-  
պես գիտնական էր:— Պատահամբ տիգարես շունե՞ս: Որ  
չտանենաս՝ կմեռնեմ:

— Ոչինչ չունեմ: Լսիր, ինչի՞ց սկսվեց կոխվր:— Բայց ես  
ձրան չպատասխանեցի: Միայն վեր կացա և մոտեցա սյա-  
տուհանին: Այնպես տխրեցի հանկարծ: Կուզեի այդ բոպեիե  
մեռնել, ազնիվ խոսք:

— Ինչի՞ համար սկսեցիք կուլել,— արդեն որբորդ ար-

գամ հարցնում էր էկլիին: Նա կարող է ծարդու հոգի հանկը

— Քո պատճառով,— ասում էմ:

— Ի՞նչ ես դուրս տալիս: Ինձ հետ ի՞նչ գրգծ ունեք:

— Այո, ես պաշտպանում էի քո պատիվը: Ստրեղյեյթերը ասաց, որ դու զգվելի ես: Ինչպես կարող էի թույլ տալ նման հանդգնություն:

Նա ուղղակի վեր թռավ տեղից:

— Չէ, իսկապես: Ծի՛շտ ես ասում: Այդպես էլ ասա՞ցք Բայց ես բացատրեցի, որ կատակ եմ անում, իսկ հետո պառկեցի էլի մահճակալին: Օ՛հ, ինչքան վատ էի զգում: Տրամադրությունս ուղղակի անտանելի էր:

— Ձեր սենյակից շատ վատ հոտ է գալիս,— ասում էմ,— Այստեղից զգացվում է գուլպաներիդ հոտը: Լվանալ շե՞ս տալիս, ի՞նչ է:

— Գուր չի՞ գալիս, գնա գիտես որտեղ,— ասաց էկլիին:— Ա՛յ քեզ խելքի տուպրակ: Գուցե կհանգցնե՞ս լույսը, գրողը տանի:

Բայց ես անմիջապես շահնգցրի: Պատկել էի ուրիշի մահճակալին ու մտածում էի Ջեյնի մասին, և այն ամենի մասին, ինչ տեղի էր ունեցել: Ուղղակի գծվում էի, երբ պատկերացնում էի նրան Ստրեղյեյթերի հետ, այդ հաստաքամակ էդ Բենկիի մեքենայի մեջ: Հենց որ մտածում էմ այդ մասին, ուզում էմ լուսամուտից ցած նետվել: Ի՞նչ ար չեք ճանաչում այդ Ստրեղյեյթերին, ձեր բանը հեշտ է, իսկ ես ճանաչում էմ: Փենսիի բոլոր տղաները միայն պարծենում էին, թե կապված են աղջիկների հետ, ինչպես էկլիին, օրինակ, իսկ այդ Ստրեղյեյթերն իսկապես կապված էր: Ես ինքս ծանոթ էի երկու աղջիկների, որոնց հետ նա քարշ էր գալիս: Ծի՛շտ եմ ասում:

— Պատմիր քո կենսագրությունը, էկլի, բալիկս, հավանաբար դա շատ հետաքրքիր է,— ասում էմ:

— Դե հանգցրու այդ անտեր լույսը: Առավոտյան շուտ եկեղեցի եմ գնալու, հասկանո՞ւմ ես:

Վեր կացա, մարեցի լույսը, քանի որ նա այդպես էր ցանկանում, հետո նորից պառկեցի էլի մահճակալին:

— Դու, ինչ է, մտադիր ես այստե՞ղ քնել,— հարցրեց էկլիին: Խոսք չկա, շա՛տ բարեհամբույր տանտեր է:



— Զգիտեմ, Գուցեի Մի՛ հուզվիր:

— Դե ես չեմ հուզվում: Միայն թե շատ անհարմար կլինի, եթե էլը հանկարծ վերադառնա, տեսնի իր մահճակալին մարդ է քնած...

— Հանգստացիր: Այստեղ չեմ քնելու: Մի՛ վախենա, չեմ շարաշահի քո հյուրասիրութիւնը:

Երկու բոսի անց նա արդեն խամփացնում էր անզուսպ: Իսկ ես պառկել էի մթութեան մեջ ու ջանում էի շմտածել Ջեյնի ու Ստրեդլեյթերի մասին՝ այդ անիծյալ էդ Բենկիի ավտոմեքենայում: Բայց չէի կարողանում շմտածել: Վատն այն էր, որ ես դիտեի այդ անիծված Ստրեդլեյթերի մոտեցումը: Դրանից ավելի վատ էի դառնում: Մի անգամ մենք երկուսով աղջիկների հետ նստել էինք այդ Բենկիի ավտոմեքենան: Ստրեդլեյթերն իր աղջկա հետ նստել էր ետևում, իսկ ես՝ առջևում: Մի, այ թե մոտեցում ունեի այդ գրողի տարածք: Նա սկսեց այն բանից, որ պատեցրեց իր աղջկա գլուխը մեղմ ու քնքուշ, սոսկալի անկեղծ ձայնով, կարծես ու միայն գեղեցիկ, ալիք լավ, շիտակ մարդ է ինքը: Սիրտք քիչ մնաց խառնեի, երբ լսեցի, թե ինչպես է խոսում աղջկա հետ: Աղջիկն անընդհատ ասում էր. «Զէ՛, չէ՛, պետք չէ... Խնդրում եմ, չէ՛: Պետք չէ՛...» Բայց Ստրեդլեյթերը անվերջ համոզում էր նրան: Նրա ձայնը ասես պղծագիտեան լինքո՞ւնի ձայնը լինեի, շատ անկեղծ ու ազնիվ էր հնչում, ու մեկ էլ սոսկալի լռութիւն տիրեց: Սարսափելի անհարմար վիճակ էր: Զգիտեմ, այդ անգամ նրան հաջողվեց, թե չէ, Բայց ամեն ինչ այդ ուղղութեամբ էր արվում: Անկասկած:

Պառկել ու ջանում էի շմտածել, մեկ էլ լսեցի, որ այդ տիւմար Ստրեդլեյթերը լվացվելուց վերադարձել է մեր սենյակը: Զգացվում էր, որ նա իր անիծյալ օճառամանն աւտամաների խոզանակն է տեղավորում, ու բաշեց պատուհանը: Թարմ օդը պաշտում էր: Հետո հանգրեց լույսը: Նույնիսկ չնայեց՝ արևտեղ եմ թե չէ:

Պատուհանից դուրս նույնպես թախծալի էր: Ոչ մեքենա էր երևում, ոչ մի բան: Այնպես տխուր ու միայնակ զգացի ինձ, որ որոշեցի արթնացնել էկլիխն:

— էյ, է'կլի,— ասացի շշուկով, որպեսզի Ստրեղիկը  
բը չսի:

Բայց էկլին չսեց:

— էյ, է'կլի:

Նա դարձյալ չսեց: Քնած էր մեռածի պես:

— էյ, է'կլի:

Վերջապես լսեց այս անգամ:

— Հը, ի՞նչ պատահեց: Հազիվ էր աչքս կպել:

— Լսիր, ինչպե՞ս են վանք գնում,— հարցնում եմ: Հան-  
կարծ մտքովն անցավ մենաստան փնալ:— Պետք է կաթո-  
լի՞կ լինես, թե ոչ:

— Իհարկե, պետք է: Խոզի մեկն ես: Մի՞թե դրա համար  
կարթնացնեն մարդուն:

— Դե լավ, քնիր: Միևնույն է, վանք չեմ գնա: Ես գի-  
տեմ ինձ, բախտս չի բերի և օրինավոր հոգևորականի չեմ  
հանդիպի: Հավանաբար այնտեղ հենց միայն կրեստիներ  
են: Կամ պարզապես տականքներ:

Հենց որ այդ ասացի, էկլին վեր թռավ տեղից, ասես  
գլխին եռացրած ջուր էին լցրել:

— Գիտես ի՞նչ,— ասում է,— իմ ներկայությամբ ամեն  
ինչ կարող ես դուրս տալ, բայց որ փորձել ես ձեռ անել  
իմ հավատը, գրողը տանի...

— Հանգստացիր,— ասում եմ,— աչ ոք քո հավատին  
ձեռք չի տալիս, գրողը տանի:

Վեր կացա ուրիշի մահճակալից, գնացի դեպի դուռը:  
Այլևս չէի ցանկանում մնալ այդ հեղձուցիչ օդում: Բայց  
կես ճամփին կանգ առա, բռնեցի էկլիի ձեռքը և դիտմամբ  
հանդիսավոր կերպով սեղմեցի: Նա ձեռքը խլեց:

— Սա ի՞նչ բան է:

— Ոչինչ: Պարզապես ուզում էի շնորհակալություն  
հայտնել, որ դու իսկական արքայազն ես, ուրիշ ոչինչ,—  
ասացի ես, ու ձայնս այնպես անկեղծ ու ազնիվ էր:— Կեց-  
ցես դու, էկլի, բալիկս,— ասացի,— գիտե՞ս ի՞նչ տղա  
ես դու:

— Խելթիդ զոռ տուր, զոռ տուր: Երբևէ կջարդեն գլու-  
խըդ...

Բայց ես բանատեղ չգրի: Դուք շրթեկացրի ու գուրո եկա միջանցք:

Բոլորը քննի էին, ոմանք էլ կիրակի օրով առանց էին գնացել, և միջանցքում լուռ ու թախծալի էր:

Լեզուք և Հոֆմանի դռան մտաւ «Կոլիմնոս» ատամնամածուկի մի դատարկ տուփ էր ընկած, ու դեպի սանդուղքը գնալիս ես խփում էի դրան կոշիկիս քթով, հագիս տնային մորթեմ մաշիկներ էին: Սկզբում մտածեցի փնամ ցած, տեսնեմ ինչպես է ապրում իմ ծերուկը՝ Մեյ Բրոսարը: Բայց մեկ էլ միտքս փոխեցի: Հանկարծ որոշեցի ինչ պետք է անեմ: Հենց այս րոպեին պետք է գլուխս առնեմ ու գնամ Փենսիլից: Զսպասեմ մինչև շորեքշաբթի, և վերջ: Սոսկալի չէի ուզում մնալ այստեղ տնկված: Շատ էի տխուր և միայնակ զգում ինձ: Ու որոշեցի ահա թե ինչ անել: համար վերցնել Նյու-Յորքի որևէ հյուրանոցում, իհարկե, ոչ թանկարժեք հյուրանոցում, ու հանդիստ ապրել այնտեղ մինչև շորեքշաբթի: Ինչ շորեքշաբթի օրը վերադառնալ տուն: մինչև շորեքշաբթի կարգին կհանգստանամ, տրամագրությունս էլ կբարձրանա: Հաշվում էի, որ Գնդներս իմ հեռացման մասին ծերունի Թերմերի նամակը կստանան ոչ շուտ, քան երեքշաբթի կամ շորեքշաբթի: Չէի ցանկանում տուն վերադառնալ, մինչև նամակն ստանալն ու գրա հետ հաշտվելը: Չէի ուզում ականատես լինել այդ ամենն առաջին անգամ կարդալուն: Մայրս անմիջապես հիստերիկայի մեջ էր ընկնելու: Իսկ հետո, երբ մի քիչ հնանա, արդեն ոչինչ: Իսկ ինձ հարկավոր էր հանգստանալ: Նյարդներս սոսկալի շարված էին: Ազնիվ խոսք, սոսկալի:

Մի խոսքով, այդպես էլ որոշեցի: Վերադարձա սենյակ, վառեցի լույսը, սկսեցի հավաքել իրերս: Համարյա ամեն ինչ տեղավորել էի: Իսկ այդ Ստրեյլիթերը իսկի շարժեցա՞մ էլ: Մխեցի, հաղնվեցի, էրկու ճամպրուկներս դասավորեցի: Երկու րոպեում դասավորեցի: Ես շատ արագ եմ դասավորում:

Մի բան միայն տրամագրությունս գցեց: Տեղավորեցի նաև նոր չմուկներս, որ մայրս նախօրյակին էր ուղարկել: Տրամագրությունս ընկավ, որովհետև պատկերացրի, թե մայրիկս ինչպես է գնացել պորտոխանութ, վաճառողին մի-

լիոն տարօրինակ հարցեր տվել, իսկ այստեղ ինձ կրկին վտարել են դպրոցից: Մի տեսակ տխուր էր: Չմշակներն էլ այն չի գնել, որն ինձ հարկավոր է, ինձ վազքային է հարկավոր, իսկ նա գնել է հոկեյի, բայց միևնույն է, տրամադրութունս ընկավ: Միշտ այդպես է ստացվում՝ ինձ նվեր են տալիս, իսկ տրամադրութունս դրանից ընկնում է: Ամեն ինչ տեղավորեցի, նորից հաշվեցի փողս: Չեմ հիշում կոնկրետ որքան էր, բայց բավական շատ էր: Հենց անցյալ շաբաթ էր տատիկս փող փոխանցել ինձ: Մի տատիկ ունեմ, որ փողը չի խնայում: Ծիշտ է, խնայ՝ այնքան էլ տեղը չէ. հարյուր տարեկան է նա և տալիս մի չորս անգամ ծննդյանս օրվա կապակցությամբ փող է ուղարկում ինձ: Ու թեև բավականին փող ունեի, այնուամենայնիվ, մտածեցի, որ մի ավելորդ դոլլարը փոր չի ծակի: Գնացի միջանցքի ծայրը, արթնացրի Ֆրեդերիկ Սուրոֆին, այն տղային, որին փոխարինաբար տվել էի գրամեքենաս: Հարցրի, թե որքան կտա գրամեքենայիս դիմաց: Նա հարուստներից էր: Ասաց՝ չգիտեմ: Ասաց՝ մտադիր չէ գնել: Բայց, այնուամենայնիվ, գնեց: Գրամեքենան առժեռ մտ իննսուն դոլլար, իսկ նա գնեց քսանով: Դեռ բարկացավ էլ, որ արթնացրի իրեն:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, վերցրի ճամպրուկներս և ինչ-որ հարկավոր էր, կանգ առա սանդուղքի Գոտ ու հրածեշտի համար նայեցի մեր միջանցքին: Կարծեմ՝ լաց եղա: Ինքս էլ չգիտեմ ինչու: Հետո որսորդական գլխարկս դրեցի իմ սիրած ձևով՝ հովարը դեպի ետ, ու կոկորդով: մեկ գոռացի:

— Բարի գիշեր, կրետիններ:

Գրագ կգամ, որ արթնացրի բոլոր այդ պնակալեզներին: Հետո ցած վազեցի աստիճաններով: Տիմարի մեկը մի ինչ-որ ընկույզի կեղև էր գցել ոտքի տակ, ու ես քիչ մնաց կոտրեի վիզս և գրողի ծոցը գնայի:

Պարզվեց, որ ուշ է տաքսի կանչելու համար, ու ես ստիպված ոտքով գնացի կալարան: Կալարանը հեռու չէր,

բայց սոսկալի ցուրտ էր ու դժվար էր ձյան վրայով քայլելը, ճամպրուկներն էլ մի կողմից էին զարկվում ոտքերիս, ասես դիտմամբ: Բայց հաճելի էր օդը: Վատն այն էր, որ սառը օդից քիթս ու վերին շրթունքս մրմռում էին, Ստրեդլեյթերը հասցրել էր դնչիս: Շրթունքս պատովել էր ատամներիս խփվելուց, դա շատ ցավոտ բան է: Փոխարենը ականջներս տաք էին: Գլխարկս ականջակալներ ուներ, և ես իջեցրել էի դրանք: Թքած ունեի, թե ինչպիսի տեսք եմ ատացել: Միկնույն է, շուրջս տշ ոք չկար: Բոլորն էլ վաղուց խոմփացնում էին:

Բախտա բերեց, երբ եկա կայարան: Ընդամենը տասը բուրբ սպասեցի գնացքին: Մինչև գնացքի գալը ձյուն հավաքեցի և շփեցի դեմքս:

Ընդհանրապես սիրում եմ գնացքով տեղ գնալ, հատկապես գիշերը, երբ վագոնում լույս է, իսկ շրջում՝ խավար, և վագոնում սուրճ, սանդղիչներ ու ամսագրեր են բաժանում: Սովորաբար ես ապուխտով սանդղիչներ և շրթահատ ամսագիր եմ վերցնում: Երբ գնացքով գնում ես, կարելի է նույնիսկ առանց զգվանքի ամենաապուշ պատմվածքները կարդալ: Դուք գիտեք ինչպիսի Քառակուսի ծնոտներով զանազան ցուցադրական Դեվիդների ու ցուցադրական գեղեցկուհի Լինդաների կամ Մարսիաների մասին. սրանք միշտ վառում են այդ Դեվիդների տխմար ծխամորճները: Գիշերը վագոնում ես կարող եմ կարդալ նույնիսկ նման աղբը: Բայց հիմա չէի կարողանում: Զգիտեմ ինչու, կարդալու տրամադրությունն ունեի: Ուղղակի նստել էի ու ոչինչ չէի անում: Միայն հանեցի որսորդակա՞ դլխարկս ու դրեցի գրպանս:

Մեկ էլ Տրեմտոնում մի տիկին բարձրացավ վագոն և նստեց կողքիս: Վագոնը գրիթ դատարկ էր, ժամը ուշ, իսկ նա միկնույն է, եկավ ու նստեց կողքիս և ոչ թե ազատ նստարանին, որովհետև նա նստել էի առջևում, իսկ նա մի լիթիսոփ պայուսակ ուներ: Եվ նա իր այդ պայուսակը տեղափոխ անցուղու վրա դրեց, այնպես որ ուղեկցողի կամ ուղևորներից որևէ մեկի ոտքը կարող էր կպչել դրան: Երկվում էր, ինչ-որ ընդունելությունից կամ պարահանդեսից էր պերադառնում, զգեստի վրա օրիգինալներ կային: Նա մոտ

քառասուն-քառասուն հինգ աւարիկան կլինենր, բայց շատ գեղեցիկ էր: Կանայք ինձ վրա շշմեցուցելէ տպավորութիւն են թողնում: Ազնիվ խոսք: Չէ, ոչ այն իմաստով, ես կնամուշեմ, թեև բավական տպավորվող եմ: Պարզապես նրանք ինձ դուր են գալիս: Ու միշտ նրանք իրենց այդ հիմար պայուսակները դնում են անցուղու վրա:

Այդպես նստած էինք, մեկ էլ նա ասաց.

— Ներեցեք, բայց, կարծեմ, այս պիտակը Փենսիլի դպրոցինն է:

Նա վերևի ցանցին էր նայում, որտեղ դրված էին իմ ճամպրուկները:

— Այո,— ասում եմ: Նա իրավացի է. ճամպրուկներիցս մեկի վրա իրոք մնացել էր դպրոցական պիտակը: Էժանագին բան է:

— Ա՛խ, ուրեմն դուք Փենսիլիում եք սովորում,— ասում է նա: Շատ հաճելի ձայն ունի: Այդպիսի ձայնը լավ է հընչում հեռախոսով: Արժե որ հետը փոքրիկ հեռախոս մանածի:

— Այո, այնտեղ եմ սովորում,— ասում եմ:

— Որքա՛ն հաճելի է: Գուցե ճանաչո՞ւմ եք իմ որդուն: Էռնեստ Մորտուին: Նա էլ է Փենսիլում սովորում:

— Ծանաչում եմ: մեր դասարանից է:

Նրա որդին այդ շարժելի դպրոցի ամենազգվելի սողուններից մեկն էր: Յնչուդ ընդունելուց հետո միշտ անցնում էր միջանցքով ու թաց սրբիշով խփում բուլորին: Այ թե ինչպիսի սողուն էր:

— Ի՛նչ եք ասում, շատ հաճելի է,— ասաց տիկինը: Ու այնպե՛ս անմիջական, առանց ձևականութունների: Շատ բարեհամբույր տիկին էր:— Անպայման կասեմ էրնեստին, որ հանդիպել եմ ձեզ: Ի՛նչ է ազգանունդ, բարեկամս:

— Ռուզուֆ Շմիտ,— ասում եմ: Չէի ուզում ողջ կենսագրութիւնս պատմել: նրան: Իսկ Ռուզուֆ Շմիտը մեր մասնաշենքի ծերունի ղռնապանն էր:

— Ձեզ դո՞ւր է դալիս Փենսիլի,— հարցրեց նա:

— Փենսիլի: Ինչպես ասեմ: Վատ չէ: Իհարկե, դրախտ չէ, բայց մյուս դպրոցներից վատ չէ: Բավական բարեխիղճ ուսուցիչներ կան այնտեղ:

— Իմ էոնեստը ուղղակի պաշտում է գայրոցը:

— Այո, գիտեմ, — ասում եմ: Ու սկսում եմ վրա տալ. — Նա շատ հեշտությամբ է հարմարվում: Ուզում եմ ասել՝ կարողանում է լեզու գտնել մարդկանց հետ:

— Իսկապե՞ս, դուք այդպե՞ս եք գտնում, — հարցրեց նա: Երևում է, դա շատ էր հետաքրքրում նրան:

— Էոնե՞ստը: Դե, իհարկե, — ասացի ես: Ու նայում եմ, թե ինչպես է հանում ձեռնոցները: Ա՛յ թե մատանիներ ունի նա:

— Եղունգս շարճեցի տաքու մեջ, — ասում է: Նայում է ինձ ու ժպտում: Նա զարմանալիորեն հաճելի ժպիտ ունի: Շատ հաճելի: Չէ՞ որ մարդիկ ընդհանրապես չեն ժպտում կամ մի տեսակ գարշելի են ժպտում:

— Ես ու էոնեստի հայրը հաճախ ենք անհանգստանում նրա համար, — ասում է: — Երբեմն ինձ թվում է, թե նա այնքան էլ չի կարողանում յուր գնալ մարդկանց հետ:

— Ի՞նչ իմաստով:

— Հասկանո՞ւմ եք, նա շատ նրբազգաց տղա է: Նա երբեք իսկական ընկերություն չի արել ուրիշ տղաների հետ: Գուցե ամեն ինչին շատ ավելի լրջորեն է վերաբերվում, քան վայել է նրա տարիքին:

«Նրբազգաց, այ քեզ զարմանք»: Կվացարանակոնքի կափարիչը ավելի շատ նրբազգաց է, քան այդ էոնեստը:

Ես նաչեցի այդ կնոջը: Արտաբուստ այնքան էլ հիմարի տպավորություն չէր թողնում, կարելի էր կարծել, որ շատ լավ էլ հասկանում է, թե ինչպիսի սողունն է իր որդին: Բայց այստեղ ուրիշ խնդիր կա, խոսքս ընդհանրապես մայրերին է վերաբերում: Բուր մայրերն էլ մի փոքր խախտված են: Եվ այնուամենայնիվ, այդ ստոր Մորոտի մայրն ինձ դուր էր գալիս: Շատ լավն էր:

— Սիգարետ չէի՞ք կամենա, — հարցնում եմ:

Նա աչք ածեց ամբողջ վագոնը:

— Իմ կարծիքով, այս վագոնը շփոթների համար է, Ռուդոլֆ, — ասում է նա: «Ռուդոլֆ», ես կմեռնեմ, ազնիվ խոսք:

— Ոչինչ, կարելի է ծխել, մինչև որ կգոռան մեզ վրա, —

ասում եմ: Նա մի սիգարետ վերցրեց, ու ես վառեցի նրա սիգարետը:

Նա շատ հաճելի էր ծխում: Ներս էր քաշում, իհարկե, բայց ոչ ազահարար, ոչ իր տարիքի ուրիշ կանանց նման: Նա շատ հմայիչ էր: Եվ որպես կին՝ նույնպես, եթե անկեղծ խոսենք:

Հանկարծ նա շատ ուշադիր նայեց ինձ:

— Կարծես թե ձեր քթից արյուն է հոսում, բարեկամս, — ասաց նա հանկարծ:

Ես գլխով արեցի ու հանեցի թաշկինակս:

— Չնազունդը կպել է քթիս, — ասում եմ, — հասկանում եք, սառցակտորով ձնազունդը:

Հավանաբար, ամբողջ ճշմարտությունը կպատմեի նրան, միայն թե դա շատ երկար կտևեր: Բայց նա ինձ շատ դուր եկավ: Նույնիսկ ափսոսացի, որ որպես Ռուզոլֆ Շմիտ եմ ներկայացել:

— Այո, ձեր էռնին մեր դպրոցի սիրելին է, դուք այդ բանը գիտեի՞ք:

— Ոչ, չգիտեի:

Ես գլխով արեցի:

— Մենք միանգամից չճանաչեցինք նրան: Նա հետաքրքիր տղա է: Ծիշտ է, տարօրինակություններ ունի, հասկանում եք: Վերցնենք թեկուզ մեր ծանոթությունը: Երբ ծանոթացանք, ինձ թվաց, թե նա մի քիչ քիթը ցցում է: Սկզբում այդպես թվաց: Բայց նա այդպիսին չէ: Պարզապես շատ յուրօրինակ տղա է, միանգամից դժվար է նրան ճանաչել:

Խեղճ միսիս Մորուուն ոչինչ չէր ասում, բայց մի տեսնեիք նրան: Ուղղակի մնացել էր սառած: Մայրերը միշտ էլ այդպես են, միայն թե ասա, որ նրանց որդին հրաշալի տղա է:

Այստեղ ես շափն անցկացրի:

— Նա ձեզ ոչինչ չի՞ ասել ընտրությունների մասին, — հարցնում եմ: — Մեր գասարանային ընտրությունների մասին:

Նա տարուբերեց գլուխը: Աստված վկա, ես ուղղակի հիպոթոսել էի նրան:

— Հասկանում եք, շատերն էին ուզում էռնիին դասարանի ավագ ընտրել: Այո, բոլորը միաձայն տվեցին նրա



Քեկնածությունը: Հասկանո՞ւմ եք, ոչ ոք նրանից լավ չէր անի այդ գործը, — ասում եմ: Օ՛հ, այ թե փշեցի ես: — Բայց մեկ ուրիշին ընտրեցինք, գիտեք, Հարրի Ֆենսերին: Եվ ընտրեցինք միայն այն պատճառով, որ էռնին թույլ չտվեց իր թեկնածությունը առաջադրել: Ու բոլորն այն պատճառով, որ նա այդպես համեստ է, ամաշկոտ: Լավ կլինի, դուք նրան մի քիչ փոխեք, գիտե՞ք, ազնիվ խոսք: — Ես նայեցի նրան: — Մի՞թե նա ձեզ ոչինչ չի պատմել:

— Չէ, չի պատմել:

Ես գլխով արեցի:

— Դա նման է նրան: Այո, նրա ամենամեծ թերությունն այդ է, որ չափից ավելի համեստ է, ամաշկոտ: Ազնիվ խոսք, դուք նրան ասացեք, որ այդքան շատ չամաշի:

Այդ պահին ուղեկցողը ներս մտավ, որպեսզի ստուգի միսիս Մորոուի տոմսը, ու նա ինձ նշան արեց, որպեսզի լռեմ: Իսկ ես ուրախ եմ, որ այդ ամենն ասացի: Ընդհանրապես, իհարկե, այնպիսի տիպերը, ինչպիսին այդ Մորոուն է, որ մարդկանց խփում են թաց սրբիչով և դեռ ուզում են ցավ պատճառել, այդպիսիները ոչ միայն մանկության օրերին են սրիկա, այլև ամբողջ կյանքում: Բայց գլուխս կտամ, որ իմ այդ զառանցանքից հետո խեղճ միսիս Մորոուն իր տղային միշտ պատկերացնելու է այդպես համեստ ու ամաշկոտ, որը թույլ չի տվել նույնիսկ իր թեկնածությունն առաջադրել: Դա միանգամայն հնարավոր է: Ի՞նչ իմանաս: Մայրերն այդպիսի հարցերից լավ չեն գլուխ հանում:

— Չէի՞ք կամենա կոկտեյլ խմել, — հարցնում եմ: Ես ինքս էլ խմելու ցանկություն ունեցա: — Կարելի է գնալ վագոն-ռեստորան: Գնա՞նք:

— Բայց, սիրելիս, մի՞թե ձեզ թույլատրվում է կոկտեյլ պատվիրել, — հարցնում է նա: Ու բոլորովին էլ ոչ բարձրից: Նա այնքա՞ն լավն էր, որ երբեք վերևից չէր խոսի:

— Ընդհանրապես չի թույլատրվում, բայց ինձ մատուցում են, որովհետև ես բարձրահասակ եմ, — ասում եմ: — Բացի այդ, մազերս ճերմակել են: — Ես թեքեցի գլուխս ու ցույց տվի ճերմակ մազերս: Նա ուղղակի ապշեց: — Իսկապես, ինչո՞ւ չխմենք միասին: — Հարցնում եմ: Ես շատ էի ուզում նրա հետ խմել:

— Զէ, թերևս, շարժե: Շնորհակալ եմ, բարեկամս, անվիբ լավ է շքանաք,— ասում է:— Համ էլ ոնտորանն այս ժամին փակ է լինում, ախր հիմա շատ ուշ է, չգիտե՞ք:

Նա իրավացի է: Բոլորովին մոռացել էի ժամը քանիսն է: Այստեղ նա նայեց ինձ ու հարցրեց այն, ինչից վախենում էի:

— Էոնեստը գրել էր, որ վերադառնալու է տուն շորեքշաբթի օրը, որ Մենդյան տոներն սկսվում են միայն շորեքշաբթի: Հո ձեզ շտապ տուն չե՞ն կանչել, հուսով եմ, տանք հիվանդ շունե՞ք:

Երևում էր, որ նա իսկապես անհանգստանում էր ինձ համար, հենց այնպես հետաքրքրասիրութունից չէր հարցնում, լրջորեն անհանգստանում էր:

— Զէ, տանը բոլորն էլ առողջ են,— ասում եմ:— Պատահա՞ր ես եմ: Ինձ պետք է վիրահատեն:

— Ախ, ի՞նչ եք ասում:— Ես տեսա, որ նա իսկապես ցավում է ինձ համար: Ինքս էլ ափսոսացի, որ այդպիսի հիմարութուններ դուրս տվի, բայց արդեն ուշ էր:

— Ոչի՞նչ, առանձնապես լուրջ բան չէ: Պարզապես մի փոքրիկ ուռուցք կա ուղեղիս վրա:

— Զի՛ կարող պատահել,— նա սարսափից ձեռքով փակեց բերանը:

— Դատա՛րկ բան է: Մակերեսային ուռուցք է: Ու բոլորովին փոքրիկ: Երկու բուրդով կհեռացնեն:

Այդ ժամանակ գրպանիցս հանեցի չվացուցակն ու սկսեցի կարդալ, որպեսզի վերջ տամ փշոցին: Որ սկսում եմ փչել, էլ ժամերով չեմ կարողանում կանգ առնել: Ուղղակի ժամեքով:

Այնուհետև գրեթե էլ չխոսեցիք: Նա «վոզ» էր կարդում, իսկ ես պատուհանից նայում էի դուրս: Նա իջավ Նյու-Յորքում: Բաժանվելիս ցանկացավ, որ վիրահատութունս հաջող անցնի և այլն: Ու ինձ Ռուդոլֆ անվանեց: Իսկ վերջում հրավիրեց ամռանը գնալ Էոնիի մոտ՝ Գլոստեր, Մասաչուսետս: Ասաց, որ իրենց տունը ուղղակի ափին է, իսկ այնտեղ թենիսի հրապարակ կա, բայց ես շնորհակալութուն հայտնեցի և ասացի, որ տատիկիս հետ մեկնում եմ Հարավային Ամերիկա: Ես թունդ փչեցի, որովհետև մեր տատիկը նույնիսկ

տեից դուրս չի գալիս, բացի երբեմն առավոտյան ազոթքի գնալուց: Բայց միևնույն է, ես երբեք չէի գնա այդ սողուն էննեստի մոտ, ոչ մի գնով, եթե նույնիսկ գնալու տեղ չունենայի:

9

Փենսիլվանյան կայարանում առաջին հերթին գնացի հեռախոսախցիկ: Ուզում էի որևէ մեկին զանգահարել: Ճամպրուկներս դրի հեռախոսախցիկի մոտ, որպեսզի լավ երևան, բայց հենց որ լսափողը վերցրի, տեսա, որ ոչ մեկին չեմ կարող գանգ տալ: Եղբայրս՝ Դ. Բ.-ն, Հոլիվուդում էր, Փրբին՝ փոքրիկ քույրիկս, ժամը իննին պառկում էր քնելու, նրան հնարավոր չէր գանգ տալ: Նա չէր բարկանա, որ արթնացնեի, բայց ամբողջ գաղտնիքը նրանում էր, որ հեռախոսին մեկ ուրիշը կմոտենար: Ծնողներիցս որևէ մեկը: Ուրեմն՝ չէր կարելի: Ես ցանկացա զանգահարել Զեյն Գալլահերի մորը, իմանալ, թե երբ է սկսվում Զեյնի արձակուրդը, բայց հետո փոշմանեցի: Բացի այդ էլ, ուշ էր աշտոեղ զանգահարելու համար: Հետո ցանկացա զանգահարել այն աղջկան, որի հետ հաճախ էի հանդիպում՝ Սալլի Հեյսին, գիտեի, որ նրա արձակուրդն արդեն սկսվել է, նա ինձ այսպես կոչված նամակ էր գրել, ծայրից ծայր կեղծ, սոսկալի երկար, հրավիրում էր ճրագալույցին օգնեմ տոնածառը զարդարելուն: Բայց վախեցա հեռախոսին մոտենա նրա մայրիկը: Նա ծանոթ էր մայրիկիս, ու պատկերացնում եմ, թե ինչպես կվերցնեի հեռախոսն ու գլխապատառ կզանգահարեի մորս, որ ես նյութորքում եմ գտնվում: Բացի այդ էլ, հավես չկար պառավ Հեյսի հետ հեռախոսով խոսելու: Նա ինչ-որ մի անգամ Սալլիին ասել էր, թե ես անզուսպ եմ: Նախ՝ անզուսպ եմ, երկրորդն էլ՝ կյանքում որևէ նպատակ չունեմ: Հետո ցանկացա զանգել մի տիպի, որի հետ սովորել էի Հուստոնի դպրոցում՝ Կառլ Լյուսին, բայց նրան շատ չէի սիրում: Ի վերջո ոչ ոքի էլ չզանգահարեցի: Մի քսան րոպե հետո դուրս եկա խցիկից, վերցրի ճամպրուկներս ու թունելով գնացի տաքսիների կայան:

Ես այն աստիճան ցրված եմ, որ, սովորության համա-

ձայն, վարորդին սվեցի մեր տան հասցեն: Բոլորովին դուրս էր թռել գլխիցս, որ որոշել էի երկու օր սպասել հյուրանոցում և զգնալ տուն, մինչև արձակուրդի սկսվելը: Այդ մասին հիշեցի, երբ անցել էինք գրեթե ամբողջ զրոսայգին: Ծս նրան ասում եմ.

— Խնդրում եմ ետ դարձեք, ես ձեզ ճիշտ հասցեն չեմ տվել, հարկավոր է ետ գնալ, կենտրոն:

Բայց, երևում է, խորամանկ վարորդ էր.

— Զեմ կարող, Մաք, այստեղ երթևեկությունը միակողմանի է: Հիմա պետք է մինչև Իննսուներորդ փողոցը հասնեմ: Զուգեցի վիճել:

— Լավ,— ասում եմ: Ու հանկարծ հիշեցի.— Ասացեք, զուք տեսե՞լ եք այն բաղերը, Կենտրոնական զրոսայգու Հարավային մուտքի մոտի լճում: Այն փոքրիկ լճակում: Գուցե պատահամա՞ր գիտե՞ք, թե ուր են չվում այդ բաղերը, եթե լիճը ծածկվում է սառույցով: Գուցե պատահամա՞ր գիտե՞ք:

Ծս, իհարկե, հասկանում էի, որ դա զուտ պատահականություն կարող էր լինել:

Նա շուտ եկավ ու նայեց ինձ այնպես, կարծես ես աննորմալ էի:

— Դու ինչ է, եղբայրս,— ասում է նա,— ծիծաղո՞ւմ ես ինձ վրա:

— Ոչ,— ասում եմ,— պարզապես ինձ հետաքրքրում է դա:

Նա այլևս ոչինչ չասաց, ես՝ նույնպես: Երբ մենք զրոսայգուց դուրս եկանք և հասանք Իննսուներորդ փողոց, նա շրջվեց.

— Դե, եղբայրս, հիմա՞ ուր ենք գնում:

— Հասկանում եք, չեմ ուզում գնալ Իստ-Սայդ հյուրանոց, այնտեղ կարող են ծանոթներ հանդիպել: Ծս ծպտված եմ ճանապարհորդում,— ասացի: Ասում եմ անհամ արտահայտությունները. «Մպտված եմ ճանապարհորդում»: Բայց հիմարների հետ այլ կերպ չես կարող զրուցել.— Պատահամա՞ր չգիտե՞ք ինչ նվազախումբ է նվազում Տաֆտի մոտ կամ «Նյու-Յորքում»:

— Գաղափար անգամ չունեմ, Մաք:

— Լավ, տարեք ինձ «էդմոնտ»,— ասում եմ,— զուցե դուք

չե՞ք մերժի ճանապարհին ինձ հետ կոկտեյլ խմել: Հյուրասիրում եմ: Ծա բավական շատ փող ունեմ:

— Զի կարելի, Մաք: Ներեցեք:

Այո, ուրախ ուղևոր եմ, խո՞սք չկա: Անվանի անձնավորութիւն:

Մենք եկանք «էդմոնտ», և ես համար վերցրի: Տաքսիում գլխիս դրի իմ որսորդական գլխարկը, հենց այնպես, կատակի համար, բայց նախասրահում հանեցի, որպեսզի ինձ խելառի տեղ չդնեին: Միծաղելի է, ես այն ժամանակ չգիտի, որ այդ ստոր հյուրանոցը լեփ-լեցուն է ամեն տիպի խելառներով:

Ինձ սոսկալի մռայլ համար էին տվել, թախիժը ուղղակի համակում էր հոգիս: Պատուհանից ոչինչ չէր երևում, բացի հյուրանոցի ետևի պատից: Բայց ինձ համար միևնույն էր: Երբ վատ տրամադրութիւն մեջ ես, ի՞նչ նշանակութիւն ունի, թե պատուհանից ինչ է երևում: Ինձ համար ուղեկցեց միջանցքի ծառայողը, զառամած մի ծերուկ՝ մոտ յոթանասուն տարեկան: Նա ավելի տխուր տպավորութիւն թողեց ինձ վրա, քան համարը: Լինում են այնպիսի ճաղատներ, որոնք կողքից են սանրում մազերը, որպեսզի ծածկեն ճաղատութիւնը: Ծա ավելի շուտ ճաղատ ման կգայի, քան այդպես կսանրվի: Ընդհանրապես դա ինչ աշխատանք է այդպիսի ծերունու համար՝ տեղափոխել՝ ուրիշի ճամպրուկները և սպասել թեյավճարի: Հավանաբար, նա այլևս ուրիշ բանի պետք չէ, այնուամենայնիվ, դա սոսկալի է:

Երբ նա գնաց, սկսեցի պատուհանից դուրս նայել առանձ վերարկուս հանելու: Միևնույն է, անելիք չունեի: Գուք չե, էլ կարող պատկերացնել, թե ինչ էր կատարվում դիմացի մասնաշենքում: Այնտեղ նույնիսկ նեղութիւն չէին կրել վարագույրներն իջեցնել: Ծա տեսնում էի, թե ինչպես մի տիպ, միայն տրուսիկով, ճերմակահեր, օրինավոր տեսքով մի պարոն այնպիսի բաներ էր անում, որ չեք հավատա, եթե ասեմ: Նախ ճամպրուկը դրեց մահճակալին: Հետո այնտեղից կանացի հագուստներ հանեց ու սկսեց հագնվել: Իսկական կանացի հագուստներ՝ մետաքսե գուլպաներ, բարձրակրունկ կոշիկներ, կրծքակալ և այնպիսի գոտի, որից կախված են լինում ռեզինները: Հետո նեղ, սև զգեստ հագավ, երեկոյան

զգեստ, երդվում եմ աստժողով: Հետո սկսեց կանացի փոքրիկ քայլերով անցուղարձ անել սենյակում ու սփզարետ ծխել և նայել հայելուն: Նա մեն-մենակ էր: Եթե, իհարկե, լոգարանում որևէ մեկը չկար. դա արդեն ես չէի տեսնում: Իսկ նրա վերևի լուսամուտում ես տեսնում էի մի տղամարդու և մի կնոջ, որոնք բերանով ջուր էին ցողում իրար վրա: Գուցեև ոչ ջուր, այլ՝ կոկտեյլ: Ես չէի տեսնում նրանց բաժակները մեջ ինչ կա: Սկզբում տղամարդն էր բերանը լցնում ու փչում ուղիղ կնոջ վրա: Հետո էլ՝ կինը, հերթով, գրողի ծոցը գնան նրանք: Միայն տեսնեիք, թե ինչպես էին անում դա: Չեմ կատակում: Հյուրանոցը լիքն էր գժերով: Հավանաբար, ես միակ լուրջ մարդն էի նրանց մեջ, իսկ դա այնքան էլ շատ չէ: Քիչ էր մնում հեռագիր ուղարկելի Ստրեղելյիթերին, որ առաջին իսկ գնացքով գար Նյու-Յորք: Նա այստեղ արքա կարող էր լինել, այս հյուրանոցում:

Վատն այն է, որ նման գարշանքին նայում ես առանց աչքդ կտրելու, նույնիսկ շուգենալով հանդերձ: Իսկ այն աղջիկը, որին ամբողջապես ջուր էին արել, նույնիսկ լավիկն էր: Ահա թե որն է իմ գժբախտությունը: Հոգուս խորքում ես, հավանաբար, սոսկալի անբարոյական եմ: Երբեմն նույնիսկ սոսկալի այլանդակություններ եմ պատկերացնում, ու թերևս ինքս ի վիճակի եմ անելու դրանք, եթե առիթ լինի: Ինձ երբեմն թվում է, թե դա գուցե հաճելի է, թեև զաղրելի է: Օրինակ՝ ես նույնիսկ հասկանում եմ, որ կարող է և հետաքրքիր լինել, եթե երկուսդ էլ հարբած եք ու բերանով ջուր կամ կոկտեյլ եք ցողում իրար վրա: Բայց ճիշտն ասած դա բոլորովին դուր չի գալիս ինձ: Եթե խոր մտածես, ապա դա ուղղակի գոեհկություն է: Իմ կարծիքով, եթե աղջիկը քեզ դուր է գալիս, ապա հարկ չկա հիմարություններ անելու, եթե նա քեզ դուր է գալիս, ուրեմն դեմքն էլ է դուր գալիս, դե էլ ինչ հարկ կա անվայելուշ արարքների, նրա՝ դեմքին ջուր կամ շփտեմ թե էլ ինչ թքելու: Վատն այն է, որ երբեմն ամեն տեսակ հիմարություններն էլ հաճույք են պատճառում մարդուն: Աղջիկներն իրենք էլ մի բան չեն, միայն խանգարում են, երբ ջանում ես որևէ հիմարություն թույլ չտալ, որպեսզի չփչացնես մի որևէ իսկապես լավ բան: Ես մի ծանոթ աղջիկ ունեի երկու տարի առաջ: Նա ինձնից վատն էր: Օհ,

Թուլիսի՛ տակա՛նք էր: Ե՛վ այնուամենայնի՛վ, երբեմն հետա-  
քրքրե՛ր էր նրա հետ, թեկուզե՛ զազրելի: Հնգհանրապետ ես  
այդ սեքսուալ հարցերից լավ չեմ գլուխ հանում: Երբեք չես  
իմանում, թե ինչն ինչոց է: Ես ինքս ինձ համար վարվեցո-  
ղության կանոններ եմ մշակում և տեղնուտեղն էլ խախտում:  
Անցյալ տարի ինքս ինձ որոշեցի, որ կապ չպետք է ունենամ,  
այնպիսի աղջիկների հետ, որոնցից զզվում եմ: Ու ինքս էլ  
խախտեցի որոշումս այդ նույն շաբաթ, ճիշտն ասած հենց  
նույն երեկոյան:

Աճքողը երեկոն համբուրվեցի մի տոկալի շարդաովողի  
հետ, որին Աննա Լուիզա Շերման էին անվանում: Չէ, ես  
լավ չեմ հասկանում ամեն տիպի սեքսը: Ազնիվ խոսք, չեմ  
հասկանում: շ

Կանգնել էի պատուհանի մոտ ու մտածում էի՝ ինչպես  
զանգահարեմ Ջեյնին: Միջքաղաքայինով զանգեմ ուղիղ քո-  
լեջ, որտեղ նա սովորում է, փոխանակ զանգահարելու մորն  
ու հարցնելու, թե երբ է սկսվում նրա արձակուրդը: Իհարկե,  
չի թույլատրվում ուշ գիշերով զանգահարել ուսանողուհիներին,  
բայց ես արդեն ամեն ինչ մտածել էի: Եթե մոտենան  
հեռախոսին, կասեմ, որ նրա քեռին եմ: Կասեմ, որ նրա  
մորաքույրը հենց նոր վթարի է ենթարկվել, մահամերձ վի-  
ճակում է, ու ես պետք է անհապաղ խոսեմ Ջեյնի հետ: Հա-  
վանաբար, նրան իմաց կտան: Չզանգահարեցի միայն այն  
պատճառով, որ անտրամադիր էի: Իսկ եթե տրամադրութուն  
չես ունենում, միևնույն է, ոչինչ չի ստացվի:

Հետո նստեցի բազկաթոռին ու ծխեցի բոլոր սիգարետ-  
ներս: Ես ինձ շատ վատ էի զգում, խոստովանում եմ: Ու-  
մեկ էլ մի բան մտածեցի: Սկսեցի պրպտել դրամապանակս  
որոնել մի հասցե, որ տվել էր ինձ Պրինսթոնում սովորու-  
մի տղա. մենք ամուսնն էինք ծանոթացել, մի երեկույթի  
ժամանակ: Վերջապես գտա երկտողը: Բավական ճմրթվել էր  
դրամապանակիս մեջ, բայց ընթերցել հնարավոր էր: Դա մի  
կնոջ հասցե էր, ոչ իսկական պոռնիկի, բայց, ինչպես պրինս-  
թոնցի այդ տղան էր ասում, նա երբեմն և շի մերժում: Մի  
անգամ նա այդ աղջկան տարել է Պրինսթոն պարերի, ու քիչ  
է մնացել այդ պատճառով նրան վտարեն գլորոցից: Աղջիկը  
կաբարեում պարում է հանվելով, թե նժան մի բան: Մի

խոսքով, վերցրի հեռախոսն ու զանգահարեցի նրան: Անունը  
Յեյ Կեվենդիշ էր, ապրում էր «Առենֆորդ» հյուրանոցում,  
Վաթունվեցերորդի և Բրոդվեյի անկյունում: Հավանաբար  
մի որևէ ետնախորշում:

Սկզբում կարծեցի, թե տանը չէ: Ոչ ոք չէր պատասխա-  
նում: Հետո վերցրին լսափողը:

— Այլո,— ասացի: Ես թավ ձայնով էի խոսում, որպես-  
զի չհասկանա քանի տարեկան եմ: Բայց ձայնս ընդհանրա-  
պես բավական ցածր է:

— Այլո,— ասաց կանացի ձայնը ոչ այնքան սիրալիր:

— Դա միսս Յեյ Կեվենդիշն է:

— Այո, ո՞վ է,— հարցրեց նա:— Այդ ո՞վ է գիշերվա  
կեսին զանգահարում ինձ, գրողը տանի:

Ես մի քիչ վախեցա:

— Այո, ես հասկանում եմ, որ հիմա ուշ է.— ասացի  
մեծավարի:— Հուսով եմ, դուք ինձ կներեք, բայց ինձ ուղ-  
ղակի անհրաժեշտ էր ձեզ հետ խոսել:— Ու այդ ամենը  
բարձրաշխարհիկ տոնով, ազնիվ խոսք:

— Այդ ո՞վ է խխր,— հարցնում է նա:

— Դուք ինձ շեք ճանաչում, ես էդի Բերդսելի քնկերն  
եմ: Նա ասաց, որ եթե քաղաք գամ, անպայման ձեզ հան-  
դիպեմ ու միասին կոկտեյլ խմենք:

— Ով ասա՞ց: Դուք ում ընկերն ե՞ք:— Իսկական էգ  
վագր է, հա՛, աստված վկա: Նա ուղղակի բղավում էր ինձ  
վրա հեռախոսով:

— էդմունդ Բերդսելի, էդի Բերդսելի,— կրկնեցի ես: Լավ  
չէի հիշում նրա անունը՝ էդմունդ էր թե էդվարդ: Միայն մեկ  
անգամ էինք հանդիպել մի ապուշ երեկույթում:

— Ես այդպիսի մարդ չեմ ճանաչում, Զեկ: Ու եթե ձեր  
կարծիքով ինձ համար հաճելի է գիշերվա կեսին վեր թռչել...

— էդի Բերդսել, Պրինսթոնից,— ասացի ես:

Լսում էի, թե նա ինչպես է կրկնում ազգանունը:

— Բերդսել... Բերդսել... Պրինսթոնի քոլեջի՞ց:

— Այո, այո,— ասացի ես:

— Դո՞ւք էլ եք այնտեղից:

— Մոտավորապես:

— Ըհ... Իսկ ինչպե՞ս է էդին,— ասաց նա:— Այնուա:



մենայնիվ, այլանդակութունն է զանգահարել գիշերվա կեսին:

— Նա՛ ոչինչ: Ենզրել է ձեզ բարեներ հաղորդել:

— Դե, շնորհակալ եմ: Դուք էլ իրեն բարեք,— ասաց:— Նա շատ լավ տղա է: Ի՞նչ է անում հիմա:— Կամաց-կամաց սիրալիր էր դառնում, գրողը տանի:

— Նույն բանը, ինքներդ էլ հասկանում եք,— ասացի ես: Ինչ իմանայի, թե ինչ է անում: Ես գրեթե անծանոթ էի նրան: Չգիտեի նույնիսկ՝ սովորո՞ւմ է դեռ Պրինսիփում, թե չէ:— Լսեցեք,— ասում եմ:— Գուցե հանդիպենք հիմա, մի-մի կոկտեյլ խմենք:

— Դուք պատկերացնո՞ւմ եք ժամը քանիսն է,— ասաց նա:— Եվ թույլ տվեք հարցնել ձեր անունը:— Նա հանկարծ սկսեց խոսել անգլիական շեշտադրությամբ:— Ինչ-որ շատ ջահել ձայն ունեք:

— Շնորհակալութունն կոմպլիմենտի համար,— ասում եմ ամենաբարձրաշխարհիկ տոնով:— Իմ անունը Հուդեն Քուֆիլդ է:— Հարկավոր էր ուրիշ անուն մտածել, բայց ես անմիջապես գլխի շնկա:

— Գիտեք ինչ, միստր Քոֆլ, ես սովոր չեմ գիշերները տեսակցության գնալու: Չէ՞ որ աշխատում եմ:

— Վաղը կիրակի է:

— Միևնույն է, ես պետք է լավ քնեմ: Ինքներդ էլ հասկանում եք:

— Իսկ ես կարծում էի, մենք միասին գոնե մի կոկտեյլ կխմեինք: Եվ հիմա այնքան էլ ուշ չէ:

— Դուք շատ սիրալիր եք, իսկապես,— ասում է նա:— Որտեղի՞ց եք խոսում: Որտե՞ղ եք հիմա:

— Ե՛ս: Ես ավտոմատից:

— Ախ այդպե՛ս:— Հետո երկար լռեց:— Գիտեք ինչ, ես շատ ուրախ կլինեմ ձեզ հետ հանդիպել, միստր Քոֆլ: Չայնից երևում է, որ դուք շատ լավ մարդ եք: Զարմանալի հաճելի ձայն ունեք: Բայց հիմա, այնուամենայնիվ, ուշ է:

— Ես կարող եմ գալ ձեզ մոտ:

— Մեկ ուրիշ ժամանակ կասեի՝ հիանալի է: Բայց հարևանուհիս հիվանդացել է: Նա ամբողջ երկկոյան պառկած

է եղել ու չի կարողացել քնել: Հենց միայն նոր փակեց աշ-  
քերը, քնած է: Հասկանո՞ւմ եք:

— Այո, դա վատ է:

— Որտե՞ղ եք իջեանել: Գուցե վա՞ղը հանդիպենք:

— Չէ, վաղը չեմ կարող: Միայն այսօր եմ ազատ:

Ա՛յ թե հիմարն եմ, այդպես չպետք է ասելի:

— Ինչ արած, շատ ափսոս:

— Ձեր ողջույնը կհաղորդեմ էդիին:

— Իսկապես կհաղորդե՞ք: Հուսով եմ, ուրախ ժամանակ  
կանցկացնեք Նյու-Յորքում: Հրաշալի քաղաք է:

— Դա ես գիտեմ: Շնորհակալություն: Բարի գիշեր, —  
ասացի ու կախեցի լսափողը:

Հիմա՞ր: Ինքդ ամեն ինչ փչացրիր: Հարկավոր էր զոնե  
վաղվա համար պայմանավորվել, կոկտեյլ խմելու հրավիրել  
կամ նման մի բան:

## 10

Դեռ բավական շուտ էր: Չեմ կարող որոշակի ասել, թե  
ժամը քանիսն էր, բայց այնքան էլ ուշ չէր: Ամենից շատ  
չեմ սիրում պառկել քնելու, երբ բոլորովին չեմ հոգնել: Բա-  
ցեցի ճամպրուկս, մաքուր վերնաշապիկ վերցրի, գնացի լո-  
գարան, լվացվեցի ու փոխեցի հագուստս: Մտածեցի՝ գնամ  
տեսնեմ ինչ է կատարվում նրանց «Յասամանագույն դահ-  
լիճում»: Հյուրանոցին կից գիշերային ակումբ կար, որ կոչ-  
վում էր «Յասամանագույն դահլիճ»:

Հագնվելու ընթացքում մտածում էի՝ չփորձե՞մ զանգա-  
հարել քրոջս՝ Ֆիրիին: Շատ էի ուզում նրա հետ խոսել: Նա  
ամեն ինչ հասկանում էր: Բայց չէր կարելի ոխակ անել և  
զանգահարել տուն, այնուամենայնիվ, նա փոքրիկ էր ու,  
հավանաբար, արդեն քնած էր, չէր մոտենա հեռախոսին:  
Իհարկե, կտրելի էր լսափողը դնել, եթե ծնողներս մոտենա-  
լին, բայց, միևնույն է, ոչինչ չէր ստացվի: Նրանք կճանա-  
չեին, որ ես եմ: Մայրիկս միշտ գլխի է ընկնում: Զգացո-  
ղությունն ուժեղ է: Բայց չափից դուրս շատ էի ուզում խոսել  
մեր Ֆիրիի հետ:

Եթե միայն տեսնեի՞ց նրան: Այդքան լամենտ, խելացին,

հավանաբար, տեսած չեք լինի: Շատ խելորն է, ճիշտ եմ  
ասում: Հասկանում եք, ինչ ընդունվել է դպրոց, միայն գե-  
րազանց գնահատականներ է ստացել, երբեք երկուսներ չի  
ստացել: Ը՛իշտն ասած, մեր ընտանիքում միայն ես եմ այս-  
պես բուժի: Ավագ եղբայրս՝ Դ. Բ-ն, գրող է, իսկ մյուս եղ-  
բայրս՝ Ալլին, որ մեռավ, ուղղակի կախարդ էր: Միայն ես  
եմ այսպես բուժի: Իսկ դուք Ֆիբին տեսնեիք: Նրա մազերը  
գրեթե Ալլիի մազերի գույնին են՝ շեկ, ամուսնը շատ կարճ  
է կտրում: Ամուսնը նա հավաքում է ականջների ետևը: Իսկ  
ականջները փոքրիկ են, սիրունիկ: Ձմռանը արձակում է,  
երբեմն մայրիկը հյուսում է, երբեմն՝ ոչ, ամեն ձևի էլ գե-  
ղեցիկ է: Նա ընդամենը տասը տարեկան է: Ինձ պ.ս նիհա-  
րիկ է, բայց գեղեցիկ կազմվածքով, նիհարութունը հենց  
հարմար է լմշկասահքին: Մի անգամ պատուհանից նայում  
էի, թե նա ինչպես է փողոցից անցնում գրոսայգի, ու մտա-  
ծեցի, որ շատ հարմար է լմշկասահքի համար՝ նիհարիկ ու  
թեթև: Ձեզ շատ դուր կգա նա: Հասկանո՞ւմ եք, ինչ որ  
ստես, անմիջապես հասկանում է խոսքն ինչին է վերաբե-  
րում: Նրան նույնիսկ ուր ասես կարող ես տանել հետդ:  
Օրինակ՝ տանես անհաջող ֆիլմ նայելու, անմիջապես հաս-  
կանում է, որ թույլ նկար է, լավ ֆիլմ տանես, անմիջապես  
հասկանում է, որ լավն է: Ես ու Դ. Բ-ն մի անգամ նրան  
տարանք Ֆրանսիական այդ նկարը նայելու՝ «Հացթուխի կի-  
ներ»։ Ռեյման է խաղում այնտեղ: Ֆիբին ուղղակի գժվեց:  
Բայց նրա սիրած ֆիլմը «Երեսունինը աստիճանն» է, Ռո-  
բերտ Դոնատի խաղով հանդերձ: Նա այդ ամբողջ նկարը  
գրեթե անգիր գիտի: Մենք միասին մի տասն անգամ նայել  
ենք: Օրինակ՝ երբ այդ Ռոբերտը ոստիկաններից թաքնվում  
է շոտլանդական ֆերմայում, Ֆիբին այդ շոտլանդացու հետ  
միաժամանակ բարձրաձայն ասում է. «Դուք սելյոդկա՞ եք  
ուտում»: Ամբողջ երկխոսութունն անգիր գիտի: Իսկ երբ  
այդ պրոֆեսորը, որն իրականում գերմանական լրտես է,  
բարձրացնում է ճկույթը, որի մի հողը չկա, ու ցույց տալիս  
Ռոբերտ Դոնատին, մեր Ֆիբին նրանից շուտ է իր ճկույթը  
մթության մեջ խփում դեմքիս: Ձէ, նա լավն է: Ձեզ ան-  
պայման դուր կգա: Ը՛իշտ է, նա մի քիչ շատ է կաշուն: Ամեն  
ինչ շափից դուրս խորն է ասլրում, ոչ մանկականորեն: Դա

Տիշտ է, Եվ հետո ամբողջ ժամանակ գրքեր է գրում: Միայն թե երբեք դրանք չի ավարտում: Ամեն ինչ մի աղջկա մասին է գրում՝ Գիզելա Ուզերֆիլդի մասին: Միայն թե մեր Ֆիբին գրում է՝ «Կիսելա»: Այդ Կիսելա Ուզերֆիլդը խուզարկու աղջիկ է: Նա կարծես թե որք է, բայց հետո հայրը գտնում է նրան: Իսկ նրա հայրը «բարձրահասակ, հրասուրբիչ ջենտլմեն է, քսան տարեկան»: Գովել կարելի է: Այո, մեր Ֆիբին Ազնիվ խոսք, նա անպայման ձեռք դուր կգա: Նա նույնիսկ շատ պատիվ ժամանակ էլ խելացի էր: Երբ նա շատ-շատ փոքրիկ էր, ես ու Ալլին նրան տանում էինք զբոսայգի, հասկապես կիրակի օրերին: Իսկ Ալլին առագաստանավակ ուներ, նա սիրում էր կիրակի օրերին այն բաց թողնել, ու մենք միշտ մեր փոքրիկ Ֆիբին տանում էինք մեզ հետ: Նա ճերմակ ձեռնոցներ էր հագնում ու քայլում մեր մեջտեղով, ինչպես իսկական լեդի: Երբ ես ու Ալլին մի որևէ բանի մասին խոսում էինք, նա ականջ էր դնում: Երբևմն մոռանում էինք նրա գոյութունը, համենայն դեպս, շատ փոքրիկ էր, բայց նա անպայման հիշեցնում էր իր մասին: Միշտ միջամտում էր: Կհրբր ինձ կամ Ալլին ու կհարցներ. «Իսկ ո՞վ, ո՞վ ասաց, Բոբին, թե՞ աղջիկը»: Ու մենք նրան պատասխանում էինք, թե ով ասաց, և նա ասում էր՝ «Ասա՛» ու կրկին ականջ դնում մեծի պես: Ալլին էլ էր նրա համար գովում: Ուզում եմ ասել, որ նա էլ էր շատ սիրում Ֆիբին: Հիմա Ֆիբին արդեն տասը տարեկան է, այնքան էլ փոքր չէ, բայց միևնույն է, բոլորն էլ գովում են նրա համար, ով հասկանում է, իհարկե:

Համենայն դեպս, ես շատ էի ուզում նրա հետ հեռախոսով խոսել: Բայց վախենում էի, թե ծնողներս կմոտենան ու գլխի կընկնեն, որ ես Նյու-Յորքում եմ, և որ ինձ վտարել են դպրոցից: Այնպես որ, երբ նոր վերնաշապիկ հագա, իջա հուլ՝ տեսնեմ ինչ է կատարվում այնտեղ:

Բայց այնտեղ գրեթե մարդ չկար, բացի ինչ-որ սուտենյորներից և պոռնկատիպ շիկահեր աղջիկներից: «Ցասամանագույն դահլիճից» երաժշտության ձայն էր գալիս, և ես գնացի այնտեղ: Ու թեև այնտեղ դատարկ էր, ինձ մի անպետք սեղան առաջարկեցին, հեռու մի անկյունում: Հարկա-

Պոր էր մատուցողի ձեռքը մի գոլար խոթելի Նյու-Յորքում  
փողով ամեն ինչ էլ կարելի է, ես զա հաստատ գիտեմ:

Բադի Սիմոնիի նվազախոսամբը զարշնչի էր Սոսկալի աղ-  
մըկտտ, ոչ լավ խմատով աղմկտտ, ուղղակի անտանելի: Եվ  
զահլիճում իմ հասակակիցները քիչ էին: Ճիշտն ասած, բո-  
լորովին չկային. այնտեղ միայն պճնված ժերուկներ էին  
խրենց դամաների հետ: Միայն հարևան սեղանի մոտ նըս-  
տածներն էին բուրբուրովին առ տիպի այցելուներ: Հարևան  
սեղանի մոտ նստած էին երեսուներե մոտ երեք աղջիկներ:  
Երեքն էլ տգեղ էին և նրանց զվարակներից երևում էր, որ  
եկվորներ են: Բայց շիկահերը այնքան էլ տգեղ չէր: Նրա  
մեջ ինչ-որ հետաքրքիր բան կար: Հենց որ սկսեցի նրան  
զննել, մատուցողը եկավ: Ես պատվիրեցի տգայով վիակի,  
բայց խնդրեցի չբացել. արագ էի խոստում, թե չէ երբ ծամ-  
ծըմում ես, կարծում են, անշափահաս ես ալ աշպիտի դեպ-  
քում ոգելից խմիչքներ շին տալիս: Եվ այնուամենայնիվ,  
նա սկսեց կաշել:

— Ներեցեք սըր, — ասում է, — բայց ձեզ մոտ որևէ հա-  
վաստագիր չկա՞ ձեր շափահասութիւնը հաստատող: Գու-  
ցե վարտողական գրքուկը ձեզ մո՞տ լինի:

Ես սառցե հայացքով նայեցի նրան, կարծես մահացու  
Պերպով վիրավորել էր ինձ, ու ասացի.

— Մի՞թե ես նման եմ անշափահասի:

— Ներեցեք, սըր, բայց մեզ կարգադրված է.

— Լավ, լավ, — ասում եմ ու մտածում՝ «գրողի ծոցը»:  
Կոկա-կոլա տվեք:

Նա արդեն գնում էր, բայց ես կանչեցի.

— Դուք շե՞ք կարող մի երկու կաթիլ ոտմ ավելացնել, —  
եո նրան խնդրեցի շատ սիրալիր, քաղաքավարութեամբ: —  
Ինչպե՞ս կարող եմ աշպիտի տեղում նստել սթափ: Դուք  
չե՞ք կարող մի երկու վաթիլ ոտմ ավելացնել:

— Ներեցեք, սըր, ոչ մի կերպ, — և գնաց: Բայց նա մե-  
ղավոր չէ: Նա կարող է զրկվել իր տեղից, եթե ոգելից խմիչք  
տա անշափահասին: Իսկ ես, զժրախտաբար, անշափա-  
հաս եմ:

Ես էլի սկսեցի նայել հարևան սեղանի այդ վհուկներին:  
Ավելի շատ՝ շիկահերին: Այն երկուսը ստոկալի այլաևարտ

էին, ինչպես մահացու մեղք: Բայց ես հիմարի պես աչքս  
չէի տնկել: Ընդհակառակը, նրանց նայում էի անտարբեր  
հայացքով: Եվ ձեր կարծիքով, ի՞նչ արեցին նրանք: Ակտեցին  
ապուշներին պես հռհռալ: Հավանաբար մտածում էին, որ ես  
չափից դուրս ջահել եմ աչք տնկելու համար: Ես սոսկալի  
վրդովվեցի, կարծես ուզում եմ ամուսնանալ նրանց հետ:  
Հարկավոր էր արհամարհել, բայց շատ էի ուզում պարել:  
Երբեմն ուղղակի շատ եմ ուզում պարել ու հիմա էլ էի  
ուզում: Ես թեքվեցի նրանց կողմն ու ասում եմ.

— Աղջիկներ, շե՞ք ուզում պարել:— Քաղաքավարու-  
թյամբ հարցրի, շատ բարձրաշխարհիկ տոնով, իսկ նրանք  
հիմարի պես իրար անցան ու կրկին սկսեցին հռհռալ: Ազ-  
նիվ խոսք, իսկական տխմարներ:— Գնանք պարենք,—  
ասում եմ:— Եկեք հերթով: Շե՞ք, Գնա՞նք:— Զափից դուրս  
շատ էի ուզում պարել:

Վերջապես շիկահերը ոտքի ելավ, հավանաբար, հաս-  
կացավ, որ գլխավորապես իրեն եմ դիմում: Մենք դուրս  
եկանք պարահրապարակ, իսկ այն երկու խրտվիլակները  
դեռ հռհռում էին հիստերիկայի մեջ: Այդպիսիների հետ դար-  
դից կարող ես գուլիս դնել:

Բայց խնդրելու արժեք: Այդ ինչպե՞ս էր պարում շիկա-  
հերը: Կյանքումս ավելի լավ պարող չեմ տեսնել: Գիտե՞ք,  
երբեմն արտաքուստ հիմարի մեկն է, բայց պարում է ինչ-  
պես աստված: Բայց պատահում է նաև, որ խելացի աղջիկը  
կամ անվերջ ինքն է ձեզ ուղղութիւն տալիս, կամ էլ այն-  
պես վատ է պարում, որ գերադասում ես սեղանի մօտ նըս-  
տած մնալ ու խմել:

— Դուք հրաշալի եք պարում,— ասում եմ շիկահերին:—  
Ձեզ անհրաժեշտ է դառնալ պրոֆեսիոնալ պարուհի: Ազնիվ  
խոսք: Մի անգամ ես պարել եմ պրոֆեսիոնալի հետ, բայց  
դուք հարյուր անգամ նրանից լավ եք պարում: Կե՞նք եք  
Մարկոյի և Միրանդուի մասին:

— Ի՞նչ,— նա նույնիսկ չէր ըսում ինձ: Ամբողջ ժամա-  
նակ շուրջն էր նայում:

— Ասում եմ դուք լսած կա՞ք Մարկոյի և Միրանդուի  
մասին:

— Զգիտեմ: Չէ, չեմ լսել:

— Դրանք պարողներ են: Աղջիկը պարուհի է: Այնքան էլ լավը չէ: Այսինքն՝ ինչ որ հարկավոր է, նա անում է, բայց ոչ շատ հաջող: Գիտե՞ք, ինչպես ես զգում, երբ թո դաման լավ է պարում:

— Ի՞նչ եք ասում,— նորից հարցրեց նա: Բոլորովին չէր լսում, ուշադրությամբ չէր դարձնում ինձ վրա:

— Ասում եմ, գիտե՞ք ինչպես են զգում, եթե դաման շատ լավ է պարում:

— Ըհ՛հ՛...

— Տեսնում եք, ձեռքս ձեր մեջքին է, չէ՞: Դե ուրեմն, եթե մոռանում ես ինչ է ձեռքիդ տակ և որտեղ էի դամայիդ սաքները, ձեռքերը և լճոցահանրապես ամեն ինչ, նշանակում է նա հրաշալի է պարում:

Նա իսկի չէր էլ լսում, թե ինչ եմ ասում: Որոշեցի էլ շխտել: Միայն պարում էինք, ուրիշ ոչինչ: Օ՛հ, ինչպե՞ս էր պարում այդ ապուշը: Բաղի Սինդերն ու իր անպետք նվագախումբը նվագում էին «Աշխարհում միայն մի բան կա...» — և նույնիսկ նրանք չէին կարողանում փռացնել այդ երգը: Հրաշալի երգ է: Ծս պարում էի հենց այնպես, առանց ֆոկլուսների, — ատում եմ, երբ պարի ժամանակ հազար ու մի ֆոկլուսներ են ցուցադրում, — բայց լավ պատեցրի այդ շիկահերին, ու նա հրաշալի ենթարկվում էր: Ծս էլ հիմարի պես կարծում էի, թե նրա համար էլ է հաճելի պարելը, մեկ էլ նա սկսեց ինչ-որ հիմար-հիմար դուրս տալ:

— Գիտեք, երեկ երեկոյան, մենք ընկերուհիներով տեսանք Պիտեր Լորենին, — ասում է, — կի՛նոդերասանին: Կյանքում: Թերթ էր գնում: Այնպես լա՛վն էր:

— Ձեր բախտը բերել է, — ասում եմ: — Լա՛վ է բերել, հասկանո՞ւմ եք: — Իսկական ապուշ է: Բայց ինչպե՞ս է պարում: Ծս շղիմացա ու համբուրեցի նրա գլուխը, այդ հիմարի, ուղղակի մազաբաժանը: Իսկ նա նեղացավ:

— Դա՞ ինչ բան է:

— Ոչինչ: Հենց այնպես: Դուք շատ լավ եք պարում, — ասացի: — Ծս մի քույր ունեմ, շորորոդ դասարանում է ստանան: Դուք նրանից վատ չեք պարում, իսկ նա այնպե՞ս է պարում, շտեսնված, գրողը տանի:

— Կարգին խոսեք, խնդրեմ:

Պէտիս չեղի՞ է դարձել, թագուհի՞ է, գրողը տանի:

— Դուք որտեղի՞ց եք եկել, — հարցնում եմ: Չի պատասխանում: Չորս կողմն է աչք ածում: Երևում է, սպասում է, թե կհասնուվի ինքը՝ Պիտեր Լորեն:

— Որտեղի՞ց եք եկել, — կրկնում եմ:

— Ի՞նչ:

— Դուք բոլորդ որտեղի՞ց եք եկել: Մի՞ պատասխանեք, եթե չեք կամենում: Նեղություն մի՞ կրեք, խնդրեմ:

— Սիեթլից, Վաշինգտոնի նահանգից, — ասում է: Ներողամիտ գտնվեց, ծառայություն մատուցեց ինձ:

— Դուք հրաշալի գրուցակից եք, — ասում եմ: — Դու ձեզ հայտնի՞ է:

— Դա ի՞նչ է նշանակում:

Ես այլևս չկրկնեցի: Միևնույն է, տեղ շէր հասնում:

— Ուզո՞ւմ եք ջիտերբազ պարել, եթե արագ երաժշտություն լինի: Իսկական ազնիվ ջիտերբազ, առանց հիմարությունների, ոչ թե ոստոստել, այլ իսկապես պարել: Եթե արագ երաժշտություն նվագեն, բոլորը կնստեն, շհաշված ծերուկներին ու հաստիկներին, տեղը կբավականացնի մեզ: Լա՞վ:

— Ինձ համար միևնույն է, — ասում է: — Լսեք, իսկ դուք քանի՞ տարեկան եք:

Ես այնպե՛ս վրդովվեցի:

— Օ՛, գրողը տանի, ինչո՞ւ եք ամեն ինչ փշացնում, — ասում եմ: — Ես արդեն տասներկու կամ: Պարզապես սատանայի պես բոյ եմ քաշել:

— Լսեք, ասացի կարգին խոսեք: Թե որ շարունակեք պատանայի անուն տալ, կգնամ ընկերուհիներին մոտ, հասկացա՞ք:

Ես սկսեցի ներողություն խնդրել գծի պես, որովհետև նվագախումբը արագ պարեղանակ նվագեց:

Նա ինձ հետ եկավ ջիտերբազ պարելու՝ շատ արժանավայել ձևով, թեթև: Ես շա՛տ լավ էր պարում, ճիշտ եմ ասում: Հազիվ մատդ կպչում է, անմիջապես ենթարկվում է: Իսկ երբ պտույտներ էր գործում, այնպես հաճելի էր պտրտվում նրա քամակը, ուղղակի հիանալի էր: Շա՛տ էր լավ, աստված վկա: Մինչ պարում էինք, ես մի քիչ սիրահար-



Տվեցի նրան: Կրակ են այդ աղջիկները: Երբեմն վրան նայել էլ շես ուզում, տեսնում ես, որ հիմարների հիմարն է, բայց բավական է մի որևէ բան լավ անի, արդեն սիրահարվում ես: Օ՛հ այդ աղջիկները, գրողը տանի: Խելքահան կանեն մարդու:

Ինձ շհրավիրեցին իրենց սեղանի մոտ. անդաստիարակութունից, իհարկե, իսկ ես, այնուամենայնիվ, գնացի: Շիկահերին, որի հետ պարել էի, անվանում էին ~~Բեքեխ~~ Կրաքս կամ Կրեքս: Իսկ այն տղեղներին՝ Մարտի և Լավերն: Ասացի, որ անունս Ջիմ Ստիլ է, դիտմամբ ասացի: Փորձեցի խելացի զրույց սկսել նրանց հետ, բայց դա անհնար էր: Նրանց զոռով էլ շես կարող խոսեցնել: Մեկը մյուսից հիմար էին: Ու ամբողջ ժամանակ աչք են ածում շուրջները, ասես սպասում են, որ հիմար դահլիճը լցվելու է կինոաստղերով: Նրանք կարծում են, հավանաբար, որ կինոաստղերը, երբ գալիս են Նյու-Յորք, ամբողջ ժամանակ ցցվում են «Յասամանագույն դահլիճում» և ոչ թե «էլ Մարոկոյում» կամ «Սթորք—ակումբում»: Մի կերպ դուրս կորզեցի, թե ինչ գործ են անում իրենց Սիեթլում: Պարզվեց, որ երեքն էլ աշխատում են միևնույն ապահովագրական ընկերությունում: Հարցրի՝ սիրո՞ւմ են իրենց աշխատանքը: Բայց մի՞թե հնարավոր էր այդ հիմարներից մի կարգին բան իմանալ: Կարծում էի, թե այն երկու այլանդակները՝ Մարտին և Լավերնը, քույրեր են, բայց նրանք սոսկալի նեղացան, երբ հարցրի այդ մասին: Հասկանալի է, նրանցից ոչ մեկը չէր ուզում մյուսին նման լինել, դա բնական է, բայց, այնուամենայնիվ, ծիծաղս եկավ:

Ես երեքի հետ էլ պարեցի հերթով: Այլանդակներից մեկը՝ Լավերնը, այնքան էլ վատ չէր սլարում, բայց երկրորդը՝ Մարտին, սոսկալի էր: Նրա հետ պարել, միևնույն է, թե Ազատության արձանը քարշ տալ դահլիճով մեկ: Հարկավոր էր ինչ-որ բան նախաձեռնել, որպեսզի նրան քարշ տալն այդքան ձանձրալի չլիներ: Ու ես ասացի, թե Հերի Կուպերը՝ կինոդերասանը, ա՛յ, գնում է:

— Ո՞ւր է, ո՞ւր է,— նա սոսկալի հուզվեց:— Ո՞ւր է նա:

— Է՛հ, ուշացաք: Նա հենց նոր դուրս եկավ: Ինչո՞ւ հենց որ ասացի, անմիջապես շնայեցիք: —

Նա նույնիսկ կանգ առավ ու գլուխները վրայով սկսեց նայել, թե կինոդերասանը չի՞ երևում արդյոք:

— Ախր ո՞ւր է, է՛,— ասում է: Քիչ էր մնում լաց լինելու: Այն թե ինչ արեցի: Նա շատ ափսոսացի, որ խաբել եմ: Մարդիկ կան, որոնց չի կարելի խաբել, թեև հենց միայն դրան են արժանի:

Ամենածածագելին այն ժամանակ եղավ, երբ վերադարձանք սեղանի մոտ: Մարտին ասաց, թե Հերի Կուպերն այստեղ էր: Այն երկուսը՝ Լավերնը և Բերնիսը, քիչ էր մնում ինքնասպան լինեին: Տխրեցին, հարցնում են Մարտինին, թե տեսա՞վ նրան: Իսկ Մարտին թե՛ այո՛, միայն անցողակի: Այն քեզ հիմար:

Բարը փակվում էր, և ես նրանց համար երկուսական բաժին ոգելից խմիչք պատվիրեցի, իսկ ինձ համար՝ երկու կոկա-կոլա: Նրանց ամբողջ սեղանը ծածկված էր բաժակներով: Այլանդակներից մեկը՝ Լավերնը, անընդհատ ծաղրում էր ինձ, որ ես միայն կոկա-կոլա եմ խմում: Փայլո՞ւն համար: Նա ու Մարտին զովացուցիչ էին խմում դեկտեմբերին, սատանան տանի ինձ: Նրանք ոչինչ չէին հարկադրում: Իսկ շիկահեր Բերնիսը փչում էր սողայով վիսկին: Ձիու պես խմում էր: Ու երեքն էլ անվերջ աչք էին ածում ջուրը, կինոաստղեր էին որոնում: Նրանք նույնիսկ միմյանց հետ չէին զրուցում: Այդ Մարտին մյուսներից ավելի էր խոսում: Ու ամբողջ ժամանակ հիմար անհեթեթյուններ էր դուրս տալիս, օրինակ՝ գուգարանին ասում էր «մի տեղ», իսկ նվազախմբի պառավ, ճազատ կլարնետահարին «հոգյակ» էր անվանում, հատկապես երբ նա վեր կացավ ու ինչ-որ անհասկանալի բան փվծվաց: Իսկ կլարնետը «շվի» էր անվանում: Սոսկալի գոհհիկն էր: Իսկ երկրորդ այլանդակը՝ Լավերնը, ձևացնում էր, թե շտեխնված սրամիտ է: Անվերջ խնդրում էր զանգահարեմ հայրիկիս ու հարցնեմ՝ ազա՞տ է արա երեկո: Անվերջ հարցնում էր, թե հայրիկս տեսակցության հո չի՞ փնացել: Չորս անգամ խնդրեց՝ զարմանալի՞ սրամտություն: Միայն Բերնիսը՝ շիկահերն էր լուռ մնում: Մի բան ես հարցնում, անպայման պիտի հարցնե՞՞ր «դա ի՞նչ է»: Ուղղակի նյարդերիդ վրա ազդում է:

Եվ հանկարծ երեքն էլ դատարկեցին բաժակներն ու վեր

կացան, թե՛ քննելու ժամանակն է: Ասում էին, առավոտյան վաղ պետք է արթնանան, գնալու են Մյուզիկ-Հոլլ, ռադիո-սիթիի առաջին սեանսին: Ես խնդրեցի նրանց մի քիչ էլ նստել, բայց շուրջեցին: Ստիպված էի հրաժեշտ տալ: Ասացի, ո՛ր իրենց կփնտրեմ Սիեթլում, եթե երբևէ այնտեղ գնամ: Բայց հազիվ թե Այսինքն՝ հազիվ թե նրանց փնտրեմ:

Ընդհանուր հաշիվը, ներառյալ նաև սիգարետները, գաղձեց երեսուն դոլլար: Իմ կարծիքով, նրանք պետք է տեսին, որ իրենք կվճարեն բոլորը, գոնե մինչ իրենց միանալու: Ես, իհարկե, թույլ չէի տա, որ նրանք վճարեն, բայց, համենայն դեպս, կարող էին առաջարկել: Ինչևէ, գա նշանակութիւն չունի: Չափից դուրս հիմար էին, հապա այդ ոլորված շլյապանե՛րը: Տրամադրութունս ընկավ, երբ իմացա, որ ուզում են շուտ վեր կենալ, որպեսզի հաջողացնեն ընկնել ռադիո-սիթի: Երբ պատկերացնում ես, որ ստակալի շլյապայով այդ էակը Նյու-Յորք է ժամանել չփտես թե որտեղից, ինչ-որ հեռավոր Սիեթլից, միայն այն ջանի համար, որ լույսը բացվելուն պես իրեն զցի ռադիո-սիթի հիմար ծրագիրը դիտելու, այնպես է ընկնում տրամադրութիւնդ, որ դիմանալ չես կարող: Ես նրանց բոլորի համար հարյուրական բաժակ խմիչք կպատվիրեի, միայն թե այդ բանը չասեին:

Նրանց գնալուց հետո ես անմիջապես դուրս եկա «Յասամանագույն դահլիճից»: Միևնույն է, դահլիճը փակվում էր, և նվազախոսմքն էլ վաղուց դադարել էր նվազել: Նախ՝ նման տեղերում տխուր է նստելը, երբ պարբնկեր շունեա, և երկբարդ, որ մաստուցողը կոկա-կոլայից բացի ոչինչ չի տալիս: Աշխարհում այնպիսի գինեատուն չկա, որտեղ հետքավոր լինի երկար նստել, եթե չի կարելի ոջելից խմիչք պատվիրել ու խմել: Կամ էլ՝ եթե հետդ ազդիկ չկա, որի համար իսկապես խելքդ թոցնում ես:

Դուրս գալով հողից՝ հանկարծ ես կրկին հիշեցի Ջեյն Գալլահերին: Հիշեցի ու այլևս մտքիցս դուրս չեկավ: Նստե-

ժի հողում մի գարշելի բազկաթողի, ու սկսեցի մտածել, թմ  
նա Ստրեղչեյթերի հետ միասին ինչպես է նստել այդ սառը  
էդ Բենկիի մեքենայում, ու թեև միանգամայն համազված  
էի, որ նրանց միշտ ոչինչ տեղի չէր ունեցել, ես հո լավ էի  
ճանաչում Ջեյնին, միևնույն է, ուղեղիցս դուրս չէր գալիս:  
Ես նրան հրաշալի էի ճանաչում, ազնիվ խոսք: Հասկանում  
էք, նա ոչ միայն շաշկի էր խաղում, ալև սիրում էր ամեն  
տիպի սպորտ, ու երբ ժանոթացանք, ամբողջ ամառը ամեն  
առավոտ թենիս էինք խաղում, իսկ ճաշից հետո՝ գոլֆ: Ես  
նրա հետ շատ մոտիկից եմ շփվել, ոչ ֆիզիկական իմաս-  
տով, իհարկե, երբե՛ք, պարզապես ամբողջ ժամանակ միա-  
սին էինք լինում: ՄԱՂՂԿԱ հետ ընկերությունն անելու համար  
) բոլորովին էլ պարտադիր չէ սիրահետելու:

Մենք ժանոթացանք, որովհետև նրանց դարբնա-պին-  
չերը միշտ վազում էր մեր պարտեզը ու այնտեղ կեղտո-  
տում, իսկ մայրս սոսկալի զայրանում էր դրանից: Նա  
զանգահարեց Ջեյնի մորը և սոսկալի աղմուկ բարձրացրեց:  
Մայրիկս նման բաների համար կարողանում է աղմուկ  
բարձրացնել: Հետո պատահեց այնպես, որ ես մի քանի օր  
հետո Ջեյնին տեսա մեր ակումբի ավազանի մոտ, պատկած  
էր փորի վրա: Ես բարևեցի նրան: Գիտեի, որ մեր կողքին  
է ապրում, բայց երբեք չէի խոսել նրա հետ: Բայց սկզբում,  
երբ բարևեցի, նա շատ սառը վերաբերվեց: Ես կաշվիցս  
դուրս էի գալիս ապացուցելու, որ անձամբ ինձ համար ոչ  
մի նշանակություն չունի, թե նրա շունը որտեղ է կեղտո-  
տում: Թեկուզ հյուրասենյակում վազվզի, ինձ համար միև-  
նույն է: Մի խոսքով, դրանից հետո ես ու Ջեյնը շատ մտեր-  
մացանք: Հենց այդ նույն օրը մենք գոլֆ խաղացինք: Այս-  
օրվա պես հիշում եմ, նա ութ փնդակ կորցրեց: Այո, ո՛ւրիշ  
ՄԱՂՂԱԿԻ հոգիս դուրս եկավ, մինչև որ սովորեցրի փնդակին  
խփելիս գոնե բացել աչքերը: Բայց շատ լավ մարզեցի նրան:  
Ես հրաշալի եմ խաղում գոլֆ: Եթե ասեմ, թե քանի շրջան  
փատարելով եմ ավարտում խաղը, չեք հավատա: Մի ան-  
գամ քիչ էր մնում ինձ նկարահանեն կարճամետրաժի հա-  
մար, բայց վերջին պահին փոշմանեցի: Մտածեցի՝ եթե կի-  
նոն այնպես ես ատում, ինչպես ես, ապա հարկ չկա ցու-

ցադրվել և թուլ տալ, որ քեզ եկարահանեն կարճամտութի համար:

Միծաղելի աղբյուր էր այդ Ջեյնը: Չէի ասի, թե նա գեղեցկուհի է: Բայց ինձ դուր էր գալիս: Բերանը շատ մեծ էր: Հատկապես, եթե որևէ բանից հուզվում էր ու սկսում էր խոսել, բերանն ուղլակի տարածվում էր: Ես գծվում էի: Ու երբեք կարգին չէր փակվում նրա բերանը, միշտ կիսաբաց էր, մանավանդ՝ գոլֆ խաղալիս կամ գիրք կարդալիս: Նա շատ էր կարողուն և միշտ լավ գրքեր: Հատկապես՝ բանաստեղծություններ: Բացի իմ հարազատներից, ես միայն նրան եմ ցույց տվել Ալլիի ձեռնոցը՝ ամբողջապես բանաստեղծություններով ծածկված: Նա Ալլիին չէր ճանաչում, որովհետև առաջին անգամ էր ամռանը Անգլիայում անցկացնում, մինչ այդ գնում էր Կոդ հովանդանը, բայց ես շատ բան էի պատմել նրան եղբորս մասին: Դա հետաքրքրում էր Ջեյնին. նա աիրում էր լսել Ալլիի մասին:

Մայրիկիս շատ էլ դուր չէր գալիս Ջեյնը: Բանն այն է, որ նրան թվում էր, թե Ջեյնը և նրա մայրը վերևից են նայում իրեն, որովհետև միշտ շին բարևում: Մայրիկը հաճախ էր նրանց տեսնում ավանում, որովհետև Ջեյնը մոր հետ միասին շուկա էր գնում իրենց մեքենայով: Մայրիկս Ջեյնին նույնիսկ լավիկը չէր համարում: Իսկ ես համարում էի: Ինձ դուր էր գալիս նրա տեսքը ու վերջ:

Հիշում եմ հատկապես մի օր: Դա միակ օրն էր, որ ես ու Ջեյնը համբուրվում էինք, այն էլ ոչ իսկականի պես: Շաբաթ օր էր, և անձրևն ասես դուլլերով էր թափվում, իսկ ես նստել էի նրանց պատշգամբում. նրանք մեծ ապակեպատ պատշգամբ ունեին: Մենք շաշկի էինք խաղում: Ես նրան երբեմն ձեռ էի առնում, որ դամաները չի շարժում վերջին շարքից: Բայց շատ չէ: Մի տեսակ չէի ուզում նրան ջղայնացնել: Իսկ ես առիթը եկած դեպքում շատ եմ սիրում գայրացնել աղջիկներին, լացացնելու աստիճան: Բայց ահա թե ինչն է ծիծաղելի. երբ աղջիկը լրջորեն ինձ դուր է գալիս, բոլորովին շեմ ուզում բարկացնել: Երբեմն մտածում եմ, թե նա ուզում է, որ բարկացնեմ իրեն, նույնիսկ հաստատ գիտեմ, որ ուզում է, բայց եթե վաղուց ես ծանոթ երա հետ ու երբեք չեմ բարկացրել, ապա մի տեսակ դժ-

Վար է նրան բարկացնելը: Այսպես ուրեմն, պատմում էի այն օրվա մասին, երբ ես ու Ջեյնը համբուրվեցինք: Սուկալի անձրև էր գալիս, նստել էինք նրանց պատշգամբում, մեկ էլ այդ հարթեցողը՝ նրա մոր ամուսինը, դուրս եկավ սլատշգամբ ու Ջեյնին հարցրեց, թե տանը սիգարետ կա՞: Ես նրան լավ չէի ճանաչում, բայց դա նրանցից էր, ովքեր խոսում են հետո միայն այն դեպքում, երբ պետք էս իրենց: Գարշիլի տիպ է: Ջեյնը նույնիսկ չպատասխանեց, երբ նա հարցրեց՝ տանը սիգարետ կա՞: Նա էլի հարցրեց, Ջեյնը նորից չպատասխանեց: Նա նույնիսկ հայացքը չկտրեց տախտակից: Հետո այդ տիպը ներս մտավ: Երբ նա ներս մտավ, ես Ջեյնին հարցրի՝ ինչ է պատահել: Ջեյնն ինձ էլ չպատասխանեց: Չեացրեց, թե հաշորդ քայլն է մտածում: Մեկ էլ տախտակի վրա արցունք կաթեց: Ուղիղ կարմիր դաշտի վրա, գրողը տանի, հիմա էլ ասես աչքիս առաջ լինի: Եվ Ջեյնը միայն մատով սրբեց արցունքի կաթիլն ու այլևս ոչ մի խոսք: Չգիտեմ ինչու, բայց ես խիստ հուզվեցի: Վերկացա, մոտեցա նրան ու ստիպեցի, որ ինձ տեղ տա կողքին, գրեթե նրա ծնկներին նստեցի: Այդ ժամանակ ես իսկականից լաց եղավ, ու մինչև կհասկանայի ինչ եմ անում, ես պաշպում էի նրան, որտեղը պատահեր՝ ճակատը, քիթը, աչքերը, հոնքերը, նույնիսկ ականջները: Միայն շրթունքները չհամբուրեցի. նա ինչ-որ անընդհատ փախցնում էր շրթունքները: Համենայն դեպս, դրանից հետո մենք այլևս ոչ մի անդամ չենք համբուրվել: Հետո նա վեր կացավ, մտավ սենյակ ու հագավ իր կարմիր ու ճերմակ նախշեռով սվիտերը. որից ես գժվում էի ուղղակի, ու մենք գնացինք մի ախմախ կինո:

Ճանապարհին ես հարցրի, թե հո չի՞ անհանգստացնում նրան այդ միտքը Կյուդեխին՝ այդ հարթեցողը: Թեև Ջեյնը դեռ փոքրիկ էր, բայց հրաշալի կազմվածք ուներ, և առհասարակ ես այդ Կյուդեխիի, այդ սրիկայի հախիցը կդայի: Ջեյնն ասաց՝ ոչ: Այդպես էլ շիմացա, թե ինչի համար էր լաց լինում:

Միայն դուք մի՛ կարծեք, թե Ջեյնը սառույցի կտոր էր, դրա համար չէինք համբուրվում: Բոլորովին էլ ոչ: Օրինակ՝ մենք միշտ իրար ձեռք բռնած էինք ման գալիս: Հասկանում

եմ, դա Տաշիվ չի, բայց շատ հաճելի էր Արա ձեռքը բռնելը: Երբ ուրիշ աղջիկների ձեռք ես բռնում, ասես նրանց ձեռքը մեռած լինի, կամ անվերջ շարժում են ձեռքը, ասես վախեցնում են, թե այլապես կձանձրանաս: Իսկ Ջեյնը բուլորավիճ ուրիշ էր: Միասին մի որևէ կինո էինք գնում թե չէ, ամսիչապես իրար ձեռք էինք բռնում, ու մինչև ֆիլմի վերջը էլ բաց չէինք թողնում: Եվ այլևս ուրիշ բանի մասին չէինք մտածում, չէինք շարժվում: Ջեյնի հետ երբեք չեմ անհամարստացել, թե ափս կբրտնի: Պարզապես նրա հետ հաճելի էր: Զարմանալիորեն հաճեցի:

Մի բան էլ հիշեցի: Մի անգամ կինոյում Ջեյնն այնպիսի մի բան արեց, որ ես ապշեցի: Կինոխրոնիկա էին ցուցադրում և էլի ինչ-որ բան, ու մեկ էլ զգացի, որ մեկը շոյում է գլուխս: Պարզվեց, որ Ջեյնն է: Զարմանալիորեն տարօրինակ էր, աջնուամենայնիվ: Ախր նա դեռ շատ փոքր էր, իսկ կանայք սովորաբար շոյում են որևէ մեկի գլուխը, երբ արդեն երեսուն տարեկան են, շոյում են իրենց ամուսնու կամ որդու գլուխը: Ես երբեմն շոյում եմ քույրիկիս գլուխը, հազվադեպ, իհարկե: Իսկ նա դեռևս այնքան փոքրիկ է, բայց շոյում է գլուխդ: Ու աշխարհ հաճելի էր անում, որ ես ուղղակի խենթացա:

Մի խոսքով, ես արդ ամենն էի վերհիշում, նստել էի հալլում, այդ գարշելի բազկաթոռին ու մտածում էի: Այո, Ջեյնը: Հենց հիշում եմ, որ նա այդ ստոր Ստրեյլեյթերի հետ նստել է այդ գրողի տարած մեքենայում, խելքս թրոցնում եմ: Գիտեմ, որ Ջեյնը նրան ոչ մի այնպիսի բան թույլ տված չի լինի, բայց միևնույն է, գծվում եմ: Ճիշտն ասած, նույնիսկ չեմ ուզում հիշել դա:

Հոլլում գրեթե ոչ ոք չկար: Նույնիսկ բոլոր պոռնկատիւ, շիկահերներն էին գնացել: Սոսկալի շատ էի ուղում գլուխս առնել ու կորչել այդտեղից: Անտանելի տխուր էի: Ու բոլորովին չէի հոգնել: Գնացի իմ համարը, հազա վերարկուս: Պատուհանից նայեցի, տեսնեմ ինչ են անում այն գծերը, բայց ոչ մի տեղ լույս չէր երևում: Նորից իջա վերելակով, տաքսի վերցրի և պատվիրեցի ինձ տանել Էռնիի մոտ: Դա գիշերային գինետուն է Գրինիչ-վիլջոնում, Եղբայրու՝ Գ. Բ. և, հաճախ էր գնում այնտեղ, մինչև որ ծախվեց Հոլիվուդին:

Նա ինձ էլ մի քանի անգամ տարել է իր հետ: Էռնին մի վիթխարի նեզր է, դաշնամուր է նվագում: Նա սոսկալի պճնամուլ է և շի խոսի հետո, եթե նշանավոր կամ մի երևելի մարդ շեռ, բայց հրաշալի է նվագում: Նա այնքան լավ է նվագում, որ երբեմն նույնիսկ անտանելի է: Չգիտեմ ինչպես բացատրեմ, բայց դա այդպես է: Ես շատ եմ սիրում լսել նրա նվագը, բայց երբեմն ուզում եմ գլխի վրա շուռ տալ նրա դաշնամուրը: Հավանաբար, դա նրանից է, որ նրա նվագից զգացվում է, որ նա երևակայում է իրեն ու շի խոսի քեզ հետ, եթե մի երևելի մարդ շեռ:

## 12

Տաքսին հին էր ու այնպես գարշելի հոտ էր փչում, ասես ինչ-որ մեկն այդտեղ թափել էր իր ընթրիքը: Միշտ ինձ այդպիսի գարշահոտ տաքսիներ են պատահում, երբ գիշերն եմ ճամփորդում: Շուրջն էլ այնպես լուռ էր, այնպես ամալի, որ ավելի շատ էիր տխրում: Փողոցում ոչ մի մարդ չկար, թեև օրը շարաթ էր: Երբեմն միայն գրկախառնված մի որևէ գույգ էր անցնում կամ խուլիզանական մի խումբ՝ աղջիկների հետ, հռհռում բորենիների նման, թեև, հավանաբար, ծիծաղելի ոչինչ չկար: Ընդհանրապես նյու-Յորքը սարսափելի է, երբ գիշերը դատարկութուն է տիրում և որևէ մեկն էլ հռհռում է: Հարյուր մղոնի վրա էլ լսվում է: Ու այնպես տխուր և միայնակ ես զգում քեզ: Շատ էի ուզում վերադառնալ տուն, զգվառվել քույրիկիս հետ: Բայց հետո խոսքի բռնվեցի վարորդի հետ: Նրա անունը Գորվից էր: Նա նախորդ վարորդից անհամեմատ լավն էր, մտածեցի, որ գոնե սա կիմանա բաղերի մասին:

— Լսեցեք, Գորվից, — ասում եմ, — դուք երբևէ անցե՞լ եք Կենտրոնական զբոսայգու լճակի մոտով: Հարավային մուտքի կողմով:

— Ի՞նչ, ի՞նչ:

— Այնտեղ մի լճակ կա, փոքրիկ մի լիճ, սրտեղ բաղեր են լողում: Ասենք, երեի, գիտե՞ք:

— Այո, գիտեմ, Ի՞նչ է որ:



— Տեսիլ եք, շէ՞, որ այնտեղ բազեր են լողում, զարնանն ու ամռանը: Պատահմամբ չգիտե՞ք ուր են կորչում ձմռանը:

— Ո՞վ է կորչում:

— Դե, բազերն, էլի: Ասում եմ, գուցե պատահմամբ գիտե՞ք: Գուցե որևէ մեկը գալիս է բեռնատարով ու նրանց տանում կամ իրե՞նք են չվում մի որևէ տեղ:

Այստեղ Գորվիցը շուռ եկավ ու նայեց ինձ: Նա, երևում է, շատ ջղային էր, թեև ընդհանրապես ոչինչ:

— Ես ի՞նչ իմանամ, գրողը տանի,— ասում է:— Ինչի՞նչ է պետք ամեն հիմարություն հետ գլուխ դնեմ:

— Դե մի՛ նեղացեք,— ասում էմ: Երևում է, շատ նեղացավ:

— Ո՞վ է նեղանում: Ոչ ոք էլ չի նեղանում:

Որոշեցի այլևս շտտսել նրա հետ, քանի որ այդպես ջղագին է: Բայց նա ինքը սկսեց: Դարձավ իմ կողմն ու ասաց.

— Համենայն դեպս, ձկները ոչ մի տեղ չեն կորչում: Ձկներն այնտեղ են մնում: Նստում են լճակում ու մնում:

— Դե, դրանց մեջ մեծ տարբերություն կա,— ասում եմ,— դրանք ձուկ են, իսկ ես հարցնում եմ բազերի մասին:

— Ի՞նչ տարբերություն կա, ի՞նչ: Ոչ մի տարբերություն էլ չկա,— ասում է Գորվիցը: Ու ձայնից երևում է, որ բարկանում է:— Տեր աստված, ախր ձկների վիճակը ձմռանն ավելի վատ է, քան բազերինը: Գլխով մտածեք հապա, տեք աստված:

Ես լռեցի, լռեցի, հետո ասացի.

— Դե լավ, հապա ձկներն ի՞նչ են անում, երբ ամբողջ լճակը սառչում է, ու վրան նույնիսկ շմուշկներով սահում են: Այստեղ նա շուռ եկավ ու գոռաց ինձ վրա.

— Ինչպե՞ս թե ձկներն ինչ են անում, ի՞նչ պիտի անեն, իրենց համար նստում են լճակում և վերջ:

— Զեն կարող չզգալ, շէ՞ որ շուրջն ամբողջ սառույց է: Նրանք հո այդ բանն զգո՞ւմ են:

— Իսկ ո՞վ ասաց, թե չեն զգում: Ոչ ոք չի ասում, թե չեն զգում,— գոռաց Գորվիցը: Նա այնպես էր նյարդայնացել, որ ես նույնիսկ վախեցա, թե հանկարծ սյանը շիփի մեքենան:— Նրանք ապրում են սառույցի մեջ, հասկանո՞ւմ

եք: Նրանք ի բնն այդպիսին են, գրողը տանի: Ամբողջ ձմեռանը սառչում են սառույցի մեջ, հասկանում են:

— Այո: Իսկ ի՞նչ են ուտում: Եթե սառչում են, ուրեմն չեն կարող լողալ ու կեր փնտրել, ճի՞շտ է:

— Տեր աստված, ինչպե՞ս չեք հասկանում: Նրանց օրգանիզմն ինքն է սնվում, հասկանալի՞ է: Այնտեղ սառույցի մեջ ջրիմուռներ կան, ամեն տեսակի աղբ: Նրանց ծաղկոտիները բաց են, այդ ծաղկոտիներով էլ ներծծում են սնունդը: Նրանց բնույթն այդպիսին է, տեր իմ աստված: Հասկացա՞ք, թե չէ:

— Ըհը՛,— ես չուզեցի նրա հետ վիճել: Վախենում էի մեքենան շարդի: Այնքան նյարդային է, որ հետաքրքիր էլ չէ նրա հետ վիճել:— Գուցե մի որևէ տեղ մտնենք, միասին խմենք,— հարցնում եմ:

Բայց նա նույնիսկ չպատասխանեց: Հավանաբար, ձկները մասին էր մտածում: Ես նորից հարցրի՝ միասին մի բան լիմենք: Ընդհանրապես վատ մարդ չէր: Հետաքրքիր ժերուկ էր:

— Ես խմելու ժամանակ չունեմ, եղբայրս,— ասում է:— Ի դեպ, քանի՞ տարեկան եք: Ինչո՞ւ մինչև հիմա քնած չեք:

— Չեմ ուզում:

Երբ դուրս եկա էոնիի մոտ ու վճարեցի նրան, ժերուկ Գորվիցը դարձյալ ձկների մասին խոսեց.

— Լսեցեք,— ասում է,— եթե դուք ձուկ լինեիք, մի՞թե մայր բնությունը ձեր մասին չպիտի հոգար: Ի՞նչ: Չլինի՞ կարծում եք, թե բոլոր ձկները սատկում են, հենց որ ձմեռը վրա է հասնում:

— Չէ, չեն սատկում, բայց...

— Ըհը: Ուրեմն չեն սատկում,— գուցե Գորվիցն ու խելագարի պես առաջ օլացավ: Կյանքումս այդքան նյարդային տիպ չէի տեսել: Ինչ ուզում ես ասա, միևնույն է, նյարդայնանում է:

Նույնիսկ այս ուշ ժամին էոնիի մոտ լեպի-լեցուն էր: Ավելի շատ գպրոցներից ու քուլեշներից եկած պիժոններ էին: Բոլոր գպրոցներն էլ Մենդյան տոներից առաջ շուտ են վերջացնում դասերը, միայն իմ բախտը չի բերում: Այնքան մարդ կար, որ հանդերձարանում համարները չէին բավարարում:

Բայց լուսթյուն էր տիրում, էոնին ինքն էր դաշնամուր նվազում: Ինչպես եկեղեցում, աստված վկա, բավական է նա նստի դաշնամուրի առաջ, լիակատար երանություն է տիրում, բոլորն աղոթում են նրան: Իսկ իմ կարծիքով ոչ մեկին էլ շարժի աղոթել: Կողքիս ինչ-որ գեւգեւ սպասում էին սեղան ազատվեր ու անընդհատ շարժվում էին, կանգնում ոտքերի մատնեքի վրա, միայն թե տեսնեին այդ էոնիին: Նրա դաշնամուրի վերևում մի վիթխարի հայելի էր կախված, և ինքն էլ ողողված էր լուսարձակի լույսով, որպեսզի նվագելու ժամանակ բոլորն էլ հնարավորություն ունենային տեսնելու նրա դեմքը: Ձեռքերը չէին երևում, միայն դեմքն էր երևում: Լավ էին սարքել: Չգիտեմ ինչ էր նվագում, երբ ես ներս մտա, բայց նա փշացնում էր ամբողջ երաժշտությունը: Յուցադրական հիմար դայլայլներ էր արձակում բարձր նոտաներով, ընդհանրապես այնպե՛ս էր կոտրատվում, որ փորս ցավեց: Բայց մի լսեի՞ք, թե հասարակությունը ինչ արեց, երբ նա վերջացրեց: Սիրտներդ կխառնեք: Կգժվեիք: Ծիշտ ինչպես այն կինոյի ապուշները, որ հո՛հում են բորենիների պես, ամենից ոչ ծիծաղելի տեղերում: Վկա է աստված, եթե ես դաշնամուր նվագեի կամ բեմում խաղայի ու դուր գայի այդ հաստազրլուխներին, ես դա անձնական վիրավորանք կհամարեի: Ինչի՞ս են պետք դրանց ծափահարությունները: Նրանք երբեք տեղին չեն ծափահարում: Եթե ես դաշնակահար լինեի, կփակվեի խորդանոցում ու այնտեղ կնվագեի: Իսկ երբ էոնին վերջացրեց, ու բոլորն սկսեցին գծի պես ծափահարել, նա շրջվեց աթոռակի վրա և գլուխ տվեց ձեռքան ու համեստ խոնարհումով: Ձեռքնում էր, թե ոչ միայն հիանալի դաշնակահար է, այլև շտեմնված համեստ անձնավորություն: Այդ ամենը լիակատար կեղծիք էր, նա այնպիսի պճնամուլ էր, որպիսին աշխարհը դեռ չի տեսել: Բայց ես, այնուամենայնիվ, մի քիչ խղճում էի նրան: Իմ կարծիքով, նա այլևս չի կարողանում տարբերել՝ լա՞վ է նվագում, թե վատ: Բայց նա այս հարցում մեղք չունի:

Մեղավորն այդ հաստազրլուխներն են, որ ծափահարում են նրան. դրանք ում ասես չեն փշացնի, միայն թե հնարավորություն ունենան: Ու այդ ամենից դարձյալ տրամադրությունս ընկավ, այն աստիճան, որ քիչ էր մնում վերարկուս

վերցնեի ու ետ գնայի հյուրանոց, բայց շատ շուտ էր, ու բու-  
լորովին չէի ուզում մենակ մնալ:

Վերջապես այդ գարշելի սեղանը հատկացրին ինձ, պատի-  
տակ, ինչ-որ սյան ետևում, որտեղից ոչինչ չէր երևում: Սե-  
ղանը փոքրիկ էր, անկյունային, դրա ետևում հնարավոր էր  
նստել միայն այն դեպքում, եթե հարևան սեղանի շուրջ նըս-  
տածները բոլորը ելնեին ու քեզ ճանապարհ տային, բայց  
այդ սողունները մի՞թե վեր կկենան: Ես սողայով վիսկի  
պատվիրեցի. դա իմ սիրած խմիչքն է սառույցով դայկիրիից  
հետո: Էռնիի մոտ բոլորին էլ մատուցում էին, թեկուզև վեց  
տարեկանին, չլնտեղ գրեթե բոլորովին մուժ էր, բացի այդ  
էլ, ոչ մեկին չէր հետաքրքրում քանի տարեկան ես: Նույնիսկ  
ինչ-որ հաշիշամուլները վրա էլ ուշադրություն չէին դարձ-  
նում:

Շուրջս հենց միայն տականքներ էին: Ազնիվ խոսք, շեմ  
ստում: Ինձնից ձախ դանվող մեկ այլ փոքրիկ սեղանի մոտ  
նստած էր մի սոսկալի տգեղ տիպ, մի սոսկալի տգեղ աղջկա  
հետ: Հավանաբար, ինձ հասակակիցներ էին, կամ ինձնից  
մի քիչ մեծ: Միծաղելի էր նրանց նայել: Նրանք շանում էին,  
որքան կարելի է, դանդաղ խմել իրենց բաժինը: Ես լսում էի  
նրանց խոսակցությունը, միևնույն է, ուրիշ անելիք չկար:  
Տղան ինչ-որ ֆուտբոլային մրցման մասին էր պատմում, որ  
տեսել էր այդ օրը: Մանրամասնորեն, խաղի ամեն մի ակն-  
թարթի մասին, ազնիվ խոսք: Ես երբեք այդքան ձանձրալի  
խոսակցություն չեմ լսել, ու երևում էր, որ աղջկան բոլորու-  
վին չէր հետաքրքրում այդ պատմությունը, բայց նա սոս-  
կալի տգեղ էր, նույնիսկ աղայից էլ տգեղ, այնպես որ նրան  
ոչինչ չէր մնում անել, քան լսել: Տգեղ աղջիկների գործը  
վատ է: Ես այնքան եմ խղճում դրանց, որ նույնիսկ չեմ կա-  
րողանում նայել, մանավանդ, երբ նրանք նստած են այն-  
պիսի ախմախի հետ, որը պատմում է իր ապուշային ֆուտ-  
բոլի մասին: Իսկ իմ աչ կողմում ավելի վատ էր վիճակը: Աչ  
կողմս նստել էր ֆլանելեզ գորշ կոստյումով ու խիստ ոճամոլի  
կիտելով ինչլյան մի պճնասեր, ազնվականական հայրենա-  
կըցություն ունեցող բոլոր այդ ողորմելիները նման են մեկ-  
մեկու: Հայրս ուզում է ինձ տալ ինչ կամ Պրինսսթոն, բայց  
երգվում եմ, ինձ ոչ մի կերպ չեն կարող հրապուրել այդ ազ-

Նըվականական քուլեշները, ավելի լավ է մեռնեմ, ազնիվ խոսք: Եվ այդ ազնվականիկի հետ մի շտեսնված գեղեցիկ աղջիկ էր նստած: Ուղղակի գեղեցկուհի: Բայց մի լսեի՞ք նրանց խոսակցութունը: Նախ երկուսն էլ թեթևակի խմած էին: Տղան սեղանի տակ ճակթում էր աղջկան ու միաժամանակ պատմում հանրակացարանում ապրող մի տիպի մասին, որը մի ամբողջ սրվակ ասպիրին է կերել ու քիչ է մնացել մեռնի: Աղջիկն ամբողջ ժամանակ ասում էր. «Ախ, ի՞նչ սարսափելի բան... Պետք չէ, սիրելիս... Դե, խնդրում եմ... Միայն թե ոչ այստեղ»: Պատկերացրեք հապա, ճակթել աղջկան ու այդ ընթացքում պատմել ինչ-որ տիպի մասին, որը փորձել է ինքնասպան լինել: Միծաղելի է ուղղակի:

Այնքան նստեցի, հետևա մաշվեց, սոսկալի ձանձրանում էի: Անելիք չկար, միայն խմիր ու ծխիր: Ծիշտ է, ես մատուցողին պատվիրել էի էռնիին հարցնել, թե չի՞ խմի ինձ հետ արդյոք: Պատվիրեցի ասել, որ ես Դ. Բ-ի եղբայրն եմ, բայց նա, կարծում եմ, նույնիսկ պատվերս չէր կատարել: Այգ անասունները մի՞թե երբևէ ասածդ կհաղորդեն:

Հանկարծ մեկը ձայն տվեց ինձ.

— Հուդեն Բուֆիլդ:— Դա լիլիան Սիմոնյան էր: Եղբայրս՝ Դ. Բ-ն, մի ժամանակ սիրահետում էր նրան: Նա վիթխարի կուրծք ուներ:

— Ողջո՛ւյն,— ասում եմ: Ես, իհարկե, փորձեցի վեր կենալ, բայց դա շատ դժվար էր այդպիսի նեղվածքում: Նրա հետ մի ծովային սպա էր եկել, որ կանգնած էր այնպես, ասես փայտ էր կուլ տվել:

— Շատ ուրախ եմ քեզ տեսնելուս համար,— ասում է լիլիան Սիմոնյանը: Ստում է, իհարկե:— Ինչպե՞ս է ավագ եղբայրդ:— Այ հենց՝ դա էր նրան հետաքրքրում:

— Լավ է, նա Հոլիվուդում է:

— Հոլիվուդո՞ւմ է: Սքանչելի՞ է: Ի՞նչ է անում այնտեղ:

— Զգիտեմ: Գրում է,— ասում եմ: Զէի ուզում ծավալվել: Երևում է, որ նրա համար շատ մեծ բան էր եղբորս Հոլիվուդում լինելը: Բոլորն էլ այդպես են կարծում: Հատկապես նրանք, ովքեր չեն կարդացել նրա պատմվածքները: Իսկ ինձ դա կատաղեցնում է:

— Ի՞նչ հետաքրքիր է,— ասում է լիլիանն ու ի՞նձ ծանո-

Քացնում է իր ծովայինի հետ: Նրան կապիտան Բլուպ, թե նման մի բան էին անվանում: Նա այն մարդկանցից է, ովքեր կարծում են, թե իրենց կին կհամարեն, եթե բարևելիս այնպես շեղմեն, որ շարդվեն մատներդ: Թո՛ւհ, ինչպես եմ ասում:— Դու մենա՞կ ես, փոքրիկս,— հարցնում է կրիանը: Նա փակում էր ամբողջ անցումը և, թվում էր, նրան դուր էր գալիս, որ կտրում է մարդկանց ճանապարհը: Մատուցողը կանգնել սպասում էր, թե սա երբ է հա ջաշվելու, որ ինքն անցնի, իսկ կրիանը չէր նկատում նրան: Ջարմանալի հիմար վիճակ էր: Անմիջապես երևում էր, որ նա մատուցողի համար սոսկալի տհաճ է, հավանաբար ծովայինին էլ դուր չէր գալիս, թեև նրան բերել էր այստեղ: Ինձ էլ դուր չէր գալիս: Բշ մեկին դուր չէր գալիս: Նույնիսկ ակեսցի մի քիչ խղճալ նրան:

— Մի՞թե դու աղչիկ շունես, փոքրիկ,— հարցնում է:

Ես արդեն ոտքի էի ելել, և նա նեղություն չքաշեց նույնիսկ ասելու՝ նստիր: Այդպիսիները՝ կարող են ժամերով քեզ ոտքի վրա պահել:— Կավիկն է, չէ՞,— հարցրեց ծովայինին:— Հոլդեն, օր-օրի գեղնցկանում ես:

Այստեղ ծովայինն ասաց, որ կրիանը ասաց անցնի: Ասաց, որ նա՝ ճանապարհը փակել է:

— Գնանք մեզ մոտ, Հոլդեն,— ասում է նա:— Վերցրու բաժակդ:

— Ես արդեն մտադիր եմ գնալ,— ասում եմ:— Տեսակցություն ունեմ:

Երևում էր, որ քծնում է, որպեսզի հետո ես պատմեմ Գ. Բ-ին:

— Ախ դու սատանա՛, Կեցցե՛ս: Երբ տեսնես ավագ եղբորդ, ասա, որ ես ասում եմ իրեն:

Եվ գնաց: Ես ու ծովայինն ասացինք, որ շատ ուրախ ենք ծանոթության համար: Միծաղելի է: Միշտ ես ասում եմ՝ «Շատ հաճելի է ձեզ հետ ծանոթանալ», երբ բոլորովին էլ հաճելի չէ: Բայց եթե ուզում ես ապրել մարդկանց հետ, ստիպված ես ամեն բան էլ աւել:

Ինձ ոչինչ չէր մնում անել, քան գնալ, ասացի չէ՞, որ տեսակցություն ունեմ: Հնարավոր չէր անգամ լսել, թե էսին ինչպես է որևէ օրինավոր բան նվազում: Բայց ես չէի

կարող նստել Լիլիան Սիմոնսի ու նրա ծովայինի հետ, ահա-  
վոր ձանձրալի էր: Ու գնացի: Բայց շատ էի բարկացած, երբ  
հագնում էի վերարկուս: Մարդիկ միշտ ամեն ինչ փշաջ-  
նում են:

13

Ոտքով գնացի մինչև հյուրանոց: Քառասունմեկ թաղա-  
մաս՝ դատարկ բան չէ: Ծվ ոչ թե ուզում էի զրոսնել, դրա  
համար ոտքով գնացի, այլ պարզապես չէի ուզում նորից  
տաքսի նստել: Երբեմն ձանձրանում ես նաև տաքսի նստե-  
լուց, վերելակով բարձրանալուց: Մեկ էլ ուզում ես ոտքով  
գնալ, թեև հեռու է կամ բարձր: Երբ փոքր էի, հաճախ էի  
ոտքով բարձրանում մինչև մեր բնակարանը: Տասներկուե-  
րորդ հարկը:

Չէր երևում, որ նոր է ձյուն եկել, մայթերին հեռք անգամ  
չկար: Բայց սոսկալի ցուրտ էր, և ես գրպանիցս հանեցի իմ  
որսորդական գլխարկն ու դրի գլխիս: Ինձ համար որևէ նշա-  
նակություն չունեի, թե ինչպիսի տեսք ունեմ: Նույնիսկ  
ականջակալներս իջեցրի: Է՛հ, իմանայի, թե ով էր գողացել  
ձեռնոցներս Փենսիլում: Չեղբերս ուղղակի սառչում էին:  
Ասենք, որ իմանայի էլ, ոչինչ չէի անելու: Ես ի բնե վախկոտ  
եմ: Աշխատում եմ ցույց շտալ, բայց վախկոտ եմ: Օրինակ  
եթե ես Փենսիլում իմանայի, թե ով է գողացել իմ ձեռնոցնե-  
րը, կգնայի այդ ժուլիկի մոտ ու կասեի. «Հապա այստեղ  
աուր ձեռնոցներս»: Իսկ ձեռնոցներս գողացող ժուլիկը, հա-  
վանաբար, ամենաանմեղ տոնով կասեր. «Ի՞նչ ձեռնոցներ»:  
Այդ ժամանակ, հավանաբար, կբացեի նրա պահարանն ու  
որևէ անկյունում կգտնեի ձեռնոցներս: Դրանք, հավանաբար,  
թաքցված կլինեին նրա գարշահոտ կրկնակոշիկների մեջ: Ես  
կհանեի ու, ցույց տալով այդ տիպին, կասեի. «Գուցե սրանք  
քո՞ ձեռնոցներն են»: Իսկ այդ ժուլիկը, հավանաբար, անմեղ  
նորածինի կերպարանք կընդուներ. «Եյանքումս առաջին ան-  
գամ եմ տեսնում այդ ձեռնոցները: Եթե քոնն են, վերցրու,  
խնդրեմ, ինչի՞ս են պետք»:

Իսկ ես, հավանաբար, մի հինգ րոպե կկանգնեի նրա

առաջ: Ձեռնոցները ձեռքիս բռնած կմտածեի, որ հարկավոր է հասցնել նրա մոռութիւն, ու վերջ: Բայց քաջութիւնն չէր բավականացնի: Կկանգնեի, կատաղած դեմք կցուցադրեի: Գուցե մի շատ վիրավորական բան կասեի դէշին հասցնելու փոխարեն: Բայց հնարավոր է նաև, որ եթե ես նրան որևէ շատ վիրավորական բան ասեի, նա ելներ, մոտենար ինձ ու ասեր. «Լսիր, Փոլֆիլդ, դու կարծեմ ինձ ժուլիկ անվանեցիր»: Այս փոխանակ ասելու. «Այո, անվանեցի, կեղտոտ անասուն, սրիկա», հավանաբար կասեի. «Ես դիտեմ միայն, որ այս գրողի տարած ձեռնոցները քո կրկնակոշիկների միջից դուրս եկան»: Այս անմիջապէս կհասկանար, որ ես նրան չեմ ծեծելու և, հավանաբար, կասեր. «Լսիր, արի պարզ խոսենք, դու ինձ գող ես համարում, հա՞»: Այս ես, հավանաբար, կատասխանեի. «Ոչ ոք ոչ մեկին գող չի համարում, Գիտեմ միայն, որ իմ ձեռնոցները քո գարշահոտ կրկնակոշիկների միջից դուրս եկան»: Եւ այդպէս շարունակ:

Վերջապէս, հավանաբար, դուրս կգայի նրա սենյակից, առանց նրա մոռութիւն հասցնելու: Իսկ հետո, հավանաբար, կդնայի զուգարան, թաքուն մի սիգարետ կծխեի ու հայելու առաջ կատաղած կերպարանք կընդունեի: Մի խոսքով ամբողջ ճանապարհին այդ մասին էի մտածում: Տհաճ բան է վախկոտ լինելը: Գուցե այնքան էլ վախկոտ չեմ: Ինքս էլ չդիտեմ: Գուցե մասամբ եմ վախկոտ, իսկ մասամբ ուղղակի թրած ունեմ, կորել են ձեռնոցներս թե ոչ: Դա իմ ամենամեծ թերութիւնն է, նշանակութիւն չեմ տալիս, երբ որևէ բան եմ կորցնում: Մայրիկա ուղղակի շատ էր զայրանում, երբ ես փոքրիկ էի: Ուրիշները որ մի բան կորցնեն, օրերով ման կգան: Իսկ ես երբեք չեմ ափսոսացել որևէ բանի համար, երբ կորցրել եմ: Գուցե դրա համար էլ մի քիչ վախկոտ եմ: Ինչևէ, դա արդարացում չէ: Բոլորովին արդարացում չէ: Ընդհանրապէս չի կարելի վախկոտ լինել: Եթե անհրաժեշտ է որևէ մեկի մոռութիւն հասցնել, և դու ուզում ես այդ բանը, պետք է հասցնես: Բայց ես չեմ կարող: Ինձ համար ավելի հեշտ է մարդուն դուրս նետել պատուհանից կամ գլուխը կըտրել կացնով, քան հասցնել դեմքին: Ատում եմ բռունցքի դատաստանը: Ավելի լավ է ինձ ծեծեն, թեև դա բոլորովին դուր



լի գալիս, ինքներգ էլ հասկանում եք, բայց ես սոսկալի վա-  
խենում եմ հասցնել մարդու երեսին, երեսից եմ վախենում:  
Չեմ կարող նայել այդ գեմքին, ահա թե որն է ցավը: Եթե  
գոնե երկուսիս աչքերն էլ փակած լինեին, այնքան էլ տհաճ  
չէր լինի: Տարօրինակ վախկոտութիւնն է, որ մտածում ես,  
բայց, այնուամենայնիվ, վախկոտութիւնն է: Ես ինձ չեմ խա-  
րում:

Ու որքան շատ էի մտածում ձեռնոցների ու վախկոտու-  
թիւն մասին, այնքան ավելի էր փշանում տրամադրութիւնս,  
և ես որոշեցի ճանապարհին մտնել մի որևէ տեղ ու խմել:  
Էռնիի մոտ ես ընդամենը երեք բաժակ խմեցի, երրորդն էլ  
դեռ մինչև վերջ շխմեցի: Մի բան կարող եմ ասել՝ խմել կա-  
րողանում եմ: Կարող եմ թեկուզ ամբողջ գիշերը խմել ու  
ոչինչ չի նկատվի, եթե հատկապես տրամադրութիւնս տեղը  
լինի: Հուստոնի դպրոցում ես ու ընկերս՝ Ռայմոնդ Գուդ-  
ֆարը մեկ պինտա վիսկի գնեցինք ու խմեցինք եկեղեցում,  
շարաթ երեկոյան. այնտեղ մեզ ոչ ոք չտեսավ: Նա թունդ  
հարթել էր, իսկ իմ վրայից ոչինչ չէր երևում, ճա միայն շատ  
անկախ ու անհոգ էի զգում ինձ: Միրտս խառնեց, երբ պառ-  
կեցի քնելու, բայց դիտմամբ արեցի, կարող էի և ինձ զսպել:

Մի խոսքով, հյուրանոցի ճանապարհին ես շատ էի ուզում  
մտնել ինչ-որ մի խղճուկ բար, բայց այնտեղից դուրս ընկած  
երկու թունդ հարթած մարդ ու հարցրեցին, թե որտեղ է  
մետրոն: Նրանցից մեկը, որ նման էր իսկական իսպանացու,  
ամբողջ ժամանակ դեմքիս էր փշում գարշահոտ սպիրտը,  
մինչ ես կրացատրեի ինչպես գնալ: Նույնիսկ ոտք շորի այդ  
գարշելի բարը, պարզապես վերադարձա հյուրանոց:

Հողում մարդ չկար, միայն հիսուն միլիոն սիգարետների  
քնթուղիների հոտն էր կանգնած: Գարշահոտութիւն: Քունս  
չէր տանում, բայց շատ վատ էի զգում ինձ: Տրամադրութիւնս  
անտանելի էր: Ապրել չէի ուզում:

Ու այդ ժամանակ մի սոսկալի պատմութիւն մեջ խրվեցի:  
Գեռ ոտք չէի դրել վերելակ, որ վերելակավարն ասաց.

— Ուզո՞ւմ եք զվարճանալ, երիտասարդ: Թե՞ արդեն ձեզ  
համար ուշ է:

— Ինչի՞ մասին եք ասում, — հարցնում եմ: Բոլորովին  
չհասկացա ինչ է ակնարկում:

— Աղջիկ շեք ուզում գիշերվա համար:

— Ծ'ս,— ասում եմ: Սոսկայի հիմար բան դուրս եկավ, միաժամանակ անհարմար, որ այդպես բացօթեաց առաջարկում են:

— Քանի՞ տարեկան եք, շեք,— հանկարծ հարցնում է նա:

— Ի՞նչ է որ,— ասում եմ:— Քսաներկու տարեկան եմ:

— Դե ինչպե՞ս: Յանկանո՞ւմ եք: Հինգ դոլլար ժամանակավոր, տասնհինգ՝ գիշերվա համար:— Նա նայեց ժամացույցին:— Մինչև առավոտվա տասներկուը: Հինգ՝ ժամանակավոր, տասնհինգ՝ ամբողջ գիշերվա համար:

— Լավ,— ասում եմ: Սկզբունքորեն դեմ եմ նման բաներին, բայց այնքան տխուր էի, որ երկար չմտածեցի: Ցավն էլ հենց այդ է, որ երբ տխուր ես, մտածել էլ չես կարող:

— Ի՞նչ լավ: Ժամանակավոր, թե՞ ամբողջ գիշերը:

— Ժամանակավոր,— ասում եմ:

— Ծղավ: Ո՞ր համարում եք:

Նայեցի բանալու վրայի կարմիր համարանիշին:

— Տասներկու-քսաներկու,— ասում եմ: Արդեն զզջում էի, որ համաձայնեցի, բայց ուշ էր:

— Լավ, մի տասնհինգ բոլորից կուղարկեմ:— Նա բացեց վերելակի դուռը, ես դուրս եկա:

— Է՛յ, սպասեցեք, իսկ նա լավի՞կն է,— հարցնում եմ:— Թա պառավ շեմ ուզում:

— Ի՞նչ պառավ: Մի՞ անհանգստացեք, շեք:

— Իսկ ո՞ւմ եմ վճարելու:

— Նրան,— ասում է,— բաց թողեք, շեք,— ու նա գուռը զրկակացրեց քթիս առաջ:

Մտա համարս, մազերս թրջեցի, բայց ողնաձև են կտրված, և ոչ մի սանրվածք էլ չէր ստացվում: Հետո փորձեցի, թե բերանիցս հո չի զգացվում սիգարետների ու վիսկու հոտը, որ խմել էի էռնիի մոտ: Դա շատ հեշտ է, պետք է ավել շատ մոտ պահել բերանին և արտաշնչել դեպի վեր, դեպի քիթը: Շատ թունդ չէր, այնուամենայնիվ, մաքրեցի ատամներս: Հետո մաքուր վերնաշապիկ հագա: Ծիշտն ասած, շփտեի՝ պե՞տք է հագուստներս փոխեմ հանուն պոռնիկի, թե ոչ: Բայց այսպես գոնե զբաղմունք ունեի, թե չէ շատ էի

նյարդայնանում: Եթե ուզում եք ճիշտն իմանալ, ես կույս  
 էի: Ազնիվ խոսք: Քանի՞ անգամ է առիթ եղել անմեղութունս.  
 կորցնելու, բայց չի ստացվել: Միշտ մի որևէ բան խանգարել  
 է: Օրինակ՝ եթե աղջկա տանն ես, կարող են հանկարծ գալ  
 նրա ծնողները, ավելի ճիշտ, վախենում ես, թե կգան: Իսկ  
 եթե աղջկա հետ նստած ես որևէ մեկի մեքենայի ետևի նըս-  
 տատեղին, ապա առչում անպայման մեկ ուրիշ աղջիկ է  
 նստած ու նրան էլ է հետաքրքրում, թե ինչ է կատարվում  
 ետևում: Հասկանո՞ւմ եք, նա ամբողջ ժամանակ շուռ է գա-  
 ցիս ու նայում, թե ինչ է կատարվում: Մի խոսքով, միշտ մի  
 որևէ բան խանգարում է: Այնուամենայնիվ, երկու անգամ դա  
 քիչ էր մնում տեղի ունենար: Հատկապես մի անգամը, ես  
 լավ եմ հիշում: Սակայն էլի մի բան խանգարեց, բայց մո-  
 ռացել եմ, թե հատկապես ինչ: Կարևորն այն է, որ հենց բանը  
 հասնում է գրան, ապա աղջիկը, եթե նա պոռնիկ չէ կամ  
 նման մի բան, անպայման ասում է. «Պետք չէ, թո՛ղ»: Ու  
 ամբողջ ցավն այն է, որ ես լսում եմ նրան: Ուրիշները շեն  
 լսում: Բայց ես չեմ կարող: Ես լսում եմ: Երբեք չես հասկա-  
 նում՝ նա իսկապե՞ս չի ուզում, թե ուղղակի վախենում է, թե  
 դիտմամբ է ասում՝ «թող», որպեսզի դո՛ւ մեղավոր լինես,  
 եթե որևէ բան պատահի, և ոչ թե ինքը: Մի խոսքով, ես ան-  
 միջապես ենթարկվում եմ: Կարևորն այն է, որ միշտ խղճում  
 եմ նրանց: Հասկանո՞ւմ եք, աղջիկներն այնքան հիմար են,  
 ուղղակի վայ է: Հենց որ սկսում ես մի քիչ պաշպել, և այլն,  
 անմիջապես գլուխները կորցնում են: Հապա մի ուշադրու-  
 թյուն դարձրեք աղջկա վրա, երբ նա թունդ բռնկվում է՝  
 հիմարների հիմարն է: Ինքս էլ չեմ հասկանում, նրանք ասում  
 են «պետք չէ», ես էլ ենթարկվում եմ: Հետո փոշմանում եմ,  
 երբ նրան տուն եմ ուղեկցում, բայց միևնույն է, էլի ենթարկ-  
 վում եմ:

Իսկ հիմա, մինչ փոխում էի վերնաշապիկս, մտածեցի, որ  
 վերջապես առիթը եկել է: Մտածեցի, քանի որ նա պոռնիկ է,  
 ապա գոնե որևէ բան կսովորեմ նրանից, գուցե երբևէ ամուս-  
 նանում եմ: Երբեմն անհանգստանում եմ դրա համար: Հուտ-  
 տոնի դպրոցում ես մի գրքույկ կարդացի խիստ նուրբ, վայել-  
 շատես ու անբարոյազան մի տիպի մասին: Նրա անունը մոսյո  
 Բլանշար էր, այսօրվա պես հիշում եմ: Գիրքը գարշելի բան

էր, բայց այդ Բլանշարը՝ ոչինչ, նա հոյակապ գոյակ ունեւորիվիրայում, Եվրոպայում, Ու ազատ ժամանակ նա գլխավորապէս զբաղվում էր ինչ-որ կանանց քոթակելով, Ընդհանրապէս նա քաջ ժարդ է եղել և այլն, բայց կանանց այնքան է ծեծել, որ ուշաթափվել են: Մի տեղ նա ասում է՝ կնոջ մարմինը ջութակ է, պետք է հրաշալի երաժիշտ լինել, որպէսզի ստիպես նրան լավ հնչել: Ընդհանրապէս անպետք բան էր այդ գիրքը, — դա ես լավ գիտեմ, — բայց այդ ջութակը ի՞նչ ուղեղից դուրս չէր գալիս: Այ թե ինչու էի ուզում գոնե մի քիչ բան սովորել, որ ամուսնութունից հետո պետք գար ինձ: Քոֆիլը և նրա կախարդական ջութակը, գրողը տանի: Ընդհանրապէս զարշանք է, իսկ գուցե և՛ այնքան, Ես կուզենայի փորձված լինել նման գործերում: Քե չէ, ճիշտն ասած, երբ աղջկա հետ եմ լինում, չգիտեմ, թե ինչպէս պետք է վարվեմ: Օրինակ՝ այն աղջիկը, որ պատմեցի, թե քիչ էր մնում նրա հետ ամեն ինչ լիներ, մի ամբողջ ժամ շարաւրվեցի, մինչև որ հանեցի նրա անիծյալ կրծքակալը: Իսկ երբ հանեցի վերջապէս, նա պատրաստ էր թքելու երեսիս:

Ու այսպէս անցուղարձ էի անում սենյակում և սպասում պոռնիկի գալուն: Անընդհատ մտածում էի՝ գոնե հաճելի լինի: Ինչէ, ինձ համար միևնույն էր: Միայն թե շուտ վերջանար այդ ամենը: Վերջապէս դուռը ծեծեցին, և ես գնացի բացելու, բայց ճամպուղու ոտքի տակ էր դրված, կպա ու տյնպես շրմփացի հատակին, որ քիչ մնաց ոտքս ջարդելու: Միշտ այդպէս եմ, ամենակարևոր պահին կսայթաքեմ:

Բացեցի դուռը, պոռնիկը կանգնած էր այնտեղ, նա սպորտաչին վերարկուով էր, առանց գլխարկի: Մազերը բաց գույնի էին, բայց, երևում է, ներկած էին: Ու բոլորովին էլ պառավ չէր:

— Բարև ձեզ, — ասում եմ ամենաազնվական տոնով, գետինը մտնեմ ես:

— Մորիսը ձե՞ր մասին էր ասում, — հարցնում է:

Նա այնքան էլ բարեհամբույր տեսք չուներ:

— Վերելակավա՞րը:

— Այո:

— Այո, իմ մասին: Ներս եկեք, խնդրեմ, — ասում եմ: Ես

խոսում էի անբռնազրոսիկ տոնով, աստված վկա: Ավելի ու  
ավելի անբռնազրոսիկ:

Նա ներս եկավ, վերարկուն հանեց ու գցեց մահճակալին:  
Նրա հագին կանաչ գուլնի զգեստ կար: Հետո կողքանց նստեց  
գրասեղանի մոտ դրված բազկաթոռին ու սկսեց ոտքը վեր  
ու վար անել: Ոտքը գցել է ոտքին ու օրորում է վեր ու վար:  
Նյարդայնանում է, նույնիսկ նման չէ պոռնկուհու: Երևի այն  
պատճառով, որ շատ է ջահել, աստված վկա: Երևի ինձնից  
էլ ջահել: Ես նստեցի կողքի մեծ բազկաթոռին ու սիգարետ  
առաջարկեցի նրան:

— Զեմ ծխում,— ասում է: Զայնը բարակ-բարակ է: Եվ  
խոսում է շատ ցածր: Նույնիսկ «շնորհակալութուն» շասաց,  
որ սիգարետ առաջարկեցի: Երևում է, նրան այդպիսի բաներ  
չեն սովորեցրել:

— Թույլ տվեք ներկայանալ,— ասում եմ:— Իմ անունը  
Զիմ Ստիլ է:

— Դուք ժամացույց ունե՞ք,— ասում է: Թքած ունի, թե  
իմ անունը ինչ է:— Լսեցեք,— ասում է,— դուք քանի՞ տա-  
րեկան եք:

— Ե՛ս: Քսաներկու:

— Փչեց:

Տարօրինակ է, որ այդպես ասաց: Ոնց որ դպրոցական:  
Ես մտածում էի, որ պոռնկուհին կասի. «Զէ՛ մի, գրողը տա-  
նի» կամ «Վե՛րջ տուր», իսկ նա մանկահանորեն՝ «փչե՛ց»:

— Իսկ դո՛ւք ինչքան եք:

— Որքան որ պետք է,— ասում է: Նույնիսկ սրամտում  
է, պատկերացրեք:— Դուք ժամացույց ունե՞ք,— հարցնում  
է, հետո վեր է կենում ու զգեստը գլխի վրայով հանում է:

Ես սոսկալի շփոթվեցի, որ նա զգեստը հանեց: Այնպես  
անսպասելի էր, ազնիվ խոսք: Գիտեմ, որ եթե քո ներկայու-  
թյամբ հանում են զգեստը, ապա դու պետք է որոշ բան  
զգաս: Ես ընդհակառակը՝ շփոթվեցի ու ոչ մի բան էլ չզգացի:

— Ժամացույց ունե՞ք:

— Զէ՛, չէ՛,— ասում եմ: Օ՛հ, որքան էի անհարմար  
զգում:— Զեր անունն ի՞նչ է,— հարցնում եմ: Նա միայն  
վարդագույն շապիկով էր: Սոսկալի անհարմար էր: Ազնիվ  
խոսք, անհարմար էր:

— Սանի,— ասում է:— Դե, շարժվիր:

— Իսկ մի՞թե դուք չեք ուզում նախ գրուցել,— հարցնում եմ ես: Երեխայություն է, իհարկե, բայց ես ստակալի անհարմար էի զգում:— Մի՞թե դուք այդպես շտապում եք:— Նա նայեց ինձ, ինչպես կնայեն հոգեկան հիվանդին:

— Ի՞նչ խոսելու բան կա,— հարցնում է:

— Չգիտեմ: Հենց այնպես: Կարծում էի, երևի կցանկանաք մի քիչ գրուցել:

Նա նորից նստեց սեղանի մոտի բազկաթոռին: Բայց դա նրա սրտովը չէր: Էլի սկսեց օրորել ոտքը. շատ նյարդային ազդիկ է:

— Գուցե սիգարետ կցանկանայիք,— հարցնում եմ: Մտառցել էի, որ նա չի ծխում:

— Ծա չեմ ծխում: Լսեցեք, եթե ասելու բան ունեցե՞ք, ասե՛ք: Ծա ժամանակ չունեմ:

Բայց բոլորովին չգիտեի, թե ինչ խոսեմ նրա հետ: Կցանկանայի հարցնել, թե ինչպես է պոռնիկ դարձել, բայց վախեցա: Միևնույն է, չէր ասի:

— Նյու-Յորքի՞ց եք,— հարցնում եմ: Ուրիշ բան չգտա հարցնելու:

— Չէ, Հոլիվուդից եմ,— ասում է: Հետո վեր կացավ ու մտեցնավ մահճակալին, որտեղ ընկած էր նրա զգեստը:— Կախիչ ունե՞ք, թե չէ կճմրթվի զգեստս, նոր եմ բերել մաքրման կետից:

— Իհարկե,— ասում եմ:

Շատ ուրախացա, որ գործ ճարվեց: Չգեստը վերցրի ձեռքից ու կախեցի պահարանում: Տարօրինակ է, բայց տխրեցի, երբ կախում էի զգեստը: Պատկերացրի, թե ինչպես է նա մտնում խանութ ու գնում զգեստը, և ոչ ոք չի կասկածում, որ նա պոռնիկ է: Գործակատարը, հավանաբար, մտածում է, որ սովորական ազդիկ է, ու վերջ: Շատ տխրեցի, ինքս էլ չեմ իմանում ինչու:

Հետո նորից նստեցի, փորձեցի խոսք բանալ: Բայց մի՞թե նման գրուցակցուհու հետ կարող ես խոսել:

— Դուք ամեն երեկո աշխատո՞ւմ եք,— հարցրի ու անմիջապես էլ զգացի, որ սարսափելի բան եմ հարցնում:

— Ըհը՛,— ասում է: Նա արգենք քայլում է սենյակում, սեղանի վրայից վերցրեց մենյունն ու կարդաց:

— Իսկ ցերեկն ի՞նչ եք անում:

Նա ուսերը թոթվեց: Ուսերը նիհարի՛կ, նիհարի՛կ են:

— Քնում եմ, Գնում եմ կինու:— Նա ցած դրեց մենյունն ու նայեց ինձ:— Լսիր, ինչո՞ւ ենք... Ծն ժամանակ շունեմ...

— Գիտեք ինչ,— ասում եմ:— Ծն ինձ լավ շեմ զգում: Ծանր օր եմ անցկացրել: Ազնվորեն եմ ասում: Ծն ձեզ կվճարեմ ինչ-որ պետք է, բայց դուք ինձնից շե՞ք նեղանա, եթե ոչինչ չընեի:

Վատն այն էր, որ ոչինչ չէի ուզում: Ծիրանն ասած, ինձ համակել էր թախիծը, և ոչ թե ինչ-որ ոգևորություն: Նա սոսկալի թախիծ էր պատճառում ինձ: Հապա նրա կանաչ զգե՛ստը, որ կախված էր պահարանում: Հետո, բացի այդ էլ, ինչպե՞ս կարելի է այդպիսի քանով զբաղվել մի մարդու հետ, որը մի ամբողջ կեսօր նստում ու ապուշ կենտնեք էր նայում: Չէի կարող, և վերջ, ազնիվ խոսք:

Նա մոտեցավ ինձ ու այնպես տարօրինակ նայեց, որես չէր հավատում:

— Ի՞նչ է պատահել,— հարցնում է:

— Ոչ մի բան,— ասում եմ: Այստեղ ինքս էլ սկսեցի նյարդայնանալ:— Ծն, պարզապես, վերջերս եմ վիրահատության ենթարկվել:

— Հետո՞: Ի՞նչդ են կտրել:

— Էն բանը, գե՛ կլավիկորդան:

— Հա՞, իսկ որտե՞ղ է էդ բանը:

— Կլավիկորդա՞ն,— ասում եմ:— Գիտեք, դա շատ խորն է, ողնուղեղի մեջ: Ետտ խորը, գիտեք, անմիջապես ողնուղեղի մեջ:

— Հա՞,— ասում է:— Գա շատ վատ բան է:— Ու մեկ էլ փզվում է ծնկներին:— Իսկ դու լավիկն ես:

Ծն սոսկալի նյարդայնանում էի: Փշում էի աչ ու ձախ:

— Լավ շեմ առողջացել,— ասում եմ:

— Գու նման ես մի արտիստի, կինոյից Գիտե՞ս: Ի՞նչ էր անունը: Ախր գիտես, է՛: Ինչ էր անո՞ւնը:

— Զգիտեմ,— ասում եմ: Իսկ նա չի իջնում իմ ծնկներից:

— Դե չէ, գիտես, Մեկվին Դուզլասի հետ էր խաղում։ Նա, որ կրտսեր եղբոր դերն էր կատարում։ Որ ընկալ նավակից։ Հիշեցի՞ր։

— Ձէ, չհիշեցի։ Ես ընդհանրապես կինո չեմ գնում։— Այստեղ նա սկսեց լկտովել։ Այնպես կոպտորեն, հասկանում եք։

— Վերջ տվեք, խնդրեմ,— ասում եմ։— Տրամագրութուն չունեմ։ Ասացի, չէ՞, նոր եմ վիրահատութունից՝ վեր կացել։

Սեկներինցս չէր իջնում, բայց մեկ էլ ծուռ նայեց ինձ, իսկ աչքերը սոսկալի շարութիւն էին արտահայտում։

— Լսիր,— ասում է,— ես քնած էի, իսկ այդ գրողի տարած Մորիսը ինձ արթնացրեց։ Ինչ է, քո կարծիքով...

— Ասացի, չէ՞, որ կվճարեմ։ Ազնիվ խոսք, կվճարեմ։ Շատ փող ունեմ։ Բայց նոր եմ վեր կացել ծանր վիրահատութունից, դեռ չեմ առողջացել։

— Հապա էլ ինչո՞ւ էիր Մորիսին ասում, թե քեզ աղջիկ է հարկավոր։ Եթե վիրահատել են քո այգ, ինչ էր անունը... Ինչո՞ւ էիր ասում։

— Կարծում էի, մի քիչ լավ կզգամ ինձ։ Բայց ժամանակից շատ շուտ եմ ոտքի ելել։ Լուրջ եմ ասում։ Մի՛ նեղացեք։ Մի բոպե վեր կացեք, միայն դրամապանակս վերցնեմ։ Վե՛ր կացեք մի բոպե։

Սոսկալի կատաղած էր, բայց, այնուամենայնիվ, իջավ ծնկներինցս, այնպես որ հնարավորութիւն ունեցա մոտենալու պահարանին և հանելու դրամապանակս։ Ես հինգ դոլար հանեցի ու տվեցի նրան։

— Շատ շնորհակալ եմ,— ասում եմ,— շատ-շատ շնորհակալութիւն։

— Այստեղ հինգ է, իսկ դինը՝ տասն է։

Երևում է, ինչ-որ բան էր որոշել։ Իզուր չէր, որ վախեցնում էի, համոզված էի, որ այդպես էլ լինելու է։

— Մորիսն ասաց՝ հինգ,— ասում եմ։— Նա ասաց, մինչև առավոտ տասնհինգ, իսկ ժամանակավորը՝ հինգ։

— Ոչ, տասը։

— Մորիսն ասաց՝ հինգ,— ասում եմ։— Ներեցեք, ազնիվ խոսք, բայց ավելին չեմ կարող։



Նա թոթվեց ուսերը, ինչպես քիչ առաջ, խիստ արհամարհանքով:

— Բարձր եղեք, տվեք զգեստս: Եթե ձեզ համար դժվար չէ, իհարկե:

Սուսկալի աղբիկ է: Շատ բարաբիկ ձայնով է խոսում, բայց միևնույն է, նրա հետ սուսկալի է: Եթե նա մի հաստամարմին պառավ պոռնկուհի լիներ, ամբողջովին քամսված, ապա այդքան սարսափելի չէր լինի:

Հանեցի զգեստը: Նա հանգավ: Հետո վերցրեց վերարկուն:

— Դեհ, առայժմ, հիմարիկ, — ասում է:

— Առայժմ, — ասում եմ: Ես նրան շնորհակալութուն չհայտնեցի: Եվ լավ է, որ չհայտնեցի:

#### 14

Նա գնաց, իսկ ես նստեցի բազկաթոռին ու իրար ետեկեց երկու սիգարետ ծխեցի: Դրսում արդեն լույսը բացվում էր: Տեր աստված, այս որքան վատ եմ զգում ինձ: Այնպիսի դատարկութուն էր, որ պատկերացնել անգամ չեք կարող: Ու ես սկսեցի բարձրաձայն զրուցել Ալլիի հետ: Հաճախ եմ նրա հետ զրուցում, երբ թախիծը պատում է հոգիս: Ես նրան ասում եմ. թող վերցնի հեծանիվը ու ինձ սպասի Բորի Ֆելդի տան մոտ: Բորի Ֆելդնը ապրում էր Մեյնում, մեր տան մոտ, դա վաղուց էր: Եվ ահա թե ինչ եղավ: Ես ու Բորին որոշել էինք հեծանիվներով գնալ Սեդերհիգո լճի մոտ: Մտադիր էինք նախաճաշ վերցնել ու այն ամենը, ինչ անհրաժեշտ կլիներ, և մեր փոքր տրամաշափի հրացանները: Մենք շատ փոքր էինք ու կարծում էինք, թե փոքր տրամաշափի մեր հրացաններով կարող ենք որս խփել: Մի խոսքով, Ալլին լսել էր ինչպես ենք պայմանավորվում, ու խնդրում էր իրեն էլ վերցնենք, իսկ ես նրան շվերցրի, ասացի՝ դեռ փոքր ես: Իսկ հիմա, երբ թախիծը համակում է սիրտս, ես նրան ասում եմ. «Լավ, վերցրու հեծանիվը ու ինձ սպասիր Բորի Ֆելդի տան մոտ: Միայն թե մի՛ ուշանա»:

Ոչ թե ես նրան երբեք ինձ հետ չէի տանում: Չէ՛, տանում էի: Բայց այդ օրը շտարա: Իսկ նա բոլորովին չէր նե-

զացել, — նա երբեք չէր նեղանում, — բայց ես միշտ այդ մասին հիշում էի, երբ շատ էի տխուր ընկում:

Վերջապես, այնուամենայնիվ, հանվեցի ու պառկեցի: Պառկեցի ու մտածում եմ. աղոթե՞մ, թե չէ: Բայց բան չըստացվեց: Չեմ կարողանում աղոթել, նույնիսկ երբ սպում եմ: Նախ՝ ես մաշտաբ աթիխտ եմ: Քրիստոսն ընտանիքացես ինձ դուր է գալիս, բայց աստվածաշնչային մնացած խառնափնթորությունը՝ ոչ այնքան: Վերցնենք հենց թեկուզ առաքյալներին: Ծիշտն ասած, նրանք ինձ ստակալի կատարեցնում են: Իհարկե, երբ Քրիստոսը մեռավ, նրանք իրենց վատ շարճեցին, բայց քանի դեռ կենդանի էր, նրանցից միայն վնաս էր տեսնում: Անընդհատ խաբում էին նրան: Աստվածաշնչի մեջ ամենից քիչ ինձ այդ առաքյալներն են դուր գալիս: Ծիշտն ասած, Քրիստոսից հետո ես Աստվածաշնչից սիրում եմ այն խենթուկին, որ ապրում էր քարանձավում ու ամբողջ ժամանակ իրեն ճանկոտում էր քարերով և այլ բաներով: Ես այդ ողորմելի հիմարին տասն անգամ ավելի եմ սիրում, քան առաքյալներին: Երբ Հուլիանոսի դրարոցում էի, ես միշտ վիճում էի մեք հարկում ապրող մի տիպի՝ Արթուր Չայլդսի հետ: Այդ Չայլդսը կվակեր՝ էք և միշտ Աստվածաշնչին էր կարդում: Նա լավ տղա էր, ես սիրում էի նրան, բայց Աստվածաշնչի հարցում մենք տարբեր կերպ էինք դատում, հատկապես առաքյալների հարցում: Նա ինձ համոզում էր, որ եթե ես առաքյալներին չեմ սիրում, ուրեմն Քրիստոսին էլ չեմ սիրում: Նա ասում էր, քանի որ Քրիստոսն ինքն է իր առաքյալներին ընտրել, ուրեմն պետք է նրանց սիրել: Իսկ ես ասում էի. գիտե՞մ, որ ես ինքն է ընտրել, բայց ընտրել է պատահամամբ: Առում էի, որ Քրիստոսը ժամանակ չուներ ընտրություն կատարելու, ես բողոքովին էլ չեմ ժողադրում նրան: Մի՞թե նա մեղավոր էր, որ ժամանակ չուներ: Հիշում եմ, մի անգամ հարցրի Չայլդսին. ինչ է կարծում ես, Հուլան, որ մատնեց Քրիստոսին, փնջնասպան լինելուց հետո գո՞տիք ընկավ, թե չէ:

1 Քրիստոնեական բողոքական աղանգ, որ առաջացել է XVII դ. Անգլիայում: Լայնորեն տարածված է Հյուսիսային Ամերիկայում:

Չայլոսը ասում է, իհարկե, ընկալի Եվ այստեղ ոչ մի կերպ չէի կարողանում համաձայնել նրա հետ: Ես ասում եմ. գրազ կգամ հազար դոլլարով, որ Քրիստոսը ոչ մի դեպքում այդ ողորմելի Հուդային դժոխք չէր ուղարկի: Ես հիմա էլ գրազ կգամ հազար դոլլարով, եթե այդքան ունենայի: Այդ առաջ-յալներն, օրինակ, անպայման դժոխք կուղարկեին Հուդային, առանց ատանվելու: Իսկ Քրիստոսը՝ ո՛չ, պիտու է երգ-վում: Այդ Չայլոսն ասում էր, որ ես այդպես եմ մտածում, որովհետև եկեղեցի չեմ գնում: Ինչ որ ճիշտ է, ճիշտ է, չեմ գնում: Նախ՝ իմ ծնողները տարբեր հավատի են, ու մեր քն-տանիքում բոլոր Լրեխաներս աթեիստներ ենք: Անկեղծ ասած, հոգևորականներին ես տանել չեմ կարողանում: Բո-լոր դպրոցներում, որտեղ որ ես սովորել եմ, բոլոր հոգևորականներն էլ հենց որ տեսնում են քարոզել, նրանց ձայնը դառնում է քաղցր-մեղր, անտանելի: Օ՛հ, ասում եմ գրանց: Չեմ հասկանում, թե ինչու չեն կարողանում սովորական ձայնով խոսել: Այնքան են ծանովում, որ անհնար է լսելը:

Մի խոսքով, երբ պառկեցի, ոչ մի աղաթք չեկամ միտքս: Հենց ուզում եմ մի աղոթք հիշել, այդ Սանիի ձայնն եմ լսում, որ ինձ հիմարիկ անվանեց: Ի վերջո նստեցի անկողնիս մեջ ու մի սիգարետ էլ ծխեցի: Փենսիլից դուրս գալուց հետո երևի արդեն երկու տուփ սիգարետ ծխած կլինեի:

Ու հանկարծ հենց որ պառկեցի, ինչ-որ մեկը ծեծեց դու-ռը: Հույսով մտածում էի, որ երևի իմ գուռը չեն ծեծում, բայց հրաշալի հասկանում էի, որ հենց իմ գուռն է: Գոհանեմ ին-չու, բայց անմիջապես հասկացա սվ է: Ես շատ զգա-յուն եմ:

— Ա՛՞՞վ է,— հարցնում եմ: Շատ վախեցա: Այդպիսի հարցերում վախկոտ եմ:

Նորից ծեծեցին: Միայն թե ավելի ուժգին:

Վերջապես վեր կացա, միայն պիժամայով, ու բացեցի դուռը: Նուրիակ լույսը վառելու հարկ չեղավ. արդեն առա-վոտ էր: Շեմքին կանգնած էին արդ Սանին ու Մորիսը՝ պզուկոտ վերելակալարը:

— Ի՞նչ է պատահել,— հարցնում եմ:— Ի՞նչ եք ու-զում:— Չայնս սոսկալի դողում էր:

— Դատարկ բան,— ասում է այդ Մորիսը:— Ընդամեն-

նր հինգ դուլարը — Նա խոսում էր երկուսի փոխարեն, իսկ աղջնակը կանգնել էր բերանը բաց և ոչինչ չէր ասում:

— Ես նրան արդեն վճարել եմ, — ասում եմ: — Ես նրան հինգ դուլար եմ տվել: Իրեն հարցրեք: — Օհ, ինչպե՞ս էր դողում ձայնս:

— Տասը պետք է տաք, շեֆ: Ես ձեզ ասացի, տասը ժամանակավորապես, տասնհինգ՝ ամբողջ գիշերվա համար: Ես ձեզ ասացի, չէ՞:

— Ըիշտ չէ, շեք ասել: Գուք ասացիք՝ հինգ ժամանակավորապես, տասնհինգ՝ ամբողջ գիշերվա համար, ես շատ լավ եմ լսել...

— Ելուտ արեք, շեֆ:

— Ինչի՞ համար, — հարցնում եմ: Աստված իմ, սիրտս ախպես էր տրոփում, որ ասես հիմա դուրս է թռչելու: Գոնե հագնված լինեի: Անտանելի է պիժամայով կանգնել, երբ այգախոսի բան է կատարվում:

— Դե տվե՛ք, շեֆ, տվե՛ք, — ասում է Մորիսը: Ու այնպես է հրում իր կեղտոտ թաթով, որ քիչ է մնում շրմփամ հատակին. շատ ուժեղ էր շան որդին: Ու գեռ չէի սթափվել, որ երկուսն էլ հայտնվեցին սենյակում: Այնպիսի տեսք ունեին, ասես զա իրենց սենյակն էր: Սանին նստեց լուսամուտազոգին: Մորիսը նստեց բազկաթոռին ու արձակեց օձիքը. նրա հագին վերելակավարի համազգեստ էր: Տեր աստված, ինչպե՞ս էի նյարդայնանում: — Դե լավ, շեֆ, հանեք փողերը, ես գործի պիտի գնամ:


— Ձեզ արդեն ասացի, այլևս ոչ մի ցենտ պարտք չեմ: Ես նրան հինգանոց եմ տվել:

— Հերիք է աչքներիս թող փչեք, փողը դրեք սեղանին:

— Ինչի՞ համար պետք է հինգ դուլար էլ տամ. — ասում եմ ես, ու ձայնս այնպե՞ս է դողում: — Գուք ուզում եք ինձ կողոպտել:

Մորիսը մինչև վերջ արձակեց բաճկոնի կոճակները: Դրա տակ կեղծ օձիք էր, առանց վերնաշապկի: Նա հաստ, մազոտ ու վիթխարի փոր ունեի:

— Ոչ ոք ոչ ոքի չի ուզում կողոպտել, — ասում է նա. — Փողը տվեք, շեֆ:

— Զեմ տա: 

Գեո խոսքը բերանումս՝ նա վեր կացավ ու եկավ ինձ վրա: Նա այնպիսի տեսք ուներ, ասես սոսկալի հոգնած էր կամ ուղղակի զահլան գնացել էր: Տեր աստված, ինչպե՞ս վախեցաւ: Հիշում եմ, ձեռքերս խաշեցի կրծքիս: Ամենավատն այն էր, որ ես պիժամայով էի:

— Փողը տվեք, շեֆ,— նա կիպ մոտեցավ ինձ: Անվերջ նույն բանն էր կրկնում:— Տվեք փողը, շեֆ:— Իսկակա՞ն կրետին:

— Չե՛մ տա:

— Շեֆ, դուք ինձ համբերութունից հանում եք: Ստիպված կլինեմ ձեզ հետ կոպտորեն վարվել: Ձեմ ուզում ձեր քեֆին կպչեմ, բայց երևում է ուրիշ ճար չկա: Գուք մեզ պարտք եք հինգ դոլլար:

— Ծս ոչ մի բան էլ պարտք չեմ,— ասում եմ:— Իսկ եթե մատով կպել եք ինձ, այնպես կգոռամ, որ ամբողջ հյուրանոցը գլխիդ կհավաքեմ: Ուստիկանությանը, բուրբին ոտքի կհանեմ,— խոսում եմ, բայց ձայնս դնդողի պես դողում է:

— Գե գոռա՛, Գոռա՛, ինչքան քեֆդ կտա: Սկսի՛ր: Ուզում ես, ծնողներդ իմանան, որ գիշերն աղչկա հետ ես անցկացրե՞լս չլա դեռ լավ ընտանիքի զավակ ես համարվում:— Եա՛տ խորամանկն էր այդ շան որդին: Եա՛տ:

— Ինձ հանգիստ թողեք: Ուրիշ բան, եթե ասած լինեիք՝ տասց: Գուք որոշակիորեն ասացիք:...

— Փողը տալի՞ս եք, թե չէ,— նա ինձ գեմ տվեց գուննը: Իր փրշոտ ուռած փորը ուղղակի գցել էր վրաս:

— Հանգիստ թողեք ինձ ու կորեք իմ սենյակից,— ասացի: Իսկ ինքս ձեռքերս խաշել ու տեղիցս էլ շեմ շարժվում: Տեր աստված, ինչպիսի՞ ոչնչություն եմ ես:

Հանկարծ Սանին խոսեց. մինչ այդ նա լուռ էր:

— Լսիր, Մորիս, վերցնե՛մ գրա գրամատանակը: Այ, այնտեղ է, այն բանի վրա...

— Այո՛, այո՛, վերցրու:

— Արդեն վերցրի,— ասում է Սանին ու ինձ ցույց տալիս հինգ դոլլարանոցը:— Տե՛ս, ավելին չեմ վերցնում, միայն պարտքս: Ես գող չեմ: Մենք գող չենք:

Ու հանկարծ ես լաց եղա, չեմ ուզում լալ, բայց լալիս եմ:

— Հա՛, գող չեք: Հինգ գողարք գողանում են ու ասում՝  
գող չենք:

— Ձա՛յնդ, — ասում է Մորիսն ու հրում ինձ:

— Քող կորչի, լսո՛ւմ ես, — ասում է Սանին: — Արի  
գնանք: Մենք մեր պարտքն ստացանք: Գնա՛նք: Լսո՛ւմ ես,  
գնանք այստեղից:

— Գալիս եմ, — ասում է Մորիսը, բայց կանգնած է դեմ:

— Մորիս, լսո՛ւմ ես, ասում եմ, թո՛ղ դրան:

— Իսկ ո՞վ է նրան ձեռք տալիս որ, — պատասխանում  
է նա անմեղ ձայնով: Ու հանկարծ այնպե՛ս է հասցնում պի-  
ժամայիս: Չեմ ասում, թե որ մասիս, բայց սոսկալի ցավ  
զգացի: Ծս գոռացի, որ նա կեղտոտ, ստոր կրետին է:

— Ի՞նչ ասացիր, — ասում է: Ու ձեռքը դրել է ազանցին  
ինչպես խուլը: — Ինչ ասացի՞ր: Ծս ո՞վ եմ:

Իսկ ես կանգնած զոռում եմ: Կատաղությունս գալիս է,  
համբերությունից հանեց ինձ:

— Դու ստո՛ր, կեղտո՛տ կրետին ես, — ասում եմ: — Կեղ-  
տոտ կրետին ես, խաբեքա, իսկ մի երկու տարի հետո մու-  
րացիկ ես դառնալու, փողոցներում ողորմություն հավաքես:  
Բլուզդ փսլնքոտած, կեղտոտ, հտած ման ես գալու փողոց-  
ներում...

Այստեղ նա այնպես հասցրեց, որ շկարողացա մի կողմ  
թեքվել, սոսկալի հարված զգացի փորիս:

Գիտակցությունս չկորցրի, որովհետև հիշում եմ, հատա-  
կին ընկած նայում էի, թե ինչպես գնացին նրանք ու իրենց  
հտեկից ծածկեցին դուռը: Երկար ժամանակ վեր չէի կենում  
տեղիցս, ինչպես այն ժամանակ Ստրեդլեյթերի հետ կռվե-  
լուց հետո... Բայց հիմա ինձ թվում էր, թե մեռնում եմ, ազ-  
նիվ խոսք: Թվում էր, թե խեղդվում եմ, շունչս կտրվում էր,  
չէի կարողանում արտաշնչել: Իսկ երբ ելա ե գնացի լոգա-  
րան, չէի կարող նույնիսկ կռանալ, երկու ձեռքով բռնել էի  
փորս:

Բայց ես, հավանաբար, խենթ եմ, աստված վկա, գիժ եմ  
ուղղակի: Լոգարան գնալիս երևակայեցի, թե իբր գնդակ կա  
աղիքներիս մեջ: Երևակայեցի, թե Մորիսը կրակել է ինձ վրա:  
Ու հիմա գնում եմ լոգարան, որպեսզի մի կում հին վիսկի  
խմեմ, նյարդերս հանգստացնելու համար, և գործի անցնեմ:

Պատկերացրի, որ դուրս եմ գալիս լողարանից արդեն հագնւած, ատրճանակը ձեռքիս, ու թեթևակի օրորւում եմ: Ու իշնում եմ աստիճաններով, վերելակ, իհարկե, շեմ նստում: Գնում եմ բազրիքից բռնած, արյունը կաթում է բերանիս անկյունից: Ծա մի քանի հարկ այդպես ցած կիշնեի փորս բռնած, արյունը կհոսեր հատակի վրա, ու հետո կկանչեի վերելակը: Ու հենց որ այդ Մորիսը բացեր դուռը, տեսներ ինձ ատրճանակը ձեռքիս, կգոռար սարսափից, վայնասուն կբարձրացներ, որպեսզի ձեռք շտամ իրեն: Բայց ես նրան ցույց կտայի: Միանգամից վեց գնդակ կարձակեի նրա ճարպոտ ու փրշոտ փորի մեջ: Հետո ատրճանակը կնետեի վերելակի հորը, իհարկե, նախապես մաքրելով մատնահետքերու: Ապա կսողայի իմ համարը ու կզանգահարեի Զեյնին, որպեսզի նա գար ու կապեր իմ վերքը: Ու պատկերացնում էի, թե նա ինչպես է սիգարետը բռնել իմ շրթունքների մոտ, իսկ ես ծխում եմ ու արեաքամ լինում:

Անիծյալ կինո: Այ թե ինչ օրի է գցում մարզուն: Բեքեերդ էլ հասկանում եք...

Ծա լողարանում նստեցի մոտ մի ժամ, լողանք ընդունեցի, մի քիչ ուշքի եկա: Հետո անկողին մտա: Երկար ժամանակ չէի կարողանում քնել, — բուրբուրում չէի հոգնել, — բայց թ վերջո քնեցի: Ետտ էի ուզում վերջ տալ կյանքիս: Պատուհանից դուրս նետվել: Թեքնա գուրս նետվելի, եթե համոզված լինեի, որ որևէ մեկը անմիջապես կմոտենա ու կծածկի ինձ: Չէի ցանկանա, որ ինչ-որ հետաքրքրասեր ապուշներ հավաքվեն նայելու, թե ես ինչպես եմ ընկած արեաշագախ վաճակում:

Երկար չքնեցի, կարծեմ ժամը տասն էր, երբ արթնացա: Մի սիգարետ ծխեցի ու անմիջապես զգացի, որ շատ քաղցած եմ: Բրոսսարի ու էկլիի հետ էգերսթաունում կերած կոտլետից հետո բան չէի կերել: Դա այնքան վազուց էր, ասես տասնհինգ տարի էր անցել: Հեռախոսը կողքիս էր, ուզում էի զանգահարել ու պատվիրել, որ նախաճաշ մատուցեն համարում, բայց վախեցա, թե այդ վերելակավար Մա-

բիսի հետ կուղարկեն, իսկ եթե կարծում եք, որ հրադուժ էի նրան տեսնել, շատ եք սխալվում: Պատկել ու սիգարետ էի ծխում: Ուզում էի զանգահարել Զեյնին, իմանալ տա՞նն է արդյոք, բայց տրամադրություն չունեի:

Այդ ժամանակ զանգահարեցի Սալլի Հեյսին: Նա Մերի է. Ուորոֆի պանսիոնում էր սովորում և գիտեի, որ արդեն տանը կլինի. մի շաբաթ առաջ էի նրանից նամակ ստացել: Ոչ թե նրա համար գտնվում էի, այլ ուղղակի ծանոթներ էինք, ու ես հիմարաբար կարծում էի, թե նա խելացի է: Այդպես էի կարծում, որովհետև նա շատ-շատ բան գիտեր թատրոնի, պիեսների և ամեն տեսակ գրականության մասին: Եթե մարդը հարուստ է նման գիտելիքներով, ապա միանգամից դժվար է զուլի հանել՝ հիմար է նա, թե ոչ: Ես այդ Սալլի Հեյսից տարիներ շարունակ զուլի չէի հանում: Երեկ ավելի շատ գլխի ընկնեի, որ հիմարի մեկն է, եթե այդքան չհամբուրվեի նրա հետ: Վատն այն է, որ երբ համբուրվում եմ աղջկա հետ, միշտ կարծում եմ, թե նա խելոք է: Մեկը մյուսի հետ ոչ մի կապ չունի, բայց ես, միևնույն է, այդպես եմ կարծում:

Մի խոսքով, զանգեցի նրան: Նախ՝ մոտեցավ տնտեսուհին, հետո՝ նրա հայրը: Վերջապես կանչեցին նրան:

— Դո՞ւ ես, Սալլի, — հարցնում եմ:

— Այո, ա՞՞վ է խոսում, — հարցնում է նա. շատ փեշ-ծողն է, հա՛: Արդեն հորն ասել էի ով է խոսողը:

— Հուլիան Քուֆիլդն է: Ինչպե՞ս ես:

— Ա՛խ, Հուլիան: Ենորհակալություն, լավ եմ: Դո՞ւ ինչպես ես:

— Հրաշալի: Լսիր, ինչպե՞ս ես, գպրոցի գործերդ ինչպես են:

— Ոչինչ, — ասում է, — դե ինքդ էլ գիտես:

— Հրաշալի է: Ահա թե ինչ էի ուզում հարցնել: Դու ազա՞տ ես: Ծիշտ է, այսօր կիրակի է, բայց հավանաբար առավոտյան ներկայացումներ կան: Բարեգործական, թերևս, կուղե՞ս գնալ:

— Եստ եմ ուզում, շա՛տ: Դա հիասքանչ կլինի:

«Հիասքանչ», զզվում եմ այդպիսի բառերից: Ի՞նչ գարջելի բան է: Քիչ էր մնում ասելի, թե մենք ոչ մի տեղ էլ



լենք գնաւ: Հետո մի քիչ բլրացիներ հեռախոսով, ավելի ճիշտ նա էր բլրում, ես լուռ լսում էի: Նա ոչ մեկին հերթ չի տա խոսելու: Սկզբում պատմում էր հարվարդցի ինչ-որ պիժոնի մասին, — հավանաբար, առաջին կուրսեցու, բայց դա չէր տեսնում, իհարկե, — իբր այդ սղան հավում է իր համար: Գիշեր-ցերեկ զանգում է իրեն: Այո, գիշեր-ցերեկ, քիչ էր մնում հռհռայի: Հետո մեկ այլ տիպի մասին, Վեստ-Փանթից մի կաղետի մասին. սա էլ է պատրաստ ինքնասպան լինել իր համար: Սոսկալի՝ բան է: Ծա խնդրեցի նրան ժամը ուղիղ երկուսին ինձ սպասել «Բիլթմոր» հյուրանոցի ժամացույցի տակ, որովհետև ցերեկային ներկայացումներն սկսվում էին երկուսն անց կեսին: Իսկ նա միշտ ուշանում էր: Ու հրածեշտ տվի: Զահլաս գնում էր նրանից, բայց նա զարմանալի գեղեցիկ էր:

Պայմանավորվեցի Սալլիի հետ, հետո վեր կացա, հագնւ-վեցի, կարգի բերի ճամպրուկս: Դուրս գալիս պատուհանից նայեցի տեսնեմ ինչ են անում այդ հոգեկան հիվանդները, բայց նրանք թանձր վարագույրներն իջեցրել էին: Առավոտ-յան նրանք համեստից էլ համեստ են: Հետո վերևակով իջա ու հաշիվս փակեցի դռնապանի հետ: Բարեբախտաբար, Մո-բիսը ոչ մի տեղ չերևաց: Ծա առանձնապես շէի էլ շանում տեսնել այդ սրիկային:

Հյուրանոցի մոտից տաքսի վերցրի, բայց չգիտեի ուր գնամ: Պարզվում է, գնալու տեղ չունեի:

Օրը կիրակի էր, իսկ ես մինչև շորեքշաբթի չէի կարող տուն գնալ, ժայրահեղ դեպքում մինչև երեքշաբթի: Իսկ մեկ ալլ հյուրանոց գնալ, որպեսզի այնտեղ էլ գլուխս շարդեն՝ շնորհակալ եմ, շեմ ուզում: Վարորդին պատվիրեցի ինձ տա-նել Կենտրոնական կայարան: Դա «Բիլթմոր» հյուրանոցի մոտ էր, որտեղ պետք է հանդիպեի Սալլիին: Ու որոշեցի աչսպես անել: Իրերս սյահպանության հանձնել փոքրիկ պա-հարանում, որի բանալին տալիս են ձեռքդ, ապա նախաճա-շել: Շատ էի քաղցած: Տաքսու մեջ հանեցի դրամապանակս ու հաշվեցի: Զգիտեմ որքան կար, բայց այնքան էլ շատ չէր: Երկու շաբաթվա ընթացքում ես բավական շատ էի ծախ-սել: Բիլթմով սոսկալի շոալլ եմ, ինչն էլ որ շեմ վատնում: Կորցնում եմ: Երբեմն մոռանում եմ մանրը վերցնել որևէ

աեստորանում կամ գիշերային գինետանը: Մեռզներս ուղղա-  
կի կատաղում են: Ծս նրանց հասկանում եմ: **Քեկ հայրս**  
բավական հարուստ է, չգիտեմ ամսական որքան է վաստա-  
կում, — ինձ հետ այդ մասին չի խոսում, — բայց երևի բա-  
վական շատ: Նա կորպորացիայի իրավախորհրդատու է: Իսկ  
գրանց փողը բահով են հավաքում: Գիտեմ, որ հարուստ է,  
որովհետև միշտ դրամ է ներդնում Բրոդվեյում ինչ-որ ներ-  
կայացումների համար: Այդ ներկայացումները միշտ էլ տա-  
պալվում են, ու մայրիկս կատաղությունից իրեն կորցնում  
է, երբ հայրս գրանց հետ կապի մեջ է մտնում: Ընդհանրա-  
պես մայրիկս Ալլիի մահից հետո շատ է ընկել: Դրա հա-  
մար էլ շատ էի վախենում ասել նրան, որ ինձ դարձյալ  
վաարել են:

Ճամպրուկներս հանձնեցի պահպանության ու մտա կա-  
յարանի բուֆետը նախաճաշելու: Լավ կերա. նարնջահյութ,  
սպաւխառով ձվածեղ, տոստ<sup>1</sup>, սուրճ: Սովորաբար միայն առա-  
վտաներն եմ հյութ խմում: Շատ քիչ եմ ուտում, անշափ քիչ:  
Դրանից էլ այսպես նիհար եմ: Ինձ խորհուրդ են տվել խմո-  
րեղեն շատ ուտել ու նման բաներ, որպեսզի քաշս տեղը բե-  
րեմ, բայց մաքուս էլ չէր անցնում: Երբ որևէ տեղ եմ գնում,  
սովորաբար շվեցարական պանրով բուստերրոդ եմ վերցնում  
ու մի բաժակ կաթնային սուֆլե: Դատարկ բաներ են գրանք,  
բայց փոխարենը սուֆլեի մեջ վիտամիններ շատ կան: Լ. Վ.  
Քոլֆիլդ: Հոլդեն Վիտամին Քոլֆիլդ:

Ծս ձվածեղ էի ուտում, երբ ներս մտան երկու միանձ-  
նուհիններ՝ ճամպրուկներն ու պայուսակները ձեռքներին, երե-  
զի ուրիշ մենաստան էին տեղափոխվում և սպասում էին  
ղնացքին: Ծամպրուկները վատն էին, էժանագին, ոչ թե կաշ-  
վից, այլ այնպես, չգիտես թե ինչից: Գիտեմ, դա կարևոր  
չէ, բայց ես տանել չեմ կարողանում էժանագին ճամպրուկ-  
ները: Ամոթ է ասելը, բայց ես տհաճությամբ եմ նայում այն  
մարդուն, որի ճամպրուկները էժանագին են: Դա ինձ մի  
ղեպք է հիշեցնում: Երբ սովորում էի էլքտոն-հիլում, ապ-  
րում էի Դիկ Ալեգլի հետ մի սենյակում: Նրա ճամպրուկները  
անպետք բաներ էին: Նա դրանք պահում էր իր մահճակալի  
տակ և ոչ թե դարակի վրա, որպեսզի ոչ ոք շտաներ դրանք

<sup>1</sup> Բոված, կարմրացրած հացի կտոր:

իմ ճամպրուկների կողքին: Դրանից ես վատ էի զգում, պատ-  
րաստ էի ճամպրուկներս դեն նետել կամ ընդմիջտ փոխել  
ներս ճամպրուկների հետ: Իմոնք զնված էին Մարկ Կրոսսի  
մտոից, իսկական կաշվից էին, բոլոր պարագաներով հան-  
դերձ, և աստված գիտե, թե որքան արժեին: Բայց ասա թե  
ինչ տարօրինակ բան եղավ: Մի անգամ ես վերցրի իմ ճամպ-  
րուկներն ու խցկեցի մահճակալիս տակ, որպեսզի ծերուկ  
Սլեզլը ազատվի այդ ոչ լիարժեքության կոմպլեքսից: Գիտե՞ք  
նա ինչ արեց: Նոր էի ճամպրուկները մտցրել մահճակալիս  
տակ, նա հանեց ու նորից դրեց դարակի վրա: Միայն հետո  
հասկացա, թե ինչու այդպես արեց. նա ուզում էր, որ բոլորը  
կարծեն, թե դրանք իր ճամպրուկներն են: Այո՛, այո՛, ճիշտ  
այդպես: Տարօրինակ ախպ էր: Միշտ ձեռ էր առնում իմ  
ճամպրուկները: Ասում էր, թե շափից դուրս շատ են նոր և  
խիտ քաղքենիական են: Գա նրա սիրած բառն էր: Ինչ-որ  
տեղ լսել էր ու յուրացրել: Ինչ որ ունեի, բոլորը «քաղքենիա-  
կան» էր համարում: Նույնիսկ ինքնահաս քաղքենիական էր:  
Նա միշտ վերցնում էր ինձնից ու, միևնույն է, էլի քաղքե-  
նիական էր համարում: Մենք ընդամենը երկու ամիս ապ-  
րեցինք միասին: Իսկ հետո երկուսս էլ խնդրեցինք, որ մեզ  
տեղափոխեն: Եվ ծիծաղելին այն է, որ, երբ բաժանվեցինք,  
շատ էի կարոտում նրան, որովհետև նա իսկապես հումորի  
զգացում ուներ, ու մենք հաճախ էինք լավ զվարճանում:  
Իմ կարծիքով, նա էլ ինձ էր կարոտում: Սկզբում նա միայն  
ձեռ էր առնում ինձ, իրերս համարում քաղքենիական, իսկ  
ես ուշադրություն էլ չէի դարձնում դրա վրա, նույնիսկ ծի-  
ծաղում էի: Բայց հետո տեսա, որ նա չի կատակում: Բանն  
այն է, որ դժվար է մի սենյակում ապրել մարդու հետ, եթե  
քո ճամպրուկները անհամեմատ լավն են, քան նրանը, եթե  
քո ճամպրուկները իսկապես հրաշալի են, իսկ նրանը՝ ոչ:  
Դուք կասեք, եթե մարդը խելացի է և համորի զգացում ունի,  
ուպա նրա համար՝ թքած: Դրա համար էլ տեղափոխվեցի այդ  
բուժ անասունի՝ Ստրեզլիթերի մոտ: Համեմայն դեպ, նրա  
ճամպրուկները իմից վատը չէին:

Մի խոսքով այդ միանձնուհիները նստեցին ինձ մոտ, ու  
մենք զրույցի բանվեցինք: Կողքիս նստածը ծղու՛ծ զամբյուղ  
սաներ. այդպիսի միանձնուհիները և Փրկության բանակի

կույսերը սովորաբար փող են հավաքում Սննդյան տոների կապակցութեամբ: Միշտ կանգնած են լինում փողոցի անկյուններում, հատկապես՝ Հինգերորդ ավենյուի անկյունում, մեծ խանութների մոտ: Կողքիս նստածը հանկարծ զցեց զամբյուղը, իսկ ես կուացա ու վերցրի: Հարցրի, թե բարեգործական նպատակներով հավաքո՞ւմ է: Նա պատասխանեց՝ ոչ: Պարզապես զամբյուղը չի տեղավորվել ճամպրուկում, ստիպված ձեռքում է պահում: Նա այնպես սիրալիր էր ծպտում, նայում էր ու ծպտում: Քիթը երկար էր և մետաղե շրջանակով ոչ այնքան գեղեցիկ ակնոց էր կրում, բայց դեմքը անսահման բարի էր:

— Ուզում էի ասել, եթե դրամ եք հավաքում, ես էլ կարող էի մի փոքրիկ գումար զոհաբերել, — ասում եմ: — Փուք վերցրեք, երբ հավաքելիս կլինեք, սա էլ կավելացնեք վրան:

— Օ՛, որքան սիրալիր եք դուք, — ասաց նա, իսկ մյուսը՝ նրա ուղեկցուհին, նույնպես նայեց ինձ: Մյուսը սուրճ էր խմում ու գիրք կարդում, Աստվածաշնչի նման, բայց շատ բարակ մի գրքույկ: Նախաճաշի համար նրանք Պիայն տոստով սուրճ էին վերցրել: Ես հուզվեցի: Ատում եմ ամեն տեսակ ապխտով ձվածեղն ու մյուս բաները, երբ կողքիդ նրսածը միայն տոստով սուրճ է խմում:

Նրանք ինձնից տասը դոլլար ընդունեցին: Անվերջ հարցնում էին, թե ես կարո՞ղ եմ նման բան թույլ տալ: Ասացի, որ բավականաչափ փող գնեմ, բայց նրանք ինչ-որ չէին հավատում: Այնուամենայնիվ, փողը վերցրին: Ու այնպես էին երկուսն էլ շնորհակալություն հայտնում, որ ես վառ զգացի: Խոսակցության նյութը փոխեցի ու հարցրի, թե ուր են գնում: Ասացին, որ ուսուցչուհիներ են, եկել են Չիկագոյից, մտադիր են դասավանդել ինչ-որ գիշերօթիկում, չգիտեմ Հարյուրվաթսուներորդի, թե Հարյուրութսուներորդի վրա, մի խոսքով, ինչ-որ գրողի ծոցում: Կողքիս նստած ակնոցավորը, պարզվեց, անգլերեն էր դասավանդում, իսկ ընկերուհին՝ պատմություն և ամերիկյան սահմանադրություն: Ես ուղղակի այրվում էի հետաքրքրասիրությունից, թե այդ ինչպես է, որ անգլերենի ուսուցչուհին միանձնուհի է և, այնուամենայնիվ, որոշ գրքեր է կարդում անգլիական գրականությունից: Ոչ թե անվայել գրքեր, ես գրանց մասին չեմ

ասում, այլ գրքեր, որտեղ սեր կա, սիրահարներ, ընդհանրապես նման բաներ: Վերցնենք, օրինակ, Քոմաս Հարդիր «Վերադարձ հայրենիք» գրքի Յուստասիա Վեյնի: Այդտեղ առանձնապես կրքեր չկան, բայց, այնուամենայնիվ, հետաքրքիր է՝ ի՞նչ է մտածում միանձնուհին Յուստասիայի մասին կարդալիս: Ես, իհարկե, ոչինչ չհարցրի, բայց ասացի որ ամենից լավ անգլիական գրականությունն եմ սովորել:

— Ի՞նչ եք ասում, որքան հաճելի է, — ուրախացավ անգլերենի ուսուցչուհին, ա՛յն, որ ակնոցով էր: — Ի՞նչ եք կարդացել այս տարի: Շատ հետաքրքիր է իմանալ:

Բարեհամբու՛ր, բարի՛:

— Դե, ինչ ասեմ, թերևս ավելի շատ անգլոսաքսերին, գիտե՞ք, Բեովուլֆին, Գրենդելին և «Մենդալ, որդիս», դե, բոլորը, ինչ պետք էր կարդալ: Բայց մեզ տնային ընթերցանություն էլ էին հանձնարարում ու դրա համար առանձին գնահատական էին դնում: Քոմաս Հարդիր «Վերադարձ հայրենիքը», «Ռոմեոն և Ջուլիետը», «Հուլիոս Կես...»

— Ա՛խ, «Ռոմեոն և Ջուլիետը», սքանչելի է, երևի, ձեզ շատ դուր եկավ: — Նա բոլորովին էլ միանձնուհու նման չէր յստում:

— Այո, շատ-շատ դուր եկավ: Որոշ բաներ իսկի դուր չեկան, բայց ընդհանրապես շատ հուզիչ է:

— Ձեզ ի՞նչը դուր չեկավ: Չե՞ք կարող հիշել, թե հատկապես ինչը:

Անկեղծ ասած, մի տեսակ անհարմար էի զգում նրա հետ քննարկել «Ռոմեոն և Ջուլիետը»: Չէ՞ որ այդ պիեսում շատ տեղեր կան սիրո և այլ բաների մասին, իսկ նա, համենայն զեպս, միանձնուհի էր, բայց դե ինքը հարցրեց, և ես ստիպված եղա պատմել:

— Գիտե՞ք, ես հիացած չեմ հենց Ռոմեոյով ու Ջուլիետով, — ասում եմ, — այսինքն՝ նրանք ինձ դուր են գալիս, բայց, այնուամենայնիվ... ինքս էլ չգիտեմ: Երբեմն ուղղակի վրդովվում ես: Ուզում եմ ասել, որ ավելի շատ խղճացի, երբ սպանեցին Մերկուցիոյին, քան երբ մեռան Ռոմեոն և Ջուլիետը: Հասկանո՞ւմ եք, Ռոմեոն այլևս ինձ դուր չէր գալիս, երբ այդ խեղճ Մերկուցիոյին սուսերով ծակեց Ջուլիետի այդ զարմիկը, մոռացել եմ անունը...

— Տիրալզը:

— Ճիշտ է, Տիրալզը: Միշտ մոռանում եմ գրա տնունը: Իսկ մեղավորը Ռոմեոն էր: Ինձ բոլորից շատ այդ Մերկուցիոն է դուր գալիս: Ինքս էլ չգիտեմ ինչու: Իհարկե, այդ բոլոր Մոնտեբրիներն ու Կապուլետիները նույնպես ոչինչ, հատկապես Ջուլիետը, բայց Մերկուցիոն... Չէ, դժվարանում եմ բացատրել: Նա այնքան խելացի էր, ուրախ: Հասկանո՞ւմ եք, կատաղում էմ, որ այդպիսի մարդկանց սպանում են, այդպիսի ուրախ, խելացի մարդկանց, այն էլ ուրիշի մեղքով: Թո՛մեոյի և Ջուլիետի բանն ուրիշ է, նրանք իրենք են մեղավոր:

— Դուք ո՞ր դպրոցում եք սովորում, բարեկամս, — հարցնում է նա. երևի ձանձրացած Ռոմեոյի և Ջուլիետի մասին լսելուց:

Ասում եմ՝ Փենսիլան: Պարզվում է, նա լսել է այդ դպրոցի մասին: Ասաց, որ հիանալի դպրոց է: Ես լսեցի: Այդ ժամանակ, նրա ընկերուհին, որ պատմության և սահմանադրություն էր դասավանդում, հիշեցրեց, որ իրենց գնալու ժամանակն է: Ես վերցրի նրանց շեկը, բայց նրանք թույլ չտվին վճարել իրենց կերածի համար: Ակնոցավորը շեկը խելից ձեռոյիցս:

— Ասանց այդ էլ դուք չափից դուրս ձեռնառատ գտնվեցիք, — ասաց: — Դուք զարմանալի սիրալիր տղա եք: — Նա ինքք շատ լավն էր: Մի փոքր հիշեցնում էր էսնեստ Մոնոուի մորը, որի հետ ճամփորդել էի գնացքով: Հատկապես ժպտալիս: — Այնքան հաճելի էր ձեզ հետ զրուցել, — ավելացրեց նա:

Ասացի, որ ինձ համար էլ հաճելի էր, ու չէի ձեռացնում: Բայց շատ ավելի հաճելի կլիներ զրուցել, եթե չվախենայի, որ հանկարծ կարող են ինձ հարցնել, թե կաթոլիկ եմ արդո՞ր: Կաթոլիկները միշտ ջանք են թափում պարզել՝ կաթոլիկ ես դու, թե չէ: Ինձ հետ հաճախ է պատահում, գրլխավորապես այն պատճառով, որ ազգանունս իռլանդական է, իսկ իռլանդացիները մեծ մասամբ ծագումով կաթոլիկ են: Ի դեպ հայրս էլ առաջ կաթոլիկ է եղել: Իսկ հետո, երբ ամուսնացել է մորս հետ, թողել է դա: Բայց կաթոլիկները ընդհանրապես միշտ ջանում են պարզել՝ կաթոլիկ ես դու, թե չէ, նույնիսկ եթե ազգանունդ չգիտեն: Ես մի կաթոլիկ ծա-

նոթ ունեի՝ լուի Գորմանը, նրա հետ Հուտտոնի զպրոցում էի սովորում: Առաջինը այնտեղ նրա հետ ծանոթացա: Մենք կողք-կողքի նստած՝ բժշկի մոտ մտնելու համար հերթի էինք նպաստում, պարապմունքների առաջին օրն էր, սպասում էինք բժշկական քննության ենթարկվելու և զրուցում էինք թնկաթ մասին: Նա շատ էր տարված թենիսով, և՛ նույնպես: Ասում էր, որ ամեն ամռան լինում է Ֆորեստ-Հիլլի մրցումներին, ասացի, որ ես էլ եմ լինում, իսկ հետո սկսեցինք քննարկել, թե ով է լավագույն խաղացողը: Իր տարիքի համար նա շատ լավ էր գլուխ հանում թենիսից: Լրջորեն հետաքրքրվում էր Իսկ հետո առանց որևէ կապի հարցրեց. «Գու չգիտե՞ս, որտեղ է կաթոլիկական եկեղեցին»: Նրա տոնից անմիջապես հասկացա, որ ուզում է իմանալ՝ ես կաթոլիկ եմ թե ոչ: Ուզում է իմանալ: Եվ ոչ թե նախապատվություն էր տալու կաթոլիկներին, ո՛չ, պարզապես ուզում էր իմանալ: Նա հաճույքով էր խոսում թենիսի մասին, բայց անմիջապես երեւում էր, որ այդ զրույցը նրան ավելի մեծ հաճույք կպատճառեր, եթե իմանար, որ ես կաթոլիկ եմ: Այդպիսի բաներն ուղղակի կատաղեցնում են ինձ: Չեմ ուզում ասել, որ գրեթե պատճառով մեր ամբողջ զրույցը գրողի ծոցը գնաց, չէ՛, զրույցը շարունակվում էր, բայց մի տեսակ ոչ այնպես: Ահա թե ինչու ուրախացա, որ միանձնուհիները ինձ շահարթին՝ կաթոլիկ եմ, թե ոչ: Գուցեև գա շխանգարեր մեր զրույցին, բայց, այնուամենայնիվ, ամեն ինչ այլ կերպ կընթանար: Ես բռնորոպին շեմ մեզագրում կաթոլիկներին: Գուցե, եթե ես էլ կաթոլիկ լինեի, ես էլ հարցնեի: Ընդհանրապես, սա ինչ-որ շափով նման է ճամպրուկների, այն պատմությունը, որ պատմեցի: Ես միայն ուզում եմ ասել, որ իսկական ջերմ զրույցին նման բաները միայն խանգարում են: Ուրիշ ոչինչ:

Իսկ երբ միանձնուհիները ոտքի ելան և ուզում էին գնալ, ես հանկարծ մի հիմար անշնորհք արարք թույլ տվի: Միդոթեոս էի ծխում, ու երբ ոտքի ելա, որպեսզի նրանց հրաժեշտ տամ, անզգուշորեն ծուխը փչեցի ուղիղ նրանց աչքերի մեջ: Միանգամայն անզգուշարար: Գժի պես սկսեցի ներողություն խնդրել, իսկ նրանք շատ սիրալիրությամբ ընդունեցին իմ ներողությունները, բայց միևնույն է, սոսկալի անհարմար բան ստացվեց:

Երբ նրանք գնացին, ես ափսոսացի, որ ընդամենը տասը դուլար տվեցի բարեգործութեան համար: Բայց այլ կերպ հնարավոր չէր. պայմանավորվել էի Սալլի Հեյսի հետ ցերեկային ներկայացում գնալ, դրա համար էլ չպետք է ծախսեի բոլոր փողերս: Բայց, միեւնույն է, վրդովվեցի՝ Գրողը տանի այդ փողերին: Միշտ գրանց պատճառով տրամադդութունդ ընկնում է:

16

Ժամը տասներկուսին մոտ էր, երբ ավարտեցի նախաճաշս, իսկ Սալլիին պետք է հանդիպեի երկուսին, դրա համար էլ որոշեցի մի քիչ զբոսանել: Այդ երկու միանձնուհիները դուրս չէին գալիս ուղեղիցս: Անվերջ աչքիս առաջ էր ծղոտե հին զամբյուղը, որով նրանք գնում էին մանրագրամ հավաքելու, երբ դասեր չէին ունենում: Զանում էի պատկերացնել, թե ինչպես մայրս կամ մեր ծանոթներից որևէ մեկը, մորաքույրս կամ այդ թեթևաուկը՝ Սալլի Հեյսի մայրը, հանրախանութի մոտ կանգնած, փող են հավաքում աղքատների համար, մաշված ծղոտե զամբյուղով: Նույնիսկ դժվար է պատկերացնել: Իմ մայրիկին դեռ կարելի է մի կերպ պատկերացնել: Իսկ այն երկուսին՝ չէ: Թեև մորաքույրս հաճախ է զբաղվում բարեգործութեամբ (և՛ կարմիր խաչով, և՛ այլ բաներով), բայց նա միշտ հրաշալի հագնված է, երբ բարեգործութեամբ է զբաղվում, դարձյալ հրաշալի հագնված է լինում, շրթունքները ներկված ու ամեն ինչ տեղը տեղին: Իսկ չէի կարողանում պատկերացնել, որ նա կարող է զբաղվել բարեգործութեամբ, եթե հարկ լիներ միանձնուհու պարեգոտ հագնել ու շնորհել շրթունքները: Իսկ Սալլիի մայրիկը: Տեր աստված, նա կհամաձայներ գավաթը ձեռքին շրջել ու փող հավաքել, միայն եթե յուրաքանչյուր փող տվող համաձայներ քծնել նրան: Իսկ եթե մարդիկ պարզապես փողը գցեին ու թողնեին գնային առանց մի խոսք ասելու, առանց նրան ուշադրության արժանացնելու, ապա նա մի ժամ հետո կհրաժարվեր այդ գործից: Անմիջապես կձանձրանար: Գավաթը կհանձներ ու կգնար մի որևէ շքեղ ուեստորանում ճաշելու: Դրա համար էլ ինձ դուր էին գալիս այդ միանձնուհիները:



Անմիջապես երևում է, որ նրանք երբեք չեն ճաշում շքեղ ռեստորաններում: Ու տրամադրութունս ընկալ, երբ մտածեցի, որ նրանք երբեք չեն ճաշի շքեղ ռեստորաններում: Հասկանում էի, որ դա այնքան էլ կարևոր չէ, բայց միևնույն է, տխրեցի:

Ես Բրողվեյ գնացի, պարզապես հաճույքի համար, հարյուր տարի կլինեիր, որ այնտեղ չէի եղել: Բացի այդ, գրամոֆոնի ձայնապնակների խանութ էի որոնում, որը կիրակի օրերը բաց է լինում: Ուզում էի Ֆիրիի համար մի ձայնապնակ գնել՝ «Պատլիկ Շերլի Բինզը»: Այդ ձայնապնակը շատ դժվար էր ճարվում: Դա մի փոքրիկ աղջնակի մասին է, որն ամաշում է տնից դուրս գալ, որովհետև ատամներն ընկել են: Ես այդ երգը Փենսիում էի լսել, մի տղայի մոտ, որ ինձնից մի հարկ վերևում էր ապրում: Ուզում էի նրանից գնել այդ ձայնապնակը, գիտեի, որ իմ Ֆիրին ուրախութունից ուղղակի կգժվի, բայց նա չվաճառեց: Ցնցող ձայնապնակ էր, թեև արդեն մաշված, քսան տարի առաջ այն երգել էր նեգրուհի էսթելա Ֆլետչերը: Նա երգում էր հարավային ձևով, նույնիսկ փողոցային ձևով, որից երգը բոլորովին նվնվան ու ողբաձայն չէր դառնում: Եթե սովորական սպիտակամորթ կրգուհի երգեր, հավանաբար, կնվնվար, բայց այդ էսթելա Ֆլետչերը իր գործը գիտեր: Կյանքումս նման հրաշալի ձայնապնակ չեմ լսել: Որոշեցի, որ ձայնապնակը կգնեմ մի որևէ խանութում, որտեղ կիրակի օրերին էլ են առևտուր անում, իսկ հետո կտանեմ գրոսայգի: Կիրակի օրերին Ֆիրին հաճախ է գնում գրոսայգի, այնտեղ շմուշկներով սահում է: Դիտեի որտեղ է լինում սովորաբար:

Եղանակն ափելի տաքացավ, քան երեկ, բայց արևը չէր երևում, և դրոսներն այնքան էլ հաճելի չէր: Ինձ միայն մի բան էր դուր գալիս: Իմ առջևից մի ամբողջ ընտանիք էր քայլում, հավանաբար, հկեղեցուց էին դուրս եկել, հայրը, մայրը և մոտ վեց տարեկան մի տղա: Երևում էր, որ բավական աղքատ էին: Հոր գլխին բաց գորշագույն շլյապա էր: Նման գլխարկներ աղքատներն էին կրում, երբ ցանկանում էին զարդարվել: Նա քայլում էր կնոջ հետ ու գրուցում, իսկ տղայի վրա ոչ մի ուշադրություն չէին դարձնում: Իսկ տղան հիանալի երեխա էր: Նա քայլում էր ոչ թե մայթով, այլ

ճայթեղրի երկարութեամբ սալարկի վրայով: Նա շանում էր ուղիղ գծի վրայով քայլել: Երեխաները սիրում են այդպես քայլել: Գնում էր ու իր համար քթի տակ կրգում: Ծս դիտմամբ շատ մտտեցա, որպեսզի լսեմ ինչ է կրգում: Նա այսպիսի կրգ էր կրգում. «Ծթե դու մեկին բռնել ես երեկոյան տարեկանի արտում...» Չայնն էլ շատ հետաքրքիր էր: Երգում էր սեփական հաճույքի համար, դա պարզ զգացվում էր: Մեքենաներն անցնում են կողքից, արգելակում այնպես, որ ճոճում են արգելակները, ծնողները ոչ մի ուշադրութուն չեն դարձնում, իսկ նա իր համար քայլում է ճամփեկրով ու կրգում. «Երեկոյան տարեկանի արտում...» Տրամադրութունս բարձրացավ:

Քրոդվեյում մարդիկ հրմշտում էին իրար, ազմկում: Կիրակի էր, բոլորը գնում էին կինո «Պարամաունտ» կամ «Աստոր», «Սթրենդ» կամ «Կապիտոլի», մի խոսքով, որևէ մարդաշատ վայր: Բոլորը զարդարվել էին: Կիրակի էր: Ու դա ավելի զզվելի էր: Իսկ ամենազզվելին այն էր, որ անհամբեր շտապում էին կինո: Երանց նայելուց սիրտ էր խառնում: Ծս դեռ հասկանում եմ, երբ կինո են գնում տեգործութունից, բայց զզվելի է մտածել, որ մարդիկ վազում են, շտապում, որովհետև իսկապես ուզում են կինո ընկնել: Հատկապես, երբ միլիոնավոր մարդիկ հերթի են կանգնել մի ամբողջ թաղամաս երկարութեամբ, որպեսզի տոճս գնեն, ինչպիսի համբերութուն է հարկավոր: Ծս շեղարդացա սպասել, այնպես էի ուզում հեռանալ այդ անիծյալ Քրոդվեյից:

Բայց իմ բախտը բերեց: Քրամձայնապնակների առաջին իսկ խառնութեամ ես ձեռք բերի «Պատիկ Շերլի Բինզը»: Հինգ դոլլար պոկեցին ինձնից, հազվադեպ ձայնապնակ էր, ես շափստացի: Այնպես ուրախացա, որ չէի դիմանում, ուզում էի շուտ հասնել զրոսայզի և ձայնապնակը տալ քրոջս:

Քուրս եկա խառնութից: Մի սրճարան պատահեց, ներս մտա: Մտածեցի՝ չզանգահարե՞մ Ջեյնին, գուցե նա արդեն տուն է վերադարձել արձակուրդին: Մտա ավտոմատ աւ զանգահարեցի: Քծրախտաբար, հեռախոսին մտտեցավ մայրը, ստիպված եղա կախել լուսափողը: Երկար-բարակ խոսելու տրամադրութուն չունեի: Առհասարակ չեմ սիրում ազդիկնե-

րի մայրերի հետ խոսել: Այնուամենայնիվ, հարկավոր էր հարցնել, թե տա՞նն է արդյոք Ջեյնը: Դրանից ես չէի մեռնի: Բայց, չգիտեմ ինչու, շուգեցի: Այդպիսի խոսակցությունների համար տրամադրութուն է պահանջվում:

Սակայն հարկավոր էր այդ անիծյալ թատրոնի տոմս ճարել, ստիպված եղա թերթ գնել և նայել, թե որտեղ ինչ է գնում: Կիրակի օրվա կապակցությամբ բեմադրվում էին միայն երեք պիես: Ծա մոտեցա և երկու տոմս գնեցի «Ծա գիտեմ սերը» ներկայացման համար: Բարեզործական ներկայացում էր հօգուտ ինչ-որ բանի: Առանձնապես ցանկութուն շունեի այդ պիեսը գիտելու, բայց գիտեի, որ Մալլին ապրել չի կարող առանց կոտրատվելու, անպայման հիացմունք կարտահայտի, երբ ասեմ, որ պիեսում մասնակցում են Լանտերը<sup>1</sup>: Մալլին պաշտում է լուրջ և նրբաճաշակ համարժող պիեսները, Լանտերի մասնակցությամբ և այլն: Իսկ ես չեմ սիրում: Ընդհանրապես, անկեղծ ասած ես այնքան էլ չեմ սիրում թատրոն գնալ: Ենթե, կի՛նոն ավելի վատ է, բայց դե թատրոնում էլ ոչ մի լավ բան չկա: Նախ՝ ես ատում եմ դերասաններին: Նրանք բեմի վրա իրենց բուլբուլին մարդու նման չեն պահում: Միայն երեակայում են, թե նման են՝ Լավ դերասանները երբեմն բավական նման են լինում, բայց ոչ այնքան, որ հետաքրքիր լինի նայել: Բացի այդ էլ, եթե դերասանը լավն է, անմիջապես երևում է, որ նա այդ բանը գիտակցում է, իսկ դա անմիջապես փշացնում է ամեն ինչ: Վերցնենք, օրինակ, սբր Լոուրենս Օլիվյեին<sup>2</sup>: Ծա նրան տեսել եմ «Համլետում»: Գ. Թ.-ն անցյալ տարի ինձ ու Ֆրիթին տարավ նայելու:

Յկզբում նա մեզ տարավ նախաճաշելու, իսկ հետո՝ կի՛նո: Նա արդեն տեսել էր «Համլետը» ու նախաճաշի ժամանակ այնպես էր պատմում դրա մասին, որ ես մեծ ցանկութուն ունեցա գիտելու: Բայց ընդհանրապես ինձ դուր չեկավ: Չեմ հասկանում, ի՞նչ մի առանձնահատուկ բան կա այդ Լոու-

1. Ալֆրեդ Լանտեր և նրա տիկին Լին Յոնտանը ՔՄՆ-ի հանրահայտ գրամատիկ դերասաններ են:

2. Անգլիացի նշանավոր արտիստ, որ եկարահանվել է բազմաթիվ ֆիլմերում:

բենս Օլիվյի մեջ: Չայնը ցնցող է, նա չափից դուրս գեղեցիկ է, և հաճելի է նրան նայել, երբ քայլում է կամ մենամարտում, բայց բոլորովին այնպիսին չէր, ինչպիսին Դ. Բ-ի ասելով պետք է լիներ Համլետը: Նա ավելի շատ նման էր մի որևէ գեներալի, քան մի քիչ խախտված տարօրինակություններով մարդու: Այդ ֆիլմում ինձ ամենից շատ դուր էր գալիս այն մասը, երբ Օֆելյայի եղբայրը, նա, որ վերջում մենամարտում է Համլետի հետ, մեկնում է, իսկ հայրը նրան բազմապիսի խորհուրդներ է տալիս. մինչ հայրը նրան տալիս է այդ խորհուրդները, Օֆելյան ամբողջ ընթացքում խաղում է, մեկ նրա դաշույնն է դուրս քաշում պատյանից, մեկ ծաղրում է նրան, իսկ նա շանում է ձևացնել, թե ուշադիր լսում է հիմար խորհուրդները: Այդ մասը շատ լավ էր: Ինձ շատ դուր եկավ: Բայց նման տեղեր քիչ կային: Իսկ քրոջս՝ Ֆիբիին, դուր էր եկել միայն, երբ Համլետը շոյում է շանը: Նա ասաց՝ ի՞նչ հետաքրքիր է, ի՞նչ լավ շուն է, և իսկապես շատ լավ շուն էր: Այնուամենայնիվ, ստիպված կլինեմ կարգու: «Համլետը»: Վատն այն է, որ պիեսը անպայման պետք է կարդամ ինքս ինձ համար: Երբ դերասանը խաղում է, ես գրեթե բան չեմ լսում: Անընդհատ վախենում եմ, որ նա հիմա կսկսի ծովախալի ու ընդհանրապես ամեն ինչ անել ցուցադրաբար:

Լանտերի մասնակցությամբ ներկայացման տոմսեր գնեցի, հնոտ տաքսի նստեցի ու գնացի զբոսայգի: Հարկավոր էր մետրոյով գնալ, մոտս քիչ փող էր մնացել, բայց գե ուզում էի որքան հնարավոր է շուտ աղատվել այդ երիցս անիծյալ Բրոդվեյից:

Զբոսայգում գարշելի էր: Այնքան էլ ցուրտ չէր, բայց արեւը դուրս չէր գալիս, և շուրջն առհասարակ ոչ ոք չկար՝ միայն շների ոտնահետքեր էին, թքահետքեր ու մեկ էլ ծխախոտի մնացորդներ այն նստարանների մոտ, որոնց վրա ծերունիներ էին նստել: Թվում էր, թե բոլոր նստարանները ամբողջովին թաց են, ու եթե նստես, խոնավությունը կներծծվի քո մեջ: Ես շատ տխուր էի, նույնիսկ երբեմն դող էր անցնում մարմնովս: Բոլորովին չէր զգացվում, թե շուտով սկսվելու են Մենդյան տոները, ընդհանրապես թվում էր, թե երբեք այլևս ոչինչ չի լինելու: Այնուամենայնիվ, ես հասա

վազբուզուն: Ֆիրին միշտ այնտեղ է գնում. նա սիրում է նվազախմբին մոտիկ սահել: Միփաղելի է, որ ես էլ էի սիրում այնտեղ սահել, երբ փոքրիկ էի:

Բայց երբ մոտեցա վազբուզուն, Ֆիրին այնտեղ չէր: Ինչոր երեխաներ կային, որ սահում էին, տղաները գնդակ էին խաղում, բայց Ֆիրին չկար: Հանկարծ ես մի աղչնակ տեսա նրա տարիքին, նստարանին նստած՝ շմուշկներն էր ամրացնում: Մտածեցի, գուցե ճանաչում է Ֆիրին և կասի, թե նրան որտեղ փնտրեմ, ու մոտեցա նստեցի կողքին:

— Պատահամա՞ր դու շե՞ս ճանաչում Ֆիրի Քուլֆիլդին:

— Ո՞ւմ,— հարցնում է: Նրա հագին տարատ էր և մի քսան հատ սվիտեր: Երևում էր, որ նրա սվիտերները տան էին գործում, այնպես անճոռնի էին, մեծ-մեծ:

— Ֆիրի Քուլֆիլդին: Ապրում է Յոթանասունմեկերորդ փողոցում: Չորրորդ դասարանում է սովորում:

— Իսկ դուք ճանաչո՞ւմ եք Ֆիրին:

— Դե, իհարկե: Ես նրա եղբայրն եմ: Զգիտե՞ս որտեղ է նա:

— Նա միսս Քելլոնի դասարանի՞ց է,— հարցնում է աղջիկը:

— Զգիտեմ: Կարծեմ, այո:

— Նշանակում է, հիմա նրանք թանգարանում են: Մեր դասարանը անցյալ շաբաթ է գնացել:

— Ո՞ր թանգարանում,— հարցնում եմ:

Նա ուսերն է թոթվում:

— Զգիտեմ,— ասում է,— պարզապես թանգարանում:

— Հասկանում եմ, բայց դա այն թանգարանո՞ւմ է, որտեղ նկարներ են, թե՞ որտեղ հնդկացիներ են:

— Որտեղ հնդկացիներ են:

— Շատ շնորհակալություն:

Ես ելա, ուզում էի գնալ, բայց հանկարծ հիշեցի, որ այսօր կիրակի է:

— Ախր այսօր կիրակի է,— ասում եմ ես այդ աղջկան: Նա նայեց ինձ:

— Ըհը՛: Ուրեմն այնտեղ չեն:

Նրան ոչ մի կերպ չէր հաջողվում ամրացնել շմուշկը: Ձեռնոցներ չունեի, թաթիկները կարմրել էին, սատել: Ես

օգնեցի պատեի շմուշկը: Գրողը տանի, հարյուր տարի կլինի, բանալին ձեռքս չեմ առել: Բայց դա ոչինչ չի նշանակում: Հիսուն տարի հետո էլ կարելի է շմուշկի բանալին իմ ձեռքը տալ, թեկուզ խավարում, ու ես անմիջապես կիմանամ, թե դա ինչ բան է: Աղջիկը շնորհակալություն հայտնեց, որ ամբողջի շմուշկը: Քաղաքավարի աղջիկ էր, բարեհամբույր: Շատ հաճելի բան է, երբ այդպիսի փոքրիկին օգնում ես ամբացնել շմուշկը, ու նա քեզ ասում է՝ «շնորհակալություն», այնպես քաղաքավարությամբ, սիրալիր:

Փոքրիկներն առհասարակ բոլորն էլ շատ լավն են: Ես երան հարցրի, թե չի՞ ուզում արդյոք տաք շոկոլադ խմել, ես պատասխանեց՝ շնորհակալություն, չեմ ուզում: Ասաց, որ ընկերուհին սպասում է իրեն: Այդ փոքրիկներին միշտ որևէ մեկն սպասում է: Շատ հետաքրքիրն են:

Թեև օրը կիրակի էր ու Ֆիբին իր դասարանի հետ թանգարան չէր գնացել, ու թեև գարշելի եղանակ էր, խոնավ, այնուամենայնիվ, ես ամբողջ զբոսայգու երկարությամբ գնացի դեպի ազգագրական թանգարան: Դրա մասին էր ասում աղջնակը: Ես այդ թանգարանային էքսկուրսիաներն անգիր գիտեի: Ֆիբին սովորում էր այն նույն տարրական դպրոցում, որտեղ հաճախում էի ես փոքր ժամանակս, ու մենք միշտ գնում էինք այդ թանգարանը: Մեր ուսուցչուհի միսս էգլետինգերը գրեթե ամեն շաբաթ օր մեզ տանում էր այնտեղ: Երբեմն կենդանիներ էինք նայում, երբեմն հնդկական զանազան իրեր՝ ամանեղեն, ծղոտե զամբյուղներ և այլ շատ բաներ: Նույնիսկ հիմա էլ հաճույքով եմ հիշում այդ թանգարանը: Հիշում եմ, թե ինչպես հնդկական իրերի դիտումից հետո մեզ համար որևէ կինոնկար էին ցուցադրում մեծ լսարանում: Կոլումբոսի մասին: Սովորաբար ցույց էին տալիս, թե Կոլումբոսն ինչպես հայտնագործեց Ամերիկան, թե ինչպես տանջվեց, մինչև որ կարողացավ Ֆերդինանդից ու Իզաբելլայից փող պոկել նավերի համար, իսկ հետո նավաստիները խռովություն բարձրացրին նրա դեմ:

Կոլումբոսն առանձնապես ոչ ոքի չէր հետաքրքրում, բայց երեխաներն իրենց հետ սառնաշաքար ու ծամոն էին բերում, և դահլիճում հրաշալի բուրմունք էր տարածվում: Այնպիսի բուրմունք, ասես դրսում անձրև էր տեղում (թեև գուցե անձրև

չկար էլ), իսկ դու նստած ես այդտեղ, ու գա աշխարհիս միակ շոր ու տաքուկ անկյունն է: Շատ էի սիրում այդ հիմար թանգարանը, ազնիվ խոսք: Հիշում եմ, նախ մենք անցնում էինք հնդկական դահլիճով, հետո մտնում լսարան: Գա մի հակայական երկարուկ լսարան էր, և խոսելիս պետք է շշուշայիր: Ուսուցչուհին գնում էր առջևից, իսկ ամբողջ դասարանը նրա ետևից: Գնում էինք զույգերով: Ծա էլ իմ զույգն ունեի: Սովորաբար ինձ հետ կանգնեցնում էին մի աղջկա, որի անունը Գերտրուդա կեվինա էր: Նա միշտ բռնում էր ձեռքս, իսկ նրա ձեռքը խոնավ ու կաշուն էր: Գահլիճի հատակը քարից էր, ու եթե փոքրիկ խճաքարեր էիր ունենում ու հանկարծ գցում էիր ձեռքիցդ, դղրոցն աշխարհ էր բռնում, և ուսուցչուհին կանգնեցնում էր ամբողջ դասարանն ու մոտենում տեսնելու, թե ինչ է պատահել: Բայց երբեք չէր բարկանում մեր միսս էզլետինգերը: Հետո մենք անցնում էինք հնդկական երկարուկ նավակի մոտով, որ երբ «կադրիակից» ավելի երկարութուն կունենար, եթե դրանք շարեին իրար ետևից: Նավակում կային մոտ քսան հնդկացիներ, ոմանք թիավարում էին, ոմանք պարզապես կանգնած էին, նրանք կատաղի տեսք ունեին ու բոլորի դեմքերն էլ ներկված էին: Իսկ նավախելին նստած էր գիմակով մի սարսափելի տիպ: Գա նրանց կախարդն էր: Նրան նայելիս ես փշաքաղվում էի, բայց, այնուամենայնիվ, նա ինձ դուր էր դալիս: Ծվ հետո, երբ անցնելիս ձեռք ես տալիս ասե՛նք թիակին կամ մի որևէ այլ բանի, հսկիչն անմիջապես ասում է. «Ծրեխաներ, չի կարելի ձեռք տալ ոչ մի բանի», — բայց նրա ձայնը բարի է և ոչ թե ինչ-որ ոստիկանի ձայնի նման: Այնուհետև անցնում էինք ապակեպատ վիթխարի ցուցափեղկի մոտով, որտեղ հնդկացիները նստած փայտի կտորներ էին շփում, որպեսզի կրակ ստանան, իսկ մի հնդկուհի էլ գորգ էր գործում: Այդ կիները, որ գորգ էր գործում, կուացել էր, ու երևում էր կուրծքը: Մենք բոլորս նայում էինք նրան, նույնիսկ աղջիկները: Նրանք դեռևս փոքրիկ էին ու դեռևս կուրծք չունեին, ինչպես տղաները: Իսկ անմիջապես լսարանի դռան մոտ դրված էր էսկիմոսը: Նա նստած էր լճի սառցանցքի մոտ և ձուկ էր որսում: Սառցանցքի կողքին ընկած էին նրա բռնած երկու ձկները: Որքա՛ն այդպիսի ցուցափեղկեր կային այդ

Քանգարանում: Իսկ վերին հարկում ավելի շատ կային: այն-  
 տեղ եղջերունները շուր էին խմում առվակից, թռչունները շվում  
 էին հարավ՝ ձմեռելու: Ավելի մոտ գտնվող թռչունները խոր-  
 վիակներ էին, մետաղալարերից կախված, իսկ հեռվում գետ-  
 նը վողջները պարզապես նկարված էին պատի վրա, բայց  
 թվում էր, թե բոլորն էլ իրականում թռչում են դեպի հարավ:  
 Բայց այդ Քանգարանում ամենալավն այն էր, որ ամեն ինչ  
 մնում էր իր տեղում: Չէր շարժվում: Կարելի էր հազար ան-  
 գամ էլ գալ, և էսկիմոսը միշտ էլ ձուկ էր բռնում ու երկուսն  
 արդեն բռնել էր, թռչունները թռչում էին հարավ, եղջերու-  
 ները շուր էին խմում առվից և նրանց եղջուրները միշտ այն-  
 պես գեղեցիկ էին, իսկ ոտքերն այնպես բարակ, և այդ մերկ-  
 կուրծք հնդկուհին միշտ գործում հա գործում էր միևնույն  
 գորգը: Ոչինչ չէր փոխվում: Փոխվում ես միայն ինքդ: Եվ ոչ  
 թե այնպես, որ միանգամից մեծանում ես: Չէ, դա չէ: Փա  
 փոխվում ես, և ուրիշ ոչինչ: Մեկ նոր վերարկու ես հագնել,  
 մեկ ուրիշ ընկերոջ հետ ես եկել, որովհետև նախորդ ըն-  
 կերդ հիվանդացել է թութեշով: Կամ միսս էգլետինգերի  
 փոխարեն մեկ այլ ուսուցիչ է առաջնորդում ձեզ: Քանգարան,  
 կամ առաջնայան լսել ես, թե հայրիկդ ու մայրիկդ ինչպես  
 էին վիճում լողարանում, կամ փողոցում չրափոս ես տեսել,  
 որի վրա տարածվել էին բենզինի երփներանգ բծերը: Մի  
 խոսքով, դու ինչ-որ շափով այլևս այն չես. ես չեմ կարող  
 ինչպես հարկն է բացատրել, թե հատկապես ինչ: Իսկ գուցե  
 կարող եմ, բայց չեմ ուզում:

Ճանապարհին գրպանիցս հանեցի որսորդական գիսարկս  
 ու քաշեցի գլուխս: Գիտեի, որ ծանոթ մարդու չեմ հանդի-  
 պելու, և շատ խոնավ էր եղանակը: Ես քայլում էի, քայ-  
 լում ու մտածում, թե քույրիկս շաբաթ օրերը ինչպես է գնում  
 նույն Քանգարանը, որ ես էլ եմ գնացել: Մտածեցի, որ հիմա  
 նա դիտում է նույն բաները, ինչ որ ես եմ դիտել, ու ամեն  
 անգամ նա փոխվում է, դառնում ուրիշ մարդ: Այդ մտքերից  
 ոչ թե ավելի շատ ընկավ տրամադրությունս, այլ այդ ամենի  
 մեջ առհասարակ շատ քիչ ուրախ բան կար: Լավ կլիներ որոշ  
 բաներ առհասարակ չփոխվեին: Լավ կլիներ դրանք դնել  
 ապակեպատ ցուցափեղկում ու ձեռք չտալ: Գիտեմ, որ դա  
 անհնար է, բայց հենց դա էլ վատ է: Ես ամբողջ ժամանակ



գրա մատին էի մտածում, քանի զեռ ման էի գալիս զրոսաք գում:

Անցնելով խաղահրապարակի մոտով՝ ես կանգ առա առ նայեցի, թե երկու փոքրիկներ ինչպես էին ճոճվում տախտակի վրա: Մեկը շաղիկ էր, դրա համար էլ ես բռնեցի տախտակի այն ծայրից, որտեղ նիհարիկն էր նստած, որպեսզի նրանց հավասարակշռեմ, բայց անմիջապես էլ զգացի, որ խանգարում եմ, ու հեռացա:

Իսկ հետո շատ հիմար բան ստացվեց: Մոտեցա թանգարանին ու անմիջապես զգացի, որ ոչ մի տեսակ փողով ես այնտեղ չեմ կարող գնալ: Չէր քաշում ինձ, և վիրջ, մինչդեռ կտրել անցել էի ամբողջ զրոսայգին ու այնպե՛ս սպասել դրան: Իհարկե, եթե Ֆիրին այնտեղ լիներ, կմտնեի, բայց նա այնտեղ չէր: Ծվ ես տաքսի վերցրի թանգարանի մուտքի մոտից ու գնացի «Բիրթմոր» հյուրանոցը: Տրամադիր չէի գնալու, բայց արդեն պայմանավորվել էի Սայլի հետ:

17

Ես շատ շուտ հասա հյուրանոց, նստեցի կաշվե բազմուցին, ժամացույցի տակ, ու սկսեցի նայել աղջիկներին: Ես ապանսիոններում ու քոլեջներում արդեն սկսվել էր արձակուրդը, և հոլլում հարյուրավոր աղջիկներ էին հավաքվել, սպասում էին իրենց կավալերներին: Ոմանք նստել էին ոտքը ոտքին զցած, ոմանք՝ ուղիղ, ոմանք հրաշալի ոտքեր ունեին, ոմանք՝ այլանդակ, ոմանք հաճելի տեսք ունեին, ոմանց վրայից էլ անմիջապես երևում էր, որ տականք են, բավական է միայն մոտենաս: Ընդհանրապես հաճելի էր նայել նրանց, դուք ինձ հասկանո՞ւմ եք: Հաճելի էր ու նաև տխուր, որովհետև ամբողջ ժամանակ մտածում ես. իսկ ի՞նչ է լինելու սրանց բոլորի վերջը: Ասենք ավարտեցին իրենց քոլեջները, պանսիոնները: Ես կարծում էի, որ գրանց մեծ մասը կամուսնանա ինչ-որ գարշելի տիպերի հետ: Այնպիսի տիպերի, որոնք հենց միայն գելոխ գովել գիտեն, թե ժամում քանի մղոն կարող են կտրել իրենց հիմար մեքենայով, այդ ընթացքում ծախսելով ընդամենը մեկ գալոն վառելիանյութ: Այնպիսի տիպերի հետ, որոնք երեխայի պես խռովում են,

երբ նրանց տանում ես ոչ միայն գոլֆում, այլև պինգ-պոնգի նման հիմար խաղում: Շատ ստոր տիպերի հետ: Այնպիսի տիպերի հետ, որոնք կյանքում մի գիրք էլ չեն կարդացել: Սոսկալի ձանձրալի տիպերի հետ: Ասենք, դա հարաբերական հասկացողություն է, թե ում կարելի է ձանձրալի համարել, ում՝ ոչ: Ես դրանից բան չեմ հասկանում: Իսկապես, չեմ հասկանում: Երբ սովորում էի էլքտոն-հիլում, երկու ամիս ապրեցի մի տղայի հետ, որին անվանում էին Հարրիս Մաքլին: Նա շատ խելացի տղա էր, բայց նրանից ավելի ձանձրալի՝ մարդ աշխարհը դեռ չի տեսել: Նա սոսկալի ճոճոան ձայն ունեւր ու ամբողջ ժամանակ խոսում էր: Եվ ամենասոսկալին այն էր, որ երբեք որևէ հետաքրքիր բանի մասին չէր խոսում: Բայց մի բան շատ լավ էր կարողանում: Այդ սատանան շտենանված սուլում էր: Անկողինն էր կարգի բերում, թի իրերը կախում պահարանում (նա իրերը միշտ կախում էր պահարանում ու ինձ կատաղեցնում), մի խոսքով, որևէ բան էր անում ու հետն էլ սուլում, եթե իհարկե, գլուխդ չէր տանում իր ճոճոան ձայնով: Նա նույնիսկ դասական երաժշտություն էր կարողանում սուլել, բայց ամենից լավ ջազ էր սուլում: Մի որևէ չափից դուրս աշխույժ ջազ էր սուլում, ասենք՝ «Բլյուզ տանիքի վրա», ու իր լաթերը կախ տալիս կախարանից, այնպես հրաշալի էր սուլում, որ ուղղակի քեֆդ գալիս էր: Իհարկե, ես երբեք նրան չէի ասում, թե լավ է սուլում: Հո մարդու երեսին չես ասի՝ «Ինչ հրաշալի ես սուլում»: Չնայած ուղղակի զահլաս գնում էր, բայց դե էլի ամբողջ երկու ամիս ապրեցի նրա հետ և դա այն պատճառով, որ կյանքումս նման սուլողի չեմ հանդիպել: Այնպես որ դեռ հարց է, թե ո՞վ է ձանձրալի, ով՝ չէ: Գուցե շարժի ափսոսալ, երբ մի լավ աղջիկ ամուսնանում է որևէ ձանձրալի տիպի հետ, ցնդհանրապես դրանք բավական անմեղ բաներ են, իսկ գուցեև նրանք առանձին եղած ժամանակ կարողանում են հրաշալի սուլել կամ մի որևէ այլ բան: Ո՞վ գիտե, դա իմ խելքի բանը չէ:

Վերջապես աստիճանների վրա հայտնվեց իմ Սալլին, ու ես ընդառաջ գնացի նրան: Որքա՞ն գեղեցիկ էր նա: Ազնիվ խոսք: Սև վերարկուով և ինչ-որ սև բերետով: Սովորաբար նա գլխաբաց էր ման գալիս, բայց բերետը շատ էր սաղում

նրան, Միծաղելի է, հենց որ նրան տեսա, ցանկացա հետը  
ամուսնանալ: Չէ, այնուամենայնիվ, ես աննորմալ եմ: Նա  
նույնիսկ շատ շէր դուր գալիս ինձ, իսկ այդ պահին զգացի,  
որ սիրահարված եմ և պատրաստ եմ նրա հետ ամուսնանալ:  
Աստված վկա, ես աննորմալ եմ, ինքս եմ խոստովանում:

— Հոդե՞ն, — ասում է, — որքա՞ն ուրախ եմ: Հարյուր  
տարի կլինի շենք հանդիպել: — Սոսկալի բարձր է խոսում,  
նույնիսկ անհարմար է լինում, երբ նրա հետ որևէ տեղ հան-  
դիպում ես: Նրա համար դա ոչ մի նշանակություն չունի.  
որովհետև այնքա՞ն գեղեցիկ էր, բայց շփոթմունքը իմ ազիք-  
ները ոլորվեցին:

— Ուրախ եմ քեզ տեսնելու համար, — ասացի ես ու  
չէի ստում, աստված վկա: — Հը, ինչպե՞ս ես:

— Հրաշալի, շտեսնված: Հո շե՞մ ուշացել:

Չէ, ասում եմ. բայց, իսկապես, նա մի տասը բուպե ուշա-  
ցել էր: Բայց ինձ համար դա նշանակություն չունի: Բոլոր  
այդ դատարկ-մատարկ բաները, «Սեթերդեյ Իվինինգ» սյուստի  
բոլոր ծագրանկարները, որ պատկերում են, թե տղան ինչպես  
է խեղճ-խեղճ կանգնել անկյունում, որովհետև սղջիկն ուշա-  
ցել է տեսակցությունից, հնարովի բաներ են: Եթե տեսակ-  
ցությունը կընկնի, թե նա ուշացել է: Ոչ ոքի:

— Հարկավոր է գնալ, — ասում է, — ներկայացումն սկսու-  
վում է երկուսն անց քառասուն:

Մենք աստիճաններով իջանք տաքսիների կայան:

— Ի՞նչ ենք նայելու, — հարցրեց նա:

— Չգիտեմ, կանտերին: Էլ ուրիշ տոմսեր չկարողացա  
ճարել:

— Ախ, կանտերի՞ն: Սքանչելի՞ է:

Ասացի, չէ՞, որ նա գծվում է, երբ լսում է կանտերի,  
անունը:

Մենք մի քիչ պաշալվեցինք տաքսու մեջ: Սկզբում նա չէր  
ուզում, որովհետև վախենում էր շրթնաներկը լղոզվի, բայց ես  
ինձ պահում էի իսկական գայթակղողի նման, ու նա ստիպ-  
ված եղավ տեղի տալ: Երկու անգամ, երբ մեքենան արգե-  
լակեց լուսաֆորի առաջ, քիչ մնաց ես ընկնելի: Անիծյալ  
վարորդներ, երբեք չեն նայում, թե ինչ են անում: Երգվում

եմ. վարել չգիտեն: Բայց ուզո՞ւմ եք իմանալ, թե որ աստի-  
ճան խենթ եմ ես: Հենց որ ամուր փաթաթվեցիք, ես նրան  
ասացի, որ սիրում եմ և նման բաներ: Իհարկե, դա փշոց էր,  
բայց աղն էլ հենց այն է, որ այդ պահին ես էլ համոզված  
էի դրանդամ: Զէ, ես աննորմալ եմ: Աստված վկա, գիժ եմ:

— Ա՛խ, սիրելիս, ես էլ քեզ եմ սիրում,— ասում է Սալ-  
լին ու անմիջապես էլ ավելացնում:— Միայն թե խոստացիր,  
որ մազերդ կերկարացնես, հիմա ողնաձև սանրվածքը մե-  
զայից դուրս է եկել, իսկ քո մազիկները սքանչելի են:

«Մազիկներ» — պայթել կարելի է:

Ներկայացումն այն անպետքներից չէր, որոնք ես առաջ-  
եկում տեսել էի: Բայց դե սա էլ մի բան չէր: Ինչ-որ ծեր  
ամուսինների մասին էր, որոնք հինգ հարյուր հազար տարի  
միասին էին ապրել: Սկսում է այնտեղից, որ նրանք դեռևս  
չահել են, և աղջկա ծնողները թույլ չեն տալիս նրան ամուս-  
նանալ այդ տիպի հետ. բայց աղջիկը, այնուամենայնիվ,  
ամուսնանում է: Իսկ հետո նրանք ծերանում են, ծերանում:  
Ամուսինը պատերազմ է գնում, իսկ կնոջ եղբայրը հարբե-  
ցող է: Մի խոսքով հետաքրքիր չէ: Ուզում եմ ասել, որ ինձ  
համար միևնույն էր՝ նրանց ընտանիքում մեռնո՞ւմ էր որևէ  
մեկը, թե ոչ: Մեջը բան չկար՝ զատ դերասանություն էր:  
Ճիշտ է, մարդ ու կին հրաշալի ծերուկներ էին, սլամիտ և  
այլն, բայց նրանք էլ ինձ չէին հուզում: Նախ ամբողջ ժա-  
մանակ, պիեսի ամբողջ ընթացքում մարդիկ թեյ էին խմում  
կամ էլ մեկ այլ բան: Հենց որ վարագույրը ետ էր քաշվում,  
սպասավորը թեյ էր մատուցում կամ կինը թեյ էր լցնում  
որևէ մեկի համար: Եվ ամբողջ ժամանակ որևէ մեկը ներս  
էր մտնում կամ դուրս էր գալիս: Գլուխդ պտտվում է դրանից,  
որ անընդհատ ինչ-որ մարդիկ են նստում կամ վեր կենում:  
Ծեր ամուսինների դերերը կատարում էին Ալֆրեդ Լանտը և  
Լին Տոնտանին: Նրանք շատ լավ էին խաղում, բայց ինձ դուր  
չէին գալիս: Ծն հասկանում էի, որ նրանք նման չեն մնացած  
դերասաններին: Նրանք իրենց պահում էին ոչ դերասանների  
պես, ոչ էլ սովորական մարդկանց, ինձ համար դժվար է  
դա բացատրել: Նրանք այնպես էին խաղում, ասես ամբողջ  
ժամանակ հասկանում էին, որ իրենք նշանավոր են: Հասկա-  
նո՞ւմ եք, նրանք լավ էին խաղում, միայն թե շափից դուրս

ըստ: Հասկանում եք՝ մեկը խոսքը դեռ չվերջացրած, մյուսն արդեն պատասխանում էր: Ասես իրականում մարդիկ զրուցում էին միմյանց հետ, մեկը մյուսի խոսքը կտրում և այլն: Հենց դա էլ փշացնում էր, որ շատ էր նման, թե մարդիկ ինչպես են կյանքում զրուցում և մեկը մյուսի խոսքը կտրում: Նրանք իրենց դերը կատարում էին ճիշտ այնպես, ինչպես էոնին էր նվագում Գրինչ-Վիլիզում: Երբ մի որս է բան շափից դուրս լավ ես կատարում, ապա, եթե շհետևես քեզ, դառնում ես ցուցադրական: Իսկ այդ դեպքում այլևս լավ չի կարող լինել: Բայց, համենայն դեպս, այդ ներկայացման մեջ այդ Լանտերը միակն էին, որ նման էին մարդու, նրանց գլուխն աշխատում էր, դա պետք է խոստովանել:

Առաջին գործողությունից հետո մենք բոլոր մյուս պիժոնների հետ գնացինք ծխելու: Այ թե տեսարան էր, հա: Կյանքումս երբեք այդ աստիճան ցուցադրական սեթևեթանք չեմ տեսել: Ծխում էին ու բարձրաձայն խոսում պիեսի մասին, որպեսզի բոլորը լսեն, թե որքան խելացի են իրենք: Մի ինչ-որ կեղծ կինոդերասան էլ մեզ մոտ կանգնած էր ծխում: Ազգանունը չգիտեմ, բայց պատերազմական ֆիլմերում նա միշտ խաղում է այն տիպի դերը, որը վախենում է գրոհից առաջ: Նրա հետ կանգնած էր մի ապշեցուցիչ շիկահեր, և երկուսն էլ անտարբեր տեսք էին ընդունել, ձևացնում էին, թե չեն նկատում, որ նայում են իրենց: Համեստ են, գրողի տարածները: Ծիծաղելի էր: Իսկ իմ Սալին գրեթե չէր խոսում, միայն հիանում էր Լանտերով, նա ժամանակ չունեիր, աջ ու ձախ հայացքներ էր նետում, կոտրատվում: Հանկարծ նա ծխարանի հակառակ ծայրում տեսավ մի ծանոթ պիժոնի, մղձ գորշագույն կոստյումով ու վանդականախշ բաճկոնով: Բարձրաշխարհիկ առյուծ: Ազնվական: Ծխել է թունդ ու կանգնեց է ձանձրացողի տեսքով, ատելի: Սալին անընդհատ կըրկանում է:

— Ինչ-որ տեղ ծանոթացել եմ նրա հետ, ես նրան ձառնաչում եմ:

Նա միշտ բոլորին ճանաչում է: Այնքան ձանձրացրեց անընդհատ նույն բանը կրկնելով, որ ես ասացի:

— Ճանաչում ես, գնա հետը համբուրվիր, նա երևի կուտրախանա:

Սալլին սուսկալի վիրավորվեց ինձնից: Վերջապես արդ պիժոնը ճանաչեց նրան, մոտեցավ մեզ ու բարեկեց: Մի տեսնեիք, թե ինչպես էին բարեկամ իրար: Ասես քսան տարի չէին տեսել: Կարելի էր մտածել, թե երեխա ժամանակ նրանց մի տաշտի մեջ էին լողացրել: Այնպիսի ընկերներ են, որ սիրտդ խառնում է վրաները նայես: Ամենածիժաղելին այն է, որ նրանք հավանաբար ընդամենը մեկ անգամ են հանգիստ, մի որևէ ապուշ երեկույթում: Վերջապես, երբ նրանց դադարեցին հրճվանքի փուշիկներ արձակել, Սալլին ծանոթացրեց մեզ: Նրա անունը Զորջ էր, ազգանունը շեմ հիշում, սովորում էր էնդոզերում: Այ՛ո՛, այ՛ո՛, ազնվական էր: Մի տեսնեիք նրան, երբ Սալլին հարցրեց, թե պիեսը դուք եկա՞՞վ, արդյոք: Նրա նմանները ամեն ինչ ցուցադրաբար են անում, նրանք նույնիսկ տեղ են բացում իրենց համար նախքան պատասխանելու: Նա մի քայլ ետ գնաց ու տրորեց ետևում կանգնած մի տիկնոջ ոտք: Նրևի ճզմեց ամբողջ թաթը: Նա ասաց, որ պիեսն ինքնին զլուխգործոց չէ, բայց կանտերը բուրդակի հրեշտակնե՛ր են: Հրեշտակնե՛ր են, գրողը տանի: Հրեշտակնե՛ր են: Մեռնել կարելի է:

Հետո նա ու Սալլին սկսեցին հիշել հազար ու մի ծանոթների: Կյանքումս նման սեթևեթանք չեմ տեսել: Իրար ետեից արևէ քաղաքի անուն էին տալիս ու տեղնուտեղն էլ հիշում, թե ծանոթներից ով է ապրում այնտեղ: Արդեն սիրտս խառնում էր նրանցից, երբ ընդմիջումն ավարտվեց: Իսկ հաջորդ ընդմիջմանը նրանք նորից սկսեցին նույն երգը: Նորից սկսեցին ինչ-որ մարդկանց հիշել: Վատն այն էր, որ այդ պիժոնը այնպիսի կեղծ, ազնվականական ձայն ուներ, այնպիսի, գիտեք, հոգնած, պճնամուրի ձայնիկ: Ինչպես աղչկա ձայն: Ու շամաչեց այդ սրիկան՝ աղչկան խլել իմ ձեռքից: Մտածում էի, որ երեի մեզ հետ տաքսի էլ կեստի, ներկայացումից հետո երկու թաղամաս մեզ հետ եկավ ոտքով, բայց կոկտեյլարանում պետք է հանդիպեր ուրիշ պիժոնների: Պատկերացնում էի, թե նրանք ինչպես են նստած որևէ բարում, իրենց պիժոնային վանդակավոր բաճկոններով ու քրննադատում են և՛ ներկայացումները, և՛ գրքերը, և՛ կանանց, իսկ ձայները այնքա՛ն հոգնած, պճնամուրային են: Ուզողակի մեռնել կարելի է այդպիսի տիպերի երեսից:

Ինձ համար Սալլիին նայելն էլ զազրելի էր, նրբ տաքսի նստեցինք. ինչո՞ւ էր տասը ժամ շարունակ ականջ կախել էնդովարի այդ տականքին: Որոշել էի Սալլիին տանել տուն, ազնիվ խոսք, բայց հանկարծ նա ասաց.

— Ես մի հանճարեղ բան եմ մտածել,— նա միշտ հանճարեղ բան է մտածում:— Գիտես ինչ,— ասում է:— Ծ՛րբ ես գնալու տուն ճաշի: Ես՞տ ես շտապում, թե՛ չէ: Որոշակի ժամի քեզ սպասո՞ւմ են տանը:

— Ի՞նձ: Չէ, չէ, ոչ ոք ինձ չի սպասում,— ասում եմ: Եվ դա զուտ ճշմարտություն էր:— Իսկ ի՞նչ կա որ:

— Արի գնանք Ռադիո-սիթի, շմուշկներով սահելու: Ահա թե ինչպիսի հանճարեղ մտքեր ունի:

— Ռադիո-սիթի՞ սահելո՞ւ: Ինչպես, հենց հիմա՞:

— Թեկուզ մի ժամով, աչ ավելի: Չե՞ս ուզում: Իհարկե՛ն, եթե տրամադիր չես...

— Մի՞թե ասացի չեմ ուզում,— ասում եմ:— Խնդրեմ, եթե սիրտդ ուզում է:

— Դու իսկապե՞ս ուզում ես: Եթե չես ուզում, պետք չէ: Ինձ համար միևնույն է:

Չի երևո՞ւմ, թե միևնույն է:

— Այնտեղ ապագիկով այնպիսի սքանչելի կարճ շրջազգեստներ են տալիս,— ասում է Սալլին:— Ջենեթ Կալջը անցյալ շաբաթ վերցրել էր:

Ահա թե ինչո՞ւ էր ուզում անպայման այնտեղ ընկնել: Ուզում էր ցուցադրել իրեն այդ շրջազգեստով, որք հազիվ-հազ է ետևը ծածկում:

Մի խոսքով, մենք գնացինք այնտեղ, և մեզ սկզբում շմուշկներ տվին, իսկ հետո Սալլին հազա՞վ այդպիսի մի կապույտ շրջազգեստ, որը հենց միայն ետևը պարացնելու համար է: Բայց գե իրեն շատ-շատ էր սազում, պետք է խոստովանել: Եվ մի՞ կարծեք, թե նա այդ բանը չէր հասկանում: Դիտմամբ իմ առջևից էր գնում, որպեսզի ես տեսնեմ, թե ինչպիսի սիրունիկ, կլորիկ ետև ունի: Պետք է խոստովանել, իսկապես վատը չէր:

Բայց ամենածիծաղելիին այն էր, որ այդ անիծյալ սահագաշտում մենք ամենավատ սահողներն էինք: Այո՞, այո՞, ամենավատ: Տեր աստված, ի՞նչ էր կատարվում: Սալլիի

կոճերն այնպես էին ոլորվում, որ ուղղակի քաղում էին սասուլցին: Ու ոչ միայն հիմար տպավորութիւն էր թողնում, հավանաբար նաև ուժեղ ցավ էր զգում: Համենայն դեպս, ի՞նչ քուր տեղերը ցավում էին: Քիչ էր մնում մեռնելի: Մի տեսնելի՞ք մեզ: Ու ամենազգվելին այն էր, որ մի երկու հարյուր բերանբացներ էլ կանգնած նայում էին, էլ ուրիշ բան ուզործ չունեին, միայն նայեն, թե մարդիկ ինչպես են ցած բեկնում:

— Գուցե կցանկանայիր գնանք բա՞ր, սեղան վերցնենք, մի որևէ բան խմենք,— ասացի ես վերջապես:

— Ա՛յ դա հանճարեղ միտք է,— ասում է: Նա ուղղակի հալից ընկել էր: Անմարդկային բան է այդպես տանջանքների ենթարկվել, ես նույնիսկ խղճացի նրան:

Մենք հանեցինք այդ ստոր շմուշկներն ու գնացինք բար, օբտեղ կարելի է խմել, նստել միայն զուլպաներով ու հեռվից նայել սահողներին: Սեղանի մոտ Սալլին հանեց ձեռնոցները, և ես նրան սիգարետ տվի: Նա բավական ողորմելի տեսք ուներ: Մատուցողը մոտեցավ, ես նրա համար կոկա-կոլա և ինձ համար սոդայով վիսկի պատվիրեցի, միայն թե այդ սրիկան հրաժարվեց ինձ վիսկի տալուց, և ես էլ ստիպված կոկա-կոլա խմեցի: Հետո սկսեցի լուցկի վառել: Ծա հաճախ եմ անում այդպես, երբ տրամադրութիւնս ընկեում է: Լուցկին քոնում էի այնքան, մինչև լրիվ այրվում էր, այնպես որ այլևս հնարավոր չէր լինում բռնել, և զցում էի մոխրամանը: Նյարդային սովորութիւն է:

Հանկարծ առանց այլևայլութիւն Սալլին ասում է.

— Լսիր, ես ուզում եմ հաստատ իմանալ՝ ճրագալուցին յալո՞ւ ես մեզ մոտ տոնածառը զարդարելու, թե չէ: Նախապես պետք է իմանամ:

Երևում է, կատաղել էր, որ քոթերը ցավում էին շմուշկներից:

— Ծա գրել եմ, չէ՞, որ կգամ: Գու հարյուր անգամ արգեն հարցրել ես: Իհարկե, գալու եմ:

— Հասկանո՞ւմ ես, ես պետք է հաստատ իմանամ,— ասում է նա ու աչք ածում շուրջը, տեսնի՞ ծանոթներ չկա՞ն: Հանկարծ ես դադարեցի լուցկիներ վառելուց, սեղանի վրայով կոացա դեպի նա: Շատ բան ունեի նրան ասելու:



— Լսիր, Սալլի,— ասում եմ:

— Ի՞նչ է,— հարցնում է: Ու նայում է դահլիճի մյուս ծայրին գտնվող ինչ-որ աղջկա:

— Քեզ պատահո՞ւմ է, որ ամեն ինչի հանդեպ նողկանք զգաս,— հարցնում եմ:— Հասկանում ես, քեզ պատահո՞ւմ է այնպես, որ կարծես ամեն ինչ գրողի ծոցը կզնա, եթե որևէ բան շնախաձեռնես, պատահո՞ւմ է, որ վախենաս: Ասա, դու սիրո՞ւմ ես դպրոցը, ընդհանրապես ամեն ինչ:

— Չէ, իհարկե, այնտեղ սոսկալի ձանձրալի է:

— Բայց դու ատո՞ւմ ես, թե ոչ: Ծա գիտեմ, որ սոսկալի ձանձրալի է, բայց դու ատո՞ւմ ես այդ ամենը, թե ոչ:

— Ինչպե՞ս ասեմ: Չէ թե ատում եմ: Միշտ էլ մի տեսակ ստիպված ես լինում...

— Իսկ ես ատում եմ: Տեր աստված, որքա՞ն եմ ատում այդ ամենը: Եվ ոչ միայն դպրոցը: Ամեն ինչ ատում եմ: Ատում եմ նյու-Յորքում ապրելը: Ատում եմ տաքսիները, ավտոբուսները, որտեղ տոմսավաճառները գոռում են քեզ վրա, թե ետևի դռնից դուրս արի, ատում եմ ծանոթություն հաստատել կտորատվողների հետ, որոնք Լանտերին «հրեշտակներ» են համարում, ատում եմ վերելակով բարձրանալը, երբ ուզում ես ուղղակի դուրս գալ փողոց, ատում եմ անվերջ կոստյումներ շափափորձելը Բրուքսի մոտ, երբ քեզ...

— Մի՞ գոռա, խնդրում եմ,— ընդհատեց Սալլին:

Հիմարություն, մտքովս անգամ չէր անցնում գոռալ:

— Օրինակ՝ մեքենաները,— ասացի ես շատ կամացուկ:— Տես, թե մարդիկ ինչպե՞ս են խելքները թոցնում մեքենաների համար: Նրանց համար ողբերգություն է, եթե մեքենայի վրա թեկուզ մի փոքրիկ քերծվածք է առաջանում, ու նրանց գրույցի մշտական թեման այն է, թե մի գալսն բենզինով քանի մղոն կարող են կտրել, իսկ երբ նոր մեքենա են գնում, անմիջապես սկսում են գլուխ շարժել, թե ինչպես այն փոխարինեն նորագույն մակնիշի մեքենայով: Իսկ ես նույնիսկ հին մակնիշի մեքենաները չեմ սիրում: Ավելի լավ է ես ինձ համար ձի ճարեմ, Չիբրի մեջ գոնե մարդկային ինչ-որ բան կա: Չիու հետ գոնե կարելի է խոսել...

— Չեմ հասկանում, ինչ էս ուզում ասել... դու այնպես վայրիվերո ես խոսում:

— Գիտե՞ս քեզ ինչ կասեմ,— ասացի ես:— Եթե դու չլինեիր, հիմա ես չէի նստի նյու-Յարքում: Եթե դու չլինեիր, ես հիմա, թերևս, գրողի ծոցը գնայի: Գլուխս առնեի, անտառները կորչեի, կամ ավելի հեռու: Դու միակ մարդն ես, որի պատճառով ես մնում եմ այստեղ:

— Ի՞նչ լավն ես,— ասում է: Բայց անմիջապես էլ նրեվում է, որ ուզում է խոսակցության նյութը փոխել:

— Դու մի արական դպրոցում սովորելիս լինեիր, փորձի համար,— ասում եմ:— Մայրից ծայր կեղծիք է: Եվ սովորում են, որպեսզի դառնան մի որևէ խարերա, փող վաստակեն ինչ-որ երիցս անիծյալ չկադիլակն գնելու համար և մըշտապես ձևացնեն, թե իրենց համար շատ կարեւոր է. թե որ ֆուտբոլային թիմը կտանի՝ Եվ ամբողջ օրը խոսակցության նյութը խմելն է, աղչիկները և թե ինչ բան է սեփուր: Եվ ամեն մեկն իր շրջապատն ունի՝ մի որևէ գարշելի փոքրիկ շայկատ Բասկետբոլիստներն իրենց շայկան ունեն, կաթոլիկներն՝ իրենց, այդ երիցս անիծյալ ինտելեկտուալները՝ իրենցը, բրիչ խաղացողներն՝ իրենցը: Նույնիսկ այդ հիմար Գրքի ազումբի արտեններն՝ իրենցը: Փորձիր որևէ մեկի հետ օրինավոր խոսակցություն սկսել:

— Զէ, հիշա չէ,— ասաց Սալլին:— Տղաներից շատերին դպրոցը շատ բան է տալիս:

— Համաձայն եմ, համաձայն եմ, որ շատերին դպրոցը շատ բան է տալիս: Իսկ ինձ՝ ոչինչ: Հասկանալի՞ է: Ես հենց դրա մասին եմ խոսում: Հատկապես դրա՝ մասին, գրողը տանի: Ինձ առհասարակ ո՛չ մի բան չի տալիս: Ես վատ վիճակում եմ: Սոսկալի վիճակում եմ:

— Հիշտ է, դու սարսափելի վիճակում ես:

Ահ հանկարծ իմ գլխում մի միտք ծագեց:

— Լսիր,— ասում եմ:— Ահա թե ինչ մտածեցի: Կուզե՞ս արտեղից փախչենք մի որևէ տեղ: Այ թե ինչ եմ մտածել: Ես մի ծանաթ ունեմ Գրինչ-վիլեզում, կարող եմ նրա մեքենան վերցնել մի երկու շաբաթով: Նա մեր դպրոցում է սովորել ու մինչև հիմա էլ տասը դուլլար ինձ պարտք է: Տես, թե ինչ կարող ենք անել: Վաղն առավոտյան կարող ենք գնալ

Մասաչուսեթս, Վերմոնտ, ման կգանք այնտեղ: Շա՛տ գեղեցիկ տեղեր կան այնտեղ, գիտե՞ս, գրողը տանի: Զարմանալի գեղեցիկ տեղեր:— Որքան շատ էի խոսում, այնքան ավելի էի հուզվում: Ծս նույնիսկ կոացա ու բռնեցի Սալլիի ձեռքը, անիծյալ ապուշի մեկն եմ:— Չէ, առանց կատակի.— ասում եմ:— Ծս մոտ հարյուր ութսուն դոլլար ունեմ գրքույկիս մեջ: Վաղն առավոտյան հենց որ բանկը բացեն, կհանեմ, իսկ հետո կարող ենք գնալ ու վերցնել այդ տղայի մեքենան: Առանց կատակի: Կապրենք տուրիստական ճամբարներում ու նման տեղերում, մինչև որ փողը վերջանա: Իսկ երբ վերջանա, ես աշխատանք կճարեմ, կապրենք մի որեէ առվակի ափին, իսկ հետո երբեւէ մենք Վամուսնանոսը, ինչպես հարկն է: Ծս ինքս մեզ համար մեծոր փայտ կկտրատեմ: Ազնիվ խոսք, այնպէս լավ կլինի, այնպես յուրախ: Հը, ինչպե՞ս է: Կգա՞ս: Կգա՞ս ինձ հետ, Կգաս, հա՞:

— Ախր ինչպես կարելի է,— ասում է Սալլին: Նրա ձայնի մեջ զայրույթ կար:

— Իսկ ինչո՞ւ չի կարելի: Ինչո՞ւ, գրողը տանի:

— Մի՛ գոռա ինձ վրա, խնդրում եմ,— ասում է: Ախր սուտ է ասում, ես նրա վրա իսկի չեմ գոռում:

— Ինչո՞ւ չի կարելի: Հը, ինչո՞ւ:

— Արովհետեւ չի կարելի, և վերջ: Նախ՝ իրականում մենք դեռ երեխաներ ենք: Մտածո՞ւմ ես, ինչ կանենք, եթե հանկարծ փողը վերջանա, դու էլ աշխատանք չճարես: Քաղցից կմեռնենք: Ծվ ընդհանրապես այդ ամենը այնպիսի երեւակայութիւնն է, որ խոսել իսկ շարժի...

— Ճիշտ չէ: Սա երևակայութիւնն է: Ծս աշխատանք կճարեմ, Մի՛ անհանգստանա: Դու դրա համար անհանգստանալու կարիք չունես: Ի՞նչ է: Չե՞ս ուզում ինձ հետ գալ, այդպես էլ ասա:

— Բանը դա չէ: Բոլորովին էլ դա չէ,— ասում է Սալլին: Զգացի, որ սկսում եմ նրան ատել:— Մենք դեռ շատ ժամանակ ունենք ապագայում, այն ժամանակ ամեն ինչ կարելի է: Հասկանո՞ւմ ես, երբ դու ավարտես համալսարանը, կամուսնանանք: Մենք կարող ենք հազարավոր հրաշալի տեղեր գնալ: Իսկ հիմա դու...

— Չէ, չենք կարող: Մենք ոչ մի տեղ էլ չենք կարող գնալ,

ոչ մի հազարավոր տեղեր: Ամեն ինչ այլ կերպ կլինի, —  
ասում եմ: Տրամադրությունս շատ ընկալի:

— Ի՞նչ, Չեմ լսում: Մեկ գոռում ես վրաս, մեկ քթից  
ասակ փնթփնթում...

— Ասում եմ՝ չէ, ոչ մի տեղ էլ չենք գնա, ոչ մի «հրա-  
շալի տեղ», երբ ես ազարտեմ համալսարանը և այլն: Ականջ-  
ներդ լավ բաց: Ամեն ինչ այլ կերպ կլինի: Մենք ստիպված  
կլինենք ճամպրուկներն ու բազմաթիվ իրեր առած ցած իջնեց  
վերելակով: Ստիպված կլինենք բոլոր հարազատներին զան-  
գահարել և հեռախոսով հրաժեշտ տալ, իսկ հետո բացիկներ  
ուղարկել նրանց բոլոր հյուրանոցներին: Ես կաշխատեմ մի  
որևէ գրասենյակում, շատ փող կվաստակեմ, և աշխատանքի  
կգնամ մեքենայով կամ ավտոբուսով, Մեդիսոն-ավենյուժի  
վրա, թերթեր կկարդամ ու բրիչ կխաղամ բոլոր երեկոները.  
և կինո կգնամ. հիմար կարճամետրաժներ ու ռեկլամներ և  
կինոխրոնիկա կնայեմ: Օ՛հ, տեր աստված: Նախ՝ ինչ-որ ձիար-  
շավներ, հետո տիկիներ շիշ է ջարդում նավի վրա, հետո տա-  
ցատ հագած շիմպանզեն հեծանիվ է քշում: Զէ, այդ բոլորն  
այն չէ: Է՛հ, միևնույն է, դու ոչինչ էլ չես հասկանա, գրող  
ասնի:

— Գուցե ես չեմ հասկանում: Իսկ գուցե ե դո՛ւ ոչինչ չես  
հասկանում, — ասում է Սալլին: Մենք արդեն սոսկալի ատում  
էինք միմյանց: Երևում էր, որ իմաստ չունեիր նրա հետ մար-  
դավարի խոսել: Ես սոսկալի զայրացել էի ինձ վրա, որ նման  
խցկակցություն բացեցի:

— Դե լավ, վեր կաց, կորչենք այստեղից, — ասում եմ: —  
Ծվ ցեղահանրապես, կորի գնա, գիտե՞ս ուր...

Օ՛հ, այ թե սկսեց ճղճղալ, որ այդպես ասացի: Գիտեմ,  
չգիտեք է այդպես ասելի, ու չէի հայհոյի, եթե նա համբերու-  
թյունից չհաներ ինձ: Սովորաբար ես աղջիկների ներկայու-  
թյամբ չեմ հայհոյում: Ո՛հ, այ թե ճղճղոց դրեց: Ես խելա-  
գարի պես սկսեցի ներողություն խնդրել, բայց նա լսել ան-  
գամ չէր ուզում: Նույնիսկ լաց եղավ: Ծիշտն ասած, մի քիչ  
վախեցա, որ կգնա տուն և կբողոքի հորը, թե ես նրան հայ-  
հոյել եմ: Նրա հայրը մի երկարահասակ ու լուակյաց մարդ  
էր, և ինձ առհասարակ չէր սիրում սրիկան: Նա Սալլիին ասել  
էր, թե ես չափից դուրս աղմկարար եմ:

— Չէ, լրջորեն, ներիր,— ես շատ խնդրեցի նրան:

— Ներե՛լ, քե՛զ ներել, տարօրինակ է,— ասում է: Նա գեռու լալիս էր, և ես հանկարծ խղճացի նրան, որ վիրավորել եմ:

— Գնանք, քեզ տուն ուղեկցեմ: Լրջորեն:

— Ինքս էլ կարող եմ գնալ, շնորհակալ եմ: Եթե կարծում ես, որ թույլ կտամ ինձ ուղեկցես, ուրեմն հիմար ես: Ոչ մի տղա ամբողջ կյանքիս ընթացքում դեռևս իմ ներկայությամբ այդպես չի հայհոյել:

Դրա մեջ ինչ-որ ծիծաղելի բան կար, որ խորն ես մտածում, ու հանկարծ ես արեցի այն, ինչ-որ պետք չէր անել: Հռճոացի: Իսկ իմ ծիծաղը սոսկալի բարձր ու հիմար ծիծաղ է: Հասկանո՞ւմ եք, եթե ես նստած լինեի ինքս իմ ետևում, կինոյում կամ մի որևէ այլ տեղ, հավանաբար, առաջ կհակվեի ո՛ր կասեի ինքս ինձ, որ այդպես շճհոսաս: Ու դրանից Սալիին ավելի կատաղեց:

Ես գնում էի նրա ետևից, ներողություն էի խնդրում, բայց նա ոչ մի կերպ չէր կարողանում ինձ ներել: Միայն կրկնում էր՝ հեռացիր, ինձ հանգիստ թող: Վերջ ի վերջո ես հեռացա: Վերցրի կոշիկներս ու հաղուսաս և գնացի առանց նրան: Չպետք է լքեի նրան, բայց արդեն համբերությունս սպառվել էր:

Ծիշտն ասած, ինքս էլ չգիտեի, թե ինչու նրան այդ բոլորը ասացի: Մասաչուսետս, Վերմոնտ մեկնելու մասին, ընդհանրապես ամեն ինչ: Հավանաբար, նրան շտանեի էլ ինձ հետ, եթե նույնիսկ ինքը խնդրեր: Մի՞թե նրա նման մարդու հետ կարելի է ճանապարհորդել: Բայց ամենասարսափելին այն է, որ ես անկեղծորեն էի առաջարկում մեկնել ինձ հետ: Դա՛ է ամենասարսափելին: Չէ, այնուամենայնիվ, ես աննորմալ եմ, ազնիվ խոսք:

Երբ դուրս եկա սահադաշտից, քաղց զգացի, վազեցի բուֆետ, պանրով բուտերբրոդ և սուֆլե կերա, ապա մտա հեռախոսախցիկ: Մտածեցի գուցե, այնուամենայնիվ, մի անգամ էլ զանգեմ Ջեյնին, իմանամ՝ եկե՞լ է տուն, թե ոչ: Չէ՞

որ ամբողջ երեկոյան ազատ եմ, և մտածեցի զանգ տամ  
 նրան, ու եթէ արդեն տանն է, հրավիրեմ մի որևէ տեղ պար-  
 ելու: Ես նրա հետ ոչ մի անգամ չեմ պարել մեր ամբողջ  
 ծանոթութեան ընթացքում: Բայց մի անգամ տեսել եմ, թե  
 ինչպես է պարում: Նա շատ լավ էր պարում: Դա հուլիսի  
 չորսին էր, ակումբում: Այն ժամանակ դեռ լավ ծանոթ չէինք  
 իրար, ու ես սիրտ չէի անում նրան խել կավալերի ձեռքից:  
 Ես մի գարշելի տիպի հետ էր, էլ Փայթի հետ, որը Չուտում  
 էր սովորում: Ես սրան էլ լավ ծանոթ չէի, բայց սա ամբողջ  
 օրը ավազանի մոտ էր լինում: Նեյլոնե լողավարտիք էր հագ-  
 նում և անընդհատ ցատկում էր աշտարակից: Ամբողջ օրը  
 ցատկում էր ինչ-որ հիմար ձևով: Ուրիշ բան չէր կարողանում  
 անել, բայց, երևում է, իրեն լավագույն սպորտսմեն էր հա-  
 մարում: Ամբողջը մկաններ էր, ուղեղի ոչ մի նշույլ, մի խոս-  
 քով: Զեյնն այդ երեկո նրա հետ էր պարում: Ինչ համար  
 դա անհասկանալի էր: Ազնիվ խոսք, բոլորովին անհասկա-  
 նալի: Երբ բարեկամացանք, ես հարցրի, թե ես ինչպես էր  
 հանդիպում այնպիսի մեծամիտ տիպի հետ, ինչպիսին այդ  
 էլ Փայթն է: Բայց Զեյնն ասաց, թե նա բոլորովին էլ մեծա-  
 միտ չէ, թե ընդհակառակը, թերարժեքութեան կոմպլեքսով  
 է տառապում: Ընդհանրապես երևում էր, որ Զեյնը խզում  
 էր նրան, և չէր կեղծում: Լրջորեն խզում էր նրան: Տարօր-  
 նակ մարդիկ են այդ աղջիկները: Ամեն անգամ, երբ հիշա-  
 տակում ես մի օրևէ զտարյուն սողունի, որ շատ ստորն է  
 կամ խիստ ինքնահավան, երբ խոսում ես այդպիսի մեկի  
 մասին, անպայման ասում են՝ նա թերարժեքութեան կոմպ-  
 լեքս ունի»: Գուցե և ճիշտ է, բայց դա չի խանգարում, որ այդ  
 անձնավորութիւնը սողուն լինի: Այդպես են այդ աղջիկները  
 Երբեք չես հասկանա, թե նրանց գլխին ինչ քամի կարող է  
 փչել: Մի անգամ ես Ռոբերտա Ուոլշի ընկերուհուն ծանո-  
 թացրի իմ մի բարեկամի հետ: Տղայի անունը Բոր Ռոբինսոն  
 էր: Այ նա իսկապես թերարժեքութեան կոմպլեքս ուներ: Ան-  
 միջապես երևում էր, որ ամաչում է իր ծնողներից, որովհե-  
 տե նրանք ասում էին՝ «ուզըմ ես», «ուզըմ եք ու նման բա-  
 ներ, և բացի այդ էլ, նրանք շատ աղքատ էին, բայց նա ինքը  
 բոլորովին էլ ետ ընկածներից չէր: Շատ լավ տղա էր, բայց  
 Ռոբերտա Ուոլշի ընկերուհուն նա բոլորովին գուր չեկավ:

Նա Ռոբերտային ասել էր, թե Բորը մեծամիտ է, որովհետև  
սա պատահամբ ասել էր, թե ինքը բանավեճային ակումբի  
թիմի պետն է: Այդպիսի մանրուք, և նա որոշել էր, որ տղան  
մեծամիտի մեկն է: Ամբողջ դժբախտությունն այն է, երբ  
տղան դուր է գալիս դրանց, թեկուզ հարյուրապատիկ անգամ  
էլ սողուն լինի, անպայման կասեն՝ նա: Թերաթեքություն  
կոմպլեքս ունի, իսկ եթե տղան դուր չի գալիս, թեկուզ աշ-  
խարհիս ամենալավ մարդը լինի, միևնույն է, կասեն՝ մեծա-  
միտի մեկն է: Նույնիսկ խելացի աղջիկներն են այդպիսին:

Ծի խոսքով, ես նորից զանգահարեցի Զեյնին, բայց ոչ  
ոք շնորհակալ հեռախոսին, ստիպված կախեցի լսափողը:  
Յկսեցի որոնել ծոցատետրիս մեջ, թե ում հետ կարելի է  
անցկացնել երեկոն: Դժբախտաբար իմ ծոցատետրում ընդա-  
մենը երեք համար էր գրված՝ Զեյնինը, միստր Անտոյինիինը,  
որ իմ ուսուցիչն էր եղել էլքսոն-հիլլում, և հորս աշխատան-  
քային համարը: Հեռախոսի համարները միշտ մոռանում եմ:  
Վերջապես ստիպված եղա զանգահարել մի տղայի: Կառ  
Կուսին: Նա Հուստոնի դպրոցն է ավարտել, հրբ ես արդեն  
այնտեղից հեռացել էի: Նա ինձնից երեք տարով մեծ էր, և  
առանձնապես չէի սիրում նրան, բայց շատ խելոք էր, մտա-  
վոր զարգացման գծով ամենաբարձր ցուցանիշը նրանն էր  
ամբողջ դպրոցում: Մտածեցի գուցե ինձ հետ ճաշի, ու մենք  
որևէ խելացի բանի մասին զրուցենք: Երբեմն նա շատ հե-  
տաքրքիր բաներ էր պատմում: Որոշեցի զանգահարել նրան:  
Նա արդեն սովորում էր Կոլումբիայի համալսարանում, բայց  
ապրում էր ոչ Վաթսոն հինգերորդ փողոցում, ու ես գիտեի,  
որ տանն է: Երբ գտնեց տվի, նա ասաց, որ ճաշին զբաղված  
է, բայց հրեկոյան տասին կարող է ինձ հետ հանդիպել Վի-  
կեր-բարում, Հիսունչորսերորդի վրա: Կարծում եմ, նա շատ  
զարմացավ, լսելով իմ ձայնը: Ծի անգամ ես նրան հաստա-  
քամակ կոտրատվող էի անվանել:

Մինչև երեկոյան տասր հարկավոր էր մի կերպ սպանել  
ժամանակը, և ես գնացի Ռադիո-սիթի՝ կինո նայելու: Ավելի  
վատ բան հնարավոր չէր մտածել, բայց դե շատ մոտ էի դրան  
և անելիք էլ չունեի:

Ներս մտա այն ժամանակ, երբ դիվերտիսմենտ էր սկըս-  
վում: Ռոկեոտի խումբը աստված ազատի թե ինչ օյիներ էր

անում, գիտեք, նրանք ինչպես են պարում՝ բոլորը կողք-կողքի կանգնած, միմյանց գոտկատեղից բռնած: Հասարակությունը խելագարի պես ծափ էր տալիս, իսկ իմ ետևում նստած մի տիպ ամբողջ ժամանակ կրկնում էր. «Գիտե՞ք, ինչպես է կոչվում սա: Մաթեմատիկական ճշգրտություն»: Սպանե՞ց: Իսկ Ռոկետի խմբից հետո, անվաշմուշկներով ֆրակավոր մի մարդ դուրս եկավ, սկսեց մտնել փոքրիկ սեղանների տակ և այդ ընթացքում սրամտել: Նա շատ լավ էր սահում, բայց ձանձրանում էի, որովհետև մտածում էի, որ նա ամբողջ օրը մարզվում է, որպեսզի հետո բեմի վրա վարժ սահի: Հիմար զբաղմունք է: Իսկ հետո սկսվեց Մենդելյան մրնջախաղը, որ ամեն տարի Մենդելյան տոներին ցուցադրում են Ռադիո-օրթիում: Բազմապիսի հրեշտակներ էին դուրս գալիս արկղերից, հետո ինչ-որ տիպեր բեմով խաչելություն էին տանում շալկած, հետո բոլորը միասին երգում էին. «Սկեք, հավատացյալներ»: Շատ հին բան է: Գիտեմ, այդ ամենը խիստ կրոնական և գեղեցիկ է համարվում, բայց ո՞ւր է այստեղ կրոնը և գեղեցկությունը, գրողը տանի, եթե արտիստների մի խումբ խաչելությունը քարշ է տալիս բեմում: Իսկ երբ ավարտեցին երգն ու ցրվեցին իրենց տեղերը, երկվում էր, թե ինչպես են շտապում, որ գնան ծխեն. հանգրստանան: Անցյալ տարի ես այդ ներկայացումը տեսել էի Սալլի Զեյսի հետ, և նա շատ էր հիացած՝ ախ, ի՞նչ կոստյումներ են, ախ, ինչպիսի՜ գեղեցկություն: Իսկ ես կասեի, որ խեղճ Քրիստոսի սիրտը կխառներ, հավանաբար, եթե նա տեսներ այդ դիմակահանդեսային լաթերը: Սալլին ասում էր, թե ես աստվածանարգող եմ ու աթեիստ: Հավանաբար, դա այդպես է: Բայց, ա՛յ, մի բան, երևի, դուր կգաք Քրիստոսին. դա նվագախմբի թմբկահարն էր: Ես նրան հիշում եմ դեռ ութ տարեկանից: Երբ ծնողներս ինձ ու եղբորս՝ Ալլիին բերում էին այստեղ, մենք աշխատում էինք մոտ նստել նվագախումբին, որպեսզի նայենք այդ թմբկահարին: Ես նրան հիշում եմ այն ժամանակից ի վեր: Նրանից լավին դեռ չեմ տեսել: Ի՛նչու է, ամբողջ համարի ընթացքում նրան միայն երկու անգամ է վիճակվում խփել այդ բանին, այնուամենայնիվ, նրա դեմքին ձանձրույթի հետք անգամ չես նկատում, քանի դեռ սպասում է: Բայց երբ խփում է, փոխարենն զգում ես, թե՛



դա ինչպես է նրան հաջողվում, որքան մաքուր, լավ է ստացվում, նույնիսկ դեմքից ես զգում, որ նա ջանք է թափում: Երբ հորս հետ գնացինք Վաշինգտոն, Ալլին այդ թմրկահարին բացիկ ուղարկեց, բայց երևի նա շատացավ: Մենք հասցեն կարգին չգիտեինք:

Վերջապես Մենդյան մնջախաղն ավարտվեց, ու սկսվեց այդ երիցս անիծյալ ֆիլմը: Այնքան գարշելի ֆիլմ էր, որ աչքս չէի կարողանում կտրել: Մի անգլիացու մասին էր Ալեքի: Նա պատերազմ էր գնացել և հոսպիտալում գրկվել հիշողութունից: Հոսպիտալից դուրս է գալիս ձեռնափայտով, կաղալով շշուում է քաղաքում՝ Լոնդոնում, ու չի իմանում, թե որտեղ է գտնվում: Իրականում նա հերցոգ է, բայց դա չի հիշում: Հետո հանդիպում է մի տգեղ, հասարակ ու աղետիվ աղջկա, ավտորուս բարձրանալիս է հանդիպում: Աղջկա զրլխարկը թռչում է, նա բռնում է, հետո երկուսով բարձրանում են վերև ու սկսում զրուցել Չարլզ Դիկենսի մասին: Պարզվում է, որ նա երկուսի էլ սիրած գրողն է: Տղամարդը նույնիսկ իր հետ ման է ածում «Օլիվեր Թվիստը», աղջիկը՝ նույնպես: Սիրտս ուղղակի խառնում էր: Մի խոսքով, նրանք անմիջապես սիրահարվում են, որովհետև երկուսն էլ գծվում են Չարլզ Դիկենսի համար, և տղամարդը օգնում է աղջկան աշխատանքի անցնել հրատարակչութունում: Մոռացա ասել, որ աղջիկը հրատարակիչ է: Բայց աղջկա գործերը լավ չեն գնում, որովհետև եղբայրը հարբեցող է ու ամբողջ փողերը խմում է: Նա շատ է դաժան դարձել, այդ եղբայրը, որովհետև պատերազմի ժամանակ վիրաբույժ է աշխատել, իսկ հիմա չի կարողանում վիրահատութուն կատարել, նյարդերը չեն դիմանում, դրա համար էլ իրեն խմելու է տվել, խմում է գիշեր-ցերեկ, թեև ընդհանրապես խելացի մարդ է: Մի խոսքով, Ալեքը գիրք է գրում, իսկ աղջիկը հրատարակում է, և նրանք երկուսով շատ փող են կուտակում: Քիչ է մնում, որ ամուսնանան, մեկ ուրիշ աղջիկ է լույս ընկնում, ոմն Մարսիա: Այդ Մարսիան Ալեքի հարսնացուն է եղել մինչև նրա հիշողութունը կորցնելը, և ճանաչում է տղային, երբ սա գրախանութում իր գրքերի վրա մակագրութուն էր անում սիրողների համար: Մարսիան խեղճ Ալեքին ասում է, որ նա թրականում հերցոգ է, բայց սա չի հավատում և չի ուզում

աղջկա հետ հյուր գնալ իր մորը: Իսկ Ալեքի մայրը կույր է խուրդի պես: Բայց մյուս աղջիկը՝ տգեղը, ստիպում է գնալ: Նա շատ երախտապարտ է զգում իրեն և այլն: Տղան գնում է, բայց միևնույն է: հիշողութունը չի վերականգնվում, նույնիսկ այն ժամանակ, երբ նրա վիթխարի դանիական դոզը դժի պես նետվում է նրա վրա, իսկ մայրը ամբողջ բռնում է նրա դեմքը ու նրան տալիս թավշյա արջուկը, որով տղան խաղացել է երեխա ժամանակ: Բայց մի անգամ երեխաները մարգագետնում կրոկետ խաղալիս գնդակով խփում են այդ Ալեքի գլխին: Նրա հիշողութունն անմիջապես վերականգնվում է, նա վազում է տուն, համբուրում մոր ճակատը: Նա կրկին իսկական հերցոգ է դառնում ու բոլորովին մոռանում հասարակ աղջկան, որն իր հրատարակչութունն ունի: Ես ձեզ հասեի, թե հետո ինչ է լինում, բայց սիրտս խառնում է: Բանն այն չէ, որ վախենում եմ ձեր տպավորութունը փշացնել, աչտեղ փշացնելու բան էլ չկա: Մի խոսքով, բանն ավարտվում է նրանով, որ Ալեքը ամուսնանում է այդ հասարակ աղջկա հետ, իսկ նրա եղբայրը՝ վիրաբույժը, որ խմում էր, բուժում է իր նյարդերը և վիրահատում Ալեքի մոր աչքերը, ու այդ ժամանակ նախկին հարբեցողն ու Մարսիան սիրահարվում են: Իսկ վերջին տեսարանում պատկերված է, թե ինչպես բոլորը նստած են մի երկար սեղանի շուրջ ու քրքում են ուրախ, որովհետև դանիական դոզը հանկարծ մի ամբողջ կույտ քոթոթներ է բերում: Բոլորը կարծում էին, թե նա արու է, պարզվում է՝ էգ է: Մի խոսքով, մի բան կարող եմ խորհուրդ տալ. եթե չեք ուզում, որ ձեր սիրտը խառնի ուզակի ձեր հարևանների վրա, մի՛ գնացեք այդ կինոն:

Բայց դե ես չկարողացա հասկանալ կողքիս նստած տիկնոջը, որ ամբողջ կինոյի ընթացքում լաց եղավ: Ա, որքան շատ կեղծիք էր ցուցադրվում, այնքան դառն էր լալիս նա: Կարելի էր կարծել, թե նա շատ գթառատ է, բարի, բայց ես նստած էի կողքին ու տեսնում էի, թե ինչքանով է բարի: Նրա հետ եկել էր որդին, փոքրիկ մի տղա, որի համար տխուր էր, ձանձրալի, և ամբողջ ժամանակ նվնվում էր, թե գուգարան է ուզում, իսկ մայրը նրան շտաբավ: Ամբողջ ժամանակ ասում էր. հանգիստ նստիր, քեզ կարգին պահիր: Փայլը թերևս նրանից բարի լինելու էր: Ընդհանրապես, եթե վերցնենք

կեղծ կիեռնկար նայելիս սրտակեղեք արտասովոր տասը մարդ, հաստատ կարելի է ասել, որ նրանցից ինը կյանքում ամենաթունը սրիկաներն են, էուրջ հմ ասում:

Որք ֆիլմն ավարտվեց, գնացի Վիկեր-բար, որտեղ պետք է հանդիպեի Կառլ Լյուսի հետ, ու գնալիս անընդհատ մտածում էի պատերազմի մասին: Պատերազմական ճկարները միշտ այդպիսի մտորումների առիթ են տալիս: Հավանաբար, ես չէի դիմանա, եթե հարկ լիներ պատերազմ գնալ: Ընդհանրապես սարսափելի չէ, եթե քեզ ուղարկեն մի որևէ տեղ ու այնտեղ սպանեն, բայց այս հարկավոր է բաժանակուսմ մնալ աստված գիտի, թե որքան: Պա է ցավը: Իմ եղբայր Գ. Բ-ն շորս տարի մնացել է բանակում: Նա պատերազմում էլ է եղել, մասնակցել է երկրորդ ճակատի մարտերին, բայց, կարծում եմ, բանակում ծառայելն ավելի էր ասում, քան պատերազմը: Սա դեռ բավական փոքր էի, երբ ես գալիս էր տուն, ամբողջ ժամանակ մահճակալին պառկած էր լինում: Նա նույնիսկ հյուրասենյակ հազվադեպ էր մտնում: Հետո գնաց Ծվրոպա, պատերազմ, բայց չի վիրավորվել, նրան չի վիճակվել նույնիսկ կրակել որևէ մեկի վրա: Նրա արածն այն է եղել, որ շտաբի մեքենայով ամբողջ օրը մահ է ածել մի կովբոյական գեներալի: Նա մի անգամ ինձ ու Ալլիքն ասաց, որ եթե ստիպված լիներ կռվել, չէր իմանա, թե ում վրա կրակի: Նա ասաց, թե մեր բանակում էլ քիչ շան որդիներ չկան, քան ֆաշիստների մոտ: Հիշում եմ, Ալլին հարցրեց նրան, թե գուցե լա՞վ է, որ նա եղել է պատերազմում, որովհետև գրող է, ու հիմա գրելու նյութ ունի: Իսկ ես Ալլիքն ստիպեց բերել բեյսբոլի այն ձեռնոցը, որի վրա բանաստեղծություններ էր արտագրել, և հարցրեց. ո՞վ է ավելի լավ գրել՝ Ռուպերտ Բրո՞ւկը, թե էմիլի Դիքինսոնը: Ալլին ասաց՝ էմիլի Դիքինսոնը: Սա ոչինչ չէի կարող ասել, որովհետև առհասարակ բանաստեղծություն չեմ կարդում, բայց մի բան հաստատ կարող եմ ասել՝ ես հավանաբար կխնձթանայի, եթե հարկադրված լինեի ծառայել, աստի՛ էկլիթ, Մորեդլեյ-թերթի և այն վերելակավարի՝ Մորիսի նման տիպերի հետ: Մի անգամ մի ամբողջ շաբաթ ես բոյսքառթ էի, և գլուխս արդեն պտտվում էր, երբ նայում էի իմ առջև կանգնած տղայի ծոծրակին: Իսկ մեզ միշտ հարկադրում էին նայել առջև

կանգնածի ծոծրակին: Աղնիվ խոսք, հթե սլատերազմ լինի, թող ինձ տանեն և գնդակահարեն: Ես չեմ էլ դիմադրի: Բայց մի հարցում ինձ վրդովում է իմ ավագ եղբայրը. ատում է պատերազմը, բայց անցյալ ամառ տվեց ինձ կարգալու «Մնաս բարով, զենք» գիրքը: Ասաց, թե հրաշալի գիրք է: Այ թե ինչն է ինձ համար անհասկանալի: Այնտեղ հերոսը, այդ լեյտենանտ Հենրի, հրաշալի տղա է համարվում: Չեմ հասկանում, Գ. Բ.-ն ինչպե՞ս է ատում պատերազմը, ատում բանակը և, այնուամենայնիվ, հիանում այդ կոտորավանդի: Չեմ կարողանում հասկանալ, թե նրան ինչո՞ւ է դուր գալիս այդպիսի կեղծիքը, և միաժամանակ դուր են գալիս նաև Թինգ Լարդներն ու «Մեծ Գետսբին»: Գ. Բ.-ն ինձնից նեղացավ և ասաց, թե դեռևս ես շատ փոքր եմ «Մնաս բարով, զենքը» գնահատելու համար, բայց, իմ կարծիքով, դա ճիշտ չէ: Ես նրան ասացի. չէ՞ որ ինձ դուր է գալիս Ռինգ Լարդները, և «Մեծ Գետսբին», Հատկապես՝ «Մեծ Գետսբին»: Այո, Գետսբին: Այ դա մա՛րդ է: Ո՛ւժ է:

Մի խոսքով, ես ուրախ եմ, որ հայտնագործել են ատոմային ռումբը: Եթե երբևէ պատերազմ սկսվի, ես կնստեմ արդակի այդ ռումբի վրա: Կամավոր կնստեմ, ազնիվ, անկեղծ խոսք:

## 19

Գուցե դուք Նյու-Յորքում չեք ապրել և չգիտեք, որ «Վիկեր-բարը» գտնվում է շատ շքեղ հյուրանոցում՝ «Սեթոն-օթելում»: Առաջ ես հաճախ էի այնտեղ լինում, բայց հետո գաղարեցի: Բոլորովին չեմ գնում այնտեղ, եխտ նրբաճաշակ բար է համարվում դա, և բոլոր պիժոնները այնտեղ են խցկվում: Մի երեկոյի ընթացքում երեք անգամ ելույթ են անենում այդ ֆրանսուհիները՝ Թինան և Ժանինը, դաշնամուր են նվագում և երգում: Մեկը սոսկալի վատ էր նվագում, իսկ մյուսը կամ անվայելուչ երգեր էր երգում, կամ ֆրանսիական, նա, որը երգում է՝ Ժանինը, նախ մոտենում է միկրոֆոնին ու փչում նախքան երգելը: Ատում է. «Բսկ հիմա մենք ձեզ համար կերգենք «Վուլբ վու ֆրանսե» պոկրիկ երգ: Տա պոկրիկ ֆրանսածի աղջկա մասին, որ եկավ շատ մեծ քա-

զաք Նուույորկ և սիրահարվեց մի պոկրիկ տղա Բրուկլինից։ Մենք համոզված, որ երգ ձեզ շատ դուր գա»։ Կշշնչա, կփրսփրսա, իսկ հետո կերգի այդ հիմար երգը՝ կեսը Ֆրանսերեն, կեսը անգլերեն, ու բոլոր պիժոնները կսկսեն հիացմունքից խենթանալ։ Եթե այնտեղ մի կողմ նստած լսեիր, թե ինչպես են ծափահարում, ամբողջ աշխարհը կատեիք, պասսվոլս եմ երգվում։ Բարի տնօրենն էլ է անասուն։ Սոսկալի պճնամուլի մեկն է։ Նա ձեզ հետ մի բառ անգամ չի փոխանակի, եթե որևէ նշանավոր անձ չեք կամ երևելի մեկը։ Իսկ եթե նշանավոր անձ եք, ապա կաշվից դուրս կգա, հազար կտոր կլինի, զգվում ես նայելուց։ Կմոտենա, այնպես լայն կժպտա, սովորական, իբր, տեսեք, թե ինչպիսի՜ հրաշալի մարդ եմ, կհարցնի. «Հը՞, ինչպե՞ս է ձեզ մոտ, Կոննետիկատում», կամ՝ «Հը՞, ինչպե՞ս է ձեզ մոտ, Տլորիդայում»։

Գարշելի բար է, լրջորեն։ Ես գրեթե դադարել եմ այնտեղ գնալուց։ Գեռ բավական վաղ էր, երբ գնացի այնտեղ։ Նստեցի վաճառասեղանի մոտ, — մարդիկ քիչ կային, — և սողայով վիսկի խմեցի, չսպասելով կյուսին։ Երբ պատվիրում էի, վեր էի կենում աթոռակից, թող տեսնեն, որքան բարձրահասակ եմ ու ինձ անշափահասի տեղ չդնեն։ Հետո սկսեցի գննել բոլոր պիժոններին։ Կողքիս նստածն ամեն կերպ հոգ էր տանում իր աղջկան։ Անվերջ հավատացնում էր, թե նա լազվական ձեռքեր ունի։ Միծաղս գալիս էր։ Իսկ դահլիճի մյուս ծայրում հավաքվել էին աննորմալները։ Նրանց արտաքին տեսքը, ճիշտ է, այնքան էլ աննորմալ չէր՝ ոչ երկար մազեր, ոչ որևէ այլ բան, բայց անմիջապես կասեիր, թե ինչ մարդիկ են գրանք։ Եվ վերջապես, ներկայացավ կյուսն ինքը։

Կյուսը՝ տիպ է։ Այդպիսիները հազվադեպ են. Երբ մենք սովորում էինք Հուտտոնի դպրոցում, նա իմ դասուսուցչ-բարձրդասարանցին էր։ Բայց նրա արածն այն էր, որ սեքսի մասին հազար ու մի զրույցներ էր անցկացնում, երբ իբր սենյակում հավաքվում էին տղաները։ Նա այդպիսի բաների մասին շատ քաջատեղյակ էր, հատկապես բազմապիսի աննորմալների մասին։ Միշտ ինչ-որ այլասերվածների մասին էջ պատմում, որ ընկնում են ոչխարների ետևից կամ իրենց ըլլապաների աստառին կանացի վարտիքներ են կարում։ Այդ կուռք անգիր գիտեր, թե ով է արվամուլ, ով՝ լեսուրհի.

գրեթէ ամբողջ Ամերիկայում: Մի որեէ անգլանուն տատ, ումն ուզում է լինի, և կյուսը անմիջապես կասի արվամալ է նա, թե ոչ: Ուղղակի դժվար էր հավատալ, որ բոլոր այդ մարգիկ՝ կինոդերասանները և այլն, կամ արվամոլներ են, կոմ լեսրուհիներ: Ախր նրանցից շատերն ամուսնացած էին: Սատանան գիտի, թե նա որտեղից էր դա հորինում: Հարյուր անգամ կարող ես նրան հարցնել. «Մի՞թե Զո Քլոուն էլ է գրանցից: Զո Քլոուն, այդ հսկան, այդպիսի ուժի տեր մարդը, նա՛, որ միշտ գանգատերի ու կոպրոյի դերեր է կատարում, մի՞թե նա է»: Եվ կյուսը պատասխանում էր՝ անկասկած: Նա միշտ ասում էր՝ անկասկած: Նա ստում էր, ոչ մի նշանակութուն չունի՝ մարդը ամուսնացած է, թե ոչ: Ասում էր, թե ամուսնացածների կեսը այլասերվածներ են ու իրենք էլ դա չեն գիտակցում: Ասում էր՝ ամեն մարդ էլ կարող է հանկարծ այդպիսին դառնալ, եթե նախադրյալներ ունի: Վախեցնում էր մեզ սոսկալի: Երբեմն ես Կիշերը չէի քնում, անվերջ վախենում էի՝ հանկարծ ես էլ աննորմալ դառնամ: Բայց ամենածիժադիլին այն է, որ կյուսն ինքն այնքան էլ նորմալ չէր: Միշտ ավեղցիվեղ գուրս էր տալիս, ամեն ինչի մասին, բայց միշտանցքում ուղղակի հոգիդ հանում էր: Եվ միշտ զուգարանից լվացարան տանող դուռը բաց էր թողնում. դու ատամներդ ես լվանում կամ լվացվում ես, իսկ նա այնտեղից քեզ հետ գրուցում է: Իմ կարծիքով դա էլ է ինչ-որ շահով այլասերվածութուն, աստված վկա: Գարոցներում ես հաճախ եմ տեսել իսկական աննորմալների, և նրանք միշտ այդպիսի օլիներ էին անում: Գրա համար էլ կասկածում էի, որ կյուսն ինքն այդպիսին է: Բայց նա շատ էր խելոք, կատակը մի կողմ:

Նա երբեք չի բարևում, չի ասում շողջույն: Հիմա էլ հայտնեց, որ մի բոպեով է եկել: Ասաց, որ տեսակցութուն ունի: Հետո պատվիրեց, որ շոր մարտինի մատուցեն իրեն: Ասաց, որ բարմենը քիչ թուլացնի և ձիթապտուղ չզցի:

— Լսիր, ես քեզ համար մի լավ աննորմալ եմ գտել, — ասում եմ, — ա՛յ, վաճառասեղանի ծայրին: Հիմա դեռ մի՛ նայիր: Քեզ համար եմ նշան արել:

— Ինչպիսի՞ սրամտութուն, — ասում է: — էլի նույն Փոլֆիլդն ես: Ե՛րբ ես մեծանալու:

Երևում է, ես նրան զայրացնում էի: Իսկ ինձ համար ծի-  
ծազելի էր: Այգպիսի տիպերը միշտ ինձ ծիծաղ են պատ-  
ճառում:

— Հը՞, ինչպե՞ս են անձնական գործերդ,— հարցնում  
եմ: Նա տաննիլ շէր կարող, երբ այգ մասին հարցնում էին:

— Վերջ տուր,— ասում է,— ի սեր աստօ՞ն, հանգիստ  
նստի՞ր և վերջ տուր հիմարութիւնների գուրս տալուն:

— Իսկ ես հանգիստ եմ նստած,— ասում եմ:— Ինչպե՞ս  
է Կոլումբիան: Քեզ գո՞ւր է գալիս այնտեղ:

— Անպայման: Շատ է դուր գալիս: Եթէ դուր չգար, չէ՞  
գնա,— ասում է: Երբեմն նա էլ ինձ էր զայրացնում:

— Իսկ ի՞նչ մասնագիտութիւն ես ընտրել,— հարցնում  
եմ:— Ամեն տիպի այլաօերվածութիւննե՞րն ես ուսումնասի-  
րում:— Ես ուզում էի ձեռ առնել նրան:

— Գու, կարծեմ, փորձում ես սրամտե՞լ:

— Զէ, հենց այնպես,— ասում եմ:— Լսիր, Լյուս, գու  
շատ խելոք տղա ես, զարգացած: Ինձ անհրաժեշտ է քա խոր-  
հուրդը: Սոսկալի վիճակի մեջ եմ...

Նա բարձր տնքաց.

— Օ՛հ, Քուիֆիդ, վերջ տուր: Մի՞թե շե կարող հանգիստ  
նստել, խոսել...

— Լազ, լազ,— ասում եմ,— մի՞ հուզվիր...

Երևում է, շէր ուզում ինձ հետ լուրջ բաների մասին խո-  
սել: Գծվար է այդ խելոքների գործը: Երբեք չեն կարող լըր-  
ջօրին խոսել մարդու հետ, եթէ անտրամադիր են: Ստիպված  
նրա հետ սկսեցի խոսել ընդհանուր բաների մասին:

— Զէ, լուրջ եմ ասում, ինչպե՞ս են անձնական գործերդ:  
էլի էն տիկնիկի հե՞տ ես ման գալիս, հիշո՞ւմ ես, շուտտոնի  
դպրոցում: Նա էլի այնպիսի խոշոր...

— Օ՛, տեր աստված, իհարկե, չէ:

— Ինչպես թե, իսկ որտե՞ղ է հիմա նա:

— Ոչ մի տեղեկութիւն չունեմ: Եթէ կուզես իմանալ, նա,  
իմ կարծիքով, դարձել է Կոլումբիայի շահագործողի համան  
մի բան:

— Գա խոզութիւն է: Եթէ նա քեզ այդքան բան է թույլ  
տվել, գու, համենայն դեպս, նրա մասին այդպես զարշիլի  
ձևով չպետք է արտահայտվես:

— Օ՛, սատանա,— ասաց Նյուսը:— Մի՞թե տիպիկ քոլ-  
ֆիլդյան խուսկեցութուն է սկսվում: Գոնե նախազգուշաց-  
նեիր:

— Ոչինչ էլ չի սկսվում,— ասացի ես:— Եվ, այնուամե-  
նայնիվ, դա խոզութուն է: Եթե նա այդպես լավ է վերա-  
բերվել քեզ, որ թույլ է տվել...

— Մի՞թե կարիք կա շարունակելու այդ տհաճ տիրազ-  
նեռը...

Ես ոչինչ չասացի: Վախեցա, որ եթե չլռեմ, նա վեր կկե-  
նա ու կգնա: Հարկ եղավ մի բաժին էլ վիսկի պատվիրել:  
Հանկարծ թունդ խմելու ցանկութուն առաջացավ:

— Ո՞ւմ հետ ես հիմա ման գալիս,— հարցնում եմ:—  
Կարո՞ղ ես ինձ պատմել: Եթե ուզում ես, իհարկե:

— Դու նրան շես ճանաչում:

— Գուցե ճանաչում եմ: Ո՞վ է:

— Գրինիչ-վիլեչից է: Քանդակագործուհի, եթե շատ ես  
ուզում իմանալ:

— Իսկապե՞ս: Իսկ քանի՞ տարեկան է:

— Տեր աստված, մի՞թե ես նրան հարցրել եմ:

— Դե, մոտավորապես, որքա՞ն է:

— Դե, երեսունն անց,— ասում է Նյուսը:

— Երեսունն ա՞նց: Եվ դա քեզ դո՞ւր է գալիս,— հարց-  
նում եմ:— Քեզ այդպիսի պառավեն՞րն են դուր գալիս:—  
Ես նրան հարցնում էի գլխավորապես այն պատճառով, որ  
նա գլուխ էր հանում այդ գործերից: Ամեն մարդ չի կարող  
այդպես գլուխ հանել, ինչպես նա: Նա անմեղութունը կորց-  
րել էր տասնչորս տարեկանում, նանտուկետում, ազնիվ խոսք:

— Ուզում ես իմանալ, թե ինձ հասո՞ւն կանայք են դուր  
գալիս: Անպայման:

— Ահա թե ի՞նչ: Ինչո՞ւ: Չէ, իսկապես, նրանց հետ ազնի-  
վ՞ լավ է:

— Լսիր, մեկ էլ եմ ասում, վերջ տուր քո էդ քոլֆիլդյան  
հարցուփորձին, գոնե այս երեկու: Ես հրաժարվում եմ պա-  
տասխանել: Ե՞րբ, վերջապես, կմեծանաս դու, գրողը տանի:

Ես ոչինչ չպատասխանեցի, որոշեցի մի փոքր լռել: Հետո  
Նյուսն էլի մարտինի պատվիրեց և խնդրեց բուրոսվին ջուր  
չավելացնել:



— Լսիր, այնուամենայնիվ, առա, վաղո՞ւրց ես նրա հետ  
տալում, այդ քանդակագործուհու։— Ինձ իսկապես հետագ  
քրքրիր էր դա։ — Դու նրա հետ Հուստոսի դպրոցի՞ց ես ծագ  
եաթ։

— Չէ, ես վերջերս է եկել նահանգներ, մի քանի ամիս  
տառաչ։

— Հա՞։ Որտեղացի՞ է նա։

— Պատկերացրու որ Շանհայից։

— Մի՞ ստի։ Չինուհի՞ է, ինչ է։

— Անկասկած։

— Սուտ ես ասում։ Եվ քեզ դո՞ւր է գալիս, որ նա շի  
նուհի է։

— Անշուշտ, դուր է գալիս։

— Բայց ինչո՞ւ։ Ազնիվ խոսք, ինձ հետաքրքիր է իմա  
նալ, ինչո՞ւ։

— Պարզապես ինձ արևելյան փիլիսոփայությունն ավելի  
է գոհացնում, քան եվրոպականը, եթե շատ ես ուզում իմա  
նալ։

— Ի՞նչ փիլիսոփայություն։ Սեքսուա՞լ։ Ինչ է, նրանց  
մոտ, Չինաստանում, դա ավելի՞ լավ է։ Դա՞ ես ուզում  
ասել։

— Ես Չինաստանի մասին չեմ ասում։ Ընդհանրապես՝  
Արևելքի։ Տեր աստված։ Մի՞թե հարկավոր է շարունակել այս  
անմիտ զրույցը։

— Լսիր, ես լրջորեն եմ հարցնում քեզ, — ասում եմ, —  
կատակ չեմ անում։ Արևելքում ինչո՞ւ է այդ ամենն ավելի  
լավ։

— Չափից գուրս բարդ բան է դա, հասկանո՞ւմ ես, —  
ասում է Լյուսը։ — Պարզապես նրանք գտնում են, որ սերը  
ոչ միայն ֆիզիկական կապ է, այլև հոգեկան։ Դե ինչո՞ւ  
պիտի ես քեզ սկսեմ...

— Բայց ես էլ եմ այդպես գտնում։ Ես էլ եմ գտնում, որ  
դա, ինչպես ասացի՞ր, և՛ հոգեկան է, և՛ ֆիզիկական։ Ազնիվ  
խոսք, ես էլ եմ այդպես գտնում։ Բայց ամեն ինչ կախված  
է նրանից, թե ում հետ ես կապված։ Եթե դա ինչ-որ մեկն  
է, որին դու բուրբուրվին էլ...

— Մի՛ գոռա այդպես, ի սեր աստծո, եթե չես կարող  
ցածր խոսել, արի վերջ տանք այս...

— Լա՛վ, լա՛վ, միայն թե լսիր,— ասում եմ: Ես մի քիչ  
հուզվում էի և իսկապես բարձր էի խոսում: Պատահում է,  
որ լափից դուրս բարձր եմ խոսում, երբ հուզվում եմ:—  
Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ուզում ասել, ես ուզում եմ ասել,  
որ կապը պետք է լինի և՛ ֆիզիկական, և՛ հոգեկան, և՛ գե-  
ղեցիկ, մի խոսքով, ամեն տիպի: Բայց հասկացիր, չի կա-  
րող պատահել, որ բոլորի հետ էլ այդպես լինի,— ասի  
բոլոր աղջիկներին, ում հետ որ համբուրվում ես,— չի՛ կարող:  
Իսկ գուցե կարո՞ղ ես:

— Արի վերջացնենք այս խոսակցությունը,— ասում է  
Լյուսը:— Չե՞ս առարկում:

— Լավ, բայց, այնուամենայնիվ, լսիր: Վերջնենք թե-  
կուզ քեզ և այդ շինուհուն: Ի՞նչ մի լավ բան կա ձեր մեջ:

— Ասացի՛ վերջացնենք:

Ֆհարկե, հարկ չկար այդպես քիթը խոթելու նրա անձնա-  
կան կյանքի մեջ: Ես դա հասկանում եմ: Բայց Լյուսը մի  
սոսկալի տհաճ հատկություն ուներ: Երբ մենք սովորում էինք  
Հուտտոնի դպրոցում, նա ստիպում էր ինձ պատմել իմ ամե-  
նագաղտնի ապրումները, իսկ հենց որ հերթն իրեն էր հաս-  
նում, զայրանում էր:

Այդ խելոքները չեն սիրում խելոք խոսակցություն վարել,  
նրանք սիրում են, որ միայն իրենք ճամարտակեն: Գտնում  
են, որ եթե իրենք լռել են, գուցե էլ պիտի լռես, եթե իրենք  
գնացին իրենց սենյակը, ապա դու էլ քո սենյակը պիտի  
դնաս: Երբ սովորում էինք Հուտտոնի դպրոցում, Լյուսն ուզ-  
գակի տանել շէր կարողանում, որ մենք էինք սկսում խոսել  
իր պատմել վերջացնելուց հետո: Նույնիսկ եթե հավաքվում  
էինք մեկ ուրիշ սենյակում, Լյուսը տանել շէր կարողանում:  
Նա միշտ պահանջում էր, որ բոլորը ցրվեն: Իրենց սենյակնե-  
րը և նստեն այնտեղ, քանի որ ինքը վերջացրել էր իր ասե-  
լիքը: Ամբողջ գաղտնիքը այն էր, որ նա վախենում էր հան-  
կարժ որևէ մեկը մի ավելի խելոք բան ասեր, քան ինքը:  
Այնուամենայնիվ, նա շատ ծիծաղելի տիպ էր:

— Հավանաբար, հարկ կլինի մեկնել Չինաստան,— ասում  
եմ:— Իմ անձնական կյանքը ոչ մի բանի պետք չէ:

— Գա բնական է, քո գիտակցությունը դեռ չի հասունացել:

— Ճիշտ է: Գա շատ ճիշտ է, ինքս էլ գիտեմ,— ասում եմ:— Բայց գիտե՞ս, ցափն ինչ է: Ես շեմ կարողանում իսկական հույզ ապրել, հասկանո՞ւմ ես, իսկական, եթե աղջիկն ինձ իսկապես դուր չի գալիս: Հասկանո՞ւմ ես, նա պետք է ինձ դուր գա: Իսկ եթե դուր չի գալիս, ապա ես շեմ էլ ուզում աղջկան, հասկանո՞ւմ ես: Տեր աստված, իմ ամբողջ կյանքը դրա պատճառով գրողի ծոցն է գնում: Գարշանք է ամբողջությամբ: Սա հո կյանք չի:

— Դե, իհարկե, գրողը տանի: Ես քեզ դեռ անցյալ անգամ եմ ասել, թի ինչ պետք է անել:

— Գնամ հոգեվերլուծողի մոտ, այո՞,— ասացի ես: Անցյալ անգամ նա էր խորհուրդ տվել ինձ: Նրա հայրը հոգեվերլուծող է:

— Դե դա քո գործն է, աստված իմ: Իմ ի՞նչ գործն է, թե դու ինչպես կվարվես:

Ես ոչինչ չասացի: Մտածում էի:

— Լավ, ասենք, զնացի քո հոր մոտ ու խնդրեցի հոգեվերլուծության ենթարկել ինձ,— ասացի ես,— իսկ ի՞նչ է անելու նա ինձ: Ասա տեսնեմ, ի՞նչ է անելու:

— Ոչ մի բան էլ չի անելու: Պարզապես կխոսի, դու էլ նրա հետ կխոսես: Ինչ է, շե՞ս հասկանում: Կարևորն այն է, որ նա կօգնի քեզ հասկանալու մտքերիդ ընթացքը:

— Ի՞նչը, ի՞նչը:

— Մտքերիդ ընթացքը: Դու խճճվել ես բարդությունների մեջ... Օ՛հ, գրողը տանի, ինչ է, հոգեվերլուծության դասընթաց պիտի կարդամ քեզ համար: Ուզում ես, հորս մոտ ընդունելության հերթի գրվիր, շես ուզում, մի՛ գրվիր: Անկեղծ սասած, դա ինձ համար միանգամայն միևնույնն է:

Ես ձեռքս դրի նրա ուսին: Ինձ համար շատ ծիծաղելի էր:

— Իսկ դու իսկական ընկեր ես, հա՞, շան որդի,— ասում եմ,— դա քեզ հայտնի՞ է:

Նա նայեց ժամացույցին:

— Հարկավոր է շտապել,— ասաց ու վեր կացավ:— Ուրախ եմ քեզ տեսնելուս համար:— Նա կանչեց բարձնի՞ն ե խնդրեց ներկայացնել հաշիվը:

— Լսիր, — ասում եմ, — իսկ քո հայրը քեզ հոգեվերլուծ  
ժուռայան ենթարկե՞լ է:

— Ի՞նչ: Ինչո՞ւ ես հարցնում:

— Հենց այնպես, ենթարկե՞լ է, թե ոչ:

— Ինչպես ասեմ: Ոչ լրիվ: Պարզապես նա օգնել է ինձ  
հարմարվել կյանքին, բայց խոր վերլուծության անհրաժեշ-  
տություն չի եղել: Իսկ ինչո՞ւ ես հարցնում:

— Հենց այնպես: Հետաքրքիր է:

— Դե մնաս բարով, հաջողություն, — ասաց նա: Քեյա-  
վհար թողեց ու պատրաստվեց գնալու:

— Ինձ հետ մի բաժակ էլ խմիր, — ասում եմ: — Խնդրում  
եմ: Քախիժը սիրտս ուտում է: Լրջորեն, մեա՛:

Նա ասաց, որ չի կարող: Ասաց, որ առանց այդ էլ ուշա-  
ցել է և գնաց:

Այո, Լյուսը տիպ է: Իհարկե, նա մզմըզ է, բայց վիթխա-  
բի բառապաշար ունի: Մեր դպրոցի բոլոր աշակերտներից  
ամենամեծ բառապաշարը նա ունի: Մեզ համար հատուկ  
ստուգումներ էին կազմակերպում:

## 20

Նստել, խմում էի և սպասում, թե վերջապես երբ են դուրս  
գալու Քինան ու ժանիւր, իրենց օյիններով, բայց, պարզ-  
վեց, նրանք այլևս չկան: Դուրս եկավ կանացի կերպարան-  
քով, զանգրացրած մազերով մի տիպ ու սկսեց դաշնամուր  
նվագել, իսկ հետո մի նոր գեղեցկուհի՝ Վալենսիան, երգեց:  
Սրա մեջ ոչ մի լավ բան չկար, բայց, համենայն դեպս,  
Քինայից ու ժանիւրից լավն էր, գոնե լավ երգեր էր երգում:  
Դաշնամուրը դրված էր անմիջապես վաճառասեղանի մոտ,  
որտեղ նստած էի ես, և այդ Վալենսիան գրեթե իմ կողքին  
էր կանգնած: Ես թեթևակի աչքով արեցի նրան, բայց նա  
ձևացրեց, թե չի նկատում ինձ: Երևի աչքով շանի, բայց  
սոսկալի հարբած էի: Նա ավարտեց երգն ու այնպես արագ  
չքվեց, որ շհասցրի հրավիրել ինձ հետ մի որևէ բան խմելու:  
Ես կանչեցի ավագ մատուցողին և պատվիրեցի հարցնել պա-  
ռավ՝ Վալենսիային, թե չի՞ ցանկանա արդյոք ինձ հետ մի  
բան խմել: Նա ասաց, որ անպայման կհարցնի, բայց, հա-

Վանաքար, նույնիսկ շահողորդեց իմ խնդրանքը: Ծրքեք ոչ ոք չի հաղորդում ասածդ, երբ մի բան ես խնդրում:

Ես նստեցի այդ անիծյալ բարում գրեթե մինչև գիշերվա մեկը ու խմեցի ինչպես մի շուն շան որդի: Թունդ հարբեցի: Բայց մի բան լավ էի հիշում՝ չի կարելի աղմկել, չի կարելի խանգարել: Չէի ուզում, որ ինձ վրա յուշադրութուն դարձնեն, մեկ էլ տեսար հարցրին նաև, թե քանի տարեկան եմ: Բայց ինչպե՞ս էի հարբել, ուղղակի սոսկալի էր: Իսկ երբ վերջնականապես հալից ընկա, էլի սկսեցի երեակայել այն հիմար պատմութունը, իբր իմ աղիքներում գնդակ կա: Մե՜նակ նստած եմ բարում, գնդակը փորիս մեջ: Ձեռքս ամբողջ ժամանակ պահում էի բաճկոնիս տակ, որպեսզի արյունը չկաթեր հատակին: Չէի ուզում ցույց տալ, որ վիրավոր եմ: Թաքցնում էի, որ ինձ՝ հիմարիս, վիրավորել են: Եվ էլի սոսկալի ցանկութուն ունեցա զանգահարել Ջեյնին, իմանալ՝ վերադարձե՞լ է նա, տա՞նն է, թե չէ: Հաշիվը փակեցի և գնացի ավտոմատի խցիկը: Գնում եմ, ձեռքս վերքիս սեղմած, որպեսզի արյունը չկաթի: Այ թե ինչ օրի էի:

Բայց երբ հայտնվեցի հեռախոսախցիկում, փռշմանեցի և, Ջեյնին զանգահարելու փոխարեն, երևի շափեց դուրս հարրած էի, զանգահարեցի Սալլիին:

Հավանաբար, մի քսան համար փորձեցի, մինչև որ ճիշտը հավաքեցի: Թո՛ւհ, ի՞նչ աստիճան էի խմած:

— Ալլո,— գոչեցի ես, երբ ինչ-որ մեկը մոտեցավ այդ երիցս անիծյալ հեռախոսին: Նույնիսկ ոչ թե գոչեցի, այլ բղավեցի, այնքան որ խմած էի:

— Ո՞վ է խոսում,— հարցնում է կանացի մի սառցի խայն:

— Ես եմ, Հոլդեն Քուֆիլդը: Կանչեցեք խնդո՞ւմ, Սալլիին...

— Սալլին արդեն քնած է: Տատիկն է խոսում: Ինչո՞ւ եք այսպես ուշ ժամի զանգահարում, Հոլդեն: Գիտե՞ք ժամը քանիսն է:

— Գիտեմ: Ես պետք է խոսեմ Սալլիի հետ: Շատ կարևոր է: Այստեղ տվեք նրան:

— Սալլին քնած է, երիտասարդ, զանգահարեցեք վաղը: Բարի գիշեր:

— Արթնացրեք նրան: է՛յ, արթնացրեք նրան: (սո՛ւմ եք: Ու հանկարծ մեկ ուրիշ ձայն խոսեց.

— Հողդեն, հս հմ:

Սալլին էր:

— Այդ ի՛նչ օջիհներ հս հանում:

— Սալլի, դո՛ւ հս:

— Այո, այո, մի՛ գոռա, խնդրեմ: Հարբա՛ծ հս:

— Ըհը՛: Լսիր: Լսիր, է՛յ, հս ճրագալույցին կգամ, լա՛՞վ: Քեզ հեռ կզարդարեմ այդ գրողի տարած տոնածառը, լա՛՞վ: Լսո՛ւմ հս: Լա՛՞վ: Հա՛:

— Հա՛, հա՛, իսկ հիմա գնա քնիր: Որտե՞զ հս, լա՛՞վ կա հետդ:

— Ոչ սք: Ես հմ, մեն-մենակ, հս ինքս:— Օ՛հ, ինչպես էի հարբել: Կանգնել հմ ու փորս բռնել:— Ինձ գեղակահարեղ հն: Ռոկկի ավազակախումբը ինձ սպանել է: Լսո՛ւմ հս, Սալլի, Սալլի, դու ինձ լսո՛ւմ հս:

— Ես աշինչ շեմ հասկանում: Գնա քնիր: Ես էլ պետք է քենեմ: Վաղը զանգահարիր:

— Լսիր, Սալլի, ուզո՛ւմ ես գամ տոնածառը զարդարելու: Ուզո՞ւմ հս, հը՛:

— Այո, այո, բարի գիշեր:

Եվ լսափողը կախեց:

— Բարի գիշեր: Բարի գիշեր, Սալլի, սիրելիս: Արևս, իմ սիրելի աղջիկ,— ասում հմ: Պատկերացնո՛ւմ եք, որքան հմ խմած:

Հետո հս էլ կախեցի լսափողը: Ու մտածեցի, որ նա, հա՛վանաբար, հենց նոր է վերադարձել հյուրընկալությունից: Հանկարծ պատկերացրի, որ նա ինչ-որ տեղ ուրախանում է այդ Լանտերի ու մեկ էլ էնդովերցի այն թիթիզի հետ: Իրր նրանք բոլորը լողում են մի վիթխարի թեյնիկի մեջ ու զրուցում այնպիսի խիստ նրբաճաշակ բառերով, կոկեսություններ անում ցուցադրաբար, կոտրատվում: Ես արդեն անիծում էի ինձ, որ զանգահարել հմ նրան: Բայց երբ հարբում հմ: ասես աննորմալ լինեմ:

Երկար կանգնեցի այդ երիցս անիծյալ խցիկում: Կախվեցի լսափողից, որպեսզի գիտակցությունս չկորցնեմ: Ընդունա ասած, սոսկալի վատ էի զգում: Վերջապես, մի կերպ գուրս

Յկա խցիկից, գնացի զուգարան ,ապուշի նման օրորվելով,  
այնտեղ սառը ջուր լցրի լվացարանը ու գլուխս մինչև ականջ-  
ներս մտցրի ջրի մեջ: Իսկ հետո, նույնիսկ շարքեցի: Քող  
կաթի ինչքան ուզում է: Հետո մոտեցա պատուհանի մոտի  
ջեռուցիչին ու նստեցի վրան: Այնպե՛ս տաք էր, հաճելի  
Հաճելի էր, որովհետև դողացնում էի շան լակոտի նման  
Միծաղելի է, հենց որ խմում եմ, սկսում եմ դողացնել:

Անելիք շունեի, նստել էի շեռուցիչի վրա ու հատակի  
ճերմակ սալիկներն էի հաշվում: Սոսկալի թրջվել էի: Ջուրը  
գլխիցս վզիս վրայով հոսում էր ծոցս: Փողկապս ամբողջովին  
թրջվել էր, օձիքս, բայց ես թքած ունեի: Այդ ժամանակ ներս  
մտավ այն տղան, որ նվագակցում էր Վալենտինային, կանա-  
ցի կերպարանքով այն գանգրահեր ֆրանսոր, ու սկսեց սան-  
քել իր ոսկեգույն խոսպոպիկները: Ու մինչ կսանրվեր, ես նրա  
հետ զրույցի բռնվեցի, թեև նա ինձ հետ այնքան էլ հարգալիք  
չէր խոսում:

— Լսեք, դուք կտեսնե՞ք այդ Վալենտինային, հրր մտենք  
գահլիճ,— հարցնում եմ:

— Դա զուրկ չէ հավանականությունից,— պատասխա-  
նում է: Սրամտում է տխմարը: Սրամիտ տխմարներն իմ  
գլխին եկովի են:

— Լսեցեք, իմ կողմից ողջուն հազորդեք նրան: Հարցրեք,  
այդ ստոր ավագ մատուցողը նրան հայտնե՞լ է իմ ողջունը,  
թե չէ:

— Ինչո՞ւ տուն չես գնում, Մաք: Քանի՞ տարեկան կլինես:

— Ութսունվեց: Լսեցեք, օղջունա հազորդեք նրան: Գհա-  
զորդե՞ք:

— Ինչո՞ւ տուն չես գնում, Մաք:

— Չեմ գնալու: Մ՛հ, շատ լավ եք նվագում դուք, գրազը  
տանի:

Ես դիտմամբ էի շողոքորթում նրան: Ընդուն ասած նա  
զգվելի էր նվագում:

— Դուք կարող եք ռադիոյով ելույթ ունենալ,— ասում  
եմ:— Չէ՞ որ գեղեցիկ եք: Ոսկեգույն գանգուրներ և այլն:  
Չեզ իմպրեսարիո է հարկավոր երևի, այո՞:

— Գնա տուն, Մաք, խելոք եղիր և գնա տուն, քնիր:

— Ծս տուն շունեմ: Առանց կատակի՝ ձեզ իմպրեսարիտ  
Վարկավոր է:

Նա նույնիսկ չպատասխանեց: Գուրս եկավ, և վերջ: Սան-  
րեց գանգուրները, սղալից ու գնաց: Ճիշտ և ճիշտ Ստրեդ-  
լեյթերն է որ կա: Այդ սիրունատես տականքնորը բոլորն  
իրար նման են: Սանրվում են, սղալվում և քեզ միայնակ  
թողնում:

Երբ վերջապես վեր կացա շեռուցիչի վրայից ու գնացի  
հանդերձարան, սկսեցի զոալ: Առանց մի պատճառի, քայլում  
էի ու լաց լինում: Գուցե այն պատճառով, որ շատ էի միայ-  
նակ ու տխուր: Իսկ հրը մոտեցա հանդերձարանին, չկարո-  
ղացա գտնել համարս: Բայց հանդերձապահուհին շատ լավ  
կին դուրս եկավ: Վերարկուս տվեց առանց համարի: Եվ  
«Պատլիկ Շերլի Բինգ» ձայնալուսակը: Ծս այն ուղղակի հետս  
ման էի ածում: Ուզեցի մեկ դուլար տալ հանդերձապահու-  
հուն, որ այդքան լավն է, բայց նա չվերցրեց: Համոզում էր,  
որ գնամ տուն և քնեմ: Ծս փորձեցի ժամադրվել նրա հետ,  
բայց նա շքանկացավ: Ասաց, որ ինձ մայր կսագի: Իսկ ես  
իմ ճերմակ մազերը ցույց եմ տալիս ու ասում, որ արդեն  
քառասունչորս տարեկան եմ, կատակով, իհարկե: Նա շատ  
լավիկն էր: Նրան դուր եկավ նույնիսկ իմ հիմար որսորդա-  
կան գլխարկը: Պատվիրեց դնել գլխիս, որովհետև մազերս  
ամբողջապես թաց էին: Հիանալի կին էր:

Թարմ օդում հարբածությունս անցավ: Սոսկալի ցուրտ էր  
և ատամներս իրար էին զարկվում: Այնպես էի դողում, ոչ մի  
կերպ չէի կարողանում ինձ զսպել: Գնացի Մեդիսոն-ավենյու  
և սպասեցի ավտոբուսի: Գրեթե փող չէր մնացել գրպանումս,  
չէի կարող տաքսի նստել: Բայց բոլորովին չէի ուզում նաև  
ավտոբուս նստել: Բացի այդ, ինքս էլ չգիտեի ուր գնամ:  
Վերցրի ու գնացի զբոսայգի: Մտքովս անցավ, անցնել լճակի  
մոտով ու տեսնել որտե՞ղ են այն գրողի տարած բաղբրը,  
այնտե՞ղ են, թե չէ: Ծս այդպես էլ շիմացա՝ այնտե՞ղ են,  
թե ոչ: Զբոսայգին հեռու չէր: Իսկ ես, միևնույն է, գնալու  
տեղ չունեի: Զգիտեի նույնիսկ որտեղ պետք է գիշերեմ, դրա  
համար էլ գնացի այնտեղ: Հոգնածություն չէի զգում, առհա-  
սարակ ոչինչ չէի զգում, բացի սոսկալի տրտմությունից:

Եվ հանկարծ, հենց որ ոտք դրեցի զբոսայգի, սարսափելի



բան կատարվեց: Ձեռքիցս զցեցի քրոջս ձայնապնակը: Հազար կտոր եղավ: Հենց ծրարի մեջ էլ փշրվեց: Քիչ էր մնում հեկեկայի, այնպես էի ափսոսում, բայց միայն կտորները հանեցի ծրարի միջից ու լցրի գրպանս: Դրանք այլևս ոչնչի պետք չէին, սակայն չէի կարողանում դնել նետի: Ծս քայլեցի զբոսայգու երկարությամբ: Սոսկալի խավար էր:

Ամբողջ կյանքս նյու-Յորքում է անցել, և Կենտրոնական զբոսայգին գիտեմ հինգ մատիս պես, մանկուց ի վեր այնտեղ և՛ հեծանիվ եմ քշել, և՛ անվաշմուշկներ, և, այնուամենայնիվ, ոչ մի կերպ չէի կարողանում գտնել այդ լճակը: Հրաշալի գիտեի, որ Հարավային ելքի կողմում է, բայց չէի կարողանում գտնել: Հավանաբար, ավելի շատ էի հարբած, քան թվում էր: Քայլում էի ու քայլում, առանց կանգ առնելու: Գնալով ավելի ու ավելի շատ էր մթնում և ավիլի ու ավելի սարսափելի դառնում: Ոչ մի մարդ չհանդիպեց, և, փառք աստծո, թե չէ վախից վեր կթռչեի, երևի, եթե հանդիպեր: Վերջապես լճակը գտա: Կիսով չափ սառել էր, կիսով չափ՝ ոչ: Բայց բազրբը չկային: Ծս պտտվեցի լճի շուրջը, քիչ մնաց նույնիսկ մեջն ընկնեի, բայց ոչ մի բաղ չտեսա: Մտածեցի, գուցե ափին են քնած, թփերի մեջ, եթե առհասարակ այստեղ են: Ահա հենց այդ ժամանակ էլ քիչ մնաց շուրթ ընկնեի, բայց բազբը չգտա:

Վերջապես նստեցի մի նստարանի, որտեղ այնքան էլ մտք չէր: Սիրտս սոսկալի խառնում էր, իսկ մազերս, ծոծրակիս կողմում, սառցալուլաններ էին դարձել, թեև որսորդական զլխարկս զլխիս էր: Վախեցա: Հանկարծ թռքերի բորբոքում ստանամ ու մեռնե՞մ: Պատկերացրի, թե ինչպես միլիոնավոր երկնրեսանիներ կգան իմ թաղմանը: Պապիկս էլ կգա Դեմոսթրից, — նա միշտ բարձրաձայն տալիս է փողոցների անունները, երբ նրա հետ գնում ես ավտոբուսով, — մորաքույրերս էլ կգան, — ես հենց միայն հիսուն մորաքույր ունեմ, — կգան նաև իմ այդ տականք քեռորդիներն ու հորեղբոր որդիները: Հսկայական ամբոխ կհավաքվի, խոսք չկա: Դրանք բոլորը եկել էին, երբ Ալլին մահացել էր, զրանց ամբողջ ոհմակը: Գ. Բ-ն ինձ պատմում էր, որ մի հիմար-մորաքույր (նրա բերանից միշտ հոտ է գալիս) անվերջ հրանում էր, թե

արքան ա ն վ ր գ ո վ է պառկած Ալլին: Ծս ներկա շեմ եղել,  
պառկած էի հիվանդանոցում: Ստիպված էի բուժվել, խորն  
էի կտրել ձեռքս:

Ու հիմա հանկարծ սկսեցի մտածել, թե ինչպես եմ հի-  
վանդանում թոքերի բորբոքումով (մազերս բոլորովին սառել  
էին) և ինչպես եմ մեռնում: Ծնողներես խղճացի: Հատկա-  
պես մայրիկիս, նա դեռ խելքի շէր եկել Ալլիի մահից հետո:  
Պատկերացրի, թե ինչպես է կանգնել ու շի իմանում ինչ անթ  
իմ կոտորումներն ու սպորտային իրերը: Մի բան է ինձ մխի-  
թարում: Քույրիկիս շեն թողնի մասնակցի իմ հիմար թագ-  
մանը, որովհետև նա դեռ փոքր է: Միակ սփոփանքս դա է:  
Քայքայ մեկ էլ պատկերացրի, թե ամբողջ այդ անհեթեթ խում-  
բը ինչպես է թաղում ինձ գերեզմանոցում, քար է գցում  
շիրիմիս, ազգանունս վրան գրված և նման բաներ: Իսկ  
շուրջս՝ միայն մեռյալներ են: Հա՛, բավական է մեռնես, ան-  
միջապես կթաղեն: Միակ հույսս այն է, որ երբ մեռնեմ, մի  
խելոք մարդ գտնվի ու մարմինս նետի գետը: Ուր ուզում են  
գցեն, միայն թե ոչ այդ երիցս անհիժյալ գերեզմանոցը: Գեռ  
կիրազի օրհրին էլ պիտի գան, ծաղիկներ դնեն փոխիդ: Գա  
էլ զարշնի սոզորություն է: Մեռածի ինչի՞ն են պատք ծա-  
ղիկները, ո՞ւմ են պետք:

Լավ եղանակին ծնողներս հաճախ են գնում գերեզմանոց,  
ծաղիկներ են դնում Ալլիի շիրիմին: Ծս երկու անգամ գնացի  
նրանց հետ, հետո դադարեցի գնալ: Նախ այնքան էլ մի  
հաճելի բան չէ տեսնել նրան այդ զարշնի գերեզմանատանը:  
Պառկած է, շուրջը միմիայն մեռելներ են ու շիրմաքարեր:  
Երբ արև է, դեռ ոչինչ, բայց երկու անգամ, այո, երկու ան-  
գամ, երբ մենք այնտեղ էինք, անձրև սկսվեց: Ի՜նչ անտա-  
նելի էր: Անձրևը թափվում էր ուղղակի այդ գրողի ասրած  
տասյանաքարի վրա, ուղղակի նրա փորին բուսած խոտի  
վրա: Ասես դույրերով էր թափվում: Եվ գերեզմանոցի այցե-  
լուները հանկարծ գծերի պես նետվեցին դեպի իրենց մեքե-  
նաները: Այ թե ինչից տրաքվեցի: Նրանք կարող են նստել  
մեքենա, միացնել ուղիոն ու գնալ մի որևէ լավ ռեստորա-  
նում ճաշելու, ըող՞րը, բող՞րը կարող են, բացի Ալլիից: Ան-  
տանելի խոզություն է: Գիտեմ, որ այնտեղ գերեզմանատանը

միայն նրա մարմինն է, իսկ հոգին երկնքում է և նման հիմարություններ, բայց միևնույն է, ինձ համար անտանելի էր: Այնպես կցանկանայի, որ նա այնտեղ չլիներ: Այ, գոթ նրան չեք ճանաչում, իսկ եթե ճանաչեիք, կհասկանայիք ինձ: Երբ արե է, գեո ոչինչ, բայց արեն էլ դուրս է գալիս, երբ քեֆը առախ է, այնպես որ ոչինչ չես կարող անել:

Ու մեկ էլ, որպեսզի շատածեմ թոքերի բորբոքման մասին, հանեցի փողերս ու սկսեցի հաշվել, թեև փողոցի լապտերի լույսի տակ գրեթե ոչինչ չէր երևում: Ընդամենը երեք գուլար էր մնացել, քսան ցննտանոց հինգ թղթագրամ, և երկու՝ տասը ցննտանոց, մի ամբողջ կարողություն էի մսխել Փենսիլից գուրս գալուց հետո: Այդ ժամանակ մոտեցա լճակին ու սկսեցի դրամներն այնտեղ նետել՝ որանդ որ գեո չէր տառել: Զգիտեմ ինչու էի այդպես անում, հավանաբար, որպեսզի ցրեմ թոքերի բորբոքման ու մահվան մասին մտքերս: Բայց չկարողացա ցրել:

Նի սկսեցի մտածել, թե ինչ կլինի Ֆեբրին, եթե ես հիվանդանամ թոքերի բորբոքումով ու մեռնեմ: Իհարկե, երեխայություն է այդ մասին մտածելը, բայց այլևս չէի կարողանում կանգ առնել: Երևի շատ կտխրի, որ ես մեռնեմ: Նա լավ է վերարժեքում ինձ: Ծիրտն առած, խեղճանից սիրում է ինձ: Ո՛ր մի կերպ չէի կարողանում պիտիցս հանել այդ հիմար մտքերը, և, վերջապես, որոշեցի ահա թե ինչ անել, գնալ տուն և առնել նրան, գուցեև իսկապես հիվանդանում եմ ու մեռնում: Մեր բնակարանի բանային ունեի և որոշեցի. կամացուկ կմտնեմ ներս ու գանե մի երկու խոտք կփոխանակեմ Ֆիրիի հետ: Մի բան էր ինձ անհանգստացնում՝ մեր շքամառքի գուաը սոսկազի ճոտում է: Բա՛վականին հին է մեր առևեր, անտեսվարն էլ անտանելի ալարկոտ է, բայց բնակարանների դռները ճոտում են ու ճոնչում: Ըս վախենում էի՝ ծնողներս հանկարծ լսեն, որ եկեղ եմ: Այնուամենայնիվ, որոշեցի փորձել:

Անմիջապես գուրս վաղեցի գրոսայգուց ու գնացի տուն: Ամբողջ ճանապարհը ոտքով անցա: Մենք շատ հեռու էինք ապրում, ու ես քալարովին չէի հոգնել, հարբածությունս էլ անցնել էր: Միայն ստակալի ցուրտ էր, և շուրջս ոչ որ չկար:

Վաղուց բախտս այդպես շէր բերել. երբ եկա տուն, մեր մշտական վերելակավարը՝ Փիթը, շէր հերթապահում: Վերելակի մոտ կանգնած էր մի ինչ-որ նոր, բուրբուկին անծանոթ վերելակավար, ու ես հասկացա, որ եթե անմիջապես դեմհանդիման չեկնեմ ծնողներիցս որևէ մեկին, կկարողանամ տեսնել քույրիկիս, իսկ հետո կփախչեմ, և ոչ ոք չի իմանա, որ ես եկել եմ: Ինչ խոսք, բախտս բերեց, բացի դրանից այդ նոր վերելակավարը մի տեսակ հիմարավուն է: Ես անփութորեն նետեցի, որ գնում եմ Գիկսթայնների մոտ: Իսկ Գիկսթայնները ապրում էին մեր հարկում: Որսորդական գլխարկս արդեն հանել էի, որպեսզի տեսքս շատ կասկածելի չլինի, և արագ մտա վերելակ, իբրև թե շատ եմ շտապում: Նա արդեն փակել էր դուռը և ուզում էր սեղմել կոճակը, բայց հանկարծ շուռ եկավ ու ասաց.

— Նրանք տանը չեն: Հյուր են գնացել տասնչորսերորդ հարկը:

— Ոչինչ, — ասում եմ. — Ինձ հանձնարարված է սպասել: Ես նրանց զարմիկն եմ:

Նա բութ ու կասկածամիտ հայացքով նայեց ինձ:

— Այդ դեպքում ավելի լավ է ցածում սպասեք, երիտասարդ:

— Ես, հաճույքով, իհարկե, դա ավելի հարմար կլինեի, — ասում եմ. — բայց ոտքս ցավում է, պետք է որոշակի դիրքով մեկնեմ: Ավելի լավ կլինի նստեմ նրանց դռան առաջ դրված բաղկաթոռին:

Նա՛ նույնիսկ շհասկացավ ինչ եմ ասում. միայն ասաց. «Դե, տեսեք», ու բարձրացրեց վերև: Վատ շտապվեց: Հետաքրքիր է, բավական է ինչ-որ անհասկանալի բան ասես մարդուն, և նա կանի այնպես, ինչպես դու ես ուզում:

Ես դուրս եկա մեր հարկում և, կաղ շան պես ոտքս քարշտալով, գնացի դեպի Գիկսթայնների բնակարանը: Իսկ երբ շրխկաց վերելակի դուռը, ետ դարձա դեպի մեր բնակարանը: Ամեն ինչ հրաշալի էր գնում: Հարբածությունս լրիվ անցել էր: Ես հանեցի բանալին ու բացեցի շքամուտքի դուռը, մկամ պես կամացուկ: Հետո շատ զգուշորեն կիսարաց արի դուռը

և մտա նախասենյակ: Այ թե ինչպիսի գանգատեր է մեռնում  
իմ մեջ:

Նախասենյակը մութ էր, ինչպես դժոխքում, խոկ լույսը,  
ինքներդ էլ հասկանում եք, չէի կարող միացնել: Հոբելավոր  
էր շատ զգուշորեն շարժվել, որպեսզի ոչ մի բանի չկպչեմ,  
աղմուկ չհանեմ: Բայց ես զգացի, որ գտնվում եմ տանը:  
Մեր նախասենյակում մի առանձնահատուկ բույր կա, հարա-  
զատ, ոչ մի տեղ այդպիսի բուրմունք չի զգացվում: Ինքս էլ  
չգիտեմ ինչ բուրմունք է դա՝ ուտելիքի՞, օծանելիքի, ճեմ  
կարող ասել, բայց անմիջապես զգում եմ, որ տանն եմ:  
Սկզբում ցանկացա վերարկուս հանել և կախել նախասենյա-  
կի սյահարանում, բայց այնտեղ լիքն են կախիչները և խնջա-  
գար աղմուկ են հանում, երբ բացում ես դուռը, դրա Գաթար  
էլ մնացի վերարկուով: Հետո կամացուկ, ոտքերիս մտաների  
վրա, գնացի Ֆիբի սենյակի կողմը: Գիտեի, որ տնտեսուհին  
ինձ չի լսի, որովհետև նա մի թմբկաթաղանթ ունեւր միայն-  
երեսն ժամանակ եղբայրը ծղոտը մտցրել էր նրա ակտնջը,  
ինքն է ինձ պատմել: Նա գրեթե չէր լսում: Բայց փոխարենը  
ծնողներս, մանավանդ մայրիկս, լավագույն խուզարկուի լսո-  
ղություն ունեն: Ես նրանց ննջարանի մոտից անցա հնարա-  
վորին շափ զգուշորեն: Զանացի նույնիսկ չընչել: Հայրս դեռ  
աչինչ, բազկաթոռն էլ խփես գլխին, չի արթնանա, իսկ, այ,  
մայրիկս, Սիբիրում էլ որ հազաս, կլսի: Նա այնպես նյար-  
դային է, ինչպես չգիտեմ թե ով ասեմ: Գիշերները չի քնում,  
գիտում է անվիրջ:

Թվում է, թե մի ամբողջ ժամ տևեց, մինչև հասա Ֆիբի  
սենյակը: Բայց նա այնտեղ չէր: Միանգամայն մոռացել էի,  
ուղղակի գլխիցս դուրս էր թռել, որ նա քնում է Դ. Բ-ի աշ-  
խատասենյակում, երբ եղբայրս մեկնում է Հուլիվուդ կամ մի  
որևէ այլ տեղ: Ֆիբին սիրում է քնել նրա աշխատասենյակում,  
որովհետև դա մեր բնակարանի ամենամեծ սենյակն է: Ինչ-  
պես նաև այն բանի համար, որ այնտեղ կար մի մեծ սեղան,  
չափից դուրս մեծ, Դ. Բ-ն այն գնել է մի հարբեցրդ կնոջից  
Ֆիլադելֆիայում: Մահճակալն էլ այնտեղ մեծ է, մի տասը  
մղոն երկարություն ունի, տասը մղոն լայնություն, չգիտեմ,  
թե որտեղից է ճարել այդ մահճակալը: Մի խոսքով, Ֆիբին  
սիրում է քնել Դ. Բ-ի սենյակում, երբ նա այնտեղ չէ, Դ. Բ-ն

էլ չի առարկում: Դուք մի տեսնեի՞ք, թե նա դասերն ինչպես է պատրաստում այդ անհեթեթ սեղանի մոտ: Սեղանն էլ մահ-ճակալի շափ մեծ է: Ֆիրին գրեթե չի երևում, երբ նստում է այդ սեղանի մոտ: Իսկ դա նրան դուր է գալիս: Նա ասում է, թե իր սենյակը չի սիրում այն բանի համար, որովհետև նեղվածք է: Ասում է, թե սիրում է տարածվել: Միծաղելի է ուզդակի, որտեղ պիտի տարածվի, հիմարիկը:

Ես կամացուկ մտա Գ. Բ-ի սենյակը ու վառեցի գրասե-  
զանի վրայի լամպը: Իմ Ֆիրին նույնիսկ շարժնացավ: Ես  
երկար նայեցի նրան լույսի տակ: Նա ամուր քնել էր, բարձի-  
մի անկյունը ծալած: Բերանը կիսաբաց էր: Տարօրինակ բան  
է. բոլոր մեծերը քնում են բերանները բացած ու տհաճ սպա-  
վորություն են թողնում, իսկ երեխաները՝ ամենեկին: Երեխա-  
ները բոլորովին այլ ձևով են քնում: Եթե նույնիսկ քնած  
ժամանակ բերանից ջուր է հոսում, դարձյալ տհաճ չէ նայելը:

Ես կամացուկ շրջեցի սենյակում, տեսնեմ ինչն ինչպես է:  
Տրամադրությունս հանկարծ միանգամից բարձրացավ: Էլ  
չէի մտածում, որ կհիվանդանամ թոքերի բորբոքումով: Պար-  
զպես տրամագրությունս բարձրացել էր: Մահճակալի կող-  
քի աթոռին դրված էր Ֆիրիի զգեստը: Նա իր տարիքի համար  
շատ մաքրասերն էր: Հասկանում եք, երբեք իրերը չէր նետի  
ուր որ պատահեր, ինչպես ուրիշ երեխաներ: Բոլորովին թափ-  
թրված չէր: Աթոռի թիկնակին զցած էր կոստյումի բաց  
գարշնագույն ժակետը, որը մայրիկը նրա համար Կանադա-  
յից էր բերել: Բլուզն ու մնացած բաները դրված էին աթոռին,  
իսկ գուլպաները և կոշիկները՝ աթոռի տակ էին դրված: Ես  
այդ կոշիկները դեռ չէի տեսել, նոր էին: Մուգ գարշնագույն,  
փափուկ, ես էլ ունեմ այդպիսի կոշիկներ: Դրանք շատ էին  
ազում կոստյումին, որ մայրիկը բերել էր Կանադայից:  
Մայրիկը նրան լավ էր հագցնում, շատ լավ: Մայրիկս շատ  
բարձր ճաշակ ունի, բայց ոչ ամեն ինչում, իհարկե: Չմուշկ-  
ներ, օրինակ, նա գնել չգիտի, բայց փոխարենը մնացած  
հարցերում անբասիր ճաշակի տեր է: Ֆիրին միշտ այնպիսի  
զգեստներ է հագնում, որ խելքդ կգնա: Իսկ ուրիշ փոքրիկ-  
ների հագին միշտ սոսկալի հագուստներ կտեսնես, նույնիսկ  
եթե նրանց ծնողները հարուստ մարդիկ են: Դուք մեր Ֆի-

բիին տեսնեի՞ք այդ կոստյումով, որ մայրիկը Կանադայից է բերել: Հաճելի է նայելը, աստված վկա:

Ես նստեցի եղբորս գրասեղանի մոտ ու նայեցի՝ տեսնեմ ինչ կա այնտեղ: Ֆիբին այնտեղ դարսել էր իր գրքերն ու տետրերը: Երեսին դրված էր «Հետաքրքրաշարժ թվաբանություն» վերնագրով մի գիրք: Ես բացեցի այն ու առաջին էջի վրա տեսա մակագրությունը՝

### ՖԻԲԻ ՈՒԵԶԵՐՖԻԼԴ ՔՈՒՖԻԼԴ

4Բ—1

Հազիվ զսպեցի ծիծաղս: Նրա երկրորդ անունը Զոզեֆինա է և ոչ թե Ուեզերֆիլդ: Բայց նրան այդ անունը դուր չի գալիս: Ու նա ամեն անգամ նոր երկրորդ անուն է բրննում իր համար:

Թվաբանության տակ դրված էր աշխարհագրությունը, իսկ աշխարհագրության տակ՝ ուղղագրության դասագիրքը: Նա հրաշալի է գրում: Հնդհանրապես շատ լավ է սովորում, բայց ամենից լավ գրում է: Ուղղագրության տակ բլոկնոտներ էին դարսված. նա հինգ հազար հատ բլոկնոտ կունենա, եթե ոչ ավելի: Երբեք չեմ տեսել, որ այդ տարիքի փոքրիկն այդքան բլոկնոտներ ունենա: Բացեցի առաջին բլոկնոտը և կարդացի գրառումը.

«Բեռնիս, սպասիր ինձ, գասամիջոցին շատ կարևոր բան պետք է ասեմ»:

Այդ երեսին էլ ուրիշ բան չկար: Շրջեցի էջը, այստեղ էլ գրված էր.

«Ինչո՞ւ հարավարևելյան այլասկայում պահածոյի այդ-  
ֆան գործարաններ կան:

Ռոպինետև այնտեղ շատ է սաղմոնր:

Ինչո՞ւ այնտեղ արժեքավոր փայտեղեն կա:

Ռոպինետև կլիման նպաստավոր է:

Ի՞նչ է արել մեր կառավարությունը, որպեսզի քեթևացնի  
այլասկայի էսկիմոսների կյանքը:

Վաղվա համար սովորել:

Ֆիբի Ուեզերֆիլդ Քուֆիլդ:

## Ֆիբի Ու. Քուֆիլդ:

տիրումի Ֆիբի Ուեգերֆիլդ Քուֆիլդ

հանձնիր Շերիֆն....

Շերիֆ դու ասում ես ինչ մոլորակը սատուունն է, բայց դա ընդամենը մարսն է շմուշկները բեր, երբ կգաս իմ ետևից:

Դ. Բ-ի գրասեղանի մոտ նստած՝ կարդացի ամբողջ գրառումները: Ես արագ կարդացի, բայց կարող էի առավոտից երեկո կարդալ մանկական այդ ծուռտիկ-մուռտիկ ձեռագիրը, առավոտից երեկո, ումն ուզում է լինի: Միծաղելի են այդ երեխաների դրածները: Հետո սիգարետ ծխեցի, հավանաբար, առափիս մեջ մնացած վերջին սիգարետը: Այդ օրը երևի հարյուր տուփ ծխած կլինեի: Վերջապես որոշեցի արթնացնել Ֆիբիին: Հո չէի կարող ամբողջ կյանքս նստել գրասեղանի մոտ, բացի այդ էլ, հանկարծ կարող էին հայտնվել ծնողներս, իսկ ես ուզում էի Ֆիբիի հետ առանձին տեսնվել: Գրա համար էլ արթնացրի նրան:

Նա շատ հեշտ է արթնանում: Հարկ չկա քչ գոռալու, ոչ էլ նրան թափահարելու: Պարզապես պետք է նստել մահճակալին ու ասել. «Ֆիբ, արթնացիր», և հոպ, կարթնանա:

— Հոլդե՞ն, — անմիջապես ճանաչեց ինձ: Ծվ կախվեց վզիցս: Նա շատ քնքշալիք է: Այդքան փոքրիկ ու այդքա՞ն քնքշալիք: Երբեմն նույնիսկ շափից դուրս: Ես նրան համբուրեցի, ու նա ասաց. «Այս ե՞րբ ես եկել», — Շատ էր ուրախացել: Անմիջապես երևաց:

— Կամա՞ց: Նոր եկա: Ինչպե՞ս ես:

— Հրաշալի: Ստացե՞լ ես նամակս: Ես ամբողջ հինգ էջ նամակ եմ գրել քեզ:

— Այո՛, այո՛, մի՛ աղմկիր, ստացել եմ, ջնորհակալություն:

Նամակն ստացել էի, բայց չհասցրի պատասխանել: Այնտեղ ամբողջը դպրոցական ներկայացման մասին էր գրված, որին նա մասնակցում էր: Գրել էր, որ ես ուրբաթ երեկոն ազատ մնամ և անպայման գնամ նրա ներկայացումը դիտելու:

— Իսկ ինչպե՞ս է ձեր պիեսը, — հարցնում եմ: — Մոռացել եմ անունը:



— «Մենդյան մնշախաղ ամերիկացիների համար», — ասում է: — Պիեսը հիմար բան է, բայց ես խաղում եմ Բենն-դիկա Առնոլդի դերը: Ամենամեծ դերն իմն է: — Ո՛ւր փախա՞վ քուներ: Նա այնպես էր ողևորվել, երևում է, ամբողջ պիեսն ուզում էր պատմել: — Հասկանո՞ւմ ես, սկսվում է այնտեղից, որ ես մահամերձ եմ: Ճրագալույց է, գալիս է ոգին և ասում՝ ամոթ չէ՞ ինձ և այլն: Դե դու գիտես, ամոթ չէ՞, որ դավա՛ճանեցիր հայրենիքիդ և նման բաներ: Կգա՞ս նայելու, — նա նույնիսկ թռչկոտեց մահճակալին: — Իս ամեն ինչ գրել եմ քեզ, ճի՛շտ է: Կգա՞ս:

— Իհարկե, կգամ: Հապա ինչպե՞ս:

— Հայրիկը չի կարող գալ: Նա պետք է թուշի Կալիֆոռնիա: — Մի րոպե չէր անցել դեռ և քնատուփյան հետքն անգամ չէր երևում: Չորքել է անկողնում, բռնել է ձեռքս: — Լսիր, — ասում է, — մայրիկն ասաց, որ դու կգաս շորեքշարթի օրը: Այո՛, այո՛, շորեքշարթի:

— Շուտ են բաց թողել: Մի՛ աղմկիր: Դու բուլտրին կարթնացնես:

— Իսկ ժամը քանի՞սն է: Մայրիկն ասաց, որ ուշ կվերադառնան: Նրանք հյուր են գնացել Նորուոլթ, Կոնետիկատ: Գուշակիր, ես ինչ եմ արել այսօր ցերեկը: Գիտե՞ս ինչ ֆիլմ եմ տեսել: Գուշակիր:

— Զգիտեմ, լսիր հապա, իսկ նրանք շասացի՞ն որ ժամին...

— «Բժիշկը», բա՛: Դա յուրահատուկ ֆիլմ է, ցուցադրում էին Լիստերովյան ընկերությունում: Միայն մեկ օր, մի-միայն մեկ օր, հասկանո՞ւմ ես: Դա քննադատի մի բժշկի մասին է, նա վերմակը պցում է մի աղջկա երեսին, աղջիկը հաշմանդամ է, չի կարող քայլել: Բժշկին բանտ են նստեցնում և այլն: Հրաշալի նկար է:

— Դե լավ, սպասիր: Նրանք շասացի՞ն որ ժամին...

— Իսկ բժիշկը շատ է խղճում աղջկան: Դրա համար էլ վերմակը պցում է նրա գլխին, որպեսզի աղջիկը խեղդվի: Բժշկին ցմահ բանտարկություն են դատապարտում, բայց աղջիկը, որին նա խեղդեց վերմակով, միշտ երազում այցելություն է գալիս նրան ու ասում. «Շնորհակալություն», որ իրեն խեղդել է: Պարզվում է, որ դա գթասրտություն է և ոչ

Քն սպանութիւն: Բայց միևնույն է, բժիշկը գիտի, որ ար-  
ժանի է բանտ նստելու, որովհետև մարդը իր վրա չպետք  
է վերցնի այն, ինչ վերաբերում է աստծուն: Մեզ մեր դասա-  
րանի աղջկա մայրը տարավ այնտեղ, Ալիսա Հրլեմբերգի  
մայրիկը: Նա իմ ամենամոտ ընկերուհին է: Ամբողջ դասա-  
րանից միայն նա կարող է...

— Դե սպասիր մի րոպե, լսո՛ւմ ես: Ծն քեզ հարցնում  
եմ, նրանք շասացի՞ն որ ժամին կվերադառնան տուն:

— Չէ, շասացի՛ն: Մայրիկն ասաց՝ շատ ուշ: Հայրիկը  
վերցրեց մեքենան, որպեսզի գնացքի համար շտապեն: Իսկ  
մեր մեքենայի մեջ ուղիք կա: Միայն թե մայրիկն ասում է  
չի կարելի միացնել, երբ ազմուկը շատ է:

Ծն մի քիչ հանգստացա: Դադարեցի հուզվելուց, թե ինչ  
կրճանացեն տանը: Համ էլ մտածեցի՝ կրճանացնեն, գրողի  
ծայր, թող բռնացնին:

Դուք մի մեր Ֆիրիին տեսնեի՞ք: Նրա հագին կապույտ  
պիժամա կար, օձիքի վրա կարմիր փղիկներ: Նա պաշտում  
է փղերին:

— Ուրեմն լավ նկար էր, հա՞,— հարցնում եմ:

— Հրաշալի, միայն թե Ալիսան հարբուխ ուներ, ու նրա  
մայրիկը անընդհատ հարցնում էր, թե հո չի՞ գողացնում:  
Այնտեղ ֆիլմ են ցուցադրում, իսկ նա անընդհատ հարցեր  
է տալիս: Հենց որ հասնում է ամենահետաքրքիր տեղը, մայ-  
րը կռանում է իմ վրայով ու հարցնում. «Չե՞ս գողացնում»: Նյարդերիս վրա ազդում էր:

Այդ ժամանակ ես հիշեցի ձայնապնակը:

— Գիտե՞ս, ես քեզ համար մի ձայնապնակ էի գնել,  
բայց ճանապարհին շարդել եմ: Գրպանիցս հանեցի կտոր-  
ներն ու ցույց տվի նրան:— Հարբած էի:

— Կտորները տուր ինձ,— ասում է:— Ծն գրանք հա-  
վարում եմ:— Ձեռքիցս վերցրեց կտորներն ու անմիջապես  
էլ թաքցրեց իր գիշերային պահարանում: Միծառելի է:

— Դ. Բ.-ն Մենդյան տոներին տո՞ւն է գալու,— հարց-  
նում եմ:

— Մայրիկն ասաց, կարող է գա, կարող է՝ ոչ, աշխա-  
տանքից է կախված: Գուցե, հարկ լինի մեա Հոլիվուդում ե  
սցենար գրի Աննապոլիսի մասին:

— Տե՛ր աստված, ինչո՞ւ Աննապոլիսի:

— Այնտեղ սիրո մասին էլ կա, ուրիշ բաների մասին էլ: Գուշակիր, թե ո՞վ է նկարահանվելու այնտեղ, Ռ՞ր կինոաստղը: Այ, շե՛ս կարող գուշակել:

— Ինձ չի հետաքրքրում: Մե՛ծ բան է, էլի: Աննապոլիսի՞ մասին: Ախր նա ի՞նչ գիտի Աննապոլիսի մասին, աստված իմ: Դա ի՞նչ կապ ունի նրա պատմվածքների հետ:— Թո՛ւհ, ուղղակի խենթանալ կարելի է այդ ամենից: Անիծյալ Հուլիվուդ: Իսկ այդ ի՞նչ է եղել ձեռքդ,— հարցնում եմ: Տեսա, որ արմուկկին սպեղանի է կպցրած: Նրա պիծամառն անթև էր, գրա համար էլ նկատեցի:

— Մեր դասարանցի մի տղա՝ Կերտիս Վայնտրաուբը, գրոսայգու աստիճաններից իջնելիս ինձ հրեց: Ուզո՞ւմ ես ցույց տամ:— Ու սկսեց թևից պոկել սպեղանին:

— Ձեռք մի՛ տուր, իսկ ինչո՞ւ հրեց:

— Չգիտեմ, կարծում եմ, նա ատում է ինձ,— ասում է Ֆրեյն:— Ես ու մի աղջիկ՝ Սելմա էթերբերին, նրա սվիտերը թանաքոտել ենք:

— Լավ շեք արել, փոքրի՞կ ես, ինչ է:

— Ձէ, բայց նա միշտ իմ հոտից է ման գալիս: Հենց որ գնում եմ գրոսայգի, գալիս է հոտիցս: Նյարդերիս վրա ազդում է:

— Իսկ գուցե դու նրան դո՞ւր ես գալիս: Դրա համար չի կարելի մարդու սվիտերը թանաքոտել:

— Չեմ ուզում նրան դուր գալ,— ասում է նա: Ու հանկարծ խիստ կասկածանքով նայում է ինձ:— Հուլիան, լսի՛ր, այդ ինչո՞ւ ես չորեքշաբթիից շուտ եկել:

— Ի՞նչ:

Նրա հետ զգույշ պիտի լինեք: Եթե կարծում եք, որ հիմարիկ է, շատ եք սխալվում:

— Այդ ինչպե՞ս է, որ շորեքշաբթիից շուտ ես եկել,— կրկնում է նա:— Քեզ էլի՞ վոնդել են:

— Ես քեզ բացատրեցի: Մեզ շուտ են արձակել: Ամբողջ դասարանը...

— Ձէ, քեզ վտարել են, վտարել են,— կրկնեց նա: Ու բռունցքով այնպես հասցրեց ծնկիս: Նա շատ ուժեղ է խփում,

երբ կովում է։— Վտարել են։ Օ՛յ, Հուդեն։ —Նա ձեռքով  
փակեց բերանը։ Ազնիվ խոսք, շատ տխրեց։

— Ո՞վ ասաց, որ վտարել են։ Ոչ ոք քեզ այդպիսի...

— Չէ՛, վտարե՛լ են, վտարե՛լ են։— Ու էլի հասցրեց  
ծնկիս։ Եթե կարծում եք, որ չցավեց, սխալվում եք։—  
Հայրիկը կսպանի քեզ,— ասում է։ Ու հանկարծ երեսի վրա  
շրմփալով փոփեց մահճակալին ու բարձր դրեց գլխին։ Նա  
հաճախ է այդպես անում։ Ուղղակի գժվում էր, ազնիվ խոսք։

— Դե թո՛ղ,— ասում եմ։— Ոչ ոք էլ ինձ չի սպանի։ Ոչ  
ոք ինձ մատով էլ չի կպչի... Դե, վե՛րջ տուր, Ֆիր, մի կողմ  
զցիր այդ հիմար բարձր։ Ոչ ոք էլ մտադիր չէ ինձ սպանել։—  
Բայց նա բարձր ետ շքաշեց։ Նրա վրա շես կարող ազդել ոչ  
մի կերպ։ Պառկել է ու իր ասածն է՝ պնդում։

— Հայրիկը քեզ կսպանի՛, կսպանի՛,— հազիվ էր լսվում  
բարձի տակից։

— Ոչ ոք էլ ինձ չի սպանի, բաներ մի հորինիր։ Նախ ես  
մեկնում եմ։ Գիտե՞ս, ինչ եմ անելու։ Աշխատանք կճարեմ  
մի որևէ ունչոյում, գոնե ժամանակավորապես։ Ես մի տղա  
եմ ճանաչում, նրա պապիկը Կոլորադոյում ունչո ունի։ Գու-  
ցե այնտեղ նրանք աշխատանք կտան։ Ես նամակ կգրեմ քեզ  
այնտեղից, որ գնամ։ Դե, վե՛րջ տուր։ Վերցրու այդ գրողի  
տարած բարձր։ Լսո՞ւմ ես, Ֆիր, վերցրո՛ւ։ Դե, խնդրում եմ  
քեզ, վերցրո՛ւ։

Բայց նա պինդ բռնել է բարձր, և վերջ։ Ես փորձեցի քա-  
ջել վրայից, բայց շատ ուժեղ է այդ սատանան։ Եթե բարձր  
քաջել է գլխին, էլ շես կարող պոկել։

— Ֆիրի, խնդրում եմ, դուրս արի բարձի տակից, լսո՞ւմ  
ես,— խնդրում եմ ես նրան։— Դե թո՛ղ... է՛յ, Ուեզերֆիլդ,  
գուրս արի, դե՛։

Չէ, չի ուզում։ Նրան երբեք շես կարող համոզել։ Վերջա-  
պես ես վեր կացա, գնացի հյուրասենյակ, սեղանի վրայի  
տուփից սիգարետ վերցրի ու դրեցի գրպանս։ Շատ էի հագնել։

Երբ վերադարձա, նա դուրս էր եկել բարձի տակից. այդպե-  
պես էլ գիտեի, պառկել էր միջքի վրա, բայց ինձ չէր նայում։

Մոտեցա, նստեցի մահճակալին, նա անմիջապես շուռ եկավ, ինձ շի նայում: Գրողի ծոցն է ուղարկում ինձ, բոյկոտ է անում, Փենսիլի սուսերամարտի թիմի տղաների նման, հրք ամբողջ սպորտային իրերը մոռացել էի մետրոյում:

— Իսկ ինչպե՞ս է ապրում քո Կիսելա Ուեզերֆիլդը,— հարցնում եմ:— Նրա մասին էլի՞ ես պատմվածք գրել: Այն, որ ուղարկել էիր, ճամպրուկիս մեջ է: Լավ պատմվածք է, ազնիվ խոսք:

— Հայրիկը քեզ կսպանի:

Որ մի բան է գցում գլուխը, արդեն էլ վերջ:

— Չէ, շի սպանի: Ծայրահեղ դեպքում էլի կգոռգոռա, հետո կուղարկի զինվորական դպրոց: Դրանից ավելի բան չի անի: Իսկ երկրորդն էլ, ես այստեղ շեմ մնում: Ես հեռու կլինեմ: Շա՛տ հեռու, հավանաբար Կոլորադոյում, այդ ուանչոյում, որ ասացի:

— Հիմար-հիմար դուրս մի՛ տուր: Դու խակի ձի քշել չգիտես:

— Ինչպե՞ս չգիտեմ, գիտեմ: Այդտեղ ի՞նչ մի իմանալու բան կա: Համ էլ այնտեղ երկու բոպեում կսովորես,— ասում եմ:— Չհամարձակվես սպեղանին պոկել:— Նա անընդհատ քաշքշում էր թևի յպեղանին:— Իսկ ո՞վ է այդպես կտրել մազերդ,— հարցնում եմ: Նոր միայն նկատեցի, թե ինչպես վատ են կտրել նրա մազերը: Ուղղակի խուզել են:

— Քո գործը չէ,— ասում է: Նա երբեմն այնպե՞ս կպատասխանի: Մեծամտորեն, հասկանո՞ւմ եք:— Երևի էլի բոլոր առարկաներից կտրվել նա,— ասում է դարձյալ մեծամտորեն: Միծաղս եկավ: Խոսում է ուսուցչուհու նման, մինչդեռ մի մատ երեխա է:

— Չէ՛, ոչ բոլոր առարկաներից,— ասում եմ:— Անգլե-րենը հանձնել եմ:— Ու ես այդ ժամանակ կամթեցի նրա տուտուզիկը: Պառկել է գունդուկծիկ դարձած, իսկ հտևը դուրս ցցել վերմակի տակից: Ասենք, նա ետև էլ շունի: Ես ուժգին չկամթեցի, բայց նա ուղեց խփել ձեռքիս ու վրիպեց:

Ու մեկ էլ ասաց.

— Ախ, ինչո՞ւ, ինչո՞ւ դու էլի,— ուզում էր ասել ինչու

էլի դուրս մնացիր դպրոցից: Բայց գա այնպես ասաց, որ տրամադրութիւնս ընկաւ, սոսկալի տխրեցի:

— Օ՛, տեր աստված, Տիրի, գոնե գո՛ւ մի հարցնի,— ասում եմ:— Բոլորն այդ են հարցնում, անհնար է դիմանալ: Ինչո՞ւ, ինչո՞ւ... հազար ու մի պատճառով: Երբեք այդպիսի գարշելի դպրոցում չեմ սովորել: Ամեն ինչ ցուցադրական է: Ամեն ինչ ձևական: Կամ ստոր: Սրիկաների այդպիսի կուտակում կյանքումս չեմ տեսել: Օրինակ՝ եթե սենյակում տղաներով նստած շատախոսում եք ու հանկարծ ինչ-որ մեկը ծեծում է գուռը, ուզում է ներս գալ, ոչ մի դեպքում նրան ներս չեն թողնի, եթե նա հիմարավուն է մի քիչ, պզուկոտ: Գուռը երեսի վրա կծածկեն: Այնտեղ մի երկիցս անիծյալ գաղտնի միութիւն էլ կար, վախից ես էլ էի ընդունվել այդ միութիւնը: Ու այնտեղ մի մզմըզ պզուկոտ տղա էլ կար՝ Թաբերտ էկիւն, նա էլ էր ուզում ընդունվել այդ միութիւն մեջ: Երան չընդունեցին: Միայն այն պատճառով, որ մզմըզ է և պզուկոտ: Հիշելն անգամ զազրելի է: Հավատա ինձ, այդպիսի կեղտոտ դպրոց կյանքումս չեմ տեսել:

Իմ Տիրին լուռ ականջ է գրել: Ծոծրակից նկատեցի, որ ըստ է: Նա հիանալի կարող է լսել, երբ հետը զրուցում ես: Թվ ամենածիծաղելին այն է, որ ամեն ինչ հասկանում է, ինչ էլ որ ասես: Իսկապես հասկանում է: Ծն էլի սկսեցի Փենսիի մասին պատմել, ուզում էի ամեն ինչ ասած լինել:

— Այնտեղ մի քանի լավ ուսուցիչներ կային, բայց նրանք էլ էին երկերեսանի,— ասում եմ:— Վերցնենք հինգ թիկուզ այն ծերուկին, միստր Սպենսերին: Նրա կիներ միշտ մեզ տաք շոկոլադ էր հյուրասիրում: Ընդհանրապես երկուսն էլ լավ մարդիկ էին: Բայց դե մի տեսնեիր, ի՞նչ էր կատարվում նրա հետ, երբ ծերուկ Թերմերը՝ մեր դիրեկտորը, ներս էր գալիս պատմութիւն դասին ու նստում ետեի նստարանին: Միշտ նա գալիս էր ու կես ժամ նստում ետեի նստարանին: Կարծես թե ծպտված, հասկանո՞ւմ ես: Կնստեր, կետեր, մեկ էլ կսկսեր ծերուկ Սպենսերին ընդհատել իր կրետինային օլիմներով: Իսկ ծերուկ Սպենսերը կաշվից դուրս էր գալիս: Ժիծաղում էր, հալվում նրա առաջ, կարծես այդ Թերմերը մի ինչ-որ հանճար էր, գրողի ծոցը գնա նա:

— Մի՛ հայհոյիր, խնդրեմ:

— Միրադ կիսառնիւր այնտեղ, աստված վկա, — ասում եմ: — Կամ շրջանավարտների օրը վերցրու: Նրանց մոտ այդպիսի օր կա, կոչվում է «Շրջանավարտների օր», երբ բոլոր տականքները, որ ավարտել են Փենսիլն, սկսած գրեթէ 1776 թվականից, հավաքվում են դպրոցում ու թրե են գալիս ամբողջ տերիտորիայում, իրենց կանանց ու երեխաների հետ: Դու մի տեսնեիր մի ծերուկի, որ մոտ հիսուն տարեկան կլինի: Ներս մտավ ուղիղ մեր սենյակը, դուռը ծեծեց, իհարկե, ու հարցրեց՝ կարելի՞ է գնա մեր զուգարանը: Իսկ զուգարանը միջանցքի ծայրին էր, շատ կացանք, թե ինչու հատկապես մեզ հարցրեց: Եվ գիտե՞ս ինչ ասաց մեզ: Ասում է, ուզում եմ տեսնել զուգարանի դռան վրա պահպանվելը են իմ անվան սկզբնատառերը: Հասկանո՞ւմ ես, նա հարյուր տարի առաջ իր հիմար, ապուշ ապաշնորհ անվանատառերը փորագրել է զուգարանի դռան վրա և ուզում է տեսնել՝ պահպանվել են դրանք: Եվ ես ու ընկերս ստիպված եղանք նրան ուղեկցել զուգարան և կանգնել այնտեղ, մինչև նա իր կրեատինային անվանատառերը կորսներ բոլոր դռների վրա: Որոնում է և պատմում, թե Փենսիլում անցկացրած տարիները իր կյանքի լավագույն տարիներն են եղել և ինչ-որ ապուշային խորհուրդներ է տալիս մեզ ապագայի համար: Տեր աստված, ինչպե՞ս ձանձրացա նրանից: Եվ ոչ թե ինչ-որ շատ տհաճ էր դրա համար, չէ՛, Բոլորովին էլ պարտադիր չէ տհաճ լինել ձանձրույթ պատճառելու համար, վերջ ի վերջո լավ մարդն էլ կարող է տրամադրութուն փշացնել: Բավական է ապաշնորհ խորհուրդներ տալ, այդ ընթացքում սեփական անվանատառերը փնտրելով զուգարանի դռան վրա, ու վերջ, Զգիտե՛մ, դուցե այնքան էլ շքեղներ տրամադրութունս, եթե այդ տիպը նաև չհետ: Նա շնչահեղձ էր լինում աստիճանները բարձրանալու հետեանքով: Փնտրում էր իր այդ անվանատառերն ու ֆսֆսացնում, շնչակտուր լինում: Ե՛վ մեղք էր, և՛ ծիծաղելի ու միաժամանակ է՛մ ու Ստրեղիչթերի գլուխն էր մտցնում, որ ինչ-որ հնարավոր է, յուրացնենք Փենսիլում: Տեր աստված, Տիրի, Չե՛մ կարող քեզ բացատրել: Ինձ ոչ մի բան դուր չէր գալիս Փենսիլում: Չե՛մ կարող բացատրել:

Լեյստեղ Տիրին ինչ-որ բան ասաց, որ ես լավ չլսեցի: Նա դեմքն այնպես էր թաղել բարձի մեջ, որ ասածը չէր լսվում:

— Ի՞նչ, — ասում եմ, — շու՛ն արի իմ կողմը: Չեմ լսում  
ինչ ես ասում, բարձի մեջ ես խոսում:

— Քեզ երբեք ոչինչ դուր չի գալիս:

Ես ավելի շատ տխրեցի, որ նա այդպես ասաց:

— Չէ, դուր է գալիս: Շատ բան է դուր գալիս: Այդպես  
մի՛ ասա: Ինչո՞ւ ես այդպես ասում:

— Որովհետև դա ճիշտ է: Քեզ ոչինչ դուր չի գալիս: Բո-  
լոր դպրոցները դուր չեն գալիս: Եշխարհում ոչ մի բան դուր  
չի գալիս: Դուր չի գալիս, և վերջ:

— Ճիշտ չէ, այստեղ դու սխալվում ես, այո՛, այո՛,  
սխալվում ես: Այդ ինչե՞ր ես հորինում իմ մասին, — նրա  
ասածից տրամադրությունս սոսկալի ընկավ:

— Չէ, չեմ հորինում: Դե թեկուզ մի բան ասա, որ գու-  
սիրում ես:

— Ի՞նչ ասեմ: Ասեմ, թե ի՞նչ եմ սիրում, խնդրեմ:

Դժբախտաբար, ես ոչ մի կերպ չէի կարողանում կենտրո-  
նանալ: Երբեմն դա շատ դժվար է:

— Դու ուզում ես ասել, թե ի՞նչն եմ շատ սիրում, — նո-  
րից հարցրի ես:

Նա միանգամից շպատասխանեց: Ինձնից նտ քաշվեց  
աստված գիտի թե որքան, մահճակալի մյուս ծայրը, ասես  
մի հարյուր մղոն:

— Դե պատասխանիր: Ասեմ ի՞նչն եմ սիրում, թե՞ ընդ-  
հանրապես ինձ ինչ է դուր գալիս:

— Ի՞նչ ես սիրում:

— Լավ, կասեմ: — Բայց ոչ մի կերպ չէի կարողանում:  
Հիշեցի միայն այն երկու միանձնուհիներին, որ փող էին  
հավաքում մաշված զամբյուղների մեջ: Հատկապես այն մե-  
կը, պողպատե ակնոցովը: Հիշեցի նաև մի տղայի, որի հետ  
սովորում էի էլքտոն-հիլում: Այնտեղ մի տղա կար՝ Ջեյմս  
Փասլը, որ ոչ մի կերպ ետ չէր վերցնի իր խոսքը. նա մի  
բան էր ասել սոսկալի երևակայող մի տիպի՝ Յիլ Սթեյբլի  
մասին, Ջեյմս Փասլը նրան անվանել էր ինքնասիրահարված  
մարդ, և այդ սրիկաներից՝ Սթեյբլի ընկերներից մեկը, լուրջ  
տարել էր նրան: Սթեյբլը վեց ուրիշ սողունների հետ միասին  
եկավ Ջեյմս Փասլի սենյակը, փակեց դուռը և փորձեց ստի-  
պել նրան ետ վերցնել իր խոսքերը, բայց Ջեյմսը չհամա-



Ճայնեց: Այդ ժամանակ նրանք գործի անցան: Ես չեմ կարող  
 ասել, թե նրանք ինչ արին,— սոսկալի ստորություն,— բայց  
 Զեյմսը չհամաձայնեց ետ վերցնել իր խոսքերը, ահա թե  
 ինչպիսին էր այդ Զեյմս Քասլը: Դուք մի տեսնեի՞ք նրան.  
 նիհարուկ, փոքրիկ, ձեռքերն ասես մատիտներ լինեին: Եվ  
 ի վերջո, գիտե՞ք, նա ինչ արեց, փոխանակ հրաժարվելու իր  
 խոսքերից: Դուրս թռավ պատուհանից: Ես ցնցուղարանում  
 էի և այնտեղից լսեցի, թե ինչպես թրմփաց: Կարծեցի, թե  
 պատուհանից ինչ-որ բան ընկավ՝ ուղիորնդունիչ կամ պա-  
 հարանիկ, բայց մտքովս չէր անցնում, թե տղա էր: Այդ  
 ժամանակ լսեցի, որ բոլորը միջանցքով դեպի աստիճաններն  
 են վազում: Խալաթս վրաս քաշեցի ոչ ես էլ վազ տվի, իսկ  
 այնտեղ, աստիճանների վրա, պռկած էր մեր Զեյմս Քասլը:  
 Նա արդեն մեռած էր, արնաթաթախ, ատամները դուրս էին  
 թռել, բոլորը վախենում էին մոտենալ: Իսկ նրա հագին այն  
 սվիտերն էր, որ ես էի տվել: Այդ սողուններին, որ փակել  
 էին նրան սենյակում, ոչինչ չարին, միայն դպրոցից հեռաց-  
 րին: Նույնիսկ բանտ չնստեցրին:

Էլ դրիշ բան չկարողացա հիշել: Երկու միանձնուհիներ  
 ինն, որոնց հետ նախաճաշել էի, և այդ Զեյմս Քասլին, որի  
 հետ սովորել էի էլքտոն-հիլլում: Ամենածիծաղելիս այն է, որ  
 ես գրեթե չէի ճանաչում այդ Զեյմս Քասլին: Նա շատ սուսիկ-  
 փուսիկ տղա էր: Մենք միևնույն դասարանում էինք սովորում,  
 բայց ես մյուս ծայրում էր նստում և հազվադեպ էր դուրս  
 գալիս գրատախտակի մոտ, պատասխանելու: Իրար հետ զրու-  
 ցել էինք ընդամենը մեկ անգամ, երբ նա խնդրեց այդ սվի-  
 տերը: Ես քիչ մնաց զարմանքից մեռնեմ, երբ նա խնդրեց,  
 այնքան անսպասելի էր դա: Հիշում եմ, ատամներս էի լվա-  
 նում լվացարանում, նա մոտեցավ ինձ ու ասաց, որ զար-  
 միկն իրեն տանելու է սահադաշտ: Մտքովս էլ չէր անցնում,  
 թե նա գիտի, որ ես տաք սվիտեր ունեմ: Ես նրա մասին  
 միայն այնքանը գիտեի, որ դասամատյանում նրա անունը  
 իմից անմիջապես առաջ էր՝ Քեյբլ Ռ., Քեյբլ Վ., Քուսլ, Քու-  
 Ֆիլդ, մինչև հիմա էլ հիշում եմ: Ու եթե ճիշտն ասենք, քիչ  
 էր մնում մերժեի սվիտերս, որովհետև գրեթե չէի ճանաչում  
 նրան:

— Ի՞նչ,— հարցրեց Ֆիրին, մինչ այդ էլ նա ինչ-որ բան

էր խոսել, բայց եւ լափ շէի լսելը— Չես կարող ոչ մի բան  
առել, ո՛չ մի բան:

— Չէ, կարո՞ղ եմ, կարո՞ղ եմ:

— Դե սսա՛:

— Ես սիրում եմ Ալլիթին, — ասում եմ: — Ինձ դուր է գա-  
լիս նաև, ա՛յ, աչսպիս նստել ու գրացնել քնզ հետ և հազար  
ու մի բաներ հիշել:

— Ալլին մեռել է, դու միշտ միևնույն բանն ես կրկնում:  
Քանի որ մարդը մեռել է ու երկիրը համբառնել, ուրեմն հնա-  
բավոր չէ նրան իսկականից սիրել:

— Գիտեմ, որ մեռել է: Ինչ է, քո՞ կարծիքով ես շփոտե՞մ,  
որ մեռել է: Եվ միևնույն է, ես կարողանում եմ նրան սիրել:  
Չի կարելի դադարել մարդան սիրելուց միայն այն պատճա-  
ռով, որ նա մեռել է, գրողը տանի, մանավանդ որ նա լափն  
էր բոլոր կենդանի մնացածներից, հասկանո՞ւմ ես:

Այստեղ Ֆիրին ոչինչ չասաց: Երբ ասելիք շոնի, նա միշտ  
լռում է:

— Այ, հիմա էլ ինձ համար հաճելի է աշատեղ, — ասացի  
ես: — Հասկանո՞ւմ ես, հիմա, նստել աշատեղ ու խոսել հա-  
զար ու մի բաների մասին...

— Դե չէ, սա բոլորովին ուրիշ բան է:

— Ինչպե՞ս թե ուրիշ բան է: Իհարկե, նույն բանն է  
Ինչո՞ւ է ուրիշ բան, գրողը տանի: Չահլաս գնացել է:

— Վերջ տուր՝ գրողը, հա՛ գրողը: Լափ, մեկ ուրիշ բան  
էլ ասա: Ասա, թե ինչ կուզենայիր դառնալ: Դե, տանիք, գիտ-  
եսկա՞ն, փաստաբա՞ն, թե մեկ ուրիշ բան:

— Ինձնից ի՞նչ գիտնական, ես ընդունակ չեմ գիտու-  
թյանների հարցում:

— Դե՛, փաստաբան, ինչպես հայրիկը:

— Փաստաբանը, հավանաբար, վատ չէ, բայց ինձ, միև-  
նույն է, դուր չի գալիս, — ասում եմ: — Հասկանո՞ւմ ես, վատ  
չէ. երբ նրանք փրկում են անմեղ մարդկանց կյանքը և ընդ-  
հանրապես նման գործերով են զբաղվում, բայց բանն էլ հենց  
այն է, որ փաստաբանները նման բաներով չեն զբաղվում:  
Եթե փաստաբան դառնաս, ապա փող պիտի կուտակես, ցուֆ  
խաղաս, բրիջ, մեքենաներ գնես, շոր կոկտեյլներ խմես և  
մասն գաս պճնամուղի պես: Եվ ընդհանրապես, եթե ամբողջ

ժամանակ միայն մարդկանց կյանք փրկես, որտեղի՞ց պիտի իմանաս, թե հանուն ինչի ես դա անում, հանուն այն բանի, որ իսկապես փրկես մարդկանց կյանքը, թե՞ հանուն այն բանի, որ նշանավոր փաստաբան կոչվես, որպեսզի բոլորը թիֆփացնեն թիկունքիդ ու շնորհավորեն, երբ շահես այդ երիցս անիծյալ դատը, մի խոսքով, ինչպես կիրոններում, անպետք ֆիլմերում: Ինչպե՞ս իմանալ, այդ ամենը դու ցուցադրաբար ես անում, թե՞ իսկապես, այդ ամենը կե՞զ՞ծ է, թե կեղծ չի: Ոչ մի կերպ չես կարող իմանալ:

Ես շատ էլ համոզված չէի՝ հասկանո՞ւմ էր այդ ամենն իմ Ճիրիկն, թե չէ: Այնուամենայնիվ, նա դեռ շատ փոքրիկ է: Բայց դե գոնե ուշադիր լսում էր ինձ: Իսկ երբ լսում են քեզ, դա արդեն լավ է:

— Հայրիկը քեզ կսպանի, նա ուզողների կտպանի քեզ, — ասում է նորից Ճիրիկն:

Բայց ես նրան չէի լսում: Մի միտք ծագեց գլխումս, միանգամայն վայրենի մի միտք:

— Պիտե՞ս ինչ կուզեի դառնալ, — ասում եմ: — Պիտե՞ս ինչ: Եթե կարողանայի ընտրել այն, ինչ ուզում եմ, գրողը տանի:

— Վերջ տուր գրող ասելուն: Հը, ի՞նչ:

— Պիտե՞ս, մի այսպիսի երգ կա. «Եթե՞ն գա երեկոյան բռնել ես մեկին տարեկանի արտում...»

— Այդպես չէ: Հարկավոր է ասել «Եթե՞ն մեկը կանչել է մեկին երեկոյան տարեկանի արտում»: Պա Թորերտ Բերնսի բանաստեղծությունն է:

— Պիտեմ, որ Բերնսի բանաստեղծությունն է:

Նա իրավացի էր: Այնտեղ իսկապես այդպես է. «Եթե՞ն մեկը կանչել է մեկին երեկոյան տարեկանի արտում»: Ճիշտն ասած՝ նա մոռացել էի:

— Ինձ թվում էր, թե այնտեղ արևել է մեկին երեկոյան տարեկանի արտում», — ասում եմ: — Հասկանո՞ւմ ես, ես պատկերացնում եմ, թե ինչպես փոքրիկները երեկոյան խազում են վիթխարի դաշտում, տարեկանի արտում: Հազարավոր փոքրիկներ, և շուրջը ոչ մի մարդ, ոչ մե մեծ չկա, բացի ինձնից: Իսկ ես կանգնած եմ զառթթափի եզրին, անզունդի պոնկին, հասկանո՞ւմ ես: Աւ իմ գործն այն է, որ

բռնեմ երեխաներին, թույլ չտամ, որ սայթաքեն, անդունդն ընկնեն: Հասկանո՞ւմ ես, նրանք խաղում են ու շեն տեսնում ուր են գնում, իսկ ես վազում եմ ու բռնում նրանց, որ ցած չընկնեն: Ահա և իմ ամբողջ աշխատանքը: Պահպանել երեխաներին տարեկանի արտում, անդունդի եզրին: Հասկանում եմ, սա հիմարութիւն է, բայց միակ բանն է, որ ես ուզում եմ իսկապես: Երևի ես հիմար եմ:

Յիրին երկար լռեց: Հետո նորից կրկնեց.

— Հայրիկը քեզ կսպանի:

— Թող սպանի, թքած ունեմ ամեն ինչի վրա:— Ես վեր կացա անկողնուց, որոշեցի զանգահարել մի մարդու՝ էլքտոն-հիլլի իմ անգլերենի ուսուցչին: Նրան անվանում էին միստր Անտոլինի, հիմա նա ապրում էր Նյու-Յորքում: Նա էլքտոն-հիլլից դուրս էր եկել և անգլերենի ուսուցչի աշխատանք էր ստացել Նյու-Յորքի համալսարանում:— Ես պետք է զանգահարեմ,— ասում եմ:— Հիմա կգամ: Չքնես, լսո՞ւմ ես:— Բոլորովին չէի ուզում, որ նա քներ, մինչև հեռախոսային խոսակցութիւնս ավարտելը: Գիտեի, որ չի քնի, այնուամենայնիվ, խնդրեցի, որ չքնի:

Ես գնացի դեպի դուռը. Յիրին ձայն տվեց ետեիցս.

— Հուզե՛ն,— ու շուռ եկավ:

Նա նստել էր մահճակալին սիրունիկ, ուղղակի սքանչելի:

— Տիլիս Մարգուլիս անունով մի աղջիկ ինձ սովորեցրել է գիրտալ,— ասում է նա:— Հապա, լսիր:

Նս ականջ դրեցի, բայց առանձնապես մի բան չսեցի:

— Վատ չէ,— ասում եմ:

Ու գնացի հյուրասենյակ, զանգահարելու անգլերենի իմ նախկին ուսուցչին՝ միստր Անտոլինիին:

Զանգահարեցի շատ շտապ, որովհետև վախեցնում էի հանկարծ ծնողներս գան: Բայց նրանք չեկան: Միստր Անտոլինին շատ բարեհամբույր մարդ էր: Ասաց, որ կարող եմ գնալ իր մոտ, թեկուզ հենց հիմա: Հավանաբար ես նրանց երկուսին էլ արթնացրի, որովհետև երկար ժամանակ ոչ ոք չէր մոտենում հեռախոսին: Առաջին հերթին նա հարցրեց՝ ի՞նչ է պա-

տահել, իսկ ես պատասխանեցի՝ առանձնապես ոչինչ: Բայց այնուամենայնիվ, պատմեցի, որ ինձ հեռացրել են Փենսիլից: Միևնույն է, որևէ մեկին պետք է պատմեի: Նա առաց.

— Տեր աստված, դու ողորմա մեղավորներես,— այնուամենայնիվ, նա հումորի զգացում ունեւր: Պատվիրեց թեկուզև հիմա գնալ իր մոտ, հթե պետք է:

Նա իմ ուսուցիչներից ամենալավն էր: Բավական շահել, իմ եղբայր Դ. Բ-ից մի քիչ էր մեծ, ու նրա հետ կարելի էր կատակել, թեև բոլորը հարգում էին նրան: Նա առաջինը գետնից բարձրացրեց այն տղային, որ պատուհանից ցած էր նետվել, Ջեյմս Քասլին: Ես ձեզ պատմել եմ նրա մասին: Միստր Անտոլինին շոշափեց նրա զարկերակը, հետո հանեց իր բաճկոնը, ծածկեց Ջեյմս Քասլին ու գրկած տարավ լազարեթ: Եվ նրա համար նշանակութուն չունեւր, որ իր բաճկոնը ամբողջապես արյունոտվել էր:

Ես վերադարձա Դ. Բ-ի սենյակը, իմ Ֆիրին այնտեղ արգեն միացրել էր ռադիոն: Պարեղանակ էին հաղորդում: Ռադիոն իջեցրել էր, որպեսզի շարթնացնի մեր տնոետուհուն: Դուք մի տեսնեիք Ֆիրին: Նստել է մահճակալի մեջտեղը, ստքերը ծալել, ասես յոգ լինի, և երաժշտութուն է լսում: Ծիծաղից կմեռնես:

— Վեր կաց,— ասում եմ:— Ուզո՞ւմ ես պարենք:

Ես ինքս էի նրան պարել սովորեցրել, երբ նա դեռևս շատ պատլիկ էր: Նա շատ լավ էր պարում: Ընդհանրապես ես միայն մի քիչ էի ցույց տվել նրան, նա ինքն էր սովորել: Հնարավոր չէ մարդուն պարել սովորեցնել ինչպես հարկն է: Նա ինքը պետք է պարի:

— Հագիդ կոշիկնե՞ր կան,— ասում է:

— Ոչինչ, կհանեմ: Վեր կաց:

Նա ցատկեց մահճակալից: Սպասեց, մինչև հանեցի կոշիկներս, ու սկսեցինք պարել: Նա շատ լավ է պարում: Առհասարակ ես չեմ կարող տանել, որ մեծերը պարում են երեխաների հետ, սուկալի տեսարան է: Օրինակ՝ մի որևէ հայրիկ հանկարծ սկսում է պարել իր աղջնակի հետ: Նա այնպես անշնորհք է տանում աղջկան, որ հագուստը ետևի մասից անընդհատ բարձրանում է, համ էլ աղջիկը բոլորովին պարել

չգիտի, մի խոսքով, ողորմելի տեսարան է: Բայց ես ուսումնասիրում չէի պարի Ֆիրիի հետ: Մենք միայն տանն ենք պարում, այն էլ ոչ լրջորեն: Թեև նրա բանն ուրիշ է, նա շատ լավ է պարում: Հնազանդվում է քեզ: Միայն հարկավոր է ամուր բռնել նրան, այդ դեպքում չի խանգարի, որ քո ոտքերը թեկուզ հարյուր անգամ ավելի երկար են: Նա բալորովին ետ չի մնում: Նրա հետ կ'անցումներ կարելի է անել, կ'ամեն ձևի շրջադարձներ, նույնիսկ՝ շիտերբազ. երբեք ետ չի մնա: Նրա հետ նույնիսկ տանգո կարելի է պարել, ահա թե ինչ:

Մենք շորս պար պարեցինք: Ընդմիջումներին Ֆիրին այնպես հետաքրքիր է պահում իրեն, որ ծիծաղը գալիս է: Կանգնում է ու սպասում: Զի խոսում, ոչինչ: Ստիպում է կանգնել ու սպասել, մինչև որ նվագախումբը նորից սկսի: Իսկ իմ ծիծաղը գալիս է: Բայց նա զայրանում է, նույնիսկ թույլ չի տալիս ծիծաղել:

Մի խոսքով, մենք շորս պար պարեցինք, և ես անշատեցի առդիտն: Իմ Ֆիրին մտավ վերմակի տակ ու հարցրեց.

— Կա՞վ եմ պարում:

— Այն էլ ինչպե՞ս,— ասում եմ: Ես նստեցի նրա մահճակալին: Եունչս կտրվում էր: Հավանաբար, շափից դուրս շատ էի ծխել: Իսկ նա գոնե մի քիչ արագ շնչեր:

— Շոշափիր ճակատս,— ասում է նա հանկարծ:

— Ինչո՞ւ:

— Շոշափիր, ձեռքդ դիր:— Ես ձեռքս դրի նրա ճակատին, բայց բան չզգացի:— Եա՞տ է ջերմությունս,— ասում է:

— Զէ, մի՞թե ջերմություն ունես:

— Այո, հիմա ես կբարձրացնեմ: Մի անգամ էլ ձեռք տուր:

Ես նորից ձեռքս դրեցի և նորից ոչինչ չզգացի, բայց, այնուամենայնիվ, ասացի.

— Կարծես թե բարձրանում է:— Զէի ուզում, որ նրա մտքի ինչ-որ թերարժեքության կոմպլեքսի նման բան առաջանա: Ֆիրին գլխով արեց:

— Ես նույնիսկ ջերմաչափում կարող եմ բարձրացնել:

— Զեր-մա-չափում: Ո՞վ է սովորեցրել քեզ:

— Ալիսա Հովհորդը: Հարկավոր է ոտքերը ծալապատիկ

անել ու մտածել մի որևէ շատ տաք բանի մասին: Օրինակ՝ շեռուցիչի մասին: Ու ճակատդ կսկսի այնպես վառվել, ոք կարող ես որևէ մեկի ձեռքն այրել:

Ես հազիվ զսպեցի ծիծաղս: Դիտմամբ ես քաշեցի ձեռքս, ասես վախենալով այրվելուց:

— Շնորհակալութիւն, որ նախազգուշացրիր,— ասում եմ:

— Ձէ, ես քեզ չէի այրի, շուտ կանգ կառնեի, շը՛շ:— Թե ես հանկարծ վեր թռավ մահճակալի վրա: Ես սոսկալի վախեցա:

— Ի՞նչ եղավ:

— Մուտքի դուռն էր,— ասում է ես քարձր շշուկով:— Կրանք են:

Ես վեր թռա, վազեցի սեղանի մոտ, անշատեցի լամպը: Հետո հանգցրի սիգարետը, քնթուկը դրի գրպանս: Ձեռքերս թափահարեցի, որպեսզի ցրեմ ծուխը: Եվ ինչո՞ւ ծխեցի այստեղ, գրողը տանի ինձ: Հետո առա կոշիկներս, խցկվեցի պատի պահարանն ու փակեցի դուռը: Սիրտս թպրտում էր սոսկալի: Լսեցի, թե ինչպես մայրիկը ներս մտավ:

— Ֆիրի՛,— ասում է,— մի՛ ձեանա: Ես տեսա, որ քեզ մոտ լույս է վառվում, սիրելիս:

— Թարե,— պատասխանում է Ֆիրին:— Այո, քունս շէք տանում: Ուրախ անցավ ժամանակը:—

— Շա՛տ,— ասաց մայրիկը, բայց զգացվում էր, որ ճիշտ չէ: Նա բոլորովին չի սիրում հյուր գնալ:— Ինչո՞ւ չես քնել, թույլ տուր իմանալ: Հո չե՞ս մրսում:

— Ձէ, չեմ մրսում: Պարզապես քունս չի տանում:

— Ֆիրի, դու կարծես թե ծխե՛լ ես: Ըիշտն ասա, սիրելիս:

— Ի՞նչ,— հարցնում է Ֆիրին:

— Դու լսեցի՞ր ինչ հարցրի:

— Այո, մի բուռով ծխեցի: Միմիայն մի անգամ ծուխ արձակեցի: Հետո պատուհանից դուրս նետեցի:

— Ինչո՞ւ ես այդպիսի բան արել:

— Փունս չէր տանում:

— Դու ինձ վշտացնում ես, Ֆիրի, շատ ես վշտացնում,— ասաց մայրիկը:— Երկրորդ վերմակը տա՛մ:

— Չէ, շնորհակալություն: Բարի գիշեր,— ասաց Ֆիրին: Երևում էր, ջանում է շուտ ազատվել մորից:

— Իսկ կինոն ինչպե՞ս էր,— հարցնում է մայրիկը:

— Հրաշալի: Միայն Ալիսայի մայրն էր խանգարում: Ամբողջ ժամանակ իմ վրայով կռանում էր ու հարցնում՝ Ալիսան գողացնո՞ւմ է, թե չէ: Տաքսիով էլ տուն եկանք:

— Թող մի շոշափեմ ճակատդ:

— Չէ, ես չեմ վարակվել: Նա միանգամայն առողջ էր: Նրա մայրիկն էր ուղղակի հորինում:

— Լավ, քնիր, աստված քեզ հետ: Ծաշն ինչպե՞ս էր:

— Գարշանք,— ասաց Ֆիրին:

— Հիշո՞ւմ ես, հայրիկն ինչ ասաց քեզ. ուտելիքը չի կարելի «գարշանք» անվանել: Եվ ինչո՞ւ էր «գարշանք»: Քեզ ոչխարի մսով հրաշալի կուտիես են տվել: Հատուկ գնացել եմ Լեկսինգտոն-ավենյու:

— Կուտիեսը համով էր, բայց Չարլինան մատուցելիս միշտ շնչում է երեսիս, ճաշի վրա էլ է շնչում, ամեն ինչի վրա էլ:

— Դե լավ, քնիր, Համբուրի մայրիկին: Ազոթե՞լ ես:

— Այո, լոգարանում եմ աղոթել: Բարի գիշեր:

— Բարի գիշեր, շուտ քնիր: Գլուխս սոսկալի ցավում է,— ասում է մայրիկը: Նրա գլուխը շատ հաճախ է ցավում: Ուժեղ է ցավում:

— Ասպիրին ընդունիր,— ասում է Ֆիրին:— Հողիկնը չորհրդարթի գալո՞ւ է:

— Որքան ինձ հայտնի է, այո: Դե, լավ ծածկվիր: Այ այդպես:

Լսեցի, թե մայրիկն ինչպես դուրս եկավ սենյակից և դուռը ծածկեց: Մի րոպե սպասեցի, հետո դուրս եկա պահարանից: Ու տեղնուտեղը կպա քրոջս՝ նա մահճակալից իջել էր. գալիս էր ինձ ազատելու, ու այնպես մութ էր, ինչպես դժոխքում:

— Ես քեզ վնասեցի՞,— հարցնում եմ: Ստիպված շշուկով էինք խոսում, քանի որ բոլորն էլ տանն էին:— Հարկավոր է փախչել,— ասում եմ: Մթության մեջ շոշափեցի մահճակալը, նստեցի ու սկսեցի հագնել կոշիկներս: Սոսկալի նյարդայնանում էի, չեմ թաքցնում:



— Մի՛ գնա, — շնչաց Ֆիրին: — Սպասիր, մինչև քնեն:

— Չէ, հարկավոր է գնալ: Հիմա իրական ժամանակն է: Մայրիկը գնաց լոգարան, իսկ հայրիկը հիմա կմիացնի ուղիոն՝ վերջին լուրերը լսելու: Իսկական ժամանակն է:

Այնպես էի նյարդայնանում, որ չէի կարողանում նույնիսկ ինչպես հարկն է կոշիկներին թելերը կապել: Իհարկե, ինձ չէին սպանի, եթե տանը տեսնեին, բայց սոսկալի տհաճ բան կլիներ:

— Որտեղ ես, է՞, — հարցնում եմ Ֆիրին: Ծա նրան շեմ կարողանում տեսնել մթության մեջ:

— Այստեղ եմ: — Նա կանգնած էր ուղղակի կողքիս: Իսկ ես չէի տեսնում:

— Ճամպրուկներս կայարանում են, — ասում եմ, — լսիր, Ֆիր, փող-մող ունե՞ս: Ինձ մոտ ոչինչ չի մնացել:

— Ունեմ, Մենդյան տոնի նվերների համար: Ծա դեռ ոչինչ չեմ գնել:

— Ախ, միայն դա՞, — ես չէի ուզում նվերի փողերը վերցնել:

— Ծա մի քիչ պարտք կտամ քեզ, — ասում է: Ու լսեցի, թե ինչպես է որոնում Գ. Բ-ի դարակներում: Բացում է դարակ դարակի հտեկից: Սենյակում մութ էր ու ոչինչ չէր երեւում: — Որ գնաս, ինձ չես տեսնի թաարոնում, — ասում է ու ձայնը դողում է:

— Ինչպես շեմ տեսնի: Մինչև քեզ շտեսնեմ, շեմ գնա: Կարծում ես, այդպիսի ներկայացումը բաց կթողնե՞մ, — հարցնում եմ: — Գիտե՞ս ինչ կանեմ: Ծա միստր Անտոլինիի մոտ կմնամ ասենք մինչև երեքշաբթի, մինչև երեկո: Իսկ հետո կվերադառնամ տուն: Եթե հաջողվի, ես քեզ կզանգահարեմ:

— Վերցրու, — ասում է: Ինչ-որ փողեր է մեկնում ինձ, բայց ձեռքս չի գտնում: — Որտե՞ղ ես, — գտավ ձեռքս, փողը գրեց բուռս:

— Է՛, այսքան ինձ հարկավոր չէ, — ասում եմ: — Ինձ ընդամենը մեկ դոլար տուր, բավական է: Ազնիվ խոսք, մնացածը ետ վերցրու:

Ծա փողը կրկին նրա բուռը դրի, նա չվերցրեց:

— Վերցրու, բոլորը վերցրու: Հետո կատու: Կրեբես թատրոն:

— Որքա՞ն է այստեղ, տեր աստված:

— Ութ դռլար, ութսուն ցենտ: Չէ, վաթսունհինգ: Ծա աքրահն շատ եմ ծախսել:

Ու հանկարծ ես լաց եղա: Ոչ մի կերպ չկարողացա ինձ զսպել: Զանում եմ, որ ձայնս ոչ ոք չլսի, բայց լալիս եմ ու լալիս: Ֆիրին շատ վախեցավ, երբ ես լաց եղա: Մոտեցավ, հանգստացնում է, բայց մի՞թե միանգամից կարող ես լռել: Նստել էի անկողնու եզրին ու լաց էի լինում, իսկ նա թևերը փաթաթել է վզիս, ես էլ նրան եմ փարվել ու լաց եմ լինում, ոչ մի կերպ չեմ կարողանում կանգ առնել: Թվում էր, հիմա կխեղդվեմ արցունքներից: Խեղճ Ֆիրին սոսկալի վախեցավ: Պատուհանը բաց էր, ու ես զգում էի, թե նա ինչպես է գողում միայն պիժամայով: Ուզում էի նրան պառկեցնել, ծածկել վերմակով, չէր պառկում: Վերջապես դադարեցի լաց լինել: Բայց դեռ երկար-երկար ժամանակ չէի կարողանում հանգստանալ: Հետո մինչև վերջ կոճկեցի վերարկուս, ասացի, որ անպայման լուր կտամ նրան: Նա ասում էր, ավելի լավ կլինի ես պառկեմ այդտեղ, իր սենյակում, բայց ասացի՝ չէ, ինձ արդեն սպասում է միսոր Անտոլինին: Հետո գրպանիցս հանեցի որսորդական գլխարկս ու նվիրեցի նրան: Նա չափից դուրս շատ է սիրում ամեն տեսակ անհեթեթ գլխարկներ: Ակզբում չէր ուզում վերցնել, բայց հետո համոզեցի: Գրազ կգամ, որ հենց այդ գլխարկով էլ չնեց: Նա այդպիսի բաներ սիրում է: Նորից խոստացա հնարավորության գեպքում զանգել ու զնացի:

Տնից գնալը, չգիտեմ ինչու, անհամեմատ հեշտ էր, բան ներս մտնելը: Նախ՝ արդեն թքած ունեի: Կրոնե՞ն ինձ, թե ոչ: Ազնիվ խոսք: Ծա մտածեցի, կրոնեն՝ թո՛ղ բռնեն: Անկեղծ ասած, նույնիսկ ուզում էի, որ բռնեն:

Ցած իջա ոտքով և ոչ թե վերելակով: Իջնում էի ետնամբուքի աստիճաններով: Քիչ էր մնում գլուխս խփեմ աղբի դուլին, բայց վերջապես գո՛րս եկա: Վերելակավարը նույնիսկ շնկատեց ինձ: Հավանաբար, մինչև հիմա էլ դեռ կարծում է, թե նստած եմ այդ Դիկսթայնների տանը:

Միստր ու միսիս Անտոլինիներն ապրում էին մի շատ շքեղ բնակարանում, Սեթոն-Փլեյսի վրա, նրանք հյուրասեռ-յակում նույնիսկ սեփական բար ունեին: Հարկավոր էր միայն երկու աստիճան ցած իջնել: Ծս մի քանի անգամ եղել էի նրանց տանը, որովհետև, երբ հեռացել էի էլքտոն-հիլլից, միստր Անտոլինին գալիս էր մեր տուն իմանալու, թե ինչպե՞ս եմ ապրում ես, ու հաճախ էր մեր տանը ճաշում: Այն ժամանակ նա ամուսնացած չէր: Իսկ երբ ամուսնացավ, ես էի հաճախ թենիս խաղում նրա և միսիս Անտոլինիի հետ՝ Լոնդ-Այլենդում, Չորեստ-հիլլի թենիսի ակումբում: Միսիս Անտոլինին այդ ակումբի անդամ էր, և շափից դուրս շատ փող ուներ: Նա մի հարյուր տարով մեծ է միստր Անտոլինիից, բայց նրանք կարծեմ շատ են սիրում իրար: Նախ երկուսն էլ շատ բարեկիրթ ու զարգացած են, հատկապես միստր Անտոլինին, թեև երբ նա զրուցում է որևէ մեկի հետ, ավելի շատ կատակում է, քան խելացի բաներ ասում մեր Դ. Բ-ի նման: Միսիս Անտոլինին ավելի լուրջ է: Նա ասթմայի նապաներ է ունենում: Երկուսն էլ կարդում են Դ. Բ-ի բոլոր պատմվածքները, ու երբ Դ. Բ-ն պատրաստվում էր գեղջ Լոլիվուդ, միստր Անտոլինին զանգահարեց նրան ու համոզում էր չգնալ: Բայց Դ. Բ-ն, միևնույն է, գնաց: Միստր Անտոլինին ասում էր՝ եթե մարդը ընդունակ է գրելու Դ. Բ-ի նման, ապա նա անելիք չունի Լոլիվուդում: Ծս էլ ճիշտ և ճիշտ նույն բանն էի ասում:

Ծս ոտքով կգնայի մինչև նրանց տուն, որովհետև չէի ուզում ծախսել Ֆիրբի նվերի փողերը, բայց երբ տնից դուրս եկա, շատ վատ զգացի: Գլխապտույտ ունեցա: Ստիպված եղա տաքսի նստել: Չէի ուզում, բայց հարկադրված էի: Հազարիվ էլ մեքենա գտա:

Միստր Անտոլինին ինքը բացեց դուռը, երբ զանգ ավելի վերելակավարը, այդ սրիկան, ոչ մի կերպ չէր թողնում, այ վերև գնամ: Նա խալաթով ու կոշիկներով էր, ձեռքին՝ գոգաթի: Նա նրբաճաշակ մարդ էր, բայց ձիու պես խմում էր: — Լոլդեն, տղաս, — ասում է, — տեր աստված, օ՛հ

գրեթէ կես մետր բոյ ետ քաշել: Ուրախ եմ քեզ տեսնելուս համար:

— Դուք ինչպե՞ս եք, միստր Անտուլինի, միսիս Անտուլեօ եի՞ն ինչպես է:

— Օ՛, մեզ մոտ ամեն ինչ հրաշալի ֆե Այստեղ տուք բաճկոնդ:— Նա վերցրեց բաճկոնս ու կախեց:— Իսկ ես կարծում էի՝ կներկայանաս նորածնին գրկած: Ինչ կարող ենք անել: Թարթիչներիդ ձյուն է հալվել:

Նա ընդհանրապես սիրում էր սրամտել: Հետո շուռ եկավ աւ գոռաց խոհանոցի կողմը:

— Լիլիան, ի՞նչ եղավ սուրճը:— Կնոջ անունը Լիլիան է:

— Պատրաստ է,— գոռում է նա:— Հողի՞նն է, Բա՛րե, Հողի՞նն:

— Բարե, միսիս Անտուլինի:

Նրանց տանը միշտ հարկ է լինում գոռալ, որովհետեւ միշտ տարբեր սենյակներում են լինում: Ճարօցինակ է, իհարկե:

— Նստի՛ր, Հողի՞նն,— ասաց միստր Անտուլինին: Երևում է, քեֆը տեղն էր: Սենյակն այնպիսի տեսք ուներ, ասես հյուրերը նոր էին գնացել: Ամենուրեք բաժակներ էին զրքված, ընկույզով լի ամփսններ:— Ներիր անկարգության համար,— ասում է միստր Անտուլինին:— Մենք միսիս Անտուլինիի բարբիզոնցի ընկերներին էինք ընդունել... բարբիզոնցի բիզոններին:

Ես ծիծաղեցի, իսկ միսիս Անտուլինին ինչ-որ բան գոռաց խոհանոցից, բայց ես լավ չլսեցի:

— Ինչ ասա՞ց,— հարցնում եմ:

— Ասում է, շնայես ինձ, երբ ներս մտնեմ: Նա անկողնուց է վեր կացել: Միգարետ ուզո՞ւմ ես: Դու ծխո՞ւմ ես:

— Ենորհակալություն,— ես մի սիգարետ վեյցրի արկղիկից:— Երբեմն ծխում եմ, բայց շատ չափավոր:

— Հավատում եմ, հավատում եմ:— Նա վիթխարի վառիչք մտտեցրեց ինձ:— Այդպես ուրեմն, դու և Փենսին բաժանվեցիք, ինչպես նավերը ծովում:

Նա սիրում էր այդպես փքուն արտահայտվել: Երբեմն ինձ համար ծիծաղելի է, երբեմն էլ՝ բուրբուրովին ոչ: Հաճախ է շափն անցկացնում: Ես չեմ կարող ասել, թե նա սրամիտ

չէ, չէ՛, շատ է սրամփտ, բայց երբեմն ուղղակի ազդում են նյարդերիս վրա, երբ անվերջ նման արտահայտութիւններ են թույլ տալիս. «Բաժանվեցիք, ինչպես նավերը ծովում»։ Դ. Բ-ն էլ է երբեմն շփոթ անցնում։

— Իսկ ի՞նչ է պատահել,— հարցնում է միտար Անտո- լինին։— Ինչպե՞ս է վիճակդ անգլերենից, Եթե անգլերենից կտրված լինեիր, ես անմիջապես դուրս կհաննեի քեզ տնից։ Դու մեր դպրոցում շարադրութիւնից ամենաառաջինն էիր։

— Ձէ, անգլերենը լավ եմ հանձնել։ Ճիշտ է, մենք ավելի շատ գրականութիւն էինք անցնում։ Ամբողջ քառորդի քն- թացքում ես ընդամենը երկու շարադրութիւն եմ գրել, բայց րվեցի բանավոր խոսքից, մենք այդպիսի առարկա ենք անցնում՝ բանավոր խոսք։ Ես դրանից կտրվեցի։

— Ինչո՞ւ։

— Ինքս էլ չգիտեմ,— ասում եմ։ Տրամադիր չէի պատ- մելու։ Վատ էի զգում, գլուխս էլ սկսեց ուժգին ցավել։ Սոս- կալի։ Բայց նա, երևում է, շփոթ դուրս շատ էր ուզում ամեն ինչ իմանալ, ու ես սկսեցի պատմել։— Հասկանո՞ւմ եք, այդ գասերին ամեն մեկը պետք է վեր կենար և ելույթ ունենար։ Դե, դուք գիտեք, թեմատիկ իմպրովիզացիայի ձևով, և այլն։ Իսկ եթե հանկարծ որևէ մեկը շեղվում էր թեմայից, բոլորը գոռում էին. «Շեղվեցի՛ր»։ Գա ինձ ուղղակի կատաղեցնում էր։ Դրա համար էլ մեկ ստացա։

— Ախր ինչո՞ւ։

— Դե ինքս էլ չգիտեմ։ Ազդում է նյարդերիս վրա, երբ գոռում են՝ «Շեղվեցի՛ր»։ Իսկ ես հենց սիրում եմ, որ շեղ- վում են թեմայից։ Շատ ավելի հետաքրքիր է լինում։

— Մի՞թե դու շեռ ուզում, որ մարդ ասի միայն այն, ինչի մասին քեզ պատմում է։

— Ձէ, ուզում եմ, իհարկե։ Իհարկե, ուզում եմ, որ ինձ ամեն ինչ կարգով պատմեն։ Բայց շեռ սիրում, որ միշտ միևնույն բանն են պատմում։ Ինքս էլ չգիտեմ։ Հավանաբար, ինձ համար ձանձրալի է, երբ շարունակ միևնույն բանի մա- սին են պատմում։ Իհարկե, այն երեխաները, որոնք միշտ միևնույն թեմայի մասին էին պատմում, ամենաբարձր գե- հատականներն էին ստանում. դա արդարացի է։ Բայց մեզ մոտ մի տղա կար՝ Ռիչարդ Կինսելան։ Նա երբեք չէր կար-

գանձում խոսել նույն թեմայով, և նրան միշտ բնդհատում էին՝ «Շեղվում ես»: Դա սոսկալի էր, որովհետև նախ նա շատ նյարդային էր, հասկանում էր, սոսկալի նյարդային տղա էր, նրա շրթունքները դողում էին նույնիսկ, երբ կանչում էին դաս պատասխանելու, և նա այնպես էր խոսում, որ ոչինչ չէր լսվում, հատկապես, եթե վերջում էիր նստած: Իսկ երբ շրթունքները մի փոքր դադարում էին դողալուց, նա բուրբից հետաքրքիր էր պատմում: Բայց դե փաստորեն նա էլ կտրվեց: Եվ միայն այն պատճառով, որ երեխաները ամբողջ ժամանակ գոռում էին՝ «Շեղվեցիր»: Օրինակ՝ նա պատմում էր այն ֆերմայի մասին, որն իր հայրը գնել էր վերմոնտում: Ես պատմում է, իսկ շորս կողմից կանչում են՝ «Շեղվում ես», իսկ մեր աւսուցիչ միտար վինսոնք նրան մեկ դրեց այն բանի համար, որ իբր նա շի պատմում իրենց ֆերմայի կենտոնակառու բառակապակցի մասին: Եվ նա՝ այդ միջարդ կինսեիան, այսպես էր պատմում. ոկսում էր ֆերմայի մասին, ինչ կար այնտեղ, ինչ չկար. մեկ էլ սկսում էր պատմել մի նամակի մասին, որ մաւրն սասցել էր քնուց, թե այդ քնոն ինչպես էր քառասունորո տարեկանում հիվանդացել հոգացավով և ոչ ոքի չէր թողնում գնա իր մոտ հասպիտալ, որովհետև շէր ուզում. որ իրեն տեսնեն հաշմանդամ գործած: Իհարկե, դա ֆերմայի հետ ոչ մի կապ չուներ, համաձայն եմ, բայց չէ՞ որ հետաքրքիր է: Հետաքրքիր է, երբ մարդ պատմում է իր քնու մասին: Հատկապես, երբ նա սկսում է ինչ-որ բան դուրս առա հար ֆերմայի մասին ու հանկարծ ուզում է ինչ-որ բան պատմել իր քնու մասին: Եվ խոզություն է գոռալ՝ «Շեղվում ես թեմայից», երբ նա ետ-նոր է սկսել բացվել, ոգևորվել... չգիտեմ, գծվարանում եմ բացատրել:

Ես չէի էլ ուզում բացատրել: Չլուխ շատ էր ցավում: Ես միայն երազում էի, որ միտա Անտոյինին շուտ բերեր ատրեք: Ինձ սոսկալի պայրացնում է, որ կանչում են, թե ատրեք պատրաստ է, ու դեռ չեն բերում:

— Լսիր, Հոլգեն... Կարո՞ղ եմ ես քեզ մի հաճառատ, մի քիչ հնաոճ մանկավարժական հարց տալ. չե՞ս կարծում, որ ամեն ինչ իր տեղն ու ժամանակն ունի: Չե՞ս գտնում, որ եթե մարդն սկսել է պատմել հար ֆերմայի մասին, պետք է,

մինչև վերջ հետևի այդ թեմային, իսկ մեկ ուրիշ անգամ արդեն պատմի քնու հիվանդության մասին: Իսկ եթե քնու հիվանդությունը այդքան հրապուրիչ թեմա է, ապա ինչո՞ւ հոնտորը հենց այդ թեման շընտրի, և ոչ թե Ֆերման:

Տրամադիր չէի ոչ մտածելու և ոչ էլ պատասխանելու: Սոսկալի ցավում էր զլուխս, և շատ վատ էի զգում ինձ: Ընշտն ասած, փորս էլ էր ցավում:

— Այո. երևի, այդպես է: Հաճանքար, պետք է քնու թեման վերցնեք և ոչ թե Ֆերմայի, քանի որ նրան քնու թեման ավելի էր հետաքրքրում: Բայց հասկանո՞ւմ եք, հաճախ ինքզ էլ շփտես, քեզ ինչ է հետաքրքրում, մինչև որ շեռ սկսում պատմել անհետաքրքիր: Պատահում է, որ դա քեզանից կախված չի լինում: Բայց, իմ կարծիքով, մարդուն հնարավորության պետք է տան արտահայտվելու, եթե նա արդեն սկսել է հետաքրքիր պատմել ու տարվել է դրանով: Եստեմ սիրում, երբ մարդ հափշտակությամբ է պատմում: Գալավ բան է: Գուր չեք ճանաչում այդ ուսուցչին, այդ վիեսունին: Նա ձեզ էլ համբերությունից կհանի, կկատաղեցնի, նա ու այդ դասարանցիները: Հասկանո՞ւմ եք, նա անընդհատ կրկնում էր՝ հարկավոր է ընդհանրացնել, հարկավոր է պարզեցնել: Բայց մի՞թե կարելի է ամեն ինչ պարզեցնել, ամեն ինչ ընդհանրացնել, ԶԷ՛, գուր այդ վիեսունին չեք ճանաչում: Իհարկե, անմիջապես երևում է, որ նա զարգացած մարդ է և այլն, բայց ուղեղը որոշակիորեն լավ չի աշխատում:

— Ահա և վերջապես սուրճը, ջննտվմեններ, — ասաց միտիս Անտոլինին: Նա մատուցարանով բերեց սուրճ, թխվածք և ամեն տեսակ ուտելիքներ: — Հողոն, ինձ մի՛ նայիր, ես սոսկալի տեսք ունեմ:

— Բարև ձեզ, միտիս Անտոլինի, — ասում եմ: Ես ուզում եմ վեր կենալ, բայց միտար Անտոլինին թևիցս քաշում է, նստեցնում, Միտիս Անտոլինիի զլուխն ամբողջապես ծածկված էր գանգրացնելու այդ երկաթե բաներով, շրթունքները ներկված շէին: Ընդհանրապես տեսքը լավ չէր, մի տեսակ պառաված էր:

— Ես ամեն ինչ կղնեմ այստեղ, ինքներդ հյւրասիրե՛լիք, — ասաց նա: Հետո մատուցարանը դրեց ծխասեղանին, քաթակները հտ հրեց: — Ինչպե՞ս է մայրիկդ, Հողոն:

— Ոչինչ, շնորհակալություն: Ես վազուց շեմ տեսել նրան, բայց վերջին անգամ...

— Սիրելիս, ինչ որ կարող է պետք լինել Հուդենին, սպիտակեղենի պահարանում է: Վերին դարակի վրա: Ես պահում եմ քնելու: Շատ եմ հոգնել,— ասաց միսիս Անտոլինին: Դա երևում էր նրա վրայից:— Տղաներ, կարո՞ղ եք ինքներդ անկողին բացել:

— Ամեն ինչ կանենք: Շուտ արա պառկիր,— ասաց միստր Անտոլինին: Նա համբուրեց կնոջը, սա հրաժեշտ տվեց ինձ ու գնաց ննջարան: Նրանք միշտ համբուրվում էին ուրիշների ներկայությամբ:

Ես կես բաժակ սուրճ խմեցի և թխվածք կերա, որ քարի պես ամուր էր: Իսկ միստր Անտոլինին դարձյալ վիսկի խմեց: Երևում է, նա վիսկին բոլորովին չէր թուլացնում: Իսկական հարբեցող կղառնա, եթե իրեն չզսպի:

— Ես քո հայրիկի հետ նախաճաշել եմ երկու շաբաթ առաջ,— ասում է նա հանկարծ:— Դու այդ մասին զիտեի՞ր:

— Ոչ, չզիտեի:

Բայց քեզ, թերևս, հայտնի է, որ նա շատ է մտահոգված քո ճակատագրով:

— Այո, իհարկե: Իհարկե, հայտնի է:

— Հավանաբար, ինձ զանգահարելուց առաջ, նա բավական տազնաուպալից նսմակ է ստացել քո նախկին դիրեկտորից այն մասին, որ դու ոչ մի հետաքրքրություն չես ցուցաբերում պարապմունքների հանդեպ: Դասախոսությունները բաց ես թողում, դասերդ շիս պարապում, ընդհանրապես բուլտրովին ոչ մի բանում...

— Ոչ, ես ոչ մի բան բաց չեմ թողել: Մեզ արգելվում էր գասերից բացակայել: Երբեմն միայն այդ բանավոր խոսքին չէի գնում, բայց ոչ մի բան բաց չեմ թողել:

Բոլորովին չէի ուզում խոսել իմ գործերի մասին: Սուրճից մի փոքր դադարեց փորիս ցավը, բայց գլուխս ուզական տրաքվում էր:

Միստր Անտոլինին երկրորդ սիգարետը ծխեց: Նա շոգեքարշի պես էր ծխում: Հետո ասաց.

— Անկեղծ ասած, չզիտեմ ինչ ասեմ քեզ, Հուլյեն:

— Հասկանում եմ, ինձ հետ դժվար է խոսելը: Գիտեմ:



— Ինձ թվում է, թե դու գնում ես դեպի մի սարսափելի անդունդ: Բայց անկեղծ ասած, ես ինքս էլ չգիտեմ... Գու ինձ լսո՞ւմ ես:

— Այո:

Երևում էր, որ նա տրամադրված էր շատ լրջորեն խոսելու:

— Գուցե դու կհասնես այն բանին, որ երեսուն տարեկանում կդառնաս որևէ բարի մշտական այցելու և կատես բոլոր այն մարդկանց, ովքեր սրտաքուստ նման են համալսարանական ֆուտբոլային թիմի շեմպիոնին: Գուցե ժամանակին կդառնաս բավական կիրթ ու կատես այն մարդկանց, ովքեր սխալներով են խոսում: Գուցե կծառայես մի որևէ գրասենյակում ու ամբակներ կնետես քեզ չգոհացնող սղագրուհու վրա: Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում:

— Այո, իհարկե, — ասացի: Ես նրան շատ լավ էի հասկանում: — Բայց դուք իրավացի չեք այն բանում, թե ես բոլորին կատեմ: Ամեն տիպի ֆուտբոլային շեմպիոնների և այլն: Այդտեղ դուք սխալվում եք: Շատ քիչ մարդիկ կան, որոնց ես ատում եմ: Պատահել է, որ ես հանկարծ ատել եմ որևէ մեկին, ասենք, ինչպես այդ Ստրեդլեյթերին, որի հետ ապրում էի Փենսիլում, կամ այն մյուսին՝ Ռոբերտ Էլլիին: Պատահել է, իհարկե, որ ես նրանց սոսկալի ատել եմ, խոստովանում եմ, բայց միշտ էլ ոչ երկար ժամանակով, հասկանո՞ւմ եք: Երբեմն մի որոշ ժամանակ չես տեսնում նրան, նա չի գալիս քո սենյակը կամ նրան չես հանդիպում ճաշարանում և կարոտում ես: Հասկանո՞ւմ եք, նույնիսկ կարոտում ես նրան:

Միստր Անտոլինին երկար լռեց, հետո վեր կացավ, մի կտոր սառույց գցեց վիակու մեջ ու նորից նստեց: Երևում է, մտքերի մեջ ընկավ: Ավելի լավ կաներ խոսակցութունը առավոտյան շարունակեր և ոչ թե հիմա, բայց նա արդեն տրամադրվել էր: Մարդիկ միշտ վիճելու ցանկութուն են ունենում, երբ դու բոլորովին տրամադիր չես այդ բանին:

— Լա՛վ... Այժմ ուշադիր լսիր ինձ: Գուցե հիմա էլ բավականաչափ հստակ չկարողանամ արտահայտել իմ միտքը, բայց մի երկու օր հետո նամակ կգրեմ քեզ: Իսկ առայժմ լսիր:

Երևում էր, որ նա շանում է կենտրոնանալ: Հետո ասաց:  
— Անդունդը, ուր թռչում ես դու, սոսկալի անդունդ է:  
Նա, ով ընկնում է այնտեղ, երբեք չի գտում հատակը: Շա-  
բունակում է ավելի ու ավելի խոր գնալ: Դա պատահում է  
այնպիսի մարդկանց, որոնք իրենց կյանքի ինչ-որ շրջա-  
նում որոնել են մի բան, որը երբեք չի կարող տալ նրանց  
առօրյա շրջապատը: Ավելի ճիշտ, կարծել են, թե առօրյա  
շրջապատում նրանք ոչինչ չեն կարող գտնել իրենց համար:  
Եվ դադարել են որոնել: Դադարել են որոնել, եռլյնիսկ առանց  
փորձելու որևէ բան գտնել: Դու հետևո՞ւմ ես իմ մտքին:

— Այո, սբբ:

— Իսկապե՞ս:

— Այո:

Նա վեր կացավ, էլի վիսկի լցրեց իր համար: Հետո նորից  
նստեց: Եվ երկար ժամանակ լուռ մնաց:

— Զեմ ուզում քեզ վախեցնել, — ասաց նա վերջապես, —  
բայց ես շատ հստակ եմ տեսնում, թե դու ինչպես ազնվորեն  
գոհարերում ես կյանքդ մի ինչ-որ դատարկ, անարժեք գոր-  
ծի համար: — Նա նայեց ինձ տարօրինակ աչքերով: — Լսիր,  
եթե ես մի բան գրեմ քեզ, խոստանո՞ւմ ես ուշադիր կարդալ:  
Եվ պահպանել:

— Այո, իհարկե, — ասացի: Ես իսկապես պահպանել եմ  
թերթիկը, որ այն ժամանակ նա ավելի ինձ: Հիմա էլ ինձ  
մտա է:

Նա մտեցյալ իր գրասեղանին և, առանց նստելու, ինչ-որ  
բան գրեց: Հետո եկավ ու նստեց՝ թերթիկը ձեռքին բռնած:

— Որքան էլ տարօրինակ լինի, սրա գրողը բանաստեղծ  
չէ: Սա ասել է Վիլհելմ Շտեկել անունով մի հոգեվերլուծող:  
Ահա թե նա... Դու ինձ լսո՞ւմ ես:

— Գե, իհարկե:

— Ահա թե ինչ է ասում նա. «Մարդու շատունացածու-  
թյան նշանը այն է, որ նա ուզում է ազնվորեն մեռնել հա-  
ետոն արդար գործի, իսկ հասունացածուժյան նշանը՝ ա՛յն,  
որ ուզում է հնազանդորեն ապրել հանուն արդար գործի»:

Նա թեքվեց ու թուղթը հանձնեց ինձ: Ես մի անգամ էլ  
կարդացի, հետո շնորհակալություն հայտնեցի և թուղթը գրե-  
ցի գրպանս: Այնուամենայնիվ, մեծ սիրալիրություն էր, որ

նա այդպես շանուժ էր ինձ համար: Ափսոս, որ ոչ մի կերպ չէի կարողանում կենտրոնանալ: Սոսկայի հոգնել էի, ճիշտն ասած:

Իսկ նա բոլորովին չէր հոգնել: Եվ որ կարեւորն է, շատ էր խմել:

— Կգա՞մի օր, — հտնկարծ ասում է նա, — որ դու հարկադրված կլինես որոշել՝ ուր գնալ: Եվ անմիջապես կգնաս այնտեղ, ուր որոշել նս: Անհապա՛գ: Գու իրազմունք չունես կարցնել ոչ մի բուսի: Դա քեզ չի կարելի:

Ես գլխով արեցի, որովհետեւ նա նայում էր ուզիզ աչքերիս մեջ, բայց այնքան էլ լավ չէի հասկանում ինչի մասին է խոսում: Մի քիչ գլխի էի ընկնում, բայց և այնպես համոզված չէի, թե ճիշտ եմ հասկանում: Զափից դուրս շատ էի հոգնած, ազնիվ խոսք:

— Չեմ ուզում կրկնել միևնույն բանը, — ասում է նա, — բայց կարծում եմ, որ երբ որոշես քո հետագա ուղին, առաջին հերթին հարկադրված կլինես լրջորեն վերաբերվել դրաբողոքական պարապմունքներին: Այո, հարկադրված կլինես, դու մտածող մարդ ես, անկախ այն բանից, դուր է գալիս քեզ այդ անվանումը, թե չէ: Դու գիտության ես ձգտում: Ու ինձ թվում է, երբ կհաղթահարես բոլոր այդ միստր Վինդսիներին և նրանց «բանավոր կոմպոզիցիաները», գու...

— Վինտոններին, — ասացի ես: Նա, հավանաբար մտածում էր միստր Վինտոնների մասին և ոչ թե Վինգսիներին: Այնուամենայնիվ, իզուր ընդհատեցի նրան:

— Լավ, բոլոր այդ միստր Վինտոններին: Երբ դու կհազարահարես բոլոր այդ Վինտոններին, կսկսես ավելի ու ավելի մոտենալ (իհարկե, եթե ցանկանաս, եթե ձգտես, սպասես դրան), ավելի կմոտենաս այն գիտելիքներին, որոնք մոտ են քո սրտին: Ու այդ ժամանակ կպարզես, որ դու առաջինը չես, որոնց շփոթություն, վախ, նույնիսկ զգվանք են պատճառել մարդիկ ու նրանց արարքները: Կհասկանաս, որ միայն դու չես զգացել այդ բանը, և դա, կուրախացնի, սատար կլինի քեզ: Շատ շատերն են ապրել այդ շփոթությունը բարոյական ու հոգեկան հարցերում, որն ապրում ես դու հիմա: Բարեբախտաբար, նրանցից ոմանք գրի են առել իշենց ապրումները: Դու նրանցից շատ բան կսովորես, եթե, իհարկե,

ցանկանաս: Ինչպես և ուրիշները կսովորեն քեզնից, և թե դու  
ասելիք ունենաս նրանց: Փոխադարձ օգնությունը հրաշալի  
բան է: Եվ դա ոչ միայն գիտելիքների ասպարեզում, այլև՝  
առեղիսայի, այլև՝ պատմության:

Նա կանգ առավ, խմեց մի կում, էլի շարունակեց: Երե-  
վում է շատ էր տարվել: Լավ է, չէի ընդհատում, չէի կանգ-  
նեցնում:

— Չեմ ուզում քեզ ներշնչել, թե միայն կրթված ու զար-  
գացած մարդիկ կարող են արժեքավոր ներմուծում կատարել  
կյանքում, — շարունակեց նա: — Դա այդպես չէ: Բայց ես  
հաստատում եմ, որ կրթված ու զարգացած մարդիկ տա-  
ղանդավոր ու ստեղծագործող լինելու դեպքում, որ դժբախ-  
տաբար հազվագեղ է պատահում, ավելի մեծ ու արժեքավոր  
ժառանգություն են թողնում իրենցից հետո, քան միմիայն  
տաղանդավոր ու ստեղծագործող մարդիկ: Նրանք ջանում են  
իրենց միտքն արտահայտել հնարավորին չափ պարզ ու հըս-  
տակ, իրենց գաղափարները մինչև վերջ են հասցնում հա-  
մառորեն ու հաստատակամորեն: Եվ, որ ամենակարևորն է,  
տասից ինը դեպքում գիտության մարդիկ անհամեմատ ավե-  
լի համեստ են, քան չկրթված, թեկուզև մտածող մարդիկ:  
Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում:

— Այո, սրբ:

Նա բավական երկար լուռ մնաց: Չգիտեմ, պատահե՞լ է  
ձեզ, թե ոչ, բայց շատ դժվար է նստել ու սպասել, մինչև  
որ մտասուզված մարդը կրկին խոսի: Ես ամեն կերպ ջանում  
էի ինձ զսպել, որ չհորանջեմ: Ոչ թե այն պատճառով, որ  
ձանձրալի էր լսելը, բոլորովին էլ ոչ, պարզապես քունս սոս-  
կալի տանում էր:

— Մի առավելություն էլ կա, որը կտա քեզ ակադեմիա-  
կան դասընթացը: Եթե բավականաչափ խորանաս գիտելիք-  
ների մեջ, պատկերացում կկազմես քո ունակությունների  
ուղղության ու հնարավորությունների մասին: Ինչն է նրա  
համար ընդունելի, ինչը՝ ոչ: Եվ որոշ ժամանակ հետո կհաս-  
կանաս՝ որ մտածելակերպն է քեզ հարմար, որը՝ ոչ: Եվ դա  
կօզնի երկար ժամանակ չվատենել քեզ հարմարեցնելու  
համար մի այնպիսի մտածելակերպ, որը բոլորովին պետք չէ,  
հարմար չէ քեզ: Դու կճանաչես քո խսկական շափսերը և

գրանից ելնելով հազուստ կրնտրես քո խելքի համար:— Եվ այստեղ հանկարծ ես լայն հորանջեցի: Անտաշ անասունի մեկն եմ, գիտեմ, բայց ի՞նչ կարող էի անել: Միստր Անտոլինին միայն ծիծաղեց:

— Լավ,— ասաց նա,— արի քեզ համար անկողին բացենք:

Ես նրա ետևից գնացի դեպի պահարանը. նա փորձում էր ինձ համար սավան ու վերմակ հանել վերին դարակից, բայց ձեռքի գավաթը խանգարում էր: Այդ ժամանակ նա խմեց պարունակութունը, գավաթը դրեց հատակին, հետո հանեց, ինչ որ պետք էր: Ես օգնեցի նրան այդ ամենը հասցնել բազմոցին: Միասին սկսեցինք անկողին բացել: Չի կարելի ասել, թե նա մի առանձին ճարպկութուն էր հանդես քերում այդ գործում: Ոչինչ չէր կարողանում անել, ինչպես հարկն է: Բայց ինձ համար միևնույն էր: Ես պատրաստ էի թեկուզ կանգնած քնել, այնքան էի հոգնած:

— Իսկ ինչպե՞ս են քո հրապուրանքները:

— Ոչինչ:— Ես մի կարգին զրուցակից չէի առհասարակ, ու հիմա էլ բոլորովին ցանկութուն չունեի խոսելու:

— Ինչպե՞ս է Սալլին:— Նա ճանաչում էր Սալլի Հեյսին: Ես մի անգամ ծանոթացրել էի նրանց:

— Լավ է: Մենք այսօր ցերեկը տեսնվել ենք:— Գրողը տանի, ինձ թվում էր, թե դրանից հետո քսան տարի էր անցել:— Բայց հիմա քիչ ընդհանուր բան կա մեր մեջ:

— Զարմանալի գեղեցիկ աղջիկ է: Իսկ ինչպե՞ս է մյուսը: Հիշո՞ւմ ես, պատմում էիր, որ նրա հետ Մեյնում ես ծանոթացել...

— Ա՛, Ջեյն Գալլահերը: Նա ոչինչ, Հավանաբար, ես վաղը կզանգահարեմ նրան:

Վերջապես բացեցինք անկողինը:

— Պառկիր,— ասաց միստր Անտոլինին:— Զգիտեմ ինչպես ես տեղավորելու քո երկար ոտքերը:

— Ոչինչ, ընտելացել եմ կարճ մահճակալներին: Շատ շնորհակալութուն, սրբ: Դուք և միսիս Անտոլինին այսօր իսկապես փրկեցիք իմ կյանքը:

— Լոգարանի տեղը գիտես: Եթե որևէ բանի կարիք տես-

նաս, ձայն տուր ինձ: Ես մի քիչ էլ կնստեմ խոհանոցում:  
Լույսը քեզ չի՞ խանգարի:

— Զէ, ինչ եք ասում, շատ շնորհակալություն:

— Դե լավ: Բարի գիշեր, բարեկամս:

— Բարի գիշեր, սրբ: Շատ շնորհակալություն:

Նա դուրս եկավ խոհանոց, իսկ ես գնացի լոգարան, հան-  
վեցի, լվացվեցի: Ատամներս չլվացի, որովհետև ատամի խո-  
զանակը չէի վերցրել հետս: Պիժամա էլ չունեի, իսկ միստր  
Անտոլիինին մոռացավ տալ: Վերադարձա հյուրասենյակ,  
հանգցրի բազմոցի գլխավերևի լամպը և միմիայն տրուսիկով  
մտա վերմակի տակ: Բազմոցը շափից դուրս կարճ էր, բայց  
ես պատրաստ էի թեկուզև կանգնած քնել ու աչքս էլ չէի  
թարթի: Երկու վայրկյան ես պառկած մտածում էի միստր  
Անտոլիինիի ասածների վրա: Մտածելակերպի և այլնի մասին:  
Նա շատ խելացի է, ազնիվ խոսք: Բայց աչքերս ինքնաբերա-  
բար փակվեցին, ու ես քնեցի: Հետո մի բան պատահեց:  
Ճիշտն ասած, շեմ էլ ուզում սլատմել:

Հանկարծ ես արթնացա: Զգիտեմ ժամը քանիսն էր, բայց  
արթնացա: Ինչ-որ բան զգացի ճակատիս, ինչ-որ մեկի ձեռ-  
քը: Տեք աստված, ինչպե՞ս վախեցա: Պարզվում է, դա  
միստր Անտոլիինիի ձեռքն էր: Նա նստել էր հատակին, բազ-  
մոցի մոտ և ոչ այն է ճակատս շոշափում էր, ոչ այն է՝ շո-  
ջում: Ազնիվ խոսք, ես հազար մետր վեր թռա:

— Ի՞նչ եք անում:

— Ոչինչ: Պարզապես նայում եմ քեզ... հիանում եմ...

— Զէ, գուք ի՞նչ եք անում այստեղ,— նորից եմ  
ասում ես:

Ուղղակի շփոթեի ինչ ասեի, տխմարի պես ինձ կորց-  
րել էի:

— Սուս արա, ի՞նչ ես ասում: Պարզապես մոտեցա տես-  
նեմ...

— Միևնույն է, իմ գնալու ժամանակն է,— ասում եմ:  
Տեք աստված, ինչպես վախեցա: Սկսեցի մթության մեջ  
հագնել տաբատս, ու ոչ մի կերպ չէի կարողանում ստքս  
ճիշտ տեղը մտցնել, այնպես էի նյարդայնացել: Դպրոցնե-  
րում ուղածիդ շափ տեսել էի այդ անհիճյալ աննորձալներին:

— Ո՛ւր պիտի գնաս,— հարցրեց միստր Անտոլիինին: Նա

շանում էր շատ հաճախատ ու սառը խոսել, բայց երևում էր, որ իրեն կորցրել էր: Հավատացեք ինձ:

— Ես ճամպրուկներս կայարանում եմ թողել: Թերևս հարկավոր է գնալ վերցնել: Բոլոր իրերս այնտեղ են:

— Իրերդ մինչև առավոտ ոչ մի տեղ չեն փախչի: Պառկիր, խնդրեմ, և քնիր: Չեմ հասկանում, ինչ է կատարվում քեզ հետ:

— Ոչինչ չի կատարվում: Պարզապես բոլոր իրերս ու փողերս ճամպրուկներում են: Ես շուտով կվերադառնամ: Տաքսի կվերցնեմ և կվերադառնամ:— Գրողը տանի, քիչ էր մնում գլուխս շարճի մթության մեջ:— Բանն այն է, որ իմ փողերը չեն: Մայրիկինն են, և ես պետք է...

— Հիմարություններ մի՛ անի, Հուլդեն: Պառկիր քնիր: Ես էլ եմ գնում քնեմ: Մինչև առավոտ քո փողերը ոչ մի տեղ չեն կորչի...

— Չէ, չէ, անպայման պետք է գնամ, ազնիվ խոսք:

Ես գրեթե արդեն հագնվել էի, միայն փողկապս չէի գրտնում: Ոչ մի կերպ չէի կարողանում հիշել, թե որտեղ եմ գրել այդ անիծյալ փողկապը: Հագա բաճկոնս, առանց փողկապի կգնամ: Իսկ միսոր Անտոլինին նստել էր քաղվաթոռին ու հեռվից նայում էր ինձ: Մութ էր, և ես վատ էի տեսնում նրան, բայց զգում էի, թե ինչպես է հետևում ինձ: Եվ խմում է: Այդպես էլ ձեռքից ցած չէր դրել սիրած գավաթը:

— Դու զարմանալի տարօրինակ տղա ես:

— Գիտեմ,— ասացի: Ես նույնիսկ փողկապս չփնտրեցի: Այդպես էլ առանց փողկապի գնացի:— Ցտեսություն, սրբ,— ասում եմ:— Եվ շատ շնորհակալություն, ազնիվ խոսք:

Նա մինչև դրան մոտ եկավ իմ ետևից, իսկ երբ վերելակ կանչեցի, կանգ առավ շեմքին: Եվ նորից կրկնեց, որ ես շատ, շատ տարօրինակ տղա եմ: Այո, տարօրինակ եմ, ինչպե՞ս չէ: Նա այնքան սպասեց, մինչև որ եկավ այդ երիցս անիծյալ վերելակը: Կյանքումս երբեք այդքան չեմ սպասել վերելակին, գրողը տանի դրան: Մի ամբողջ հավիտենականություն, ասածով եմ երդվում:

Զգիտեի նույնիսկ, թե ինչի մասին խոսեմ, քանի դեռ սպասում էի վերելակին, իսկ նա կանգնել էր շեմքին, ու ես ասացի:

— Կսկսեմ լավ գրքեր կարդալ, իսկապէս, կսկսեմ,— չէ որ մի բան պետք է ասեի: Ընդհանրապես անհարմար ստացվեց:

— Վերցրու ճամպրուկներդ ու էլի շուտ այստեղ արի: Ծագաւը բաց կթողնեմ:

— Շատ շնորհակալութիւն,— ասում եմ:— Ցտեսութիւն:— Վերջապես վերելակն եկավ: Ծա փակեցի դուռը, սկսեցի իջնել: Տեր աստված, ինչպես էի զողացնում: Քրքրտինքս էլ վրա էր տվել: Երբ ինձ հետ անսպասելի բան է տեղի ունենում, քրտինքս վրա է տալիս: Իսկ դպրոցում մի քառն անգամ ամեն տեսակ այլանդակութիւններին էի հանգիպել: Մանկուց սկսած: Ատում եմ:

## 25

Երբ դուրս եկա տնից, սկսել էր լուսանալ: Սոսկալի ցուրտ էր, բայց ինձ համար հաճելի էր, որովհետև քրտնել էի:

Բոլորովին շփտեի, թե ուր գնամ: Քույրիկիս փողերով հյուրանոցում համար վարձել չէի ուզում: Վերջ ի վերջո ոտքով գնացի մինչև Լեքսինգտոն և մետրո նստեցի մինչև Կենտրոնական կայարան: Ճամպրուկներս կայարանում էին, ու ես որոշեցի քնել սպասասրահում, այնտեղ, ուր ամբացված են այդ անիծյալ նստարանները: Այդպես էլ արեցի: Սկզբում ոչինչ, մարդիկ քիչ կային, կարելի էր պառկել, ոտքերը մեկնել նստարանի վրա: Բայց ես չեմ ուզում այդ մասին պատմել, բավական զգվելի զգացում է: Ավելի լավ է, այնտեղ մի՛ գնացեք: Լուրջ եմ ասում: Թախիծ է պատում հոգիդ:

Քնեցի մինչև ժամը ինը, այդ ժամանակ միլիոնավոր մարդիկ լցվեցին, հարկադրված եղա ոտքերս քաշել: Իսկ ոտքերս կախած ես չեմ կարողանում քնել: Նստեցի: Գլուխս առաջվա պես ցավում էր: Նույնիսկ ավելի ուժեղ: Իսկ տրամադրութիւնս այնքան վատ էր, որ կյանքումս երբեք այդքան վատ տրամադրութիւն չեմ ունեցել:

Չէի ուզում մտածել միտոր Անտոլինիի մասին, բայց չէի կարող չմտածել. ի՞նչ է ասելու իր կնոջը, երբ սա տեսնի, որ այնտեղ չեմ գիշերել: Բայց ինձ դա չէր անհանգստացնում,



ես հրաշալի գիտեի, որ միստր Անտոլինին բավականաչափ խելացի է և պատասխան կգտնի: Կասի, որ տուն եմ գնացել, և վերջ: Պա ինձ շատ չէր անհանգստացնում: Ինձ մի ուրիշ բան էր տանջում, այն, թե ինչպես արթնացա ես նրա ձեռքի հպումից: Հասկանո՞ւմ եք, հանկարծ սկսեցի մտածել՝ գուցե ես անտեղի անթաղրեցի, թե նա ուզում է ինձ կաշել: Պուցե՞ պարզապես ուզում էր շոյել գլուխս, գուցե սիրում է շոյել երեխաների գլուխը, երբ նրանք քնած են: Մի՞թե կարող ես հաստատ ասել: Երբեք չես կարող: Մտածեցի նույնիսկ, որ պետք է ճամպրուկներն առնեի ու վերադառնայի նրանց տուն, ինչպես խոստացել էի: Հասկանո՞ւմ եք, ես մտածեցի, որ եթե նույնիսկ նա տարօրինակություններ ունի, միևնույն է, իմ հանդեպ շատ լավ է վերաբերվել: Չի բարկացել, որ գիշերվա կեսին արթնացրել եմ նրան, ասաց՝ արի թեկուզ հիմա, եթե հարկավոր է: Եվ ինչպե՞ս էր ջանք թափում, ամեն տեսակ խորհուրդներ էր տալիս մտածելակերպի և այլնի մասին, և ինչպես միայն նա չվախեցավ ու մոտեցավ այն տղային՝ Ջեյմս Քասլին, երբ նա ընկած էր մեռած, հիշո՞ւմ եք, ես ձեզ պատմել եմ: Ես նստել մտածում էի այդ ամենի մասին: Ու որքան շատ էի մտածում, այնքան ընկնում էր տրամադրություն: Ինձ տանջում էր այն միտքը, թե հարկավոր է վերադառնալ նրա տուն: Հավանաբար, նա իսկապես հենց այնպես էր շոյում գլուխս:

Ու որքան շատ էի մտածում այդ մասին, այնքան ավելի էի տանջվում ու տխրում: Այդ ժամանակ հակառակի պես սկսեցին աչքերս էլ ցավել: Ծավում են, կսկծում անիծվածների պես, այն պատճառով, որ տնքուն եմ: Հետո հարբուխ սկսվեց, ես էլ թաշկինակ շունեի: Ծամպրուկիս մեջ կային, բայց չէի ուզում ճամպրուկները վերցնել պահպանման կետից ու բոլորի աչքի առաջ բացել:

Կողքիս նստարանի վրա ինչ-որ մեկը ամսագիր էր մոռացել, սկսեցի կարդալ: Պուցե՞, դադարեմ միստր Անտոլինիի և հազար ու մի բաների մասին մտածելուց, գոնե ժամանակավորապես մոռանամ: Բայց այդ անիծյալ հողվածից հարյուրապատիկ վատացա: Այնտեղ բազմապիսի հորմոնների մասին էր գրված: Նկարագրված էր, թե ինչպիսի տեսք պետք է ունենաք, ինչպիսի գեմք, աչքեր, եթե ձեր բոլոր հորմոն-

Յերը կարգին են, իսկ իմ տեսքը ճիշտ հակառակն էր. ես ճիշտ այնպիսի տեսք ունեի, ինչպես հողվածում նկարագրվածը, որի բոլոր հորմոնները խախտված էին: Սկսեցի սուկայի անհանգստանալ, թե ինչ է պատահել իմ հորմոններին: Հետո սկսեցի մեկ ուրիշ հոգված կարդալ. ինչպես կանխավ որոշել՝ քաղցկեղ ունե՞ս, թե ոչ: Այնտեղ գրված էր, որ եթե բերանում խոցեր կան, որոնք երկար ժամանակ չեն բուժվում, նշանակում է, ամենայն հավանականությամբ գուհիվանդ ես քաղցկեղով: Իսկ իմ շրթունքին ներսի կողմից արդեն երկու շաբաթ էր, որ վերք կար: Հը՛մ, ուրախ ամսագիր է. խոսք չկա: Ես մի կողմ նետեցի այն ու գնացի ման գալու: Հաշվեցի, որ եթե քաղցկեղ ունեմ, ապա երկու-երեք ամսից Քետո կմեռնեմ: Կրքորեն այդպես էլ մտածում էի: Հաստատ համոզված էի, որ կմեռնեմ: Ու տրամադրությունս գրանից, պարզ է, չէր լավանում:

Կարծես թե անձրև էր գալիս, բայց ես, միևնույն է, գնացի զբոսնելու: Նախ հարկավոր էր նախաճաշել: Ախորժակ չունեի, բայց, հասկանում էի, որ, այնուամենայնիվ, հարկավոր է ամբապնդվել: Համենայն դեպս, մի որևէ սննդավետ բան ուտել: Գնացի դեպի արևելյան թաղամասերը, որտեղ ռեստորանները համեմատաբար էժան են. չէի սւզում շատ ծախսել:

Ճանապարհին տեսա, թե ինչպես երկու մարդ տոնածառ էին իջեցնում մեքենայից: Եվ մեկը անընդհատ ձայն էր տալիս մյուսին՝ բռնիր այդ գրողի տարած տիկնիկը, ամուր բռնիր, գրան այդպես է պետք: Շատ գեղեցիկ է այդպես խոսել Մենդյան տոնածառի մասին: Բայց չգիտեմ ինչու ծիծաղս եկավ, ու ես քրքջացի: Ավելի վատ չէր կարող լինել, սիրտս սկսեց խառնել, քիչ էր մնում ետ տալի, բայց հետո անցավ, ինքս էլ չգիտեմ ինչպես: Չէ՞ որ ես որևէ հնացած բան չէի կերել, բացի այդ էլ, դիմացկուն ստամոքս ունեմ:

Մի խոսքով, առայժմ ամեն ինչ անցավ, ու ես որոշեցի ուտել: Մտա մի շատ էժանագին ռեստորան և փքարլիթներ ու սուրճ պատվիրեցի: Միայն թե փքարլիթները չկերա, չկարողացա ուտել: Եթե տրամադրությունդ շատ է ընկած, դժվար է կուլ գնում: Բայց մատուցողը հիանալի մարդ էր: Նա փքա-

բիթները ետ տարավ ու ինձնից ոչինչ չվերցրեց: Ես միայն  
սուրճ խմեցի ու գնացի Հինգերորդ ավենյուի կողմը:

Երկուշաբթի էր, մոտենում էին Մենդյան տոները, և խա-  
նութներում աշխույժ առևտուր էր գնում: Հինգերորդ ավենյ-  
ուում շատ հաճելի էր: Տոնական տրամադրություն էր զգաց-  
վում: Բոլոր անկյուններում մորուքավոր կլաուններ էին կանգ-  
նած, զնգզնգում էին զանգակները, և փրկության բանակի  
կանայք, նրանք, որոնք երբեք չեն ներկում շրթունքները,  
նույնպես զանգակներ էին հնչեցնում: Ես անվերջ որոնում  
էի այն երկու միանձնուհիներին, որոնց հետ նախաճաշել էի  
նախորդ օրը, բայց նրանք ոչ մի տեղ չէին երևում: Ինչևէ,  
այդպես էլ գիտեի, որովհետև նրանք ասացին, որ եկել են  
Նյու-Յորք ուսուցչություն անելու, բայց և այնպես որոնում  
էի: Համենայն գեպս, տրամադրությունս հանկարծ տոնական  
դարձավ: Մայրերի հետ հազարավոր երեխաներ էին դուրս  
գալիս ավտոբուսներից, ելումուտ անում խանութները: Ի՞նչ  
լավ կլիներ, որ Ֆիրին ինձ հիտ լիներ: Նա այնքան փոքր չէ,  
որ գժվի խաղալիքների համար, բայց սիրում է նայել ամ-  
բոխին ու հազար ու մի խենթություններ հորինել: Անցյալ  
Մենդյան տոներին նրան քաղաք տարա գնումներ կատարե-  
լու: Ի՞նչ ասես, որ շարհցինք: Կարծեմ դա Բլումինգդելի մոտ  
էր: Մենք մտանք կոշիկի խանութ ու ձևացրինք, թե քրոջս  
հարկավոր են այդ երկարաճիտ լեռնային կոշիկներից, գի-  
տե՞ք, ա՛յն, որ հարյուր անցքեր ունեն կապիչնիւրի համար:  
Ուղղակի գժվացրինք այդ վաճառողին: Իմ Ֆիրին մի քսան  
զույգ փորձեց, ու ամեն անգամ խեղճ վաճառողը ստիպված  
էր լինում նրա կոշիկի կապիչներն ամրացնել մինչև ծունկը:  
Խողովոյն էր, իհարկե, բայց Ֆիրին ուղղակի մեռնում էր:  
Վերջ է վերջո մենք մի զույգ անային կոշիկներ գնեցինք և  
խնդրեցինք ուղարկել տուն: Վաճառողը հրաշալի մարդ դուրս  
եկավ: Իմ կարծիքով նա հասկանում էր, որ մենք խազում  
ենք, որովհետև Ֆիրին անվերջ քրքշում էր:

Ես քայլում էի Հինգերորդ ավենյուով, քայլում էի առանց  
փողկապի, գնում էի ու գնում: Եվ հանկարծ մի սուսկալի ըբան  
կատարվեց ինձ հետ: Ամեն անգամ, երբ հասնում էի թա-  
ղամասի վերջը և մայթից իջնում էի սալարկուղի, ինձ սկսում  
էր թվալ, որ աչ մի կերպ չեմ կարողաճալու անցնել մյուս

կողմը: Քվում էր, թե հանկարծ կգլորվեմ ցա՛ծ, ցա՛ծ, ցա՛ծ, ու ինձ այլևս չեն տեսնի մարդիկ: Օ՛հ, որքա՛ն վախեցա, նույնիսկ չեք կարող պատկերացնել: Ըս ամբողջապես քրտնել էի, ամբողջ վերնաշապիկս ու սպիտակեղենս ջուր էին դարձել: Եվ սկսեցի մի բան անել: Հենց որ հասնում էի անկյունին, սկսում էի խոսել իմ եղբոր՝ Ալլիի հետ: Ըս նրան ասում էի. «Ալլի՛, չթողնես ընկնեմ: Ալլի՛, չթողնես ընկնեմ: Ալլի՛, չթողնես ընկնեմ: Ալլի՛, խնդրում եմ քեզ»: Ու հենց որ բարեհաջող հասնում էի մյուս մայթը, ասում էի. «Շնորհակալություն»: Ու այդպես բոլոր անկյուններում նորից էի սկսում: Բայց կանգ չէի առնում: Կարծեմ, վախենում էի կանգ առնել, ճիշտն ասած, լավ չեմ հիշում: Գիտեմ միայն, որ հասա Վաթսուներորդ փողոցին, կենդանաբանական այգու մոտով, աստված գիտե թե ուր: Այստեղ նստեցի նստարանին: Քրտինքը կարկտի պես թափվում էր վրայիցս: Մտտ մի ժամ երևի նստեցի այդ նստարանին: Վերջապես որոշեցի, թե ինչ պետք է անեմ: Որոշեցի մեկնել: Որոշեցի, որ այլևս տուն չեմ վերադառնա և ոչ մի դպրոց էլ չեմ ընդունվի: Որոշեցի, որ կհանդիպեմ քրոջս, փողը կտամ իրեն, իսկ հետո հուրս կգամ խճուղի ու պատահական մեքենաներով կգնամ հեռո՛ւ Արևմուտք: Որոշեցի նախ դուրս գալ Հոլլենդ-Քա՛ննալ, այնտեղից պատահական մեքենայով ավելի հեռու, հետո՝ էլի, այնպես որ մի քանի օր հետո կլինեմ հեռավոր Արևմուտքում, որտեղ տաք ու գեղեցիկ է, և որտեղ ոչ ոք ինձ չի ճանաչում: Ու այնտեղ աշխատանք կճարեմ ինձ համար: Մտածեցի, որ հեշտությամբ աշխատանք կճարեմ մի որևէ բենզոկայանում, կսպասարկեմ ուղևորներին: Մի խոսքով ինձ համար բոլորովին միևնույն էր, թե ինչ աշխատանք կանեի, միայն թե ոչ ոք ինձ չճանաչեր և ես էլ ոչ ոքի չճանաչեի: Որոշեցի ահա թե ինչ անել. իսկ ու համր ձևանալ: Այդ դեպքում հարկ չէր լինի ոչ մեկի հետ ոչ մի տեսակ անմիտ հիմար խոսակցություններ ունենալ: Եթե որևէ մեկը ցանկանա ինձ հետ խոսել, հարկադրված կլինի թղթի վրա գրել ու ցույց տալ ինձ: Դա վերջ ի վերջո կձանձրացնի նրանց, ու ես ամբողջ կյանքումս կազատվեմ խոսակցություններից: Բոլորը կհամարեն, որ ես դժբախտ խուլ ու համր հիմար եմ ու հանգիստ կթողնեն ինձ: Ըս վառելանյութ կլցնեմ նրանց հիմար մեքե-

նաները, դրա դիմաց աշխատավարձ կստանան, ետ գցած փողերովս խրճիթ կշինեն և մինչև կյանքիս վերջը կապրեմ այնտեղ: Խրճիթը կշինեն անտառի եզրին, միայն ոչ թավուտում, ես սիրում եմ, որ արևը լավ է լուսավորում: Ինքս էլ ճաշ կպատրաստեմ, իսկ հետագայում, երբ ցանկանամ ամուսնանալ, գուցե հանդիպեմ մի որևէ խոզ ու համր գեղեցկուհու, և մենք ամուսնանանք: Նա ինձ հետ կապրի խրճիթում, իսկ եթե կուզի ինչ-որ բան ասել, նա էլ կգրի թղթի վրա: Երբ երեխաներ ունենանք, մենք նրանց թաքուն կպահենք բոլորից: Շատ գրքեր կառնենք նրանց համար ու ինքներս էլ գրել-կարդալ կսովորեցնենք:

Ես ուղղակի բորբոքվել էի, ազնիվ խոսք: Իհարկե, հիմարություն էր մտածել, թե խուլ ու համր կձևանամ, բայց միևնույն է, ինձ դուր էր գալիս պատկերացնել, թե դա ինչպես է լինելու: Ու հաստատ որոշեցի գնալ Արևմուտք: Մնում էր միայն հրաժեշտ տալ Ֆիբիին: Ես վեր թռա ու գծի պես սլացա փողոցով, ճիշտն ասած, քիչ մնաց ընկնեի մեքենայի տակ, ուղիղ գրախանութ վազեցի, բլոկնոտ ու մատիտ գնեցի: Որոշեցի երկտող գրել Ֆիբիին, թե որտեղ և ինչպես հանդիպենք, որպեսզի կարողանամ հրաժեշտ տալ և վերադարձնել նվերի փողերը: Երկտողը կտանեմ դպրոց, այնտեղ գրասենյակի աշխատողներից որևէ մեկին կխնդրեմ հանձնել Ֆիբիին: Եվ, բլոկնոտն ու մատիտը գրպանս դնելով, վազեցի դեպի դպրոց. ես չափից դուրս շատ էի հուզվում, չէի կարող երկտողը գրախանութում գրել: Շատ էի շտապում, հարկավոր էր երկտողը ժամանակին հասցնել, քանի դեռ նա տուն չէր գնացել նախաճաշելու, շատ քիչ ժամանակ էր մնացել:

Դպրոցը լավ էի ճանաչում, որովհետև փոքր ժամանակ ինքս էլ այնտեղ էի գնում: Երբ բակ մտա, մի տեսակ դարձա: Զէի կարծում, թե ամեն ինչ այդպես լավ կհիշեմ, բայց, պարզվեց, ամեն ինչ հիշում էի: Ամեն ինչ մնացել էր այնպես, ինչպես իմ ժամանակ: Նույն վիթխարի մարմնամարզական դահլիճը ցածում, որտեղ միշտ լավ չէր լուսավորվում, նույն մետաղալարի ցանցերը լամպերի շուրջը, որպեսզի գնդակը կպչելիս չջարդվեն: Հատակին նույն սպիտակ շրջանագծերը զանազան խաղերի համար: Եվ բասկետբոլա-

չին նույն օգակները առանց ցանցների. միայն տախտակն  
պատվանդանն էր և օղակը:

Ոչ ոք չէր երևում, հավանաբար այն պատճառով, որ  
պարապմունքի ժամ էր, և դասամիջոցը դեռ չէր սկսվել: Ես  
միայն մի փոքրիկի տեսա՝ մի սեամորթ տղայի, որ վազում  
էր զուգարան: Նրա գրպանից զուրս էր ցցվել փայտե հա-  
մարը, մեզ էլ էին այդպիսի համար տալիս, ի նշան դասից  
զարս գալու թույլտվության:

Ես դեռևս քրտնած էի, բայց ոչ այնպես թունդ: Դուրս եկա,  
նստեցի սանդուղքի ցածի աստիճանին և հանեցի բլոկնոտն  
ու մատիտը: Սանդուղքը նույն հոտն ուներ, ինչ-որ իմ ժա-  
մանակ: Ասես ինչ-որ մեկն այնտեղ միզել էր: Տարրական  
զպրոցներում սանդուղքներից միշտ այդպիսի հոտ էր գալիս:  
Մի խոսքով, նստեցի ու երկտող գրեցի:

### Միրելի Ֆիբի.

Չեմ կարող մինչև շոբեհաբեթի սպասել, դրա ճամառ էլ  
այսօր երեկոյան ճանապարհ կրնկենեմ դեպի Արևմուտք: Ինձ  
սպասիր բանգարանում, մուտքի մոտ, տասներկուան անց  
աասնհինգ, եթե կարող ես, և ես քո նվերի փողերը կվերա-  
դարձնեմ: Շատ քիչ եմ ծախսել:

Համբուրում եմ:

Հուլիան

Թանգարանը ուղղակի դպրոցի կողքին էր, միևնույն է,  
նախաճաշից հետո Ֆիբին այնտեղով պիտի անցներ, ու գի-  
տեի, որ նա ինձ կհանդիպի:

Աստիճաններով բարձրացա դիրեկտորի գրասենյակը, որ-  
պեսզի խնդրեմ որևէ մեկին՝ երկտողը հանձնել քույրիկիս:  
Ես մի տասը տակ ծալեցի թուղթը, որպեսզի ոչ ոք չկարդա:  
Այդ գարշելի դպրոցներում ոչ ոքի հնարավոր չէ վստահել:  
Բայց եղբոր երկտողը, գիտեի, որ անպայման կհանձնեն:

Երբ աստիճաններով վեր էի բարձրանում, էլի սիրտս  
խառնեց. բայց հետո անցավ: Մի քիչ նստեցի, հետո լավ  
զգացի ինձ: Ինչ-որ մեկը պատի վրա անպատկառ բան էր  
գրել: Ես զայրույթից ուղղակի կատաղեցի: Պատկերացրի, որ  
Ֆիբին ու մյուս երեխաները կարող են կարդալ ու հարցնել,

թե դա ինչ բան է, իսկ մի որևէ կեղտոտ տղա նրանց կրացատրի, այն էլ հիմարավարի, թե դա ինչ է նշանակում, և երեխաները կսկսեն նման բաներ մտածել ու հուզվել: Ես պատրաստ էի սպանել գրողին: Պատկերացրի, որ մի որևէ սրիկա անբարոյական իր կարիքի համար գիշերով մտել է դպրոց, իսկ հետո պատի վրա գրել այդ խոսքերը: Ու պատկերացրի, թե ինչպես եմ բռնում նրան հանցանքի վայրում և գլուխը խփում քարե աստիճաններին, մինչև որ սատկում է արնաշաղախ եղած: Բայց մտածեցի, որ համարձակությունս չի բավարարի: Ես ինձ գիտեմ: Ու դրանից ավելի վատ զգացի: Ծիշտն ասած, համարձակությունս չբավարարեց նույնիսկ դա պատից մաքրել: Վախեցա, հանկարծ ուսուցիչներից որևէ մեկը տեսնի մաքրելիս ու կարծի, թե ես եմ գրել: Բայց հետո, այնուամենայնիվ, մաքրեցի: Մաքրեցի ու գնացի դիրեկտորի գրասենյակ:

Դիրեկտորն այնտեղ չէր, բայց գրամեքենայի ետեւում նստած էր հարյուրին մոտ մի պառավ: Ասացի, որ ես 4-րդ «բ»-ի Ֆիբի Քոլֆիդի եղբայրն եմ և շատ եմ խնդրում այս երկտողը հանձնել նրան: Ասացի, որ դա շատ կարևոր է, որովհետև մայրիկը վատառողջ է ու նախաճաշ չի պատրաստել Ֆիբիի համար, և որ ես պիտի հանդիպեմ Ֆիբիին ու նրան կերակրեմ նախաճաշարանում: Պառավը շատ բարեհամբույր կին դուրս եկավ: Նա վերցրեց երկտողը, հարևան սենյակից կանչեց ինչ-որ մի կնոջ, և սա երկտողը տարավ հանձնելու Ֆիբիին: Հետո ես մի քիչ զրուցեցի այդ հարյուրամյա կնոջ հետ: Նա շատ բարեհամբույր կին էր, ու ես պատմեցի, որ մենք բոլորս՝ ես ու իմ եղբայրները, այդ զրպրոցում ենք սովորել: Նա հարցրեց, թե հիմա որտեղ եմ սովորում, ասացի՝ Փենսիլում, և նա ասաց՝ Փենսիլն շատ լավ դպրոց է: Եթե նույնիսկ ցանկանայի բռնությամբ նրան խելքի բերել, համարձակությունս չէր բավարարի: Թող նա էլ կարծի, թե Փենսիլն լավ դպրոց է: Հիմարություն է՝ մաքրու գլուխը մի նոր բան մտցնել, երբ նա արդեն հարյուր տարու մեջ է: Բացի այդ էլ, նրանք այդպիսի բաներ չեն սիրում: Հետո ես չբաժնեցի տվի ու գնացի: Նա ետևիցս ծղրտաց՝ «Բարի ճանապարհ», և իշտ ինչպես ծերունի Սպենսերը, երբ մեկնեցի Փենսիլից: Տեր աստված, որքան եմ ատում այդ սովորու-

թյունը, ետևից ծղրտալ՝ «Բարի ճանապարհ»։ Գրանից տրտա  
ճաղրությունս ընկնում է։

Մյուս սանդուղքով իշա ու նորից պատի վրա լիտիտա  
թյուններ տեսա գրված։ Փորձեցի մաքրել, բայց այս անգամ  
ինչ-որ սուր գործիքով էր փորագրված։ Հնարավոր չէր ճաք-  
քել, Եվ անօգուտ էր։ Մարդ եթե միլիոն տարի էլ ժամանակ  
սննեա, դարձյալ չի հասցնի բոլոր լիտիությունները մաքրեց  
բոլոր պատերի վրայից։

Ես նայեցի մարմնամարզական դահլիճի ժամացույցին,  
ընդամենը երկուսից քսան էր պակաս։ Մինչև ընդմիջումը դեռ  
շատ ժամանակ կար։ Բայց ես, այնուամենայնիվ, գնացի  
թանգարան։ Միևնույն է, ուրիշ գնալու տեղ չունենք։ Մտածե-  
ցի՝ ավտոմատից չգանգահարե՞մ Ջեյն Գալլահերին, նախքան  
Արևմուտք գնալս, բայց տրամադրություն չունեի։ Համ էլ հա-  
մարձված չէի, թե վերադարձած կլինի։ Գնացի թանգարան օ-  
տկսեցի սպասել այնտեղ։

Մինչ ես սպասում էի Ֆիբիին թանգարանի մուտքի մօտ,  
երկու երեխա մտեցան ու ինձ հարցրին, թե չգիտե՞մ, ար-  
գյոք, որտեղ են մումիաները։ Հարցնողի տաբատն արձակված  
էր։ Ես նրան ասացի՝ կոճկիր։ Եվ նա սկսեց կոճկել ուղղակի  
իմ աչքի առաջ, առանց ամաչելու, նույնիսկ սյան եռուը շան-  
ցավ կամ մի անկյուն չբաշվեց։ Միծաղելի է։ Ես հավանա-  
բար կբռնալի, բայց վախեցա էլի սիրտս խառնի, ու զսպե-  
ցի ինձ։

— Որտե՞ղ են այդ մումիաները, հը՞,— կրկնեց տղան։—  
Փուք չգիտե՞ք որտեղ են։

Ես որոշեցի նրանց բարկացնել։

— Մումիանե՞րը, իսկ ի՞նչ բան են դրանք։

— Դե, դուք էլ գիտեք, էլի՞, դիակները։ Այն, որ պուր-  
գների մեջ էլ են պահում։

Գուրգերի՞, այ քեզ ծիծա՞ղ, ուզում է ասել՝ բուրգերի։

— Իսկ ինչո՞ւ դպրոցում չեք, երեխաներ,— հարցնում եմ։

— Դաս չունենք,— ասում է այն մեկը, որ անընդհատ  
խոսում է։ Տեսա, որ խարում է սրիկան։ Բայց, միևնույն է,  
մինչև Ֆիբիի գալն անելիք չունեի ու նրանց տարա այնտեղ,  
որտեղ մումիաներն էին գտնվում։ Առաջ ճիշտ գիտեի, որ-



տեղ են գտնվում, բայց հարյուր տարի կլինեն, որ այնտեղ  
լէի մտել:

— Իսկ ձեզ հետաքրքրում է տեսնել մուսխանները.—  
հարցնում եմ:

— Ըհը՛:

— Իսկ քո ընկերը հա՞մր է, ինչ է:

— Նա ոչ թե ընկերս է, այլ՝ եղբայրս:

— Մի՞թե նա չի կարողանում խոսել,— հարցնում եմ.—

Քու ի՞նչ է, խոսել չգիտե՞ս:

— Գիտեմ,— պատասխանում է,— միայն թե չեմ ուզում:

Վերջապես գտանք այն սրահի մուտքը, որտեղ գտնվում

են մուսխանները:

— Իսկ դուք գիտե՞ք, եգիպտացիներն ինչպես էին թա-  
ղում իրենց մեռելներին,— հարցնում եմ զրուցասերին:

— Ոո՛չ:

— Հարկավոր է իմանալ: Դա շատ հետաքրքիր է: Նրանք  
փաթաթում էին դիակների գլուխները այնպիսի զործվածք-  
ներով, որոնք ներծծված էին հատուկ գաղտնի նյութով: Ու  
այդ դիակները կարելի էր պահել թեկուզև հազար տարի,  
մինևույն է, դրանց գլուխները չէին փտի: Եգիպտացիներից  
բացի ոչ ոք չէր կարողանում անել այդ բանը: Ժամանակա-  
կի՛ց գիտությունը նույնիսկ չգիտի ինչպես էր արվում դա:

Մուսխանները տեսնելու համար հարկավոր էր անցնել շատ  
նեղլիկ միջանցքով, որը պատված էր ուղղակի փարավոնների  
գերեզմաններից վերցված սալաքարերով: Բավական սահմը-  
կեցուցիչ տեղ է, և տեսա, թե ինչպես այդ երկու քաջերը,  
որոնց տանում էի, կարգին վախենում են: Կատվի ձագերի  
պես սեղմվել էին ինձ, իսկ շխուսկանը նույնիսկ կառչել էր  
իմ թևքից:

— Գնանք տուն,— հանկարծ ասաց նա:— Ես արդեն  
ամեն ինչ տեսա: Շո՛ւտ գնանք:— Նա շուտ եկավ ու փախավ:

— Նա վախկոտ է, ամեն ինչից վախենում է,— ասաց  
մյուսը:— Առայժմ,— և նույնպես վազեց եղբոր ետևից:

Ես մենակ մնացի գերեզմանաքարերի մեջ: Ինձ դուր էր  
գալիս այդտեղ: Ու հանկարծ պատի վրա տեսա, գուշակե-  
ցեք, թե ինչ: Դարձյալ լկտիություններ: Կարմիր մատիտով,  
ուղղակի ապակեպատ ցուցափեղկի տակ, քարի վրա:

Ամբողջ դժբախտութիւնն էլ հենց այդ է: Անհնար է գրտնել մի խաղաղ, հանգիստ անկյուն: Չէ, այս աշխարհում ալդպիսի տեղ չկա: Երբեմն մտածում ես, իսկ գուցե կա, բայց մինչև հասնես այնտեղ, որևէ մեկը թաքուն առաջ կանցնի քեզնից ու մի որևէ անվայել բան կգրի ուղղակի քթիդ տակ: Ինքներդ ստուգեցիք: Ինձ երբեմն թվում է, ա՛յ, կմեռնեմ, կընկնեմ գերեզմանոց, հուշարձան կդնեն գերեզմանիս, վրան կգրեն՝ «Հուղեն Քոլֆիլդ», ծննդյան ու մահվան թիվը, և այդ ամենի տակ էլի որևէ մեկը մի որևէ անվայել բան կխորհի: Համոզված եմ, որ այդպես էլ կլինի:

Ես դուրս եկա մումիաների դահլիճից ու գնացի գուգաբան: Լուծ էի ընկել, ճիշտն ասած: Բայց դրանից շվախեցա, վախեցա մեկ այլ բանից: Զուգարանից դուրս գալու ժամանակ կորցրի գիտակցութիւնս: Բախտս բերեց գեռ, որ հաջող բնկա: Կարող էի գլուխս ջարդել հատակին խփելուց, բայց ուղղակի կողքիս վրա ընկա: Տարօրինակ զգացում է դա: Սակայն ուշաթափութիւնից հետո ես ինձ ավելի լավ զգացի: Ձեռքս, ճիշտ է, ցավում էր, բայց գլուխս էլ շատ չէր պտրտվում:

Արդեն տասներկուսն անց տասն էք, և ես գնացի մուտքի մտո ու սպասեցի իմ Ֆիրիին: Մտածեցի, որ գուցե վերջին անգամ եմ տեսնում նրան: Եվ ընդհանրապես հարազատներիցս այլևս ոչ մեկին չեմ տեսնի: Այսինքն, իհարկե, կտեսնեմ որևէ մեկին, միայն թե ոչ շուտ: Գուցե տուն կգամ, եբք երեսունհինգ տարեկան լինեմ, եթե նրանցից որևէ մեկը հանկարծ հիվանդանա ու ցանկանա մահից առաջ տեսնել ինձ. դա միակ բանն է, որի պատճառով կարող եմ թողնել իմ խրճիթն ու վերադառնալ տուն: Ես նույնիսկ պատկերացրի, թե ինչպես կվերադառնամ: Գիտեմ, մայրիկը սոսկալի կհուզվի, լաց կլինի, կխնդրի մնալ, շվերադառնալ իմ խրճիթը, բայց ես, այնուամենայնիվ, կգնամ: Ես անմատչելի կմնամ, ինչպես սատանան: Կհանգստացնեմ մայրիկին, կգնամ սենյակի մյուս ծայրը, կհանեմ ծխախոտատուփը ու կծխեմ սառը հանգստութեամբ: Ես նրանց կհրավիրեմ ինձ մտո, եթե ցանկանան, բայց չեմ ստիպի: Այնպես կանեմ, որ Ֆիրին հյուր գա ինձ ամռանը, և՛ Մենդյան տոներին, և զատկի արձակուրդին: Գ. Բ-ն էլ թող գա, թող ապրի ինձ մտո, եբք

աշխատելու համար մի խաղաղ անկյունի կարիք կունենաս  
Բայց թույլ չեմ տա, որ իմ խրճիթում որևէ սցենար գրիս  
միայն պատմվածքներ և գրքեր: Ես այսպիսի կարգ կհաս-  
տատեմ՝ ոչ մի կեղծիք թույլ չտալ իմ տանը: Իսկ ով նույ-  
նիսկ թեթևակիորեն փորձի կեղծիք կատարել, թող անմիջա-  
պես թողնի և հեռանա:

Հանկարծ նայեցի հանդերձարանի ժամացույցին և ահ-  
սա, որ արդեն մեկից քսանհինգ է պակաս: Ես վախեցա,  
հանկարծ գրասենյակի պատույժ պատվիրած լինի այն կնոջը՝  
երկտողը շտալ Ֆիրիին: Վախեցա, թե հանկարծ նա այրած  
լինի երկտողս կամ դեռ նետած: Շատ վախեցա: Ես շատ էի  
ուզում քույրիկիս տեսնել մեկնելուց առաջ: Եվ, բացի այդ,  
փողն էլ ձեռքիս էր:

Հանկարծ տեսա նրան: Տեսա ապակե դռան ետևից: Եվ  
նկատեցի, որովհետև նրա գլխին իմ արտառոց որսորդական  
գլխարկն էր, տառը մղոնի վրա էլ կտեսնես այդ գլխարկը:

Գուրս եկա ու սկսեցի իջնել աստիճաններով: Մի բան  
միայն չէի հասկանում՝ ո՞ւր էր տանում այդ վիթխարի ճամպ-  
րուկը: Նա անցնում էր Հինգերորդ ավենյուն ու մի կերպ  
քարշ էր տալիս մի վիթխարի, անհեթեթ ճամպրուկ: Հազիվ-  
հազ էր տանում: Երբ մոտեցա, հասկացա, որ դա իմ հին  
ճամպրուկն է, որ դեռ Հուատոնի դպրոցում ունեի: Ոչ մի  
կերպ չէի հասկանում, թե դա նրա ինչին էր պետք:

— Աա՛, — ասաց նա մոտենալով: Ուղղակի շունչը կտրք-  
վում էր այդ հիմար ճամպրուկի երեսից:

— Կարծում էի, թե էլ չես գա, — ասում եմ: — Ինչի՞ հա-  
մար ես քարշ տալիս այս ճամպրուկը Ինձ ոչինչ հարկավոր  
չէ: Ես թեթև եմ գնալու: Նույնիսկ պահ տվածս ճամպրուկի-  
ները չեմ վերցնելու: Այդ ի՞նչ ես լցրել:

Նա ցած դրեց ճամպրուկը:

— Իմ իրերն են, — ասում է: — Ես գալիս եմ քեզ հետս  
Կարելի՞ է, Հա՛: Ինձ էլ կտանե՞ս:

— Ի՞նչ, — քիչ էր մնում վայր ընկնելի: Ազնիվ խոսք,  
գլուխս պտտվեց, ուր որ էր ուշաթափվելու էի:

— Ամեն ինչ ետնամուտքով եմ իջեցրել, որպեսզի Չար-  
լինան չտեսնի: Մանր չէ: Ընդամենը երկու շոր է, կոշիկ-  
ներս, սպիտակեղեն, գուլպաներ և զանազան մանրուք: Գու-

փորձիր, բարձրացրու: Շատ թեթև է, դե, փորձիր... Կարելի՞ է, ես էլ գամ քեզ հետ, Հուլիան: Կարելի՞ է, հը՞: Խնդրում եմ, կարելի՞ է, ես էլ...

— Չէ՛, չի՛ կարելի, լռի՛ր:

— Ինչո՞ւ չի կարելի: Խնդրում եմ, ի՛նձ էլ վերցրու... Հը՞, Հուլիան, խնդրում եմ: Ես քեզ շեմ խանգարի, միայն կգամ քեզ հետ, և վերջ: Եթե կուզես, շորերս էլ շեմ վերցնի՞ս միայն...

— Ոչինչ էլ շես վերցնի: Եվ ոչ էլ կգաս: Ես մենակ եմ գնում: Ձայնդ կտրիր:

— Լա՛վ, էլի, Հուլիան, խնդրում եմ: Ես շատ, շատ, շատ... Ծայնիսկ շես նկատի...

— Գու ոչ մի տեղ շես գա: Լռի՛ր, լսո՛ւմ ես: Այստեղ տուր ճամպրուկը:

Ես վերցրի ճամպրուկը: Շատ էի ուզում հասցնել նրա հետույքին: Եվս մի պահ, ու արդեն պետք է հասցնեի: Լուրջ եմ ասում:

Բայց այստեղ նա լաց եղավ:

— Իսկ ես կարծում էի դու պատրաստվում ես թատրոնում խաղալ: Կարծում էի, ուզում ես Բենեդիկտ Առնոլդի գե՛րը կատարել այդ պիեսում,— ասում եմ: Ձայնս դարձավ զայրալից, զզվելի:— Այս ի՛նչ ես արել, հը՞: Ի՛նչ է, շե՞ս ուզում խաղալ այդ ներկայացման մեջ:

Այստեղ նա ավելի ուժգին լաց եղավ, ու ևս նույնիսկ ուրախացա: Հանկարծ ցանկացա, որ նա շատ խիստ լաց լինի: Սոսկալի զայրացած էի նրա վրա: Իմ կարծիքով, ես զայրացած էի, որ նա ուզում է հրաժարվել իր դերից ու մեկնել ինձ հետ:

— Գնա՛նք,— ասում եմ: Ես նորից սկսեցի աստիճաններով բարձրանալ թանգարան: Որոշեցի, որ այդ հիմար ճամպրուկը կհանձնեմ հանդերձարան, իսկ ժամը երեքին, դասից տուն գնալիս, նա կտանի իր հետ: Գիտեի, որ դպրոց տանել չի կարող:— Գե գնանք,— ասում եմ:

Բայց նա թանգարան չեկավ: Զուգեց ինձ հետ գալ: Ես մենակ գնացի, ճամպրուկը հանձնեցի հանդերձարան ու նորից ցած իջա: Նա դեռ կանգնած էր մայթին, բայց երբ մո-

տնցա, շուռ եկավ թիկունքով դեպի ինձ: Դա կարողանում է անել: Թիկունքը կդարձնի քեզ, ու վերջ:

— Ծս ոչ մի տեղ չեմ գնում: Միտքս փոխեցի: Վե՛րջ տուր լացիդ, լսո՞ւմ ես:— Հիմարություն էր այդ ասելը, որովհետև արդեն չէր լալիս: Բայց ես, համենայն դեպս, ասացի. «Վերջ տուր լացիդ»:— Դե գնանք: Ծս քեզ կտանեմ դպրոց: Շուտ արա, գնա՛նք: Դու ուշանում ես:

Նա նույնիսկ չպատասխանեց ինձ: Փորձեցի բռնել ձեռքը, բայց նա ետ քաշեց: Ու ամբողջ ժամանակ երեսը շուռ էր տալիս ինձնից:

— Նախաճաշե՛լ ես,— հարցնում եմ:— Դու արդեն նախաճաշե՛լ ես:

Չի ուզում պատասխանել: Եվ հանկարծ հանեց իմ որսորդական գլխարկն ու շարտեց գրեթե երեսիս: Իսկ ինքն էլի շուռ եկավ: Միծաղս եկավ, ես լռեցի: Միայն գետնից վերցրի գլխարկն ու դրի գրպանս:

— Լավ, գնանք, ես քեզ կուղեկցեմ մինչև դպրոց:

— Այլևս ես դպրոց չեմ գնալու:

Ի՞նչ ասեի: Կանգ առա, լռեցի, հետո ասում եմ.

— Չէ, դպրոց անպայման պետք է գնաս: Դու ախր պետք է խաղաս այդ ներկայացման մեջ, ճի՞շտ է: Ուզում ես Բենեդիկտ Ասնո՞ւղ լինես:

— Ո՛չ:

— Ճիշտ չէ, ուզում ես: Այն էլ ինչպե՛ս ես ուզում: Դե, վերջ տուր, գնանք: Նախ ես ոչ մի տեղ էլ չեմ գնում: Ճիշտ եմ ասում: Կվերադառնամ տուն: Միայն քեզ տանեմ դպրոց, վերադառնալու եմ տուն: Նախ կգնամ ֆայարան, կվերցնեմ ճամպրուկներս, իսկ հետո ուղիղ տուն...

— Իսկ ես քեզ ասում եմ, որ այլևս դպրոց չեմ գնալու: Ինչ ուզում ես արա, դպրոց է՛լ չեմ գնալու: Եվ ընդհանրապես ձայնդ կտրիր:

Կյանքում առաջին անգամ նա ինձ ասաց՝ «ձայնդ կտրիր»: Կոպտորեն, ուղղակի սարսափելի էր: Սարսափելի էր լսել: Ավելի վատ էր, քան փողոցային հայհոյանք լսելի: Ու չի նայում իմ կողմը, իսկ երբ փորձում եմ ձեռք տալ ուսին, կամ բռնել ձեռքը, դուրս է պրծնում:

— Էսիր, ուզո՞ւմ ես զրոսնել,— հարցնում եմ,— ուզո՞ւմ

ես միասին գնանք կենդանարանական այգի: Եթե այսօր թույլ տամ դպրոց շնաստ և տանեմ կենդանարանական այգի, վերջ կտամ հիմարություններիդ:— Զի պատասխանում, իսկ ես կրկնում եմ ասածս.— Եթե թույլ տամ բաց թողնել երեկոյան պարապմունքները և տանեմ զբոսանքի, դու վերջ կտամ մոծակներ քշելուն: Խելացի կվարվե՞ս, վաղը կգնամ դպրոց:

— Կուզեմ՝ կգնամ, կուզեմ՝ չէ,— ասաց ու նետվեց գեպի փողոցի մյուս կողմը, շնայեց նույնիսկ՝ մեքենա է գալիս, թե ոչ: Երբեմն նա ուղղակի գժվում է:

Սակայն ես նրա ետևից շնացի: Գիտեի, որ նա ինքը իմ հստից խելոք կգա, և կամաց ճամփա ընկա դեպի կենդանարանական այգի, փողոցի մի կողմով, իսկ նա՝ մյուս: Զևացնում է, թե իմ կողմը չի նայում, բայց աչքի պաշտով բարկությամբ նայում է, թե ուր եմ գնում: Այդպես էլ գնացինք ամբողջ ճանապարհը, մինչև կենդանարանական այգի: Ես անհանգստացա միայն, երբ անցավ երկհարկանի ավտոբուսը, որովհետև նրան կորցրի տեսադաշտից:

Բայց երբ մոտեցանք այգուն, ձայն տվի.

— Է՛յ, Ֆիրի, ես գնում եմ կենդանարանական այգի: Արի այստեղ:

Նա շնայեց էլ իմ կողմը, բայց հասկացա, որ լսեց: Երբ սկսեցի իջնել այգու աստիճաններից, շուտ եկա ուտեստ, որ անցավ փողոցը և նույնիսկ գալիս է իմ ետևից:

Կենդանարանական այգում մարդ քիչ կար, գարշելի եզանակ էր, բայց ավագանի շուրջը, որտեղ ծովացուներն էին լողանում, հանդիսատեսներ էին հավաքվել: Ես պետք է անցնեի, բայց իմ Ֆիրին կանգնեց ու սկսեց դիտել, թե ինչպես են կերակրում ծովացուներին,— նրանց համար ձուկ էին նետում,— ես էլ ես դարձա: Մտածում էի, հիմա կմտանեամ նրան և այլն: Մոտեցա, կանգնեցի ետևում և ձեռքս գրի օւսին, բայց նա լայնաց ու գուրս պրծավ ձեռքիս տակից, նա հեշտությամբ կպոկվի քեզնից, եթե ուզենա: Նայում է՝ ինչպես են կերակրում ծովացուներին, իսկ ես կանգնել եմ հտևը, բայց էլ ձեռքս չեմ դնում ուսին, ընդհանրապես ձեռք չեմ առնիս, վախենում եմ՝ հանկարծ թողնի, փախչի, Տարօրի-

նակ են այդ երեխաները: Նրանց հետ պետք է զգույշ վարվես:

Կողքովս շի ուզում քայլել, — մենք արդեն հեռացել ենք ավազանից, — բայց, այնուամենայնիվ, շատ հեռու չի գրնում: Նա ճանապարհի մի կողմով է գնում, ես՝ մյուս: Դա էլ մի հաճելի բան չէ, բայց ավելի չավ է, քան մեկ մղոն հեռավորության վրա մնալը, ինչպես առաջ: Գնացինք արջերին տեսնելու փոքրիկ բլրակի վրա, բայց այնտեղ տեսնելու բան չկար: Միայն մի արջ դուրս եկավ՝ սպիտակ, բևեռային: Իսկ մյուսը՝ գորշը, մտել էր սրբը և դուրս չէր գալիս: Կողքիս՝ ականջներին հասնող կովբոյակն ազլխարկով մի տղա էր կանգնած ու ամբողջ ժամանակ կրկնում էր.

— Հայրիկ, ստիպիր, թող դուրս գա: Հայրիկ, ստիպիր, թող դուրս գա:

Սա նայեցի Ֆիրին, բայց նա նույնիսկ չծիծաղեց: Գիտեք, երեխաներն ինչպես են նեղանում, նրանք նույնիսկ չեն ծիծաղում, ոչ մի գնով:

Արջերի մոտից գնացինք դեպի ելքը, անցանք կենդանաբանական այգու փողոցը, հետո դուրս եկանք փոքրիկ թունելով, որտեղից միշտ վատ հոտ է գալիս: Այդտեղով դուրս ես գալիս կարուսեյների մոտ: Իմ Ֆիրին դեռևս չէր խոսում, բայց արդեն գրեթե կողքովս էր գնում: Ուզում էի բռնել նրա վերարկուի գոտուց, բայց թույլ չտվեց:

— Ձեռքդ քաշիր, խնդրեմ, — ասում է: Դեռևս թթված էր ինձ վրա: Բայց մենք գնալով մոտենում էինք կարուսեյներին, ու արդեն լսվում էր երաժշտության ձայնը. այնտեղ միշտ նվագում էին «Օ Մերի»: Մի հիսուն տարի առաջ էլ նրանք այդ երգն էին նվագում, երբ ես փոքրիկ էի: Կարուսեյների ամենալավ բանը դա է, որ երաժշտությունը միշտ նույնն է:

— Իսկ ես կարծում էի կարուսեյը ձմռանը փակվում է, — հանկարծ ասում է Ֆիրին: Առաջին անգամ խոսեց հետո: Երևի մոռացել էր, որ նեղացած է:

— Հավանաբար այն պատճառով, որ շուտով Սենդյան տունն է, — ասում եմ:

Նա ոչինչ չպատասխանեց: Երևի հիշեց, որ վիրավորված է:

— Ուզում ես կարուսել նստել,— հարցնում եմ: Գիտե՞մ որ շատ է ուզում: Երբ նա շատ պատլիկ էր, ես, Ալլին ու Գ. Բ-ն նրաէ բերում էինք այստեղ, և նա գծվում էր կարուսելի համար: Ուղղակի պոկել չէինք կարողանում կարուսելից:

— Ես արդեն մեծ եմ,— ասում է: Կարծում էի, չի պատասխանի, բայց պատասխանեց:

— Հիմարություն: Նստիր, ես քեզ կսպասեմ: Գնա՛, — ասացի: Մենք արդեն մոտեցել էինք կարուսելին: Մի քանի երեխաներ էլ կային այնտեղ, շատ փոքրիկներ, իսկ ծնողները նստարաններին նստած սպասում էին: Ես մոտեցա տոմսավաճառի պատուհանին և իմ Ֆիբիի համար տոմսակ գնեցի: Գնեցի ու տվի նրան: Նա արդեն բոլորովին մոտ էր կանգնել:— Ահա՛, — ասում եմ,— չէ, սպասիր, մի րոպե, վերցրու քո նվերի փողերը, բոլորը վերցրու:— Ուզում էի բոլորը վերադարձնել նրան:

— Չէ, քեզ մոտ պահիր, պահիր մոտդ,— ասում է ու հանկարծ ավելացնում է.— խնդրում եմ, պահիր:

Մի տեսակ անհարմար ես զգում, որ քեզ այդպես խընդրում են, հատկապես երբ դա քո փոքրիկ թույրիկն է: Ես նույնիսկ հուզվեցի: Բայց փողը ստիպված դրեցի՞ գրպանս:

— Իսկ դու նստելո՞ւ ես,— հարցրեց նա ու մի հրաշալի հայացքով նայեց ինձ: Երևում էր, որ բարկությունը բոլորովին անցել էր:

— Հաջորդ անգամ գուցե: Հիմա կնայեմ քեզ, տոմսակը մո՞տդ է:

— Այո:

— Գե գնա, իսկ ես կնստեմ այստեղ, նստարանին, կնայեմ քեզ:

Ես նստեցի նստարանին, իսկ նա գնաց դեպի կարուսելը: Պտտվեց շորս կողմը: Այսինքն՝ ամբողջ կարուսելի շուրջը: Հետո ընտրեց ամենամեծ ձին, զգզված, պառավ կարմիր խալավորին: Այդ ժամանակ կարուսելը պտտվեց, ու ես տեսա, թե նա ինչպես սլացավ: Նրա հետ պտտվում էին նաև մի քանի երեխա՝ հինգ թե վեց, և նվազում էին «Մուխը պատում է աչքերդ» երգը: Այնպե՛ս ուրախ էր, զվարճալի: Ու



բոլոր երեխաները աշխատում էին բռնել ոսկե օղակը, իմ Ֆրիդն նույնպես: Ես նույնիսկ վախեցա՝ հանկարծ չընկնի՞ այդ անտեր ձիու վրայից, բայց ոչինչ հնարավոր չէր ո՛չ ասել, ո՛չ անել: Երեխաներն այդպես են, եթե արդեն որոշել են բռնել ոսկե օղակը, ապա չպետք է նրանց իփանգարել: Կընկնեն՝ կընկնեն, բայց այդ ժամանակ չպետք է խոսել: Երբ պտույտը վերջացավ, նա իջավ ձիուց ու եկավ ինձ մոտ:

— Հիմա էլ դու նստիր:

— Ձէ, ավելի լավ է ես նայեմ քեզ:— Ես մի քիչ էլ տվի նրան իր փողերից:— Գնա մի տոմս էլ գնիր:— Նա վերցրեց փողը:

— Ես էլ չեմ բարկանում քեզ վրա,— ասում է:

— Տեսնում եմ, վազիր, հիմա կպտտվի:— Ու մեկ էլ նա համբուրեց ինձ: Հետո մեկնեց ափը:

— Անձրն, հիմա անձրն կգա:

— Տեսնում եմ:

Գիտե՞ք ինչ արեց նա, քիչ մնաց ուշքս գնար: Ձեռքը մտցրեց դրպանս, դուրս քաշեց որսորդական կարմիր գլխարկը ու դրեց գլխիս:

— Իսկ դու շե՞ս ուզում դնես,— հարցնում եմ:

— Նախ դու դիր,— ասում է:

— Լավ: Դե վազիր, թե չէ բաց կթողնես այս պտույտը: Եվ քո ձին էլ կզբաղեցնեն:

Բայց նա չէր հեռանում մոտիցս:

— Դու ճի՞շտ էիր ասում: Իսկապե՞ս ոչ մի տեղ չես գնալու: Իսկապե՞ս վերադառնալու ես տուն:

— Այո,— ասացի ես: Ու չէի խարժում: Իսկապես վերադարձա տուն:— Դե շո՛ւտ արա, — ասում եմ:— Հիմա կըսկըսվի:

Նա վազեց տոմսակ գնեց ու վերջին պահին հասավ կարուսելի մոտ: Էլի պտտվեց շորսբոլորը: Մինչև որ գտավ իր նախկին ձին: Հեծավ, ձեռքը թափահարեց իմ կողմը, ես էլ ձեռքս թափահարեցի:

Ու այդ ժամանակ սոսկալի անձրև սկսվեց: Իսկական տեղատարափ, աստված վկա: Բոլոր մայրիկներն ու տատիկ-

ները, մի խոսքով, ովքեր կային, վազեցին կարուսելի տանիքի տակ, որպեսզի մինչև ոսկորները չթրջվեն, իսկ ես այդպես էլ մնացի անձրևի տակ նստած: Սուկալի թրջվեցի: Հատկապես օձիքս ու տաբատս: Որսորդական գլխարկը ինչ-որ չափով ինձ պաշտպանում էր, բայց, այնուամենայնիվ, մինչև վերջին թեղը թրջվեցի: Ու ինձ համար միևնույն էր: Հանկարծ այնպես երջանիկ զգացի ինձ, որ Ֆիրին պատվում էր կարուսելով: Քիչ էր մնում երջանկությունից զուայի, ճիշտն ասած: Ինքս էլ շեմ հասկանում ինչու: Նա այնքա՞ն լավն էր, այնքա՞ն ուրախ էր պատվում, իր կապույտ վերարկուն հագին: Ափսո՞ս, որ դուք շեք տեսել նրան, աստված վկա:

## 26

Ահա և բոլորը, այլևս ոչինչ չեմ պատմելու: Իհարկե, կարող էի պատմել, թե ինչ կատարվեց տանը, և ես ինչպես հիվանդացա, և ո՞ր դպրոցն են պատրաստվում ուղարկել ինձ աշնանը, երբ այստեղից դուրս գրեն, բայց այդ մասին չարժե խոսել: Հավես չկա, ազնիվ խոսք: Հետաքրքիր չէ:

Շատերը, հատկապես այդ հոգեվերլուծողը, որ գալիս է այս սանատորիան, հարցնում են ինձ՝ կարգին սովորելու եմ, երբ աշնանը դպրոց ընդունվեմ: Իմ կարծիքով դա զարմանալի հիմար հարց է: Մարդ նախօրոք ինչպի՞ս կարող է ասել, թե ինչ է անելու: Նախապես ոչինչ չես կարող իմանալ: Ինձ թվում է, թե պիտի սովորեմ, բայց ի՞նչ իմանամ: Եվ հիմարություն է հարցնել, ազնիվ խոսք:

Գ. Բ-ն ուրիշների նման չէ, բայց նա էլ է զանազան հարցեր տալիս: Շաբաթ օրը եկել էր ինձ մոտ այն անգլուհուհետ, որը պետք է նկարագրեմ Նորա Ֆիլիսով: Շատ է կտրատվում այդ անգլուհին, բայց փոխարենը շատ զեղեցիկն է: Եվ երբ նա գնաց միջանցքի ծայրին գտնվող կանաչի սենյակը, Գ. Բ-ն ինձ հարցրեց, թե ինչ եմ մտածում այն մասին, ինչ որ կատարվեց, այն մասին, ինչ որ ձեզ պատմեցի: Բոլորովին չգիտեի ինչ պատասխանեմ: Ճիշտն ասած, ես էլ չգիտեմ ինչ մտածեմ: Ափսո՞ս, որ շատերին եմ պատմել այս ամենը: Գիտեմ միայն, որ մի տեսակ զգում եմ այն մարդկանց կարիքը, ում մասին որ պատմել եմ: Օրինակ՝ Ստրեդ-

լնթերի կամ հենց թեկուզ այդ էկզիի: Երբեմն թվում է, թե նույնիսկ այն ստոր Մորիսին եմ կարոտում, տարօրինակ բան է: Եվ լավ կանեք, որ դուք էլ ոչ մեկին ոչինչ չպատմեք: Թե չէ ամեն ինչ պատմում եք, հետո տխրում եք ատանց դրանց:

**Ք**սան տարի առաջ, երբ մեր բավական մեծ ընտանիքում բռնկվեց խողովկի՝ համաճարակը, իմ կրտսեր քրոջը՝ Տրանիին, իր սայլակով հանդերձ մի երեկո տեղափոխեցին այն սենյակը, որտեղ ապրում էինք ես ու իմ ավագ եղբայր Սիմորը, և որտեղ, ենթադրվում էր, միկրոբները չէին բազմանում: Ես տասնհինգ տարեկան էի, Սիմորը՝ տասնյոթ:

Գիշերվա երկուսին ես արթնացա մեր նոր բնակչի լացից: Մի պահ լուռ ականջ դրի, պահպանելով լիակատար շեղոքություն, իսկ հետո լսեցի, ավելի ճիշտ զգացի, որ կողքիս մահճակալի վրա Սիմորը շարժվեց: Այն ժամանակ մեր մահճակալների միջև գտնվող գիշերասեղանի վրա էլեկտրական լապտեր կար դրված՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելու համար, թեև, որքան հիշում եմ, երբեք այդպիսի առիթ չէր եղել: Սիմորը չխկացրեց լապտերն ու վեր կացավ:

— Մայրիկն ասաց՝ շիշը դազօջախի վրա է, — բացատրեցի ես:

— Նոր եմ կերակրել, — ասաց Սիմորը: — Կուշտ է:

Մթության մեջ նա մոտեցավ գրադարակներին ու լապտերի լույսով սկսեց ինչ-որ բան որոնել:

Ես նստեցի:

— Այդ ի՞նչ ես անում, — հարցրի:

— Ասում եմ, գուցե մի բան կարդամ նրա համար, — ասաց Սիմորը ու մի գիրք հանեց գրադարակից:

— Լսիր, ապուշ, նա ընդամենը տասը ամսական է:

— Գիտեմ,— ասաց Սիմորը,— բայց ականջներ ունի՞ չէ՞: Նրանք ամեն ինչ լսում են:

Այդ գիշեր լապտերի լույսի տակ Սիմորը Ֆրանիի համար կարդաց իր սիրած պատմվածքը. դա դատոյան մի լեզու էր: Մինչև հիմա էլ Ֆրանին երդվում է, թե իբր հիշում է՝ Սիմորն ինչպես էր կարդում իր համար.

«Իշխան Մուն՝ Չինաստանի տիրակալը, Պո Լոյին ասաց. «Քու տարիքդ արդեն առել ես: Քո ընտանիքում կա՞ որեէ մեկը, որ այսուհետ ծառայի ինձ քո փոխարեն և ձիեր ընտրի ինձ համար»: Պո Լոն պատասխանեց. «Լավ ձին կարելի է որոշել արտաքինից ու շարժուձևից: Բայց անզուգական նժույզն այն է, որ ոտքը գետին շի առնում ու հետք չի թողնում: Դա խորհրդավոր ու անորսալի բան է, անշոշափելի, ինչպես վաղորդյան մշուշը: Իմ որդիներն այդքան մեծ շնորհք չունեն. նրանք կարող են նայելով տարբերել լավ ձին, բայց ճանաչել անզուգական նժույզը՝ նրանք չեն կարող: Սակայն ես մի բարեկամ ունեմ՝ Չու Ֆան-կաոն, որ ցախի ու բանջարեղենի վաճառքով է զբաղվում: Նա ինձնից պակաս չի գլուխ հանում ձիերից: Կանչիր նրան»:

Իշխանն այդպես էլ արեց: Շուտով նա Չու Ֆան-կաոյին ուղարկեց ձի որոնելու: Երեք ամիս անց վերադարձավ Չու Ֆան-կաոն և ասաց, որ գտել է նժույզը: «Հիմա Շախյուում է գտնվում»,— ավելացրեց նա: «Իսկ ինչպիսի՞ նժույզ է»,— հարցրեց իշխանը: «Աշխետ զամբիկ է»,— եղավ պատասխանը: Բայց երբ ձին բերեցին, պարզվեց, որ ազոավի պես սև հովատակ է:

Իշխանը դժգոհ՝ իր մոտ կանչեց Պո Լոյին:

— Քո բարեկամը խայտառակեց իրեն: Նա ի վիճակի չէ հովատակը զամբիկից ջոկելու: Էլ ի՞նչ է հասկանում ձիերից, եթե նույնիսկ տեսակը որոշել չի կարող:

Պո Լոն թեթևացած շունչ քաշեց.— Մի՞թե՞ նա իսկապես հասել է այդ բանին:— Ուրեմն նա ինձ նման հազարին արժե: Ես չեմ համարձակվի ինձ համեմատել նրա հետ: Որովհետև Կաոն կարողանում է թափանցել ոգին, Հասնելով բուն էությանը՝ նա անուշադրության է մատնում անկարևոր հատկանիշները: Ըմբռնելով ներքին արժանիքները՝ նա կորցնում է արտաքինի մասին պատկերացումը: Նա կարողանում է

տեսնել ա՛յն, ինչը հարկավոր է տեսնել, և ընկառել անկաթ  
րևորք: Նա նայում է այնտե՛ղ, ուր անհրաժեշտ է, ու արհա-  
մարհում է այն, ինչն արժանի չէ ուշագրության: Կառլի  
իմաստությունն այնքան մեծ է, որ նա կարող է դատել շատ  
ավելի կարևոր բաների մասին, քան ձիերի արժանիքներն են:  
Աւ երբ նժույզը բերեցին, պարզվեց, որ նա իսկապես պե-  
ղուզական է:

Ես այս հատվածը մեզբերեցի ոչ միայն այն պատճառով,  
որ տասը ամսականների ծնողներին ու ավագ փոքրայրներին  
մշտապես ու համառորեն խորհուրդ եմ տալիս լավագույն  
արձակի ընթերցումը օգտագործել որպես հանգստացուցիչ  
միջոց, այլև միտնգամայն ուրիշ պատճառով: Հիմա դուք  
պատմվածք կկարգաք մի հարսանիքի մասին, որը տեղի է  
ունեցել 1942 թվականին: Իմ կարծիքով դա միանգամայն  
ավարտուն պատմվածք է, գրա մեջ կա սկիզբ, վերջ և նույ-  
նիսկ մահվան նախազգացում: Քանի որ ինձ հայտնի են հե-  
տագա փաստերը, ապա պարտավորված եմ գգում հայտնել  
ձեզ, որ հիմա, 1955 թվականին, փեսան այլևս կենդանի չէ:  
Նա ինքնասպան եղավ 1948 թվականին, երբ կնոջ հետ միա-  
սին հանգստանում էր Զլորիզայում... Բայց ամենակարևորը  
ահա թե ինչ եմ ուզում ասել. այն ժամանակից ի վեր, երբ  
փեսան գուրս եկավ ասպարեզից, իս չեմ գտնում մեկը, որին  
հնարավոր լինիք վստահել նժույզի որոնումները:

\*

1942 թվականի մայիսին մենք յոթս էլ՝ Լեսա և Բեսի  
(ծննդյամբ Գալլահեր) Գլասնների՝ նախկին շրջիկ թատերա-  
խմբի կոմիկ դերասանների ժառանգներս, բարձր ոճով ասած,  
սփռված էինք ամբողջ Միացյալ Նահանգներով մեկ: Օրինակ՝  
ես, ավագությամբ երկրորդս, պառկած էի Ֆորտ-Բենինգի,  
Ջորջիայի նահանգի, զինվորական հոսպիտալում, պլերիտով՝  
ի հիշատակ եռամսյա հետևակային զբրիմաստության ուսուց-  
ման Երկվորյակներ Ուոլթը և Ուեյբերը գեռես մի տարի  
առաջ էին բաժանվել իրարից: Ուեյբերին նստեցրել էին Մե-  
քիլենգի հրատարվածների համարում, իսկ Ուոլթը կոզում

էր Խաղաղ օվկիանոսում կամ մեկնում էր այնտեղ դաշտային՝ հրետանու զորամասերի հետ: (Մենք երբեք հաստատ չէինք իմանում որտեղ է գտնվում Ուոլթը: Նա չէր սիրում նամակներ գրել, իսկ նրա մահից հետո մենք շատ քիչ բան, գրեթե ոչինչ չիմացանք նրա մասին: Նա զոհվել էր ամենաանհեթեթ պատահականությունից, Ճապոնիայում, 1945 թվականին):

Ավագ քույրս՝ Բու-Բուն (ժամանակագրական կարգով իմ և երկվորյակների մեջտեղն էր ընկնում), միշտ էր կանանց ծովային օժանդակ զորամասերում, Բրուկլինի ռազմաճովային բազայում: Այդ տարվա ամբողջ գարունն ու ամառը քույրս ապրեց Նյու-Յորքի մեր փոքրիկ բնակարանում, որք բանակ կանչվելուց հետո էլ դեռևս իմ և Միմորի վրա էք գրանցված: Երկու փոքրերը՝ Զուին և Ֆրանին (աղջիկ), մեր ծնողների հետ ապրում էին Լոս-Անջելոսում, որտեղ հայրս տաղանդավոր դերասաններ էր որոնում կինոստուգիայի համար: Զուին տասներեք տարեկան էր, Ֆրանին՝ ութ: Ամեն շաբաթ երկուսն էլ ելույթ էին ունենում ռադիոյով, մանկական հարց ու պատասխանների հաղորդման մեջ, ամերիկյան ռադիոյի համար բնորոշ, ծաղրական «Խելացի երեխաներ» խորագրի տակ: Այստեղ թերևս պետք է ասել, որ գրեթե միշտ, ավելի ճիշտ տարեցտարի, մեր ընտանիքի բոլոր երեխաները ելույթ էին ունենում «Խելացի երեխաներ» ծրագրով, որպես վճարովի «հյուրեր»: Ես ու Միմորը ելույթ ունեցանք առաջին անգամ 1927 թվականին, երբ նա տասը տարեկան էր, ես՝ ութ, և «հաղորդում էինք» «Մառի-հիլլ» հին հյուրանոցի հյուրասենյակից: Յոթն էլ, սկսած Միմորից և վերջացրած Ֆրանիով, ելույթ էինք ունենում կեղծանունով: Գուցե դա խիստ հակասական է՝ թվում. չէ որ մենք այսպես թե այնպես, էստրադային արտիստների զավակներ էինք, մարդիկ, որոնք բոլորովին չեն խուսափում ռեկլամից: Բայց մայրս մի անգամ ամսագրում մի հոդված կարդաց այն մասին, որ փոքրիկ պրոֆեսիոնալները հարկադրված են ծանր խաչ կցելու, որ նրանք մեկուսացված են սովորական երեխաներից, որոնց ընկերությունը, անշուշտ, խիստ օգտակար է նրանց համար, և նա երկաթե համառությամբ առաջ տարա՛վ իր խոսքը կեղծանունով հանդես գալու կապու՛յց-ու՛յամբ ու ոչ մի անգամ չնահանջեց: (Այստեղ բոլորովին տեղին չէ քննել,

թե հարկ կա՞ արդյոք բոլոր «պրոֆեսիոնալ» երեխաներին՝ կամ նրանց մեծ մասին օրենքից դուրս հայտարարել, նրանց շրջապատել խղճահարուժյամբ կամ առանց ավելորդ քնքշությունների բնաջնջել որպես հասարակական հանգիստը խանգարողների: Նշեմ միայն, որ մեր ընդհանուր աշխատավարձը «եռելացի երեխաներ» ծրագրում, հնարավորություն տվեց մեր վեցին՝ ավարտելու քոլեջը, ինչպեսև յոթերորդին՝ սովորելու այդ նույն միջոցներով):

Մեր ավագ եղբայր Սիմոնը, այստեղ խոսքը գլխավորապես նրա մասին է լինելու, որպես կապրալ ծառայում էր այն գորամասերում, որոնք 1942 թվականին դեռևս կոչվում էին ռազմաօդային ուժեր: Նա ապրում էր ոմբարկուների Բ—17 բազայում, Նյալիֆոունիայում, և, որքան ինձ հայտնի է, վաշտի գրագրի պարտականություններ էր կատարում: Ի միջի այլոց, հիշեցնեմ, թեև դա շատ կարևոր է, որ մեր մեջ ամենից քիչ նա էր սիրում նամակ գրել: Կարծեմ ամբողջ կյանքի ընթացքում նա ընդամենը հինգ նամակ է գրել ինձ:

Այդ առավոտ, մայիսի քսաներկուսին կամ գուցեև քսաներեքին (մեր ընտանիքը երբեք թվական չէր դնում նամակների տակ), ֆորտ-Բենինգի զինվորական հոսպիտալում կաչուն սպեղանի էին քաշում ստոծանուս (բժիշկներն այդ միջոցը գործադրում են պլևրիտով հիվանդների վրա, հավանաբար, այն նպատակով, որ նրանք հազար կտոր չլինեն հագից), երբ ոտքերիս վրա դրին Բու-Բու քրոջս ուղարկած նամակը: Երբ այդ տառապանքն ավարտվեց, ես կարգացի Բու-Բուի նամակը: Այն մինչև այժմ էլ պահպանվել է և հիմա մեջ եմ բերում բառացիորեն:

«Սիրելի Բադի.

Պատրաստվում եմ ճանապարհ ընկնելու և շատ-շատ եմ շտապում, դրա համար էլ համառոտ եմ գրում, բայց խիստ՝ Մովակալ Շչիպովազը որոշել է, որ թշնամիներին հաղթելու համար իրեն անհրաժեշտ է մեկնել գրողի ծոցը, անհայտ ուղղությամբ, և իր հետ տանել քարտուղարուհուն (եթե ես ինձ լավ պահեմ): Սոսկալի հուզված եմ: էլ չեմ ասում Սիմոնի մասին: Հարկադրված եմ լինելու սառչել վրաններում, դիմանալ մեր փառապանծ մարտիկների հիմար սիրահետում-



ներին և ինքնաթիռներում սիրտ ետ տալ այդ այլաէգակ թղթե տոպրակներում: Բայց ահա թե ինչն է կարևորը. Միմորե ամուսնանում է, հասկանո՞ւմ ես՝ ամուսնանում է,— այնպես որ, խնդրում եմ, ուշադրություն դարձրու այդ բանին: Ես գալ չեմ կարող: Մեկնում եմ՝ հայտնի չէ մեկուկես, թե երկու ամսով: Հարսնացուին տեսել եմ: Իմ կարծիքով իրենից ոչինչ չի ներկայացնում, բայց արտակարգ սիրուն է: Իհարկե, չգիտեմ նա իսկապե՞ս այնպիսի ոչնչութիւնն է, ինչպես ինձ թվաց, թե չէ: Այն երեկո նա երկու խոսք էլ չարաասանեց: Նստած ծխում էր, ժպտում, այնպես որ, հնարավոր է, ես իրավացի չլինեմ: Նրանց սիրո մասին ոչինչ չգիտեմ, կարծեմ, անցյալ ձմռանն են ծանոթացել, երբ Միմորի զորամասը բնակվում էր Մոնմաուտում: Բայց նրա մայրիկը՝ ավելի վատը չես կարող պատկերացնել. քիթը խոթում է բոլոր արվեստների մեջ և շարաթը երկու անգամ գնում հայտնի հոգեվերլուծողի՝ Ցունգի աշակերտի մոտ: Մեր ծանոթության երեկոյան նա երկու անգամ հարցրեց ինձ՝ արդյոք ենթարկվե՞լ եմ հոգեվերլուծության: Ասաց, թե կցանկանար, որ Միմորը ավելի շատ նման լիներ բոլոր մարդկանց: Բայց տեղնուտեղն էլ ավելացրեց, թե, այնուամենայնիվ, նա շատ է դուր գալիս իրեն և այլն, և այլն, և որ ինքը հիացմունքով է ունկնդրել նրան ռադիոյով այն բոլոր տարիներին, երբ ելույթ է ունեցել Միմորը: Ահա այն ամենը, ինչ գիտեմ նրանց մասին, բայց ամենակարևորն այն է, որ դու պետք է մասնակցես նրանց հարսանիքին: Երբեք չեմ ների քեզ, եթե չգնաս, ազնիվ խոսք: Հայրիկն ու մայրիկը ոչ մի կերպ չեն կարող ծովափից գալ: Ամեն ինչից բացի, Յրանին հիվանդ է կարմրուկով: Ի դեպ, լսեցի՞ր նրան անցյալ շարաթ: Նա շատ գեղեցիկ, երկար պատմում էր, թե ինչպես է շոքուկես տարեկանում թռել ամբողջ բնակարանով մեկ, երբ տանը ոչ ոք չի եղել: Նոր մեկնաբանը շատ ավելի վատն է Գրանտից, թերևս, այն ժամանակվա Սալիվենից էլ վատ է, եթե, իհարկե, հնարավոր է ավելի վատ լինել: Նա ասաց, հավանաբար Յրանին երազում է տեսել, որ թռչում է: Բայց մեր փոքրիկը հրեշտակային համբերությամբ իրենն էր պնդում: Ասում էր, ո՛չ, ինքը հաստատ գիտի, որ կարողանում է թռչել, որովհետև, երբ վայրէջք էր կատարում, մատները միշտ փռու-

ված էին լինում էլեկտրական լամպերից: Շատ եմ ուզում տեսնել Ֆրանիին: Քե՛զ էլ: Համենայն դեպս, դու պետք է անպայման զնաս հարսանիքին: Դասալիք դառձիր, եթե հարկ կա, միայն թե զնա, շատ եմ խնդրում քեզ: Հարսանիքը հունիսի շորսին է, ժամը երեքին՝ Խիստ բարեկիրթ և ժամանակակից հարսանիք, նրա տատիկի տանը, 63-րդ փողոցում: Պսակը կատարելու է ինչ-որ դատավոր: Տան համարը չեմ հիշում, բայց դա երկու տուն հետո է այն բնակարանից, որտեղ Կառլն ու էմիլն խելդվում էին շքեղության ու հարուստության մեջ: Ուղիթին հեռագիր կտամ, բայց նրա տրանսպորտը, կարծեմ, մեկնել է: Խնդրում եմ, անպայման գնա, Բադի: Սիմոնը նման է հոգնատանջ կատվիկի, դեմքը՝ ոգեշնչված, անիմաստ է նրա հետ խոսելը: Գուցի ա մեն ինչ լավ կվերջանա, բայց ես ասում եմ քառասունօրեկու թվականը ու, հավանաբար, սկզբունքորեն ատելու եմ մինչև վերջը: Ամուր համբուրում եմ քեզ, կտեսնվենք, երբ վերադառնամ:

Բու-Բուս:

Նամակն ստանալուց երեք օր հետո ինձ գուրս գրեցին հոսպիտալից, հանձնելով, այսպես ասած, երեք մետր կաշուն ապեղանու հուլսին, որ փաթաթված էր կոզերիս: Հետո սկսվեց խիստ լարված մեկշաբաթյա կամպանիան՝ հարկավոր էր արձակուրդ ստանալ հարսանիք զնալու համար: Վերջապես համառ խնդրանքի ճանապարհով ես հաջողության հասա վաշտի հրամանատարի մոտ, որը, իր իսկ բնորոշմամբ, գրքասեր մարդ էր, և նրա սիրած գրողը, բարեբախտաբար, նաև իմ սիրելին էր. դա ոմն Լ. Մենինգ Վայնսն էր: Չէ, կարծեմ, Հայնդսը: Բայց շնայած մեր միջև հաստատված այնքան ամուր հոգևոր կապերին, ընդամենը երեք օրվա արձակուրդ տվեց, այսինքն՝ լավագույն դեպքում ժամանակը բավականացնելու էր միայն զնացքով Նյու-Յորք հասնել, մասնակցել հարսանիքին, հապշտապ ճաշել մի՞տրեկ տեղ և քափքրտինք մտած վերադառնալ Ջորջիա:

Քառասուներկու թվականին զնացքների «նստեցու» վագոններում օդափոխությունը, որքան հիշում եմ, զուտ պայմանական էր, ամենուրեք լեփ-լեցուն էին զինվորական պահակախմբեր, նարնջահյութի, կաթի և գարշելի վիսկու հոտ

էր փշուս: Ամբողջ գիշեր ես հագում էի կոմիճոր ձեռքիս, որ ինչ-որ մեկը խղճահարութունից տվել էր ինձ կարգալուս Երբ երկուսն անց տասը բուպիս, հարուստիքի օրը, գնացքք մոտեցավ Նյու-Յորքին, ես հազալուց առաջագած ու հոգնած էի, քրտնած ու ճմրթված, և մաշկս ստեկալի քար էր գալիս սպեղանու տակ:

Նյու-Յորքում անասերի շաք էր: Ժամանակ չկար տուն մտնելու, և իմ ուղեբեռը՝ պարուսիսե բազմահատ անբարեսես մի պայուսակ, ես թողցի Փենսիլվանյան կայարանի պողպատե պահարանիկում: Ու ասեմ դիտմամբ, հենց այն պահին, երբ անցնում էի պատրաստի հագուստեղենի խանութի մոտով ու ասքաի փնտրում, կապի ժառանգութեան մի կրտսեր լեյտենանտ, որին, հավանաբար, մոռացել էի պատիվ տալ Յոթերորդ ավենյուն անցնելիս, հանկարծ հանեց ինքնահոսը և անցորդների հետաքրքրասեր հայացքներին առից գրեց ազգանունս, գորամասիս համարն ու հասցեն:

Տարտու մեջ ես բուրոսվին շար դարձա: Վարդոդին պատվիրեցի տանել գոնե մինչև այն տունը, որտեղ ինչ-որ ժամանակ «չքեղութեան մեջ խեղդվում էին» Կառլն ու Էմիլ: Բայց երբ հասանք այդ թաղամասը, ամեն ինչ շատ պարզ դարձավ: Հարկավոր էր միայն գնալ ամբասի ետեից: Այնտեղ նույնիսկ կառավարի ամպստիվանի կար: Մի քանի բուպն անց ես մտա մի վիթխարի քարե շենք, որտեղ ինձ դիմավորեց բաց կանաչագույն մագերով մի շատ: գեղեցիկ տիկին, որը հարցրեց, թե ում ծանոթն եմ ես՝ փեսայի, թե հարսի: Ասացի՝ փեսայի:— Օօ՛, — ասաց նա, — գիտեք, այստեղ ամեն ինչ տակնուվրո է եղել, — նա շատ բարձր ծիծաղեց և մատնացույց արեց ծալովի աթոռը՝ վերջին ազատ աթոռը վիթխարի, լեպ-լեցուն հյուրասենյակում: Իմ հիշողութեան մեջ տասներեք տարվա քնթացքում մթազնել են այդ սենյակին վերաբերող մանրամասները: Բացի այն, որ դահլիճը լեպ-լեցուն էր և շատ շոգ, ես երկու մանրամասնութուն եմ հիշում՝ երգահոսը նվագում էր ուզիղ իմ ետևում, իսկ աչ կողմս նստած տիկինը շուռ եկավ ու թատերական հանդիսավորութեամբ շնչաց. «Ե՛ս էլ եմ Սիլսբերնն եմ»: Զբաղեցրած տեղից ես որոշեցի, որ նա հարսի մայրը չէ, բայց, համենայն դեպս, ժրպտացի ու գլուխ տվի ամբողջ ուժով և արգեն պատրաստվում

էի ներկայանալ, երբ նա ցուցադրաբար մատը սեղմեց շրթնաքներին, ու երկուսս էլ նայեցինք առաջ: Մտաւժորապես ժամը երեքն էր: Ծափակեցի աչքերս ու սկսեցի լարված սպասել, թե երգեհոնահարը երբ պետք է գադարի նվագել զանազան բաներ ու ղողոզացնի հարսանեկան քայլերգը «Նոննգրինից»:

Ծռ ալնքան էլ լավ շեմ պատկերացնում, թե ինչպես անցավ հաջորդ ժամը, բայց մի կարևոր բան լավ եմ հիշում, որ հարսանեկան քայլերգը «Նոննգրինից» այդպես էլ չհնչեց: Հիշում եմ, ինչ-որ անծանոթ մարդիկ շուտ էին գալիս ամեն կողմից, որպեսզի աչքի պոչով նայեն, թե ով է այդպես հագնւմ: Հիշում եմ նաև, որ աչ կողմս նստած տիկինը մեկ անգամ էլ քիչ բարձր շշուկով ասաց.

— Հավանաբար, ինչ-որ պատճառով ուշանում է: Գուցէ երբեք տեսնել եք դատավոր Ռենկերին: Նա սրբի դեմք ունի:

Հիշում եմ, թե երգեհոնային երաժշտութունը ինչպես տեսպասելիորեն, նույնիսկ մի տեսակ հուսահատորեն Բախից անցավ վաղ Ռոչերոսին և Հարտին: Բայց ես ասես ավելի շուտ կարեկցանքով կանգնած լինեի սեփական հիվանդանոցային մահճակալի գլխին, խղճալով ինձ այն բանի համար, որ ստիպված էի լինում խեղդել հազիս նուպաները: Այդ հյուրասենյակում նստածս ամբողջ ընթացքում երբեմն մի երկչոտ միտք էր առկայծում գլխումս, որ շնայած կաշուն սպեզանուց շինված իմ կորսետին, ուր որ է կոկորդս է լցվելու տաք արյունը կամ կողերս պայթելու են:

✽

Չորսն անց քսան րոպե, կամ կոպիտ ասած քսան րոպե հետո այն բանից, երբ վերջին հույսն էլ կտրվեց, չպսակազրված հարսը, գլուխը խոնարհած, նյարդային քայլվածքով, ծնողների երկկողմյա հսկողությամբ ցած իջավ երկար քաղե, աստիճաններից: Այնտեղ, ասես ձեռքից ձեռք հանձնելով, նրան տեղավորեցին լաքապատ այն սև մեքենաներից առաջինում, որոնք սպասում էին մայթի երկարությամբ երկու շարք կազմած: Պահը բավական գեղանկարային էր և ամսա-

գրային իլյուստրացիա էր հիշեցնում, ու ինչպես ցնդունված է նման իլյուստրացիաներում, այնտեղ պատկերվեց նաև վկաների անհրաժեշտ քանակությունը։ Հարսանեկան Պյուրեր (այդ թվում և ես), թեև, ջանալով հետևել օրինավորությունը, մարդիկ արդեն խմբերով դուրս էին թափվում տնից ու ազահարար, եթե շասենք աչքները շորս արած, նայում էին հարսին։ Ու եթե ինչ-որ բան մեղմում էր պատկերը, ապա դրա համար պետք էր գոհություն հայտնել եղանակին։ Հուլիսյան արևը դադում ու այրում էր հազարավոր ֆոտոբուկամաների անողորմությամբ, այնպես որ կիսաուշաթափ վիճակում աստիճաններից իջնող հարսի դեմքը շողշողում էր ինչ-որ մշուշում, և դա միանգամայն ժամանակին էր։

Երբ հարսանեկան անձնակազմը, այսպես ասած, ֆիզիկապես չքացավ բեմից, սպասողական լարվածությունը մայթի վրա, հատկապես ամպհովանու տակ, որտեղ հայտնվել էի և ես, վերածվեց սովորական իրարանցման, ու եթե այդ տունը եկեղեցի լիներ, ու օրը կիրակի, ապա կարելի էր կարծել, թե պարզապես ծխականները ցրվում են կրոնական արարողությունից հետո։ Հանկարծ ընդգծված համառությամբ սկսեցին հայտնել, իբր հարսի հորեղբայր էլի անունից, որ մեքենաները դրվում են հյուրերի տրամադրության տակ նույնիսկ ընդունելությունը շկայանալու և պլանները փոխվելու դեպքում։ Դատելով ինձ շրջապատող մարդկանց ռեակցիայով, դա դիտվեց որպես «beau geste»<sup>1</sup>։ Բայց այդուհանդերձ ասվեց, որ մեքենաները կդրվեն հյուրերի «տրամադրության տակ» միայն այն բանից հետո, երբ «հարսի ամենամտերիմ հարազատները» կոչվող խիստ հարգալիք մարդկանց պատկառելի ջոկատը կբավարարվի տրանսպորտով, որը անհրաժեշտ կլինի, որպեսզի նրանք էլ իջնեն բեմահարթակից։ Եվ որոշ, ինչպես ինձ թվաց, անհասկանալի հրմշտոցից հետո (որի ընթացքում ինձ այնպես սեղմեցին, ասես մամլիչների մեջ առած լինեին, և մեխեցին տեղս) հանկարծ իսկապես սկսվեց «ամենամտերիմ հարազատների» ելքը։ Նրանք վեց-յոթ հոգով տեղավորվում էին մի մեքենայում, թեև երբեմն նստում էին նաև երեք-չորսով։ Դա կախված էր,

<sup>1</sup> Շույլ ծես (Ֆր.)

ինչպէս հասկացա ես, տարիքից, վարմունքից ու առաջին նատողի կոնքերի լայնութիւնից:

Հանկարծ ինչ-որ մեկի ի միջի այլոց, բայց բավական որոշակի նետված ցուցմունքով ես հայտնվեցի ճամփեզրին, ամպհոջանու մոտ, ու սկսեցի հշուրերին մեքենա նստեցնել:

Չէր խանգարի մտորել, թե այդ պատասխանատու պաշտոնը ինչու հատկապես ինձ հանձնեցին: Որքան հասկացա, անհայտ տարեց գործիչը, կարգադրութիւն անելով, բոլորովին պատկերացում չունեի, որ ես փեսայի եղբայրն եմ: Դրա համար էլ տրամաբանութիւնը հուշում էր, որ ինձ ընտրեցին մեկ այլ պակաս լիրիկական պատճառով: Քառասուներկու թվականն էր, ես քսաներեք տարեկան էի, նոր էի բանակ գնացել: Համոզված եմ, որ միայն տարիքս, զինվորական համազգեստս ու աներկբայի պատրաստակամութիւն արտահայտող իմ ազոտ-պաշտպանական վիճակը ցոյցեցին կասկածները դոնապանի դերի համար միանգամայն հարմար չինելու հարցում:

Բայց ես ոչ միայն քսաներեքամյա երիտասարդ էի, այլև բավական ետ էի մնացել իմ տարիքից: Հիշում եմ, որ մարդկանց մեքենա նստեցնելիս ես նույնիսկ ամենատարրական ճարակութիւն չէի հանդես բերում: Ընդհակառակը, այդ ամենն անում էի դպրոցականի ցուցադրական ջանադրությամբ, տպավորութիւն ստեղծելով, թե կարևոր պարտք եմ կատարում: Անկեղծ ասած, ես մի քանի ռոպե անց արդեն հասկացա, որ հարկադրված եմ գործ ունենալ ավելի տարեց, լավ սնված ու ցածրահասակ սերնդի հետ, և արմունկից բռնելու ու գոնեբը փակելու իմ դերը հասավ փքուն ուժի զուտ ցուցադրական արտահայտութիւն: Ես ինձ պահում էի որպես բացառիկ ազնվական, հմայքով լեցուն, երիտասարդ հսկա՝ հազով բռնված:

Բայց սոսկալի տոթը, մեղմ ասած, ճնշում էր ինձ, և չէր երևում, թե շանքերիս համար որևէ հատուցում է սպասվում առաջիկայում: Ու թեև «ամենամտերիմ հարազատներին» ամբողջը նոր էր սկսել նվազել, ես հանկարծ խցկվեցի նոր բռնավորվող մեքենաներից մեկը, որ արդեն շարժվում էր տեղից: Այդ միջոցին զլուխս ուժգին շրխկոցով խփեցի (երևում է, որպես պատիժ) մեքենայի առաստաղին: Ուղևորների մեջ

նստած էր նաև այն շնչանք՝ էլեն Սիլսբերնը, որն անմիջապես իր անսահման կարեկցանքն արտահայտեց իմ հանդեպ: Շրխկոցը, հավանաբար, տարածվեց ամբողջ մեքենայում: Բայց քսաներեք տարեկանում ես պատկանում էի այն անձանց թվին, որոնք մարդկանց ներկայությամբ, դիմանալով ամեն տեսակ խեղումի, բացի զանգի շարդվելուց, միայն խուլ քմծիծաղ են արձակում:

Մեքենան շարժվեց դեպի արևմուտք ու ասես մտավ ուղղակի ետկեսօրյա շիկացած վառարանը: Այդպես գնաց երկու թաղամաս, մինչև Մեդիսոն-ավենյու, և կտրուկ շրջվեց դեպի հյուսիս: Ինձ թվաց, թե միայն անհայտ, բայց փութված վարորդի ճարպկությունը փրկեց մեզ արևային շիկացած հնոցի մեջ այրվելուց:

Առաջին շորս-հինգ թաղամասը Մեդիսոն-ավենյուով մենք գնացինք սովորական արտահայտություններ փոխանակելով, ինչպես ասենք՝ «Ես ձեզ շատ եմ սեղմո՞ւմ», կամ «Կյանքումս այսպիսի շոգ չեմ տեսել»: Կյանքում այդպես շոգ շտեսած տիկինը պարզվեց, ինչպես ճամփեզրին կանգնած ժամանակ լսեցի, հարսի ընկերուհին է: Դա մի ուժեղ անձնավորություն էր, քսանշորս կամ քսանհինգ տարեկան, վարդագույն մետաքսե զգեստով, արհեստական անմոռուկների պսակը գլխին: Նրա մեջ որոշակիորեն ինչ-որ սպորտային բան էլ կար, ասես մի երկու տարի առաջ քննություն հանձնած լինեք քուլիշում ֆիզիկական դաստիարակության հրահանգչի պաշտոն կատարելու համար: Նույնիսկ ծնկներին դրված ծաղկեփունջը վուլգարի ցած ընկած գնդակ էր հիշեցնում: Նա նստել էր ետևում՝ սեղմված ամուսնու և ֆրակով ու ցիլինդրով մի ծեփուկի միջև, որի ձեռքին հավանական սպիտակ ծխախոտի սիգար կար: Միսիս Սիլսբերնն ու ես ծնկներով թեթևակիորեն իրար հաված՝ զբաղեցրել էինք ծալովի տեղերը: Երկու անգամ, առանց որևէ առիթի, պարզապես հիացմունքով ետ նայեցի փոքրամարմին ծերուկին: Առաջին պահին, երբ նոր էի նստեցնում մեքենա, ու նրա առաջ բացեցի դռնակը, իմ մեջ ցանկություն առաջացավ նրան գրկելու և զգուշորեն նստեցնելու բաց պատուհանից: Նա այնքան փոքրամարմին էր, հասակը հազիվ թե ավելի լիներ շորս ֆուտից ու ինը-տասը դյույմից և, ախրասմենայնիվ, թզուկի կամ լիլիպուտի տպա-

վորութիւնն շէր թողնում: Մեքենայում նստել էր ուղիղ և խըստութեամբ առաջ էր նայում: Երկրորդ անգամ ետ նայելով, նկատեցի, որ նրա ֆրակի դարձածալի վրա մի բիծ կար, շատ նման յուղոտ սոռուխց մնացած հին հետքի: Նկատեցի նաև, որ նրա ցիլինդրը շորս, գուցեև հինգ դուլմ ցած էր մնում մեքենայի առաստաղից: Սակայն ուղևորութեան առաջին րոպեներին ինձ ավելի շատ իմ առողջական վիճա՛ն էր անհանգստացնում: Պլևրիտից ու գլխիս ուռուցքից բացի, ինձ անհանգստացնում էր նաև նոր սկսվող անգինայի հոռետեսական նախազգացումը: Ես թաքուն փորձեցի լեզուս պտտել, հնարավորին շափ լայնորեն պտտել և ուսումնասիրել կտորդիս կասկածելի մասերը: Հիշում եմ, նստել էի ու հայացքս հառել ուղիղ վարորդի ծոծրակին, որը իրենից ներկայացնում էր բուժված շիրանների մի ցայտուն քարտեզ, երբ հանկարծ ծալովի նստարանին նստած իմ հարևանուհին հարցրեց ինձ.

— Իսկ ինչպե՞ս է ձեր սիրելի մայրիկը: Դուք Դեքժ Բրինգանզան եք, չէ՞:

Լեզուս այդ պահին գրադված էր քիմքիս ուսումնասիրութեամբ և բավական ետ էր ծալված: Ես այն ուղղեցի, կռվովի թուքս ու նայեցի հարևանուհուս: Նա հիսունին մոտ կլինեք, հազնված էր նորածև ու պերճաշուր: Դեմքին գրիմի հաստ շերտ էր քսված:

Պատասխանեցի՝ ոչ, ես նա չեմ:

Տիկինը, թեթևակի կկոցելով աչքերը, նայեց ինձ և ասաց, որ ջրի երկու կաթիլի պես ես նման եմ Սելի Բրինգանզայի որդուն: Հաակապես բերանս: Զանացի դեմքի արտահայտութեամբ ցույց տալ, որ մարդիկ սխալական են: Եվ նորից հայացքս հառեցի վարորդի ծոծրակին: Մեքենայում լուրջութուն տիրեց: Միօրինակութունը խախտելու համար ես պատուհանից դուրս նայեցի:

— Զեզ դո՞ւր է գալիս բանակի ծառայութիւնը, — հարցրեց միսիս Սիլսբերնը ի միջի այլոց, մի բան ասած լինելու համար:

Բայց հենց այդ պահին հազս բռնեց: Երբ նոպան անցավ, ձա շուռ եկա դեպի նա և ինձ համար հնարավոր առույգութեամբ պատասխանեցի, որ բանակում շատ ընկերներ ունեմ:



Շատ դժվար էր շրջվել դեպի նա, սպեղանին սեղմում էր ստոծանիս:

Նա գլխով արեց.— Ես գտնում եմ, որ դուք բոլորդ էլ ուղ-  
գակի հրաշք եք,— ասաց նա մի քիչ երկիմաստորեն.— Ասա-  
ցեք, իսկ դուք հարսթ՞ բարեկամն եք, թե փեսայի,— հան-  
կարծ համառորեն հարցրեց նա:

— Գիտեք ինչ, ոչ թե բարեկամը...

— Ավելի լավ է լռեք, եթե փեսայի բարեկամն եք,—  
ետևից խոսքս կտրեց հարսի ընկերուհին.— Մ՛հ, մի ձեռքս  
ընկնե՞ր նա երկու բոպեով: Ընդամենը երկու բոպեով, ավելի  
չեմ ուզում:

Միսիս Միլսբերնը կտրուկ շուռ եկավ, որպեսզի ժպտա  
խոսողին: Եվ նորից ուղղվեց տեղում: Մենք գրեթե միաժա-  
մանակ էինք շուռ գալիս: Շրջադարձը ակնթարթային էր  
լինում: Եվ ժպիտը, որ պարզեց նա հարսի ընկերուհուն,  
լարախաղացության հրաշք էր ուղղակի: Այդ ժպիտի կենդանու-  
թյան մեջ արտահայտվում էր ամբողջ աշխարհի ամբողջ երի-  
տասարդության հանդեպ նրա ունեցած համակրանքը, հատ-  
կապես երիտասարդության տվյալ ներկայացուցչուհու հան-  
դեպ՝ այդպիսի համարձակ, այդպիսի անկեղծ. ինչնէ, նա դեռ  
լավ ծանոթ չէր այդ ընկերուհուն:

— Արյունարբու էակ,— ծիծաղով ասաց տղամարդու  
ձայնը: Ես ու միսիս Միլսբերնը կրկին շրջվեցինք: Հարսի  
ընկերուհու ամուսինն էր խոսողը: Նա նստած էր ուղիղ իմ  
ետևում, կնոջ ձախ կողմում: Մենք թուուցիկ, ոչ բարեկամա-  
կան հայացքներ փոխանակեցինք, ինչպիսին այն շար ժա-  
մանակներում, 1942 թվականին, կարող էին փոխանակել  
միայն սպան ու զինվորը: Կապի ծառայության այդ ավագ  
լեյտենանտի գլխին ռազմաօդային ուժերի օդաչուի մի շատ  
զվարճալի գլխարկ կար՝ երկար հովարով ու գագաթամասով,  
որից մետաղալար էր դուրս ցցված, մի բան, որ սովորաբար  
գլխարկի տիրոջը, հավանաբար նախապես մտածված, անհոգ  
ու խիզախ տպավորություն էր հաղորդում: Բայց տվյալ դեպ-  
քում գլխարկը բոլորովին չէր կատարում իր դերը: Այժմ հիմ-  
նականում ծառայում էր այն բանին, որ իմ սեփական, հա-  
մազգեստիս համար նախատեսված և մի քիչ մեծավուն զըլ-

խաբկը ծաղրածուի աղբարկղից հապշտապ դուրս քաշած  
թասակի տպավորութիւնն թողնելու:

Լեյտենանտը հիվանդոտ ու հոգնած տեսք ունեւ: Նա սոս-  
կալի քրտնում էր, որտեղի՞ց էր այդքան խոնավութիւնն հա-  
վաքվում նրա ճակատին, վերին շրթոփնին, նույնիսկ քթի  
ծայրին, ասում են, հենց նման գեպքերում լոկաք է աղի հա-  
բեր ընդունել:

— Ամուռնացել եմ ամբողջ նահանգների ամենաարյու-  
նարբու անձնավորութիւնն հետ,— ասաց նա միսիս Սիլսբեր-  
նին՝ որոշակիորեն հասարակութիւնն համար նախատեսված  
մեղմ ծիծաղով: Նրա կոշման հանդեպ ունեցած բնազդական  
հարգանքից ես էլ ծիծաղի նման մի բան արձակեցի. օտարի  
և կոշումով ցածրի այդ կարճատև անմիտ ծիծաղը ցույց պետք  
է տար, որ ես նույնպէս լեյտենանտի և տաքսու բոլոր ուղևոր-  
ների կարծիքին եմ, ու ընդհանրապէս, ես դեմ չեմ, այլ՝  
կազմ եմ:

— Չէ՛, կատակ չեմ անում,— ասաց հարսի ընկերու-  
հին.— Երկո՛ւ բոպեով, եղբայրներ, ընդամենը երկո՛ւ բո-  
պեով: Օ՛հ, ես իմ սեփական ձեռքերով...

— Լավ, լավ, մի՛ աղմկիր, մի՛ հուզվիր,— ասաց ամու-  
տինը, երևում է՝ օժտված ընտանեկան համբերատարութիւն  
անսպառ պաշարով:— Քիչ հուզվես՝ երկար կապրես:

Միսիս Սիլսբերնը նորից ետ շրջվեց և հարսի ընկերուհուն  
պարզեց գրեթէ հրեշտակային մի ժպիտ.— Իսկ որևէ մեկը  
նրա հարազատներին տեսն՞լ է հարսանիքում,— հարցրեց  
նա մեղմորեն և բավական բարեկրթորեն ընդգծելով անձնա-  
կան գերանունը:

Հարսի ընկերուհու պատասխանի մեջ պայթուցիկ ուժ  
կար:— Ո՛չ: Նրանք բոլորը կամ արևմտյան ծովափին են,  
կամ ինչ-որ մեկ այլ տեղ: Շատ կուզեի տեսնել նրանց:

Ամուսինը կրկին ծիծաղեց.— Իսկ ի՞նչ կանչիր, սիրե-  
լիս,— հարցրեց նա ու անամոթաբար աչքով արեց ինձ:

— Չգիտեմ ինչ, բայց անպայման մի բան կանեի,— ա-  
ռաք նա: Լեյտենանտն ավելի բարձր ծիծաղեց:— Անպայ-  
մա՛ն:— Սպառնագին կրկնեց կինը:— Ծաւ ամեն ինչ  
կատեի նրանց: Եվ ընդհանրապէս, աստված իմ:— Նա խո-  
տում էր աճող ինքնավստահութիւնով, ասես որոշելով, որ

ու միայն ամուսինը, այլև բոլոր ունկնդիրները հիացած են նրա անկեղծությամբ, արդարամտության նրա որոշ շափով գրգռիչ զգացումով, թեկուզև նրա մեջ որոշ մանկական պարզամիտ բան կար:

— Չգիտեմ, ինչ կասեի: Հավանաբար, հազար ու մի տեսակ հիմար բաներ: Բայց տեք աստված: Ազնիվ խոսք, շեմ կարող տանել, որ մարդկանց հանցագործության են մղում: Արյունս ետում է ուղղակի:

Նա ազնիվ հուզումը զսպեց ճիշտ այնքան, որ միտքս Սիլսբերնը հասցնի աշակցել նրան խիստ կարեկցանք արտահայտող հայացքով: Ծառ միսիս Սիլսբերնը աողեն վերջնականապես գերմարդամտորեն ետ դարձանք:— Այո՛, այո՛, ուղղակի հանցագործությա՛ն,— շարունակեց հարսի ընկերուհին:— Չի կարելի հենց այդպես խրվել մարդկանց կյանքի մեջ, նեղացնել նրանց, վիրավորել նրանց լավագույն զգացմունքները:

— Դժբախտաբար, ես շատ քիչ բան գիտեմ այդ երիտասարդի մասին,— մեղմորեն ասաց միսիս Սիլսբերնը:— Կյանքումս չեմ էլ տեսել: Միայն լսել եմ, որ Մյուրիելը նշանվել է...

— Ոչ ոք չի տեսել նրան,— կտրուկ նետեց հարսի ընկերուհին:— Նույնիսկ ե՛ս ժանոթ չեմ նրա հետ: Երկու անգամ փորձեցինք հարսանեկան արարողությունը, և ամեն անգամ Մյուրիելի խեղճ հայրիկը ստիպված եղավ փոխարինել նրան, միայն այն պատճառով, որ նրա հիմար ինքնաթիռը չի կարողացել թռչել: Իսկ երկուշաբթի նա պետք է երեկոյան թռչեր այստեղ մի ինչ-որ ապուշ ուղղմական ինքնաթիռով, բայց մի ինչ-որ ապուշ տեղ, չգիտեմ Արիզոնայում թե Կոլորադոյում, ինչ-որ ապուշություններ են տեղի ունեցել, ձյուն է եկել, թե ինչ, և նա եկել է միայն երեկ, գիշերվա մեկից: Եվ այդ ժամին նա խելագարի պես զանգահարում է Մյուրիելին ինչ-որ լոնդ-Ալլենդից և խնդրում է հանդիպել մի ինչ-որ սոսկալի հյուրանոցի հոլլում,— գիտեք, նրան անհրաժեշտ է թոսել:— Հարսի ընկերուհին պերճախոս թոթվեց ուսերը:— Բայց դուք հո ճանաչո՞ւմ եք Մյուրիելին, այդպիսի հրեշտակին ամեն պատահական մարդ կարող է կպչել: Ինձ ուղղակի կատաղեցնում է այդ բանը: Մյուրիելի նմաններին

միշտ նեղացնում են... Եվ պատկերացրեք, Մյուրիելը հագնւ-  
վում է, նետվում է տաքսի և ինչ-որ մի սոսկալի հողում  
նստած գրուցում է մինչև առավոտյան շորսն անց կես:

Հարսի ընկերուհին ձեռքից գցեց ծաղկեփունջը և բռունցք-  
ները սեղմեց ծնկներին.— Օ՛հ, ուղղակի կատաղել էի:

— Իսկ ո՞ր հյուրանոցում,— հարցրի ես նրան:— Գուք  
չգիտե՞ք, որ:

Ես ջանում էի անփութորեն խոսել, ասես հյուրանոցների  
տրեստը հորս էր պատկանում, ու ես որդիական հասկանալի  
հետաքրքրությամբ ուզում էի իմանալ՝ որտեղ են իջևանում  
եկվորները Նյու-Ցորքում: Բայց իրականում իմ հարցը ոչինչ  
չէր նշանակում: Պարզապես բարձրաձայն մտածեցի: Ինձ  
հետաքրքիր թվաց ինքնին փաստը, որ եղբայրս հարսնացուին  
խնդրել է գնալ իր մոտ, ինչ-որ հյուրանոց և ոչ թե իր դա-  
տարկ բնակարանը: Ճիշտ է, բարոյական տեսանկյունից այդ-  
պիսի հրավերը շատ նման էր նրան, բայց, այնուամենայնիվ,  
ինձ հետաքրքրում էր:

— Չգիտեմ որ հյուրանոցում,— բարկությամբ ասաց հար-  
սի ընկերուհին:— Մի ինչ-որ հյուրանոցում, և վերջ:— Նա  
հանկարծ սևեռուն նայեց ինձ,— Իսկ ձեր ի՞նչ գործն է: Գուք  
նրա բարեկամն եք, ինչ է:

Նրա հայացքի մեջ որոշակի սպառնալիք կար: Ասես նրա  
մեջ մարմնավորվել էր կանանց մի ամբոխ, և մեկ այլ դեպ-  
քում նա գիլիոտինի մոտ նստած՝ իր ձեռագործը կգործեր:  
Իսկ ես ամբողջ կյանքումս ամբոխից եմ վախեցել:

— Մենք միասին ենք մեծացել,— ասացի ես հազիվ հաս-  
կանալի:

— Տես թե ի՞նչ բախտավորն է:

— Դե՛, դե՛, չի՛ կարելի,— ասաց ամուսինը:

— Ա՛խ, մեղավոր եմ,— ասաց հարսի ընկերուհին, դի-  
մելով ամուսնուն, թեև դա վերաբերում էր բոլորիս:— Բայց  
դուք չեք տեսել, թե ինչպես խեղճ աղջկա աչքից արցունքը  
չէր ցամաքում ամբողջ երկու ժամ: Այստեղ ծիծաղելու բան  
չկա, մտքներովդ շանցնի, խնդրեմ: Լսել ենք վախկոտ փե-  
տաների մասին: Բայց ոչ վերջին պահին: Հասկանա՞մ եք,  
այդպես չեն վարվում, անհարմար վիճակի մեջ չեն դնում  
ամբողջ հասարակությանը, չի կարելի օրինավոր մարդկանց

ուշաթափության աստիճանի հասցնել և աղջկան էլ խելքից հանել: Եթե փոխել է միտքը, ինչո՞ւ ոչինչ չի գրել աղջկան, ինչո՞ւ հարաբերությունները չի խզել նրա հետ, ինչպես ջենտլմեն, ասացեք, ի սեր աստծու: Նախապես, քանի դեռ չէր սարքել այդ շիլաշփոթը:

— Դե լավ, հանգստացիր, հանգստացիր, — ասաց ամուսինը: Նա դեռևս ծիծաղում էր, բայց ծիծաղը բավական շինծու էր հնչում:

— Ձէ, ես լրջորեն եմ ասում: Ինչո՞ւ չէր կարող գրել և տղամարդու պես ամեն ինչ բացատրել, նախազգուշացնել այս շարիքը և այլն: — Եվ մի հայացք նետեց ինձ վրա: — Ի դեպ, դուք պատահամար չգիտե՞ք որտեղ է նա, — հարցրեց՝ ձայնի մեջ մետաղե սառնություն: — Եթե դուք մտնկության ընկերներ եք, պետք է...

— Ընդամենը երկու ժամ է, որ ոտք եմ դրել Նյու-Յորք, — ասացի ես երկչոտ: Հիմա ոչ միայն հարսի ընկերուհին, այլև նրա ամուսինը և միսիս Սիլսբերնը նայեցին ինձ: — Ձեմ հասցրել նույնիսկ մոտենալ հեռախոսին:

Շիշում եմ, որ հենց այդ թույլին բռնեց հազիս նուպան: Միանգամայն բնականորեն, բայց պետք է խոստովանեմ, որ ես ոչ մի միջոց ձեռք չառա այն դադարեցնելու կամ մեղմելու համար:

— Դուք շե՞ք բուժում ձեր հազը, գինվոր, — հարցրեց լեյտենանտը, երբ դադարեցի հազալուց:

Բայց այդ ժամանակ նորից բռնեց հազս և, որքան էլ տարօրինակ լինի, դարձյալ իսկականից: Ծագեռևս նստած էի կես կամ քառորդ շափով շրջված դեպի ետևի նստարանը, բայց ջանում էի շրջվել այնպես, որ հազամ օրինավորության ու հիգիենայի բոլոր օրենքների համաձայն:

\*

Գուցե խախտեմ պատմությանս կարգը, բայց կարծում եմ, որ այստեղ մի փոքր նահանջ պետք է կատարեմ, որպեսզի պատասխան տամ մի քանի մութ հարցերի: Եվ դրանցից առաջինն այս է, թե ինչո՞ւ չէի իջնում մեքենայից: Բացի ամեն տեսակ կողմնակի դատողություններից, հաստատ գի-

տեղի, որ մեքենան ամբողջ խմբին տանում է հարսի ծնող-  
ների տուն: Ու եթե ես կարողանայի որևէ արժեքավոր տեղե-  
կություն ստանալ վշտաբեկ շպսակված հարսից կամ նրա  
անհանգստացած (զուցեև կատաղած) ծնողներից, դարձյալ  
ոչինչ չէր կարող հարթեցնել նրանց բնակարանում իմ հայտ-  
նըվելու անհարմարությունը: Հապա էլ ինչո՞ւ էի նստել մե-  
քենայում: Ինչո՞ւ դուրս չթռա, ասենք, այն ժամանակ, երբ  
մեքենան կանգ առավ լուսաֆորի առաջ: Եվ վերջապես, ամե-  
նատեսականալին. ինչո՞ւ առհասարակ նստեցի այդ մեքե-  
նան...

Գուցե առանյակ պատասխաններ գտնվեն բոլոր այս հար-  
ցերին, ու դրանք բոլորը ընդհանուր առմամբ բավարար լի-  
նեն: Բայց ինձ թվում է, որ բոլորին կարելի է միանգամից  
պատասխանել, հիշեցնելով, որ դա 1942 թվականն էր, որ ես  
քսաներեք տարեկան էի և նոր էի բանակ կանչվել, նոր էի  
միայն սովորել անհրաժեշտություն դեպքում մնալ խմբովին  
և, որ ամենից կարևորն է, շատ միայնակ էի: Իսկ նման դեպ-  
քերում, որքան հասկանում եմ, մարդ ուղղակի նետվում է  
մեքենան, մարդկանց մոտ, ու այնտեղից այլևս դուրս չի  
գալիս:

Բայց վերադառնալով իրադարձությունների շալաղմանը,  
հիշում եմ, որ այն ժամանակ, երբ երեքն էլ՝ հարսի ընկե-  
բուհին, ամուսինը և միսիս Սիլսբերնը, սեեռուն նայում էին,  
թե ինչպես եմ հագում, ես ինքս էլ ետ նայեցի փոքրիկ ծե-  
բուկին: Նա էլի նստել էր հայացքն առաջ հառած: Ինչ-որ  
երախտագիտության զգացումով նկատեցի, որ նրա ոտքերը  
հատակին չեն հասնում: Դրանք ինձ հին, բարի ընկերներ  
թվացին:

— Իսկ այդ մարդն ինչո՞վ է զբաղվում առհասարակ, —  
ինձ հարցրեց հարսի ընկերուհին, երբ դադարեց հազիս նու-  
զան:

— Դուք Սիմորի մասի՞ն եք հարցնում, — ասացի ես:  
Սկզբում նրա տոնից ինձ թվաց, թե նա ինչ-որ ստոր բանի  
մեջ է կասկածում եղբորս: Բայց հանկարծ, միանգամայն  
ենթագիտակցորեն մտածեցի, որ գուցեև գաղտնաբար հազար  
ու մի տեսակ կենսագրական տվյալներ է հավաքել Սիմորի

մասին, այսինքն՝ բոլոր այն մանր, դժբախտաբար, դրամատիկական փաստերը, որոնք, իմ կարծիքով, միանգամայն կեղծ պատկերացում էին ստեղծում Սիմոնի մասին: Օրինակ, որ նա դեռևս վեց տարեկանում հայտնի էր ամբողջ աշխարհին որպես ռադիոհերոս: Կամ, մի կողմից էլ, որ նա ընդունվել է Կոլումբիայի համալսարանը, երբ տասնհինգը նոր էր լրացել:

— Այո, հենց Սիմոնի մասին, — ասաց հարսի ընկերուհին: — Ինչո՞վ էր զբաղվում նա մինչև զինվորական ծառայությունը:

Եվ նորից առկայծեց ուժեղումս, որ նա եղբորս մասին շատ ավելի բան գիտեր, քան ինչ-որ պատճառներով հարմար էր գտնում բացել: Համենայն դեպս, նրան, օրինակ, հրաշալի հայտնի էր, որ մինչև բանակ կանչվելը, Սիմոնը անգլերեն էր գասավանդում քոլեջում: Եվ ինչ-որ պահ նայելով նրան, ես մի տհաճ բան զգացի. գուցե գիտե նաև, որ Սիմոնն իմ եղբա՞յրն է: Բայց այդ մասին շարժեր մտածել: Ու ես միայն նայեցի նրան աչքիս պաշտով և ասացի. — Նա կոշտուկներ էր վիրահատում: — Եվ անմիջապես էլ կտրուկ շուռ եկա ու սկսեցի պատուհանից դուրս նայել: Մեքենան, արդեն մի քանի րոպե էր, կանգնած էր, բայց ես միայն հիմա լսեցի թմբուկների մարտական թնդյունը, որ զալիս էր հեռվից՝ Լեքսինգտոնյան կամ Երրորդ ավենյուի կողմից:

— Եջերթ է, — ասաց միսիս Սիլսբերնը: Նա էլ շուռ եկավ:

Մենք Ութաուներթի փողոցի շրջակայքում էինք: Մեզիստոն-ավենյուի մեջտեղը կանգնել էր ոստիկանը ու դազարեցրեւ ամբողջ շարժումը և՛ դեպի հյուսիս, և՛ դեպի հարավ: Որքան կարողացա հասկանալ, նա պարզապես դազարեցրեւ էր ու ճանապարհ չէր տալիս ո՛չ գեպի արևելք, ո՛չ գեպի արևմուտք:

Երեք թե շորս մեքենա և մեկ ավտոբուս սպասում էին, որ իրենց թողնեն դեպի հարավ, բայց մեր մեքենան միակն էր, որ ուզում էր գնալ քաղաքի հյուսիսային մասը: Մոտակա անկյունում և մեքենայից երևացող կողքի փողոցում, որ տանում էր գեպի Հինգերորդ ավենյու, մարդիկ հավաքվել էին

մայթի վրա և ճամփեզրին, հավանաբար սպասելով մինչև զինվորների կամ բուժքույրերի կամ բույսքաութների շոկատը շարժվելը Լեքսինգտոն-ավենյուտի հավաքման կետից ու անցներ իրենց մոտով:

— Օ՛ տեր աստված, այս էր պակաս,— ասաց հարսի ընկերուհին:

Ես ետ դարձա, ու քիչ մնաց զլուսներս իրար խփենք: Նա առաջ էր հակվել, գրեթե մտնելով իմ և միսիս Սիլսբերնի միջև: Սա ևս կարեկցական վրդովմունքի արտահայտությամք շրջվել էր դեպի նա:

— Մենք կարող ենք մի ամբողջ ամիս մնալ այստեղ տնկված,— ասաց հարսի ընկերուհին, երկարացնելով վիզը, որպեսզի նայի քամահար ապակուն:— Մինչդեռ ես պետք է հիմա այնտեղ լինեմ: Ես Մյուրիելին ու իր մայրիկին ասացի, որ կգամ առաջին մեքենաներից մեկով, հինգ բոպե հետո կլինեմ իրենց տանը: Օ՛, աստված, մի՞թե ոչինչ հնարավոր չէ անել:

— Ինձ էլ է անհրաժեշտ լինել այնտեղ,— շտապ-շտապ ասաց միսիս Սիլսբերնը:

— Այո, բայց ես նրան խոսք եմ տվել: Ներս կլըցվեն ամեն տիպի խելառ քեռիներն ու մորաքույրերը, ամեն տիպի կողմնակի մարդիկ, իսկ ես խոստացել եմ պահակ կանգնել, տասը սուր դեմ տալ եկողներին, միայն թե հնարավորություն տամ նրան մի քիչ մենակ մնալ, մի քիչ...— Նա կտրեց խոսքը,— օ՛, աստված, ի՞նչ սարսափելի բան:

Միսիս Սիլսբերնը զուսպ ծիծաղեց.— Վախենում եմ, թ՞ա այդ խելառ հորաքույրերից մեկն էլ ես եմ,— ասաց նա: Որոշակիորեն նեղացել էր:

Հարսի ընկերուհին ծուռ նայեց նրան.— Ա՛խ, ներեցեք, ես ձեր մասին չեմ ասում:— Ապա ետ ընկավ իր նստարանի թիկնակին:— Ես միայն ուզում էի ասել, որ նրանց բնակարանը այնքան նեղվածք է, ու եթե ով ասես լցվի այնտեղ, ինքներդ էլ հասկանում եք...

Միսիս Սիլսբերնը լռեց, իսկ ես նայում էի նրան և ցանկանում որոշել, թե որքանով լրջորեն վիրավորեց նրան հարսի ընկերուհու դիտողութունը: Հիշում եմ միայն, որ ինձ վրա մի առանձին տպավորություն թողեց հարսի ընկերուհու



առնել, որով նա ներողութիւնն էր խնդրում իր «խելառ քե-  
ռիներն ու մորաքույրերը» անհարմար արտահայտութիւն  
համար: Նա անկեղծորեն էր ներողութիւնն խնդրում, բայց  
առանց շփոթվելու, առանց ստորանալու, ու ես հանկարծ այն-  
պիսի զգացում ունեցա, որ շնայած ցուցադրական անզսպու-  
թիւնն ու շինծու կրքոտութիւնը, նրա մեջ իսկապէս սրի  
նման աներեր մի բան կա, ինչ-որ գրեթէ գրգռիչ ոգևորու-  
թիւն: (Ասեմ անմիջապէս և միանգամայն անկեղծորեն, որ  
իմ կարծիքը տվյալ իրադրութիւն մեջ շատ շնչին արժեք  
ունեի: Շատ հաճախ է պատահում, որ ես անժուժաբար տար-  
վում եմ այնպիսի մարդկանցով, որոնք շեն ջուայում իրենց  
ներողութիւնները): Բայց բանն այն է, որ այդ պահին իմ  
մեջ առաջին անգամ ինչ-որ կանխակարծիք շարժվեց ընդդեմ  
փեսայի, ճիշտ է, շատ փոքր, հազիվ նկատելի կշտամբանքի  
սաղմ՝ նրա անբացատրելի շարամիտ բացակայութիւն հա-  
մար:

— Հապա փորձենք մի բան անել,— ասաց հարսի ընկե-  
րուհու ամուսինը: Դա նույնիսկ թշնամու կրակի տակ իր  
հանգստութիւնը պահպանող մարդու ձայնն էր: Ես զգացի-  
րե նա ինչպէս է ջանք թափում իմ ետևում, և մեկ էլ նրա  
ցուխը հայտնվեց իմ ու միսիս Սիլսբերնի միջև գտնվող  
բավական սահմանափակ տարածութիւնում:— Վարորդ,—  
ասաց նա տիրական ձայնով և լոնց՝ սպասելով պատասխա-  
նի: Վարորդը շուշացրեց պատասխանը, որից հետո լեյտե-  
նանտի ձայնը դարձավ շատ ավելի զիջող ու հասարակ.—  
ինչ եք կարծում, մեզ երկա՞ր են պահելու այստեղ:

Վարորդը շուռ եկավ.— Ո՞վ է իմանում, Մաք,— ասաց  
նա ու էլի սկսեց առաջ նայել: Նա ամբողջապէս տարված էր  
խաշմերուկում տեղի ունեցող իրադարձութիւններ: Մի րոպե  
առաջ մի տղա դուրս պրծավ մարդկանցից ազատված ար-  
գելված գոտին, կիսով չափ նստած փուչիկը ձեռքին: Նրան  
բռնեց հայրը և բռունցքով երկու անգամ հասցրեց թիկուն-  
քին: Ամբողջ իրավացիորեն վրդովված ճիշերով դիմավորեց  
այդ արարքը:

— Դուք տեսա՞ք, թե այդ մարդը ինչպէս վարվեց երե-  
թայի հետ,— հարցրեց միսիս Սիլսբերնը՝ դիմելով բռն-  
քին: Ոչ ոք չպատասխանեց նրան:

— Գուցե սաստիկանի՞ն հարցնենք, թե որքան կպահեն մեզ այստեղ:— Հնչտենանտն ասաց վարորդին: Նա գեռևս նստած էր՝ բավական առաջ հակված: Երևում է, նրան շրավարարեց վարորդի լակոնիկ պատասխանը.— Հասկանո՞ւմ եք, մենք մի քիչ շտապում ենք: Չէի՞ք կարող հաբցնել նրան, թե շա՞տ կպահեն մեզ այստեղ:

Վարորդն առանց շուռ գալու կատաղաբար թափ ավեց ուսերը: Բայց և այնպես անջատեց վառիչն ու դուրս եկավ մեքենայից՝ շրխկացնելով լիմուզինի ծանր դուռը: Նա արտաբուստ թափթփված էր, հանդգնավուն, ոչ լրիվ վարորդական հագուստով. սե կոստյումով էր, բայց առանց գլխարկի:

Գանդաղ և միանգամայն անկախ, եթե շատենք՝ լիտիաբար, նա անցավ մի քանի քայլ, մինչև խաշմերուկը, որտեղ կանգնած հերթապահ ոստիկանը կարգավորում էր շարժումը: Նրանք բանակցեցին բավական երկար: Հսեցի, Պե հարսի ընկերուհին ինչպես հառաչեց իմ ետևում: Եվ հանկարծ երկուսն էլ՝ վարորդն ու ոստիկանը, բարձր քրքջացին: Կարելի էր կարծել, որ նրանք ոչ մի բանի մասին էլ չէին գրուցում, պարզապես անվայելուչ կատակներ էին անում: Հետո մեր վարորդը, գեռևս ծիծաղելով իր հավար, բարեկամաբար ձեռքը թափահարեց ոստիկանի կողմը և շատ զանգաղ եկավ դեպի մեքենան: Նա նստեց, շրխկոցով փակելով դուռը, մի սրգարեստ հանեց ցուցալահանակի վրա դրված տուփից, մտքրեց ականջի ետևը և հետո, միայն հետո դարձավ մեզ ու զեկուցեց:— Նա ինքն էլ չգիտի,— ասաց:— Պետք է սպասել, մինչև շքերթն անցնի,— անցողակի նայեց բոլորիս.— Եյն ժամանակ հնարավոր կլինի գնալ:— Նա շուռ եկավ, սիգարետը հանեց ականջի ետևից ու կպցրեց:

Ետևի նստարանից տխուր հառաչանք լսվեց. հարսի ընկերուհին էր այդ ձևով արտահայտում իր վրդովմունքն ու հիասթափությունը: Խոր լուսթյուն տիրեց: Վերջին մի քանի բուպենների ընթացքում առաջին անգամ նայեցի փոքրիկ ծերուկին, որ նստած էր շվառվող սրգարը ձեռքին: Ուշացումը բոլորովին շէր վրդովում նրան: Երևում է, նա իր համար վարվեցողության հաստատուն կանոններ էր սահմանել մեքենայի ետևի նստարանին, միևնույն է, այն կանգնած է, շարժվում է, թե կամրջից գետն է նետվում: Ամեն ինչ լա-

փից դուրս պարզ էր նրա համար: Հարկավար է նստել ուղիղ, պահպանելով ցիլինդրի և մեքենայի առաստաղի միջև շար- սից-հինգ դուլմ տարածություն և խստորեն առաջ նայել, քամահար ապակուն: Ու եթե Մահը, — իսկ նա, ամենայն հա- վանականությամբ, նստած է առջևում, կապտոթի վրա, — ուրեմն՝ եթե Մահը ինչ-որ հրաշքով ապակուց ներս թափան- ցի և գա թո ետևից, ապա կելնես տեղիցդ և կհեռուես նրան խստորեն, բայց հանգիստ: Չէր բացառվում նաև, որ կարելի կլինի վերցնել սիգարը, եթե այն հավանական է:

— Ի՞նչ ենք անելու: Պարզապես նստենք և սպասե՞նք այստեղ, — հարցրեց հարսի ընկերուհին: — Ես մեռնում եմ ջրփից:

Միսիս Սիլսբերնն ու ես ժամանակին շուռ եկանք որսա- լու համար նրա հայացքը, որ այդ ամբողջ ընթացքում առա- ջին անգամ նա նետեց ամուսնու վրա: — Մի՞թե շես կարող գոնե մի քիչ այն կողմ քաշվի: Ես ուղղակի խեղդվում եմ, այնպես եք սեղմել ինձ:

Լեյտենանտը ծիծաղեց և արտահայտիչ կերպով տարա- ծեց ձեռքերը: — Ես առանց այդ էլ գրեթե թևի վրա եմ նըս- տած, նապաստակս, — ասաց նա:

Հարսի ընկերուհին աարակուսանքով ու հետաքրքրությամբ չի հայացքն ուղղեց իր մյուս հարևանի վրա. սա, կարծես ցանկանալով գոնե մի փոքր բարձրացնել իմ տրամադրու- թյունը, շատ ավելի լայն տեղ էր զբաղեցրել, քան հարկա- վոր էր իրեն: Նրա աչ կոնքի և արմնկակալի միջև երկու գլույմ տարածություն կար: Հարսի ընկերուհին, անշուշտ, տեսել էր դա, բայց չնայած ձայնի ամբողջ սառնությունը, նա, այնուամենայնիվ, չէր կարողանում հանդիմանել այդ փոքրիկ ծերունուն: Նա կրկին դարձավ ամուսնուն: — Դու կարո՞ղ ես սիգարետ հանել, — հարցրեց գրգռված: — Այնքան նեղ է տեղս, որ ես իմը շեմ կարող հանել:

«Նեղ է» ասելիս նա գլուխը շուռ տվեց և բավական թուռ- ցիկ, բայց չափից դուրս պերճախոս մի հայացք գցեց հան- ցագործության փոքրիկ մեղավորի վրա, որ նվաճել էր այն տարածությունը, որն իրավամբ իրեն էր պատկանում: Բայց ծերուկը մնաց միանգամայն անխոցելի: Հարսի ընկերուհին նույնց միսիս Սիլսբերնին և պերճախոս բարձրացրեց հոնքե-

բը: Միսիս Սիլսբերնն իր հերթին դրուժյունը լիովին ըմբռնելու և կարեկցանքի արտահայտութիւն տվեց դեմքին: Այդ ընթացքում լեյտենանտը իր ամբողջ ծանրութիւնը տեղափոխեց ձախ, պատուհանի ֆողմի նստատեղի վրա և տոնական համազգեստի տաքատի աջ գրպանից հանեց սիգարետի տուփն ու լուցկին: Կինը սիգարետ վերցրեց, իսկ ամուսինը անմիջապէս կրակ մատուցեց նրան: Միսիս Սիլսբերնն ու ես նայում էինք, թե ինչպէս է բոցավառվում լուցկին, ասես հմայված ինչ-որ արտասովոր երևույթով:

— Օ՛ ներեցեք,— ասաց լեյտենանտն ու տուփը մեկնեց միսիս Սիլսբերնին:

— Շատ շնորհակալ եմ, բայց ես չեմ ծխում,— շտապ-շտապ ասաց միսիս Սիլսբերնը կարծես ակսոսաւքով:

— Իսկ դո՞ւք, զինվոր,— և լեյտենանտը հազիվ նկատելի տատանումից հետո տուփը մեկնեց նաև ինձ: Անկեղծ ասած, թեև ինձ դուր եկավ, թե նա ինչպէս իրեն ստիպեց սիգարետ առաջարկել, և ինչպէս նրա մեջ սովորական քաղաքավարութիւնը հաղթեց կաստայական նախապաշարումներին, այնուամենայնիվ, սիգարետ չվերցրի:

— Կարելի՞ է տեսնել ձեր լուցկին,— հարցրեց միսիս Սիլսբերնը՝ արտասովոր քնքուշ, գրեթե ջահել աղչնակի ձայնով:

— Սա՞,— ասաց լեյտենանտը: Նա լուցկիներով սովաւ-րաթղթի կտորը պատրաստակամորեն տվեց միսիս Սիլսբերնին:

Միսիս Սիլսբերնը սկսեց զննել լուցկին, ես էլ նայեցի՝ հետաքրքրութիւն արտահայտելով: Ետ ծալվող կափարիչին, կարմիր ֆոնի վրա, ոսկե տառերով տպագրված էր. «Այս լուցկիները գողացված են Բոբ և էդի Բերվիկների տնից»:

— Սքանչելի՞ է,— ծոր տվեց միսիս Սիլսբերնը՝ օրորելով գլուխը:— Չէ, իսկապես, սքանչելի է:

Ես աշխատեցի դեմքի արտահայտութիւնս ցույց տալ, թե իբր չեմ կարողանում առանց ակնոցի կարդալ մակագրութիւնը և անվրդով կկոցեցի աչքերս: Միսիս Սիլսբերնը որոշակիորեն չէր ուզում տիրոջը վերագարձնել լուցկին: Երբ, այնուամենայնիվ, տվեց, և լեյտենանտը դրեց իր ծոցազրպանը, նա ասաց.— Իմ կարծիքով, ես նման բան չեմ տե-

սեւ:— Ու գրեթե լրիվ շրջադարձ կատարելով իր ծալովի նըստարանին, քնքշորեն սկսեց նայել լեյտենանտի ծոցագրպանին:

— Անցյալ տարի պատվիրել էինք մի ամբողջ կույտ,— ասաց լեյտենանտը:— Չեք պատկերացնի, թե դա ինչպես է օգնում տնտեսելուն:

Բայց այդ ժամանակ կինը նայեց, ավելի ճիշտ հակվեց նրա վրա:— Մենք դրա համար չպատվիրեցինք,— ասաց նա և, մի հայացք զցելով միսիս Սիլսբերնի վրա, որ նշանակում էր «ՄՏ, այս տղամարդի՛կ», ավելացրեց.— Չգիտեմ, ինձ ուղղակի թվաց, թե դա հետաքրքիր է: Գոհճիկ է, բայց, այնուամենայնիվ, հետաքրքիր է: Ինքս էլ չգիտեմ...

— Չէ, սա սքանչելի՛ է: Իմ կարծիքով, ես ոչ մի տեղ...

— Իրականում սա օրիգինալ էլ չէ: Հիմա բոլորն էլ այդպես են անում: Ի՛դեպ, այդ միտքն ինձ տվեցին: Մյուրիելի ծնողները, նրա մայրիկն ու հայրիկը: Նրանց տանը միշտ այդպիսի լուցկիներ են լինում:— Նա խոր ներս քաշեց ծուխն ու, շարունակելով խոսել, սկսեց քիչ-քիչ արձակել ծխի միանման քուլաներ:— Լսեցեք, նրանք հիանալի մարդիկ են: Գրա համար էլ այս պատմությունը այսպես ազդում է վրաս: Ինչո՞ւ այդպիսի բաները տականքներին շեն պատահում, չէ՞, նրանց անպայման օրինավոր մարդիկ կհանդիպեն: Այ՛ թե ինչն է ինձ համար անհասկանալի,— ու նայեց միսիս Սիլսբերնին՝ ասես սպասելով պարզաբանման:

Միսիս Սիլսբերնի ժպիտը խորհրդավոր էր, միաժամանակ նրբակիրթ և թախծոտ, որքան որ հիշում եմ դա Ծալովի նըստարանին նստած ոմն Ջոկոնդայի ժպիտ էր:

— Այո, ես էլ եմ հաճախ մտածել...— կիսաձայն ասաց նա: Իսկ հետո բավական երկիմաստորեն ավելացրեց.— Չէ՞ որ Մյուրիելի մայրը հանգուցյալ ամուսնուս կրտսեր քույրն է:

— Ա՛,— հետաքրքրությամբ ասաց հարսի ընկերուհին:— Ուրեմն դուք ինքներդ էլ ամեն ինչ գիտեք:— Եվ անքնակա-նորեն երկար ձեռքը մեկնելով ամուսնու վրայով, մոխիրը թափ տվեց դռնակին ամրացված մոխրամանի մեջ:— Ազնիվ խոսք, ամբողջ կյանքումս իսկապես այդպիսի հոյակապ մարդիկ չեմ տեսել: Հասկանո՞ւմ եք, նա կարդացել է աշխարհիս բոլոր գրքերը: Աստված իմ, եթե ես կարողա-

նայի կարգալ թեկուզ մեկ տասներորդը այն ամենի, որ կարգացել ու մոռացել է նա, ինձ համար երջանկություն կլիներ: Հասկանո՞ւմ եք, նա կ'դասավանդել է, կ'թերթում է աշխատել, նա ինքն է իր համար զգեստներ կարում, ամբողջ տնտեսությունը, ինքն է վարում: Խոսում է ուղղակի ինչպես աստված: Չէ՞, անկեղծ ասած, ուղղակի հրաշք է, գրեզը տանի:

— Իսկ նա հավանություն տվե՞լ է այդ հարստների, — ընդհատեց միսիս Սիլսբերնը: — Հասկանո՞ւմ եք, ես հարցնում եմ, միայն այն պատճառով, որ մի քանի ամիս Գեթրոյթում եմ եղել: Տալս հանկարծակի մահացավ... ես էլ...

— Նա այնքան լավ է դաստիարակված, որ չի միջամբար,— բացատրեց հարսի ընկերուհին: — Հասկացեք ինձ, նա շափից դուրս, դե ինչպես ասեմ, նրբանկատ է: — Նա մի փոքր լռեց: — Իրականում միայն այսօր առավոտյան առաջին անգամ լսեցի, թե նա ինչպես էր վրդովված այդ կայակցությամբ: Դա էլ միայն այն պատճառով, որ շատ էր հուզվել խեղճ Մյուրիելի համար:

Նա նորից մեկնեց ձեռքը և թափ օղկեց մոխիրը:

— Իսկ ի՞նչ ասաց այսօր առավոտյան, — ազահաբար հարցրեց միսիս Սիլսբերնը:

Հարսի ընկերուհին ասես ինչ-որ բան հիշեց.— Հնգհանբապես մի առանձնահատուկ բան շատաց, ուզում եմ ասել՝ ոչ մի վատ, իսկապես վիրավորական, մի խոսքով, նման բան չասաց: Միայն ասաց, որ իմ կարծիքով, այդ Սիմորը պտտենցիալ հոմոսեքսուալիստ է և որ նա իրաւանում վախենում է ամուսնանալուց: Հասկանո՞ւմ եք, նրա ասածի մեջ մի առանձին շարություն չկար կամ նման մի բան: Նա պարզապես շատ խելացի արտահայտվեց, հասկանո՞ւմ եք, նա ինքը հոգեվերլուծության կուրս է ընդունում արդեն երկա՛ր-երկա՛ր տարիներ շարունակ: — Հարսի ընկերուհին նայեց միսիս Սիլսբերնին.— Այստեղ որևէ գաղտնիք չկա: Ես գիտեմ, որ միսիս Ֆեզերը ինքը կպատմեր ձեզ, այնպես որ ես ոչ մեկի գաղտնիքը չեմ մատնել:

— Գիտեմ, գիտեմ, — փութով ասաց միսիս Սիլսբերնը: — Նա աշխարհում հանուն ոչ մի բանի...

— Հասկանո՞ւմ եք, — շարունակեց հարսի ընկերուհին, —

նա այն մարդը չէ, որ հենց այնպես, առանց մտածելու նման բաներ ասի, նա գիտի ինչ է ասում: Եվ երբ հ'ք, երբեք նման բան չէր ասի, եթե խեղճ Մյուրիելը այդ վիճակում չլիներ. ուղղակի ոնց որ սպանված լիներ, հասկանա՞ւմ եք,— նա տխուր թափ տվեց գլուխը:— Տեր աստված, դուք մի տեսնեի՞ք խեղճ աղջկան:

Այստեղ, անշուշտ, պետք է ընդհատեմ պատմվածքը և նկարագրեմ, թե ես ինչպես էի մտովի արձագանքում հարսի ընկերուհու հիմնական տեսակետներին: Բայց, թերևս, առայժմ այդ մասին լռեմ, և, հուսով եմ, ընթերցողն ինձնից չի նեղանա:

— Է՛լ ինչ էր ասում նա,— հարցրեց միսիս Սիլսբերնը:— Ի՞նչ էր ասում Ռեան: Նա էլի՞ բաներ էր ասել:— Ես չէի նայում նրան, ես աչքս չէի կտրում հարսի ընկերուհուց, բայց մի պահ ինձ թվաց, թե միսիս Սիլսբերնը պատրաստ է ամբողջ ծանրությամբ նրա վրա ընկնելու:

— Ոչ, թերևս ոչ: Գրեթե ոչինչ,— հարսի ընկերուհին մտահոգ տարուբերեց գլուխը:— Հասկանա՞ւմ եք, ինչպես արդեն ասացի, նա ընդհանրապես ոչինչ չէր ասի, մանավանդ այդքան մարդկանց ներկայությամբ, եթե խեղճ Մյուրիելը այդպես խելահեղորեն հուզված չլիներ...— Նորից թափ տվեց սիգարետի մոխիրը:— Նա ավելացրեց միայն, որ այդ Միմորը, անկասկած, մտազարի մեկն է, և եթե ճիշտ ընկալենք իրադրությունը, ապա Մյուրիելի համար նույնիսկ լավ է, որ ամեն ինչ այսպես վերջացավ: Իհարկե, ինձ համար դա լիովին հասկանալի է, բայց համոզված չեմ, որ Մյուրիելն էլ է այդպես հասկանում: Միմորն այնպես է պատեցրել նրա գլուխը, որ աղջիկը չգիտի ինքը որտեղ է գտնվում: Ահա թե ինչու է դա ինձ այդպես...

Բայց այստեղ նրան ընդհատեցին: Ընդհատեցի ես: Որքան հիշում եմ, ձայնս դողում էր. ինձ հետ այդպես պատահում է, երբ լրջորեն զայրացած եմ լինում:

— Միսիս Ֆեդերն ինչի՞ց է ենթադրում, որ Միմորը պատենցիալ հոմոսեքսուալիստ է և մտազար:

Բոլոր հայացքները, ոչ, բոլոր լուսարձակները՝ հարսի ընկերուհու հայացքը, միսիս Սիլսբերնի հայացքը, նույնիսկ

լեյտենանտի հայացքը անմիջապես խաշաձևվեցին ինձ վրա.— Ի՞նչ,— հարցրեց հարսի ընկերուհին շոք, թերևս նույնիսկ թշնամաբար: Եվ կրկին իմ մեջ մի անորոշ, աղոտ զգացում ծնվեց. նա գիտի, որ ես Սիմոնի եղբայրն եմ:

— Միսիս Տեղերը ինչո՞ւ է կարծում, որ Սիմոնը պոտենցիալ հոմոսեքսուալիստ է և մտազար:

Հարսի ընկերուհին սևեռուն նայեց ինձ, հետո փնշացրեց: Նա շրջվեց և ընդգծված ծաղրով դիմեց միսիս Սիլբերնին.— Ձեր կարծիքով, ն որ մ ա լ մարդը ինչպե՞ս կարող էր այսօրվա նման բան թույլ տալ:— Նա բարձրացրեց հոնքերն ու ապասեց պատասխանի.— Ի՞նչ եք կարծում,— հարցրեց նա խիստ կամացուկ.— Միայն ազնվորեն: Ես ձ Ե զ Ե մ հարցնում: Թող այս ջենտլմենը լսի:

Միսիս Սիլբերնի պատասխանը տեղով նրբամտության էր, ազնվություն:

— Իմ կարծիքով, ոչ, իհարկե,— ասաց նա:

Ինձ հանկարծ համակեց մի անզուսպ ցանկություն՝ մեքենայից դուրս թռչել ու վազել, ինչքան ուժ ունեմ, փախչել, աստված գիտի, թե ուր: Բայց որքան որ հիշում եմ, դեռ չէի շարժվում տեղիցս, երբ հարսի ընկերուհին կրկին դիմեց ինձ.

— Լսեցեք,— ասաց նա այնպիսի շինծու համբերատար տոնով, ինչպես ուսուցիչը կիսոսի ոչ միայն մտավորապես տհաս, այլև միշտ նվնվան երեխայի հետ:— Զգիտեմ, թե դուք ինչպես եք ճանաչում մարդկանց: Բայց խելքը գլխին այդպիսի մարդը իր ամուսնության նախօրյակին ամբողջ դիշեր հանգիստ չի տալիս հարսնացուին և անվերջ ինչ-որ դատարկ բաներ է դուրս տալիս, որ իբր ինքը շատ երջանիկ է, դրա համար էլ պսակադրվել չի կարող, և որ աղջիկը հարկադրված կլինի հետ ա ձ գ Ե լ հարսանիքը, մինչև որ նա մի քիչ խաղաղվի, թե չէ այդպես ոչ մի կերպ չի կարող ներկայանալ: Իսկ երբ հարսնացուն նրան բացատրում է, ինչպես երեխային, որ ամեն ինչ արդեն պայմանավորված է ու կարգադրված վաղուց ի վեր, որ իր հայրը աներևակայելի ծախսեր է արել, հոգացել, որ ընդունելութունը և ամեն ինչ արվի, ինչպես հարկն է, որ երկրի բոլոր ծայրերից գալու են իր հարազատներն ու բարեկամ-



ները, փեսացուն այդ բացատրութիւններէց հետո հայտարարում է, որ շատ է ցավում, բայց առայժմ այնպես խելահեղորեն է երջանիկ զգում իրեն, որ հարսանիքը տեղի ունենալ չի կարող, իրեն անհրաժեշտ է խաղաղվել, մի խոսքով, ինչ-որ ապուշութիւն: Ինքներդ մտածեցեք, եթե, իհարկե, ձեր գլուխն աշխատում է: Դա նման է նորմալ մարդու նման է դա խելքը գլխին մարդու,— նրա ձայնի մեջ արդեն աղեկտուր նոտաներ էին հնչում:— Թե՞ այդպես վարվում է նա, ում հարկավոր է նստեցնել վանդակաճաղերի ետևը:— Նա խստութեամբ սեեովեց ինձ վրա, երբ ես լուռ մնացի՝ ո՛չ պաշտպանվեցի, ո՛չ անձնատուր եղա, ծանրորեն հենվեց նստարանի թիկնակին և ամուսնուն ասաց.— Մի սիգարետ էլ տուր, խնդրեմ: Թե չէ՝ ձեռքս կայրեմ հիմա:— Նա մոխրացած քնթուկը տվեց ամուսնուն, սա հանգցրեց: Հետո հանեց տուփը:

— Զէ, դու կպցրու,— ասաց կինը:— Ծա ուժ չունեմ:

Միսիս Միլսբերնը հազաց.— Իմ կարծիքով, ուղղակի անսպասելի երջանկութիւն է, որ ամեն ինչ այդպես է ստացվել...

— Զէ, ես ձեզ եմ հարցնում,— նոր ուժով նրան դիմեց հարսի ընկերուհին՝ ամուսնու ձեռքից վերցնելով վառած սիգարետը:— Մի՞թե, ձեր կարծիքով, այդպես է վարվում նորմալ մարդը, նորմալ տղամարդը: Թե՞ դա դեռևս շահասունացած մարդու արարք է, կամ գուցեև կատաղի խելացորի՞, իսկական հոգեկան հիվանդի՞:

— Տեր աստված, ես նույնիսկ չգիտեմ, թե ինչ ասեմ: Իմ կարծիքով, նրա բախտը ուղղակի բերել է, որ այդպես ստացվեց...

Հանկարծ հարսի ընկերուհին միանգամից ուղղվեց և ծուխ արձակեց քթանցքներից:— Դե լավ, բանն այդ չէ, սուս արեք գոնե մի բոպե, իմ հոգսը դա չէ,— ասաց նա: Դիմում էր միսիս Միլսբերնին, բայց իրականում նրա խոսքերը վերաբերում էին ինձ, միջնորդի միջոցով:— Դուք երբեք տեսե՞լ եք... Կինոյում,— հարցրեց նա:

Ու տվեց այն ժամանակ արդեն հայտնի, իսկ 1955 թվականին խիստ հանրահայտ կինոդերասանուհու թատերական ծածկանունը:

— Այո,— արագ ու աշխույժ ասաց միսիս Սիլսբերնը և սպասողաբար լռեց:

Հարսի ընկերուհին գլխով արեց.— Լա՛վ,— ասաց նա,— իսկ դուք երբեք պատահմամբ չե՞ք նկատել ինչպես է նա ժպտում, թեթևակի ծուռ: Կարծես բերանի մի անկյունով: Դա շատ նկատելի է, եթե ուշադիր...

— Այո՛, այո՛, նկատել եմ,— ասաց միսիս Սիլսբերնը:

Հարսի ընկերուհին ներս քաշեց ծուխը և անցողակի նայեց իմ կողմը.— Դե լսեք ուրեմն, պարզվում է, դա մասնակի կաթված է,— ասաց նա ամեն բառի հետ ծիփ քուլաներ արձակելով:— Իսկ գիտե՞ք ինչից է: Դա, ասում են, ձեր նորմալ Ախմարն է խփել, և ինը կար են դրել նրա դեմքին:

Նա նորից մեկնեց ձեռքը (հավանաբար, առավել հաջող ռեժիսորական ցուցումների բացակայության հետևանքով) և մոխիրը թափ տվեց:

— Թույլ տվեք հարցնել, թե որտեղի՞ց եք իմացել,— ասացի ես: Երթունքներս դողում էին:

— Թույլ եմ տալիս,— ասաց նա, նայելով ոչ թե ինձ, այլ միսիս Սիլսբերնին:— Մյուրիելի մայրը պատահմամբ հիշատակեց դա երկու ժամ առաջ, երբ Մյուրիելը աղի արցունք էր թափում:— Նա նայեց իմ կողմը:— Դա չեզ բավարարո՞ւմ է:— Եվ հանկարծ ծաղկեփունջը աջ ձեռքից տեղափոխեց ձախը: Դա նյարդային վիճակն արտահայտող միակ նշանն էր, որ նկատել էի նրա մոտ:

— Ի դեպ,— ասաց նա՝ նայելով ինձ,— գիտե՞ք, իմ կարծիքով, դուք ով եք: Իմ կարծիքով, դուք այդ Միմորի եղբայրն եք:— Նա կարճ դադար տվեց, իսկ երբ ես լուռ մնացի, ավելացրեց.— դուք նույնիսկ նմա՛ն եք նրան, եթե դատելու լինենք նրա հիմար լուսանկարով, և ես գիտեմ, որ նրա եղբայրը պետք է գար հարսանիքին: Ինչ-որ մեկը, կարծեմ, նրա քույրը այդ մասին ասել էր Մյուրիելին:— Նա աչքն ինձնից չէր կտրում:— Ծղրա՞յրն եք,— կտրուկ հարցրեց նա:

Ձայնս երևի խզվեց, երբ պատասխանում էի:

— Էյո,— ասացի ես: Դեմքս այրվում էր: Բայց հիմա

շատ ավելի, քան ցերեկը, ինքս ինձ զգում էի այն շշմած վիճակում, երբ իշա գնացքից:

— Այդպես էլ գիտեի, — ասաց հարսի ընկերուհին: — Այնքան էլ հիմար չեմ, հավատացնում եմ ձեզ: Հենց որ մեքենա նստեցիք, անմիջապես հասկացա ով եք: — Նա դարձավ ամուսնուն: — Չասացի՞, որ նրա եղբայրն է, հենց որ մեքենա մտավ: Չասացի՞:

Հեյտենանտը ավելի հարմար տեղավորվեց. — Այո, ասացիր, որ նա պետք է որ... այո, այո, ասացիր, — ավելացրեց նա: — Այո, դու ասացիր:

Նույնիսկ առանց նայելու միսիս Սիլսբերնին, կարելի էր հասկանալ, թե որքան ուշադիր է հետևում նա դեպքերի ընթացքին: Ես նրա կողքով անցողակի ետ նայեցի հինգերորդ ուղևորին՝ փոքրիկ ծերուկին, տեսնեմ արգյո՞ք դեռևս անմասնակից է մնում: Այո, ոչինչ չէր փոխվել: Հազվագեպ է պատահում, որ մարգու անտաքթերությունն ինձ այգպիսի հաճույք պատճառի:

Բայց այստեղ հարսի ընկերուհին նորից բռնեց ինձ. — Ի գեպ, թող ձեզ հայտնի լինի, ես գիտեմ, որ ձեր եղբայրը բոլորովին էլ կոշտուկներ վիրահատող չէ: Եվ հարկ չկա սրամըտելու: Ես հրաշալի գիտեմ, որ նա հարյուր տարի շարունակ Բիլլի Բլեքի դերն է կատարել «Ենկացի երեխաներ» առդիտ-ծրագրում:

Այստեղ միսիս Սիլսբերնը անսպասելիորեն խառնվեց մեր խոսակցությանը. — Ռադիոյով, չէ՞. — հարցրեց նա, ու զգացի, որ հիմա նոր, ավելի մեծ հետաքրքրություններ է նայում ինձ:

Հարսի ընկերուհին նրան շատ տախանեց: — Իսկ դո՞ւք ամ դերն էիք կատարում, — հարցրեց նա ինձ. — Պուք էլ երևի Ջորջի Բլեքն էիք, այո՞: — Հետաքրքրասիրության և հրպիտ շիտակության խառնուրդը նրա ձայնի մեջ ինձ ոչ միայն զվարճալի թվաց, այլև միանգամայն զինաթափ արեց:

— Ո՛չ, Ջորջի Բլեքն իմ եղբայր. Ուոլթն էր, — ասացի ես՝ պատասխանելով միայն երկրորդ հարցին:

Նա դիմեց միսիս Սիլսբերնին. — Կարծեմ, դա զաղ տեսիք է, թե ինչ, բայց այս մարդն ու նրա եղբայր Սիմոնը

հորինովի անուններով էին ելույթ ունենում: Բլեթ ընտանիքը:

— Հանգստացիր, փոքրիկս, հանգստացիր,— ասաց լեյտենանտը որոշ տազնապով:

Հարսի ընկերուհին դարձավ ամուսնուն.— Ձէ, շեմ կարող հանգստանալ,— ասաց նա, և նորից, հակառակ տրամաբանության, ներսս ինչ-որ ոգևորության նման մի բան շարժվեց. այնպիսի մետաղային սառնություն կար նրա ձայնի մեջ:— Դրա եղբայրն, ասում են, խելոք է ինչպես սատանան,— ասաց նա:— Համալսարան է ընդունվել գրեթե տասնըշորս տարեկանում: Բայց եթե խելացի պետք է համարել այն, ինչ որ նա գրեց այսօր այդ աղջկա պիսին, ուրեմն ես Մահաթմա Գանդին եմ: Այստեղ ինձ արդեն չեք համոզի: Սա վրդովեցուցիչ է, և վե՛րջ:

Ես ավելի շատ կորցրի ինձ: Ինչ-սր մեկը սևեռված ուսումնասիրում էր իմ ձախ, պակաս պաշտպանված կողմը: Դա միսիս Սիլսբերնն էր: Նա ետ ընկրկեց, երբ ես զայրույթով նայեցի նրա կողմը:

— Ասացեք խնդրեմ, դո՞ւք եք եղել Բադի Բլեթը.— հարցրեց նա, ու նրա ձայնի հարգալիր տոնից ինձ թվաց, թե հիմա ինքնահոսն ու սեկակազմ ինքնագրերի փոքրիկ բլոկնուտը մեկնելու է ինձ: Այդ մտքից ես անհարմար զգացի, հատկապես այն պատճառով, որ քառասուներկու թվականն էր և ամբողջ տասը տարի էր անցել իմ խիստ շահավետ կարիերայի ծաղկումից հետո:

— Հարցնում եմ, որովհետև ամուսինս ոչ մի անգամ թաց չէր թողնում ձեր հաղոր...

— Իսկ եթե ուզում եք իմանալ,— ընդհատեց նրան հարսի ընկերուհին,— ինձ համար դա ամենատեղի հաղորդումն էր: Եւ ուղղակի ասում եմ նման վունդերկիզներին: Եթե իմ երեխան չեթ մեկ անգամ...

Սակայն այդ արտահայտության վերջը մենք այդպես էլ չլսեցինք: Հանկարծակի ու վճռականորեն ընդհատեց այն մի խիստ աղեկտուր, խիստ խլացուցիչ և խիստ կեղծ փողային ոռնոց՝ դո մաժորով, ինչպիսին կարելի է միայն պատկերացնել: Հավատացնում եմ, որ մենք բոլորս միանգամից տառաջիորեն վեր թռանք նստած տեղներիցս: Ու այդ ժամանակ

հայտնվեց փողային նվագախումբը իր թմբուկներով հանդերձ՝ կազմված լսողությունից իսպառ զուրկ հարյուր, գուցեև ավելի, ծովային հետախույզներից։ Ու գրեթե հանցավոր անպարկեշտությամբ նրանք ծվատում էին «Աստղային դրոշ» ազգային հիմնը։ Միսիս Սիլսբերնը անմիջապես կողմնորոշվեց՝ խցանեց ականջները։

Թվում էր, թե արդեն մի ամբողջ հավիտենականութուն է, լավում է այդ թնդյունը։ Միայն հարսի ընկերուհու ձայնը կարող էր խլացնել այն, ուրիշ ոչ ոք, թերևս, չհամարձակվեր։ Իսկ նա համարձակվեց և, թվում էր, ինչ-որ բան է ստում մեզ բոլորիս, գոռալով աստված գիտի թե որտեղից, ասես «Յանկի» ստադիոնի տրիբունաների տակից։

— Ես էլ շեմ կարող դիմանալ, — գոռաց նա։ — Գնանք այստեղից, մի հեռախոս գտնենք։ Ես պետք է զանգահարեմ Մյուրիելին, ասեմ, որ ուշանում ենք, թե չէ նա կգժվի։

Միսիս Սիլսբերնն ու ես նայում էինք, թե ինչպես է անցնում տեղական Արմազեդդոնը, բայց այդ ժամանակ նորից ետ շրջվեցինք մեր ծալովի նստարանների վրա, գեմքով գեպի մեր առաջնորդը, իսկ գուցեև՝ փրկարարը։

— Յոթնասունիններորդի վրա է գտնվում Երաֆտա սըրճարանը, — գոչեց նա միսիս Սիլսբերնի երեսին։ — Գնանք սողայաջուր խմենք, և այնտեղից կզանգահարեմ, այնտեղ գոնե օդափոխություն է կատարվում։

Միսիս Սիլսբերնը ոգևորված գլխով արեց և շրթունքներով արտահայտեց «այո» բառը։

— Դո՛ւք էլ, — ձայն տվեց ինձ հարսի ընկերուհին։

Հիշում եմ, ես մի անբացատրելի, ինձ համար անսպասելի պատրաստակամությամբ ի պատասխան ասացի նրան ինձ համար անսովոր մի բառ։ — Հրաշալի է։

(Մինչև հիմա էլ չգիտեմ, թե ինչո՞ւ նա ինձ մտքրեց նազը լքողների ցուցակի մեջ։ Գուցե առաջնորդվեց բնածին առաջնորդի՝ կարգուկանոնի հանդեպ ունեցած բնական սիրո՞վ։ Գուցե նա առանց բացառություն բոլորին ավի իջեցնելու ազդոտ, բայց սպառնալից պահանջ էր զգում։ Իմ անհասկանալի շտապ համաձայնությունը այդ հրավերին շատ ավելի հեշտ է բացատրել։ Ուզում եմ մտածել, որ դա սովորական կրոնական պոռթկում էր։ Բուդդայական որոշ մենաստաններում,

Ձեռն աղանդում վարքի անխախտ ու թերևս եզական մի ան-  
վիճելի կանոն կա. եթե վանականներից մեկը ձայն է տա-  
լիս մյուսին՝ ասելով «է՛յ», սա պետք է առանց մտածելու  
պատասխանի՝ «է՛յ»):

Այստեղ հարսի ընկերուհին շուտ եկավ ու այդ ամբողջ  
ընթացքում առաջին անգամ խոսեց փոքրիկ ծերուկի հետ:  
Եւ մինչև կյանքիս վերջը երախտապարտ եմ այդ ծերուկին,  
որ առաջվա պես դեռ լուռ նայում էր ուղիղ իր դիմաց, նրա  
համար ասես ոչինչ մազաչափ անգամ չէր փոխվել: Առաջվա  
պես երկու մատով բռնել էր շվառած հավանական սիգարը:  
Այն պատճառով, որ նա արոշակիրներն չէր նկատում, թե  
ինչպիսի ահեղացունց թնդյուն էր հանում անցնող նվազա-  
խումբը, թե՞ այն պատճառով, որ մեզ ակներևաբար հայտնի  
էր անխախտ ճշմարտությունը. ութսունից հետո բոլոր ծե-  
րուկներն էլ կամ խուլ են կոճղի պես, կամ շատ վատ են  
բռնում, մի խոսքով՝ հարսի ընկերուհին, շրթունքները գրեթե  
նրա տեղանշին հպելով, գոռաց.

— Ծեռք հիմա դուրս ենք գալիս մեքենայից: Հեռախոս  
փնտրենք, գուցեև մի բան խմենք: Ուզո՞ւմ եք գալ մեզ հետ:

Ծերուկը արձագանքեց ակնթարթորեն և ուղղակի արնը-  
ման ձևով. նա նայեց հարսի ընկերուհուն, հետո՝ մեզ բուր-  
բա, ու հալվեց ժպտից: Ժպտըր ամենեին նվազ շլացուցիչ  
չդարձավ այն բանից, որ, չնչին իմաստ անգամ չունեի իր  
մեջ, կամ այն բանից, որ ծերուկի ատամները պարզ ու որո-  
շակիրորեն դնովի էին: Նա նորից հարցականորեն նայեց հար-  
սի ընկերուհուն, հրաշքով պահպանելով դեռևս նույն ան-  
մար ժպտը: Ավելի ճիշտ, նայեց նրան այնպիսի, ինձ թվաց,  
հույսով, ասես սպասում էր, որ նա կամ մեզնից որևէ մեկը  
անմիջապես ամեն տիպի ուսեստներով լի կողով էր մա-  
տուցելու նրան:

— Կարծում եմ, հոգյակա, որ նա քեզ չի լսում, — գուշեց  
բնյտեմանաբ:

Նրա կինը գլխով արեց և կրկին շուրթերը մեզաֆոնի պես  
մոտեցրեց ուղիղ ծերուկի ականջին: Ամեն տիպի զովեստ-  
ների արժանի որոտագին ձայնով նա կրկնեց հրավերը՝ մե-  
քենայից դուրս գալ մեզ հետ միասին: Եվ կրկին այնպիսի  
ուպավորություն ստեղծվեց, որ ծերուկը լիովին պատրաստ

է ամեն ինչի, թեկուզ վազել գետակն ու մի քիչ լող տալ։ Այնուամենայնիվ, երևում է, նա ոչ մի բառ չէր լսել։ Եվ հանկարծ հաստատեց այդ բանը. բոլորիս լուսավորելով լայն ժպիտով՝ նա սիգար բռնած ձեռքը բարձրացրեց և մատով բազմանշանակ կտկտացրեց նախ՝ շրթունքներին, ապա՝ ականջին։ Ժեստը այնպիսին էր, ասես խոսքը վերաբերում էր առաջնակարգ մի կառակի, որը նա որոշել է բաժանել մեզ հետ։

Այդ պահին միսիս Սիլսերները արդարև վեր թռավ կողքիս, ցույց տալով, որ ամեն ինչ հասկացել է։ Նա քաբեց հարսի ընկերուհու վարդագույն մետաքսե թևքից ու գոչեց.

— Ես գիտեմ, թե նա ով է։ Խուլուհամար է։ Դա Մյուրիե-վի հոր խուլուհամար հորեղբայրն է։

Հարսի ընկերուհու շրթունքները «Օ»-ի ձև ստացան։ Նա կտրուկ դարձավ ամուսնուն ու գոռաց.

— Թուղթ ու մատիտ ունե՞ս։

Ես ձեռք տվի նրա թևքին ու գոչեցի, որ ինձ մտա կա. Շտապելով ասես անհայտ մի պատճառով, — մեզ համար թանկ էր ամեն մի վայրկյանը, — ես բաճկոնիս ծոցագրպանից հանեցի փոքրիկ բլոկնոտք և Բենիկոգ ամրացի վաշտի գրասենյակի դարակից վերջերս բռնագրաված քիմիական մատիտի մի կրծուկ։

Հնդգծված պարզ ձեռագրով ես թղթի վրա գրեցի. «Շքեթը մեզ ուշացնում է անորոշ ժամանակով։ Ուզո՞ւմ եմք հեռախոս գտնել ու մի որևէ սառը բան խմել։ Չէի՞ք կամենա մեզ հետ գալ»։ Եվ ծալելով տվի հարսի ընկերուհուն։ Նա բացեց այն, կարդաց և տվեց փոքրիկ ձեռուկին։ Սա էլ կարդաց, ժպտաց, նայեց ինձ և ուժգին գլխով արեց։ Ակնթարթորեն որոշեցի, որ դա միանգամայն պերճախոս ու սպառիչ պատասխան է, բայց նա հանկարծ ձեռքը թափահարեց իմ կողմը, ու ես հասկացա, որ խնդրում է բլոկնոտն ու մատիտը իրեն տալ։ Տվեցի բլոկնոտը, չնայելով հարսի ընկերուհուն, որից անհամբերությունը տարածվում էր ալիքներով։ Մերուկը բլոկնոտն ու մատիտը շատ խնամքով տեղավորեց ծնկներին, մի պահ սառեց դեռևս նույն շթուլացող ժպիտը դեմքին. մատիտը վեր բռնած և որոշակիորեն մտքերն ի մի բերելով։ Մատիտն սկսեց շարժվել խիստ անվստահորեն։

Վերջապես երևաց խնամքով դրված վերջակետը: Այնուհետև բլոկնոտն ու մատիտը վերադարձվեցին անձամբ ինձ, սեփական ձեռքս, և ուղեկցվեցին մի բացառիկ ջերմ ու սրտագին գլխի շարժումով: Դեռևս շտրացած տառերը երկու բառ էին արտահայտում՝ «Վերջանիկ կլինեմ»: Հարսի ընկերուհին կարդալով դա իմ ուսի վրայով՝ փնչոցի նման մի ձայն արձակեց, բայց ես անմիջապես նայեցի մեծ գրողի աչքերի մեջ, ջանալով դեմքիս վրա արտահայտել, թե մենք՝ նրա ուղեկիցներս, որքանով ենք հասկանում ինչ բան է իսկական պոեմը և ինչպես անսահմանորեն երախտապարտ ենք նրան:

Մեկ-մեկ, իրար ետևից, մենք դուրս եկանք մեքենայից՝ լքված նավից, Մեդիսոն-ավենյուի կենտրոնում, շիկացած ծովում, փափկած ասֆալտի վրա: Լեյտենանտը մի պահ կանգ առավ, որպեսզի վարորդին բացատրի անձնակազմի խոսվածքային մասին: Հրաշալի հիշում եմ, որ նվագախումբը դեռևս քայլում էր, և դղրդունը ոչ մի բույն չէր դադարում:

Հարսի ընկերուհին ու միսիս Միլսբերնը գլխավորում էին մեր երթը դեպի Շրաֆտա սրճարանը: Նրանք գնում էին առջևից, ինչպես առաջավոր հետախույզներ, Մեդիսոն-ավենյուի արևելյան կողմով, հարավային ուղղությամբ: Ավարտելով իր զեկուլյը վարորդին՝ լեյտենանտը հասավ նրանց ետևից: Ավելի ճիշտ գրեթե հասավ: Նա մի քիչ ետ մնաց, որպեսզի աննկատելիորեն հանի դրամապանակն ու ստուգի, թե որքան փող ունի ձեռքին:

Ես ու Մյուրիելի հոր հորեղբայրը եզրափակում էինք երթը: Զգիտեմ բնազդով զգում էր, որ ես բարեկամ եմ, թե՞ պարզապես այն պատճառով, որ բլոկնոտի ու մատիտի տերն էի, այնուամենայնիվ, նա ոչ թե մոտեցավ, այլ մի տեսակ ձգտում էր դեպի ինձ, ու մենք միասին քայլեցինք: Նրա մետաքսե հիանալի ցիլինդրը հազիվ էր հասնում ուսիս: Ես համեմատաբար դանդաղ էի քայլում, հարմարվելով նրա կարճ-կարճ քայլերին: Մի թաղամաս անցնելուց հետո մենք զգալիորեն ետ մնացինք մյուսներից: Բայց, կարծեմ, դա մեզ առանձնապես չէր հուզում: Հիշում եմ, որ երբեմն մենք նացում էինք մեկմեկու՝ ընկերակցության համար հրճվանքի ու



երախտագիտութեան ասպուշային արտահայտութիւնը դիմք-  
ներս:

Երբ ուղեկցիս հետ վերջապես հասա Շրաֆտա սրճարանի  
պտտվող դռանը, Յոթանասուներորդ փողոցի վրա լեյտե-  
նանտը, նրա կինը և միսիս Սիլսբերնը արդեն կանդնած էին  
այնտեղ: Նրանք սպասում էին մեզ, ինչպես ինձ թվաց, խիտ  
կանգնած և բավական մարտականորեն տրամադրված ջոկա-  
տի նման: Երբ մեր արտաքուտ անհամաչափ ընտրված  
զույգը մոտեցավ, նրանք ընդհատեցին զրույցը: Շատ չէր  
անցել այն ժամանակվանից, երբ մեքենայում նվագախմբի  
դրդողի տակ մի տեսակ ընդհանուր անհարմարավետութեան.  
ես կասեի, ընդհանուր դժբախտութեան, պայմաններում, մեր  
փոքրիկ խմբի մեջ բարեկամական թվացող կապ էր ստեղծ-  
վել, ինչպես Կուկի տուրիստական խմբում, որ սոսկալի տե-  
ղատարափի տակ ընկավ Պոմպեյի ավերակներում: Բայց երբ  
ես ու փոքրիկ ծերուկը մոտեցանք սրճարանի դռանը, անո-  
ղոք պարզութեամբ հասկացանք, որ տեղատարափն ավարտ-  
վել է:

Մենք հայացքներ փոխանակեցինք, ասես ճանաչելով  
մեկս մյուսին, բայց բոլորովին շուրախացանք:

— Վերանորոգման պատճառով փակ է,— չոր հայտա-  
րարեց հարսի ընկերուհին՝ նայելով ինձ: Ոչ պաշտոնապես,  
բայց բավական որոշակիորեն նա հասկացրեց ինձ, որ ես  
այստեղ օտար եմ, ավելորդ, ու այդ պահին առանց մի լուրջ  
պատճառի ես այնպիսի մեծակութիւն զգացի, այնպիսի  
մեկուսացածութիւն բոլորից, որ դեռ չէի զգացել ամբողջ  
օրվա ընթացքում: Եվ հենց այդտեղ էլ,— սա արժե նշել,—  
նոր ուժով բռնեց իմ հազը: Ես գրպանիցս հանեցի թաշկի-  
նակս: Հարսի ընկերուհին դարձավ ամուսնու և միսիս Սիլս-  
բերնի կողմը:

— Ինչ-որ այս կողմերում պետք է լինի «լոնգշտան» սըր-  
ճարանը,— ասաց նա,— բայց թե կոնկրետ որտեղ՝ չգիտեմ:

— Ես էլ չգիտեմ,— ասաց միսիս Սիլսբերնը: Թվում էր,  
թե նա հիմա լաց կլինի: Քրտինքը ծորում էր ճակատից ու  
վերին շրթունքից, նույնիսկ գրիմի հաստ շերտի տակից: Չախ  
ձեռքով նա սեղմել էր իր լաքե սև պայուսակը: Բռնել էր,  
ինչպես սիրած տիկնիկը, ու ինքն էլ նման էր տնից փախած

շատ դժբախտ, անշնորհք և անպարտալից անկի:

— Հիմա ոչ մի գնով տաքսի չես կարող ճարել, — մտալ սասց լեյտենանտը: Նա էլ էր բավականին հալից ընկել: Լոթիավարի դրած հերոս-օդաչուի նրա գլխարկը կծու ծաղր էր թվում գունատ, քրտնած և բոլորովին ոչ խիզախ կերպարանքի վրա, ու հիշում եմ, որ իմ մեջ ցանկութուն առաջացավ գլխարկը նրա գլխից պոկելու կամ գոնե ուղղելու, պակասեցնելու հանդուգն տեսքը. դա նման էր այն մղումին, որ զգում ես մանկական տոնահանդեսների ժամանակ, երբ անպայման մի որևէ սոսկալի տգեղ փոքրիկ ես տեսնում թղթե թասակով, որի տակից ցցված է լինում մեկ կամ հենց երկու ապանշն էլ:

— Օ՛, տեք աստված, այս ինչ օր է, — ի լուր ամենքի հայտարարեց հարսի ընկերուհին: Արհեստական անմոռուկների պսակը արդեն կախվել էր մի կողմի վրա, և նա ամբողջապես ջուր էր դարձել, բայց ինձ թվաց, որ խկապես սուժել է նրա անձի միայն մի շնչին մասը՝ ծաղկեփունջը, որ նա դեռևս բռնել էր ձեռքին: Ծաղկեփունջը որոշակիորեն չէր դիմացել փղթաթխանը:

— Ի՞նչ անենք հիմա, — հարցրեց նա իրեն ոչ յուրահատուկ հուսահատությամբ: — Հո ոտքով չենք գնա: Նրանք գրեթե Ռիվերդեյլի մոտակայքում են ապրում: Գուցե որևէ մեկը մի խորհուրդ կտա:

Նա նայեց սկզբում միսիս Սիլսբերին, հետո՝ ամուսնուն, և, վերջապես, ինչպես երևում է, հուսահատությունից՝ ինձ:

— Այստեղ ոչ հեռու խաբակարան ունեմ, — ասացի հանկարծ խիստ հուզվելով: — Ընդամենը մեկ թաղամաս՝ այն կողմ, ոչ ավելի:

Հիշում եմ, որ ես այդ տեղեկությունը հայտնեցի չափից գալիս բարձր ձայնով: Գուցեև գոռում էի, ով գիտի:

— Իմ և հղբորս բնակարանն է: Քանի դեռ բանակում էինք, այնտեղ քույրս էր ապրում, բայց հիմա նա տանը չէ: Ծառայում է կանանց ծովային ջոկատում և ինչ-որ տեղ է մեկնել: — Ես նայեցի հարսի ընկերուհուն, ավելի ճիշտ նրա կողմը: — Կարող եք այնտեղից զանգահարել, եթե ուզում

եք,— ասացի ես:— Եվ օղափոխութեան լավ սխտեմ է աշխատում այնտեղ: Կարելի է հովանալ, հանգստանալ:

Յնցումից մի քիչ սթափվելով, երեքով՝ լեյտենանտը, նրա կինը և միսիս Սիլսբերնը, բանակցութեան նման մի բան վարեցին, ճիշտ է միմիայն հայացքներով, բայց տեսանելի որևէ արդյունք չհետևեց:

Առաջինը որոշեց գործել հարսի ընկերուհին: Իզուր էր նա փորձում աչքերին նայելով՝ որոշել մյուսների կարծիքը: Հարկ եղավ դիմել ուղիղ ինձ.— Դուք ասացիք այնտեղ հեռախօս կա.— հարցրեց նա:

— Այո, եթե ջուրս պատվիրած չլինի անշատել, բայց հազիվ թե այդպիսի բան արած լինի:

— Իսկ Երտեղից՝ իմանանք, որ ձեր եղբայրն այնտեղ չէ,— ասաց հարսի ընկերուհին:

Իմ բորբոքված ուղեղում այդպիսի միտք չէր էլ կարող ծագել:

— Ձէ, չեմ կարծում,— ասացի ես:— Իհարկե, ամեն բան էլ կարող է պատահել, չէ որ բնակարանը նաև նրանն է. միայն թե չեմ կարծում, որ նա այնտեղ չլինի, չի կարող պատահել:

Հարսի ընկերուհին հայացքը հառեց ինձ. նա խիստ սեփուկ էր նայում, բայց, որքան էլ տարօրինակ լինի, բավական քաղաքավարութեամբ. եթե երեխան հայացքը չի կրտրում քեզնից, դա չի կարելի անքաղաքավարութուն համարել: Ապա, գառնալով ամուսնուն և միսիս Սիլսբերնին, ասաց.

— Քերևս, գնանք: Այնտեղից գոնե հնարավոր կլինի զանգահարել:— Նրանք գլխով արեցին ի նշան համաձայնութեան: Միսիս Սիլսբերնը նույնիսկ կանոններ հիշեց լավ վարմունքի գասագրքից՝ ինչպես պատասխանել սրճարանի գոռն մոտ արված հրավերին: Արևի տակ հավիտե գրիմի տակից ինձ ընդառաջ դուրս եկավ միանգամայն լավ վարմունքի մի թույլ ժպիտ: Հիշում եմ, որ ես շատ ուրախացա դրա համար:

— Դե գնացինք, հեռանանք այս արևից,— ասաց մեր առաջնորդուհին:— Իսկ սրահնք ինչ անեմ:— Եվ պատասխանի շարժանքով նա մոտեցավ ճամփեզրին ու առանց ձևա-

կանությունների թառամած ծաղկեփունջը նետեց առուն:

— Լա՛վ, առաջնորդիր մեզ, Մակդուֆ.— ասաց նա ինձ:—  
Փալիս ենք ձեր ետևից: Մի բան կասեմ միայն, լավ կլինի  
եղբայրդ տանը շի՛նի: Թե չէ ես կսպանեմ այդ վիժված-  
քին:— Նա նայեց միսիս Սիլսբերնին:— Ներեցեք, որ այդ-  
պես արտահայտվեցի բայց կատակ չեմ անում:

Ծնթարկվելով հրամանին՝ ես գրեթե ուրախ առաջ անցաւ:  
Մի րոպե անց օդում, իմ ձախ կողմում, և բավական ցած-  
րում նյութականացավ մետաքսե ցիլինդրը, և իմ անձնական,  
ոչ պաշտոնական, բայց մշտական ուղեկիցը ժպտաց ինձ ներ-  
քնից. առաջին պահ ինձ նույնիսկ թվաց, թե հիմա թաթիկը  
բոխ մեջ է մտցնելու:

Իմ երեք հյուրերը և միակ քարեկամը սպասում էին սանդ-  
ղահարթակում, մինչ ես թուփեի աչքի էի անցկացնում բնա-  
կարանը:

Բոլոր պատուհանները փակ էին: Երկու օդափոխիչն էլ  
անջատված էին, ու երբ շնչեցի օդը, թվաց, թե նստած եմ  
հին մորթե քուրքի գրպանում: Լուսթյունը խախտում էր միայն  
առիթի բերումով գնված հին սառնարանի կցկտուր մուտոցը:  
Իմ քույրիկ Բու-Բուն իր աղջկական ուզմա-ծովային ցրվա-  
ծության պատճառով մոռացել էր այն անջատել: Բնակարա-  
նում տիրող անկարգությունից երևում էր, որ ջահել նավաս-  
տի աղջիկ է գբաղեցրել այն: Կանանց օժանդակ ծառայու-  
թյան միջմանի շքեղ կապույտ կիտելը աստա՛փ վրա ընկած  
էր թախտին: Թախտի առջև գտնվող ցածրիկ սեղանին դր-  
ված էր շոկոլադի կիսատ մի տուփ՝ եղած-չեղած կոնֆետե-  
զենը, հավանաբար փորձելու նպատակով մեկի մէջուկը մի  
քիչ գուրս էր մղված: Գրասեղանի վրա աչքի էր ընկնում բա-  
վական վճռական մի երիտասարդի լուսանկար, որը ես առաջ  
երբեք չէի տեսել: Ու տանը եղած բոլոր մոխրամանները  
զարդարվել էին շքեղ գույներով՝ լեպի-լեցուն շրթնաներկոտ  
քնթուկներով ու ճմրթված թղթե անձեռոցիկներով: Ես շատ  
խոհանոց, ննջարան ու լոգարան, պարզապես աբազ-արեզ  
բացում էի դռները, ստուգելով, թե Սիմոնը որևէ տեղում  
թաքնված չէ՞ արդյոք: Նախ ես թալկացել էի, թուլացել: Երկ-  
րորդն էլ՝ ժամանակ չկար. հարկ եղավ բարձրացնել շիրտա-

վարագույրնհրը, միացնել օդափոխիչ սիստեմը, դատարկել լեփ-լեցուն մոխրամանները: Եվ բացի դրանից, մնացած ամբողջ խումբը արդեն ներս լցվեց իմ ետևից:

— Այստեղ ավելի շոգ է, քան փողոցում, — բարևելու փոխարեն ասաց հարսի ընկերուհին՝ մտնելով սենյակ:

— Հիմա: մի րոպե, — ասացի ես: — Ոչ մի կերպ չեմ կարողանում միացնել այս օդափոխիչը:

Միացման կոճակը մաշվել էր, ու ես չէի կարողանում գլուխ հանել: Մինչ ես, նույնիսկ գլխարկս դեռ չհանած, օդափոխիչով էի զբաղված, մյուսները կասկածամտորեն զննում էին սենյակը: Ես աչքիս պողով նայում էի նրանց: Լեյտենանտը մոտեցավ գրասեղանին ու հայացքը սևեռեց ավելի քան երեք ֆուտանոց պատին, սեղանից վեր, որտեղ ես ու եղբայրս, սենևիմենտալ մղումներից ելնելով, ութ ու տասը հարաբերությամբ բազմաթիվ փայլուն լուսանկարներ էինք կոճզամել պատին: Միսիս Միլբերնը նստեց, ինչպես և կարելի էր սպասել, այն՝ միակ բազկաթոռին, որի վրա սիրում էր քնել իմ հանգուցյալ բուլդոզը. կեղտոտ վելվետով պաստառված բազկակալները ամբողջովին ներծծված էին լորձունքով ու կրծմրծված՝ նրա գիշերային մղձավանջների պահին: Հարսի հոր հորեղբայրը՝ իմ հավատարիմ բարեկամը, անհետ չքվեց: Հարսի ընկերուհին՝ նույնպես:

— Հիմա ես խմելու որևէ բան կպատրաստեմ, — ասացի շփոթված՝ դեռևս զբաղված օդափոխիչի կոճակով:

— Ես մի որևէ սառը բան կխմեի, — ասաց ծանոթ ձայնը: Ես շուռ եկա և տեսա, որ նա մեկնվել է թախտին, դրս համար էլ կորել էր աչքիցս: — Հիմա պիտի զանգահարեմ ձեռհեռախոսով, — նախազգուշացրեց նա ինձ, — բայց այս վիճակում բերանս չեմ կարող բանալ: Ցամաքել է. նույնիսկ լեզուս է չորացել: — Օդափոխիչն աշխատեց բզզոցով, ու ես գնացի սենյակի կենտրոնը, թախտի և բազկաթոռի մեջտեղը, որի վրա նստել էր միսիս Միլբերնը:

— Չգիտեմ այստեղ ինչ կա խմելու, դեռ չեմ նայել սառնարանը, բայց կարծում եմ, որ...

— Բերեք, ինչ ուզում է լինի, — թախտի վրայից խոսքս կտրեց մեր անխոնջ հեռոտորուհին, — միայն թե սառը լինի:

Նրա կոշիկների կրունկները դրված էին քրոջս կիտեւի վրա: Հետքերը խաշել էր կրծքին, գլխի տակ քաշել բազմոցի բարձր:

— Չմոռանաք սառույցը, եթե կա,— ասաց նա ու աչքերը փակեց: Ես թոռացիկ, բայց սպանիչ մի հայացք նետեցի նրա վրա հեւո կոացա և հնարավորին շափ տակտով դուրս քաշեցի Բու-Բուի կիտելը: Արդեն ուզում էի անցնել տանտիրոջ պարտականությունները կատարելուն, բայց հենց որ ոտքս առաջ դրի, ինձ հետ խոսեց լեյտենանտը, որ կանգնած էր գրասեղանի մոտ:

— Որտեղի՞ց եք ճարել այս լուսանկարները,— հարցրեց նա:

Մոռեցա նրան: Անհեթեթ հոգարով զինվորական վիթխարի գլխարկը դեռ գլխիս էր: Մոռացել էի հանել: Կանգնեցի լեյտենանտի կողքին, թեև մի քիչ ետ, ու նայեցի լուսանկարներին: Բացատրեցի, որ դրանք մեծ մասամբ «Խելացի երեխաներ» ծրագրով ելույթ ունեցող երեխաների լուսանկարներն են, երբ ես ու Սիմորը մասնակցում էինք այդ հազորդմանը:

Լեյտենանտը նայեց ինձ.— Իսկ դա ի՞նչ հաղորդում է: Երբեք չեմ լսել: Մանկակա՞ն հաղորդում է, ինչ է: Հարց ու պատասխան:

Ես շէի սխալվում. նրա տոնի մեջ աննկատելիորեն ու համառորեն բանակային առավելության թեթև երանգ էր սողուկում:

Ես հանեցի գլխարկս ու ասացի.— Չէ, ո՛չ բոլորովին:— Իմ մեջ հանկարծ խոսեց տոհմական հպարտությունը:— Այդպես էր մինչև իմ եղբայր Սիմորի մասնակցությունը: Եվ ամեն ինչ էլի այդպես դարձավ ռադիոյից նրա հեռանալուց հետո: Բայց նրա ժամանակ բոլորովին այլ էր ամբողջ ծրագիրը: Նա հաղորդումը վարում էր որպես կլոր սեղանի շուրջ երեխաների հետ տեղի ունեցող զրույց:

Լեյտենանտը նայեց ինձ քիչ ավելի մեծ հետաքրքրությամբ:

- Դո՞ւք էլ էիք մասնակցում,— հարցրեց նա:
- Այո:

Սենյակի մյուս ծայրից, շերեացող փոշոտ ապաստանից, թախտի վրա լսվեց նրա կնոջ ձայնը.

— Մի փորձե՛հին ի՞մ երեխային ստիպել՝ մասնակցել այդ ապուշութեանը, — ասաց նա, — կամ խաղալ բեմում: Ընդհանրապես ելույթ ունենալ: Ծս ավելի շուտ կ՛մեռնե՛ի, քան թույլ կտայի, որ ի՞մ երեխան ց ու ց ա դ ր վ ե ր հասարակութեան առաջ: Այդպիսիների ամբողջ կյանքը տուկնուվրա է լինում: Հենց միայն այն բանը, որ նրանք միշտ աչքի առաջ են, միշտ ռեկլամվում են, ուզածդ հոգեբանին հարցրեք: Մի՞թե այդտեղ կարող է նորմալ մանկություն լինել, ես ձեզ եմ հարցնում:

Կողքի թեքված պսակով նրա գլուխը հանկարծ լույս աշխարհ դուրս եկավ: Ասես կտրված՝ վեր թռավ թախտի թիկնակի ետևից ու աչքերը շոնց ինձ ու լեյտենանտի: Վրա:

— Այ, ձեր եղբայրն էլ այդպիսին է, — ասաց գլուխը, — եթե մարդու մանկությունը ամբողջապես այլանդակված է, նա երբեք իսկականից չի մեծանում: Նա երբեք չի սովորում հարմարվել նորմալ մարդկանց, նորմալ կյանքի: Միսիս Ֆեդերը հենց այդպես էլ ասում էր այնտեղ, ինչ-որ մեկի ապուշ ենջարանում: Հենց այդպես: Ձեր եղբայրը երբեք չի սովորի հարմարվել ուրիշ մարդկանց: Հավանաբար, նա հենց միայն այն կարող է անել, որ ստիպված լինեն մարդկանց դեմքին կարեր դնել: Նա բոլորովին ընդունակ չէ ոչ ամուսնություն, ոչ էլ ընդհանրապես ինչ-որ շափով նորմալ կյանքի: Միսիս Ֆեդերը հենց այդպես էլ ասաց:

Այստեղ գլխի աչքերը ցուարձակեցին լեյտենանտի վրա. — Ճի՞շտ եմ ասում, Բոր: Ասո՞ւմ էր, թե չէ: Ճի՞շտն ասա:

Բայց ձայն հանեց ոչ թե լեյտենանտը, այլ՝ ես: Բերանս ցամաքել էր, քրտինքը տվել վրաս: Ասացի, ես թքել եմ այն ամենի վրա, թե միսիս Ֆեդերը ինչ է բարբաջել Սիմորի մասին: Եվ ընդհանրապես, ինչ-որ նրա մասին բարբաջում են զանազան պրոֆեսիոնալ դիլետանտուհիներ կամ սիրողներ, ընդհանրապես ամեն տիպի շան աղջիկներ: Ծս ասացի, որ տասը տարեկանից սկսած Սիմորին քննադատում էին բոլորը, սկսած բոլոր նահանգների դիպլոմավոր Մտածողներից մինչև տղամարդկանց զուգարանների ինտելեկտուալ ծառայողները: Ասացի, այդ ամենն օրինական կլիներ, եթե Սիմորը

քիթը ցցնր այն բանից, որ միջինից բարձր ընդունակություններ ունի, Բայց նա ատում էր ցուցադրվելու, նա շորեքշաքթի օրվա այդ հաղորդումներին գնում էր ինչպես սեփական անձի թաղմանը: Գնում է քեզ հետ ավտորուսով կամ մետրոյով և լռում ինչպես անհիծված, աստծով եմ երդվում: Ասացի, բուր այդ էժանագին մարդիկ՝ զանազան քննադատներն ու ֆելիետոնիստները, միայն մի բան գիտեին՝ թփթփացնել ուսին, բայց ոչ մեկն այդպես էլ չհասկացավ, թե նա ինչպիսի մարդ է իրականում: Իսկ նա բանաստեղծ է, գրողը տանի գրանց, Հասկանո՞ւմ եք, իսկական բանաստեղծ: Եթե նույնիսկ մի տող էլ չգրեր, դարձյալ բուրդիդ էլ հենց միայն ձախով կծալեր, միայն թե ցանկանար:

Այստեղ ես, փառք աստծո, կանգ առա: Միշտ տրոփում էր չգիտեմ թե ինչի նման, ու եթե ես ներասթեճիկ լինեի, սարսափով կմտածեի, որ «հենց այսպիսի խոսքերից են ծնվում ինֆարկտները»: Մինչև հիմա էլ պատկերացում չունեմ, թե հյուրերս ինչպես արձագանքեցին իմ այդ պոռթկմանը, դաժան մեղադրանքների հեղեղին, որ թափեցի ևս նրանց գլխին: Առաջին ձայնը, որ ստիպեց ինձ սթափվել, դա թափվող ջրի հանրածանոթ աղմուկն էր, որ լսվում էր բնակարանի մյուս ծայրից: Հանկարծ նայեցի շուրջս, հյուրերիս, նրանց կողմը, նույնիսկ նրանց միջոցով:

— Իսկ ծերուկն ո՞ւր է,— հարցրի ես,— ո՞ւր է ծերուկը:— Իմ ձայնը դարձավ հրեշտակային քնքուշ:

Որքան էլ տարօրինակ լինի, պատասխանեց ինձ լեյտենանտը, և ոչ թե նրա կիներ:

— Իմ կարծիքով, զուգարանում է,— ասաց նա: Նա հայտարարեց դա մի առանձին անկեղծությամբ, ասես ընդգծելով, թե ինքը պատկանում է այն մարդկանց շարքին, որոնք առանց ամաչելու խոսում են օրգանիզմի առողջապահական ֆունկցիաների մասին:

— Ա-ա՛,— ասացի ես: Մի քիչ շփոթված աչք ածեցի սենյակը:

Չեմ հիշում, շեմ էլ ուզում հիշել՝ ջանո՞ւմ էի շնկատել հարսի ընկերուհու սպանուալից հայացքները, թե ոչ: Աթոռ-

<sup>1</sup> Մրշափոխված մեքերում «Համլետից»:



ներից մեկի վրա ես նկատեցի հարսի հոր հորնորոր մենտաքս՞  
ցիլինորը: Քիչ էր մնում բարձրաձայն ասելի. «Ողջո՛ւյն»:

— Հիմա մի որևէ սառը բան կրե՞րեմ խմելու,— ասացի  
ես,— մի ըոպի:

— Կարելի՞ է ձեր հեռախոսով զանգահարել,— հանկարծ  
հարցրեց հարսի ընկերուհին, երբ ես անցնում էի թախտի  
մոտով: Եվ նա ոտքերն իջեցրեց հատակին:

— Այո, այո, իհարկե՛ս,— ասացի ես: Ու անմիջապես էլ  
հայացքս ուղղեցի միսիս Սիլսբերնի և լեյտենանտի վրա:—  
Թերևս բոլորիդ համար մեկական «Թոմ Կոլինզ» պատրաս-  
տեմ, եթե, իհարկե՛ս, լիմոն կամ նարինջ գտնվի տանը: Հար-  
մա՛ր է:

Լեյտենանտի պատասխանը ապշեցրեց ինձ իր անսպասե-  
լի ընկերական տոնով. «Շատ լավ կլինի»,— ասաց նա ձեռ-  
քերն իրար շփելով, ինչպես մոլի հարբեցող:

Միսիս Սիլսբերնը դադարեց լուսանկարները դիտել, որ-  
պեսզի վերջին ցուցումը տա ինձ.— Ինձ համար, խնդրում  
եմ, շատ շնչին քանակությամբ ջին կխառնեք, շա՛տ-շատ  
քիչ, խնդրում եմ: Մի կաթիլ, եթե ձեզ համար դժվար չէ:

Ինչպես երևում է, այն կարճ ժամանակամիջոցում, որ  
մենք գտնվում էինք բնակարանում, նա արդեն մի քիչ նա-  
հանջեց: Հավանաբար, այստեղ օգնեց նաև այն հանգաման-  
քը, որ նա կանգնած էր ուղիղ օդափոխիչի տակ, որ ես  
արդեն միացրել էի, և թարմ օդ էր փչում նրա վրա: Ես խոս-  
տացա խմիչքը պատրաստել նրա ճաշակով և նրան թողեցի  
երեսնական, գուցեև քսանական թվականներին ռադիոյով  
ելույթ ունեցող մանր «նշանավոր անձանց» լուսանկարների  
մոտ, իմ և Սիմոնի պատանեկության չքացած սովերների  
մոտ: Լեյտենանտը նույնպես իմ ներկայության կարիքը չէր  
զգում, ձեռքերը ետևը դարսած, քաջատեղյակ սիրողի նման  
նա մենակ գնաց դեպի գրադարակները: Հարսի ընկերուհին  
եկավ իմ ետևից, լայն հորանջեց բերանով մեկ և նույնիսկ  
անհրաժեշտ չհամարեց ոչ զսպել, ոչ էլ քողարկել հորանջը:

Իսկ երբ մոտենում էինք ննջարանին,— հեռախոսն այն-  
տեղ էր,— միջանցքի հեռավոր ծայրից մեր դեմ ելավ հարսի  
հոր հորեղբայրը: Նրա դեմքին նույն խիստ հանգստությունն  
էր, որն այնպես խաբեց ինձ մեքենայի մեջ, քայց մոտենա-

լով, անմիջապես փոխվեց դիմակը: այժմ նրա դեմքը բարձրագույն սիրալիրութուն ու հրճվանք էր արտահայտում: Ես զգացի, որ ինքս էլ եմ մինչև ականջատակերս լայնորեն ժրպտում նրան և ի պատասխան՝ գլխով անում տխմարի նման: Երևում էր, որ նա հենց նոր էր սանրել իր նոսր հերմակ մազերը, թվում էր, նույնիսկ լվացել էր գլուխը, բնակարանի խորքերում հայտնաբերելով թզուկային վարսավիրանոց: Մենք անցանք, բայց ինչ- որ բան ինձ ստիպեց էտ նայել, ու ես տեսա, թե նա ինչպես է թափահարում ձեռքը, իբր, բարի ճանապարհ, շուտ ետ դարձիր: Ես շատ ուրախացա:

— Այդ ինչ է, խելքը թոցրե՞լ է,— ասաց հարսի ընկերուհին: Ես հույս հայտնեցի, որ նա իրավացի է, և նրա առջև քացեցի ննջարանի դուռը:

Նա ծանրորեն փռվեց մահճակալներից մեկին. ի դեպ դա հենց Սիմոնի մահճակալն էր: Հեռախոսը դրված էր երկու մահճակալների միջև, գիշերասեղանին: Ասացի, որ շուտով նրա համար խմելու բան կրերեմ:

— Մի՛ անհանգստացեք, ինքս կգամ,— ասաց էա:— Եվ փակեցեք, խնդրեմ, դուռը, եթե չեք առարկում... Ես ուրիշ բանի համար չեմ ասում, ուղղակի չեմ կարողանում խոսել, երբ դուռը բաց է լինում:

Ասացի, որ ես նույնպես չեմ սիրում այդպիսի բաներ, և ուզում էի գնալ: Բայց մահճակալի մոտից անցնելիս պատուհանի տակ դրված բազմոցի վրա մի պարուսինն պայուսակ նկատեցի: Առաջին պահ թվաց, թե դա իմ ուղեբճոնն է, որ շգիտես ինչպես իր ոտքով այստեղ է հասել Փենսիլվանյան կայարանից: Հետո մտածեցի, որ Բու-Բունն է թողել: Ես մտտեցա պայուսակին: Կայծակ ճարմանդը բացված էր, և, առաջին իսկ հայացքից նկատելով երեսին դրվածը, հակացա եվ է դրա օրինական տերը: Ավելի ուշադիր նայելով, համազգեստի արդուկված երկու վերնաշապիկների վրա դրված տեսա մի բան, որը ոչ մի դեպքում չէր կարելի հարսի ընկերուհու հետ նույն բննյակում թողնել: Հանեցի այն, դրեցի թևիս տակ, ձեռքի: Թափահարումով եզբայրաբար հրաժեշտ տվի հարսի ընկերուհուն, որ արդեն մատը սկավառակի առաջին համարի վրա էր դրել, սպասելով, թե վերջապես երբ դուրս կգամ, ու ծածկեցի դուռը: 2

Ես մի փոքր կանգ առա դռան հտեում, օրհնյալ միայնության մեջ, ու մտածեցի, թե ինչ անեմ Սիմոնի օրագիրը, որը և, — շտապեմ հայտնել, — պայուսակի մեջ հայտնաբերված իրն էր: Առաջին գործնական միտքս այս էր՝ հարկավոր է թաքցնել մինչ հյուրերի գնալը: Հետո մտքովս անցավ տանել լոգարան և թաքցնել կեղտոտ սպիտակեղենի զամբյուղում:

Այդ ամբողջ օրը, տեսնում է անտված, որ ոչ միայն ինչ-որ անսպասելի նախանշանների ու խորհրդանշական երևույթների օր էր, այլև այն կառուցված էր գրավոր խոսքը որպես հաղորդման միջոց լայնորեն կիրառելու հիման վրա: Քեզ գցում ես լեփ-լեցուն մեքենան, իսկ ճակատագիրը արդեն կողմնակի ճանապարհով հոգացել է, որպեսզի մոտոք բլոկնոս: ու մատիտ լինի այն դեպքի համար, եթե ուղևորներից մեկը խուլուհամր դուրս գա: Մտնում ես լոգարան ու անմիջապես նայում: Թե լվացարանակոնքից վեր որևէ խորհրդավոր կամ պարզ գրավոր խոսք չի՞ հայտնվել արդյոք:

Տարիներ շարունակ մեր բազմանդամ ընտանիքը՝ յոթ երեխա, մի լոգարան ունենալու պայմաններում, օգտվում էր մի փոքր մածուցիկ, բայց շատ հարմար հաղորդակցման միջոցից. թաց օձառի կտորով հանձնարարականներ էինք գրում մեկմեկու դեղարկղի հայելու վրա: Սովորաբար մեր գրագրությունը բովանդակում էր խիստ արտահայտիչ խրատներ, երբեմն էլ շքողարկված սպառնալիք. «Բու-Բու, լոգանքից հետո չհամարձակվես ճիլոպը հատակին գցել: Համբուրում եմ. Սիմոն»: «Ուուլթ, քո հերթն է Ջ-ի և Ֆր-ի հետ զրոսնելու: Ես երեկ եմ զրոսնել: Գուշակիր ով է գրել»: «Զորեքշաբթի նրանց հարսանիքի տարեդարձն է: Մի՛ գնա կինո, հաղորդումից հետո մի՛ տնկվիր ստուդիայում, մի՛ ձգտիր տուգանքի: Բադի, դա քեզ էլ է վերաբերում»: «Մայրիկը բողոքում էր, թե Զուին քիչ է մնացել ուտի ամբողջ լուծողականը: Վնասակար բաները մի՛ թողնիր լվացարանակոնքի մեջ, նա կարող է ձեռքը հասցնել և բոլորն ուտել»:

Սրանք մեր մանկությունից բերված օրինակներ են, բայց ավելի ուշ, երբ ես ու Սիմոնը, հանուն անկախության թերևս, առանձնացանք և առանձին սենյակ վարձեցինք, փաստորեն միայն անվանապես կտրվեցինք ընտանեկան հին սովորույթ-

ձերից: Ուզում եմ ասել, որ օճառի կտորտանքը դեռ չէինք  
զգում:

Երբ Սիմոնի օրագիրը ձեռքիս մտա լոգարան ու դուռը  
փակեցի, անմիջապես նկատեցի հայելու վրա գրված ուղերձը:  
Սակայն ձեռագիրը Սիմոնինը չէր, դա որոշակիորեն գրել էր  
իմ քույր Բու-Բուն: Նրա ձեռագիրը սոսկալի մանրատառ էր,  
դժվարընթեռնելի, միևնույն է, դա նրա գրածն էր, օճառի  
կտորով կամ մի որևէ այլ բանով: Եվ կարողացել էր հայելու  
վրա տեղավորել մի ամբողջ ուղերձ. «Մպեղները բա՛րձր,  
ատաղձագործնե՛ր: Գալիս է փեսան Արեոսի նման, որ բարձր  
է ավելի այրերից ամենաբարձր՝ Ողջույն: Ոմն Սաֆո, «էլի-  
զիում» կինոստուդիայի նախկին սցենարիստ: Երջանիկ եղիր,  
երջանի՛կ, երջանի՛կ քո գեղեցկուհի Մյուրիելի հետ: Սա հրա-  
ման է: Կոչումով ես բարձր եմ ձեր բոլորից»:

Պետք է նշել, որ տեքստում հիշատակված կինոսցենա-  
րիստը, տարբեր ժամանակներում և տարբեր հերթականու-  
թյամբ, մեր ընտանիքի բոլոր պատանի անդամների սիրելին  
է եղել, գլխավորապես պոեզիայի հարցում Սիմոնի՝ բոլորիս  
վրա ունեցած անսահմանափակ ազդեցության շնորհիվ: Ես  
ընթերցեցի ու վերընթերցեցի մեջբերումը, հետո նստեցի  
վաննայի եզրին ու բացեցի Սիմոնի օրագիրը:

Այսուհետև տպագրված է Սիմոնի օրագրի էջերի ճշգրիտ  
պատճենը, որ ես կարդացի վաննայի եզրին նստած: Ինձ  
թվում է, կարելի է բաց թողնել ամիս-ամսաթիվը: Իսկական  
է ասել, որ բոլոր գրառումները կատարված են Մոնմաուտ  
ամրոցում, 1941 թվականի վերջում և 1942 թվականի սկզբ-  
բում, հարսանիքի օրը նշանակելուց մի քանի ամիս առաջ:

\*

«Իրիկնային ստուգման ժամանակ շատ ցուրտ էր, և այ-  
նուամենայնիվ, միայն մեր դասակում վեց հոգի վտտ զգա-  
ցին, մինչ նվագախումբը «Աստղային դրոշ» էր նվագում:  
Հավանաբար, կանոնավոր արյան շրջանառութուն ունեցող  
մարդու համար անտանելի է կանգնել «զգաստ» հրամանի

<sup>1</sup> Սաֆոյի բանաստեղծություններից:

տակ, մանավանդ եթե հրացանը պահում ես պատվի առած։  
Ես, հավանաբար, ո՛չ արյան շրջանառութիւնն ունեմ, ո՛չ զար-  
կերակ։ Անշարժութեան հարցում ես ոնց որ տանը լինեմ։  
«Աստղային դրոշի» տեմպը վերին աստիճանի համահնչյուն  
է ինձ։ Դա ինձ համար ռոմանտիկ վալսի ութմ է։

Ստուգումից հետո ազատութիւնն ստացանք մինչև կեսգի-  
շեր։ Ժամը յոթին հանդիպեցի Մյուրիելին, «Բիլթմոր» հյու-  
րանոցում։ Երկու ըմպանակ, ձկնով բուֆետային երկու բու-  
տերբրոդ։ Հետո նա ցանկացավ նայել Գրիբ Գարսոնի մաս-  
նակցութեամբ ինչ-որ մի ֆիլմ։ Մթութեան մեջ նայում էի  
նրան, երբ Գրիբ Գարսոնի որդու ինքնաթիռը շվերադարձավ  
բազա։ Բերանը կիսաբաց է։ Կլանված, հուզված։ Լիակատար  
նույնացում այդ մետրո-հոլդին—մայերովյան ողբերգութեան  
հետ։ Ինձ համար և՛ ուրախալի է, և՛ սահմակեցուցիչ։ Ինչ-  
պե՛ս եմ սիրում նրան, ինչպե՛ս եմ զգում նրա այարդունակ  
հոգու կարիքը։ Նա նայեց ինձ, երբ ֆիլմում երեխաները  
կատվի ձագ բերեցին մորը։ Մ-ն հիանում էր կատվիկով և  
ուզում էր, որ ես էլ հիանամ։ Նույնիսկ մթութեան մեջ ես  
զգում էի նրա սովորական օտարացումը. միշտ այդպես է  
լինում, երբ ես շեմ կարողանում անառարկելիորեն հիանալ  
այն ամենով, ինչով որ նա է հիանում։ Հետո, երբ մենք ինչ-  
որ բան էինք խմում կայարանի բուֆետում, նա ինձ հարց-  
րեց.— Կատվիկը շատ լավն էր, չէ՞։ Արդեն էլ չէր ասում՝  
«սքանչելի էր»։ Ես ե՛րբ հասցրի այդպես վախեցնել նրան,  
որ փոխեց իր սովորական լեքսիկոնը։ Ինչ ես, ողորմելի  
տառակերս, սկսեցի բացատրել, ինչպես Ռ. Գ. Բլայսն է բնո-  
րոշում, թե ինչ բան է սենտիմենտալութիւնը. մենք սենտի-  
մենտալ ենք, երբ որևէ էակի շատ ավելի քնքշանք ենք հատ-  
կացնում, քան նրան հատկացրել է աստված։ Եվ ես ավե-  
լացրի (ուսուցողաբար), որ աստված, անշուշտ, սիրում է  
կատվի ձագերին, սակայն ամենայն հավանականութեամբ,  
առանց ոտքերին կոշիկներ հագցնելու, ինչպես արվում է  
զունավոր ֆիլմերում։ Այդ գեղարվեստական հանգամանքը  
նա թողնում է սցենարիստների հայեցողութեանը։ Մ-ն մտա-  
ծեց, կարծես թե համաձայնեց ինձ հետ, բայց այդ «իմաս-  
տութիւնը» այնքան էլ նրա սրտովը չէր։ Նա նստած՝ գդալով  
խառնում էր խմիչքը և իրեն օտարացած էր զգում։ Նա տագ-

նապում է, երբ նրա սերն իմ հանդեպ մեկ գալիս է, մեկ գնում, մեկ հայտնվում է, մեկ շքանում: Նա կասկածում է իր սիրո ռեալությանը միայն այն պատճառով, որ այդ սերը միշտ չէ, որ ուրախ և հաճելի է, ինչպես կատվիկը: Միայն աստծուն է հայտնի, թե որքան տխուր է դա ինձ համար: Մարդ ինչպես է կարողանում խոսքով արժեզրկել կյանքում ամեն բան»:

«Այսօր ճաշեցի Ֆեդերների տանը: Շատ համեղ էր: Հորթի միս, պյուրե, լոբի, քացախով և ձիթաուլողի յուղով հրաշալի թարմ սալաթ: Քաղցրը Մյուրիելն ինքն էր պատրաստել, ինչ-որ սերուցքով պլոմբիրի նման մի բան, վրան՝ աղնվամորթի Աչքերս լցվեցին արցունքով: (Սալգեն գրում է. «Զգիտեմ ինչու, բայց երախտագիտությունը միշտ զուլալ արցունքի ձևով է հոսում»): Ինձ մոտ սեղանին դրել էին մի շիշ կետչուպ: Հավանաբար Մյուրիելը միսիս Ֆեդերին պատմել էր, որ ես ամեն ինչի վրա կետչուպ եմ լցնում: Ես պատրաստեմ շատ բան տալու, միայն թե լսեմ Մյուրիելը ինչպես է մարտականոթեն հայտնում իր մայրիկին, թե այո, նա նույնիսկ կանաչ ոլոռի վրա կետչուպ է լցնում: Իմ սիրելի՛ ազգիկ»:

«Ճաշից հետո միսիս Ֆեդերը մեզ ստիպեց լսել այն նույն առդիտհաղորդումը: Նրա եռանդը, նրա կլանվելը այդ հաղորդումներով, հատկապես թախիծը այն օրերի հանդեպ, երբ հլույթ էինք ունենում ես ու Բադին, ինձ անհարմար վիճակի մեջ է դնում: Այսօր երեկոյան ծրագիրը հաղորդում էին ինչ-որ ծովային բազայից, գրեթե Սան-Դիեգոյից: Չափից դուրս շատ մանրախնդիր հարց ու պատասխաններ կային: Ֆրանիի ձայնը հարբուխային էր: Զուին թեթևակիորեն ցրված, բայց փայլուն էր: Հաղորդավարը հարկադրեց նրանց խոսել բնականաբան շինարարության մասին, և Բերթերի փոքրիկ դստրիկը ասաց, թե ինքն ատում է միօրինակ տները. նա խոսում էր ստանդարտ շենքերի այն երկար շարքերի մասին, որ կառուցում են պլանով: Զուին ասաց, թե դրանք ռշատ լավն են»: Շատ հետաքրքիր կլիներ, որ գնայիր տուն և պարզվեր, որ դա քո տունը չէ: Ու սխալմամբ ճաշեիր քեզ անձանոթ մարդկանց հետ, քնեիր ոչ քո մահճակալին և

առավոտյան հրաժեշտ տայիր բոլորին, կարծելով, թե դա քո ընտանիքն է: Նա ասաց, թե ինքը կուզեր նույնիսկ, որ աշխարհում բոլոր մարդիկ իրար նման լինեին: Այն ժամանակ ամեն մեկը կկարծեր, թե եկողը իր կինն է, իր մայրն է, իր հայրն է, ու մարդիկ միշտ կփարվեին իրար, կհամբուրվեին անվերջ, ու դա շատ լավ կլիներ»:

«Ամբողջ երեկոյան անտանելի երջանիկ էի: Երբ նստել էինք հյուրասենյակում, ես հիանում էի Մյուրիելի և մոր պարզ ու սովորական փոխհարաբերությամբ: Դա այնպես գեղեցիկ էր: Նրանք գիտեն մեկմեկու թուլութունները, առանձնապես բարձրաշխարհիկ զրույցի հարցերում, ու հայացքով նշաններ էին անում իրար: Միսիս Ֆեդերը հայացքով նախազգուշացնում էր Մյուրիելին, եթե նա զրույցի ընթացքում հարկ հղած «գրական» ճաշակը չէր հանգես բերում, իսկ Մյուրիելն իր հերթին հետևում էր, որ մայրը շատ շտարվի պերճախոսությամբ ու երկարաբանությամբ: Վեճերը հղի շեն մշտական երկպառակության վտանգով, որովհետև նրանք Մայր ու Աղջիկ են: Դա այնպիսի ցնցող, այնպիսի սքանչելի երեւոյթ է: Բայց լինում են պահեր, որ ես նստում եմ հմայվածի պես ու սկսում եմ երազել, որ միսիս Ֆեդեն էլ մասնակցի զրույցին: Երբեմն դա ինձ ուղղակի անհրաժեշտ է: Թե չէ, երբ գնում եմ նրանց տուն, ինձ երբեմն թվում է, թե ընկել եմ երկուհոգիանոց մի բարձրաշխարհիկ վանք, որտեղ մշտական անկարգություն է տիրում: Երբեմն դուրս գալուց առաջ այնպիսի զգացողություն եմ ունենում, կարծես Մ-ն և նրա մայրը գրպաններս հազար ու մի տեսակ օժանելիքների սրվակներ, շրթնաներկ ու դիմաներկ են լցրել, մազերի ցանցեր, կրեմներ քրտինքի և այլնի դեմ: Ես ինձ անսահման պարտավորված եմ զգում, բայց չգիտեմ ինչ անեմ այդ երժվակայական շնորհները»:

«Այսօր մեզ միանգամից ազատ շարձակեցին երեկոյան ստուգումից հետո, որովհետև մեկը ձեռքից զցեց հրացանը, երբ մեզ հրահանգում էր՝ եկվոր բրիտանացի գնեւորալը: Ես չհասցրի նստել 5,52-ի գնացքը և մի ժամ ուշացա Մյուրիելի հետ հանդիպումից: Ճաշ՝ շինական ռեստորանում, 58-րդ փողոցի վրա: Մյուրիելը գրգռված է, գրեթե ամբողջ ճաշի

ընթացքում լաց է լինում, երևում է իսկապես վախեցել է & հուզվել: Նրա մայրը գտնում է, որ ես մտազար տիպ եմ: Հավանաբար, նա իմ մասին խոսել է իր հոգեվերլուծողի հետ, և նա սրա հետ լիովին համաձայն է: Միսիս Ֆեդերը խնդրել է Մյուրիելին նրբորեն տեղեկանալ՝ մեր ընտանիքում հոգեկան հիվանդներ չկա՞ն արդյոք: Կարծում եմ, Մյուրիելն այնքան միամիտ է գտնվել, որ պատմել է, թե իմ ձեռքի վրա ինչ սպիներ են: Իմ խեղճ հրաշալի փոքրիկ: Սակայն Մյուրիելի խոսքերից իմացա, որ ոչ թե դա է նրան անհանգստացնում, այլ բուրոսփին ուրիշ բան: Հատկապես երեք բան: Մեկը ես չեմ էլ հիշատակի. դա նույնիսկ պատմել հնարավոր չէ: Մյուսն այն է, որ իմ մեջ անպայման ինչ-որ աննորմալություն կա, եթե ես մինչև հիմա չեմ գայթակղել Մյուրիելին: Եվ, վերջապես, երրորդը. արդեն մի քանի օր է միսիս Ֆեդերը հետևում է իմ խոսքերին. ես ասել եմ, թե կուզեի լինել սատկած կատու: Անցյալ շաբաթ նա հարցրեց ինձ, թե ինչ եմ մտադիր անել զինվորական ծառայությունից հետո: Մտադիր եմ դասավանդել դարձյալ նույն քոլեջում: Ընդհանրապես վերադառնալով եմ մանկավարժական աշխատանքին: Պատասխանեցի, որ հիմա ինձ թվում է, թե պատերազմը առհասարակ վերջ չի ունենալու և որ միայն մի բան գիտեմ. եթե խաղաղություն լինի, ես կուզեմ սատկած կատու լինել: Միսիս Ֆեդերը ենթադրում է, թե ես սրամտեցի: Նրբորեն սրամտեցի: Մյուրիելի կարծիքով, նա ինձ նրբաճաշակ բան է համարում: Նա իմ լուրջ խոսքերը այն կատակներից մեկն է համարել, որին պետք է պատասխանել թեթևակի երաժշտական ծիծաղով: Իսկ ինձ այդ ծիծաղը մի քիչ շփոթեցրեց: Ես մոռացա նրան բացատրել, թե ինչ եմ ուզում ասել: Միայն այսօր երեկոյան բացատրեցի Մյուրիելին, որ Ձե՛ն աղանդի բուզդայական լեգենդում պատմվում է, թե ինչպես մի ուսուցչի հարցրել են՝ ի՞նչն է աշխարհում ամենաարժեքավոր բանը, և նա պատասխանել է՝ սատկած կատուն, որովհետև այն գին չունի: Մյուրիելը հանգստացավ, բայց ես տեսա, որ նա շտապում է վազել տուն և հավաստիացնել մորը իմ խոսքերի լիովին անվտանգությունը: Նա ինձ տաքսիով տարավ կայարան: Այնքա՞ն սիրալիր էր, տրամադրությունը նկատելիորեն բարձրացավ: Փորձում էր ինձ ժպտալ ու վորեցնել



և մատներով ձգում էր շրթունքներս: Ի՞նչ հրաշալի ծիծաղ  
ունի նա: Օ՛, տեր աստված, որքան երջանիկ եմ նրա հետ:  
Միայն թե նա էլ ինձ հետ այդպես երջանիկ լինէր: Ես ամ-  
բողջ ժամանակ աշխատում եմ զվարճացնել նրան, կարծեմ,  
նրան դուր է գալիս իմ դեմքը, ձեռքերը, ծոծրակը, և նա  
հպարտությամբ է պատմում ընկերուհիներին, որ նշանված  
է Բիլլի Բլեքի հետ, այն նույն Բլեքի, որ երկաբ տարիներ  
ելույթ էր ունենում «Խելացի երեխաներ» ծրագրով: Իմ կար-  
ծիքով, նրան ինձ հետ կապում է մայրական և զուտ կանացի  
զգացումը: Բայց ընդհանրապես ես նրան երջանկացնել չեմ  
կարող: Տեր աստված, տեր աստված, օգնիր ինձ: Միակ և  
բավական տխուր սփոփանքս այն է, որ իմ սիրելին անվե-  
րապահորեն և հավիտենապես սիրահարված է ամուսնության  
ինստիտուտին: Նրա մեջ ապրում է մշտապես սեփական ըն-  
տանիք ստեղծելու պարզունակ բնազդը: Այն, ինչ որ սպա-  
սում է նա ամուսնությունից, և՛ անհեթեթ է, և՛ հուզիչ: Նա  
կցանկանար, ամբողջապես արևառված, գեղեցիկ, մոտենալ  
որևէ հյուրանոցի կլերկին և հարցնել՝ իր Ամուսինը վերցրե՞լ  
է փոստը: Նա ուզում է վարագույրներ գնել: Նա ուզում է  
զգեստներ գնել «պատճառավոր տիկնոջ համար»: Նա ուզում  
է, գիտակցո՞ւմ է այդ բանը, թե ոչ, դուրս գալ հայրական  
տնից, շնայած մոր հետ կապված լինելուն: Նա ուզում է շատ  
երեխաներ ունենալ, գեղեցիկ երեխաներ, նման իրեն և ոչ  
թե ինձ: Ինչպես նաև, զգում եմ, որ նա ուզում է ամեն տարի  
բացել տոնածառի զարդարանքների իր տուփը և ոչ թե մոր:

\*

«Այսօր զարմանալիորեն ծիծաղելի նամակ եմ ստացել  
Բադիից. նա նոր է ավարտել վերակարգը կամբուզում: Գրում  
եմ Մյուրիելի մասին և միշտ մտածում Բադիի մասին: Բադին  
կատեր Մյուրիելին այն բանի համար, ինչի համար սա ուզում  
է ամուսնանալ, ես այդ մասին արդեն գրել եմ: Բայց մի՞թե  
դրա համար կարելի է ատել: Ինչ-որ տեսանկյունից, հավա-  
նաբար՝ այո, բայց ինձ այդ ամենը այնքան մարդկային,  
այնքան գեղեցիկ է թվում, որ նույնիսկ հիմա էլ չեմ կարող  
գրել առանց խորապես, խորապես հուզվելու: Բադին շէր

հաժանի նաև Մյուրիելի մայրիկին: Նա սոսկալի գայրացնում է իր անառարկելիությամբ, իսկ Բաղին այդպիսի կանանց տանել չի կարող: Չգիտեմ, Բագին կհասկանա՞ր, թե նա ինչպիսին է իրականում: Նա մի մարդ է, որ ընդմիջտ զրկված է ամեն տիպի ըմբռնումից, պոեզիան զգալու ճաշակից: Հայտնի չէ, նման տիպերն ինչո՞ւ են ապրում աշխարհում: Իսկ նա ապրում է, վազում է գաստրոնոմները, գնում է իր հոգեվերլուծողի մոտ, ամեն երեկո մի վեպ է կարդում, կորստ է հագնում, հագ է տանում Մյուրիելի առողջությանը, նրա բարօրությանը: Ես սիրում եմ Մյուրիելին: Ես նրան անսահման քաջարի եմ համարում»:

\*

«Ամբողջ վաշան այսօր արձակուրդ չունի: Ծի ամբողջ ժամ հեռախոսի հերթի եմ կանգնել գրասենյակում, որպեսզի զանգահարեմ Մյուրիելին: Նա կարծես թե ուրախացավ, որ այդ երեկո չեմ գնալու: Փա ուրախություն և հիացմունք է պատճառում ինձ: Ամեն մի աղջիկ, եթե նույնիսկ իսկադես լցանկանա տվյալ երեկոն իր փեսացուի հետ անցկացնել, հեռախոսով անպայման ափսոսանք կհայտնի: Իսկ երբ ևս Մյուրիելին ասացի, թե չեմ կարող գնալ, նա ուրախությունից միայն բացականչեց՝ «Աա՛»: Ինչպե՞ս եմ պաշտում այդ պարզությունը, նրա անհավատալի ազնվությունը, Ինչպիսի՞ հուլյսեր եմ կապում նրա հետ»:

\*

«Առավոտյան 3,30 է: Նստած եմ օրապահությունում: Շինելը ուսերիս գցեցի պիժամայիս վրայից ու եկա այստեղ: Հերթապահում է էլը: Ասպեզիս: Նա քնել է հատակին: Կարող եմ նստել այստեղ, եթե նրա փոխարեն ես մոտենամ հեռախոսին: Ա՛յ թե երեկո է, Ճաշին հայտնվեց միսիս Ֆեդերի հոգեվերլուծողը, ընդմիջումներով մինչև տասնմեկն անց կես հարցաքննության ենթարկեց ինձ: Երբեմն շատ խորամանկորեն, ոչ հիմար ձևով: Երկու անգամ ես նույնիսկ ենթարկվեցի նրան: Երևում է նա իմ ու Բաղիի հին երկրպա-

գուներից է: Կարծեմ, նա անձամբ և մասնագիտորեն հետա-  
քրքրվում էր, թե ինչու են ինձ տասնվեց տարեկանում հա-  
նել ծրագրից: Նա ինքը լսել էր Լինքոլնի մասին հաղորդումը,  
բայց այնպիսի տպավորություն էր ստացել, իբր ես հայտա-  
բարել եմ եթերում, որ Լինքոլնի հետխորուրդյան ճառը «վնա-  
սակար է երեխաների համար»: Դա ճիշտ չէ: Ծս նրան բա-  
ցատրեցի, որ ասել եմ, թե երեխաների համար վնասակար  
է այդ ճառն անգիր անել դպրոցներում: Նա այնպիսի տպա-  
վորություն էր ստացել, իբր ես ասել եմ դա ողորմելի ճառ  
էր: Ծս նրան բացատրեցի, որ Հետխորուրդի մոտ սպանվել և  
վիրավորվել են 51,112 մարդ, ու եթե որեէ մեկին վիճակված  
էր ելույթ ունենալ այդ իրագարծություն տարելիցի կապակ-  
ցությամբ, ապա նա պետք է դուրս դար, թափահարեր  
բռնեցքները հավաքվածների վրա ու հեռանար, եթե, իհար-  
կե, հետտորը մինչև վերջ ազնիվ մարդ էր: Նա ինձ չէր առար-  
կում, բայց կարծեա թե որոշեց, որ ես կատարելություն ձեռ-  
տելու կոմպլեքս ունեմ: Նա երկար և բավական խելացիորեն  
խոսեց պարզ, անհրապույր կյանքի մասին, այն մասին, թե  
ինչպես պետք է ընդունել և՛ սեփական, և՛ ուրիշի թույու-  
թյունները: Ծս նրա հեա համաձայն եմ, միայն տեսականոր-  
են: Ծս ինքս ամեն ախպի հանդուրժողականություն եմ ցու-  
ցաբերելու մինչև կյանքիս վերջը, հիմնվելով այն բանի վրա,  
որ դա առողջության գրավականն է, որ դա ինչ-որ խիստ  
ոնալ, նախանձելի երջանկության գրավականն է: Երականում  
հենց դա է Դեոյի ուղին, անշուշտ, ամենաբարձր ուղին: Բայց  
խստապահանջ մարդը այդպիսի բարձունքների հասնելու հա-  
մար պետք է կտրվի պոեզիայից, քայլի պոեզիայի ետևից:  
Որովհետև նա ոչ մի կերպ չի կարող սովորել կամ ստիպել  
իրեն վերացականորեն սիրել վատ պոեզիան, էլ չեմ ասում  
այն հավասարեցնել լավին: Նա հարկադրված կլինի լիովին  
հրաժարվել պոեզիայից: Եվ ես ասացի, որ դա անելը շատ  
դժվար բան է: Դեպքոր Սիմսը ասաց, թե ես շատ կտրուկ եմ  
գնում հարցը, այդպես, նրա խոսքերով, կարող է անել նա,  
ով կատարելության է ձգտում բոլոր հարցերում: Իո՞վ մի՞թե  
ես ժխտում եմ դա»:

«Երևում է, միսիս Տեդերը տազնապահար պատմել է նրան  
Շարլոտայի ինք կարերի ծագման մասին: Հավանաբար, ես

չմտածված կերպով այդ վաղուց անցած գնացած դեպքը պատմել եմ Մյուրիելին: Նա անմիջապես ամեն ինչ տաք-տաք պատմել է մորը: Անշուշտ, ես պետք է բողոքեի, բայց չեմ կարող, ևեղճ Մյուրիելը ինձ լսում է այն դեպքում, երբ ամեն ինչ լսում է և նրա մայրիկը: Բայց ես մտադիր չէի միսոր Սիմսի հետ ծամծամել Շարլոտայի կարերի պատմութիւնը: Համենայն դեպս, ոչ վիսկու սեղանի շուրջ»:

«Այսօր կայարանում ես շատ թե քիչ ավելի հաստատուն խոսք տվի Մյուրիելին, որ օրերս կդիմեմ հոգեվերլուծողի: Սիմսը ասում էր, որ մեր բազայում հրաշալի բժիշկ կա: Հավանաբար, նա ու միսիս Ֆեդերը հաճախ են այդ թեմայով կոնֆերանսներ ունենում: Եվ ինչո՞ւ դա ինձ չի զայրացնում: Զի զայրացնում, ինչ կարող ես անել: Շատ տարօրինակ է: Ընդհակառակը, դա մի տեսակ տաքացնում է ինձ, շփտեմ ինչու: Նույնիսկ հումորիստական ամսագրերի ավանդական յոթանշնեթի հանդեպ ես աղոտ համակրանք եմ զգում: Համենայն դեպս, ես ոչնչով չեմ տուժի հոգեվերլուծողի մոտ գնալով: Մանավանդ, այստեղ, բանակում, դա ճիշտ է: Մ-ն սիրում է ինձ, բայց երբեք իսկական մտերմութիւն չի զգա, երբեք ինձ հետ յուրայինի պես չի լինի, տնավա՞րի, թեթևամիտ, մինչև որ «թեթևակիորեն ինձ շմաքեն»:

«Բայց եթե ես երբևէ դիմեմ հոգեվերլուծողի, ապա. տա աստված, որ նա նախապես կոնսուլտացիայի հրավիրած լինի մաշկագետի: Զեռքերի հիվանդութիւնների մասնագետի: Իմ ձեռքերի վրա որոշ մարդկանց շփումից հետքեր են մնում: Մի անգամ զբոսայգում, երբ Ֆրանսիին դեռ սայլակով էինք ման ածում, ես ձեռքս դրեցի նրա մազառատ գլխին, ու հրեւում է, բավական երկար պահեցի: Մի ուրիշ անգամ էլ Զուլիի հետ կիսո էի գնացել Յոթանասուներկուերորդ փողոցի վրա, սարսափելի ֆիլմ էր ցուցադրվում: Զուլին յոթ տարեկան էր և թաքնվել էր աթոռի տակ, որպեսզի չտեսնի սոսկալի տեսարանը: Ես ձեռքս դրել էի նրա գլխին: Որոշ գլուխներից, որոշակի գույնի և որոշակի ֆակտուրայի մազերից իմ ձեռքի վրա ընդմիշտ հետքեր են մնում: Եվ ոչ միայն մազերից: Մի անգամ Շարլոտան փախչում էր ինձնից,— դա ստուղիայի մոտերքում էր,— ու ես բռնեցի նրա զգեստից, որպեսզի նա

չփախչի, շհեռանա ինձնից: Զգեստը բաց դեղնագույն էր. շթե, ինձ այն դուր էր գալիս, որովհետև կարված էր նրա վրայով: Ու մինչև հիմա իմ աչ ափի մեջ բաց դեղնավուն քիծ է մնացել: Տեր աստված, եթե ես իսկապես ինչ-որ կլինիկական տիպ եմ, ապա, հավանաբար, խելացնոր եմ հակառակ իմաստով: Ես ենթադրում եմ, որ մաշդիկ խոսք-եները մեկ են արել, որպեսզի ես երջանիկ լինեմ»:

\*

Հիշում եմ, ինչպես ծածկեցի օրագիրը, նույնիսկ շրջակացրի «երջանիկ» բառի վրա: Որոշ ժամանակ նստել էի, օրագիրը թևիս տակ դրած, մինչև որ բավական անհարմարություն զգացի վաննայի եզրին երկար նստելուց: Ելա տեղիցս այնպես տաքացած, ասես վաննայից էի դուրս գալիս, ոչ թե պարզապես եզրին նստած էի եղել: Մտտեցա կեղտոտ սպիտակեղենով լեցուն կողովին, բարձրացրի կափարիչը և գրեթե կատաղությամբ տառացիորեն այնտեղ նետեցի Սիմորի օրագիրը, կեղտոտ սավանների ու բարձի Էրեսների մեջ: Հետո առավել գործնական մտքերի բացակայության հետևանքով նորից նստեցի վաննայի եզրին: Մի պահ նայեցի դեղարկղիկի հայելուն, կարդալով Բու-Բուի ուղերձը, հետո վեր կացա ու դուրս գալով լողարանից, այնպես շրխկացրի դուռը, ասես հնարավոր էր ընդմիջտ փակել այդ շինությունը:

Հաջորդ էտապը խոհանոցն էր: Բարեբախտաբար խոհանոցի դուռը բացվում էր միջանցքի վրա, և ես կարող էի մտնել այնտեղ առանց հյուրերի նրեսը տեսնելու: Մտնելով խոհանոց և ծածկելով դուռը՝ հանեցի բաճկոնս, այսինքն՝ գիմնաստյորկաս, ու նետեցի ողորկ սեղանի վրա: Կարծես ամբողջ եռանդս զնաց գիմնաստյորկաս հանելու վրա, և ես միայն շապիկով կանգնեցի կոկտեյլ պատրաստելու հերկուլեսյան սխրանքի առջև: Հետո կտրուկ շարժումով, ասես մեկը հետևում էր ինձ պատի մեջ փորված անտեսանելի անցքից, բացեցի պահարանն ու սառնարանը՝ «Թոմ Կոլինզ» կոկտեյլի անհրաժեշտ բաղադրամասերը՝ որոնելու: Պարզվեց ամեն ինչ կա ձեռքի տակ, լիմոնի փոխարեն նախնի գտա,

ե շուտով պատրաստ էր մի ամբողջ սափոր բավական թունդ խմիչք: Ես պահարանից հինգ բաժակ հանեցի ու սկսեցի որոնել մատուցարանը: Իսկ մատուցարան որոնելը բարդ գործ է, ու ես այնքան փնտրեցի, որ վերջում արդեն հազիվ լսելի տնքոցով էի բացում և փակում զանազան պահարաններն ու պահարանիկները: Բայց այն պահին, երբ, բաճկոնը արդեն հագիս, սափորն ու բաժակները մատուցարանի վրա՝ դուրս էի գալիս խոհանոցից: ասես զլխիս վերևում երևակայական էլեկտրական լամպ վառվեց, ծաղրանկարներում այդպես են պատկերում, որ իբր հերոսի գլխում փայլուն միաք ծագեց: Մատուցարանը դրի հատակին: Վերադարձա խմիչքներով լի պահարանիկի մոտ ու ձեռքս առա վիսկու կիսատ շիշը: Վերցրի բաժակն ու վիսկի լցրի ինձ համար, թերևս, անզգուշաբար, շորս մատ բարձրությամբ: Մի ակնթարթային, թեկուզև կշտամբալից հայացք զցելով բաժակի վրա, ես, որպես կովբոյական ֆիլմերի թրծված հերոս, միանգամից զլխիս քաշեցի: Ծիշտն ասեմ, որ մինչև հիմա էլ առանց ցնցվելու չեմ կարողանում հիշել այդ բանը: Իհարկե, ես ընդամենը քսաներեք տարեկան էի, և վարվեցի այնպես, ինչպես իմ փոխարեն կվարվեր ուզածդ քսաներեք տարեկան վիթխարահասակ տխմարը: Բայց կարևորը բոլորովին էլ դա չէ: Կարևորն այն է, որ ես, ինչպես ասում են, խմող չեմ: Մի ունցիա վիսկուց կամ սիրտս տակնուվրա է լինում, կամ սկսում եմ ներկաների մեջ հերետիկոսներ որոնել: Պատահել է, որ երկու ունցիայից ես մեռածի պես ընկել եմ:

Բայց այս օրը, մեղմ ասած, սովորական օր չէր, ու հիշում եմ, երբ մատուցարանը վերցրի ու դուրս եկա խոհանոցից, իմ մեջ ոչ մի նշանակալից ձևափոխություն չնկատեցի: Թվում էր միայն, որ տվյալ սուբյեկտի ստամոքսում գերբնական ջերմություն է արտադրվում ու վերջ:

Երբ մատուցարանը տարա սենյակ, ոչ մի արտակարգ փոփոխություն չնկատեցի նաև հյուրերի վարմունքի մեջ, բացի մի ոգևորիչ փաստից, որ հարսի հոր հորեղբայրը միացել էր նրանց: Նա սուզվել էր խճր քաղկաթոռի մեջ, որը մի ժամանակ իմ հանգուցյալ բուլդոգի սիրած տեղն էր: Նրա փոքրիկ ոտքերը խաշաձևված էին, մազերը կոկած, դայձածալի

վրայի յուղոտ բիծը նույն ձևով երևում էր և, — ով հրաշք-  
ների հրաշք, — նրա սիգարը ծխում էր: Մենք միմյանց ող-  
ջունեցինք է՛լ ավելի շերմորեն, քան սովորաբար, ասես մեր  
պարբերաբար բաժանումները խիստ երկարատև լինեին և  
դրանց դիմանալն՝ անիմաստ:

Լեյտենանտը դեռևս կանգնած էր գրադարակների մոտ:  
Նա ինչ-որ գիրք էր թերթում և, երևում է, լիովին կլանված  
էր դրանով (ես այդպես էլ չիմացա, թե ինչ գիրք էր): Միսիս  
Միլսբերնը արդեն որոշակիորեն գտել էր իրեն, նրա տեսքը  
թարմ էր, իսկ գրիմի հաստ շերտը նորից էր քաված: Նա  
նստել էր թախտին, հարսի հորեղբորից հեռու քաշված:  
Ամսագիր էր թերթում:

— Օ՛, ինչ սքանչելի բան, — ասաց նա «հյուրի» ձայնով,  
տեսնելով մատուցարանը, որ ես հենց նոր դրել էի սեղանին:  
Նա ժպտաց ինձ բարձրաշխարհիկ սիրալիրությամբ:

— Շատ քիչ եմ լցրել ջինը, — ասացի ես՝ խառնելով սա-  
փորի միջի խմիչքը:

— Այստեղ այնպես զովացել է, այնպես հաճելի է դար-  
ձել, — ասաց միսիս Միլսբերնը: — Ի դեպ, կարելի՞ է ձեզ  
մի հարց տալ:

Եվ նա մի կողմ դրեց ամսագիրը, վեր կացավ և, շրջան-  
ցելով թախտը, մոտեցավ գրասեղանին: Բարձրացնելով ձեռ-  
քը՝ նա մատի ծայրը դրեց մի լուսանկարի վրա. — Ո՞վ է  
այս հիասքանչ երեխան, — հարցրեց նա:

Որակավորված օդի համաշափ ու անընդմեջ ազդեցություն  
տակ թարմ շպարված գրիմով նա այլևս չէր նմանվում մո-  
լորված երեխայի, ինչպիսին թվում էր բարկ արևի տակ,  
սրճարանի դռանը, Յոթանասուներորդ փողոցում: Այժմ նա  
ինձ հետ խոսում էր զուսպ հրաշագեղություններ, Երբ բնորոշ  
էր նրան, երբ մեքենա էինք նստում հարսի տատի տան  
մոտ, այն ժամանակ էր, որ նա հարցրեց, թե ես արդյոք  
Դիքի Բրիգանզան չե՞մ:

Ես դադարեցի կոկտեյլը խառնելուց և մոտեցա նրան: Նա  
իր լաքած եղունգը սեղմել էր մի լուսանկարի, ավելի ճիշտ  
1929 թվականին ռադիոյով ելույթ ունեցող խմբից մի աղջկա  
վրա: Մենք յոթով նստած էինք կլոր սեղանի շուրջը, յուրա-  
քանչյուրիս առջև մի միկրոֆոն կար դրված:

— Կյանքումս այսպիսի հմայիչ երեխա չեմ տեսել, — ասաց միսիս Սիլսբերնը: — Գիտե՞ք մի քիչ ում է նման: Հատկապես աշուկներն ու բերանիկը:

Հենց այդ պահին վիսկին, ոչ ամբողջը, այլ մի մատը միայն, սկսեց ազդել ինձ վրա, և ես քիչ էր մնում պատասխանեի. «Դիքի Բրիգանզային», — սակայն բնազդական զգուշությունս հաղթեց, Ծս գլխով արեցի և տվի այն կինոդերասանուհու ազգանունը, որի մասին հարսի ընկերուհին շատ էր հիշատակել, վերարուժական ինը կարերի կապակցությամբ:

Միսիս Սիլսբերնը զարմացած նայեց ինձ. — Մի՞թե նա էլ էր մասնակցում «սեւլացի երեխաներ» հաղորդմանը:

— Դե, իհարկե, Երկու տարի շարունակ: Տեր իմ աստված, իհարկե, մասնակցում էր: Միայն թե իր իսկական ազգանունով՝ Շարլոտա Մեյհյու:

Այժմ լեյտենանտն էլ կանգնեց իմ ետևում ու սկսեց նայել լուսանկարին: Լսելով Շարլոտայի թատերակսն ծածկանունը՝ նա հեռացավ գրադարակից, որպեսզի նայի՝ լուսանկարը:

— Բայց ես չգիտեի, որ նա մանկության տարիներին հանդես է եկել ռադիոյով, — ասաց միսիս Սիլսբերնը: — Բոլորովին չգիտեի: — Մի՞թե նա երեխա ժամանակ էլ այդպես շնորհալի էր:

— Զէ, նա ավելի շատ շարաճճիութուններ էր անում: Բայց հիմիկվանից վատ չէր երգում: Եվ հետո զարմանալիորեն կարողանում էր ոգեշնչել բոլորին: Սովորաբար նստում էր իմ եղբայր Սիմորի կողքին, միկրոֆոնով սեղանի մոտ, ու հենց որ նրան դուր էր գալիս եղբորս տված որևէ ռեպլիկը, սեղմում էր եղբորս ոտքը: Ինչպես ասենք ձեռքն են սեղմում, միայն թե նա ոտքն էր սեղմում:

Այդ համառոտ զեկույցի ընթացքում ես հենվել էի գրասեզանի մոտ դրված աթոռի թիկնակին: Բայց հանկարծ ձեռքերս սահեցին, ինչպես երբեմն արմունկդ է սահում սեղանին կամ բարի վաճառասեղանին հենված ժամանակ: Քիչ էր մնում հավասարակշռութունս կորցնեի, բայց անմիջապես ուղղվեցի, և ո՛չ միսիս Սիլսբերնը, ո՛չ լեյտենանտը ոչինչ չնկատեցին: Ծս ձեռքերս խաշեցի կրծքիս:



— Պատահել է, որ երեկոները, երբ Սիմորը առանձնապես ոգեշնչված էր լինում, նույնիսկ կաղալով էր տուն գալիս: Ազնիվ խոսք: Շարլոտան ոչ թե հենց այնպես սեղմում էր ոտքը, երբման նա ամբողջ ուժով տրորում էր նրա ոտքի մատները: Սիմորը սիրում էր, որ տրորում են իր ոտքը, նա սիրում էր շարաճճի երեխաներին:

— Ախ, որքա՜ն հետաքրքիր է,— ասաց միսիս Սիլսբերներ:— Բայց ես գաղափար անգամ չեմ ունեցել, որ նա էլ է մասնակցել ռադիոհաղորդումներին:

— Սիմորը նրան ընդգրկեց,— ասացի ես:— Նա ոսկրաբանի աղջիկ էր, պարում էին մեր շենքում, Ռիվերսայդ-Դրայվում:— Ծա կրկին հենվեցի աթոռի թիկնակին և ամբողջ ծանրությամբ ընկա նրա վրա մասամբ հավասարակշռությունս պահպանելու համար, մասամբ էլ որպէսզի այգու ցանկապատի մոտ կանգնած հին երազողի կեցվածք ընդունեմ: Զայնս զարմանալիորեն դուր էր գալիս ինձ:

— Մի անգամ մենք գնդակ էինք խաղում... Զեզ հետաքրքրում է:

— Այո,— ասաց միսիս Սիլսբերներ:

— Մի անգամ դասերից հետո ես ու Սիմոնը գնդակը տշում էինք տան պատին, և մեկ էլ ինչ-որ մեկը (հետո պարզվեց, որ դա Շարլոտան է) սկսեց մարմարե գնդիկներ նետել մեզ վրա տասներկուերորդ հարկից: Այդպես էլ ծանոթացանք: Հենց այդ շաբաթ էլ մենք նրան բերինք ռադիո նույնիսկ շփտեինք, որ նա երգում է: Մեզ պարզապես դուր էր եկել նրա հրաշալի նյույորքյան խոսվածքը: Նա խոսում էր լիկման սթրիտի բնակիչների առոգանությունով:

Միսիս Սիլսբերներ ծիծաղեց այն երաժշտական ծիծաղով, որը տեղնուտեղը սպանում է ուզածդ զգայուն պատմողին, և՛ ապակու պես սթափ մարդուն, և՛ ոչ սթափին: Հավանաբար, նա սպասում էր, որ ես ավարտեմ խոսքս. շտապում էր լեյտենանտին հարցնել իրեն տանջող մի բան:

— Ասացեք, ո՞ւմ է նման նա,— հարցրեց համառորեն:— Հատկապես բերանն ու աչքերը: Ո՞ւմ է հիշեցնում:

Լեյտենանտը նայեց նրան, ապա լուսանկարին.— Դուք ուզում եք ամել ա՞յս լուսանկարում, երեխա ժամանակ, թե հիմա, կինոյում: Ինչի՞ մասին է խոսքը:

— Թերևս և՛ հիմա, և՛ այն ժամանակ: Բայց հատկապես այս լուսանկարում:

Վեյտենանտը լուսանկարին նայեց բավական խստությամբ, ինչպես ինձ թվաց, ասես ոչ մի կերպ չէր հաշտվում, որ միսիս Սիլսբերնը, կին, այն էլ ոչ զինվորական, ստիպում էր իրեն ուսումնասիրել մի լուսանկար:

— Մյուրիելին, — ասաց նա հատ-հատ, — այստեղ նման է Մյուրիելին: Ե՛վ մազերը, և՛ ամեն ինչը:

— Այ ճիշտ է՛, — ասաց միսիս Սիլսբերնը: Նա դարձավ իմ կողմը: — Այո, ճիշտ և ճիշտ նրան, — կրկնեց նա: — Դուք ծանոթ եք Մյուրիելին: Ուզում եմ ասել, նրան տեսե՛լ եք այսպիսի սանրվածքով, գիտե՞ք, մազերը ամրացված այսպիսի շքեղ...

— Առաջին անգամ միայն այսօր տեսա Մյուրիելին, — ասացի ես:

— Այդ դեպքում պարզապես հավատացեք ինձ, — և միսիս Սիլսբերնը ցուցամատով բազմանշանակորեն սկսեց ցուցաբերել լուսանկարին: — Այդ աղջիկը կարող էր լինել Մյուրիելի կրկնօրինակը այն տարիներին: Ինչպես ջրի երկու կաթիլ:

Վիսկին համառորեն հաղթում էր ինձ, և ես ոչ մի կերպ չէի կարողանում լիովին ըմբռնել այդ ինֆորմացիան և, իհարկե, չէի կարող նախագուշակել դրանից արվող բոլոր հնարավոր եզրակացությունները: Վերադարձա սեղանի մոտ, խիստ ջանք թափելով, որպեսզի ուղիղ քայլեմ, և նորից սկսեցի խառնել կոկտեյլը: Երբ հայտնվեցի հարսի հոր հորեղբոր կողքին, նա, ջանալով գրավել իմ ուշադրությունը, ողջունեց իմ մոտենալը, բայց ես այնքան զբաղված էի Մյուրիելի և Շարլոտայի նմանության մասին արված ենթադրությամբ, որ չպատասխանեցի նրան: Բացի այդ, գուլիս թեթևակի պատվում էր: Կոկտեյլը խառնելու անզուսպ ցանկություն էր արթնացել իմ մեջ:

Երկու ընկալեց, երբ սկսեցի լցնել խմիչքը, միսիս Սիլսբերնը նորից դիմեց ինձ հարցով: Նա ուղղակի երգեց, այնքան որ երաժշտական հնչեց նրա ձայնը:

— Ասացեք, իսկ շատ-շատ վատ կլինի իմ կողմից, եթե հարցնեմ այն դեպքի մասին, որ հիշատակեց միսիս Բերվիլը: Ես այն ինը կարերի մասին եմ ասում, հիշո՞ւմ եք,

նա պատմում էր: Չեր եղբայրը, հավանաբար, պատահմամբ է հրել նրան:

Ես ցած դրի սափորը, որը ինձ շատ ծանր ու անհարմար թվաց, ու նայեցի միսիս Սիլսբերնին: Որքան էլ տարօրինակ լինի, շնայած թեթևակի գլխապտույտին, ես զգացի, որ նույնիսկ հեռավոր իրերը բոլորովին շեն մշուշվում աչքիս: Ընդհակառակը, միսիս Սիլսբերնը, որ կանգնած էր սենյակի կենտրոնում, աներեսաբար, ասես ֆոկուսի մեջ առնված, առանձնանում էր շրջապատող ամեն ինչից:

— Ո՞վ է միսիս Բերվիկը, — հարցրի ես:

— Ի՞նչ կինը, — պատասխանեց լեյտենանտը մի քիչ կրքկրտուր. նա ինձ նայում էր ինչպես մի հոգուց բաղկացած հանձնաժողով, որ կոչված է ստուգելու, թե ինչո՞ւ եմ այդպես դանդաղ լցնում կոկտեյլը:

— Այո, այո. իհարկե, — ասացի ես:

— Ինչ բան էր դա, դժբախտ դե՞պք, — պնդեց միսիս Սիլսբերնը: — Չէ՞ որ նա դիպմամբ չի խփել: Թե՞ դիտմամբ է...

— Ինչպիսի՞ հիմարություն, միսիս Սիլսբերն:

— Ինչ ասացի՞ք, — սառը նետեց նա:

— Ներեցեք: Ուշադրություն մի՞ դարձրեք: Ես մի քիչ հարբել եմ: Խոհանոցում մի քիչ խմեցի, հինգ ռոպե առաջ:

Հանկարծ ընդհատեցի խոսքս ու կտրուկ շուռ եկա: Միջանցքում ծանոթ վճռական քայլերից ճռճուց գորգածածկ հատակը: Քայլերը նպատակասլացորեն գալիս, մոտենում էին մեզ, ու մի ռոպե անց հարսի ընկերուհին ներս ընկա՞վ սենյակ:

Նա շնայեց ոչ մեկին. — Վերջապես հաջողվեց զանգել, — ասաց նա զարմանալիորեն միապաղաղ ձայնով, առանց որևէ ճնշումի, — գրեթե մի ժամ փորձում էի: — Նրա դեմքը լարվել էր, կարմրատակել, ասես ուր որ է պայթելու էր: — Սա՞ոն է, — հարցրեց նա և առանց կանգ առնելու, շսպասելով պատասխանի, մոտեցա՞վ սեղանին: Վերցրեց այն միակ բաժակը, որ հասցրել էի լցնել, և ազահաբար, միանգամից խմեց: — Կյանքումս այդպիսի շոգ սենյակում չեմ եղել, — ասաց նա, առանց որևէ մեկին դիմելու և դատարկ բաժակը դնելով սեղանին: Նա անմիջապես էլ վերցրեց սափորը և նո-

բից կիսով շափ լցրեց՝ ուժգին զնգզնգացնելով սառույցի կտորները:

Միսիս Սիլսբերնը անմիջապես հայտնվեց սեղանի մոտ:— Ի՞նչ ասացին,— անհամբեր հարցրեց նա:— Դուք Ռեայի հե՞տ խուսեցիր:

Հարսի ընկերուհին նախ խմեց, բաժակը ցած դրեց, հետո ասաց.— Բ ու լ ո Ր ի հ ե տ է ի խոսեցի:— Եվ «Բուրի հետ» բառերն ընդգծեց, թեև առանց իրեն հատուկ թատերայնության: Նայելով նախ՝ միսիս Սիլսբերնին, ապա՝ ինձ, և հետո՝ լեյտենանտին, նա ավելացրեց.

— Կարող եք հանգստանալ, ամեն ինչ լալ է և բարեհաջող:

— Ի՞նչ է նշանակում դա, Ի՞նչ է պատահել,— խստորեն հարցրեց միսիս Սիլսբերնը:

— Նշանակում է, որ փեսան այլևս չի տառապում երջանկով թյուրեմից:

Հարսի ընկերուհու ձայնի մեջ կրկին սովորական ջեշտեր հայտնվեցին:

— Այդ ինչպե՞ս: Այդ՝ ո՞ւմ հետ խոսեցիր,— հարցրեց լեյտենանտը:— Դու միսիս Ֆեդերի հե՞տ ես խոսել:

— Աւացի, չէ՞, որ բուրի հետ էլ խոսել եմ: Բուրի հետ, բացի այդ հիասքանչ հարսից: Նա փախել է փեսայի հետ:

Հարսի ընկերուհին նայեց ինձ.— Այս ինչքա՞ն շաքար եք լցրել մեջը,— զայրույթով հարցրեց նա:— Այնպիսի համուսնի, ասես...

— Փախել է,— հառաչեց միսիս Սիլսբերնը՝ ձեռքերը սեղմելով կրծքին:

Հարսի ընկերուհին միայն նայեց նրան.— Իսկ ձե՞զ ինչ: Մի՞ հուզվեք, ավելի երկար կապրեք:

Միսիս Սիլսբերնը ակամա ետ գնաց դեպի թախտը: Ես էլ, ի դեպ, ետ քաշվեցի: Հայացքս չէի կտրում հարսի ընկերուհուց, միսիս Սիլսբերնը նույնպես ակնդետ նրան էր նայում:

— Երևում է, այդ փեսան նստած է եղել նրանց տանը, երբ սրանք գնացել են տուն: Մյուրիեիը հանկարծ վերցրել է փոքրիկ ճամպուկը, և նրանք անմիջապես մեկնել են, ահա և բուրը:— Հարսի ընկերուհին պերճախոս թոթվեց

ուսերը: Վերցնելով բաժակը՝ նա խմեց մինչև վերջը:— Համե-  
նայն դեպս, բոլորիս հրավիրում են հարսանիքի, կամ ինչ-  
պես է կոչվում դա, երբ հարսն ու փեսան փախչում են: Որ-  
քան որ հասկացա, հիմա այնտեղ մեծ բազմութուն կա: Ծվ  
հեռախոսով բոլորի ձայներն էլ շատ ուրախ էին:

— Ասում ես խոսեցիր միսիս Ֆեդերի՞ հետ: Նա քեզ  
ի՞նչ ասաց, — հարցրեց լեյտենանտը:

Հարսի ընկերուհին բավական խորհրդավոր ձևով տա-  
րուբերեց գլուխը:— Նա սքանչելի է: Տեր աստված, ինչպի-  
սի՞ կին է: Խոսում էր միանգամայն հանգիստ ձայնով: Որ-  
քան հասկացա նրա խոսքերից, այդ Սիմորը խոստացել է  
խորհրդակցել հոգեվերլուծողի հետ, որպեսզի մի տեսակ  
ուղղվի:

Նա կրկին թոթվեց ուսերը:— Ո՞վ է իմանում: Գուցեև  
ամեն ինչ հարթվում է: Ծա ուղղակի շշմել եմ, չեմ կարողա-  
նում մտածել:— Նա նայեց ամուսնուն:— Գնանք այստե-  
ղից: Ո՞ր է քո գլխարկը:

Դեռ ուշքի չէի եկել, որ հարսի ընկերուհին, լեյտենանտը  
և միսիս Սիլսբերնը իրար ետևից գնացին դեպի ելքը, իսկ  
ես, տանտերս, վերջափակում էի երթը: Ծա արդեն շատ էի  
օրորվում, բայց ոչ մեկը ետ չնայեց, դրա համար էլ չնկա-  
տեցին, թե ինչ վիճակում եմ գտնվում:

Լսեցի, թե ինչպես միսիս Սիլսբերնը հարցրեց հարսի ըն-  
կերուհուն:— Գուք գնալո՞ւ եք այնտեղ:

— Ճիշտն ասած, չգիտեմ, — լսեցի պատասխանը:— Եթե  
գնանք էլ, ապա մի երկու րոպեով:

Լեյտենանտը կանչեց վերելակը, և երեքն էլ քարե ար-  
ձանի պես հայացքները հառեցին ցուցանակին: Թվում էր,  
թե բառերն ավելորդ են: Ծա կանգնել էի բնակարանի շեմ-  
քին, վերելակից մի քանի քայլի վրա, ու անիմաստ ձևով  
առաջ էի նայում:

Վերելակի դուռը բացվեց, և բարձր կանչեցի. «Ցտեսու-  
թյուն», ու երեքն էլ միանգամից շրջեցին գլուխները. «Ցտե-  
սություն, ցտեսություն», — ասացին նրանք, իսկ հարսի ըն-  
կերուհին կանչեց. «Շնորհակալություն հյուրասիրության հա-  
մար», ու դուռը փակվեց:

\*

Անհաստատ քայլերով ես վերադարձա իմ բնակարանը՝ ջանալով քայլելիս արձակել բաճկոնիս կոճակները կամ մի կերպ հանել այն:

Իմ վերադարձը ոգևորությամբ ողջունեց մնացած միակ հյուրս. ես բոլորովին մոռացել էի նրա մասին: Երբ ներս մտա, նա ինձ դիմավորեց լիքը բաժակով: Ավելին, նա ուղղակի թափահարում էր բաժակը, միաժամանակ գլխով իմ կողմը ցույց տալով և քմծիծաղելով, ասես, վերջապես վրահասավ այն երկար սպասված երջանիկ վաչրկյանը. որին այնպես սպասում էինք մենք: Ես ոչ մի կերպ չէի կարողանում նրան պատասխանել նույնպիսի ժպիտով: Սակայն հիշում եմ: որ թփթփացրի ուսին: Հետո ծանրորեն նստեցի թոխտին, նրա դիմաց, և վերջապես ինձ հաշողվեց արձակել կոճակներս:

— Իսկ դուք տուն ունե՞ք, — հարցրի ես նրան: — Ո՞վ է խնամում ձեզ: Զբոսայգու ազգայիններ՞ըր, ինչ է:

Ի պատասխան իմ այդքան պրովոկացիոն հարցի, հյուրս կրկին արտակարգ ոգևորությամբ բաժակ բարձրացրեց իմ պատվին, բռնելով այնպես, ասես դա գարեջրի գովաթ էր: Ես փակեցի աչքերս և պառկեցի թախտին՝ ոտքերս ցցելով օւ մեկնվելով: Բայց դրանից սենյակը պտտվեց կարուսելի նման: Կրկին նստեցի, թափով ոտքերս իջեցրի հատակին և կարուկ շարժումից քիչ մնաց կորցնեմ հավասարակշռությունս: հարկ եղավ բռնել սեղանից, որպեսզի չբնկնեմ: Մի պահ ես նստել էի կռացած, աչքերս փակ: Հետո, առանց վեր կենալու, ձնքս մեկնեցի սափորին, սառցի խորանարդիկներով լի խմիչքը թափթփելով սեղանին և հատակին: Ես մի քիչ նստեցի լիքը բաժակը ձեռքիս, ապա, առանց մի կում անելու, դրձցի ուղիղ սեղանի կենտրոնում առաջացած լճակի մեջ:

— Պատմե՞մ ձեզ, թե Շարլոտայի ինը կարերն ինչպես են առաջացել. — հարցրի ես հանկարծ: Ինձ թվաց, թե ձայնս միանգամայն կանոնավոր է հնչում: — Մենք ապրում էինք լճի մոտ: Միմորը նամակ գրեց Շարլոտային, հրավիրեց նրան մեզ մոտ հյուր, և, վերջապես, նրա մայրը թույլ տվեց:

Եվ ահա նա մի անգամ նստել էր ճամփի մեջտեղը, շոյում էր մեր Բու-Յուի կատվիկին, իսկ Սիմորը քար նետեց նրա վրա: Սիմորը տասներկու տարեկան էր: Ահա և բոլորը: Իսկ նա քար նետեց, որովհետև Շարլոտան այդ կատվիկի հետ ճանապարհի վրա շատ լավիկն էր: Եվ բոլորն էլ հասկացան այդ բանը, գրողը տանի ինձ, և՛ հս, և՛ Շարլոտան ինքը, և՛ Բու-Յուն, և՛ Ուեյթերը, և՛ Ուոլթը, ամբողջ ընտանիքը:

Ես աչքս գցեցի կապույտ մոխրամանին, որ դրված էր սեղանի վրա:

— Շարլոտան կյանքում ոչ մի անգամ նրան չի հիշեցրել այդ բանը: Ո՛չ մի անգամ:

Նայեցի հյուրիս, ասես սպասելով, որ նա կսկսի առարկել, ինձ ստախոս կկոչի: Իհարկե, ստում էի: Շարլոտան այդպես էլ չհասկացավ, թե Սիմորն ինչու քարով խփեց իրեն: Բայց իմ հյուրը ոչինչ չէր վիճարկում: Ընդհակառակը: Նա ժպտով հավանություն էր տալիս ինձ, կարծես թե ասածս ամեն մի խոսքը նրա համար անառարկելի ճշմարտություն էր: Այնուամենայնիվ, ես երա ու դուրս եկա սենյակից: Հիշում եմ, որ գնալիս քիչ էր մնում վերագառնամ և հատակից վերցնեմ սառույցի երկու խորանարդիկները, բայց դա այնքան դժվար թվաց, որ շարունակեցի ճանապարհոս և դուրս եկա միջանցք: Անցնելով խոհանոցի մոտից, ես հանեցի, ավելի ճիշտ վրայիցս պոկեցի բաճկոնս ու նետեցի հատակին: Այդ պահին ինձ թվում էր, թե ճիշտ այդտեղ եմ դրել հագուստներս ամբողջ կյանքիս ընթացքում:

Լոգարանում մի քիչ կանգնեցի սպիտակեղենի զամբյուղի մոտ. վերցնե՞մ, թե չվերցնեմ Սիմորի օրագիրը, շարունակե՞մ կարդալ, թե չէ: Չեմ հիշում, ինչպիսի փաստարկներ էի բերում «հօգուտ» ընթերցման և ինչպիսի՝ դեմ, բայց ի վերջո բացեցի զամբյուղը և օրագիրը հանեցի: Նորից ձեռքս առած նստեցի վաննայի եզրին ու սկսեցի թերթել, մինչև որ հասա Սիմորի վերջին գրառմանը:

«Ջինվորներից մեկը հենց նոր կրկին զանգահարեց օդանավակայանի տեղեկատուին: Եթե հղանակը, շարունակի պարզել, լուսադեմին մենք կարող ենք թռչել: Թայենհեյմն ասաց. հարկ չկա նստել, ինչպես ասեղների վրա: Զանգա-

հարեցի Մյուրիելին, ամեն ինչ բացատրեցի, Շատ աարօրինակ էր: Նա մոտեցել էր հեռախոսին և անընդհատ մի բան էր ասում. «Ալլո՛, ալլո՛»: Իսկ իմ ձայնը կտրվել է: Քիչ էր մնում նա կախի լսափողը: Գոնե մի քիչ հանգստանալի: Օպենհեյմը որոշեց մի քիչ քնել, մինչև որ հայտարարեն մեր երթուղին: Ինձ էլ է անհրաժեշտ քնել, բայց հս շատ եմ լարվել: Ես հիմնականում զանգահարեցի Մյուրիելին, որպեսզի խնդրեմ, աղերսեմ նրան պարզապես երկուսով գնանք մի որևէ տեղ և պսակվենք: Ես շատ եմ լարվել ու հոգնել, այնպես որ շեմ կարող մարդկանց մեջ երևալ: Ինձ թվում է, թե հիմա իմ երկրորդ ծնունդն է: Սուրբ, սրբազան օր: Այնքան վատ էր լավում, ես էլ հազիվհազ էի կարողանում խոսել, երբ մեզ միացրին: Ի՞նչ սարսափելի է, երբ ասում ես՝ ես քեզ սիրում եմ, իսկ մյուս ծայրից ի պատասխան գոռում են՝ «ի՛նչ, ի՛նչ»: Ամբողջ օրը հատվածներ եմ կարդացել վեդանտից: «Ամուսնացողները պետք է ծառայեն մեկմեկու: Բարձրացնեն, աջակցեն, սովորեցնեն, ամրապնդեն մեկը մյուսին, բայց ամենից շատ ծառայեն մեկը մյուսին: Երեսխաներին դաստիարակեն ազնվորեն, սիրով ու խնամքով: Երեսխան հյուր է տանը, նրան պետք է սիրել և հարգել, բայց շիշխել վրան, որովհետև նա պատկանում է աստծուն»: Ի՞նչ հոյակապ է, ի՛նչ խելացի, ի՛նչ դժվար ու գեղեցիկ է, և դրա համար էլ արդարացի: Կյանքումս առաջին անգամ զգում եմ պատասխանատվության հրճվանքը: Օպենհեյմն արդեն խոմփացնում է: Ինձ էլ է անհրաժեշտ քնել: Չեմ կարողանում, որևէ մեկը պետք է որ արթուն մնա երջանիկ մարդու հետ»:

✱

Ես միայն մեկ անգամ կարդացի այս գրառումը, փակեցի օրագիրը, տարա ննջարան և զցեցի Սիմսրի պայուսակի մեջ, որ դրված էր պատուհանի մոտ, բազմոցի վրա: Եվ հետո ընկա, ավելի ճիշտ ինքս փովեցի մոտակա մահճակալին: Ինձ թվաց, որ քնեցի կամ կորցրի գիտակցությունս ավելի շուտ, քան հավելցի անկողնուն:

Երբ մեկուկես ժամ հետո արթնացա, գլուխս պայթում



էր ցավից, բերանս ցամաքել էր: Ննջարանում գրեթե մութն էր: Հիշում եմ, որ բավական երկար նստեցի մահճակալի եզրին: Հետո ծարավից տանջված վեր կացա և դանդաղ զնացի դեպի մյուս սենյակը, հույս ունենալով, որ այնտեղ, սափորի մեջ որոշ սառը բան մնացած կլինի:

Իմ վերջին հյուրը, հավանաբար, ինքն էր դուրս եկել տնից: Միայն դատարկ բաժակն ու կապարե մռխրամանի մեջ սիգարի մնացորդն էին հիշեցնում նրա գոյության մասին: Ես մինչև այսօր էլ մտածում եմ, որ այդ սիգարի մնացորդը հարկավոր էր հենց այն ժամանակ ուղարկել Սիմոնին. հարսանեկան բոլոր նվերներն էլ սովորաբար անիմաստ են լինում: Պարզապես սիգարի քնթուկ՝ մի ոչ մեծ, գեղեցիկ տուփի մեջ: Կարելի էր նաև մի շգրված թղթի կտոր գնել բացատրության փոխարեն:

Հյուրանոցում իննտունյոթ նյույորքցիներ էին ապ-  
րում, ոեկլամի գործակալներ, ու այնպես էին ծանրաբեռ-  
նել միջքաղաքային հեռախոսը, որ 507-րդ համարի երիտա-  
ռարդ կինը ստիպված եղավ սպասել կես օր, գրեթե մինչև  
երկուս անց կեսը, մինչև որ նրա պատվերը միացրին: Բայց  
ևս ժամանակն իզուր չէր կորցնում: «Սեքսը կամ հաճույթ  
է, կամ դժոխք» վերնագրով մի փոքրիկ հոդված կարդաց  
կանանց ամսագրում, որ գրպանի գրքույկի շափսեր ուներ:  
Լվաց սանրերը և խոզանակը, մաքրեց բեժագույն կոստյումի  
վրայի բիծը, ուղղեց պատրաստի գնված բլուզի կոճակի տե-  
ղը: Պոկեց խալի վրա բուսած երկու մազը: Ու երբ, վերջա-  
պես, հեռախոսավարուհին զանգահարեց, նա բազմոցին նըս-  
տած արդեն ավարտում էր ձախ ձեռքի եղունգների լաքա-  
պատումը:

Բայց նա այնպիսիներից չէր, ովքեր մի կողմ են նետում  
գործը մի ինչ-որ հեռախոսային զանգի պատճառով: Նրա  
տեսքից կարելի էր կարծել, թե նրա մեծանալուց ի վեր այդ-  
պես անընդմեջ զանգահարել է հեռախոսը:

Հեռախոսը գնում էր, իսկ նա փոքրիկ վրձինով լաք էր  
թաում ճկույթի եղունգին, խնամքով շրջանցելով լուանիկը:  
Հետո ամրացրեց լաքի սրվակի կափարիչը և, ոտքի կանգ-  
նելով, օդում թափահարեց ձախ, դեռևս չշորացած ձեռքը:  
Մյուսով, որ արդեն շորացել էր, բազմոցի վրայից վերցրեց  
լիբր մոխրամանը և գնաց դեպի գիշերասենյանը. հեռախոսն

այնտեղ էր դրված: Նստելով լայն, արդեն կարգի բերված անկողնու եզրին, հինգերորդ թի վեցերորդ ազդանշանից հետո վերցրեց հեռախոսափողը:

— Ալո,— ասաց նա, իրենից հեռու պահելով ձախ ձեռքի շոված մատնեքը և ջանալով դրանք շհպել սպիտակ մետաքսե խալաթին. նրա հագին, բացի կոշիկներից, ուրիշ բան չկար, մատանիները դրված էին լոգարանում:

— Միացնում եմ Նյու-Յորք, միսիս Գլաս,— ասաց հեռախոսավարուհին:

— Լավ, շնորհակալություն,— ասաց ջահել կինը և մոխրամանը դրեց գիշերասեղանի վրայ:

Լսվեց կանացի ձայն.

— Մյուրիե՞լ: Դո՞ւ ես:

Երիտասարդ էակը լսափողը հեռացրեց ականջից.— Այո, մայրիկ: Բարև, ինչպե՞ս եք դուք այդտեղ:

— Սոսկալի անհանգիստ եմ քեզ համար: Ինչո՞ւ չէիր զանգահարում: Ինչպե՞ս ես, Մյուրիե՞լ:

— Ես երեկ էլ, նախորդ օրը երեկոյան էլ փորձեցի զանգահարել, բայց հեռախոսն այստեղ...

— Հը, ինչպե՞ս ես, Մյուրիե՞լ:

Մյուրիե՞լը մի քիչ էլ լսափողը ետ քաշեց ականջից:

— Հիանալի: Միայն սոսկալի շոգ է: Ֆլորիդայում այսպիսի շոգ դեռ չի եղել...

— Ինչո՞ւ չէիր զանգահարում, այնպես անհանգիստ էի, որ...

— Մայրիկ, սիրելիս, մի՛ գտռա, ես հրաշալի լսում եմ քեզ: Երկու անգամ փորձել եմ զանգահարել: Եվ անմիջապես...

— Ախր ես երեկ հայրիկիդ ասացի, որ երևի երեկոյան զանգ կտաս: Չէ, նա, միևնույն է... Ասա, ինչպե՞ս ես, Մյուրիե՞լ: Միայն թե ճիշտն ասա:

— Դե, ամեն ինչ հրաշալի է: Բավական է անընդհատ նույն բանը հարցնես...

— Ե՞րբ եք եկել:

— Չեմ հիշում, շորեքշաբթի առավոտն էր, կարծեմ:

— Ո՞վ էր փարում մեքենան:

— Նա ինքը,— պատասխանեց ազդիկը:— Միայն թե

ախուժախ մի՞ անի: Նա շատ զգուշորեն էր վարում: Ծա ուղղակի զարմանում էի:

— Նա ի՞նքն էր վարում: Բայց Մյուրիել, դու ազնիվ խոսք ես տվել ինձ...

— Մայրիկ, դե ես քեզ արդեն ասացի,— ընդհատեց զուտորը,— նա շատ զգույշ էր վարում: Ի դեպ, ժամում հիսուն կիլոմետրից ոչ ավելի, ոչ մի անգամ...

— Իսկ նա օյիններ չէ՞ր անում, դե, հիշո՞ւմ ես, ինչպես այն ժամանակ, ծառերի հետ:

— Մայրիկ, ես քեզ ասում եմ, որ նա շատ զգույշ էր վարում: Վերջ տուր, խնդրում եմ: Ծա խնդրեցի նրան ճամփի մեջտեղով գնալ, և նա լսեց ինձ, հասկացավ: Նա նույնիսկ ջանում էր շնայել ծառերին, երևում էր, թե ինչպես է ջանում: Ի դեպ, հայրիկն արդեն վերանորոգման է տվել այն մեքենան:

— Դեռ չէ: Չորս հարյուր դոլլար են պահանջում հենց միայն...

— Բայց, մայրիկ, Միմորը խոստացել է հայրիկին, որ ինքը կվճարի: Զեմ հասկանում, էլ ինչո՞ւ ես...

— Տեսնենք, տեսնենք: Իսկ նա ինչպե՞ս էր պահում իրեն մեքենայում և ընդհանրապես:

— Լավ,— ասաց զուտորը:

— Նա էլ քեզ այն սոսկալի անունով չէ՞ր կոչում...

— Չէ, նա ինձ նոր անունով է կոչում:

— Ինչպե՞ս:

— Դե, քեզ համար միևնույն չէ՞, մայրիկ:

— Մյուրիել, ինձ անհրաժեշտ է իմանալ, հայրիկն ասում է...

— Դե Լավ, Լավ, նա ինձ ասում է 1948 թվականի թողարկման Սուրբ Թափառաշրջիկ,— ասաց աղջիկն ու ծիծաղեց:

— Այդտեղ ոչ մի ծիծաղելի բան չկա, Մյուրիել: Բոլորովին ծիծաղելի չէ: Դա սոսկալի է: Չէ, դա ուղղակի շատ տխուր է: Երբ մտածում ես, թե մենք...

— Մայրիկ,— ընդհատեց նրան աղջիկը,— սպասիր, լսիր: Հիշո՞ւմ ես այն գիրքը, որ նա ուղարկել էր ինձ Գեյմանիայից: Հիշո՞ւմ ես, ինչ-որ գերմաներեն բանաստեղծություններ

էին: Ի՞նչ եմ արել ես այն: Քլուխ եմ ջարդում, բայց չեմ կարողանում հիշել...

— Քեզ մոտ է:

— Համոզված ես:

— Իհարկե: Այսինքն, ինձ մոտ է: Ֆրեդի սենյակում է: Այստեղ ես թողել, պահարանում է... Ի՞նչ է պատահել որ: Իրեն պե՞տք է:

— Չէ, նա ճանապարհին, այստեղ գալիս հարցնում էր գրա մասին: Շատ էր ուզում իմանալ, կարդացե՞լ եմ, թե չէ:

— Բայց գիրքը գերմաներեն է:

— Այո, մայրիկ: Նրա համար միևնույն է,— ասաց աղջիկն ու ոտքը գցեց ոտքին:— Նա ասում է, որ գա մեր դարի միակ լավագույն բանաստեղծի գործն է: Ասում է, ես պետք է գոնե դրա թարգմանությունը ձեռք բերեի: Կամ էլ՝ գերմաներեն սովորեի, ասացե՞ք, խնդրեմ:

— Սոսկալի է: Սոսկալի է: Չէ դա շատ տխուր բան է... Հայրիկը երեկ ասում էր...

— Մի վայրկյան, մայրիկ,— ասաց աղջիկը: Նա գնաց գեպի պատուհանը, սիգարետ վերցրեց բազմոցի վրայից, վառեց և նորից նստեց մահճակալին:— Մայրիկ,— ասաց նա ծուխ արձակելով:

— Մյուրիել, ուշադիր լսիր ինձ:

— Լսում եմ:

— Հայրիկը խոսել է բժիշկ Սիվետսկու հետ...

— Եվ ի՞նչ,— ասաց աղջիկը:

— Նա ամեն ինչ պատմել է բժշկին: Համենայն դեպս, ինձ այդպես է ասում, բայց դե՞, ճանաչում ես հայրիկիդ: Սուտերի մասին էլ: Պատուհանի հետ կապված պատմությունն էլ: Եվ այն, ինչ-որ ասել էր տատիկիդ, երբ նա քննարկում էր, թե իրեն ինչպես պետք է թաղել, և այն, թե ինչ սրեց այն հրաշալի դունավոր բացիկները, հիշո՞ւմ ես, Բերմուդյան կղզիները, մի խոսքով, ամեն ինչ:

— Ե՛վ,— ասաց աղջիկը:

— Եվ այսպես: Նախ նա ասաց, թե ուղղակի հանցագործություն է, որ զինվորական բժիշկները նրան ազատել են հոսպիտալից, ազնիվ խոսք: Նա որոշակիորեն հայրիկին ասել է, թե բոլորովին չի բացառվում, որ Սիմորը կարող է

լիսովին կորցնել ինքնատիրապետումը: Ազնիվ, ազնիվ խոսք: — Այստեղ, հյուրանոցում հոգեբույժ էա, — ասաց ազ-  
ջիկը:

— Ի՞նչ է, ազգանունն ի՞նչ է:

— Չեմ հիշում, Ռիզեր է, ինչ է: Ասում են շատ լավ  
բժիշկ է:

— Ոչ մի տեղամ չեմ լսել:

— Դա դեռ չի նշանակում, թե նա վատն է:

— Ինձ մի՛ կոպտիր, Մյուրիել, խնդրում եմ: Մենք  
սոսկալի անհանգստանում ենք քեզ համար: Հայրիկը նույ-  
նիսկ ուզում էր հեռագրել քեզ, որպեսզի վերադառնաս տուն,  
և հետո...

— Չէ, մայրիկ, ես դեռևս չեմ վերադառնա, հանգրս-  
տացիր:

— Մյուրիել, ազնիվ խոսք, բժիշկ Սիվետսկին ասաց, որ  
Յիմարը կարող է վերջնականապես կորցնել...

— Մայրիկ, մենք դեռ նոր ենք եկել: Այսքան տարիների  
քնթացքում ես առաջին անգամ եմ իսկապես հանգստանում,  
հա չեմ հավաքի իրերս ու թռչեմ տուն: Իսկի չէի էլ կարող  
գալ: Այնպես եմ այրվել արևի տակ, որ հազիվ եմ մտն  
գալիս:

— Վառվե՞լ ես: Եվ շա՞տ: Ինչո՞ւ «բրոնզե կրեմ» չես  
քսել, չէ որ դրել էի ճամպրուկիդ մեջ: Ուղիղ այն բանի...

— Քսել եմ, քսել եմ: Եվ այնուամենայնիվ, այրվել եմ:

— Այ քեզ սոսկալի բա՛ն: Որտե՞ղդ է այրվել:

— Ամբողջապես, մայրիկ, ամբողջապես այրվել եմ, ստ-  
թից գլուխ:

— Այ քեզ սոսկալի բա՛ն:

— Ոչինչ, կլավանամ:

— Լսիր, իսկ դու խոսե՞լ ես այդ հոգեբույժի հետ:

— Այո, մի քիչ:

— Ի՞նչ ասաց նա: Եվ որտե՞ղ էր այդ ժամանակ Յիմարը:

— Մովահայաց հյուրասենյակում դաշնամուր էր նվա-  
գում: Եկած օրվանից նա երկու երեկո է նվագում է:

— Ի՞նչ ասաց բժիշկը:

— Առանձնապես ոչինչ: Նա ինքը խոսեց ինձ հետ: Ես  
նստած էի նրա կողքին, «բինգո» էինք խաղում, և նա ինձ

հարցրեց՝ ձեր ամուսի՞նն է նվազում այն սենյակում։ Ասացի՛ այո։ Հարցրեց, թե Սիմոնը վերջերս չի՞ հիվանդացել։ Եվ ես ասացի...

— Իսկ ինչո՞ւ նա հանկարծ այդպիսի բան հարցրեց։

— Զգիտեմ, մայրիկ։ Երևի այն պատճառով, որ Սիմոնը շատ գունատ է ու նիհարած։ Մի խոսքով, «բինզոյից» հետո նա ու իր կինը ինձ հրավիրեցին մի բան խմելու։ Ես համաձայնեցի։ Նրա կինը հրեշ է։ Հիշո՞ւմ ես, այն սոսկալի երեկոյան հագուստը, որ տեսանք Բոնվիտի ցուցափեղկում։ Դու դեռ ասացիր, որ այդ հագուստի համար բարալիկ-մարալիկ ազդիկ է պետք...

— Այն կանա՞չը։

— Այ, հենց այդ էր հագին։ Իսկ որ կոնքերը տեսնե՞ս։ Անընդհատ կաշում էր ինձնից, թե Սիմոնը այն Սյուզաննա Գլասի հարազատը չէ՞, որ Մեդիսոն-ափենյուտի վրա արհեստանոց ունի՝ գլխարկներին։

— Իսկ ամուսինն ի՞նչ էր ասում, այդ բժիշկը։

— Առանձնապես ոչինչ։ Ընդհանրապես մենք նստած էինք բարում, սոսկալի ազմուկ էր։

— Հա, բայց նրան ասացի՞ր, թե Սիմոնն ինչ էր ուզում անել տատիկի բազկաթոռը։

— Զէ, մայրիկ, ոչ մի մանրամասնություն ես նրան չեմ պատմել։ Բայց գուցե մեկ ուրիշ անգամ էլ կհաջողվի նրա հետ խոսել։ Ամբողջ օրը բարում նստած է լինում։

— Իսկ նա չէ՞ր ասում, թե կարող է պատահի, դե մի խոսքով, որ Սիմոնի մոտ ինչ-որ տարօրինակություններ հանդես գան։ Որ դա քեզ համար վտանգավոր է։

— Դե չէ,— ասաց աղջիկը։— Հասկանում ես, մայրիկ, դրա համար նա պետք է հազար ու մի տեղեկություններ հավաքի։ Մանկություն մասին և այլն։ Ասացի, չէ՞, որ շատ քիչ ենք խոսել. բարում սոսկալի ազմուկ էր։

— Դե ինչ արած... Իսկ ինչպե՞ս է քո կապույտ վերարկուն։

— Ոչինչ։ Ուսերի տակից մի քիչ ձգեցի աստառը։

— Իսկ այդտեղ ընդհանրապես ինչպե՞ս են հագնվում։

— Շատ վատ։ Ոչ մի բանի նման չեն։ Ամեն տեղ՝ պղտպղղաններ են կպցնում, աստված գիտե, թե ինչ է։

— Ձեր համարը լա՞վն է:

— Ոչինչ: Միանգամայն տանելի է: Այն համարը, որտեղ ապրել էինք մինչև պատերազմը, չհաջողվեց վերցնել,— ասաց աղջիկը:— Հասարակութունը այս տարի սուկալի է: Մի տեսնես, թե ում հետ ենք սեղան նստում: Հենց անմիջապես կողքերիս, հարևան սեղանի մոտ, այնպիսի տեսք ունեն, ասես բեռնատարով են եկել:

— Հիմա ամեն տեղ էլ այդպես է: Կիսաշոջազգեստդ հագնո՞ւմ ես:

— Շատ է երկար, ասել եմ քեզ, չէ՞:

— Մյուրիել, վերջին անգամ պատասխանիր ինձ, ինչպե՞ս ես: Ամեն ինչ կարգի՞ն է:

— Այո, մայրիկ, այո,— ասաց աղջիկը:— Հարյուր անգամ՝ այո:

— Եվ շե՞ս ուզում տուն վերադառնալ:

— Ոչ, մայրիկ, ոչ:

— Հայրիկը երեկ ասաց, որ պատրաստ է քեզ փող տալ, որպեսզի մենակ մեկնես որևէ տեղ և ամեն ինչ մի լավ կշռագատես: Գուհրաշալի ճանապարհորդութուն կարող ես կատարել նավով: Երկուսս էլ կարծում ենք, որ քեզ...

— Ոչ, շնորհակալություն,— ասաց աղջիկը և ուղիղ նքստեց:— Մայրիկ, այս խոսակցությունը կրնկնի...

— Որ մտածում եմ, թե ինչպես սպասեցիր այդ տղային ամբողջ պատերազմի ընթացքում, այսինքն, որ մտածում եմ, թե այդ բոլոր ջահել կանայք...

— Մայրիկ, արի վերջացնենք խոսակցությունը: Սիմոնը ուր որ է կգա:

— Իսկ ո՞ւր է նա:

— Լողափում:

— Լողափո՞ւմ, մենա՞կ: Նա իրեն լա՞վ է պահում լողափում:

— Լսիր, մայրիկ, դու այնպես ես խոսում նրա մասին, ասես նա կատաղի խելագար լինի:

— Ձէ, ինչ ես ասում, Մյուրիել:

— Համենայն դեպս, ձայնդ այդպիսին է, իսկ նա իր համար պառկած է ավազներին, նույնիսկ խալաթը չի հանում:



— Չի՞ հանում խալաթը: Ինչո՞ւ —

— Չգիտեմ: Երևի այն պատճառով, որ այդպես գու-  
նատ է:

— Տեր աստված: Բայց նրան անհրաժեշտ է արևը: Գու-  
չե՞ս կարողանում ստիպել նրան:

— Գու Սիմորին գիտես, շէ՞,— ասաց աղջիկը ու նորից  
ստքեքք խաշաձևեց:— Ասում է.— Չեմ ուզում, որ ամեն  
մի ապուշ աչք տնկի իմ վիտվածքների վրա:

— Բայց նրա վրա վիտվածքներ չկան: Քե՞ն բանակում  
ինչ-որ բաներ է վիտել:

— Չէ, մայրիկ, չէ, սիրելիս,— ասաց աղջիկն ու ելավ  
տեղից:— Գիտես ինչ, արի վաղը ես զանգահարնմ քեզ:

— Մյուրիել, լսիր ինձ, միայն թե ուշադիր:

— Լսում եմ, մայրիկ,— նա մի ստքից մյուսի վրա էր  
կանգնում:

— Հենց որ մի տարօրինակ բան է ասել կամ արել,  
հասկանո՞ւմ ես, անմիջապես զանգ տուր ինձ: Լսո՞ւմ ես:

— Մայրիկ, բայց ես չեմ վախենում Սիմորից:

— Մյուրիել, խոստացիր ինձ:

— Լավ: Խոստանում եմ: Յտեսություն, մայրիկ: Համբու-  
րիք հայրիկին:— Ծվ նա կախեց լսափողը:

\*

— Սիմի Գլաս, Ոսկեմազ,— ասաց Սիրիլա Կարպեն-  
տերը, որ հյուրանոցում ապրում էր իր մայրիկի հետ:— Ո՞ւր  
է Ոսկեմազը:

— Փխսիկս, հանգիստ մնա, շարշարում՝ ես մայրիկին:  
Ուղիղ կանգնիր, լսո՞ւմ ես:

Միսիս Կարպենտերը արևայրուկի դեմ շուղ էր քսում  
Սիրիլայի ուսիկներին, թիկունքին և թևիկների նման նիհա-  
րիկ թիակներին: Սիրիլան, մի կերպ իրեն պահելով վիթխա-  
րի, ձիգ փշած գնդակի վրա, նստել էր դեմքով դեպի օվկիո-  
նոսը: Նրա հագին դեղձանիկի նման դեղին լողազգեստ էր,  
վարտիքից ու կրծքակալից կազմված լողազգեստ, թեև առա-

շիկա ինը-տասը տարին նա դեռևս կտրուց էր հիանալի յուր  
գնալ առանց կրօնակալի:

— Սովորական մետաքս գլխաշոր է, բայց դա միայն  
մտտիկից ես զգում,— քացատրում էր միտիս Կարպենտերի  
կողքի բազկաթոռին նստած կինը:— Հետաքրքիր է, ինչպե՞ս  
է կարողանում այդպես կապել: Ուղղակի սքանչելի է:

— Այո, հավանաբար, լավն է,— ասաց միտիս Կարպեն-  
տերը:— Սիրիլոչկա, փիսիկս, հանգիստ նստիր:

— Իսկ ո՞ւր է իմ Ոսկեմազը,— հարցրեց Սիրիլան:

Միտիս Կարպենտերը հառաչեց.— Ահա՛,— ասաց նա և  
ամրացրեց սրվակի կափարիչը:— Հիմա դեռ, խաղ արա,  
փիսիկս: Մայրիկը կգնա հյուրանոց և մարտինի կիմի մի-  
տիս Հաբելի հետ: Իսկ ձիթապտուղը կրերի քեզ:

Ազատութիւն ստանալով՝ Սիրիլան վազեց մինչև լողափ,  
հետո շրջեց դեպի ձկնորսական տաղավարը: Ճանապարհին  
կանգ առավ, ոտքով խփեց ավազից սարքված պալատի թաց  
ավերակներին և շուտով բավական հեռացավ առողջարանի  
լողափից:

Նա մի քառորդ մղոն անցավ և հանկարծ սկսեց վազել  
ուղիղ դեպի ափի ավազարկուրը: Հասավ այնտեղ, ուր մեջքի  
վրա պառկած էր մի երիտասարդ:

— Կգա՞ս գնանք լողանալու, Սիմի Գլաս,— հարցրեց  
աղջիկը:

Երիտասարդը ցնցվեց, անմիջապես բռնեց լողախալաթի  
օձիքից: Հետո շուտ եկավ փորի վրա, և երշիկի նման ոլոր-  
ված սրբիչն ընկավ նրա աչքերի վրայից: Նա կկոցված աչ-  
քերով նայեց Սիրիլային:

— Ա՛, ողջույն, Սիրիլոչկա:

— Կգա՞ս լողանալու:

— Քեզ էի սպասում,— ասաց նա:— Խնչ նորութիւններ  
կան:

— Խնչ,— հարցրեց Սիրիլան:

— Ինչպիսի՞ նորութիւններ կան: Խնչ կա ծրագրում:

— Հայրիկս վաղը գալու է ինքնաթիռով,— ասաց Սիրի-  
լան, ոտքով խփելով ավազին:

— Միայն թե աչքերս մէ՛ջ լցնի, փոքրիկս,— ասաց երի-

տասարդը՝ բռնելով Սիրիլայի ոտիկը:— Այո, ժամանակն է, որ հայրիկդ գա: Ես ժամ առ ժամ սպասում եմ Նրան: Այո, ժամ առ ժամ:

— Իսկ այն մորաքույրն ո՞ւր է,— հարցրեց Սիրիլան:

— Այն մորաքույրը,— երիտասարդը ավազը թափ ավեց նստք մազերի վրայից:— Դժվար է ասել, Սիրիլոշկա: Նա կարող է լինել հազար տեղ: Ասենք՝ վարսավիրի մոտ: Մազերն է շեկացնում: Կամ իր սենյակում տիկնիկներ է կարում աղքատ երեխաների համար:— Երիտասարդը գեռ պառկած էր երեսնիվայր, միայն հիմա բունցքներն իրար վրա դրեց և ծնոտը հենեց դրանց:— Ավելի լավ կանես հեշտ հարցեր տաա ինձ, Սիրիլոշկա,— ասաց նա:— Այդ ի՞նչ գեղեցիկ կաստյում ունես, սքանչելի է ուղղակի: Կյանքումս ամենից շատ կապույտ լողազգեստն եմ սիրում:

Սիրիլան նայեց նրան, հետո՝ իր այրված փորիկին:— Բայց սա դեղին է,— ասաց նա:— Բոլորովին գեղին:

— Ճի՞շտ ես ասում: Հապա մոտ արի:

Սիրիլան մի քայլ առաջ եկավ:

— Դու միանգամայն իրավացի ես: Հիմաք եմ ես, հիմաք:

— Կգա՞ս լողանանք,— հարցրեց Սիրիլան:

— Հարկավոր է մտածել: Նկատի առ, Սիրիլոշկա, ար ես լրջորեն կշռագատում եմ այդ առաջարկությունը:

Սիրիլան ոտքով խփեց փշովի ներքնակին, որ նրա գրուցակիցը բարձի տեղ դրել էր գլխի տակ:— Հարկավոր է փշել,— ասաց ազնակը:

— Իրավացի ես: Այո, հարկավոր է փշել և ուժեղ փշեզքան մտադիր էի ահել մինչև հիմա:

Նա բունցքները հանեց և ծնոտը հենեց ավազին:— Սիրիլոշկա,— ասաց,— դու շատ գեղեցիկ ես: Հաճելի է քեզ նայելը: Պատմիր ինձ քո մասին:— Նա մեկնեց ձեռքը և բռնեց Սիրիլայի կոճերից:— Ես Այծեղջյուր եմ, իսկ դո՞ւ ով ես:

— Շերոն Լիպշույցն ասում էր, որ դու նրան նստեցրեց ես դաշնամուրի աթոռին,— ասաց Սիրիլան:

— Մի՞թե Շերոն Լիպշույցն հենց այգպես էլ ասաց:

Միրիւան եռանդուն գլխով արեց:

Նա բաց թողեց երեխայի կոճերը, ձեռքերը խաշեց և այտը հենեց աջ արմունկին:

— Ոչինչ չես կարող անել,— ասաց նա:— Ինքդ էլ գիտես, թե դա ինչպես է լինում, Միրիւոչկա: Նստւած նվագում եմ: Դու չես երևում: Իսկ Շերոն կիպշուցը գալիս նստում է կողքիս աթոռակին: Ինչ անեի, հրեի՞ նրան:

— Հրեիր:

— Դե, չէ՞, այդպես չեղավ: Ես ընդունակ չեմ դրան: Բայց գիտե՞ս ինչ արեցի, գուշակիր:

— Ի՞նչ:

— Ես ձեացրի, թե դա դու ես:

Միրիւան անմիջապես կռացավ ու սկսեց փորփրել ավազը:— Գնա՞նք լողանալու,— ասաց նա:

— Համաձայն եմ,— ասաց նրա զրուցակիցը:— Կարժեմ, գրան ընդունակ եմ:

— Մեկ էլ որ գա, հրիր,— ասաց Միրիւան:

— Այդ ո՞ւմ:

— Շերոն կիպշուցին:

— Ա՛խ, Շերոն կիպշուցին: Այդ ինչո՞ւ մտքիցդ գուրօ չի գալիս նա: Երազո՞ւմ էլ նրան ես տեսնում...

Նա հանկարծ վեր թռավ, նայեց օվկիանոսին:— Լսի՞ր, Միրիւոչկա, գիտե՞ս հիմա ինչ կանենք: Կփորձենք ձկնիկ-բանանիկ բռնել:

— Ի՞նչ:

— Ձկնիկ-բանանիկ,— ասաց նա ու արձակէց խալաթի գոտին: Նա հանեց խալաթը: Նրա ուսերը սպիտակ էին, նեղլիկ, լողակ-ոտնաթաթերը՝ կապույտ: Նա խալաթը ծալեց սկզբում երկարությամբ, հետո երեք տակ արեց: Բացելով ուրոված սրբիչը, որով աչքերն էր ծածկել, փոքեց ավազին և խալաթը դրեց վրան: Կռանալով՝ վերցրեց փշովի ներքնակը և դրեց թևատակին: Ազատ ձախ ձեռքով բռնեց Միրիւայի թաթիկը:

Նրանք գնացին դեպի օվկիանոս:

— Դու երևի ոչ մի անգամ ձկնիկ-բանանիկ չես տեսել,— հարցրեց նա:

Միրիւան տարուբերեց գլուխը:

— Զի կարող պատահել: Ինչո՞ւ, որտե՞ղ ես ապրում:

— Զգիտեմ,— ասաց Սիրիլան:

— Այդ ինչպե՞ս չգիտես: Զի կարող պատահել: Նույնիսկ Շերոն Լիպշուցը գիտի, թե որտեղ է ապրում, իսկ նա նույնպես երեքուկես տարեկան է:

Սիրիլան կանգ առավ ու քաշեց ձեռքը: Ապա մի աննշան խեցի վերցրեց ու սկսեց զննել ընդգծված հետաքրքրությամբ: Հետո դեմ գցեց:

— Շոճու անտառ, Կոննետիկատ,— ասաց աղջնակն ու փորը ցցած առաջ գնաց:

— Շոճու անտառ, Կոննետիկատ,— կրկնեց նրա ուղեկիցը:— Իսկ դա պատահմամբ Մոճու անտառը չէ՞ Կոննետիկատում:

Սիրիլան նայեց նրան.— Ես այնտեղ եմ ապրում,— ասաց նա անհամբերությամբ.— Իսկ ապրում եմ Շոճու անտառում, Կոննետիկատում:— Նա վազ տվեց մի քանի քայլ, ձախ ձեռքով բռնեց ձախ ոտնաթափը ու ուտոստեց մի ուրիշ վրա:

— Այդ ի՞նչ լավ բացատրեցիր ամեն ինչ, ուղղակի սքանչելի էր,— ասաց նրա ուղեկիցը:

Սիրիլան բաց թողեց ոտնաթափը.— Վնասիրիկ Սամբոնե կարդացե՞լ ես,— հարցրեց աղջնակը:

— Ի՞նչ տարօրինակ է, որ դու հարցրիր ինձ այդ բանը,— ասաց նրա ուղեկիցը:— Հասկանո՞ւմ ես, միայն երեկ երեկոյան եմ վերջացրել:— Նա կոացավ, բռնեց Սիրիլանի թափիկը:— Քեզ դո՞ւր է եկել,— հարցրեց նա:

— Իսկ վագրերը վազվզո՞ւմ էին ծառի շուրջը:

— Այո՞, ես նույնիսկ մտածեցի. ե՞րբ են վերջապես կանոն առնելու դրանք: Կյանքում այդքան վագր չեմ տեսել:

— Նրանք ընդամենը վեցն էին:

— Ընդամենը,— հարցրեց ուղեկիցը:— Քե կաթմիքով գա քի՞չ է:

— Դու մոմ սիրո՞ւմ ես,— հարցրեց Սիրիլան:

— Ի՞նչ,— նորից հարցրեց նա:

— Դե, մեղրամոմ էլի՞:

— Շատ եմ սիրում, իսկ դո՞ւ:

Սիրիլան գլխով արեց:— Դու ձիթապտուղ սիրո՞ւմ ես:

— Զիթապտուղ: Հասկա ինչպե՞ս: Զիթապտուղը մեղրամոմով: Առանց դրան ուղղակի չեմ կարող:

— Դու Շերոնն կիպշուցի՞ն սիրում ես,— հարցրեց աղջնակը:

— Այո՛, այո՛, իհա՛րկեմ,— ասաց նրա ուղեկիցը:— Եվ շատ եմ սիրում նրան այն բանի համար, որ երբեք չի նեղացնում շնիկներին մեր հոլլում, հյուրանոցում: Օրինակ՝ այն թզուկ բուլղոգին, որ այն կնոջն է, Կանադայից եկածինը: Դու երևի շես հավատում, բայց այդպիսի աղջիկներ կան, որ սիրում են փայտով խփել այդ բուլղոգին: Իսկ, ա՛յ, Շմբոնը՝ երբե՛ք: Նա ոչ մեկին չի նեղացնում, չի բարկացնում: Ա՛յ, դրա համար էլ սիրում եմ նրան:

Սիրիլան լռեց:

— Իսկ ես սիրում եմ մոմ ծամել,— ասաց նա վերջապես:

— Գա բուլթըն էլ սիրում եմ,— ասաց նրա ուղեկիցը, ստորով փորձելով ջուրը:— Ո՛ւհ, սառն է:— Նա փշովի ներքեակը գցեց ջրի վրա:— Չէ, սպասիր, Սիրիլուշկա, արի մթքիչ հեռանանք:

Նրանք գնացին ծանծաղուտով, մինչև որ ջուրը հասավ Սիրիլայի գոտկատեղին: Այդ ժամանակ երիտասարդը գրկեց նրան ու դրեց ներքնակի վրա:

— Իսկ դու երբեք լողազլի՞մարկ չե՞ս դնում, գլուխդ չե՞ս ծածկում,— հարցրեց երիտասարդը:

— Բաց մի՛ թողնիր ինձ,— հրամայեց աղջնակը:— Ամառ բռնիր:

— Ներեցեք, միսս Կարպենտեր: Ես իմ գաբժը գիտեմ,— ասաց նրա ուղեկիցը:— Իսկ դու ա՛վելի լավ է նայիր ջրին, հեռանթը ձկնիկ-բանանիկին: Այսօր շատ լավ է բռնվում ձկնիկ-բանանիկը:

— Իսկ ես շեմ տեսնում դրանց:

— Միանգամայն հասկանալի է: Դրանք շատ տարօրի՛ւ հեռի ձկնիկներ են: Շատ տարօրինակ:— Նա ներքնակն արագ հրեց: Ջուրը դեռ նրա կրծքին չէր հասել:— Եվ տխուր էլ կյանք ունեն,— ասաց նա:— Գիտե՞ս ինչ են տեսնում նրանք: Սիրիլուշկա:

Աղջնակը տարուբերեց գլուխը:

— Հասկանո՞ւմ ես, նրանք լողում են, մտցւմ քարանձավը, իսկ այնտեղ ջա՛տ քանսն կա: Քարանձավ մտնելի՛վ

որ տեսնես՝ սովորական ձկնիկներ են: Բայց այնտեղ իրենց խոզավարի են պահում: Մի այդպիսի ձկնիկ-բանանիկ լողաց քարանձավ ու այնտեղ յոթանասունութ հատ բանա՛հ կերավ:— Նա լաստը իր փոքրիկ ուղևորի հետ միասին հրեց դեպի հորիզոնը:— Եվ դրանից նրանք այնպե՛ս են հաստանում, իհարկե, որ այլևս չեն կարողանում դուրս գալ: Դռնից դուրս գալ չեն կարողանում:

— Էլ մի՛ քշիր, — ասաց Սիրիլան: — Իսկ հետո ի՞նչ է լինում:

— Ե՛րբ հետո, ինչի՞ մասին ես հարցնում:

— Ձկնիկ-բանանիկների մասին:

— Ա՛խ, ուզում ես ասել, այդպես կշտանալուց հետո ինչ են անում, հա՞, որ չեն կարողանում դուրս գալ քարանձավից:

— Այո, — ասաց աղջնակը:

— Տխուր է, դժվարանում եմ, քեզ ասել, Սիրիլա՛յ: Մեռնում են նրանք:

— Ինչո՞ւ, — հարցրեց Սիրիլան:

— Հիվանդանում են բանանային աենդով: Գա ստեփալի հիվանդութուն է:

— Տես, ալիքը գալիս է, — տազնապով ասաց Սիրիլան:

— Արի չնկատելու տանք, — ասաց նրա ուղեկիցը, — արքաբհամարհենք նրան: Ես ու դու հպարտ ենք:— Նա բռնեց Սիրիլայի կոճերից ու ներքև սեղմեց: Լաստը բարձրացավ ալիքի կատարը: Ջուրը ողողեց Սիրիլայի մազերը, բայց նրա ճիշի մեջ միայն ոգևորութուն կար:

Երբ լաստը ուղղվեց, աղջնակը թաթիկով ետ քաշեց ճակատին կպած թաց մազափունջը և ասաց. — Իսկ ես տեսա նրան:

— Ո՞ւմ, իմ ուրախութուն:

— Ձկնիկ-բանանիկին:

— Չի՞ կարող պատահել, — ասաց նրա ուղեկիցը: — Իսկ նրա բերանում բանաններ կայի՞ն:

— Այո՛, — ասաց Սիրիլան, — վե՛ց հատ:

Երիտասարդը հանկարծ բռնեց Սիրիլայի թաց ստիկը, որ կախված էր լաստից ցած, և համբուրեց ներքանը:

— Թե՛ւհ, — ասաց աղջնակը:

— Դու ինքդ ես «թուհ»։ Ետ ենք գնում, բավական է։

— Չէ՛։

— Ափսո՛ս, ափսո՛ս,— ասաց երիտասարդը և լաստը քշեց դեպի ափ, որտեղ Սիրիլան թռավ ավազի վրա։ Երիտասարդը ներքնակը դրեց թևի տակ ու տարավ ափ։

— Մնաս բարով,— գոչեց Սիրիլան ու առանց փոքր-ինչ ափսոսալու վազեց դեպի հյուրանոց։

Երիտասարդը հագավ լալաթը, ամուր ծածկեց օձիքը, սրբիչը մտցրեց գրպանը։ Նա բարձրացրեց թաց, լարձուն անհարմար ներքնակը և դրեց թևի տակ։ Հետո տաք ու փափուկ ավազի վրայով մենակ գնաց դեպի հյուրանոց։

Ներքնահարկում (հյուրանոցի դիրեկցիան խնդրիչ էր, որ լողացողները վերև բարձրանային միայն այդտեղով) քթին ցինկաքսուրք քսած մի կին երիտասարդի հետ վերելակ մտավ։

— Տեսնում եմ, նայում եք իմ ոտքերին,— ասաց երիտասարդը, երբ վերելակը բարձրանում էր։

— Ներեցեք, լավ չլսեցի,— ասաց կինը։

— Ես ասացի, տեսնում եմ, դուք նայում եք իմ ոտքերին։

— Ներեցեք, բայց ես հատակին էի նայում,— ասաց կինը և շրջվեց դեպի վերելակի դուռը։

— Ուզում եք նայել ոտքերիս՝ այդպես էլ թանք,— ասաց երիտասարդը։— Ի՞նչ իմաստ ունի անվերջ՝ ձևանալ, գրողը տանի։

— Թողեք դուրս գամ ես,— արագ ասաց կինը վերելակավարին։

Վերելակի դուռը բացվեց, և կինը դուրս եկավ առանց ետ նայելու։

— Իմ ոտքերը միանգամայն նորմալ են, ես ոչ մի պատճառ չեմ տեսնում այդպես աչք տնկելու,— ասաց երիտասարդը։— Հինգերորդը, խնդրեմ։— Եվ նա խալաթի վրայանից հանեց համարի բանալին։

Դուրս գալով հինգերորդ հարկում՝ նա գնաց միջանցքով և իր բանալիով բացեց 507-րդ համարը։ Այնտեղ նոր կաշվե ճամպրուկների և եղոնգների լաքի հոտ էր փչում։

Նա նայեց երիտասարդ կնոջը, որ քնած էր մահճակալներից մեկի վրա։ Մոտեցավ իր ճամպրուկին, բացեց և վեր-



նաշապիկների ու վարտիքների կուլտի տակից հանեց ուղ-  
մաաՎարային մի ատրճանակ: Հանեց փամփշտակալը, նա-  
յեց, կրկին դրեց տեղը: Կարեց հրահանը: Հետո մոտեցավ  
դատարկ մահճակալին, նստեց, նայեց ջահել կնոջը, բարձ-  
րացի եց ատրճանակը և գնդակ արձակեց իր աջ բունքին:

1928 թվականին, ինը տարեկանում, ես մի կազմակերպության անդամ էի, որ կրում էր «Կոմանչների ակումբ» անունը, և նվիրված էի դրան իմ ամբողջ esprit de corps<sup>1</sup>: Ամեն օր դասերից հետո ուղիղ ժամը երեքին 165-րդ գարոցի ելքի մոտ, Հարյուրիններորդ փողոցում, Ամատերգամյան ավենյուի մոտակայքում, մեզ՝ քսանհինգ կոմանչներիս, սպասում էր մեր Առաջնորդը: Իրար սեղմվելով ու հրմշտելով՝ տեղավորվում էինք մեր Առաջնորդի փոքրիկ «պիկապում», և, համաձայն մեր ծնողների հետ ունեցած գործնական պայմանավորվածության, նա մեզ տանում էր Կենտրոնական զբոսայգի: Ետևաշյա ամբողջ ժամանակը ֆուտբոլ կամ բեյսբոլ էինք խաղում, նայած եղանակին: Շատ անձրևոտ օրերին Առաջնորդը մեզ տանում էր պատմաբնագիտական թանգարան կամ Կենտրոնական պատկերասրահ:

Շաբաթ օրերը և մեծ տոներին Առաջնորդը առավոտից հավաքում էր մեզ տներից և իր դարն ապրած «պիկապով» Մոնհետենից տանում Վան-կորտլենդյան զբոսայգու կամ Փալիսադիի շատ ավելի ազատ տարածությունները:

Եթե ազնիվ սպորտով զբաղվելու պահանջ էինք զգում, գնում էինք Վան-կորտլենդյան զբոսայգին. այնտեղ իսկական հրասպարակներ ու ֆուտբոլային դաշտեր կային, և մեզ չէր սպառնում որպես հակառակորդ՝ մանկական սայլակ կամ

1 Կարպորացիոն սթոլ:

փայտը ձեռքին կատաղած պառազ տիկին տեսնելու վտանգը: Եթե կոմանչների սիրտը ազատ կյանքի կարոտ էր զգում, գնում էինք քաղաքից դուրս՝ Փալիսադի, ու այնտեղ մաքա-  
րում զրկանքների դեմ: (Հիշում եմ, մի անգամ, շաբաթ օրը, ես նույնիսկ մոլորվեցի թավուտեերում, ճանապարհային նշանի և վաշինգտոնյան կամրջի միջև ընկած ընդարձակ տա-  
րածությունում: Բայց ինձ չկորցրի: Նստեցի վիթխարի ոճկ-  
լամային վահանակի տակ ու, արցունքներս կուլ տալով, բացեցի նախաճաշ, որպեսզի ամրապնդեմ ուժերս, սղոտ հույս ունենալով, որ Առաջնորդը կորոնի ինձ: Նա միշտ գտնում էր մեզ):

Կոմանչներից ազատ ժամերին մեր Առաջնորդը դառնում էր ուղղակի Սթեֆեն-Ալլենդի Ջոն Հեդսուոդցին: Նա քսաներկու-քսաներեք տարեկան շատ ամոթխած ու սուսիկ-փուսիկ տղա էր, Նյու-Յորքի համալսարանի մի սովորական իրավա-  
բան-ուսանող, բայց ինձ համար անմոռանալի է նրա կերպարը: Չեմ թվարկի նրա բոլոր արժանիքներն ու առաքի-  
նությունները: Կասեմ անցողակի, որ նա բոլորապես թափանցիկ «Արծվային երամի» անդամներից էր և քիչ էր մնում դառ-  
նար 1926 թվականի ամերիկյան հավաքականի լավագույն հարձակվողն ու գրեթե շեմպիոնը, և որ մի անգամ նրան բավական համառորեն հրավիրում էին իր ուժերը փորձելու Նյու-Յորքի բեյսբոլի վարպետների թիմում: Նա խիստ անա-  
չառ և սառնասիրտ գատավոր էր մեր կատաղի մրցումների ժամանակ, վարպետ՝ խարույկ վառելու և մարելու գործում, փորձված և ներողամիտ առաջին օգնություն ցույց տվող Մենք բոլորս, սկսած փոքրերից մինչև ավագ թոկից փա-  
խածներս, անսահման սիրում ու հարգում էինք նրան:

Ես հիմա էլ աչքերիս առաջ տեսնում եմ մեր Առաջնորդին, ինչպիսին նա էր 1928 թվականին: Եթե մեր ցանկու-  
թյունը նրան մի քանի դուլով աճեցնելու զորություն ունե-  
նար, ապա մի ակնթարթում նա կդառնար հսկա: Բայց կյան-  
քը մնում է կյանք, և նրա հասակը ընդամենը հինգ ֆուտ և երեք-չորս դուլով էր: Նրա կապտասև մազերը գրեթե ծած-  
կում էին ճակատը, քիթը խոշոր էր, նկատելի, իրանի եր-  
կարությունը գրեթե հավասար էր ոտքերի երկարությանը: Ասեք զի կաշվե բաճկոնի մեջ ավելի ուժեղ էին թվում, թեև

Նա առանձնապես թիկնեղ չէր և թեթևակի կուզ ուներ: Բայց ինձ համար այն ժամանակ մեր Առաջնորդի մեջ անքակտելիորեն միաձուլվում էին բոլոր լավագույն կինոգերասանների կանոնավոր ու համաշափ գիմագծերը՝ և՛ Բաթ Զոնաի, և՛ Քեն Մեյնարի, և՛ Թոմ Միքսի:



Իրիկնադեմին, երբ այնքան էր մթնում, որ վրիպելիս կամ թեթև զնդակները բաց թողնելիս պարտավողները արդարանում էին այդ պատճառաբանությամբ, մենք՝ կոմանչներս, համառորեն և անձնապաշտորեն շահագործում էինք մեր Առաջնորդին որպես պատմողի: Տաքացած ու լարված կըրվում էինք ու զոռզոռալով վիճում «պիկապի» միջ Առաջնորդին ավելի մոտ տեղ զբաղեցնելու համար: «Պիկապում» ծղոտից երկու շարք նստելատեղ էր շինված: Չխում ևս երեք տեղեր կային՝ ամենալավերը, այդտեղից կարելի էր տեսնել նույնիսկ դեկի մոտ նստած Առաջնորդի կիսադեմը: Երբ բուրս տեղավորվում էինք, Առաջնորդն էլ էր մտնում «պիկապ»: Նա նստում էր իր վարորդական տեղում, դեմքով դեպի մեզ ու թիկունքով դեպի դեկը, և թույլ, բայց հաճելի տեսարով սկսում «Մարդը, որ ծիծաղում էր» պատմվածաշարի հերթական թողարկումը: Բավական է նա սկսեր, մենք արգեն ունկնդրում էինք շթուլացող հետաքրքրությամբ: Դա ամենահարմար պատմությունն էր իսկական կոմանչների համար: Հնարավոր է, որ այն կառուցված էր նույնիսկ դասական կանոններով: Պատմությունը ծավալվում էր, հափշտակում մեզ, կլանում շրջապատում ամեն ինչ, ու այդ ամենի հետ միաժամանակ հիշողության մեջ մնում սեղմ, խտացված և մի տեսակ դյուրակիր: Այն կարելի էր ուսնել տուն և վերհիշել, ասենք, երբ նստած ես վաննայում, երբ ջուրը կամաց-կամաց լցվում է շուրջդ:

Հարուստ միսիոներների միակ որդին՝ Մարդը, որ ծիծաղում էր, վաղ մանկության տարիներին առևանգվում է շին ավազակների կողմից: Երբ հարուստ միսիոներները (ելնելով կրոնական համոզմունքներից) հրաժարվում են փրկակազին վճարել որդու համար, ավազակները, վիճակորված

համարելով իրենց լավագույն զգացմունքները, փոքրիկի գլուխը մտցնում են մամլիչի մեջ և համապատասխան պտուտակը մի քանի անգամ պտտում դեպի աջ: Իր տեսակի մեջ այդ յուրօրինակ էրսպերիմենտի օբյեկտը աճում է ու առնականանում, բայց գլուխը մնում է ճաղատ, ինչպես ծունկ, տանձանման, իսկ քթի տակ բերանի փոխարեն մի վիթխարի ձվածե անցք է լինում: Ասենք, քթի փոխարեն էլ միմիայն թերաճած ոունգներ էին: Դրա համար էլ, երբ Մարդը շնչում էր, քթի տակի սահմոկեցուցիչ այլանդակ ճեղքը ընդարձակվում էր և իմ երևակայության մեջ դառնում մի վիթխարի ամյոբա: (Առաջնորդը ավելի շուտ պատկերավոր ցուցադրում էր, քան նկարագրում, թե ինչպես էր շնչում Մարդը): Ստակալի Մարդուն, որը ծիծաղում էր, տեսնելիս մաթդիկ ուշաթափվում, ցած էին ընկնում: Մանոթները խուռափում էին նրանից: Որքան էլ տարօրինակ լինի, ավազակները նրան չէին վնդում, միայն թե նա դեմքը ծածկում էր բաց կորմիր դիմակով, որը պատրաստված էր կակաչի ծաղկաթերթերից: Այդ դիմակը ոչ միայն ավազակներից ծածկում էր իրենց հոգեորդու դեմքը, այլև դրա շնորհիվ նրանք ամեն անգամ իմանում էին նրա տեղը. միանգամայն հասկանալի պատճառով նրանից ափիռնի հոտ էր գալիս:

Ամեն առավոտ, մենակությանից տառապելով, Մարդը գաղտագողի (իհարկե, հպարտորեն ու կատվի թևթևությանը) մտնում էր ավազակների որջը շրջապատող անտառի խորքերը: Այնտեղ նա ընկերության էր անում բազմապիսի կենդանիների՝ շների, սպիտակ մկների, արծիվների, առյուծների, բոակոնստրիկտորների ու գայլերի հետ: Ավելիք, այնտեղ նա հանում էր դիմակը և բոլոր գազանների հետ խոսում էր մեղմ երգեցիկ ձայնով, նրանց սեփական լեզվով: Ու նրանց համար Մարդը այլանդակ չէր:

Երկու ամիս պահանջվեց, մինչև որ Առաջնորդը հասավ պատմության այդ մասին, բայց այստեղից սկսած՝ նա ավելի առատորեն զարգացրեց դեպքերը հմայված կոմանչներով աչքի առաջ:

Մարդը, որ ծիծաղում էր, հմտացել էր ականջ դնելու գործում և շուտով տիրապետեց ավազակային պրոֆեսիայի բոլոր ամենաարժեքավոր գաղտնիքներին: Բայց դրանց մասին

նա առանձնապես մեծ կարծիքի շէր և առանց հապաղելու  
 ստեղծում էր սեփական, անհամեմատ ավելի արդյունավետ  
 սխտեմք, սկզբում հազվադեպ, հետո ավելի հաճախ նա  
 շրջում էր Զինաստանով մեկ, կողոպտելով ու շշմեցնելով  
 մարդկանց. սպանում էր ժայրահեղ անհրաժեշտության դեպ-  
 քում միայն: Իր ճկուն և խորամանկ հանցագործություննե-  
 րով, որոնցում, սրբան էլ զարմանալի թվա, ի հայտ էր գա-  
 լիս նրա բացառիկ ազնվությունը, նա նվաճեց հասարակ  
 ժողովրդի հաստատուն սերը: Որքան էլ տարօրինակ լինի,  
 նրա հոգևոր ծնողները (այն նույն ավազակները, որոնք նրան  
 հանցագործությունների գիրկը մղեցին) նրա սխրանքների  
 մասին գրեթե ամենաուշն էին իմանում: Իսկ երբ իմանում  
 էին, սե նախանձը կրծում էր նրանց սիրտը: Գիշերը նրանք  
 շարքով անցնում են Մարդու մահճի մոտից, մտածելով, որ  
 նրան հարբեցրել են ու նա քնած է խոր քնով, և հերթով՝  
 վերմակով ծածկված մարմնի մեջ են խրում իրենց սրերն ու  
 մաշիտենները: Բայց պարզվում է, որ զոհը ավազակապետի  
 մայրն է, մի սոսկալի կովարար ու տհաճ անձնավրություն:  
 Այդ դեպքը միայն ավելի է բորբոքում ավազակներին, որ  
 ծարավի էին Մարդու արյանը, և ի վերջո Մարդը հարկա-  
 զրված է լինում ամբողջ ավազակախմբին փակել խոր, բայց  
 միանգամայն հարմարավետ կահավորված դամբարանում:  
 Ավազակները երբեմն փախչում էին այնտեղից և խանգա-  
 րում նրան ապրել, բայց, այնուամենայնիվ, Մարդը շէր  
 ուզում նրանց սպանել: (Նրա այդ անխմաստ գթասրտու-  
 թյունը կատաղեցնում էր ինձ):

Շուտով Մարդը, որ ծիծաղում էր, սկսեց հաճախակի  
 կտրել-անցնել շինական սահմանը, հայտնվելով ուղիղ Փա-  
 րիզում, Ֆրանսիական քաղաքում, որտեղ, իր ամենայն հա-  
 մեստությունամբ հանդերձ, նա սիրում էր հանճարիղ հնարա-  
 մբտություններով հոգեհան անել ոմն Մարսել Դյուֆարժի՝  
 համաշխարհային հայտնի հետախույզին, որ թորախտավոր,  
 բայց բավական սրամիտ մի պարոն էր: Դյուֆարժը և նրա  
 գուետորը (հիասքանչ, բայց բավական երկերեսանի մի էակ)  
 գործան Մարդու ամենաոխերիմ թշնամիները: Շատ անգամ  
 են նրանք փորձել ծուղակը գցել և բռնել նրան: Մարդը սկզբ-  
 րում, զուտ սպորտային հետաքրքրությունից ենթարկվում

էր նրանց, բայց հետո չբանում էր անգեա, այնպէս, որ ոչ ոք չէր կարողանում գլխի ընկնել, թէ նա ինչպէս է փախել: Միայն երբեմն նա հրատեչտի երկտող էր թողնում Փարիզի կոյուղու ցանցում, և դա անմիջապէս առջիւն էին անձամբ Դյուֆարժի ձեռքը: Դյուֆարժների ընտանիքը անսահման շատ ժամանակ էր վատնում՝ փնտրելով նրան փարիզյան կոյուղու խողովակների մէջ:

Շուտով մարդը, որ ծիծաղում էր, դարձավ աշխարհի ամենամիթխարի կարողութեան միանձնյա տիրակալը: Հարստութեան մեծ մասը նա անանուն կերպով զիջեց տեղական մի վանքի վանականներին, խոնարհամիտ ճգնաժողովներին, որոնք իրենց կյանքը նվիրաբերել էին գերմանական գամփունների վարժեցմանը: Մնացածը Մարդը վերածեց ազամանդների և, զմրուխտե սեյֆերի մէջ լցրած, առանց փոստալու սուզեց Սև ծովի հատակը: Նրա անձնական պահանջները ժիծաղելիութեան աստիճան սահմանափակ էին: Սնվում էր արծվի արյունով շաղախված բրնձով և ապրում էր մի համեստ տնակում, որ նկուզային հրաձգարան ունեւր ու մարմնամարզական դահլիճ՝ փրփրահույզ Տիրաթի սպիհն: Նրա հետ ապրում էին նրա չորս անձնուրաց համախոհները. թեթևաքայլ վիթխարի գայլը՝ Սևաթև մականունով, Օմբա անունով հաճելի թզուկը, Գոնգ անունով վիթխարահասակ ճոնգոլը (սրա լեզուն այրել էին սպիտակ մարդիկ) և եվրասիացի մի շտեմնված գեղեցկուհի, որը Մարդու հանդեպ ունեցած անպատասխան սիրուց և նրա անձի անվտանգութեան համար ունեցած մշտական վախի պատճառով երբեմն չէր խորշում նաև օրենքը խախտելուց: Մարդը իր խմբին կարգադրութուններ էր անում մետաքսե սև միջնորմի ետևից նույնիսկ Օմբան՝ սիրունատես թզուկը, իրավունք չունեւր նրա գեմքը տեսնելու:

Ես կարող եմ, եթէ հարկ չիւնի, ուղղակի ժամերով ձեզ առաջ ու ետ տանել, ընթերցող, ֆրանսիա-չինական սահմանի երկարութեամբ, բայց մի՛ վախեցեք, շեմ անի այդ բանը: Մինչև հիմա ես Մարդուն, որը ծիծաղում է, համարում եմ իմ հերոսական նախնիների, դե, ասենք, Ռոբերտ էլիի նման մեկը: Սակայն այսօրվա իմ երազանքները նույնիսկ համեմատել չի կարելի նրանց հետ, որ համակել էին

ինձ 1928 թվականին, երբ ես ինձ ոչ միայն Մարդու ուղղակիորեն հետնորդն էի համարում, այլև նրա միակ կենդանի և օրինական ժառանգը: Այդ 1928 թվականին ես բոլորովին էլ իմ ծնողների զավակը չէի, այլ մի սատանայական խորամանկ ինքնակոչ տիպ, որ ամենափոքրիկ առիթի էր սպասում նրանց կողմից, որպեսզի անմիջապես, ավելի լավ է առանց բռնություն, թեև դա չէր բացառվում, բացեր նրանց իսկական դեմքը: Բայց չցանկանալով կոտրել իմ երևակայական մոր սիրտը, ես նախատեսում էի իմ հանցագործ աշխարհում նրան պարզևատրել մի որևէ, առայժմ անորոշ, բայց, անշուշտ, արքայական տիտղոսով: Սակայն ինձ համար ամենակարևորը 1928 թվականին՝ մշտական զգոնությունն էր: Նրանց բոլորի աչքին թող փչելը: Կլալ ատամներս, սանրվել: Ամեն կերպ թաքցնել իմ բնածին, սատանայական սոսկալի ծիծաղը:

Իրականում, ես բոլորովին էլ միակ կենդանի հետնորդն ու օրինական ժառանգը չէի Մարդու, որը ծիծաղում էր: Ակումբում քսանհինգ կոմանչներ կային, Մարդու քսանհինգ կենդանի հետնորդներ և օրինական ժառանգներ, ու մենք բոլորս, որպես շարագույժ անծանոթներ, շրջում էինք քաղաքում՝ հնարավոր թշնամի հոտոտելով ամեն մի վերելակավարի մեջ, խուլ, բայց հատու շշուշուով հրաման էինք թելադրում մեր սպանիելի ականջին, և ցուցամատը առաջ մեկնելով՝ նշան էինք բռնում թվաբանության ուսուցիչների վրա: Ու լարված, անխոնջ սպասում էինք, թե վերջապես երբ կգա առիթը՝ սարսափ ու հիացմունք ներշնչելու որևէ մեկի պարզամիտ հոգուն:

\*

Մի անգամ, փետրվարյան մի օր, երբ բացվել էր կոմանչների բնյաբոլի սեզոնը, ես նոր զարդ նկատեցի մեր Առաջնորդի մեքենայի մեջ: Հողմնապակու վրա ուսանողական գլխարկով ու թիկնոցով մի աղջկա փոքրիկ լուսաւէկար էր հայտնվել: Ինձ թվաց, թե այդ լուսանկարը խախտում է մեր «պիկապի» ընդհանուր, զուտ առնական ոճը, և ես Առաջնորդին բացեիրաց հարցրի, թե ով է դա: Սկզբում նա ծամ-



ժըմեց, բայց, վերջապես, հայտնեց, որ աղջիկ է, Ծա հարցրի անունը: Դանդաղելով, նա տհաճությամբ պատասխանեց. «Մերի Հագսոն»: Ծա հարցրի՝ կինոյի՞ց է, ինչ է: Առաջնորդը առաջ՝ ոչ, սովորում է համալսարանում, Ուելսի քոլեջում: Մի քիչ մտորելուց հետո ավելացրեց, թե Ուելսի քոլեջը շատ նշանավոր քոլեջ է: Հարցրի, թե նրա ինչին է պետք այդ նկարն այստեղ, մեր մեքենայում: Ծա թեթևակի թոթվեց ուսերը, ասես ուզում էր, ինչպես ինձ թվաց, այնպիսի տպավորություն թողնել, իբր, զոռով են իր վզին կապել այդ լուսանկարը:

Սակայն առաջիկա երկու-երեք շաբաթը զոռով թե պատահմամբ Առաջնորդի վզին կապված այդ լուսանկարը այդպես էլ մնաց մեր մեքենայի մեջ: Այն չէին սրբում-թափում ոչ կոնֆետի թղթերի հետ, որոնց վրա պատկերված էր Բեք Ռութը, ոչ էլ սառնաշաքարի փայտիկների հետ: Ի՞նչ մենք՝ կոմանչներս, մի տեսակ ընտելացանք դրան: Աստիճանաբար սկսեցինք այն նկատել այնքան, որքան որ՝ սպիդոմետրը:

Բայց մի անգամ զբոսայգու ճանապարհին Առաջնորդը կանգնեցրեց մեքենան Հինգերորդ ավենյուի վրա, Վաթսուներորդ փողոցի շրջանում, մեր բեյսբոլային դաշտից ավելի քան կես մղոն հեռու: Քսան անկոչ խորհրդատուներ անմիջապես բացատրություն պահանջեցին, բայց Առաջնորդը լուռ մնաց: Պատասխանի փոխարեն նա պատմողի սովորական դիրք ընդունեց և ոչ տեղին սկսեց մեզ հրամցնել Մարդու պատմության շարունակությունը: Բայց դեռ չէր սկսել, որ մեքենայի դուռը ձեռնեցին: Այդ օրը մեր Առաջնորդի բոլոր ռեֆլեքսները կայծակնային էին: Նա տառացիորեն պտույտ գործեց իր առանցքի շուրջը, քաշեց դուռն բռնակը, և մորթե մուշտակով մի աղջիկ մտավ նրա «պիկապը»:

Կյանքիս մեջ միայն երեք աղջիկների եմ հիշում, որոնք միանգամից, առանց մտածելու հենց առաջին հայացքից ապշեցրել են ինձ իրենց անառարկելի, անվերապահ գեղեցկություններով: Մեկին տեսել եմ Ջոնս Բիչ լողափում 1936 թվականին, սև լողազգեստով մի նիհարիկ աղջիկ, որ չէր կարողանում բացել նարնջագույն հովանոցը: Երկրորդն ինձ հանդիպել է 1939 թվականին, շոգենավում, Կարաիբյան ծովում:

որ վառիչը նետեց դելֆինի վրա: Իսկ երբորգը մեր Առաջ-  
նորդի աղջիկն էր՝ Մերի Հազոտնը:

— Շա՛տ եմ ուշացել, — հարցրեց նա՝ ժպտալով մեր  
Առաջնորդին:

Նույնպիսի հարողությամբ նա կարող էր հարցնել. «Ես  
շա՛տ ազեղ եմ»:

— Ոչ, — ասաց մեր Առաջնորդը: Եփոթված հայացքը  
պտտեց կոմանչներին վրա, որ նստած էինք նրան մոտ, և  
նշան արեց՝ տեղ տալ: Մերի Հազոտնը նստեց իմ և էդգար  
անունով (աղգանունը շեմ հիշում) մի տղայի միջև: Մենք  
սեղմվեցինք հանուն նրա, որքան որ կարող էինք: Մեքենան  
շարժվեց, թափահարվելով, ասես անսովոր մարդ էր վա-  
րողը: Բոլոր կոմանչներն մի մարզու պես լուռ էինք:

Վերադարձին մեր սավորական կանգառում Մերի Հազոտնը  
թեքվել էր դեպի Առաջնորդը և խանգավառված հաշիվ  
էր ասլիս նրան, թե որ գնացքներից է ինքը ուշացել և որ  
գնացքին հասել. նա ասլորում էր Դուզլաստոնում, Լոնգ-Այ-  
լենդում:

Մեր Առաջնորդը շատ էր նյարդայնանում: Նա ոչ միայն  
բնավ չէր աջակցում խոսակցությանը, այլև գրեթե չէր լսում,  
աղջիկն ինչ է ասում: Հիշում եմ, որ հոսանքափոխման լծա-  
կի գլուխը գուրս թռավ նրա ձեռքի տակից:

Մեր մենք դուրս եկանք «պիկապից», Մերի Հազոտնը նույն-  
պես կպավ մեր պոչից: Չեմ կասկածում, որ երբ մոտեցանք  
բնյարդի հրապարակին, բոլոր կոմանչների դեմքին նույն  
միտքն էր կարդացվում. «Աղջիկներ կան, որ շփտեն երբ  
պետք է տուն գնալ»: Եվ ի լրումն այդ ամենի, երբ ուրիշ  
կոմանչների հետ գիր ու զուշ գցեցինք, որպեսզի բաժանենք  
դաշտերը, Մերի Հազոտնը երկշոտ ցանկություն հայտնեց  
մասնակցել խաղին: Պատասխանը ավելի քան պարզ էր:  
Մինչ այդ պահը կոմանչները տարակուսանքով էին նայում  
իգական սեռի այդ ներկայացուցչին, իսկ հիմա նրանց հա-  
յացքներում վրդովմունք բռնկվեց: Բայց Մերին ի պատաս-  
խան ժպտաց մեզ: Մենք մի քիչ շփոթվեցինք: Այստեղ մի-  
ջամտեց մեր Առաջնորդը, հանդեպ բերելով նախկինում որոշ  
հանգամանքներում շփոթվելու իր քողարկված ունակությու-  
նը: Մերի Հազոտնին տանելով մի կողմ, որպեսզի կոմանչ-

ները չլսեն, նա ապարդյուն ջանք էր թափում նոս հետ լրջորեն և ազդու խոսել:

Սակայն Մերի Հադսոնը ընդհատեց նրան, և եւս ձայնք որոշակիորեն լսեցին բալոր կամանչները.— Բայց ախր ես ուզում եմ,— սասաց նա:— Ես իսկապես ուզում եմ խաղալ:

Առաջնորդը զգեսով արեց և նորից սկսեց նրան համոզել: Նա ցույց տվեց թաց, ամբողջապես փոսերով ծածկված դաշտաքօ Վերցրեց ծեծանք և ցուցադրեց: Թե որքան ծանր է:

— Միենույն է,— բարձր տոսաց Մերի Հադսոնը:— Անտեղձ՝ եմ հասել Նյու-Յորք, իրոք թե ատամնաբույժի մոտ և այլն: Ձէ, ես ուզում եմ խաղալ:

Առաջնորդը դարձյալ տարուբերեց գլուխը, բայց զիջեց: Նա դանդաղ մոտեցավ այնտեղ, ուր սպասում էին Գարիեններն ու Ռազմիկները,— Այդպես էին կոչվում մեր քիմերը,— և նայեց ինձ: Ես Ռազմիկների կապիտանն էի: Նա հիշեցրեց, որ իմ կենտրոնական հարձակվողը հիվանդ է, քի կկնի, և առաջարկեց որպէս փոխարինող Մերի Հադսոնին: Ես ասացի, որ առհասարակ փոխարինողի կարիք չունեմ: Առաջնորդն ասաց՝ իսկ ինչու, գրողը տանի: Ես քարացա: Նա առաջին անգամ էր մեր ներկայութեամբ հայհոյում: Ավելի վատ, ես տեսա, որ Մերի Հադսոնը չպտում է ինձ: Որպեսզի ինքս ինձ հավաքեմ, մի քաբ վերցրի ու նետեցի ժառի վրա:

Մենք էինք սկսում խաղը: Սկզբում կենտրոնական հարձակվողն անելիք չունեք: Առաջին շարքից ես երբեմն ետ էի նայում: Եվ ամեն անգամ Մերի Հադսոնը ուրախ՝ ձեռքը թափահարում էր իմ կողմը: Ձեռքը բոյսրուային ձեռնոցի մեջ էր: պողպատի Գամառութեամբ Մերին պնդեց իր խոսքը և ձեռնոցը հագավ: Սարսափելի տեսարան էր:

Մեր թիմում Մերի Հադսոնը ըստ գնդակի մատուցման՝ իններորդն էր: Երբ ես հայտնեցի նրան այդ բանը, նա ծամածոնեց դեմքն ու ասաց.

— Հավ, միայն թե շուտ արեք:— Եվ որքան էլ տարօրինակ լինի, մենք իսկապես շտապեցինք: Եկավ նրա հերթը: Այդ առիթի կապակցութեամբ նա հանեց մորթի մուշտակն ու բոյսրուային ձեռնոցը և կանգնեց իր տեղում՝ մուգ դարչնազուլն զգեստով: Երբ ծեծանը տվեցի նրան, ասաց՝ ինչու է այսպես ծանր: Առաջնորդը անհանգստանում էր և դատա-

վարական տեղից գնաց նրան ավելի մոտ կանգնեց: Նա Մերի Հադսոնին պատվիրեց ծեծանի ծայրը հենել աչ ուսին:— Ես արդե՛հ հենել եմ,— ասաց նա: Առաջնորդը պատվիրեց շատ ուժեղ շեղմել:— Իսկ ես չեմ էլ սեղմում:— Առաջնորդը պատվիրեց նրան ուղիղ գնդակին նայել:— Ես նայում եմ,— ասաց Մերին:— Հապա մի ետ քաշվիր:

Ուժեղ հարվածով նա ետ տվեց առաջին իսկ իրեն ուղղված գնդակը, որ թռավ ձախ եզրայինի գլխի վրայով: Նույնիսկ որպես սովորական հարված դա գերազանց էր, բայց Մերի Հադսոնը անժիշկապես երրորդ դիրքին անցավ: Հենց այդպես, շատ սովորական:

Իմ մեջ զարմանքը նախ փոխարինվեց վախով, իսկ հետո՝ հիացմունքով, և միայն այդ բոլոր զգացումներից ազատվելուց հետո ես նայեցի մեր Առաջնորդին: Թվում էր, նա ոչ թե կանգնած է հարվածողի ետևում, այլ թևածում է նրա վերևում:

Նա անսահման երջանիկ էր: Մերի Հադսոնը հեռավոր դիրքից ձեռքը էր անում ինձ: Ես էլ նրան ձեռքով արեցի: Այստեղ ոչ ոք չէր կարող արգելել ինձ: Բանը ծնծան բանեցնելը չէր, նա հեռվից ձեռքով անելն էլ գեղեցիկ էր կատարում: Մինչև խաղի վերջը միշտ նպատակակառն խփեց: Չգիտեմ ինչու, նրան դուր չէր գալիս առաջին դիրքը, այնտեղ՝ նա ոչ մի կերպ չէր կարողանում դիմանալ: Երեք անգամ ետ քաշվեց երկրորդ դիրք:

Նա ձեռքից շատ վատ էր ընդունում, բայց մենք արդեն այնպես էինք տարվել խաղով, որ ժամանակ չվար դրան ուշադրություն դարձնելու: Իհարկե, շատ ավելի լավ կիսադար, եթե ետ մղել ինչով ասես, համենայն դեպս՝ ո՛չ բնյութության ձեռնոցով: Իսկ նա ոչ մի կերպ չէր ուզում ձեռնոցից բաժանվել: Չէ, ասում էր, ախր շատ լավն է:

Ամբողջ ամսվա ընթացքում նա կոմանչների հետ բեյսբոլ խաղաց շաբաթական երկու անգամ (երևում է, այդ օրերին գալիս էր ատամնաբույժի մոտ): Երբեմն ժամանակին էր դիմավորում «պիկասյին», երբեմն ուշանում էր: Անկ ամբողջ ժամանակ հովողում էր մեքենայի մեջ, մեկ լուռ և ծխում իր սիգարետները: Իսկ երբ ես նստած էի լինում նրա կողքին, հրաշալի օժանելիքի բույր էի առնում նրանից:

Ապրիլյան մի ցուրտ օր մեր Առաջնորդը, ինչպես միշտ, հավաքելով մեզ Հարյուրիններորդի և Ամստերդամյանի անկյունում, մեքենան թեքեց դեպի Արևելք, Հարյուրտասներորդի մոտ, և գնաց սովորականի պես Հինգերորդ ավենյուտով: Բայց նրա մազերը հարթեցված էին թաց խոզանակով, կաշվե բաճկոնի փոխարեն հագին գեղեցիկ վերարկու էր, և ես, ինքնըստինքյան հասկանալի է, ենթադրեցի, որ տեսակցություն ունի Մերի Հագսոնի հետ: Իսկ երբ սովորականի պես մտանք զրոսայգի, այլևս չէի կասկածում: Առաջնորդը, ինչպես և ենթադրվում էր, մեքենան կանգնեցրեց Վաթսուներորդ փողոցի մի անկյունում: Եվ որպեսզի ժամանակը ապանի առանց կոմանչներին վնասելու, նա նստեց գեմքով գեպի մեզ ու «Մարդը. որ ծիծաղում է» շարքի նոր սերիա սկսեց: Այդ սերիան հիշում եմ ամենայն մանրամասնությամբ և պետք է համառոտ պատմեմ ձեզ:

\*

Հանգամանքների բերումով Մարդու լավագույն ընկերը, ձեռնասուն հսկա-դայլը՝ Սևաթևը, խորամանկ և խարդախ Դյուֆարժի լարած ծուղակն է ընկնում: Տեղյակ լինելով Մարդու վեհանձնությանն ու ընկերների հանդեպ ունեցած հավատարմությանը՝ Դյուֆարժները առաջարկում են ազատել Սևաթևին, փոխարենը իրեն գերի վերցնելու պայմանով: Անվերապահորեն հավատալով նրանց՝ Մարդը համաձայնում է այդ պայմանին (երբեմն շատ փոքրիկ հարցնելում նրա ուղեղի հանճարեղ մեխանիզմը չէր աշխատում): Պայմանավորվում են, որ Դյուֆարժները Մարդուն կհանդիպեն Փարիզը շրջապատող կուսական անտառում և սյնտեղ էլ լուսնի լույսի տակ ազատ կարձակեն Սևաթևին, որից նրանք վախենում էին և ատում: Նշանակված գիշերը Սևաթևի փոխարեն նրանք մեկ ուրիշ գայլի են կապկպում, ետևի թաթը ներկելով սպիտակ, որպեսզի լիովին նմանվի Սևաթևին:

Սակայն Դյուֆարժները մոռացել էին երկու բան՝ Մարդու զգայուն սիրտը և գայլային լեզվի նրա իմացությունը: Հենց որ Մարդը հնարավորություն տվեց Դյուֆարժի դստերը՝ փղջարով ծառին կապկպել իրեն, նրա հիանալի քաղցրալուր

ձայնը սքտի թելադրանքով հրաժեշտի ուղերձ հնչեցրեց նրա համար, ում որ նա ընդունել էր իր հին բարեկամի փոխարեն: Փոխարինող գայլը, մի քանի քայլ հեռու կանգնած լուսնի լույսով լուսավորված բացատում, ապշել էր անծանոթի լեզվական իմացությունից և քաղաքավարությունամբ ունկնդրում էր ինչպես անձնական, այնպես էլ պրոֆեսիոնալ բնույթի ուղերձը: Բայց հետո դա ձանձրացրեց նրան, և նա սկսեց մի թաթից մյուսի վրա հենվել: Հանկարծ նա բավական կտրուկ ընդհատեց Մարգուև, հայտնելով, որ նախ՝ իրեն ոչ Յիսաթե, ոչ Սեաթե են կոչում և ոչ էլ Գորշոտք, և ընդհանրապես ոչ մի հիմար անունով, իր անունը Արման է, երկրորդն էլ՝ ինքք կյանքում երբեք չի եղել Զինաստանում և ոչ էլ փոքր-ինչ ցանկություն ունի այնտեղ ընկնելու:

Արդարացիորեն դայրացած՝ Մարգը լեզվով պակեց դիմակը և լուսնի լույսի տակ Դյուֆարժենրին ներկայացավ իր դեմքի ամբողջ մերկությունը: Մաղմուազել Դյուֆարժն անմիջապես ուշաթափ եղավ: Հոր բախտն ավելի բերեց: Բարեբախտաբար բռնեց նրա սովորական թոքբախտային հազի նոպան, և նա փրկվեց մահացու վախից:

Երբ նոպան անցավ, նա լուսնի լույսի տակ տեսավ ազդեկա անզգայացած մարմինը և անմիջապես ամեն ինչ հասկացավ: Աչքերը ձեռքի ափով ծածկելով՝ նա իր ամբողջ ատերճանակը պարպեց ծանր սուլոցով շնչող Մարգու վրա:

Այսքանով պատմությունը ավարտվեց մինչև հաջորդ թաղարկումը: Առաջնորդը գրպանից հանեց իր մեկ դուլարանոց ժամացույցը, նայեց, շուտ եկավ դեպի զեկը և մոտորը գործի գցեց: Ան նայեցի ժամացույցիս: Գրեթե չորսն անց էր կես: Երբ մեքենան շարժվեց, նա Առաջնորդին հարցրեւ.— Մի՞թե շենք սպասելու Մերի Հադսոնին: Նա շպատասխանեց, և նախքան նա կհասցնեի կրկնել հարցս, ետ շրջվեց և բռնորեն տաց.— Հապա եկեք շխոսենք: Լուսնուն:— Ինչպես էլ որ նայում ես, դա անիմաստ հրաման էր: Մեքենայում մինչ այդ էլ, այդ ժամանակ էլ լուսնուն էր տիրում: Բուրբ մտածում էին այն անախորժության մասին, որի մեջ ընկել էր Մարգը: Զէ՛, մենք վաղուց այլևս չէինք վախենում Մարգու համար,— շատ էինք հավատում նրան,— բայց երբ վտանգի

մեջ էր ընկնում, ոչ մի խոսակցութիւն այլեւ չէր հետաքրքրում մեզ:

Մենք արդեն երեք կամ չորս թայմ խաղացել էինք, երբ հեռվից նկատեցի Մերի Հադսոնին: Նա նստել էր նստարանին, ինձնից դեպի ձախ, մի հարշուր մետրի վրա, մանկասալլակներով երկու դայակների միջև: Նրա հագին մորթե մուշտակ էր, նա սիգարետ էր ծխում և կարծես նայում մեր կողմը: Ես հուզվեցի՝ այգպիսի հայտնութիւն, և ձայն տվի մեր Առաջնորդին, որ կանգնած էր գնդակը նետողի նստում: Նա շտապեց ինձ մոտ՝ ջանալով շվտոզել:

«Ռոտն՞դ է», — հարցրեց: Ես ցույց տվի: Նա նայեց այն կողմ, ապա ասաց. «Մի րոպեից կգամ»: Եվ դուրս եկավ դաշտից: Նա դանդաղ էր գնում, արձակելով վերարկուի կաճակները և ձեռքերը տաբատի գրպանները դնելով: Ես նստեցի առաջին դիրքի մոտ ու սկսեցի նայել նրա կտևից: Երբ մոտենում էր Մերի Հադսոնին, վերարկուն արդեն կոճկված էր մինչև վերջ, իսկ ձեռքերը կողքերին ձգված:

Նա աղջկա մոտ կանգնեց մի հինգ րոպե, ինչ-որ բան ասաց: Հետո Մերի Հադսոնը վեր կացավ, և երկուսով եկան դեպի հրապարակ: Ծանապարհին երկուսն էլ լուռ էին և ոչ մի անգամ չնայեցին իրար: Երբ մոտեցան, և Առաջնորդը կրկին կանգնեց իր տեղում, ես գոռացի.

— Իսկ նա խաղալո՞ւ է:

Առաջնորդն ասաց՝ ավելորդ շխտեսել: Ես ավելորդ շխտեցի, բայց աչքս չէի հեռացնում Մերի Հադսոնից: Նա դանդաղ անցավ խաղահրապարակի երկարությամբ, ձեռքերը մուշտակի գրպանները խոթած, և վերջապես նստեց տեղից նստեցած նստարանին, երրորդ դիրքի նստում: Նա ուտքը առջին պահի սիգարետ էր ծխում:

Երբ արդեն մազմիկներն էին գնդակը նետում, մոտեցա նրա նստարանին ու հարցրի, թե չի՞ ցանկանում արդյոք խաղալ ձախ թևում: Նա տարուբերեց գլուխը:

Հարցրի.— Հարբո՞ւիս ունեք:— Բայց նա կրկին տարուբերեց գլուխը:

Ես ասացի, որ իմ ձախ թևում ոչ մեկը չկա, որ խաղալու  
Բացատրեցի, որ իմ թիմում միևնույն տղան է և ձախ  
թևում խաղում, և կենտրոնում: Այդ հաղորդմանս աչ մի  
պատասխան չտրվեց: Ես ձեռնոցս վեր նետեցի, փորձելով  
խփել զխոզ, բայց վրիպեցի, ընկավ ցեխի մեջ: Զեռնոցս  
քսեցի տաբատիս և Մերի Հագսոնին հարցրի. «արդյոք հյուր  
չի՞ գա մեր տուն, ճաշին: Եվ բացառեցի, որ Առաջնորդը  
հաճախ է հյուր գալիս մեզ:

— Հանգիստ թող ինձ,— ասաց նա:— Խնդրում եմ, հան-  
գիստ թող:

Աչքերս լայն բացած նայեցի նրան, հետո գնացի դեպի  
նստարանը, որտեղ նստած էին իմ Ռազմիկները, ու գրպա-  
նիցս մի մանդարին հանելով, սկսեցի վեր-վեր թոցնել օդում:  
Տուգանային գծին շհասած՝ սկսեցի ետ-ետ գնալ, նայելով  
Մերի Հագսոնին և շարունակելով վեր-վեր թոցնել մանդա-  
րինը: Չէի հասկանում, թե ինչ է կատարվում նրա և մեր  
Առաջնորդի միջև, հիմա էլ զգացողությամբ ազոտ ենթա-  
դրություններ եմ անում, բայց, այնուամենայնիվ, իմ մեջ  
աճում էր համոզմունքը, որ Մերի Հագսոնը ընդմիջտ դուրս  
թռավ կոմանչների ցեղից: Այդ համոզմունքը, արտաքին  
հանգամանքներից անկախ, այնպես ազդեց նույնիսկ ետ-ետ  
գնալուս կանոնավոր ունակության վրա, որ ես կպա ուղիղ  
մանկասայլակին:

Հաջորդ թայմից հետո խաղալու համար արդեն մութ էր:  
Մենք ավարտեցինք խաղը և սկսեցինք հավաքել գործիք-  
ները: Ես մի անգամ էլ հասցրի նայել Մերի Հագսոնին. նա  
կանգնել էր հրապարակի եզրին ու լաց էր լինում: Առաջնոր-  
դը ուզում էր բռնել նրա մուշտակի թևը, բայց նա դուրս  
պրծավ: Վազեց ցեմենտած ճանապարհով, այնքան, մինչև  
որ անհետացավ: Առաջնորդը նրա հետևից չվազեց: Միայն  
հայացքով ուղեկցեց, մինչև որ նա շքացավ: Հետո շո՞ք եկավ,  
մտավ դաշտ, վերցրեց մեր երկու ձեծաններն ու տարավ  
դրեց մեքենայի մեջ: Ես մոտեցա նրան և հարցրի. «ուրեմ  
նա ու Մերի Հագսոնը խոռովե՞լ են: Ասաց.— Քիթդ ամեն տեղ  
մի՞ խռթիր:

Ինչպես միշտ, մենք՝ կոմանչներս, ճիշ ու գոռոցով վա-  
զեցինք դեպի մեր մեքենան, հրելով ու հրմշտելով իրար:



Քուրը հիանալի հասկանում էին, որ հիմա գալիս է Մարդու սլատմության ժամանակը: Հինգերորդ ավենյուն անցնելիս ինչ-որ մեկը ձեռքից գցեց իր պահեստային սվիտերը, և սայթաքելով դրա վրա, ես հասակովս մեկ փուլեցի: Հասնելով մեքենային, տեսա, որ լավազույն տեղերն զբաղված են, ու հարկադրված եղա նստել միջին շարքում: Տրամադրությունս ընկնելուց ես արմունկով հասցրի աջ կողքիս նստածին, հետո դուրս նայեցի և տեսա, թե մեր Առաջնորդն ինչպես էր անցնում փողոցը: Այնքան էլ դեռ մութ չէր, բայց արդեն մթնշաղ էր, ինչպես սովորաբար լինում էր հինգ անց քառորդ: Մեր Առաջնորդը անցնում էր փողոցը՝ օձիքը բարձրացրած, ծեծանները թևի տակ դրած, հայացքը սալահատակին հառած: Նրա սև մազափունջը, որ այնպես հարթեցված էր թաց խողանակով, այժմ շորացել էր ու քամու բերանն ընկել: Հիշում եմ, ափսոսացի, որ նա ձեռնոցները չունի:

Ինչպես միշտ, նրա գալուն պես մեքենայի մեջ լուռություն տիրեց: Այսինքն՝ հարաբերական լուռություն, ինչպես թատրոնում: Մեկը փութկոտ շշուկով ավարտեց իր խոսքը, մյուսն անմիջապես ընդհատեց նրան: Եվ այնուամենայնիվ, առաջին խոսքը, որ ասաց մեր Առաջնորդը, հետևյալն էր.

— Լուռություն, երեխաներ, թե չէ ոչինչ չեմ պատմի:

Անմիջապես լիակատար լուռություն տիրեց, այնպես որ Առաջնորդին մնում էր նստել տեղն ու պատրաստվել պատմությունն սկսելուն: Նստելով, նա հանեց թաշկինակն ու մաքրեց նախ մեկ, ապա մյուս ոտնոցը: Մենք այդ տեսարանին նայում էինք համբերությամբ, անգամ որոշ հետաքրքրությամբ: Քիթը մաքրելուց հետո նա թաշկինակը խնամքով ծալեց չորս տակ և դրեց գրպանը: Եվ սկսվեց Մարդը, որ ծիծաղում է պատմության նոր թողարկումը: Շատունակվեց այն հինգ բուպեից ոչ ավելի:

Դյուֆարժի չորս գնդակները խրվեցին Մարդու մարմնի մեջ, դրանցից երկուսը՝ ուղղակի սիրտը: Իսկ երբ Դյուֆարժը, որը դեռ չէր բացում աչքերը, որպեսզի շտեմնի Մարդու դեմքը, լսեց դիմացից եկող մահամերձ տնքոցները, ցնծաց: Զարագործի սիրտը ուրախ թրթռաց, նա նետվեց գստեր կողմը, որ ընկած էր ուշաթափ, և ուշքի բերեց նրան: Հրեմանքից իրենց կորցրած՝ երկուսն էլ վախկոտի քաջությամբ

միայն հիմա համարձակվեցին նայել Մարդու վրա, որ ծիծաղում էր: Նրա գլուխը բռնված էր հոգնվարքի տանջանքների, ծնոտը քսվում էր արնաշաղախ կրծքին: Դանդաղ ու ազահորեն հայր ու աղջիկ մտանում էին իրենց որսին: Բայց նրանց փոքր անակնկալ չէր սպասում: Մարդը բոլորովին էլ չէր մեռել, նա գաղտնի ձևերով կծկել էր փոքրի մկանները: Եվ երբ Դյուֆարժները մոտեցան, նա հանկարծ բարձրացրեց գլուխը, քրքջաց անդրշիրիմյան ձայնով և խնամքով, նույնիսկ բծախնդրորեն, իրար ետևից դուրս թքեց բոլոր շորս գնդակները: Այդ սխրանքը այնպես շշմեցրեց Դյուֆարժներին, որ նրանց սրտերը տառաջիտրեն պայթեցին, ու երկուսըն էլ՝ և՛ հայրը, և՛ աղջիկը, մեռած ընկան ոտքերի մոտ Մարդու, որ ծիծաղում էր: (Եթե թողարկումը նսխատեսված էր համառոտ անել, կարելի էր կանգ առնել հենց այդտեղ: Կոմանչները Դյուֆարժների մահվան բացատրությունը հեշտություն կգտնեին: Բայց պատմությունը շարունակվեց):

Մարդը օրեր շարունակ փշալարով կապված մնաց ծառին, իսկ Դյուֆարժների գիակները՝ նրա ոտքերի մոտ ընկած: Մահը երբեք այգբան մոտ չէր եղել նրան, նրա վերքերից արյուն էր ծորում, իսկ ձեռքի տակ արծվի արյուն չկար: Եվ ահա մի անգամ նա խուսոտած, բայց ջերմ ձայնով օգնություն կանչեց անտառի գազաններին: Հանձնատարեց նրանց իր մոտ կանչել հաճելի թզուկ Օմբային: Եվ նրանք կանչեցին: Բայց երկար է Փարիզից—Չինաստան գնալ-գալը ու երբ Օմբան դեղարկողիկը և արծվի արյան թարմ պաշարը ձեռքին ներկայացավ, Մարդն արդեն ուշաթափվել էր: Օմբան նախ և առաջ գթասրտության արարողություն կատարեց, բարձրացրեց իր տիրոջ դիմակը, որ ընկած էր մադամուզով Դյուֆարժի մարմնի մեջ վխտացող սրղերի վրա: Նա հարգալիրություն ծածկեց սոսկալի դեմքը, ապա նոր սկսեց կապել վերքերը:

Սրբ Մարդը, որ ծիծաղում էր, վերջապես բացեց կուլ գնացած աչքերը, Օմբան արծվի արյունը շտապ մոտեցրեց դիմակին: Բայց Մարդը ձեռք չտվեց նրան: Թուլացած ձայնով նա ասեց իր սիրելու՝ Սևաթևի անունը: Օմբան խոնարհեց գլուխը, — նա նույնպես շատ գեղեցիկ չէր, — և հայտնեց իր տիրոջը, որ Դյուֆարժները սպանել են նրա հավատարիմ

գայլ Սևաթեին: Մի սրտակեղեք, վշտաբեկ հառաչանք դուրս  
թռավ Մարդու կրծքից: Թույլ ձեռքը նա մեկնեց արծվի ար-  
յամբ լի անոթին ու ջարդեց այն: Արյան մնացորդը բարակ  
շիթով հոսեց նրա մատների վրայով: Նա Օմբային հրամայեց  
շրջել դեմքը, և Օմբան հեկեկալով ենթարկվեց նրան: Ու նախ-  
քան դեմքը արյունով հեղված հողին դարձնելը, Մարդը, որ  
ծիծաղում էր, մահամերձ ջղաձգության մեջ պոկեց դիմակը:

Սրանով էլ, հասկանալի է, ավարտվեց պատմությունը:  
(Շարունակություն հրեք այլևս չեղավ): Մեր Առաջնորդը  
բշեց մեքենան: Ինձնից քիչ հեռու նստած Վիլի Ուոլշը՝ կո-  
մանչներից ամենակրտսեբը, դառը հեկեկաց: Ոչ ոք նրան  
չստաց՝ լոիր: Ինչպես այսօր, հիշում եմ, իմ ծնկներն էլ էին  
դողում:

Մի քանի րոպե անց, երբ դուրս եկա մեքենայից, հան-  
կարծ տեսա, որ լապտերայան հիմքի մոտ մի կտոր բարակ  
ալ գույնի փաթեթաթուղթ էր ընկած քամու բերանը: Դա  
չատ էր նման կակաչի ծաղկաթերթիկներից շինված այն դի-  
մակին: Երբ տուն եկա, աստամներս անզսպորեն իրար էին  
զարկվում, և խնձ պատվիրեցին անմիջապես անկողին մտնել:

**Ե**թե դրա մեջ փոքր-ինչ իմաստ լիներ,— որ մըտքովս անգամ չի անցնում,— ես հակված կլինեի իմ այս բժաշակական պատմվածքը, հատկապես եթե այն գոնե մի քիչ աշխույժ ստացվեր, նվիրաբերել հանգուցյալ խորթ հորս՝ մեծ շարաճճի Ռոբերտ Աղաջանյանի հիշատակին: Բորի կրտսերը, ինչպես անվանում էին նրան բոլորը, նույնիսկ՝ ես, մահացավ 1947 թվականին, անոթների խցանումից, հավանաբար աֆսոսանքով, բայց առանց մի փոքր անգամ դժգոհելու: Դա մի խելահեղ, արտակարգ հմայիչ ու շռայլ անձնավորություն էր: (Ես այնքան երկար ժամանակ ե համառորեն եմ խնայել այս շքեղ մակդիրները, որ հիմա պատիվ եմ համարում արժանին հատուցել նրան):

Իմ ծնողները բաժանվեցին 1928 թվականի ձմռանը, երբ ես ութ տարեկան էի, իսկ գարնանը մայրս ամուսնացավ Բորի Աղաջանյանի հետ: Մի տարի անց ֆինանսական ճգնաժամի օրերին Ուոլ-սթրիտում Բորին կորցրեց իր և մայրիկիս ամբողջ կարողությունը, բայց, հավանաբար, պահպանեց գուշակելու հմտությունը: Այսպես թե այնպես, մի օր էլ չէր անցել, որ Բորին գործազուրկ մակլերից ու աղքատացած բոնվիվանից ինքն իրեն դարձրեց ձեռներեց, թեև ոչ շատ հմուտ գնահատող-գործակալ, որը օպասարկում է ամերիկյան գեղանկարչության մասնավոր պատկերասրահների տնօրենների ժիուլյանը, ինչպես նաև գեղարվեստի թանգարանների: Մի քանի շաբաթ անց, 1930 թվականի սկզբում, մեր

ոչ այնքան սովորական եռյակը Նյու-Յորքից տեղափոխվեց Փարիզ, որտեղ Բորին ավելի հեշտությամբ կարող էր զբաղվել իր մասնագիտությամբ: Ծն տասը տարեկան էի, անտարբերության հասակում, եթե շասենք լիակատար անտարբերության, և այդ լուրջ փոփոխությունը առանձնապես ինձ շքնկեցեց, ինձ փշրեց ինը տարի հետո, մայրիկիս մահից երեք ամիս անց, կրկին Նյու-Յորք վերադառնալը, և փշրեց սոսկալի ուժով:

Լավ եմ հիշում մի դեպք, իմ և Բորիի Նյու-Յորք ժամանելուց երկու օր հետո: Ծն կանգնած էի լեփ-լեցուն ավտոբուսում, Լեքսինգտոն-ավենյուի վրա, վարորդի ետևում գրտնըվող նիկելապատ ձողից բռնած, թիկունք-թիկունքի ետև կանգնած մի մարդու հետ: Վարորդը մի քանի անգամ իր մոտ հավաքվածներին կրկնեց. «Ծն գնացեք»: Ոմանք կատարեցին, ոմանք՝ ոչ: Վերջապես, օգտվելով կարմիր լույսից, տառապած վարորդը կտրուկ ետ շրջվեց ու նայեց ինձ. ես շատ մոտ էի կանգնած նրան: Այն ժամանակ ես տասնինը տարեկան էի, շլյապա չէի դնում, և հարթ, սև, ոչ շատ մաքուր եվրոպական ոճի մազափունջս թափվում էր լողուկոտ ճակատիս: Վարորդը դիմեց ինձ ոչ բարձր, ես կասեի՝ նույնիսկ զգուշավոր, ձայնով:

— Հապա, եղբայր, — ասաց նա, — քամակդ ետ տար: — Այդ «եղբայրն» էլ հենց վերջնականապես կատաղեցուց ինձ: Նեղություն չկրելով գոնե փոքր-ինչ կռանալու դեպի նա, այսինքն՝ խոսակցությունը շարունակելու նույնսիսի մասնավոր կարգով, նույն bon goût-ով՝, ես ֆրանսերեն ասացի, որ նա կողիտ, բութ, լկտի տիպ է և չի պատկերացնում նույնիսկ, թե խնչպես եմ ատում իրեն: Ծվ միայն այդպես սիրտս թեթևացնելուց հետո ետ քաշվեցի:

Բայց պատահում էր և ավելի վատ: Մեկ ուրիշ անգամ, մի շաբաթ անց, դուրս գալով «Էլիտց» հյուրանոցից, որտեղ մշտապես բնակվում էինք ես ու Բորին, հանկարծ պատկերացրի, որ նյույորքյան բոլոր ավտոբուսներից հանել են նրատատեղերը, շարել մայթերի վրա, և ամբողջ փողոցը խաղում է ծովը փոթորկվում է՝ խաղը: Ծն ինքս էլ կհամա-

ձայննի խաղալ, եթե միայն երաշխիք ստանայի Մյուն-հետենյան եկեղեցուց, որ մնացած մյուս մասնակիցները պետք է հարգալիր կանգնեն, սպասեն, մինչև որ ևս զբաղեցնեմ իմ տեղը: Երբ պարզ դարձավ, որ ոչ ոք էլ չի ուզում իր տեղը զիջել ինձ, ես ավելի վճռական միջոցներ ձեռք առաւ: Սկսեցի աղոթել, որ բոլոր մարդիկ շքվեն քաղաքից, որպեսզի ինձ լիակատար մենություն ընծայվի, այո, մենություն: Նյու-Յորքում դա միակ խնդիրքն է, որ շին դնում մահուդի տակ և երկնային գրասենյակներում շին ուշացնում: դեռ չէի հասցրել ետ նայել, երբ այն ամենը, ինչ ինձ էր վերարեբում, արդեն շնչում էր անհուսալի միայնությամբ: Առավոտից մինչև կեսօր ոչ թե հոգով, այլ մարմնով ես ներկա էի լինում Քառասունութերորդ փողոցի և Լեքսինգտոն-ավենյուի անկյունում գտնվող գեղարվեստական դպրոցի ինձ համար ատելի պարապմունքներին: (Իմ և Բոբիի Փարիզից դուրս գալուց մի շաբաթ առաջ ես ստացա երեք առաջին մրցանակները Ֆրայբերգի պատկերասրահում կայացած երիտասարդ նկարիչներին-ազգային ցուցահանդեսում: Ու երբ վերադառնում էինք Ամերիկա, ես շարունակ նայում էի մեր Լավախցի մեծ հայելուն և զարմանում էլ-Քրեկոյի հետ ունեցած իմ անբացատրելի նմանությունից): Շաբաթական եռեք օր ետկեսօրյա ժամերը ես անց էի կացնում ատամնաբուժական ակթոռի վրա: Մի քանի ամսվա ընթացքում հաննցի՛ն իմ ութ ատամները, որոնցից երեքը առջևի ատամներ էին: Շաբաթական երկու անգամ ես շրջում էի պատկերասրահներում, ավելի շատ Հիսունյոթերորդ փողոցում, ու հազիվ էի զսպում ամերիկյան նկարիչների վրա սուլելու ցանկությունս: Երեկոները սովորաբար կարդում էի: Ես գնել էի «Քրականության դասականների» հարվարդյան լիակատար հրատարակությունը, հիմնականում Բոբիի կամքին հակառակ, — նա ասում էր, թե դնելու տեղ չունենք, — ի հեճուկս բոլորի այդ հիսուն հատորն էլ ծայրից ծայր կարդացի: Իրիկունները ես նկարակալը համառորեն տեղավորում էի մեր մահճակալների մեջ և յուղաներկով նկարում: Եթե հավատալու լինենք 1939 թվականի իմ օրագրին, հենց միայն մի ամսում ես ավարտեցի տասնութ կտավ: Ուշագրավն այն էր, որ դրանցից սասնյոթը ինքնանկարներ էին: Միայն երբեմն, հավանաբար, այն օրե-

րին, երբ մուսաս քմահաճություններ էր անում, մի կողմ էի գնում ներկերը և ծաղրանկարներ անում: Գրանցից մեկը մինչև օրս էլ պահպանվել է: Այդտեղ պատկերված է մի վիթխարի մարդկային բերան, որի վրա աշխատում է ատամնաքույժը: Լեզվի փոխարեն բերանից կախ է ընկել: Հարյուր դոլլարանոց մի Քոլթադրամ, և ատամնաքույժը Ֆրանսերեն տխուր ասում է պացիենտին. «Կարծում եմ սնդանատամը կարելի է թողնել. իսկ, այ, լեզուն, հարկադրված կլինեմ պոկել»: Ծա պաշտում էի այդ ծաղրանկարը:

Ծա ու Բորին համատեղ կյանքի համար իրար համապատասխանում էինք մոտավորապես այնքան, որքան Եր ասենք Հարվարդի համալսարանի բացառիկ դաստիարակված, զիջող ավագ կուրսի ուսանողը և բացառիկ գարշելի քեմբրիջյան լրագրավաճառ տղան: Ու երբ ժամանակի ընթացքում պարզվեց, որ երկուսս էլ մինչև հիմա սիրում ենք միևնույն մահացած կնոջը, դրանից բոլորովին շեղված լինելու Ընդհանրապես, այդ գյուտից հետո մեր մեջ ստեղծվեց մի անտանելի կեղծ, թունդ քաղաքավարի հարաբերություն: Կարծես ամեն անգամ «Միայն ձեզնից հետո, Ալֆոնս» էինք ասում մեկմեկու՝ հանդիպելով լոգարանի շեմին:

Մի անգամ 1939 թվականի մայիսին (մենք մոտ տասնամիս ապրում էինք «Ռիտց» հյուրանոցում) քվեբեկյան մի թերթում (ես տասնվեց թերթ ու ամսագիր էի բաժանորդագրվում Ֆրանսերեն լեզվով) քառորդ սյունականոց մի հայտարարություն կարդացի, որ տպագրել էր Մոնոեալի գեղարվեստի հեռակա դասընթացների դիրեկցիան: Հայտարարությունը կոչ էր անում, նույնիսկ ընդգծում էր, որ կոչ է անում միանգամայն *fortement*<sup>1</sup>, բոլոր որակավորված մանկավարժներին՝ մանկավարժի տեղի համար անհապաղ դիմում ներկայացնել Կանադայի ամենանոր, ամենաառաջին գեղարվեստական հեռակա դասընթացներին: Թեկնածուները պետք է գերազանց տիրապետեն ինչպես անգլերեն, այնպես էլ Ֆրանսերեն լեզուներին, և միմիայն անբասիր համբավի ու օրինակելի վարքի տեր անձինք կարող են մասնակցել այդ մըր-

1 Համատորեն:

ցր:յթին: «Les Amis des Vieux Maîtres»-ի<sup>1</sup> ամառային կիսամյակը պաշտոնապես բացվում է հունիսի տասին: Աշխատանքի նմուշները, ինչպես զուտ արվեստի, այնպես էլ ռեկլամի ասպարեզում, հարկավոր է ուղարկել դասընթացների դիրեկտոր, Տոկիոյի գեղարվեստի կայսերական ակադեմիայի նախկին անդամ մոսյո Յոշոտոյի անունով:

Անմիջապես համակվեցի մի անհաղթահարելի համոզմունքով, որ ինձնից լավ թեկնածու չի ճարվի: Ես շուրս քաշեցի Բորիի ձեռքի գրամեքենան և Ֆրանսերեն մի երկա՛ր-երկար անշափ հուզիչ նամակ գրեցի մոսյո Յոշոտոյին: և դրա պատճառով, իհարկե, բացակայեցի իմ դպրոցի առավոտյան պարապմունքներից: Նախաբանից սկսած (ամբողջ երեք էջ) օւղղակի շիլաշփոթ սարքեցի:

Գրեցի, որ քսանինը տարեկան եմ, որ Օնորե Գոմյեի երբորդ պորտի զարմիկն եմ: Գրեցի, որ հենց նոր եմ հեռացել, կնոջս մահից հետո, Ֆրանսիայի հարավում գտնվող իմ ոչ մեծ տոհմական կալվածքից և ժամանակավորապես, սա հատուկ ընդգծեցի, հյուրընկալվում եմ Ամերիկայում, գառամյալ հարազատիս մոտ: Նկարում եմ վաղ մանկուց, բայց մեր ընտանիքի հին և սիրելի բարեկամ Պարլո Պիկասոյի խորհրդով ոչ մի անգամ չեմ ցուցադրել աշխատանքներս: Սակայն իմ բազմաթիվ կտավները՝ յուղաներկ և ջրաներկ, ներկա դեպքում զարդարում են Փարիզի լավագույն տները, ըստ որում ոչ ինչ-որ նորահարուստների, և արվեն *gagne*<sup>2</sup> մեր ժամանակի ամենաականավոր քննադատների ուշադրությունը: Տիկնոջս անժամանակ և ողբերգական մահից հետո, որ տեղի ունեցավ *ulcération cancéreuse*-ի<sup>3</sup> հետևանքով, ես խորապես համոզված էի, որ երբեք այլևս ձեռքս չեմ առնի վրձինը: Բայց վերջերս գրեթե սնանկացա, և դա հարկադրեց ինձ վերանայել իմ շուրջ *resolution*-<sup>4</sup>ը: Ես գրեցի, որ պատիվ կհամարեմ սեփական աշխատանքներիս նմուշները ներկայացնել «Մեծ վարպետների սիրահարներին», հենց որ դրանք օւղարկի փարիզցի իմ գործակալը, որին ես, իհարկե, կգրեմ

<sup>1</sup> «Մեծ վարպետների սիրահարներ»:

<sup>2</sup> Գրավել են:

<sup>3</sup> Բաղցկեղ:

<sup>4</sup> Որոշում:



très pressé<sup>1</sup>: Եվ ստորագրութիւն. քեորին հարգանքներով  
ժամ զը Գոմյե-Սմիթս:

Այդ ծածկանունը հորինելու համար ես ավելի երկար  
մտածեցի, քան կշարադրեի նամակս:

Նամակը գրեցի հասարակ բարակ թղթի վրա: Քայց փա-  
կեցի մի ծրարում, որի վրա տպված էր՝ «Ռիտց հյւրանոց»:  
Պատվիրված նամակի դրոշմանիշներ փակցրի, հանելով զը-  
րանք Բորիի դարակից, և նամակս գցեցի հատուկ փոստ-  
արկղը: Ըանապարհին կանգ առա դռնապանի մոտ, որ բաժա-  
նում էր փոստը (նա բացահայտ ատում էր ինձ) և զգուշացրի  
զը Գոմյե-Սմիթի անունով նամակների ստացման հնարա-  
վորութեան մասին: Երկուան անց կեսին ես սողոսկեցի իմ  
ուսարանը. երկուսից քառորդ պակաս անատոմիայի դասն  
արդեն սկսվել էր: Իմ դասընկերներն առաջին անգամ հիա-  
նալի տղաներ թվացին ինձ:

Չորս օր շարունակ ես իմ ամբողջ ազատ, նաև ոչ ազատ,  
ժամանակը վատնում էի ամերիկյան ռեկլամի համար, ինչ-  
պես ինձ թվում էր, բնորոշ նմուշներ նկարելու վրա: Գերա-  
զանցապես աշխատելով ջրաներկով, երբեմն էլ առավելա-  
գույն արդյունքի համար անցնելով գծանկարի՝ ես պատկե-  
րում էի երեկոյան կոստյումներով գերնրբագեղ զույգեր,  
որոնք լիմուզիններով գնում էին թատերական պրեմիերա-  
ների՝ շորշուկ, սլացիկ, թևատակի հիգիենայի հանդեպ ան-  
փուլթ վերաբերմունքի պատճառով կյանքում ոչ մեկին տա-  
ռապանք չպատճառած, ի դեպ, այդ էակները, թերևս, թևա-  
տակ էլ չունեին: Ես պատկերում էի ճերմակ սմոկինգներով  
արևառված պատանի հսկաներ՝ նստած ճերմակ սեղանների  
մոտ, լազուր ավազանների ափին. նրանք շափազանցված  
եռանդով բարձրացնում էին կոկտեյլով լի գավաթները, որի  
մեջ մտնում էր էթանագին, բայց խիստ մոդայիկ վիսկու մի  
տեսակը: Ես նկարում էի կարմրաթուշ, խիստ ցուրտագե-  
նիկ» երեխաների, որոնցից ուղղակի առողջութիւն էր կա-  
թում, հիացմունքից շողշողալով՝ նրանք մեկնում էին դա-  
տարկ ափսեները և շիլայի լրացուցիչ բաժին խնդրում: Ես  
նկարում էի ուրախ, բարձրակուրծք աղջիկների, նրանք սա-

<sup>1</sup> Շտապ:

հում էին աքվապլաններին վրա, անհոգ, որովհետև հիմնա-  
վարապես պաշտպանված էին այնպիսի համաժողովրդական  
աղետներին, ինչպիսիք են լնդերի արյունահոսությունը, դեմ-  
քի ոչ մաքուր գույնը, մազաթափումը և շապահովագրված  
կյանքը: Ես նկարում էի տնային տնտեսուհիների, ու եթե  
ներանք լավագույն օճառափոշի չէին գործածում, ապա նրանց  
սպասում էր սոսկալի կյանքը. գզգզված, կորաքամակ, նրանք  
քարչ են գալու իրենց բարձիթողի արված, թեև ընդարձակ  
խոհանոցներում, նրանց նուրբ ձեռքերը կոպտանալու են, և  
երեխաները դադարելու են ենթարկվել նրանց, իսկ ամու-  
սիները ընդմիշտ դադարելու են սիրելուց: Վերջապես նմուշ-  
ները պատրաստ էին, և ես անմիջապես դրանք ուղարկեցի  
մոսյո Յոշտոյին՝ զուտ գեղարվեստական ստեղծագործու-  
թյանների մի տասը նմուշների հետ, որոնք բերել էի  
Ֆրանսիայից: Դրանց կցեցի մի ոչ մեծ նամակ, որտեղ սեզմ,  
բայց ջերմորեն պատմում էի այն մասին, թե ինչպես, առանց  
որևէ մեկի օգնության, հետևելով ռոմանտիկական բարձր  
ավանդույթներին, հաղթահարել էի ամեն տիպի արգելքներ  
և մենության մեջ հասել վարպետության սառը հերմետի-  
կամբ շողշողացող գագաթներին:

Մի քանի օր շարունակ ես անցկացրի լարված սպասում-  
ների մեջ, բայց շաբաթվա վերջում նամակ ստացա մոսյո  
Յոշտոյից, որով հայտնում էր, որ ես ընդգրկված եմ «Մեծ  
վարպետների սիրահարներ» դասընթացների ուսուցիչների  
ցուցակում: Նամակը գրված էր անգլերեն, ես ֆրանսերեն էի  
գրել: (Հետագայում իմացա, որ մոսյո Յոշտոն ֆրանսերեն  
գիտեր, բայց անգլերեն՝ ոչ, և չգիտես ինչու պատվիրել էր  
պատասխանել մադամ Յոշտոյին, որ մի քիչ անգլերեն գի-  
տեր): Մոսյո Յոշտոն գրել էր, որ ամառային նոստալգիկ  
լինելու է, թերևս, ամենածանրաբեռնվածը և սկսվելու է հու-  
նիսի քսանչորսից: Նա հիշեցնում էր, որ ինձ հինգ շաբաթ  
է մնում անձնական գործերս կարգավորելու համար: Նա  
անսահման կարեկցանք էր հայտնում իմ նյութակառն և բա-  
րոյակառն կորուստների կապակցությամբ: Հույս էր հայտ-  
նում, որ ես կարող եմ ներկայանալ «Մեծ վարպետների սի-  
րահարներ» դասընթացներին կիրակի օրը, հունիսի քսանե-  
րեքին, որպեսզի ծանոթանամ իմ պարտականություններին,

ինչպես նաև «բարեկամութիւն հաստատեմ» մյուս դաստատուների հետ (Ինչպես հետո իմացա, դրանք միայն երկուսն էին՝ տիկին և պարոն Յոշոտոնները)։ Նա խորապես աստուծոյն էր, որ դասընթացների սովորույթների մեջ չի մտնում դասատուների ճանապարհածախսերը հոգալու պարտականութիւնը։ Իմ աշխատավարձը սիտք է կազմի շաբաթական քսանութ դոլլար, և մոսյո Յոշոտոն գրում էր, որ միանգամայն հասկանալի է, թե որքան փոքր է այդ գումարը, բայց քանի որ դրա հետ միասին տրվում է նաև ընակարան և լավ սնունդ, ապա նա հույս ունի, որ ես շեմ հիասթափվի, մանավանդ որ իմ մեջ նա զգում է իսկական կոշում։ Նա անհամբերութեամբ սպասում է հեռագրի, որը կհաստատի իմ համաձայնութիւնը, և ուղղակի ամենակենդանի հաճույքի, զգացումով կանխավայելում է իմ ժամանումը։ «Ձեր նոր բարեկամ, դասընթացների դիրեկտոր Ի. Յոշոտո, Տոկիոյի գեղարվեստի կայսերական ակադեմիայի նախկին անդամ»։

Իմ համաձայնութիւնը հավաստող հեռագիրը արվեց հինգ րոպե հետո։ Գուցե հուզումից, ավելի ճիշտ Բորիի հանդէպ ունեցած մեղավորութեան զգացումից (հեռագիրը հաղորդեցի հեռախոսով, նրա հաշվին) ես զսպեցի իմ գրական պաթոսը և, որքան էլ տարօրինակ լինի, սահմանափակվեցի ընդամենը տասը բառով։

Երեկոյան ես ու Բորին, ինչպես միշտ, հանդիպեցինք ճաշի ժամանակ, ձվածե դահլիճում, և ես շատ տխրեցի, որ նա իր հետ հյուր է բերել Մինչ այդ ես նրան ոչինչ չէի ասել իմ արտադարոցական պարապմունքների մասին ու հիմա շափից դուրս շատ էի ուզում պատմել բոլոր նորութիւնները, շշմեցնել նրան, միայն թե առանձին։ Ու հանկարծ այդ հյուրը՝ շատ հրապուրիչ երիտասարդ մի կին։ Սա վերջերս էր բաժանվել ամուսնուց և հաճախ էր տեսնվում Բորիի հետ, ինքս էլ արդեն քանի անգամ էր հանդիպում էի Շատ հաճելի կին էր, բայց նրա ամեն մի փորձը՝ ինձ հետ մտերմանալու, քնքշորեն համոզելու, որ հանեմ զրահս կամ գոնե բացեմ երեսակալս, ես նախապես բացատրում էի որպես հարմար առիթով իր հետ անկողին մտնելու շարտասանված հրավեր (այսինքն՝ հենց որ նրան հաջողվեր պոկվել Բորիից, որն իսկապես նրա համար շատ ծնր էր)։ Ամ-

բողջ ճաշի ընթացքում ես թշնամաբար քի սրամաղրված և սահմանափակվում էի կարճատև ռեպլիկներով: Միայն սուրճի ժամանակ համառոտ պատմեցի ամառային պլաններին մասին: Լսելով ինձ՝ Բորին մի քանի գործնական հարց տվեց: Ես պատասխանեցի սառը, կցկտուր և կարճ, ինչպես սեփական ճակատագրի անփիճարկելի տիրակալ:

— Ա՛խ, որքան հետաքրքիր է,— ասաց Բորիի հյուրը, իրեն հատուկ թեթևամտությամբ որոշակիորեն սպաւելով, որ ես սեղանի տակով իրեն կհանձնեմ Մոնոեալի իմ հասցեն:

— Ես կարծում էի, թե ինձ հետ կգաս Ռոդ-Այլենդ,— ասաց Բորին:

— Ա՛խ, սիրելիս, մի՛ փշացնի նրա հաճույքը,— ասաց միսիս Իբսը:

— Իսկ ես մտադիր էլ չեմ,— ասաց Բորին,— սակայն դեմ չէի լինի ամեն ինչ ավելի մանրամասն լսել:

Բայց ես նրա տոնից անմիջապես հասկացա, որ նա մտովի արդեն երկու տոմսը փոխում է առանձին կուպեում մի ներքևի տեղի հետ:

— Ինձ թվում է, թե դա շատ ջերմ ու շատ հաճելի հրավեր է,— ջերմորեն ասաց ինձ միսիս Իբսը:

Նրա աչքերը փայլում էին արատավոր տենչանքից:

Այդ կիրակի, երբ ես կառամատույց դուրս եկա Մոնոեալի Ուինձորյան կայարանում, հագիս ավազագույն գաբարդինի երկբղանցք կոստյում էր (որ ինձ նրբագեղության գագաթ էր թվում), մուգ կապույտ ֆլանելի բլուզ, ղնդին բամբակյա կտորից փողկապ, սպիտակ-դարչնագույն կոշիկներ, պանամա զլխարկ, որ Բորիից էի վերցրել և բավական փոքր էր, ինչպես նաև դարչնաշեկ բեղիկներ, որ երեք շաբաթվա պատմություն ունեին: Ինձ դիմավորեց միստր Յոշտոն՝ մի փոքրիկ մարդ, հինգ ֆուտ հասակով, բավական հնամաշ քաթանի կոստյումով, սև կոշիկներով և եղրերը վեր թեքված սև ֆետրե զլխարկով: Առանց ժպտալու և, որքան հիշում եմ, առանց մի խոսքի, նա սեղմեց ձեռքս: Նրա դեմքի արտահայտությունը անթափանց էր: Իսկ ես անհայտ պատճառով ժպտում էի մինչև ականջատակերս: Ու ոչ մի կերպ չէի կարողանում մարել կամ վերացնել այդ ժպտը:

Կայարանից մինչև դասընթացները մի քանի մղոն հարկ եղավ գնալ ավտոբուսով: Կասկածում եմ, թե ամբողջ ճանապարհին մոսյո Յոշոտոն թեկուզ հինգ բառ փոխանակած լիներ ինձ հետ: Զգիտեմ այդ լուսթյան պատճառով, թե հակառակ դրան, ես խոսում էի անլուում, ձախ բառեր քարձր ցցած աջի վրա, անվերջ սրբում էի քրտնած ափս, քսելով գուլպայիս: Ինձ թվում էր, որ անհրաժեշտ է ոչ միայն կրկնել նախկինում իմ բոլոր հորինածները Դոմյեի հետ արնակցական կապիս, հանգուցյալ տիկնոջս, և Ֆրանսիայի հարավում գտնվող իմ ոչ մեծ կալվածքի մասին, այլև զարգացնել դրանք: Հետո տառապագին հիշողություններից ազատվելու համար (իսկ դրանք իսկապես սկսում էին ինձ տանջել) ես անցա ծնողներիս և նրանց համար շատ թանկ Պաբլո Պիկասոյի հին բարեկամությունը, le pauvre Picasso<sup>1</sup>, ինչպես անվանեցի ես նրան:

Ի դեպ, ընտրել էի Պիկասոյին, նկատի ունենալով, որ ԱՄՆ-ում ֆրանսիական նկարիչներից ամենից լավ նրան էին ճանաչում, իսկ ես Կանադան ևս միացնում էի ԱՄՆ-ին: Բացառապես մոսյո Յոշոտոյին լուսավորելու համար ես տապալված հսկայի հանդեպ ընդգծված կարեկցանքով հիշատակեցի, թե քանի անգամ եմ ասել մեր բարեկամին. «Maitre Picasso, ou allez vous»<sup>2</sup>: Եվ թե ինչպես, ի պատասխան այդ սրտահուլիչ հարցի, ծերունի վարպետը դանդաղ, ծանր քայլերով անցուդարձ է արել արվեստանոցում և անփոփոխ կերպով կանգ առել իր «Ակրոբատների» ոչ մեծ վերատպության առջև, հիշելով իր վաղուց արդեն կորսված փառքի մասին: Եվ երբ մենք դուրս էինք գալիս ավտոբուսից, ես մոսյո Յոշոտոյին բացատրեցի, որ Պիկասոյի դժբախտությունն այն էր, որ նա երբեք և ոչ ոքի չէր լսում, նույնիսկ իր ամենամոտիկ բարեկամներին:

1939 թվականին «Մեծ վարպետների սիրահարները» տեղավորված էր Մոնոեալի ամենաանբարետես Վերդենյան շրջանում, երևում է վարձով տրվող արտաքուստ զարմանալիորեն մոայլ ոչ մեծ եռահարկ շենքի երկրորդ հարկում:

<sup>1</sup> Խեղճ Պիկասոն:

<sup>2</sup> Այդ «ի», մեթր Պիկասո:

Գւրոցը գտնվում էր ուղղակի օրթոպեդիկական արհեստանոցի վրա: «Մեծ վարպետների սիրահարները» զքնդեցնում էր մի մեծ սենյակ, շատ փոքրիկ և չփակվող զուգարանով: Բայց այդ ամենին հակառակ, երբ մտա այդ շենքը, անմիջապես զարմանալիորեն հաճելի տպավորություն ստացա: Եվ դա այն պատճառով, որ «ուսուցչանոցի» բոլոր պատերին կտավներ էին կախված, հիմնականում մոսյո Յոշտոյի ջրաներկ աշխատանքները: Հիմա էլ դեռ երբեմն երազում տեսնում եմ ճերմակ սազը, որ թռչում է անպատմելի բաց կապույտ երկնքում,— ըստ որում հենց դրա մեջ էր հմուտ և համարձակ վարպետի նվաճումը,— երկնքի լազուրը, ավելի ճիշտ այդ լազուրի ոգին արտացոլված էր թռչունի փետուրների մեջ: Նկարը կախված էր տիկին Յոշտոյի սեղանի վերեւ: Այդ ստեղծագործությունը և էլի մի երկուսը, որ նման էին իրար կատարման վարպետությամբ, սենյակին յուրօրինակ բնույթ էին տալիս:

Երբ մտա ուսուցչանոց, տիկին Յոշտոն, գեղեցիկ սեռ բալագույն մետաքսե կիմոնոն հագին, հատակն էր մաքրում կարճ խոզանակով: Նա ճերմակահեր տիկին էր, գրեթե մի գլուխ բարձր իր ամուսնուց, ավելի շատ նման մալայացու, քան թե ճապոնուհու: Նա ցած դրեց խոզանակը և մտեցավ մեզ: Մոսյո Յոշտոն ներկայացրեց ինձ: Տիկինն ավելի inscrutable, քան մոսյո Յոշտոն: Հետո մոսյո Յոշտոն առաջարկեց ինձ ցույց տալ իմ սենյակը, Ֆրանսերեն բացատրելով, որ դա իրենց սրդու սենյակն է, որը գնացել է Բրիտանական Կոլումբիա՝ ֆերմայում աշխատելու: (Ավտոբուսի մեջ երկարատև լուսնուխոսք հետո ես ուրախացա, որ ես խոսեց, և ունկնդրեցի նրան շափազանցված ոգևորությամբ): Նա ուզում էր ներառություն խնդրել, որ որդու սենյակում աթոռներ չկան, միայն խսիրներ են փռված հատակին, բայց ես անմիջապես սկսեցի հավատացնել նրան, որ դա ինձ համար ամենևին էլ երկնային պարզն չէ: (Կարծեմ նույնիսկ ասացի, թե տառում եմ աթոռները: Այնպես էի նյարդայնանում, որ եթե ասեր՝ որդու սենյակում ծնկահար ջուր է կանգնած, հիացմունքից պետք է ոռնայի: Հնարավոր է, որ նույնիսկ ասեի, թե ես ոտքերի այնպիսի հիվանդություն ունեմ, որ պահանջում է ամեն օր ծալահար

գեպքում ութ ժամ պահել շրի մեջ): Մենք վեր բարձրացանք փայտե երեւոն սահպուղքով: Խոսակցութեան ժամանակ, ի միջի այլոց, ընդգծեցի, որ բուղղիզմ եմ ուսումնասիրում: Հետագայում ես իմացա, որ կ'նա, կ'մադամ Յոշոտոն պրեսբիտերականներ են:

Մինչև ուշ գիշեր ես չբնեցի. մադամ Յոշոտոյի ճապոնա-մալայական ճաշը en masse<sup>1</sup> անվերջ վեր էր բարձրանում վերելակէ պես, ճնշելով ստամոքսս, բացի այդ էլ Յոշոտո ամուսիններից չգիտեմ որը անընդհատ տնքտնքում էր միջ-նորմի ետևում: Տնքոցը բարձր էր, բարակ, խղճալի, թվում էր ոչ թէ տարեկ մարդ է տնքացողը, այլ դժբախտ, օրապա-կաս երեխա կամ ծեծված մի փոքրիկ գազան: (Ոչ մի գիշեր առանց համերգի չէր անցնում, բայց ես այդպես էլ չիմացա, թե նրանցից որն է այդ ձայներն արձակում և ինչ պատճա-ռով): Երբ միանգամայն անտանելի էր դառնում պտոկած վիճակում շեկը, ես վեր էի կենում, հագնում էի գիշերալին կոշիկներս և մթութեան մեջ նստում հատակին փոված խսիր-ներից մեկի վրա: Այդպես նստում էի մի երկու ժամ, մի քանի սիգարետ ծխում, ստիպված էի լինում դրանք հանգցնել կոշիկիս ներքանին սեղմելով և քնթուկներն էլ լցնել պիժա-մայիս գրպանը: (Յոշոտոներն իրենք չէին ծխում, և տանը ոչ մի մոխրաման չկար): Քնեցի միայն առավոտյան ժամը հինգին:

Վեցն անց էկսին մոսյո Յոշոտոն ծեծեց իմ դուռը և հայտնեց, որ նախաճաշը մատուցվելու է յոթից քաւորդ պա-կաւ նա դռան ետևից հարցրեց, թե լա՞վ եմ քնել արդյոք, ու ես պատասխանեցի՝ «Oui»<sup>2</sup>: Ես հագնվեցի, ընտրելով կա-պուլյտ կոստյումս, որպես ամենահարմարը ուսուցչի համար դասընթացների բացման օրը, և դռան հարմար էլ կարմիր փողկապս, որ ձեռքի աշխատանք էր՝ մայրիկիս Նվերը: Եվ առանց լվացվելու, միջանցքով վազեցի խոհանոց: Մադամը, հագոջախի մոտ կանգնած, նախաճաշի համար ձուկ էր տա-լուկում: Մոսյո Յոշոտոն, տաքատով և ֆուֆայկայով, խո-հանոցի սեղանի մոտ նստած, ճապոներեն թերթ էր կարդում:

<sup>1</sup> Ամբողջութեամբ:

<sup>2</sup> Այո:

Նա լուռ զլխով արեց ինձ: Երբեք այդքան Inscrutable տեսք չէին ունեցել: Շուտով ինձ ձուկ մատուցեցին՝ թեթևակի, բայց բավականին որոշակիորեն շորացած կետուպի հետքերը ափսեի եզրին: Մադամ Յոշոտոն անգլերեն հարցրեց ինձ, — անսպասելիորեն հաճելի առողանություն ունե՞ր նա, — գուցե գերադասում եմ ձո՞ւն, բայց ես ասացի. «Non, non, merci, madame»<sup>1</sup>: Ես ավելացրի, թե երբեք ձու չեմ ուտում: Մոսյո Յոշոտոն իր թերթը հենեց իմ բաժակին, ու մենք երեքով լուռ սկսեցինք ուտել, ավելի ճիշտ նրանք ուտում էին, իսկ ես լուռ մի կերպ կուլ էի տալիս ուտելիքը:

Նախաճաշից հետո մոսյո Յոշոտոն հենց այդտեղ խոհանոցում հագավ առանց օձիքի վերնաշապիկը, մադամ Յոշոտոն արձակեց գոգնոցը, ու մենք երեքով, իրար նուևից, մի քիչ անհարմարությամբ, իջանք ուսուցչանոց: Այնտեղ մոսյո Յոշոտոյի ընդարձակ սեղանի վրա դիզված էին կոշտ թղթից մոտ տասը տոռուզ վիթխարի ծրարներ: Դրանք ինձ մի տեսակ լվացված, սանրված թվացին, ինչպես նորեկ դպրոցականներ: Մոսյո Յոշոտոն ինձ ցույց տվեց սենյակի հեռավոր անկյունում դրված սեղանը և խնդրեց նստել այնտեղ: Մադամ Յոշոտոն նստեց նրա մոտ, և սկսեցին բացել ծրարները: Ծրարների պարունակության գնման և դասակարգման մեջ ինչ-որ սխտեմ կար, նրանք ամբողջ ժամանակ խորհրդակցում էին ճապոներեն, այն դեպքում, եւր ես սենյակի հեռավոր ծայրում նստած էի կապույտ կոստյումով ու կարմիր փողկապով և ջանում էի իմ ամբողջ տեսքով ցուցադրել, թե որքան համբերությամբ ու միաժամանակ հետաքրքրությամբ եմ սպասում ցուցումների, իսկ որ կարևորն է, թե ինչպիսի անփոխարինելի անձնավորություն եմ: Մոցազրպանիցս հանեցի մի քանի փափուկ մատիտներ, որ Նյու-Յորքից էի բերել և, աշխատելով շաղմկել, շարեցի սեղանի վրա: Իսկ երբ մոսյո Յոշոտոն, հավանաբար պատահմամբ, նայեց իմ կողմը, ես նրան պարզեցի մի գերհմայիչ ժպիտ: Հանկարծ, առանց մի խոսք ասելու ինձ կամ նայելու իմ կողմը, նրանք գնացին դեպի իրենց սեղաններն ու անցան աշխատանքի: Արդեն յոթն անց էր կես:

<sup>1</sup> Ոչ, ոչ, չե՞ր հակառակություն, տիկին:



Իննի մոտ մոսյո Յոշոտոն հանեց ակնոցն ու ոտքերը քստքուտացնելով եկավ դեպի իմ սեղանը՝ ձեռքին մի կույտ նկարներ, ժամուկես ես նստել էի անգործ, հագիւ զսպելով ստամոքսիս գոգոցը: Երբ նա մոտենում էր, ես շտապ ոտքի կանգնեցի, թեթևակի կռանալով, որպեսզի չշփոթեցնեմ նրան իմ հրկար հասակով: Նա բերած նկարները հանձնեց ինձ և քաղաքավարութեամբ հարցրեց, թե չէի՞ բարեհաճի արդյոք իր դիտողութիւնները ֆրանսերենից թարգմանել անգլերեն: Ասացի. «Oui, monsieur»: Թեթևակի զուլս տալով՝ նա ետ գնաց դեպի իր սեղանը: Ես մատիտները մի կողմ քշեցի, հանեցի ինքնահոսս և տխուր գործի անցաւ:

Մոսյո Յոշոտոն, ինչպես և ուրիշ շատ իսկապես լավ նկարիչներ, որպես ուսուցիչ բոլորովին բարձր չէր կանգնած մանկավարժական որոշ ընդունակութիւններ ունեցող ուզածդ միջակ նկարչից: Նրա գործնական ուղղումները, այսինքն ուսանողների աշխատանքներից կալկալի վրա կատարած նրա նկարներն ու նկարների ետևում արված գրավոր դիտողութիւնները շատ թե քիչ ունակ ուսանողին կարոյ էին ցույց տալ, թե ինչպես նկարել խոզ, կամ գեղանկարչութիւն ինչպես պատկերել խոզը գեղանկարային խոզաբնում: Բայց նա իր կյանքում երբեք ոչ մեկին չէր կարող սովորեցնել, թե ինչպես շատ լավ նկարել խոզ կամ նույնքան լավ խոզաբուն, մինչդեռ նրանից հենց այդ վարպետութեան ոչ մեծ գաղտնիքն էին ուզում իմանալ համեմատաբար ընդունակ ուսանողները: Եվ բանն այն չէր, որ նա գիտակցաբար թե անգիտակցաբար թաքցնում էր իր տաղանդը կամ ժաւութիւնից չէր վատնում այն, նա պարզապես չէր կարողանում հաղորդել դաւ: Սկզբում այդ դատան ճշմարտութիւնը չգարմացրեց և չվրդովեց ինձ: Բայց դե պատկերացրեք իմ վիճակը, երբ նրա անօգնականութեան ապացույցները գնալով կուտակվում էին: Երկրորդ նախաճաշի մոտերքում ես այնպիսի վիճակում էի, որ պետք է մեծ զգուշութիւն պահպանեի, որպեսզի թարգմանութեանս տողերը չկեղտոտեի քրտնած ափով: Ի լրումն այդ ամենի, պարզվեց, որ մոսյո Յոշոտոյի ձեռագիրը խիստ դժվարընթեռնելի է: Ու երբ նախաճաշի գնալու ժամանակն էր, ես վճռականորեն մերժեցի Յոշոտո ամուսինների առաջարկը: Ասացի, որ ինձ անհրա-

Ճեշտ է փոստ գնալ: Աստիճաններից ցած վաղէլով՝ Ես բախտապալեն խորացա անժանոթ փողոցների լաբիրինթոսի մէջ: Նախաճաշարան նկատելով՝ մտա այնտեղ, շորս բաժին «տաք-տաք» կոնի-այլենդյան հրշիկ կերա և երեք գավաթ պղտոր սուրճ խմեցի:

Վերադառնալով իմ «Les Amis des Vieux Maitres»-ի մոտ, Ես սկզբում աղոտ տազնապ զգացի, ճիշտ է անցյալի փորձից ելնելով կարող էի հաղթահարել, բայց այստեղ դա վերածվեց իսկական վախի: մի՞թե իմ անձնական հատկանիշներն են մեղավոր, որ մոսյո Յոշոտոն ավելի հարմար գործ չի գտել ինձ համար, քան այդ թարգմանութունները: Արդոյք պառավ Տու Ման-չուն զլխի՞ է ընկել, որ Ես ոչ միայն ուզում էի պատեցնել իր գլուխը հազար ու մի հորինովի բաներով, այլև, որ Ես տասնիննամյա տղա եմ և դիւմամբ եմ բեգեր պահել: Անտանելի էր այդպես մտածել: Արգարության հանդեպ համոզմունքս դանդաղորեն թալանում էր: Իսկապես, ինձ՝ առաջին երեք մրցանակներն ւտացողիս, ինձ՝ Պիկասոյի անձնական բարեկամիս (Ես անգին ինքս էլ էի այդ բանին հավատում), օգտագործել որպէս թարգմանիչ: Իմ հանցանքը երեք նման պատժի արժանի չէր: Եվ ընդհանրապես այդ բեղիկները, թեկուզև Խոսր, բայց իմ սեփականն էին, հո ղեովի չէին: Հանգստանալու համար ճանապարհին անընդհատ շոշափում էի դրանք: Բայց որքան շատ էի մտածում իմ վիճակի մասին, այնքան արագ էի գնում, վերջում սկսեցի վազել, ասես վախենալով, թե հիմա շորս կողմից քարեր կնետեն վրաս:

Թեև նախաճաշի վրա Ես ընդամենը քառասուն ռոպե էի կորցրել, Յոշոտո զույգը արդեն նստած աշխատում էր: Նրանք հայացքները շարձարացրին, ցույց չտվին, թե նկատել են, որ Ես ներս եմ մտել: Քրտնած, շնչակտուր՝ ևս նստեցի տեղս: Մի տասնհինգ-քսան ռոպե նստել էի ձգված լարի պես, նորանոր անեկղոտներ հարինելով ծերունի Պիկասոյի մասին, եթե մոսյո Յոշոտոն հանկարծ ոտքի կանգներ ու սկսեր մերկացնել ինձ: Եվ այդ ժամանակ նա իսկապես ոտքի կանգնեց ու մոտեցավ ինձ: Ծս պատրաստ կանգնել էի, անհրաժեշտության դեպքում համառորեն նրան մատուցելու Պիկասոյի մասին թարմ բամբասանքս, բայց երբ մոտեցավ

սեղանին, ինչ-որ մտածել էի, ի սարսափ ինձ, դուրս թռա՞մ  
զլխիցս: Սակայն օգտվեցի առիթից, որպեսզի հիացմունք  
արտահայտեմ մաղամ Յոշոտոյի զլխավերևում կախված  
թռչող սագի մասին: Ես շռայլորեն գովեստներ տեղացի  
Ասացի, որ Փարիզում մի հարուստ ծանոթ ունեմ, անդա-  
մալույժ, բացատրեցի ես, որը փող չի խնայի մոսյո Յոշո-  
տոյի այդ նկարի համար: Ասացի, եթե մոսյո Յոշոտոն հա-  
մաձայն է, ես կարող եմ անհապաղ կապվել Փարիզի հետ  
Բարեբախտաբար մոսյո Յոշոտոն բացատրեց, որ նկարը  
պատկանում է իր զարմիկին, որը հիմա հյուրընկալվում է  
Ճապոնիայում: Եվ անմիջապես էլ, նախքան ես կհասցնեի  
պիտոսանք հայտնել, նա ինձ «մոսյո Դոմյե-Սմիթ» անվա-  
նելով, հարցրեց. չէի՞ բարեհաճի մի քանի առաջադրանքներ  
կատարել: Նա գնաց իր սեղանի մոտ ու վերադարձավ երեք  
հաստ ծրարներ ձեռքին: Կանգնել էի շշմած, մեքենաբար  
զլխով անելով և շոշափելով պիշակիս գրպանը, ուր դրել էի  
մատիտները: Մոսյո Յոշոտոն բացատրեց դասավանդման  
մեթոդը դասընթացներում (ավելի ճիշտ կլիներ ասել՝ ամեն  
տիպի մեթոդների բացակայությունը): Նա վերադարձավ իր  
սեղանի մոտ, իսկ իմ խելքը դեռ գլուխս չէ՞ր գալիս:

Երեք աշակերտներն էլ անզվերեն էին գրում մեզ: Առա-  
ջին ծրարը Տորոնտոյից ուղարկել էր քսաներեքամյա մի  
տնային տնտեսուհի, նա իր համար ծածկանուն էր ընտրել՝  
Բեմքի Քրեմեր, այդ անունով էլ պետք է ուղարկեինք նա-  
մակաները: «Մեծ վարպետների սիրահարներ» դասընթացներն  
ընդունվողները պետք է հարցաթերթիկ լրացնեին և կցեին  
իրենց լուսանկարը: Միսս Քրեմերը կցել էր ութ և տասի  
հարաբերությամբ մի լուսանկար, որտեղ նա պատկերված էր  
ապարանջանը կոճին հագցրած, առանց ուսակապերի լողա-  
զգեստով և ճերմակ ծովային անհավար զլխարկով: Հարցա-  
թերթիկում նա հայտնում էր, թե իր սիրելի նկարիչներն են  
Ռեմբրանդը և Ուուլթ Դիսնեյը: Նա գրում էր, թե հույս ունի  
երբեք հասնել նրանց փառքին: Աշխատանքների նմուշները  
մի քիչ անփութորեն քորոցով ամրացված էին նրա լուսա-  
նկարին: Դրանք բախրը զարմանք էին հարուցում: Բայց մեկը  
անմոռանալի էր: Այդ անմոռանալին կատարված էր վառ  
գույնի ջրաներկով և տակը գրված. «Եվ ներքի նրանց մեզ»

քերն իրենց»։ Այն պատկերում էր երեք տղաների, որոնք ձուկ էին բռնում մի տարօրինակ ջրամբարում, և մեկի բաճկոնակը կախված էր «Ձուկ բռնելն արդելվում է» հայտարարությամբ վահանակի վրա։ Ամենաբարձրահասակի առաջին պլան մղված ոտքը վարակված էր ուսխտով, մյուսը՝ փշային հիվանդությամբ։— Հավանաբար միսս Քրեմերը այդպիսով ջանացել էր ցույց տալ, որ տղան կանգնած է ոտքերն իրարից հեռու դրված։

Իմ երկրորդ աշակերտը պարզվեց, որ հիսունվեցամյա «բարձրաշխարհիկ լուսանկարիչ» է՝ Ռ. Հովարդ Ռիչֆիլդ անունով, Օնթարիո նահանգի Ուինձոր քաղաքից։ Նա գրում էր, թե կինն իրեն տարիներ շարունակ հանգիստ չի տալիս, որպեսզի ինքն էլ «խցկվի այդ շահավետ գործի մեջ», դառնա նկարիչ։ Նրա սիրած նկարիչներն են Ռեմբրանդը, Սարջենտը և «Տիցցյանը», բայց նա խելացիորեն ավելացրել էր, որ ինքը մտադիր չէ նրանց ոգով աշխատելու։ Նա զրել էր, թե ավելի շատ հետաքրքրվում է գեղանկարչության սատիրական կողմով, քան գեղարվեստական։ Ըվ ի հաստատումն իր հավատամքի, նա ուղարկել էր բազմաթիվ օրիգինալ ստեղծագործություններ՝ մատիտով և յուղաներկով արված։ Նկարներից մեկը, իմ կարծիքով նրա գլուխգործոցը, ընդմիջտ տպավորվեց իմ հիշողության մեջ. այդպես տպավորվում են հանրաճանաչ երգերի բառերը։ Դա սատիրա էր բոլորին քաջ ծանոթ, շիկահեր խոպոպիկներով և փոս ընկած կօքով մի անմեղ աղջկա ողբերգության մասին, որին հանցագործ կերպով գայթակղել էր քահանան, եկեղեցում, այսպես ասած, ուղղակի զոհասեղանի հովանու տակ։ Նկարիչը գրաֆիկորեն ընդգծել էր իր հերոսների հագուստների գեղարվեստական անկարգ վիճակը։ Սակայն մերկացուցիչ սատիրական սյուժեից ավելի ինձ ապշեցրին աշխատանքի ոճը և կատարման բնույթը։ Ըթե ես չիմանայի, որ Ռիչֆիլդն ու Բեմքի Քրեմերը հարյուրավոր մղոններ իրարից հեռու են ապրում, կերպեի, թե Բեմքի Քրեմերն է օգնել Ռիչֆիլդին զուտ անխնայական տեսանկյունից։

Զհաշված բացառիկ առիթները, տասնինը տարեկանում հումորի զգացումը իմ ամենախոցելի տեղն էր և առաջին իսկ անհաջողությունների դեպքում այն մեռնում էր երբեմն մա-

սամբ, երբեմն էլ ամբողջությամբ: Ռիչֆիլդն ու Վրեմբրջ  
իմ մեջ բազմաթիվ զգացումներ արթնացրին, բայց ծիծաղ  
ամենակին: Ու երբ նայում էի նրանց աշխատանքները, մի  
քանի անգամ իմ մեջ ցանկություն առաջացավ վեր կենալ և  
ուղղակի պաշտոնական բողոքով դիմել մոսյո Տոշտոյին:  
Բայց ես այնքան էլ լավ չէի պատկերացնում, թե ինչ ձևով  
պետք է արտահայտվի այդ բողոքը: Հավանաբար, վախենում  
էի, որ, մոտենալով նրա սեղանին, ես խզված ձայնով կգո-  
չեմ: Ե՛մ մայրը մեռել է, հարկադրված եմ ապրել նրա ամե-  
նաողորմած ամուսնու մոտ, և Նյու-Յորքում ոչ ոք Ֆրանսե-  
րեն չի խոսում, իսկ ձեր որդու սենյակում իսկի աթոռներ էլ  
չկան: Ինչպե՞ս եք ուզում, որ ես նկարել սովորեցնեմ այս  
ապուշներին»:

Բայց այնքան էի ինձ ընտելացրել զսպել հո.սահատու-  
թյան նոպաներս և անտեղի դեսուդեն շնեովել, որ այդպե՞ս  
էլ չելա տեղիցս: Ե՛վ երրորդ ծրարը բացեցի:

Պարզվեց, որ իմ երրորդ աշակերտուհին մի:սնձնուհի էր  
Ս. Հովսեփի կանանց մենաստանից, քույր Իրման, որ «խո-  
հարարություն և նկարչություն» էր ուսուցանում Տորոնտո-  
յից ոչ հեռու, մենաստանի տարրական դպրոցում: Զգիտեմ  
ինչպես ավելի լավ կլինի նկարագրել այն, ինչ գտնվում էր  
նրա ծրարի մեջ: Նախ, պետք է ասել, որ իր լուսանկարի  
փոխարեն քույր Իրման, առանց որևէ բացատրության, ուղար-  
կել էր իր վանքի պատկերը: Հիշում եմ նաև, որ չէր լրացրել  
հարցաթերթիկի «տարիքը» կետը: Մյուս կողմից էլ, աշխար-  
հում ոչ մի հարցաթերթիկ արժանի չէ լրացվելու այնպես,  
ինչպես քույր Իրման էր լրացրել: Նա ծնվել և մեծացել էր  
Գեթթոյտում, Միչիգանի նահանգ, հայրը «խաղաղությամբ»  
ծառայել է «ավտոմեքենաների հսկման բաժնում»: Տարրա-  
կան կրթությունից բացի, նա մի տարի էլ սովորել է միջնա-  
կարգ դպրոցում: Ոչ մի տեղ նկարչություն չի սովորել: Նա  
գրում էր, որ նկարչություն է դասավանդում միայն այն  
պատճառով, որ քույր այսինչը մեռել է, և հայր Յիմերմանը  
(ես այդ ազգանունը լավ եմ հիշում, որովհետև իմ ութ ա-  
տամները հանող ատամնարույժի ազգանունն էլ էր Յիմեր-  
ման) ընդունել է իրեն հանգուցյալի փոխարեն: Նա գրում  
էր, որ իր խոհարարության դասարանում 34 փոքրիկներ կան,

իսկ նկարչության դասարանում՝ 18 փոքրիկներու Ամենից ավելի նա սիրում է «աստծուն և աստծո խորհուրդը», ինչպես նաև սիրում է «տերևներ հավաքել, միայն այն ժամանակ, երբ դրանք իրենք են թափվում գետնին»: Նրա սիրելի նկարիչը եղել է Դուգլաս Բանտենզը (խոստովանում եմ, որ ես երկար տարիներ որոնել եմ, բայց նման նկարիչ չեմ գտնել): Նա գրում էր նաև, որ իր փոքրիկները սիրում են նկարել վազող մարդուկներ, իսկ ես բոլորովին չեմ կարողանում դա նկարել»: Նա գտնում էր, որ շատ կաշխատի լավ նկարել սովորել և հույս ունի, որ «մենք ներողամիտ կլինենք իր հանդեպ»:

Մտաբան մեջ ընդամենը վեց նմուշ կար նրա աշխատանքներից: (Դրանք բոլորը անստորագիր էին, դա ինքնիշխան մանրուք է, բայց այն ժամանակ ինձ շատ դուր եկավ): Այլ Բեմբի Քրեմերը, և Ռիչֆիլդը նկարների տակ դրել էին խոնց ստորագրությունը, կամ, որ ավելի էր ինձ գայրաջնում, իրենց անվանատառերը: Այդ ժամանակից արդեն տասներեք տարի է անցել, բայց ես մինչև այսօր էլ հիշում եմ քույր Իրմայի բոլոր վեց նկարներն էլ, բայց գրանցից շոքսը այնպես են տպավորվել, որ երբեմն խանգարում են իմ հոգեկան հանգիստը: Նրա լավագույն նկարը արված էր ջրաներկով, փաթեթավորման թղթի վրա (դարչնագույն փաթեթաթղթի վրա, մանավանդ ոչ շատ ամուր թղթի, այնպես հարմուր է, այնպես հաճելի: Շատ նշանավոր նկարիչներ են նկարիչ այդպիսի թղթի վրա, հատկապես երբ որևէ մեծ ասելիք չեն ունեցել):

Չնայած ոչ մեծ չափսերին, մոտավորապես տասը-տասներկու դյույմի վրա շատ մանրամասնորեն ու խնամքով պատկերված էր Քրիստոսի մարմնի տեղափոխությունը Հովսեփ Արիմաթեացու այգու բարանձավը: Առջևի պլանում, աջից, երկու մարդ, հավանաբար Հովսեփի ծառաները, բավական անհարպկորեն տանում էին մարմինը: Հովսեփը գնում էր նրանց ետևից: Այդ իրադրության մեջ նա, թեև, շատ ձիգ էր պահում իրեն, նրա ետևից, պատկառելի տարածության վրա, խառնամբոխի, որոնք թերևս առանց հրավերի էլ եկել էին, լացկան կանանց, բերանբացներ, հրեխանների միջև գնում էին գալիլիացի կանայք, իսկ նրանց մոտ էլ անաստ-

ված կերպով վազվզում էին երեք բակապահ շներ։ Բայց ամենից ավելի իմ ուշադրությունը գրավեց կանացի մի կերպարանք, առաջին պլանում՝ ձախից, դեմքով դեպի հանդիսատեսը կանգնած։ Աջ ձեռքը վեր պարզած՝ նա հուսահատորեն ձեռքով էր անում ինչ-որ մեկին, գուցե երեխային, կամ ամուսնուն, իսկ գուցեև մեզ՝ հանդիսատեսներին, — ամեն ինչ թող և արի այստեղ։ Լուսապսակը շրջանակում էր երկու կանանց գլուխը, որոնք գնում էին ամբոխի առջևից։ Իմ ձեռքի տակ Աստվածաշունչ չկար, այդ պատճառով էլ ես միայն կարող էի ենթադրել, թե ովքեր են դրանք։ Բայց Մարիամ Մագթաղինացուն ես անմիջապես ճանաչեցի։ Համենայն դեպս, համոզված էի, որ նա է։ Նա գնում էր առջևից, ամբոխից անջատ, ձեռքերը կախ գցած։ Իր վիշտը, ինչպես ասում են, արտաքուստ ցույց չէր տալիս, Երա վրայից բուրրովին չէր երևում, թե հանգուցյալը որքան մտերիմ է եղել իր հետ վերջին օրերին։ Ինչպես բուրբ գեմքերը, այնպես էլ նրա դեմքը նկարված էր էթանագին մարմնադուլն ջրաներկով։ Բայց միանգամայն պարզ էր, որ քույր Իոման ինքն էլ էր հասկացել, որ այդ պատրաստի գույնը հարմար չէ նրան, և, ոչ հմտորեն, ամբողջ սրտով աշխատել էր մեղմեցնել այն։ Նկարում ուրիշ լուրջ թերություններ չկային։ Ծիշտն ասած, ամեն տիպի քննադատությունը արդեն բծախնդրություն կլիներ։ Իմ կարծիքով դա իսկական նկարչի գործ էր, բարձր և վերին աստիճանի ինքնատիպ տաղանդի կնիքով, շնայած միայն աստծուն էր հայտնի, թե որքան համառ աշխատանք էր ներդրված այդ նկարի մեջ։

Իմ առաջին մզումը եղավ այն, որ քույր Իոմայի նկարներն առած նետվեմ մոսյո Յոշուայի մոտ։ Բայց այստեղ էլ չելա տեղիցս։ Չուզեցի ռիսկի գրմել։ Հանկարծ ու քույր Իոմային խլեն իմ ձեռքից։ Երա համար էլ ես խնամքով ծալեցի ժրարն ու մի կողմ դրի, հաճույքով մտածելով, որ երեկոյան, ազատ ժամանակս կաշխատեմ նրա նկարների վրա։ Հետո ես համբրությունս, որ մաքուր անգամ չէր անցնում, թե ունեմ, մեծահոգորեն ու բարեհաճությամբ սկսեցի ուզել մերկ բնարդին՝ տղամարգուն և կնոջը (sans<sup>1</sup> սեպի նշան-

ների), որ սեթևեթանքով ու անվայելչորեն պատկերել էր Ռ. Հովարդ Ռիչֆիլդը: Ծաշի ընդմիջման ժամանակ ես արձակեցի բլուզիս երեք կոճակները և քույր Իրմայի ծրարը գրեցի այնտեղ, ուր մուտք չէին կարող գործել ոչ գողերը, ոչ մանավանդ Յոշոտո ամուսինները:

Բոլոր երեկոյան ընթրիքները դպրոցում կաշանում էին շհրասպարակված, բայց հաստատուն ծիսակատարությամբ: Ուղիղ հինգն անց կեսին մաղամ Յոշոտոն ոտքի էր ելնում և գնում վերև ճաշ պատրաստելու, իսկ ես ու մոսյո Յոշոտոն սովորաբար իրար ետևից նույնպես այնտեղ էինք գնում ուղիղ վեցին: Ոչ մի շեղում ճանապարհից, թեկուզև դրանք կոչված լինեին առողջապահության կամ հիգիենայի անհետաձգելի պահանջով, չէր նախատեսվում: Բայց այդ երեկո ջերմացած քույր Իրմայի ծրարից, որ դրված էր ծոցս, ես առաջին անգամ ինձ հանգիստ զգացի: Ավելին, ճաշի ժամանակ ես այդ հասարակության իսկական ոգին էի: Պիկասոյի մասին մի այնպիսի անեկդոտ պատմեցի, որ մատներդ կլպստես, թերևս, ավելորդ չէր լինի դա պահել սե օրվա համար: Մոսյո Յոշոտոն միայն թեթևակիորեն իջեցրեց ճապոնական թերթը, փոխարենը մաղամը կարծես թե հետաքրքրվեց. համենայն ղեպս չզգացվեց, որ բոլորովին շեն հետաքրքրվում: Իսկ երբ ավարտեցի, նա առաջին անգամ, եթե չհաշվենք առավոտվա հարցը՝ չէի՞ ցանկանա ձու ուտել, դիմեց ինձ. «Գուցե, այնուամենայնիվ, մի աթոռ դնեն իմ սենյակում: Ծս շտապ պատասխանեցի. «Non, non, merci, madame»: Իս րացատրեցի, որ խսիրը միշտ մոտեցնում եմ պատին և այդպիսով ընտելանում եմ ուղիղ դիրքով նստելու վիճակին, իսկ դա ինձ շատ օգտակար է: Ծս նույնիսկ վեր կացա, որպեսզի ցույց տամ, թե որքան եմ կորացած քայլում:

Երբ ճաշից հետո Յոշոտո զույգը ճապոներեն ինչ-որ, գուցեև շատ հետաքրքիր մի հարց էր քննարկում, ես սեղանի մոտից հեռանալու թույլտվություն խնդրեցի: Մոսյո Յոշոտոն ինձ նայեց այնպես, ասես զարմացավ, թե ինչպես եմ հայտնրվել իրենց խոհանոցում, բայց գլխով համաձայնության նշան արեց, և ես միջանցքով արագ-արագ գնացի գնալը իմ սենյակը:

<sup>1</sup> Ոչ, ոչ, չնորհակալություն, տիկին:



Լրիվ միացնելով լույսը և փակելով դուռը՝ ես հանեցի իմ մատիտները, ապա պիջակս, արձակեցի բլուզիս կոճակները և, քույր Իրմայի ծրարը ձեռքիցս ցած լզնելով, նստեցի հատակին փռված խսրի վրա։ Անհրաժեշտ ամեն բան դասավորելով հատակին՝ գրեթե մինչև առավոտյան տասը ես ջանացի քույր Իրմային իր գեղարվեստական որոնումների մեջ ցույց տալ այն օգնութունը, ինչի կարիքը, իմ կարծիքով, նա զգում էր։

Առաջին հերթին ես մի տասը-քսան էսքիզներ արեցի մատիտով։ Չէի ուզում թուղթ բերելու համար գնալ ուսուցչանոց, ուստի նկարում էի սեփական փոստային Բլոթի երկու երեսին էլ։ Դա վերջացնելով, ես երկար, մի շատ երկար նամակ գրեցի։

Ամբողջ կյանքիս ընթացքում ես ներսոթենիկ կաշաղակի պես հազար ու մի տեսակ անպետք բաներ եմ հավաքել ու պահել, ու մինչև հիմա էլ ինձ մոտ պահպանվել է 1939 թվականի հունիսյան այն գիշեր քույր Իրմային գրած, նախավերջին նամակի սևագրութունը։ Ես կարող եմ բառացի մեջ բերել ամբողջ նամակը, բայց դա իմաստ չունի, Բազմաթիվ էջեր, իսկապես զրանք բազմաթիվ էին, ես նվիրել էի նրա շնչին սխալների բացահայտմանը, որոնք նա բաց էր թողել իր գլխավոր նկարում, հատկապես գույների ընտրության հարցում։ Ես թվարկել էի բոլոր պիտույքները, որ նրան պետք էին որպես նկարչի, նշելով դրանց մոտավոր արժեքը։ Ես հարցնում էի, թե ով է Դուգլաս Բանտինգը։ Որտե՞ղ կարող եմ տեսնել նրա աշխատանքները։ Ես նրան հաճեցում էի (հասկանալով, որ դա հեռավոր նպատակի քաղաքականութունն է) տեսնել է արդյոք Անտոնելո դը Մեսսինի աշխատանքների վերատպութունները։ Ես խնդրում էի նրան՝ գրեցեք խնդրեմ, քանի՞ տարեկան եք, և մանրամասնորեն հավատացնում էի, որ գաղտնի կպահեմ այդ տեղեկութունները, եթե նա հայտնի ինձ։ Ես բացատրեցի, որ հեռաքրքրվում եմ, որովհետև այդպես ավելի արդյունավետ կարող եմ որոշել իմ ուսուցման մեթոդը։ Եվ անմիջապես էլ, մի շնչով հարցրի, թե այցելուներին թույլ տալի՞ս են մուտք գործել մենաստան։

Վերջին տողերը, ավելի ճիշտ նամակիս վերջին քառա-

*կուսի մետրերը, ավելի լավ կլինի բառացի մեջ բերեմ, շփոփոխելով ոչ շարահյուսութունը, ոչ էլ կետագրութունը:*

«...Եթե դուք տիրապետում եք ֆրանսերենին, խնդրում եմ տեղյակ պահել ինձ, որովհետև անձամբ ես ֆրանսերենով ավելի ճշգրիտ եմ կարողանում արտահայտել մտերս, քան որ կյանքիս մեծ մասը Փարիզում, Ֆրանսիայում եմ անցկացրել:

Երևում է, դուք շատ եք շահագրգռված այն բանում, որ սովորեք վազող մարդուկներ նկարել և հետագայում այդ տեխնիկան հաղորդել վանքի դպրոցի ձեր աշակերտներին: Այդ նպատակով մի քանի ուրվանկարներ եմ առաջարկում, գուցե ձեզ պետք գան: Դուք կտեսնեք, որ դժանկ հապշտապ են արված, շատ հեռու են կատարելությունից և հարկ չկա ընդօրինակելու, բայց հուսով եմ, որ դրանց մեջ կտեսնեք այն հիմնական միջոցները, որոնք հետաքրքրում են ձեզ: Վախենում եմ, թե մեր դասընթացների դիրեկտորը ոչ մի սխառեմի չի նետում: Դժբախտաբար, դա այդպես է: Ես երանում եմ ձեր հաջողություններով, դուք արդեն շատ հեռու եք գնացել, բայց չգիտեմ ինչպես վարվեմ մյուս աշակերտներին հետ, մտավորապես հետամնաց և, իմ կարծիքով, անհուսալիորեն բուր աշակերտներին:

Դժբախտաբար, ես ազնուստիկ եմ: Սակայն նաև Ս. Ֆրանցիսկ Ասիզիացու երկրպագուն եմ, թեև ինքնին հասկանալի է՝ զուտ տեսականորեն: Ի դեպ, հայտնի է ձեզ արդյոք մանրամասնորեն, թե ինչ է ասել նա (Ֆրանցիսկ Ասիզիացին) երբ պատրաստվում էին նրան կուրացնել շիկացած՝ երկաթով: Ասել է նետեալը. «եղբայր կրակ, աստված քեզ ուժ և գեղեցկություն է տվել հոգուս մարդկանց. աղաչում եմ քեզ, որդո՛ւմած եղի՛ր իմ հանդեպ»: Ձեր նկարներում նրա խոսքերը հիշեցնող ինչ-որ շատ լավ քան կա, համեմայն դեպս, ինձ այդպես է թվում: Ի միջի այլոց, թույլ տվեք իմանալ, երկնագույն հագուստով էակը, առաջին պլանում, արդյոք Մարիամ Մագդաղինացին չէ՞: Խոսքն այն նկարի մասին է, որ միջ առաջ բննարկում էինք: Եթե ոչ՝ ուրեմն ես խորապես շփոթում եմ: Ինչևէ, դա շատ բնորոշ է ինձ համար:

Հուսով եմ, որ դուք ինձ կատարելապես կհամարեք ձեր

տրամադրութեան տակ, քանի զեռ սովորում եւ «Մեծ վարպետների սիրահարներ» դասընթացներում: Անկեղծ ասած, ես ձեզ արտակարգ տաղանդավոր եմ համարում ու բոլորովին չեմ զարմանա, եթե շատ մոտիկ ապագայում դուք մեծ նկարիչ դառնաք: Այդ պատճառով էլ հարցնում եմ ձեզ՝ երկնագույն զգեստով էակբ, առաջին պլանում, Մարիամ Մագրադինացին չէ՞ արդյոք, որովհետեւ, եթե դա այդպես է, ապա վախենում եմ, որ նրա մեջ ավելի շատ ձեր բնածին տաղանդն է արտացոլված, քան կրոնական համոզմունքները: Սակայն, իմ կարծիքով, այստեղ վախենալու հարկ չկա:

Անկեղծորեն հուսով եմ, որ իմ նամակը ողջ և առողջ վիճակում կստանաք, մնամ

Ձեզ հարգող (այստեղ պետք է ստորագրություն դրվեր)

Ժան դը Դոմյե-Սմիթ

«Մեծ վարպետների սիրահարներ»

դասընթացների հաստիքային ուսուցիչ:

2. Գ.— Ինչ էր մնում մոռանալի ձեզ զգուշացնել, որ ունկնդիրները պարտավոր են իրենց աշխատանքները դպրոց ներկայացնել ամեն երկու շաբաթը մեկ, երկուշաբթի օրերին: Որպես առաջին առաջադրանք, խնդրում եմ մի երկու ուրվանկար անել բնորդից: Նկարեցեք ազատ, առանց լարվելու: Հասկանալի է, ես անդյակ չեմ, թե որքան ազատ ժամանակ է տրվում ձեզ վաճառում անձնական պարապմունքների համար, և խնդրում եմ տեղեկացնել ինձ: Ինչպես նաև խնդրում եմ ձեռք բերել այն անհրաժեշտ պիտույքները, որոնք ես համարձակվել եմ թվարկել վերը, այնպես որ կցանկանալի, որ դուք հնարավորին չափ շուտ սկսեիք յուզաներկով նկարել: Ներեցեք ինձ, եթե ուղղակի ասեմ, բայց ինձ թվում է, որ դուք կրճոտ, պոռթկուն խառնվածք ունեք և չպետք է ջրաներկով աշխատեք, շուտ անցեք յուզաներկին: Ասում եմ դա բոլորովին առանց հետին իմաստի, բնավ նպատակ չունեմ ձեզ վիրավորել, ընդհակառակը, ես դա համարում եմ գովեստ: Խնդրում եմ նաև նախկին ձեր բոլոր աշխատանքներն ուղարկեք ինձ, որոնք, իհարկե, պահպանվել են, անհամբեր ուզում եմ տեսնել դրանք: Չեմ ուզում ասել, թե որքան երկար պիտի թվան ինձ օրերը, մինչև որ ստանամ ձեր նամակը:

Եթե իմ կողմից սա շափից ավելի մեծ համարձակություն չէ, ապա ես շատ կցանկանայի իմանալ՝ բավարարո՞ւմ է ձեզ վաճական կյանքը. հասկանալի է՝ զուտ հոգեկան իմաստով: Անկեղծ կասեմ, որ ես բազմաթիվ աղանդներ եմ ուսումնասիրել զուտ գիտական տեսանկյունից, հիմնականում «Դասական ստեղծագործություններին» հարվարդյան հրատարակության 36, 44 և 45-րդ հատորներով, որոնց, հավանաբար, դուք ծանոթ եք: Ինձ առանձնապես մեծ հիացմունք է պատճառում Մարտին Լյութերը, բայց, իհարկե, նա բողոքական էր: Խնդրում եմ, մի՛ նեղացե՛ք ինձանկի: Ես չեմ պաշտպանում ոչ մի դավանանք, դա իմ խառնվածքին չի համապատասխանում: Ավարտելով նամակս՝ կրկին խնդրում եմ մի՛ մոռացե՛ք ինձ հայտնել ընդունելության ժամերը, քանի որ շարքավա վերջում ես միշտ ազատ եմ և կարող եմ շարքս օրը պատահմամբ հայտնվել ձեր կողմերում: Խընդրում եմ, մի՛ մոռացե՛ք նաև հայտնել՝ տիրապետո՞ւմ եք ֆրանսերենին, որովհետև հակառակ իմ ջանքերին, ես դժվարությամբ եմ հաճախ բռներ գտնում անգլերենով, որովհետև անսխտեմ և, անկեղծ ասած, ոչ խելացի դաստիարակություն եմ ստացել»:

*Առավոտյան երեքն անց կեսին ևս փողոց դուրս եկա, որպեսզի փոստարկղ գցեմ թույր Իրմայի նամակը և նկարները: Հրճվանքից տառացիորեն հարբած՝ հանվեցի, հազիվ ջարժելով ձեռքերս, ու փովեցի մահճակալին:*

Արդեն երազում, միջնորմի ետևից լսեցի Յոշուա ամուսինների ննջարանից եկող տնքոցները: Ես պատկերացրի, թե առավոտյան ինչպես են նրանք երկուսն էլ մոտենում ինձ և խնդրում, չէ՛ աղերսում խիստ մանրամասնորեն, սարսափելի՝ մանրակրկիտ ձևով լսել, թե ինչն է տանջում նրանց այդպես: Պարզորոշ պատկերացնում էի, թե դա ինչպես տեղի կունենա: Ես կնստեմ՝ նրանց մեջտեղը, խոհանոցի սեղանի մոտ և հերթով կլսեմ նրանց առանձին-առանձին: Գլուխս ձեռքերիս հենած՝ ես կլսեմ, կլսեմ, կլսեմ, մինչև որ վերջապես համբերությունս սպառվի: Ու այդ ժամանակ ձեռքս կմտցնեմ ուղղակի մազամ Յոշուայի կոկորդը, կհանեմ սիրտը, ու ինչպես թռչնակին, կտաքացնեմ ձեռքերիս մեջ, Իսկ

երբ նրանք կհանգստանան, ցույց կտամ քույր Իրմայի նկար-  
ները, և նրանք կբաժանեն իմ ուրախութիւնը:

Սովորաբար ակնհայտ ճշմարտութիւնը ուշ է ճանաչում  
գտնում, բայց ես հասկացա, որ երջանկութեան և ուրախու-  
թեան հիմնական տարբերութիւնն այն է, որ երջանկութեանը  
պինդ մարմին է, իսկ ուրախութիւնը՝ հեղուկ: Ինձ համակած  
ուրախութիւնը սկսեց նվազել առավոտից, երբ մոսյո Յոշո-  
տոն իմ սեղանին դրեց ևս երկու ծրար, նոր աշակերտներ  
գործեր: Այդ պահին ես խաղաղ ու հանգիստ աշխատում էի  
Բեմբի Քրեմբիի նկարի վրա, իմանալով, որ քույր Իրմային  
գրած իմ նամակն արդեն ճանապարհ ընկավ: Բայց բուր-  
վին չէի սպասում, որ հարկադրված կլինեմ գործ ունենալու  
այնպիսի այլանդակ երեւոյթի և էլ ավելի ապաշնորհ երկու  
մարդկանց հետ, քան Բեմբին էր կամ Ռ. Հովարդ Ռիչֆիլդը:  
Զգալով, թե ինչպես են իմ բոլոր բարի մտադրութիւնները  
չքանում, ես ծխեցի. դա առաջին սիգարետն էր, որ ծխում էի  
ուսուցչանոցում, գործի անցնելու պահից ի վեր: Սիգարետն  
օգնեց, ու ես կրկին սկսեցի աշխատել Բեմբիի նկարի վրա:  
Բայց չէի հասցրել երեք-չորս անգամ ծուխը ներս քաշել, երբ  
զգացի, որ մոսյո Յոշոտոն նայում է թիկունքիս: Եվ ասես ի  
հաստատումն դրա, լսեցի, թե ինչպես նա ետ քաշեց աթոռը:  
Ես վեր կացա նրան ընդառաջ գնալու, երբ նա արդեն մոտե-  
նում էր: Անտանելիութեան աստիճան ատելի շշուկով նա  
բացատրեց ինձ, թե անձամբ ինքը չի առարկում ծխելու, բայց,  
ավա՞ղ, դպրոցական կարգ ու կանոնը թույլ չի տալիս  
ուսուցչանոցում ծխել: Նա լայն ժեստով դադարեցրեց իմ նե-  
րողութիւնների հեղեղը և վերադարձավ իր անկյունը, մա-  
ղամ Յոշոտոյի մոտ: Սոսկալի սարսափի մեջ մտածեցի, թե  
ինչպես կդիմանամ ես այդ տասներեք օրը, մինչև երկուշաբ-  
թի, երբ, հավանաբար, կստացվի քույր Իրմայի նամակը, ու  
վերջնականապես շեմ խենթանա:

Գա երեքշաբթի առավոտյան էր: Այդ ամբողջ օրն ու հա-  
ջորդ երկուսը տենդագին գործունեութիւն էի ծավալել: Ես,  
այսպես ասած, դուրս թափեցի Բեմբի Քրեմբիի և Ռ. Հովարդ  
Ռիչֆիլդի բոլոր նկարների փորձերը և կրկին հավաքեցի ու  
տեղադրեցի՝ որոշ մասերը փոխարինելով նորերով: Ես նրանց  
համար պատրաստեցի մի տասնյակ, նորմալ մարդու հա-

մար տառացիորեն վիրավորական, բայց միանգամայն հիմ-  
նավոր վարժություններ: Մանրամասն նամակներ գրեցի: Ռ.  
Հովարդ Ռիչֆիլդին ես խնդրում էի ժամանակավորապես դա-  
դարեցնել ծաղրանկարչությունը: Հնարավոր ամենայն քա-  
ղաքավարությամբ: Բեմքիին խնդրում էի, եթե կարելի է,  
գոնե ժամանակավորապես խուսափել «Եվ ներիք նրանց մեզ-  
քերն իրենց» մակագրությամբ: Եկարներ ուղարկելուց: Իսկ  
չորեքշաբթի առավոտյան, ծայր աստիճան լարված, ես զբաղ-  
վեցի մի նոր աշակերտով՝ Բանգար քաղաքի բնակիչ (Մեյնի  
Նահանգ) մի ամերիկացիով, որը հարցաթերթիկում ազնիվ  
պարզամտի շատախոսությամբ գրել էր, թե իր սիրած նկա-  
րիչն ինքն է: Նա իրեն անվանում էր ռեալիստ-արատրակ-  
ցիոնիստ:

Մառայությունից դուրս ժամերը ես անցկացրի այսպես.  
երեքշաբթի երեկոյան ավտոբուսով գնացի Մոնոնալի Կենտ-  
րոն, այնտեղ երրորդ կարգի կինոյում մի ամբողջ մուլտիպլի-  
կացիոն ծրագիր նայեցի, մուլտֆիլմերի փառատոն էր գնում,  
բոտ որում ինձ գլխավորապես հարկադրեցին հիանալ կա-  
տուների երկար շարքերով, որոնք մեծերի մի ամբողջ հոր-  
գայի ոմբակոծեցին շամպայնի խցաններով: Չորեքշաբթի  
օրը հավաքեցի սենյակումս եղած բոլոր խսիրները, լցրի իրար  
վրա ու սկսեցի հիշողությամբ կրկնօրինակել քույր Իրմայի  
«Քրիստոսի թաղումը»:

Մեծ գայթակղություն եմ զգում չորեքշաբթի երեկոն հա-  
մարելու տարօրինակ, գուցե, նույնիսկ շարադետ, բայց,  
հիշտն առած, այդ երեկոն նկարագրելու համար ես ուզդակի  
խոսք չեմ գտնում: Կեսօրից հետո դուրս եկա տնից և գնացի  
աչքս ուր կտրի, ոչ այն է՝ կինո, ոչ այն է՝ պարզապես  
գրասենյակ, չեմ հիշում, 1939 թվականի իմ օրագիրն այս ան-  
գամ ինձ զավաճանեց. այդ օրը էլն այդպես էլ գատարկ  
մնաց:

Բայց ես գիտեմ ինչու է գատարկ: Վերադառնալով մի  
կերպ անցկացրած երեկոյից.— լավ հիշում եմ, որ օրը  
մթնում էր,— կանգ առա դասընթացների դիմացի մայթին ու  
նայեցի օրթոպեդիկական արհեստանոցի ցուցափեղկին: Եվ  
այդտեղ սոսկալի վախեցա: Բլզեղիս մեջ մի միտք առկայ-  
եց, թե որքան էլ սովորեմ հանգիստ ապրել, խելացի ա-

ազնվորեն, միևնույն է, մինչև ման ընդմիջա դասապարտ-  
ված եմ օտարի պես քափառելու մի այգում, որտեղ աճում  
են միայն արծնապատ միղամաններ ու գիշերասնոթներ, և  
որտեղ թագավորում է կույր փայտե կուռքը՝ ճողվածքի էժա-  
նագին աղեկապ հագած մանեկներ, Անտանելի միւսք, լավ է  
դեռ, որ միայն մի վայրկյան առկայծեց ու անցաւ: Հիշում  
եմ, որ աստիճաններով սլացա իմ սենյակը, արապ հանվեցի  
և սուզվեցի անկողինս, նույնիսկ առանց Ծրագիրս բացելու:  
Սակայն չկարողացա քնել, բռնվել էի տենդագին դողով:  
Ես լսում էի հարեան սենյակից եկող տնքոցներն ու ստիպում  
ինձ մտածել իմ լավագույն աշակերտուհու մասին: Զանում  
էի պատկերացնել, թե ինչպես եմ գնում նրա մոտ, մենաս-  
տան: Տեսնում էի՝ ահա, նա դուրս է գալիս ինձ ընդատաշ,  
դեպի ճաղապատ բարձր պարիսպը, երկշոտ, հիասքանչ մի  
աղջիկ, տասնութ տարեկան, դեռևս կուռակրոն չձեռնադրու-  
ված, — դեռևս ազատ՝ աշխարհիկ կյանքով ապրելու իբր ըն-  
տըրյալի հետ, որն այնպես նման է Պիեռ Արելյարին: Ես  
տեսնում էի, թե ինչպես դանդաղ և լուռ մտնում ենք վանքի  
կանաչ այգու խորքը, ու այնտեղ անհոգ ու անմեղոքեն ևս  
գրկում եմ նրա մեջքը: Դժվար էր պահել այդ ոչ երկրային  
կերպարը և, թույլ տալով, որ նա շքանա, ես քուն մտա:

Հինգշաբթի օրը դատապարտյալի պես աշխատեցի ամ-  
բողջ առավոտը և կեսօրը, փորձելով մատիտի և կալկայի  
օգնությամբ որոշ չափով նմանեցնել ծառերի ֆալսուսային  
խորհրդանիշների այն անտառը, որ գեղեցիկ կաշնփայլ թղթի  
վրա պատկերել էր Բանգուր քաղաքի (Մեյնի նահանգ) քա-  
ղաքացին: Չորսն անց կեսին ես այնպես էի բթացել մտադո-  
բապես, հոգեպես և ֆիզիկապես, որ հազիվ կարողացա ոտքի  
ելնել, երբ մոսյո Յոշտոն մի րոպեով մտտեցավ իմ սեղա-  
նին: Նա մի ծրար տվեց ինձ նույնպիսի անտարբերությամբ,  
ինչպես մատուցողը տալիս է մենյուն: Դա քույր Իրմայի մե-  
նաստանի մայրապետն էր գրում: Նա տեղեկացնում էր մոսյո  
Յոշտոյին, որ հայր Յիմերմանը, իր կամքից անկախ պատ-  
ճառներով, հարկազրված է եղել փոխել որոշումը և քույր  
Իրմային այլևս չի կարող թույլ տալ մասնակցելու «Մեծ  
վարպետների սերահարներ» դասընթացին: Նամակում նշվում

էր, որ ցավում են, եթե դա կարող է առիթ տալ որոշ զժվա-  
թությունների կամ դասընթացների դիրեկցիայի համար անա-  
խորժությունների, միաժամանակ անկեղծորեն հույս են հայտ-  
նում, որ ուսուցման համար առաջին մուծումը՝ տասնչորս  
գոլլարի շափով, կհատուցի մենաստանը:

Սա միշտ հաստատ համոզված եմ եղել, որ մուկը, խանձ-  
վելով հրավառության կայծից, կաղալով դեպի իր բույնը  
վազելիս, գլխում անթերի մի պլան ունի մշակած՝ թե ինչ-  
պես պետք է սպանի կատվին: Ընթերցելով ու վե. ընթերցե-  
լով մայրապետի նամակը՝ ես երկար ժամանակ սեեծված  
նայում էի դրան ու մեկ էլ հանկարծ, գաղարելով նայել,  
մի շնչով նամակներ գրեցի իմ մնացած աշակերտներին. չոր-  
սին էլ խորհուրդ տվի ընդմիշտ հրաժարվել նկարիչ դառնալու  
մտքից: Սա ամեն մեկին առանձին գրեցի, որ դա ինչպես  
սեփական, այնպես էլ ուսուցչի թանկ ժամանակի անտեղի  
վատնում է: Բոլոր նամակները գրեցի ֆրանսերեն: Ավար-  
տելով՝ անմիջապես դուրս եկա ու դրանք գցեցի փոստարկղ:  
Ու թեև բավարարվածութանս զգացումը երկար շտեկեց, բայց  
այդ պահին ես շատ, շատ լավ էի զգում ինձ:

Երբ եկավ հանդիսավորապես խոհանոց անաու ժամը,  
ես խնդրեցի ինձ ներել: Ասացի, թե այնքան լավ չեմ զգում  
ինձ: (Այն ժամանակ, 1939 թվականին ես ավելի համոզիչ  
ստում էի, քան՝ ասում ճշմարտությունը, և պարզ տեսա,  
թե ինչպիսի կասկածանքով նայեց ինձ մուսյո Գոշտոն, երբ  
ասացի, թե այնքան էլ լավ չեմ զգում): Բարձրացա իմ  
սենյակն ու նստեցի հատակին: Այդպես նստեցի մեկ ժամի  
շափ, հայացքս հառած վարագույրի լուսավոր ճեղքին, առանց  
ծխելու, առանց պիջակս հանելու, առանց փողկապս արձա-  
կելու: Հետո հանկարծ վեր թռա, հանեցի փոստային թղթերս  
և երկրորդ նամակը գրեցի քույր Իրմային, ոչ թե գրասեղանի  
մոտ, այլ այդտեղ, ուղղակի հատակին:

Նամակը ես այդպես էլ շուղարկեցի. բերում եմ բնօրի-  
նակի ճշգրիտ կրկնությունը.

«Մոնոեալ, Կանադա, 28 հոպիսի, 1939 թ.

Թանկագին փույր Իւմա.

Մի՞թե ես իմ վերջին նամակում անզգուշաբար մի այն-  
պիսի վիրավորական կամ անհարգալիք բան եմ գրել ու դրա-



նով գրավել հայր Յիմերմանի ուշադրությունը և անխաբ-  
ժություն պատնառնել ձեզ: Այդ դեպքում համարձակվում եմ  
խնդրել՝ հնարավորություն տալ ինձ ներողություն խնդրելու  
այն խոսքերի համար, որ ես ասել եմ՝ ջերմ ցանկություն  
ունենալով դառնալու ոչ միայն ձեր ուսուցիչը, այլև ձեր բա-  
րեկամը: Գուցե իմ խնդիրը չափից դուրս անհամեմատ է:  
Կարծում եմ, որ ոչ:

Ասեմ ձեզ ողջ նշմարտությունը. շտիրպայտելով վար-  
պետության գոնե տարրական հիմունքներին՝ դուք բնորոշու  
կմնաք, գուցեև շատ, շատ հետաքրքիր նկարչը, լայց երբեք  
մեծ վարպետ չեք դառնա: Ես սարսափում եմ այդ մտքից:  
Ձեզ հաշիվ տալիս եմ, թե որքան կարևոր բան է դա:

Գուցե հայր Յիմերմանը հարկադրել է ձեզ նույնպես  
պարապմունքներից, կարծելով, թե դրանք կխանգարեն կա-  
տարելու ձեր բարեպաշտական պարտքը: Եթե դա այդպես է,  
ապա ես պարտավոր եմ ասել, որ նա շտապել է եզրակա-  
ցության հանգել: Արվեստը երբեք չէր կարող խանգարել ձեզ  
միանձնուհու կյանք վարել: Ես թեկուզև մեղավոր մարդ եմ,  
բայց քայրում եմ վանականի կյանքով: Ամենավատ բանը  
նկարչի համար՝ լիակատար երջանկությանը իսպառ անտեղ-  
յակ շինելն է: Բայց ես համոզված եմ, որ դրա մեջ ոչ մի  
աղքեղական բան չկա: Շատ տարիներ առաջ, երբ ես տաս-  
նյոթ տարեկան էի, ապրեցի կյանքիս ամենաեղանիկ օրը:  
Նախանշաղի ժամին պետք է տեսնեի մայրիկիս, — այդ օրը  
նա առաջին անգամ էր տնից դուրս եկել երկաթառև հիվան-  
դությունից հետո, — ու ես ինձ միանգամայն երջանիկ էի  
զգում, երբ հանկարծ վիկտոր Հյուգոյի ավելյուտով անցնելու  
ժամանակ (դա Փարիզում է) հանդիպեցի մի մարդու, որ բթի  
հետք անգամ չուներ: Խոնարհաբար խնդրում եմ, ոչ, աղա-  
չում եմ՝ լավ մտածեք այդ մասին: Դրա մեջ խոր իմաստ է  
թափնված:

Հնարավոր է նաև, որ հայր Յիմերմանը պատվիրել է ձեզ  
դասընթացն բնորոշապես որովհետև հնարավորություն չունի  
վնասելու դասավանդման վարձը: Շատ ուրախ կլինեմ, եթե  
դա այդպես լինի, ոչ միայն այն պատճառով, որ դա մեղքը  
վերցնում է իմ վրայից, այլև՝ գործնական տեսակետից: Եթե  
պատճառն իսկապես դա է, ապա բավական է միայն ձեր մի

խոսքը, և ես պատրաստ եմ առանց փոխանառուցման առաջարկել ձեզ իմ ծառայությունները անսահմանափակ ժամկետով: Չի՞ կարելի արդյոք բննարկել այս հարցը: Քույլ տվե՛ք մեկ անգամ էլ հարցնել ձեզ՝ ո՞ր օրերին և ժամերին է բույլաբուրվում այցելել մենաստան: Քույլ շե՛ք սա այցելել ձեզ հաջորդ շաբաթ օրը, հուլիսի վեցի՞ն, ժամը երեֆից մինչև հինգը, Մոնոնալից Տորոնտո գեացող գնացֆեների շվացուցակին համապատասխան: Շատ մեծ անհավերժությունք եմ սպասելու ձեր պատասխանին:

Խորին հարգանքներով և եկացնունեով՝  
անկեղծորեն ձեր

(ստորագրությունը)

Ժան դը Գոմյե-Սմիթ,

«Մեծ վարպետների սիրահարներ»

դասընթացի հաստիքային ուսուցիչ:

2. Գ.— Նախորդ նամակում ես ի միջի այլոց հարցրել էի, թե երկնագույն հագուստով էակը, առաջին պլանում, արդյոք Մարիամ Մագրադիկնացին չէ՞, մեծ մեղավորունին: Երբ դուք դեռևս չե՛ք պատասխանել ինձ, խնդրում եմ, խուսափե՛ք այս հարցին պատասխանելուց: Հնարավոր է, որ ես սխալված լինեմ, սակայն իմ կյանքի ներկա էտապում ես չէի ցանկանա ևս մեկ հիասթափություն ապրել: Գերադասում եմ մնալ անզիտություն մեջ:

*Նույնիսկ այս պահին, այսքան տարիներ հետո, անհարմար եմ զգում, հիշելով, որ «Մեծ վարպետների սիրահարներ» դասընթացներին գնալիս ես սմոկինդ էի վերցրել հետս: Բայց վերցրել էի և, ավարտելով քույր Իրմայի նամակը, ես հագաւ Ամեն ինչ հանգեցնում էր մի լավ խմելու որոշման, բայց քանի որ կյանքումս դեռևս ոչ մի անգամ չէի հարբել (վախից, որ հարբեցողությունից կարող է դողալ այն ձեռքը, որը երեք առաջին մրցանակ շահեց ու նման բաներ), ապա հիմա, այսքան ողբերգական իրադրության մեջ, ես անհրաժեշտ գտա տոնականորեն հագնվել:*

*Մինչ Յոշոտո ամուսինները նստած էին խոհանոցում, ես գաղտագողի մոտեցա հեռախոսին և զանգահարեցի «Ուին-ձոր» հյուրանոց: Նյու-Յորքից մեկնելուց առաջ Բորիի բարե-*

— Լսո՞ւմ ես, ինչ եմ ասում: Ինչո՞ւ ես էլի մահճակալի  
եզբի՞ն քնել:

— Որովհետև:

— Ինչո՞ւ սորովհետև, Ռամոնա, ես քեզ լրջորե՞ն եմ  
հարցնում թե չէ...

— Որովհետև շեմ ուզում հրեմ Միքիին:

— Ուո՞՞ւմ:

— Միքիին, — ասաց Ռամոնան ու քորեց քիթը, — Միքի  
Միքերանոյին:

Էլիոզայի ձայնը խզվելով ծղրտոցի հասավ. — Անմիջա-  
պես քնիր մեջտեղում: Դե՛:

Ռամոնան վախեցած նայեց մորը:

— Ախ, այդպի՞ս, — և էլիզան բռնեց Ռամոնայի ոտի-  
կից ու, բարձրացնելով, ոչ այն է քարշ տվեց, ոչ այն է  
վերցրեց ու պեցեց մահճակալի մեջտեղը: Ռամոնան շքնդդի-  
մացավ, լսեց շեղավ, թույլ տվեց, որ իրեն տեղափոխեն,  
բայց ինքը չշարժվեց:

— Դե հիմա քնիր, — ասաց էլիզան ծանր շնչելով. —  
Փակիր աչքերդ... Ի՞նչ ասացի, փակիր այս բոպեհիս:

Ռամոնան փակեց աչքերը:

Էլիզան մտտեցավ անջատիչին, հանգրբեց լույսը: Նա  
կանպ առավ շեմին ու երկար-երկար ժամանակ շէր գնում:  
Ու հանկարծ մթուփյան մեջ նեավեց դեպի գիշերասեղանը,  
ոտքը խփեց մահճակալին, բայց տաք-տաք ցավը նույնիսկ  
չզգաց: Ծրկու ձեռքով վերցնելով Ռամոնայի ականոցը՝ սեղմեց  
դեմքին: Արցունքները առվի պես հոսում էին ապակու վրա:

— Իմ խեղճ կորած-մոլորած, — կրկնում էր նա նորից ու  
նորից: — Իմ խեղճ կորած-մոլորած:

Հետո ականոցը դրեց սեղանին, ապակին դեպի ցած: Կռա-  
նալուց քիչ մնաց հավասարակշռությունը կորցնելու, բայց ան-  
միջապես սկսեց ուղղել Ռամոնայի վերմակը: Ռամոնան քնած  
չէր: Նա լայիս էր, և երևում էր, վաղուց էր լալիս: Էլիզան  
թաց շրթունքներով համբուրեց նրա շրթունքները, մազերը  
ետ քաշեց ճակատից և սենյակից դուրս եկավ:

Աստիճաններից իջնելիս նա արդեն բավականին երերում  
էր և, հասնելով ներքև, արթնացրեց Մերի Զեյնին:

— Ի՞նչ, Ո՞վ է, ի՞նչ է եղել, — Մերին թափով նստեց  
բազմոցին:

— Լսիր, Մերի Զեյն, սիրելիս, — հեծկտալով ասաց էլի-  
զան: — Հիշո՞ւմ ես առաջին կուրսում ես մի զգեստ էի հագ-  
նում, հիշո՞ւմ ես, այսպես դարչնագույն-դեղին, ես այն գնել  
էի Բոյզում, իսկ Միքիամ Բելը ասաց. — Նյու-Յորքում ոչ ոք  
այդպիսի զգեստ չի հագնում: Հիշո՞ւմ ես, ես ամբողջ գիշեր  
լաց եղա:

Էլիզան բռնեց Մերի Զեյնի ուար. — Ծա լավն էի, չէ՞, —  
աղերսագին ասաց նա, — լավն էի, ճի՞շտ է:

Հնթերցողին— Ռ. Ռայթ-Կովալովա . . . . .	3
Տարեկանի արտում՝ անդունդի եզրին . . . . .	9
Սպեղնեքը բա՛րձր, ատաղձագործնե՛ր . . . . .	220
Լավ է բռնվում ձկնիկ-բանանիկը . . . . .	290
Մարզը, որ ծիծաղում էր . . . . .	306
Դը Դոմյե-Սմիթի երկնագույն շրջանը . . . . .	324
Նորած-մուրած . . . . .	356

Սեյիեյե Զեռոմ Դեյվիդ  
ՎԻՊԱԿՆԵՐ ԵՎ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Сэлинджер Джером Дейвид  
ПОВЕСТИ И РАССКАЗЫ  
(На армянском языке)

Издательство «Советакан грох», ул. Теряна, 91.  
Ереван, 1978

Խմբագիր՝ Շ. Ա. Գրիգորյան  
Նկարիչ՝ Ք. Ժուտովսկի  
Գեղ. խմբագիր՝ Զ. Ն. Գասպարյան  
Տեխ. խմբագիր՝ Ա. Ց. Կովկասյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ИВ № 214.

Հանձնված է շարվածքի 10/Վ 1978 թ.:

Ստորագրված է տպագրության 12/ՎՊ 1978 թ.:

Քուղթ՝ տպագրական № 2, 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>, տպագր. 11,75 մամ. = 19,74 պայճ, մամ., հրատ. 17,8 մամ.: Պատվեր 444: Տպաքանակ 30 000: Գինը 1 ոչ 90 կ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:  
ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան,  
Ալավերդյան փող. № 65:

Типография № 1 Госкомитета Совета Министров

Арм. ССР по делам издательств, полиграфии

и книжной торговли. Ереван, ул. Алавердяна, 66.